

**ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ**

**ՆՎԻՐՎՈՒՄ Է  
ՀՅԴ 115 ԱՄՅԱԿԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ  
ԵՎ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
(1918-1920 թթ.)**

Հրատարակություն  
Հ Յ Դ-աշնակցության

ԵՐԵՎԱՆ-2005

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ  
Պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պատմական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
**Հ. Մ. Հարությունյան**

Գրախոսներ՝ պատմական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
**Վ. Ն. Ղազարխեջյան**

պատմական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
**Ս. Ս. Ամիրյան**

**Հակոբյան Ա. Ս.,**

Հ 177 Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները  
(1918 - 1920թթ.), Երևան, 2005, 364 էջ:

Աշխատության մեջ հետազոտված է Հայաստանի առաջին Հանրապետության պետաիրավական և հասարակական-քաղաքական երկու կառույցների՝ Հայաստանի խորհրդարանի և հայ քաղաքական կուսակցությունների պատմությունը: Քննության է առնված խորհրդարանի գործունեության հարցերի լայն շրջանակ՝ արդարադատության, ֆինանսավարկային, բյուջետային, հողային, գաղթականության, բանակի, արտաքին ոլորտի, սոցիալական, կրթամշակութային և այլն: Վեր են հանված խորհրդարան-կառավարություն-կուսակցություն-խմբակցություն հարաբերությունները: Տրված է հայ քաղաքական կուսակցությունների համակարգված պատմությունը: Առավել հանգամանորեն է ներկայացված ՀՀ հիմնական կառավարող կուսակցության՝ Հ 3 Դաշնակցության գործունեությունը:

Մենագրությունը նախատեսված է մասնագետ – պատմաբանների, քաղաքագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

Հ 0503020913 2005թ.  
0077(01)2005

ԳՄԴ 63.3 (2Հ)+66.6

ISBN 99930-69-41-8

© ՀՅԴ Բյուրո

Սոցիալիզմի խորհրդային մոդելի ու կոմունիստական ամբողջատի-րության խորտակումը, ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի անկախության հռչակումը նոր խնդիրներ առաջադրեցին հայ պատմաբանների առջև: Հիրա-վի, անասան թվացող խորհրդային կայսրության կործանման հետևանքով մեկ տասնյակից ավելի խորհրդային հանրապետությունների շարքում Հա-յաստանը ևս բռնեց անկախության դժվարին ուղին: 1991 թ. սեպտեմբերի 21-ին համաժողովրդական ձայնատվությամբ (հանրաքվե) պաշտոնապես հռչակվեց Հայաստանի Հանրապետության (ՀՀ) անկախությունը:

Արդ, մենք ապրում ենք ժողովրդավարական, պետաիրավական և քա-ղաքական կառույցների ձևավորման ու կայացման մի բարդ ու հակասական ժամանակաշրջան: Մերօրյա դժվարին առաջընթացի ճանապարհին ճիշտ կողմնորոշվելու համար պատմաբանների առաջնահերթ խնդիրներից է անդ-րադառնալ մեր հեռու և մոտիկ անցյալի պատմության էջերին: Այդպիսի մի ուսանելի և դասառատ ժամանակաշրջան է Հայաստանի առաջին Հանրա-պետության (1918-1920 թթ.) շրջանը:

Ներկայումս մեր անկախ պետականության կայացման, նրա հետագա զարգացման ու կատարելագործման ճանապարհին չափազանց մեծ գիտա-գործնական ու պատմաճանաչողական նշանակություն ունի Հայաստանի ա-ռաջին Հանրապետության ամբողջական պատմության ու մասնավորապես նրա խորհրդարանի պատմական փորձի ուսումնասիրումը և ընդհանրացու-մը, որոնք, անկասկած, կարող են օգտաշատ և ուսանելի լինել ներկայիս Հա-յաստանի պետաիրավական ու պետաքաղաքական կառույցների ձևավոր-ման գործում: Հավասարաբեռն չափով կարևոր է նաև հայ քաղաքական կուսակցությունների հարուստ ու հակասական պատմական անցյալի, նրանց գործունեության և դրանց արդյունքում կուտակված փորձի գիտական ընդհան-րացումը և ստացած պատմական դասերի հաշվառումը: Ակներև է, որ ժո-ղովրդավարական երկրում կուսակցությունների գոյությունն ու գործունեու-թյունը սերտորեն կապված են խորհրդարանի և ընդհանրապես պետական իշ-խանության քաղաքական համակարգի հետ:

Սույն աշխատության մեջ մենք խնդիր ենք դրել հետազոտել Հայաս-տանի առաջին Հանրապետության պետաիրավական և հասարակական-քա-ղաքական երկու շատ էական կառույցներ՝ Հայաստանի խորհրդարանը և հայ քաղաքական կուսակցությունները: Սրանք այնպիսի պոռնակային հաստա-տություններ են, առանց որոնց հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել ՀՀ հասարակական-քաղաքական և պետական կյանքի մասին: «Պառլամենտ և կուսակցություն այսօր իրարից անբաժանելի երևույթ են դարձել ազգային կյանքի մեջ,- կարդում ենք «Հայրենիք» հանդեսի անդրա-նիկ համարում<sup>1</sup>:

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 1920, թիվ 3, էջ 27

Խորհրդարանը ժողովրդի ներկայացուցչության ու կամքի դրսևորման բարձրագույն ձևն է: Նա միաժամանակ ժողովրդավարական հաստատության բարձրագույն արտահայտությունն է: Այս կապակցությամբ Հնչակյան կուսակցության հայտնի գործիչ ու գաղափարախոս Ս. Սապահ-Գյուլյանը գրում էր. «Դեմոկրատիայի քաղաքական հաստատության բարձրագույն ձևը արտահայտվել է ժողովրդական ներկայացուցչությամբ, խորհրդարանային, պառլամենտական դրությամբ»<sup>2</sup>: Սովորաբար խորհրդարանական պետություններում խորհրդարանի և քաղաքական կուսակցությունների գործունեությունը ամբաժանելի է: Այնքան է, որ կուսակցությունների մեծագույն մասը ձգտում է հասնել իշխանության կամ, համեմայն դեպք, իշխող դիրքի, իսկ դրան հասնելու լավագույն, արդյունավետ և օրինավոր ուղին խորհրդարանն է:

Ժողովրդավարական համարվող պետության մեջ անհնար է պատկերացնել խորհրդարանը առանց կուսակցությունների: Իր հերթին, քաղաքական կուսակցությունների գործունեությունը չի կարելի համարել լիաթժեք, եթե նրանք կտրված են խորհրդարանական կյանքից: «Այնտեղ, ուր կա պառլամենտ, խորհրդարան,- գրում էր Ս. Սապահ-Գյուլյանը,- անպայման պիտի լինեն կուսակցություններ... Պառլամենտական աշխատանքի զսպանակը կուսակցություններն են»<sup>3</sup>: Ահա խորհրդարան-կուսակցություն հասկացությունների այս դիալեկտիկ փոխկապակցությունը նկատի ունենալով է, որ մենք ուսումնասիրության քննա ենք դարձրել Հայաստանի խորհրդարանի և հայ քաղաքական կուսակցությունների միասնացված պատմությունը:

Հայ քաղաքական կուսակցությունների գործունեության գնահատման կարևոր չափանիշ ենք համարել պետականության գաղափարի պաշտպանության նկատմամբ նրանց վերաբերմունքը: Անկախ պետականությունը վեր պետք է դասել ամեն մի կուսակցական, դասակարգային, ընկերային նեղ շահերից: Պետականությունը հատկորեն տարբերակել ենք կառավարությունից և կառավարող կուսակցությունից: Աշխատության շարադրանքում հայոց պետականությունը և նրա կառավարությունը բնավում ու գնահատվում են տարբեր հարթությունների վրա: Քննադատել այս կամ այն կառավարությանը ամենևին էլ չի նշանակում քննադատել, առավել ևս ժխտել պետականությունը: Սրանք տարբեր հասկացություններ են: Եվ պետք է ասել, որ այս կերպ ենք մոտենցել հիմնական կառավարող կուսակցության Հայ Յեղափոխական Դաշակցության (ՀԵԴ), ինչպես նաև մյուս կուսակցությունների գործունեությունը վեր հանելիս ու գնահատելիս:

Հայ քաղաքական կուսակցությունների պատմությանը անդրադարձել ենք այնքանով, որքանով դրանց գործունեությունը առնչվել է Հայաստանի խորհրդարանի և ընդհանրապես ՀՀ պատմության հետ: Միաժամանակ խնդիր ենք դրել հայ քաղաքական կուսակցությունների գաղափարախոսության, ծրագրերի և պրակտիկ մարտավարության հիման վրա բացահայտել ու

դասակարգել նրանց ըստ գաղափարաքաղաքական ուղղվածության: Առաջին անգամ, պատմագիտության ներկայիս պահանջներով, համակարգված կերպով տրվում է հայ քաղաքական բոլոր կուսակցությունների գործունեությունը փոխկապակցության մեջ: Արժևորվում է դրանցից յուրաքանչյուրի խաղացած դերը Հայաստանի առաջին Հանրապետության և հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Հայ քաղաքական (ազգային և ոչ ազգային) կուսակցությունների գործունեության լուսաբանման ու բնութագրման համար մենք չափանիշ ենք ընդունել ոչ այնքան նրանց դրսևորած դասակարգային, սոցիալ-տնտեսական ու քաղաքական ուղղվածությունը, ինչպես որ ընդունված էր նախկինում՝ համաձայն մարքս-լենինյան ուսմունքի ու մեթոդաբանության, այլ ազգաշահության, պետականության, անկախության, մշակութային և համանման այլ արժեքները:

Խորհրդարանի և քաղաքական կուսակցությունների գործունեության հետազոտման ընթացքում համակողմանիորեն վեր են հանվում խորհրդարան - կառավարություն - կուսակցություն - խմբակցություն հարաբերությունները: Միաժամանակ քննության է առնվում խորհրդարանի օրենսդրական և ոչ օրենսդրական գործունեության հարցերի լայն շրջանակ՝ արտաքին ոլորտի, ֆինանսավարկային, բյուջետային, հողային, գաղթականության, ներգաղթի, բանակի, սոցիալ-տնտեսական, սոցիալական պաշտպանվածության, արտախորհրդարանական և այլն: Ընդ որում՝ ներկայացվում ու բնութագրվում են ոչ միայն խորհրդարանի ընդունած օրենքները և որոշումները. այլ ըստ հնարավորին դրանք դիտարկվում են կիրառության մեջ: Այսպիսով, մեր առջև խնդիր ենք դրել ներկայացնել ՀՀ խորհրդարանի գիտական ու ամբողջական պատմությունը, բացահայտել Հայաստանի պետականության ձևն ու կառուցվածքը, միջազգային իրավունքի չափանիշերին պետականության համապատասխանելը, նրա ժողովրդավարական մակարդակն ու բնույթը:

\*\*\*

Խորհրդահայ պատմագրության 70 տարիներին կոմունիստական (մարքս-լենինյան) գաղափարա-քաղաքական պատմահայեցողության դիրքերից հիմնականում խեղաթյուրվել ու ծուռ հայելու մեջ են ներկայացվել Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունը, ընդհանրապես, և Հայաստանի խորհրդարանի ու հայ քաղաքական կուսակցություններին՝ մասնավորապես: Խորհրդահայ պատմագրության մեջ, ինչպես հարկն է, չի ուսումնասիրված հայ քաղաքական կուսակցությունների պատմությունը: Խորհրդային պատմակուսակցական գրականությունը ամբողջովին նվիրված է եղել կոմունիստական-բոլշևիկյան կուսակցության պատմության համակողմանի վերհանմանը ու զովերգմանը: Մնացած կուսակցությունները ներկայացվել են որպես հակաժողովրդական, հակահեղափոխական, հետադիմական ու արկածախնդրական, ուստի և միակողմանիորեն դրանց անցած պատմական ուղին, խարազանվել է ու սևացվել:

<sup>2</sup> «Նրիտասարդ Հայաստան», 17 սեպտեմբերի 1920 թ.:

<sup>3</sup> «Նրիտասարդ Հայաստան», 17 սեպտեմբերի 1920 թ.:

Խորհրդային ժամանակաշրջանում, մեր կողմից ուսումնասիրվող ժամանակահատվածի (1918-1920 թթ.) վերաբերյալ, ըստ ուսումնասիրության քննազավառների, Հայաստանում և Անդրկովկասի մյուս հանրապետություններում կազմվել ու հրատարակվել են փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ<sup>4</sup>։ Ներքոհիշյալ ժողովածուներում զգալի քանակությամբ նյութեր կան Հայաստանի առաջին Հանրապետության, Հայաստանի խորհրդարանի և հայ քաղաքական առանձին կուսակցությունների գործունեության վերաբերյալ։ Սակայն ինքնին հասկանալի է, որ այդ ժողովածուների կազմողները իրենց առջև խնդիր են դրել համապատասխան փաստաթղթերով ու նյութերով հիմնավորել պրոլետարիատի դասակարգային պայքարի և խորհրդային իշխանության հաստատման անհրաժեշտությունը, ուստի և դրանք կազմելիս՝ ցուցաբերվել է խիստ ընտրովի ու միակողմանի մոտեցում։

Հետպատերազմյան չորս տասնամյակներին գրվել ու հրատարակվել են հարյուրավոր աշխատություններ, որոնք վերաբերում են Հրկտեմբերյան հեղափոխության, 1917-1920 թթ. Հայաստանի պատմության, Անդրկովկասում և Հայաստանում բոլշևիկների գործունեության ու խորհրդային իշխանության հաստատման հիմնահարցերին<sup>5</sup>։ Անշուշտ, գերազանցապես պատմակուսակ-

<sup>4</sup> Տես, «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում», (1920-1930), հիշողությունների և դոկումենտների ժողովածու, Ե., 1930, «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը)», (նյութեր եւ փաստեր, կազմողներ՝ Կ. Ղազարյան և Մ. Ներսիսյան), Ե., 1932, «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Ե., 1960, «Ռևոլյուցիոն կոչեր և թուղիկներ 1902-1921», (կազմել և խմբագրել է Խ.Հ. Բարսեղյանը), Ե., 1960, Բ. Ղարիբջանյան, Սովետական իշխանության համար մղված պայքարում (հողվածներ, ելույթներ և նյութեր 1917-1920 թթ.), Ե., 1966, «Борьба за победу советской власти в Грузии». /Документы и материалы 1917-1921гг. /, Тбилиси, 1958, «Великий октябрь и борьба за советскую власть в Азербайджане», /Сборник документов, материалов и статей /, Баку, 1958 և ծր.:

<sup>5</sup> Տես Ծ.Պ. Աղայան, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և Բաքվի 1918 թ. սովետական իշխանությունը, Ե., 1948, Մույնի՝ Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Ե., 1957, Խ. Հ. Բաղալյան, Անգլո-ամերիկյան գիշատիչ իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականությունը Հայաստանում 1919-1920, Ե., 1951, Մույնի՝ Դաշնակների կոմսոմոլությունը և գործունեության մի քանի փաստերի մասին (1918-1920 թթ.), Ե., 1955, Գ. Բ. Ղարիբջանյան, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Ե., 1955, Ա. Մ. Հակոբյան, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Ե., 1960, Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովրդի ազատագրումն ու վերածնունդը, Ե., 1970, Հ. Սեփյան, Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան քանակը, Ե., 1970, Մ. Վ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Ե., 1973, Ա. Հ. Մելքոնյան, Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը, Ե., 1965, «Հայաստանի կոմկուսի պատմության ուրվագծեր», Ե. 1967, Խ.Հ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք 2-րդ, Ե. 1975, Մույնի՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության ձևավորումը, Ե., 1980, Գ. Ա. Գալոյան, Հերոսական մայիսից-հաղթական նոյեմբեր, Ե., 1980, Ա. Մ.

ցական բնույթի այս աշխատություններում նպատակ է դրվել ներկայացնել կոմունիստական կուսակցության անցած ուղին՝ միակողմանիորեն քննադատելով մյուս ոչ պրոլետարական կուսակցությունների ու հոսանքների գործունեությունը։ Հիշյալ մենագրություններում մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող հիմնահարցերին՝ քաղաքական կուսակցություններին, խորհրդարանին ընդհանրապես ՀՀ պատմության հարցերին անդրադարձել են այն ասպեկտով ու այնքանով, որքանով հարկավոր է եղել իրենց առջև դրված խնդիրները լուծելու համար։ Խորհրդային պատմակուսակցական գրականության մեջ ՀՀ (1918-1920 թթ.) ժամանակաշրջանը բնութագրվել է որպես ամենամռայլ, մղձավանջային, իսկ դաշնակների վարած քաղաքականությունը՝ կոռւմանարար։ Խորհրդային իշխանության հաստատման անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը հիմնավորելու համար, ինչպես ասում են, «չորն ու թացը խառնվել են իրար», պատմական շատ փաստեր անտեսվել են, չեն բացահայտվել ՀՀ ծանր իրավիճակի նաև օբյեկտիվ պատճառները, երևույթները գնահատելիս՝ ցուցաբերվել է զուտ դասակարգային մոտեցում և այլն։ Կոմունիստական տիրապետող գաղափարայնությունը անխուսափելիորեն իր դրոշմն է թողել այդ աշխատությունների թե՛ բովանդակության, թե՛ հետապնդած նպատակների վրա։

Խորհրդային պատմագրությունը, ըստ էության, նպատակ չի դրել վեր հանելու ՀՀ պատմությունը, իսկ եթե այս կամ այն խնդրի կապակցությամբ որոշ հեղինակներ անդրադարձել են այդ հիմնահարցերին, ապա սոսկ այն սևացնելու և որոշակի քաղաքական, կուսակցական ու դասակարգային հաշիվներ մաքրելու նպատակով։

Այն ժամանակվա ՀՀ ամենաազդեցիկ ու ղեկավար քաղաքական ուժի՝ ՀՅԴ-ը նման մղվող գաղափարաքաղաքական պայքարում խեղաթուրվել են առաջին հանրապետության դժվարին պատմության շատ էջեր։ Բնականաբար, անվանարկվել է նաև Հայաստանի խորհրդարանի պատմությունը։ Մինչև վերջերս շատերն անգամ գաղափար չունեին, թե ինչպիսի պետական կառուցվածք է ունեցել ՀՀ, եղե՞լ է արդյոք խորհրդարան, թե՞ ոչ։ Ավելին, մույնիսկ ժխտվել է նման պետականության գոյության փաստը, իսկ մայիսի 28-ը դիտվել է որպես «հայ աշխատավորության ստրկացման օր»<sup>6</sup>։ Ավելի հաճախ Հայաստանի «անկախությունը» առնվել է չակերտների մեջ<sup>7</sup>։ Որոշ հեղինակ-

Эльчибемян, Установление советской власти в Армении, Е., 1954, Г. А. Галоян, Борьба за советскую власть в Армении, М., 1957, Г.А. Авесисян, Комсомол Закавказья в борьбе за победу и упрочение советской власти /1917-1921/, Е., 1964, «Очерки истории коммунистической организации Закавказья, Тбилиси, 1967 և ծր.:

<sup>6</sup> Ա. Երզնկյան, Աշխատավորության դատարանին, Թիֆլիս, 1927, էջ 50

<sup>7</sup> Ա. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Ե., 1923, էջ 5, Խ. Հ. Բաղալյան, Դաշնակների կոմսոմոլությունը գործունեության մի քանի փաստերի մասին (1918-1920 թթ.), Ե., 1955, էջ 7-8, Մ. Վ. Արզումանյան, Արհավիրքից վերածնունդ, Ե. 1973, էջ 153, Ա. Մ. Эльчибемян, установление советской власти в



ներ էլ ՀՀ խորհրդարանը որակել են որպես ֆիկցիա, «դաշնակցականների խորհրդարան»<sup>8</sup> և այլն: Որքան էլ, որ Դաշնակցությունը հանդիսացել է ՀՀ - հիմնական կառավարող կուսակցությունը, այդուհանդերձ, իրավացի չեն այն հեղինակները, ովքեր համրապետության, նրա խորհրդարանի պատմությունը նույնացնում են այդ կուսակցության պատմության հետ: Ա. Մռավյանը իր գեղարվեստական մեկում Հայաստանի խորհրդարանը համարել է դաշնակ մատուցողների սարքած «պառլամենտի պես մի բան»<sup>9</sup>), ուրիշները՝ «բացարձակապես ֆիկցիա»,<sup>10</sup> «այսպես կոչված Հայաստանի խորհուրդ», «կատակերգություն», «պառլամենտական խեղկատակություն»<sup>11</sup> և այլն: Ոմանց կարծիքով էլ հայ ժողովուրդը պետականություն ստացավ 1920 թ. նոյեմբերին՝ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո<sup>12</sup>:

Տակավին 1920-30-ական թվականներին հայ քաղաքական կուսակցությունների պատմության զանազան հիմնահարցերին են անդրադարձել ճանաչված կուսակցական, պետական ու մշակութային գործիչներ՝ Ալ. Մյասնիկյանը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Ա. Երզնկյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Կարինյանը, Հ. Ազատյանը, Գ. Աբովը, Ե. Չուբարը, Գ. Վանանդեցին, Թ. Մանդալյանը, Հ. Ջորյանը, Ա. Բզնունին և ուրիշներ<sup>13</sup>: Հասկանալի է, որ մնա-

Армении, Е., 1954, с. 49, 56-57, А. Б. Кадишев, Интервенция и гражданская война в Закавказье, М., 1960, с. 63:

<sup>8</sup> Б. А. Борян, Армения, международная дипломатия и СССР, ч. II, М., 1929, с. 25.

<sup>9</sup> Ա. Մռավյան, Հողվածներ և ճառեր, Ե., 1961, էջ 91.

<sup>10</sup> Գ. Ջաղերյան, Մոտիկ անցյալից, Ե., 1969, էջ 11:

<sup>11</sup> Ը. Ամիրխանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920), Մոսկվա, 1926, էջ 54-56:

<sup>12</sup> Խ. Հ. Բարսեղյան, Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորումը, Ե., 1980, էջ 33:

<sup>13</sup> Ալ. Մյասնիկյան (Մարտունի), Կուսակցությունները գաղութափոխության մեջ, Բեռլին, 1925, Ս. Կասյան, Սպեցիֆիկները և սպեցիֆիկները, Թիֆլիս, 1928, Ա. Մռավյան, Սոցիալիստ հեղափոխականները Անդրկովկասում, Ե., 1922, Նույնի՝ Ե՞րբ և ի՞նչպես է հիմնադրվել Հայաստանի կոմունիստական (բոլշ.) կուսակցությունը, Ե., 1928, Ա. Երզնկյան, Աշխատավորության դատարանին, Թիֆլիս, 1927, Ա. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Ե., 1923, նույնի՝ Դաշնակցության սոցիալական ծագումը («Նորը», 1927, թիվ 1), Ա. Կարինյան, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, նույնի՝ Հայ մացիոնարիզմի ուղին, Ե., 1926, նույնի՝ Հայկական ֆաշիզմի նորագույն փմաստափրությունը («Լենինյան ուղի», 1928, թիվ 1-2), նույնի՝ Դաշնակցությունը և իր գիմակիցները, Ե., 1932, Հ. Ազատյան, Դաշնակցության հակահեղափոխական գործունեությունը 1903-1908 թթ. ժամանակաշրջանում, «Լենինյան ուղի», 1928, թիվ 1 և 4, նույնի՝ Դաշնակցության դասակարգային բնույթը («Նոր ուղի» 1929, թիվ 1-2), Գ. Աբով, Դաշնակցությունը անցյալում և հիմա, Ե., 1929, Ե. Չուբար, Դաշնակցությունը սպեցիֆիկների դրոշի տակ («Լենինյան ուղի», 1928, թիվ 11), Ջյուրաֆյան, Հոկտեմբերյան հեղափոխությունը եւ Դաշնակցությունը («Լենինյան ուղի», 1928, թիվ 10), նույնի՝ Անկախ Հայաստանի իրավունքն ու պետականությունը

մատիպ աշխատությունները, որոնք ունեին կողմնակալ, քարոզչական ուղղվածություն, հեռու էին գիտական լինելուց: «Սպեցիֆիկների» ու «սպեցիֆիկ-մի» պատմությանն ու գաղափարաքաղաքական գնահատությանն է վերաբերում Ս. Կասյանի համանուն աշխատությունը: Կարծում ենք, որ նա ճիշտ է որակում «սպեցիֆիկներին» ու «սպեցիֆիկները», երբ այս հոսանքը համարում էր սոցիալ-դեմոկրատական մարքսիստական շարժման մեջ որպես աջակողմյան թերություն: Բայց մյուս կողմից դժվար է համաձայնվել նույն հեղինակի այն գնահատականին, երբ, հիմք ընդունելով այս կազմակերպության կառուցվածքը և սոցիալական կազմը, «սպեցիֆիկները» բնութագրում էր որպես «ազգայնական-մեշչանական և ինտելիգենտական մտածելակերպ ու գործելակերպ»<sup>14</sup>: «Սպեցիֆիկների» ի՞նչ ազգայնականության մանրրործականության մասին կարող է խոսք լինել, երբ նրանց գաղափարական ու ծրագրային հիմնադրույթները ամբողջապես ներթմված էին սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական աշխարհայեցողությամբ ու գաղափարախոսությամբ: Բերված գրականության ցանկից դժվար չէ կռահել, որ նշված հեղինակների աշխատությունները, որոնք ավելի շատ ունեին բանավիճային, քարոզչական բնույթ, ամենից առաջ ուղղված էին ՀԶ Դաշնակցության դեմ: Այսպես՝ Ալ. Մարտունու գրքույկը գերազանցապես ուղղված է Դաշնակցության դեմ, ունի բանավիճային բնույթ և չի հավակնում գիտական աշխատության: Նույնական որակում կարելի է տալ 1920-30-ական թվականների աշխատությունների մեծագույն մասին:

Այդ ժամանակներում Դաշնակցության կազմակերպչական ջախջախումը տակավին հանգիստ չէր տալիս Խ. Հայաստանի քաղաքական ու գաղափարական ղեկավարությանը, քանզի նրանք լավ հասկանում էին, որ Դաշնակցության գաղափարախոսությունը և հոգեբանությունը բավականին խորն է մտածելային հասարակաշերտերի շրջանում: Ուստի պետք է գործի դրվեր խորհրդային-բոլշևիկյան քարոզչական մեքենան, բոլոր թույլատրելի ու անթույլատրելի միջոցներով վարկաբեկելու և մարդկանց գիտակցությունից արմատախիլ անելու Դաշնակցության ազգային գաղափարները և դրանով իսկ գաղափարաքաղաքական հող ստեղծել՝ Հայաստանի աշխատավորությանը ներգրավելու սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման գործին:

1930-ական թվականներից, երբ հաստատվեց ստալինյան բռնավարչակարգը, և ընդհուպ մինչ 1950-ական թվականների կեսերը, խորհրդահայ պատմագրության մեջ հայ քաղաքական կուսակցությունների պատմության ուսումնասիրությամբ գործնականում չեն զբաղվել: Այսպես կոչված Խորուշովյան «հալոցքի» պայմաններում որոշ չափով մեղմացավ նախկինում արմա-

(«Նորը», 1926, թիվ 2), Թ. Մանդալյան, Մայիսյան ապստամբությունը, Ե., 1929, Հ. Ջորյան, Հայ բուրժուական պատմագրության կոմեդիան և Հայաստանի պատմության ուսումնասիրության հիմնական պրոբլեմները («Նոր ուղի», 1931, գիրք 3), Ա. Բզնունի, Հայկական «Մեմոարիստականությունը» («Նոր ուղի», 1931, գիրք 4):

<sup>14</sup> Ս. Կասյան, Սպեցիֆիկները և սպեցիֆիկները, Թիֆլիս, 1928, էջ 5:

տացած գաղափարական դոգմատիզմը, և պատմաբանները սկսեցին զգուշորեն անդրադառնալ ազգային-ազատագրական շարժումների, հայ հասարակական մտքի ու քաղաքական կուսակցությունների պատմության հիմնահարցերին:

1960-ական թվականների սկզբներին լույս տեսավ Լ. Խուրշուդյանի ուսումնասիրությունը<sup>15</sup>: Նրանում հեղինակը կանգ է առել Սփյուռքում գործող հայ ավանդական երեք՝ ՀՅԴ, Ռամկավար և Հնչակ կուսակցությունների հետպատերազմյան ժամանակաշրջանի գաղափարախոսության ու քաղաքականության հարցերին, միաժամանակ համառոտակի անդրադարձել է այդ կուսակցությունների պատմական անցյալին, ինչպես նաև մեզ հետաքրքրող 1918-1920 թթ. ժամանակաշրջանին: Լ. Խուրշուդյանը ցույց է տվել 'Իսլանկյություն կուսակցության դասակարգային էությունը և դրականության գնահատել հնչակյանների և ռամկավարների գործունեությունը: Սակայն հասկանալի է, որ տիրապետող կոմունիստական գաղափարաքաղաքական ամբողջատիրության պայմաններում չէր կարող խոսք լինել կոմունիստական կուսակցությանը և խորհրդային պետությանը ընդդիմադիր հայ քաղաքական կուսակցությունների պատմության գիտական, օբյեկտիվ ու անաչառ շարադրանքի մասին:

Այնուհետ, 1970-80-ական թվականներին, այսպես կոչված լճացման տարիներին, ավելի «ձախ» դիրքերից լույս տեսան Բ. Անանիկյանի, Հ. Վարդանյանի, Ա. Մնացականյանի, Բ. Օհանջանյանի և ուրիշների աշխատությունները<sup>16</sup>, որոնք հետապնդում էին զուտ քաղաքական-քարոզչական նպատակներ:

Այդ նույն թվականներին խորհրդային առանձին պատմաբաններ հաստատագրված պատմահայեցողության դիրքերից անդրադարձել են բուրժուական ու հատկապես մանրբուրժուական որակվող կուսակցությունների պատմության հարցերին: Անգամ հիմնախնդրի վերաբերյալ հրավիրվել է միութենական ցտաշրջան (Յխալտություն և Կալինինում), որոնցում Հայաստանից զեկուցումներով հանդես են եկել պատմաբաններ՝ Ծ. Աղայանը, Լ. Խուրշուդյանը, Կ. Խուրազմիրյանը Ռ. Խուրշուդյանը: Չեկուցումների նյութերը ամփոփված են առանձին ժողովածուում<sup>17</sup>: Հարկ է ընդգծել, որ կոմ.ֆերանում

հայ պատվիրակների զեկուցումներում առաջ քաշված դրույթների ու եզրահանգումների հիմնական մասը, մեր կարծիքով, ճշմարտացի է և ունի այժմեական գիտական արժեք:

Տակավին 1970-ական թվականներին ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը պատրաստել էր ՀՅ Դաշնակցության սոցիալական էության բացահայտմանը նվիրված, իր ժամանակի համար արժեքավոր մի հոդված, որը, սակայն, իշխող գաղափարական խոչընդոտների պատճառով տպագրվեց ավելի ուշ<sup>18</sup>: Այստեղ հեղինակը բազմապիսի փաստերով հիմնավորում, պաշտպանում ու զարգացնում է ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի տեսակետը Դաշնակցություն կուսակցության մանրբուրժուական սոցիալական էության վերաբերյալ: Այդ մասին իր տեղում կլինի ավելի համաձայնալի անդրադարձ:

Հայ հասարակական հոսանքների, քաղաքական կուսակցությունների, արևմտահայության ազատագրության խնդրում արտահայտված ծրագրային փաստաթղթերի ու դիրքորոշումների լուսաբանման է նվիրված պրոֆ. Ա. Համբարյանի մենագրությունը<sup>19</sup>, որը, անտարակույս, ներդրում է հայ հասարակական մտքի պատմության ամբողջացման ճանապարհին: Ուսումնասիրությունը ընդգրկում է 19-րդ դարի վերջը - 20-րդ դարի սկիզբը, մինչև 1917 թ.: Ուշագրավ է նաև նույն հեղինակի ՀՅ Դաշնակցության քաղաքական կողմնորոշմանը նվիրված հոդվածը<sup>20</sup>:

1980-ական թվականներին պաշտպանվեցին երիտասարդ պատմաբաններ՝ Ռ. Խուրշուդյանի, Ս. Մելիքյանի Դ. Խեչումյանի ատենախոսական թեզերը, որոնք նվիրված էին հայ քաղաքական առանձին կուսակցությունների պատմության հարցերին<sup>21</sup>: Պետք է ասել, որ սրանք իրենց ժամանակի ու պայմանների համար արժեքավոր ուսումնասիրություններ են, որոնցում (փաստական հարուստ նյութից բացի) մի շարք դրույթներ ու եզրահանգումներ տակավին պահպանում են իրենց գիտական արժեքը:

\*\*\*

Հայաստանի առաջին Հանրապետության ու քաղաքական կուսակցությունների նորովի լուսաբանման ժամանակաշրջանը, իրոք, սկսվում է 1988 թ. Արցախյան շարժումից: Այդ շարժումը և հայոց պատմության «սև» և

<sup>15</sup> Լ. Ա. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Ե., 1964:

<sup>16</sup> Բ. Անանիկյան, Դաշնակցության գաղափարա-քաղաքական կրախը, Ե., 1974, Հ. Գ. Վարդանյան, Հայ բուրժուա-ազգայնական կուսակցությունների դիրքավորումը Ռուսական առաջին հեղափոխության տարիներին (1905-1907), Ե., 1975, Ա. Ն. Մնացականյան, Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, Ե., 1976, Բ. Ա. Օհանջանյան, Դաշնակցությունը առանց դիմակի, Ե., 1980, Ռ. Ա. Մարտիրոսյան, Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Ե., 1987 և ուրիշներ:

<sup>17</sup> Буржуазные и мелкобуржуазные партии России в Октябрьской революции и гражданской войне / материалы конференции /, М., 1980.

<sup>18</sup> Хуршудян Л. А., К вопросу о ленинской оценке "социальной сущности - партии Дашнакцутюн", «Լրաբեր», 1988, թիվ 7 (հուլիս), էջ 12-31

<sup>19</sup> Ա. Ս. Համբարյան, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990:

<sup>20</sup> Ա. Ս. Համբարյան, ՀՀ Դաշնակցություն կուսակցության քաղաքական կողմնորոշման շուրջ (1890-1917), «Լրաբեր» ՀՀ ԳԱԱ հաս. գիտ. 1991, թիվ 2, էջ 3-16:

<sup>21</sup> Хуршудян Р. Л., Критический анализ политики и идеологии армянской мелкобуржуазной партии Гнчак /1917-1921гг. /, /автореферат /, Е., 1981, С. Г. Меликян, Борьба большевистских организации Закавказья против идеологии и политики мелкобуржуазной партии эсеров /1908-1918гг. /, /автореферат /, Е., 1983, Д. С. Хечумян, критический анализ идеологии и политики Армянской народной партии /1917-1921гг. /, /автореферат /, Е., 1987.

«սպիտակ» էջերի լուսաբանությունը կարծես հանդես եկան միաժամանակ՝ քաղաքական ուժ տալով ու լրացնելով միմյանց: Լույս տեսան տասնյակ ճանաչված պատմաբանների, հայոց պատմության ամենատարբեր խնդիրներին ու մասնավորապես Հայաստանի առաջին Հանրապետությանը, հայ քաղաքական կուսակցություններին, Հայկական Հարցին ու համանման հիմնախնդիրներին նվիրված հոդվածներ, գրքեր ու գրքույկներ<sup>22</sup>:

\* \* \*

ՀՀ ու նրա խորհրդարանի պատմության լուսաբանումը սկիզբ է առնում դեռ հանրապետության գոյության շրջանից: Նրա առաջին տարեգիրքներն են եղել ՀՅԴ գործիչներ, խորհրդարանի պատգամավորներ Ս. Վրացյանը, Հ. Քաջազունին, Ալ. Խատիսյանը, Հ. Տեր-Հակոբյանը (Խրապեկ), Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Բաբայանը, Վ. Նավասարդյանը, Կ. Սասունին և այլոք, որոնք հանդիսացել են ոչ միայն այդ ժամանակաշրջանի դեպքերի ականակտեսը, այլ դրանց հիմնական մասի ակտիվ մասնակիցն ու կազմակերպիչը:

<sup>22</sup> Վ. Հ. Մելիքյան, Փետրվարյան հեղափոխությունը և հայկական ազգային խորհուրդների ստեղծումը (1916-1917 թթ. հոկտեմբեր), «Լրաբեր» հաս. գիտ., Ե., 1989, թիվ 6, Գ. Մանուկյան, Քաղաքական կուսակցությունները ՀՀ խորհրդարանում, «Նորը», 1991, թիվ 5, Ս. (Մերիակ) Ամիրյան, Հայ Հեղափոխական Դաշնակցության գնահատականի շուրջը, «Նորը», 1991, թիվ 1, Հ. Ռ. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունը, Ե., 1991, նույնի՝ Անդրանիկի ժամանակը, գ. 1, 2, Ե., 1996, Կ. Խ. Մարդարյան, Պատմություն և իրականություն, Ե., 1991, Գ. Ա. Գալոյան, Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը Առաջին համաշխարհային պատերազմից հետո «Լրաբեր» հաս. գիտ., 1993, թիվ 4, Ա. Հակոբյան, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1992, նույնի՝ Անկախության գաղափարը ՀՀ Դաշնակցության ծրագրերում (1890-1920 թթ.), «Լրաբեր» հաս. գիտ., 1993, թիվ 3, նույնի՝ ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը, Ե., 1994, Ռ. Լ. Խոլաշուրյան, Հայ ժողովրդավարության քաղաքական ուղեգիծը (1917-1918 թթ.), «Լրաբեր» 1993, թիվ 1, Վ. Ղազախեցյան, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., «Ազատամարտի» հավելված «Միասը», Ե., 1993, Լ. Ա. Խոլաշուրյան, Հայկական հարցը, Ե., 1995, Գ. Բ. Ղարիբջանյան, Յեղասպանությունը պատմության դատաստանի առաջ, Ե., 1995, Ա. Համբարյան, Ս. Ստեփանյան, Հայոց Յեղասպանությունը, Ե., 1995, Ռ. Սահակյան, Կ. Խոլաշուրյան, Հայոց Յեղասպանությունը, տասնամյակների լույսի ներքո, Ե., 1995, Հ. Մ. Հարությունյան, Լեոնային Ղարաբաղը 1918-21 թթ., Ե., 1996, Ռ. Ավագյան, Հանցավորությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.), Ե., 1997, Ե. Ա. Չոհրաբյան, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Ե., 1997, Վ. Հ. Մելիքյան, 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Ե., 1997, Ս. Հ. Մելիքյան, Սոցիալիստ-հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում 1900-1920 թթ., Ե., 1997, Հ. Ա. Ավետիսյան, Հայկական հարցը 1918թ., Ե., 1997, Գ. Ա. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Ե., 1999, Назорный Карабах в 1918-1923гг., сборник документов и материалов, Ереван, 1992, отб. ред. В. А. Микаелян, Армянский вопрос и геноцид армян в Турции / 1913-1919 /, Материалы политархива МИД Кайзеровской Германии, составитель В. А. Микаелян, Ереван, 1995, Г. А. Аветисян, Брест-Литовск: как были отторгнуты Турция, Армения и Батум, Ереван, 1994 и др.

ՀՀ պատմության ուրվագիծը առաջին անգամ տվել է Ս. Վրացյանը ՀՅԴ պաշտոնաթերթեր՝ «Հորիզոնի», «Զանգի», «Հայաստանի աշխատավորի», «Հառաջի» համարներում պարբերաբար զետեղված հոդվածաշարերով: Թերթային խմբագրականներից ու հոդվածներից գատ՝ 1920 թ. Բոստոնում լույս տեսավ «Անկախ Միացյալ Հայաստան» գրքույկը<sup>23</sup>: 1922 թ. «Հայրենիք» հանդեսում լույս տեսավ Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» վերտառությամբ պատմական ակնարկը<sup>24</sup>, իսկ 1923 թ.՝ «Հուշեր մոտիկ անցյալից» աշխատությունը<sup>25</sup>: Սրանցում Ս. Վրացյանը ուրվագծել է ՀՀ սկզբնավորման պատմությունը՝ ավելի կատարյալ թողնելով ապագային: Եվ պետք է ասել, որ նա փայլուն կատարեց իր խոստումը: 1928 թ. լույս տեսավ նրա հիմնարար աշխատությունը<sup>26</sup>: Այն հետագայում բարելավվեց և 1958 թ. վերահրատարակվեց Բեյրութում: Գիրքն ունեցավ նաև այլ հրատարակություններ: Սույն մենագրությունը իրավամբ համարվում է ՀՀ պատմությանը նվիրված ամենամաքողական աշխատությունը, որը կարելի է համարել և՛ պատմագիտական ուսումնասիրություն, և՛ հուշագրություն: Մեծարժեք աշխատություն է նաև Ալ. Խատիսյանի հուշագրային մենագրությունը՝ նվիրված ՀՀ ծագման ու զարգացման պատմությանը<sup>27</sup>: ՀՀ պատմաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների գնահատումներին, հայ քաղաքական կուսակցությունների և խորհրդարանի վերջին փուլի գործունեությանն են նվիրված Հակոբ Տեր-Հակոբյանի (Իրազեկի) հուշերը<sup>28</sup>:

ՀՀ պետական կառուցվածքի և ժողովրդավարական համակարգի առաջին քննադատներից է Հ. Քաջազունին իր հայտնի աշխատությամբ<sup>29</sup>: Մինչ ներքոնշյալ գրքին անդրադառնալով իրազեկներ, որ ՀՀ առաջին վարչապետ Հ. Քաջազունին իր արտասահմանյան հայտնի գործողման ժամանակ, ԱՄՆ-ի համակրանքը շահելու նպատակով, պատրաստել և 1919 թ. աշնանը ամերիկյան սենատին էր ներկայացրել «Հայաստանի Հանրապետություն» վերտառությամբ հուշագիրը: Այդ ամփոփ աշխատության մեջ հեղինակը փաստական հարուստ նյութերի հիման վրա տվել է ՀՀ տասնվեց ամիսների սեղմ, սակայն բովանդակալից պատմության ուրվագիծը: Հ. Քաջազունու կազմած այս հուշագիր-պատմության ինքնագիր օրինակը պահվում է ՀՀ ՊԿՊ արխիվային ֆոնդում<sup>30</sup>: Արժեքավոր ուշագրավ այս փաստաթուղթը հրատարակվել է պրոֆ. Վ. Ղազախեցյանի կողմից<sup>31</sup>:

<sup>23</sup> Ս. Վրացյան, Անկախ և Միացյալ Հայաստան, Բոստոն, 1920:

<sup>24</sup> «Հայրենիք», Բոստոն, 1922, թիվ 1-2:

<sup>25</sup> «Հայրենիք», 1923, թիվ 1 (նույնները):

<sup>26</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928:

<sup>27</sup> Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968:

<sup>28</sup> Իրազեկ, Մոտիկ անցյալից, Պեյրութ, 1956:

<sup>29</sup> Հ. Քաջազունի, ՀՀ Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Պուրբեշ, 1923:

<sup>30</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, Գ. 1, Գ. 498:

<sup>31</sup> Հ. Քաջազունի, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993:

Մի քանի տարի անց՝ պատմաքաղաքական դեպքերի կտրուկ շրջադարձներից հետո, Հ. Քաջազունին գրում է իր հանրագումարային գեկուցում-աշխատությունը՝ «Հ.Յ.Դաշնակցությունը անելիք չունի այլևս», որում Դաշնակցության հանդեպ կայացնում է խիստ դատաւճիռ: ՀՅԴ Վիեննայի խորհրդաժողովը (1923 թ.) մերժում է գեկույցի հիմնական գաղափարը, որից հետո Քաջազունին դուրս է գալիս կուսակցության շարքերից և վերադառնում հայրենիք՝ Խ. Հայաստան: Սակայն այդ մեղադրական աշխատությունը չփրկեց նրան ստալինյան բռնաճնշումներից: Այս գրքի առնչությամբ պատասխան քննադատական աշխատություններ ու հոդվածաշարեր գրեցին Քաջազունու նախկին կուսակից ընկերներ՝ Ս. Վրացյանը, Վ. Նավասարդյանը, Ա. Ջամալյանը և ուրիշներ<sup>32</sup>: Հ. Քաջազունին իր այս գրքում անդրադարձել է ՀՅԴ գործունեության հետ առնչվող բազմապիսի հարցերի, տվել դրանց սուր և ոչ միանշանակ գնահատականներ: Ընդամենն նա անդրադարձել է նաև ՀՀ պատմության և Հայաստանի խորհրդարանի գործունեության խնդիրներին: Հ. Քաջազունին բավականին մռայլ գույներով է տալիս ՀՅԴ, Հայաստանի կառավարության ու խորհրդարանի գործունեության քաղաքական գնահատականը: Աշխատության վերնագիրը ինքնին բովանդակում է նրա էությունը: Անշուշտ, հեղինակի կողմից արվող քննադատության մի որոշ մասը դառը ճշմարտություն է: Սակայն նրա գնահատականների ու որակումների մի գզալի մասը, կարծում ենք, սուբյեկտիվ են և ոչ արդարացի: ՀՀ և ՀՅԴ երբեմնի քաղաքական ու պետական գործիչը 1920-ական թվականների սկզբների քաղաքական կոնյունկտուրայի ազդեցության տակ գրում էր. «Պառլամենտ չկար Հայաստանում, մի դատարկ ձև էր առանց պարունակության»<sup>33</sup>: Այնուհետև շարունակում էր. «Պետական հարցերը քննության էին առնվում ու լուծվում դռնփակ, դաշնակցական ֆրակցիայի սենյակում ու ապա հայտարարվում պառլամենտի ամբիոնից: Իրոք չկար և պառլամենտական ֆրակցիա, որովհետև սա դրված էր Դաշնակցության բյուրոյի խիստ հսկողության տակ ու պարտավոր էր կատարել նրա հրամանները»<sup>34</sup>: Ահա այսպիսին էր նախկին դաշնակցական երևելի գործիչ մեղադրանքը իր իսկ կուսակցության հասցեին: Ուսումնասիրությունը մեզ բերել է այն հետևության, որ վերոհիշյալ տողերի հեղինակը գույները բավականին խտացրել է: Այդ մասին կխոսվի իր տեղում: Քաջազունու քննադատական դիտողությունները, թերևս, կարելի է տարածել Բյուրո-կառավարության ժամանակաշրջանի վրա (1920 թ. մայիս-նոյեմբեր): Գրքում տրված որակումներն ու գնահատականները խիստ են, հաճախ կողմնակալ ու վիճելի: Հեղինակը ձգտել է ամեն կերպ

հիմնավորել գրքի հանրահայտ վերնագրի ճշմարտացիությունը, այն է՝ ՀՅԴ պետք է հեռանա ասպարեզից և իր տեղը զիջի հայ բուլշևիկներին:

ՀՀ պատմության առաջին ուրվագծող հեղինակներից մեկն էլ բազմավաստակ պատմաբան Լեոն է՝ իր «Անցյալից» աշխատությամբ<sup>35</sup>: Քաղաքական դեպքերին ականատես ու մասնակից հեղինակը հուշերի ու դատումների ձևով մեկ ամբողջ Վուխ (յոթերորդը) հատկացրել է Հայաստանի 1918-1920 թթ. անկախության հակիրճ պատմությանը: Այնտեղ կան դառը ճշմարտություններ, ճիշտ վերագնահատումներ: Բայց և այնտեղ կարելի է հանդիպել երբեմն վիճելի մտքերի, կառավարող կուսակցությանը հասցեագրված անհարկի մակդիրների ու արտահայտությունների<sup>36</sup>:

Հայ հասարակական մտքի և քաղաքական կուսակցությունների ուսումնասիրության տեսակետից ուշադրության արժանի է «սպեցիֆիկների» գաղափարախոս Դ. Անանունի եռահատոր կապիտալ աշխատությունը<sup>37</sup>: Այստեղ հեղինակը «սպեցիֆիկյան» դիրքերից տվել է 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբի ռուսահայ հասարակական-քաղաքական մտքի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման պատմությունը: Այնտեղ, մեր կարծիքով, վիճելի ու անընդունելի առանձին դրույթների ու դատողությունների կողքին կան նաև ճշմարիտ և ուսանելի մտքեր ու հետևություններ, որոնք որոշակի ներդրում են հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ:

Հայաստանի խորհրդարանի, Դաշնակցության՝ որպես կառավարող կուսակցության գործունեության քննադատությանն են նվիրված Գրիգոր Ջաղեթյանի հոդվածաշարերը՝ «Հայաստանի պառլամենտը», «Դաշնակցական շեֆերի հաշվետվությունը», «Դաշնակցականների արդարադատությունը» և այլն, որոնք լույս են տեսել «Ռանչքար Իրանի» թերթի 1922 թ. համարներում<sup>38</sup>: Այդ հոդվածներում գնահատելի ու արժեքավորն այն է, որ Հայաստանի խորհրդարանի և դաշնակցական կառավարության ու ղեկավարների մասին հիշողություններ է պատմում ու բնութագրություններ ամրում ՀՀ պատասխանատու պաշտոններ վարած և այդ թվում պետական թիվ մեկ վերահսկիչ աշխատած գործիչը:

Տեղին ու արդարացի են հուշագրողի մերկացումները հանրապետության պետական ասպարատի վերին և ստորին օղակներում առկա շահատակությունների, կաշառակերության, պետական ու բարեգործական միջոցների յուրացումների, բռնությունների ու բռնագրավումների մասին և այլն: Ասենք, որ նման երևույթների մասին փաստում են նաև դաշնակցական հեղինակները և ժամանակի իրենց մամուլը: Սակայն, կարծում ենք, որ իրավացի չէ հեղի-

<sup>32</sup> Ս. Վրացյան, *Խորհրդավումներ, Պոսթրն, 1924, Վ. Նավասարդյան, Հ.Յ.Դաշնակցության անելիքը, Գահիրե, 1924, Ա. Ջամալյան, Հ. Քաջազունին և Հ.Յ.Դաշնակցությունը* («Հայրենիք», 1924, թիվ 3, էջ 48-60, թիվ 4, էջ 117-130):

<sup>33</sup> Հ. Քաջազունի, *Հ.Յ.Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Պոսթրն, 1923, էջ 45*:

<sup>34</sup> Նույն տեղում:

<sup>35</sup> Լեո, *Անցյալից, Թիֆլիս, 1925*:

<sup>36</sup> Լեո, *նշվ. աշխ., 404, 413, 454-456 և այլն*:

<sup>37</sup> Դ. Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում (1800-1870), հ. 1, Բաքու, 1916, /1870-1900/, հ. 2, Էջմիածին, 1922, (1901-1918), հ. 3, Վենետիկ, 1926*:

<sup>38</sup> Հոդվածաշարը լույս է տեսել առանձին գրքույկով՝ տես Գ. Ջաղեթյան, *Մոտիկ անցյալից, Ե., 1969*:

նակը, երբ մմանատիպ մեղադրանք է վերագրում ամբողջ խորհրդարանին, Դաշնակցություն կուսակցությանը և կառավարությանը: Գ. Ջաղերյանի գրքով կոմ տեղ են գտել փաստական մի շարք անճշտություններ: Օրինակ՝ չի կարելի համաձայնել հեղինակի այն պնդմանը, թե «Դաշնակցականների ճնշման տակ 1919 թ. մայիսին Հայաստանի խորհուրդը լուծարվեց»<sup>39</sup>: Նախ՝ Հայաստանի խորհուրդը արձակվել է 1919 թ. հունիսի 5-ին. իսկ երկրորդ՝ խորհուրդը ինքնալուծարման ենթարկվեց այն բանի հետանքով, որ երեք կուսակցությունների (ՀԺԿ, սոց.- դեմ. և Էսեռական) խմբակցությունները (թվով 18 պատգամավորներ), բողոքելով կառավարության մայիսի 28-ին հրապարակած «Միացյալ և Անկախ Հայաստանի մասին» ակտի դեմ, ցուցադրաբար հեռացան խորհրդարանից: Դրանից հետո չէր մնում այլ բան, քան դադարեցնել խորհրդի աշխատանքները և արագացնել նոր խորհրդարանի ընտրությունները: Փաստական անճշտություն և միտումնավորություն պետք է համարել հուլիսի 9-ը. Ջաղերյանի հայտնած այն տեղեկությունը, թե Արտակարգ դատարանների մասին կառավարության օրենքը ընդունվել է 1920 թ.<sup>40</sup> մայիսյան դեպքերից հետո և իբր «այդ օրենքի ուժը տարածվել է հրապարակումից մի ամիս առաջ կատարված հանցանքների վրա»<sup>41</sup>: Իրականում այդ օրենքը ընդունվել է նախարարների խորհրդի մայիսի 8-ի նիստում, այսինքն այն բանից առաջ, երբ նոր պետք է ծավալվեին մայիսյան ապստամբության հիմնական իրադարձությունները, ուստի հարկ չէ խոսել այդ օրենքի հետադարձ գործադրության մասին:

Պատմական գրականության մեջ մեր կողմից քննվող հիմնահարցերին խորհրդարանին և կուսակցություններին նվիրված ուսումնասիրություններ մինչ օրս չկան: Այս տեսակետից առանձնանում է, թերևս, միայն Արշամ Խոնդկարյանի «Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում» հուշերի հոդվածաշարը<sup>42</sup>: Անշուշտ, Էսեռական կուսակցության այս գործիչը, իր հուշերը շարադրելիս, առանձին դեպքերում հանդես է բերել կողմնակալ մոտեցումներ: Օրինակ՝ մենք համակարծիք չենք Ա. Խոնդկարյանի արտահայտած այն մտքին, թե հայ քաղաքական բոլոր կուսակցությունները դարձան «հայ նորաստեղծ պետական կյանքի շարժիչ ուժերը»<sup>43</sup>: Ինչպես հետո կտեսնենք՝ իրականում «ձախ» կուսակցությունները (Էսեռները, որի ղեկավար անդամն էր հենց ինքը՝ Ա. Խոնդկարյանը, սոցիալ-դեմոկրատ մենչևիկները ու հատկապես բուլշևիկները) դեմ էին Հայաստանի անկախությանը և կամա թե ակամա՝ խաբխուրում էին հայոց պետականության հիմքերը: Իսկ ինչ վերաբերում էր «աջ» համարվող Հայ ժողովրդական կուսակցությանը (ՀԺԿ), ապա նա ուներ ոչ այնքան հակաանկախական ու հակապետական բնույթ, որքան՝ հակադաշնակցական:

<sup>39</sup> Գր. Ջաղերյան, *Մոտիկ անցյալից*, Ե., 1969, էջ 9:

<sup>40</sup> Գր. Ջաղերյան, *նշվ. աշխ.*, էջ 24:

<sup>41</sup> «Անմ», *Փարիզ*, 1933, թիվ Ա, Բ, 1934, թիվ Գ, Ե, Զ:

<sup>42</sup> «Անմ», *Փարիզ*, 1934, թիվ Ե, էջ 52:

Վերապահությամբ պետք է մոտենալ նաև Ա. Խոնդկարյանի՝ իր կուսակցության գործունեությանը տված այն գնահատականին, թե Էսեռների ընդդիմությունը եղել ու մնացել է պատասխանատու դիրքերում<sup>43</sup>: «Մենք (Էսեռները Ա. Հ.),- գրում էր Ա. Խոնդկարյանը,- անպատասխանատու ընդդիմադիրներ չէինք ոչ Հայաստանի խորհրդում, ոչ էլ, առհասարակ, Հայաստանում»<sup>44</sup>: Սակայն այդ մասին իր տեղում կտեսնենք, որ Էսեռ պատգամավոր Ա. Խոնդկարյանը 1919 թ. օգոստոսին արտահայտել է միանգամայն հակադիր տեսակետ<sup>45</sup>:

Մեր առաջ ծառացած հիմնահարցի լուսաբանման համար սկզբնաղբյուրի նշանակություն ունի ՀՅԴ երևելի գործիչ Ռ. Տեր-Մինասյանի բազմա-հատոր հուշերի՝ ՀՀ պատմության շրջանին վերաբերող հատորը<sup>46</sup>: Այն սկսվում է Հանրապետության սկզբնավորումից՝ հասցնելով մինչ 1920 թ. մայիսյան դեպքերը: Ռուբենը կուսակցության մեջ՝ պետության կառավարման խնդիրներում, հարում էր «հեղափոխական», այսպես կոչված «կոմիտա-ջիության» քնին: Ուստի գրքում տրված նրա մի շարք գնահատականներին մոտեցել ենք քննադատաբար ու առանձին դեպքերում վերապահությամբ: Պետք է ասել, որ անցած ժամանակաշրջանում սփյուռքում ստեղծվել է հարուստ գրականություն հայ քաղաքական կուսակցությունների պատմության վերաբերյալ<sup>47</sup>:

Սփյուռքի կուսակցական մամուլում հրատարակվել են նաև մեր ուսումնասիրության թեմային առնչվող ուշագրավ հոդվածներ, որոնցից առանձնապես կուզենայինք առանձնացնել Ս. Սնարի<sup>48</sup>, Բենիտի<sup>49</sup>, Հ. Քուրբյանի<sup>50</sup> և Ռ. Հովհաննիսյանի<sup>51</sup> հոդվածաշարերը: Մեր ժամանակներում ՀՀ ամբողջա-

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 53:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 54:

<sup>45</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 10 օգոստոսի, 1919 թ.:

<sup>46</sup> Ռուբեն, *Հայ յեղափոխականի մը հիշատակները*, հ. է. Լոս Անճելես, 1952:

<sup>47</sup> Մ. Վարանդյան, Հ.Յ. Դաշնակցության պատմություն, հ. 1, Փարիզ, 1932, հ. 2, Գա-հիրե, 1950, Մ.Գ. Ծիզմեճյան, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցության (1890-1925), Ֆրեզնո, 1930, Ա. Կիտուր, Պատմություն Մ.Դ. Հնչակյան կուսակցության /1887-1963/, Հ.Ա., Պեյրուք, 1962, Հ.Բ. Պեյրուք, 1963, Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, Մալխաս, Ապրումներ, Հ.Ա. Պեյրուք, 1956, Լ. Չորմիսյան, Կուսակցությունները և հայրենիքը, Փարիզ, 1946, Նույնի՝ Կուսակցությունները, Ե., 1995, Ա. Յափուճյան, Համառոտ պատմություն Ռամկավար ազատական կուսակցության, Գա-հիրե, 1977, Ա. Ջամալյան, Հ.Յ. Դաշնակցությունը և ընկերվարությունը, Պեյրուք, 1979, Վ. Ղազարյան, Արմենական կուսակցություն /ակ-նարկներ/, Պեյրուք, 1985, Հ. Տասնապետյան, Հ.Յ. Դաշնակցությունը իր կազմությու-նեն մինչև Ժ. ընդհ. Ժողովը /1890-1924/, Աթենք, 1988 և ուրիշներ:

<sup>48</sup> Ս. Սնար, Կուսակցությունները Հայկական հանրապետության մեջ, «Հայրենիք», Բոստոն, 1920, թիվ 3:

<sup>49</sup> Բենիտ, Կուսակցությունները և անոնց դերը, «Հայրենիք», 1929, թիվ 3:

<sup>50</sup> Հ. Քուրբյան, Ուրվագիծ Հ.Յ.Դ. պատմության 1919-1924 հնգամյակի, «Ազդակ շա-քաթորյակ», Դ. տարի, 1973, թիվ 35-42:

<sup>51</sup> Ռ. Հովհաննիսյան, Հ.Յ. Դաշնակցության դերը, «Ասպարեզ», 28/29 մայիսի 1992 թ.:

կան պատմությանը նվիրված բարձրարժեք հիմնարար գործը, անկասկած, ամերիկահայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի բազմախառն մեծագործությունն է անգլերեն լեզվով<sup>52</sup>: Ուշադրության է արժանի նաև սփյուռքահայ պատմաբան Ռ. Փիրումյանի աշխատությունը<sup>53</sup>:

Այս ամենից վատ՝ ժամանակի ընթացքում խնամքով կազմվել և սփյուռքում լույս են տեսել կուսակցությունների գործունեությանը վերաբերող փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ և այլն<sup>54</sup>:

\* \* \*

ՀՀ խորհրդարանի և հայ քաղաքական կուսակցությունների պատմության լուսաբանման համար լայնորեն օգտագործել ենք հանրապետության կենտրոնական արխիվների ֆոնդերը:

Մասնավորապես հետազոտված են ՀՀ ՊԿՊԱ (ներկայումս՝ ՀԱԱ) «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.» բաժնի բոլոր ֆոնդերը, այդ թվում՝ 198 («Հայաստանի խորհրդարան») ֆոնդը: Հարկ է նշել, որ Հայաստանի խորհրդի ընդունած օրենքները ի մի են բերվել ու հրատարակվել առանձին ժողովածուով: Խորհրդի օրենքների այդ հավաքածուն պահվում է ՀՀ ՊԿՊԱ 200 «ՀՀ արտգործնախարարության» ֆոնդում<sup>55</sup>:

ՀՀ երկրորդ գումարման խորհրդարանի ընդունած օրենքների հավաքածուն, որը տպագրված է բյուլետենների ձևով, պահվում է 202 «ՀՀ ֆինանսների նախարարության» ֆոնդում<sup>56</sup>: Հայաստանի խորհրդարանի ընդունած օրենքները կազմված և հրատարակված են նաև առանձին գրքերի ձևով<sup>57</sup>: Աղբյուրագիտական առավել մեծ արժեք ունի 1998թ. լույս տեսած «ՀՀ պառլամենտի օրենքները /1918-1920թթ./» համահավաք ժողովածուն:

Հրատարակված սկզբնաղբյուրներից է նաև ընտրությունների մասին օրենքը<sup>58</sup>: Առանձին գրքույկներով հրատարակվել են նաև խորհրդարանի կարևոր նիստերի արձանագրությունները: Այդպիսիներից է, օրինակ, 1920 թ. մայիսի 3-ի արտակարգ նիստը, որտեղ քննության ենթարկվեցին Հայաստա-

նի արտաքին քաղաքականության սկզբունքային մի շարք խնդիրներ<sup>59</sup>: Հայաստանի խորհրդարանի տղաքական արձանագրությունների մի մասը հետագայում /1930-ական թթ./ հրատարակվել է Ս. Վրացյանի խմբագրությամբ Փարիզում լույս տեսնող հասարակական-քաղաքական ու մշակութային «Վեմ»<sup>60</sup>, ինչպես նաև ավելի ուշ՝ «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսներում<sup>61</sup>: Բայց սրանք արձանագրությունների մի փոքր մասն են միայն: Խորհրդարանի նիստերի արձանագրությունների մի զգալի մասը չի պահպանվել: Ինչպես վկայում է Ս. Վրացյանը՝ բնագիր շատ արձանագրություններ և այլ արխիվային նյութեր ոչնչացել են 1920-1921 թթ. ձմռանը՝ քաղաքացիական հիմնարկություններում՝ դրանք օգտագործելով որպես վառելանյութ կամ էլ՝ իբրև ապրանք փաթաթելու թուղթ<sup>62</sup>: Կորսված արձանագրությունների բացը հիմնականում հնարավոր է եղել լրացնել «Հորիզոն», «Ջանգ», «Հայաստանի աշխատավոր», «Աշխատավոր», «Հառաջ», «Ժողովրդորդ» պարբերականներում ժամանակին լույս տեսած խորհրդարանի արձանագրությունների քաղվածքներով:

Հայաստանի առաջին Հանրապետության պատմության ուսումնասիրության համար առանձնապես կուզենալինք առանձնացնել ՀՀ ՊԿՊԱ ֆոնդ 200, ց.1, գ.422 և 427 մաս 1-ին և 2-ում պահվող բավականին ծավալուն նյութերը<sup>63</sup>: Սրանք իրենցից ներկայացնում են ՀՀ ներքին և արտաքին կյանքի տարբեր կողմերին վերաբերող պատմական տեղեկությունների մի հարուստ ժողովածու, որն առանձին տեղերում կրկնում է Հ. Քաջազունու արդեն հիշատակած հուշագրի նյութերը: Բայց ի տարբերություն վերջինիս՝ այստեղ շատադրանքը հասցված է մինչ ՀՀ անկումը 1920 թ. դեկտեմբերը:

Հայաստանի առաջին խորհրդարանի պատմության ակունքների ուսումնասիրման համար շահեկան պետք է համարել ՀՀ գլխավոր արխիվային վարչության «Բանբերի» աշխատակազմի պատրաստած ու հրատարակած փաստաթղթերի և նյութերի մեկ այլ ժողովածու, որը վերաբերում է 1917 թ. Արևելահայոց համագումարին՝ Հայոց Ազգային համախորհրդակցությանը<sup>64</sup>:

Հայ քաղաքական կուսակցությունների գործունեության վերհանման համար հանգամանորեն ուսումնասիրել ենք ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի (ՀԶԿՓ) ՊԿԱ-ի 4045 («Ս.Դ. Հնչակյան»), 4047 («ՀՅ Դաշնակցություն»), 1022 («Սպեցիֆիկներ»), 4033 («Կուսակցության պատմության»), 404 («Խորհրդարանի սոց.- դեմ. խմբակցություն») և այլ ֆոնդերը: Սակայն հիշյալ ֆոնդերում թեմային առնչվող նյութերը համեմատաբար աղքատիկ են:

<sup>59</sup> «Հայաստանի պառլամենտի 1920 թ. մայիսի 3-ի արտակարգ նիստը, Ե., 1920:

<sup>60</sup> «Վեմ», Փարիզ, 1934, թիվ 2, Լ:

<sup>61</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1990, թիվ 3, էջ 106-134, 1991, թիվ 3, էջ 42-91 և այլն:

<sup>62</sup> «Վեմ», Փարիզ, 1934, թիվ 2, էջ 113:

<sup>63</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 422, գ. 427, մաս 1 և 2:

<sup>64</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, թիվ 1-2:

<sup>52</sup> Hovannisian Richard G., *The Republic of Armenia*, Vol. 1, Berkeley, Los Angeles, London, 1971, Vol. 2, 1982, Vol. 3, 1996, Vol. 4, 1996.

<sup>53</sup> Ռ. Փիրումյան, *Հայաստանը Հ.Յ.Դ. Բոլշևիկ հարաբերությունների ոլորտում (1917-1921)*, Ե., 1997:

<sup>54</sup> «Դիվան Հ.Յ. Դաշնակցության պատմության», ՀՀ. 1 և 2, Պոսթրև, 1934, «Նյութեր Հ.Յ. Դաշնակցության պատմության համար», Հ.Ա., Բեյրութ, 1984, Հ.Բ., Բեյրութ, 1985, Հ.Գ., Բեյրութ, 1985, Հ.Դ., Բեյրութ, 1985:

<sup>55</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, թթ. 1-87:

<sup>56</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 202, ց. 1, գ. 333:

<sup>57</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Ե., 1919, «Հայաստանի Հանրապետության օրենքների հավաքածու 1919 թ. (հրատարակություն պառլամենտի), ա.տ. և ք.», «Հայաստանի Հանրապետության օրենքների հավաքածու 1920 թ.», (հրատարակություն պառլամենտի), ա.տ. և ք.:

<sup>58</sup> «Օրենք Հայաստանի պառլամենտի ընտրությանը», ա.տ. և ք.:

Այն բացը, որ զգացել ենք արխիվներից, աշխատել ենք լրացնել ընթացիկ կուսակցական և ոչ կուսակցական պարբերական մամուլի նյութերով: Քաղաքական կուսակցությունների պատմության լիարժեք լուսաբանությունը անհնարին է առանց նրանց կենտրոնական ու տեղական պաշտոնաթերթերի ու ընդհանրապես ընթացիկ մամուլի նյութերի ուսումնասիրության: Միայն Հայաստանի Հանրապետությունում լույս էին տեսնում շուրջ վեց տասնյակի հասնող պարբերականներ<sup>65</sup>: Ընթացիկ մամուլը հանդիսանում է ժամանակաշրջանի բազմաշերտ իրականության արտացոլման հայելին: Կուսակցությունների գործունեության, հանրապետության ներքին ու արտաքին կյանքի բազմաբնույթ երևույթների մասին առատ նյութ են տալիս հատկապես «Հորիզոն», «Զանգ», «Խոսք», «Կայծ», «Աշխատավոր», «Աշխատանք», «Հայաստանի աշխատավոր», «Ժողովուրդ», «Հառաջ», «Ժողովրդի ձայն», «Հայաստանի ձայն», «Սոցիալիստ հեղափոխական», «Աշխատանքի դրոշակ», «Հայաստանի կոոպերացիա» թերթերը: Ընթացիկ մամուլի էջերում կարելի է հանդիպել ոչ միայն խորհրդարանի աշխատանքի վերաբերյալ տեղեկատվության, այլև շատ օրենքների ու օրինագծերի: Այս տեսակետից առանձնապես անփոխարինելի է ՀՀ պաշտոնաթերթ «Կառավարության լրաբերը»: Այն լույս է տեսել 1918 թ. սեպտեմբերի մեկից մինչև 1920 թ. հուլիսի 20-ը: Թերթի ամբողջական հավաքածուն պահվում է ՀՀ ՊԿՊ արխիվում:

<sup>65</sup> Ա. Հակոբյան, Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920թթ.), Ե., 2005, էջ 3-4:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ (ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ) ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

### 1. Պատմական ակնարկ

Համաշխարհային պատմությունից հայտնի է, որ պառլամենտը (խորհրդարանը), որպես օրենսդիր իշխանության մարմին, հանդես է եկել այն ժամանակ, երբ եվրոպական մի շարք երկրների թագավորներ, դեռևս իրենց միապետական, կենտրոնացված, ամուր իշխանությունը հաստատած չլինելով, կարիք զգացին երկրին վերաբերող մի շարք խնդիրների լուծմանը ներգրավել տարբեր դասերի ներկայացուցիչների՝ այդպիսով հիմք դնելով իշխանության մոր մարմնի՝ դասային ներկայացուցչական (պառլամենտ) և պետության կառավարման պատմական մոր ձևի՝ դասային ներկայացուցչական միապետության:

Արդեն մոր դարաշրջանում Արևմուտքի երկրների մեծ մասում պետական համակարգի անբաժանելի ու անօտարելի մասը դարձավ խորհրդարանը: Նա ժամանակակից իմաստ և բովանդակություն ստացավ այն ժամանակ, երբ նյութական անհրաժեշտություն զգացվեց սահմանափակել կամ վերացնել բացարձակ միապետական (անձնիշխանական), ինքնակալական կամ ամբողջատիրական իշխանության համակարգը և ստեղծել ամբողջ հասարակության (ժողովրդի), ազգի առնվազն մեծամասնության կամքի ու ցանկության հաշվառման վրա հիմնված, օրենքներով ու օրինականությամբ կառավարում: Այսինքն՝ ինքնակալի միահեծան իշխանությունը սահմանափակել ու փոխարինել օրենքի գերակայության վրա հիմնված իշխանությամբ, հաստատել սահմանադրական-հանրապետական կառավարում, որի հիմքում ընկած է ժողովրդական ներկայացուցչությամբ կազմված խորհրդարանը:

Պառլամենտարիզմը ժողովրդավարական իշխանության ձև է, որը ենթադրում է կառավարում ժողովրդի (հասարակության) ներկայացուցչության միջոցով, իշխանությունների (օրենսդիր, գործադիր և դատական) տարանջատվածություն, կառավարության պատասխանատվություն խորհրդարանի առաջ և այլն: Խորհրդարանը հանդիսանում է քաղաքացիական հասարա-

կուրյան հաստատման ճանապարհին կարևորագույն պետաիրավական ու քաղաքական հաստատություն:

Խորհրդարանական համակարգի դասական երկիր ու նախահայրենիք է համարվում Անգլիան: Տվյալներ կան այն մասին, որ այնտեղ ժողովրդական ներկայացուցչության՝ խորհրդարանի առաջին նստաշրջանը գումարվել է 1265 թ., իսկ նույն դարի 90-ական թվականների վերջերից այն սկսել է գործել որպես ինքնուրույն և մշտապես գործող հաստատություն (մարմին)<sup>1</sup>: Այդ ժամանակ էլ հանդես եկավ «Պառլամենտ» /Parliamentum/ անվանումը<sup>2</sup>: Իր ձևավորման պահից անգլիական խորհրդարանը կատարում էր երկմիասնական խնդիր. մի կողմից նա դիտվում էր «միապետական իշխանության սահմանափակող», իսկ մյուս կողմից՝ թագավորի և նրա հպատակների միջև երկիրը կառավարելու նոր համագործակցության (ընկերակցության- Partnership) ձև (եղանակ)<sup>3</sup>:

Անգլիական խորհրդարանը կոչված էր թագավորի և ժողովրդի /հասարակության/ միջև հաստատել յուրօրինակ հավասարակշռություն ու՝ ներդաշնակություն: Եվ պետք է ասել, որ դարերի ընթացքում նա հաջողությամբ է կատարել իր պատմական առաքելությունը և որից մարդկությունը ուսանելու շատ բան ունի:

\* \* \*

Հայ իրականության մեջ պառլամենտի, պառլամենտական-հանրապետական կարգեր հաստատելու գաղափարը, ինչպես հայտնի է, առաջին անգամ արծարծվել է 18-րդ դարում<sup>4</sup>, Անգլիայի գերիշխանության տակ գտնվող հեռավոր Հնդկաստանում հայ հայրենասերների Մադրասի խմբակի կազմում ու 1788-1789թթ. ընթացքում հրատարակած «Որոգայք փառաց» գրքում (թեև տիտղոսաբերքին նշված է 1773թ.): Նրանում ապագա ազատագրված Հայաստանի բարձրագույն ներկայացուցչական մարմինը՝ խորհրդարանը, անվանվում էր «Տուն Հայոց»:

Խորհրդարանն ինքնին ենթադրում է օրենք և օրինականություն: «Որոգայք փառաց»-ի հեղինակ Շահամիր Շահամիրյանը հայ ժողովրդի փրկությունը և երջանկությունը, անկախությունից զատ, տեսնում էր նաև ռամկավարական հանրապետության, օրենքի գերակայության ու խորհրդարանական համակարգ ունենալու մեջ: Հսկայական դեր էր տրվում օրենքին՝ որպես ժողովրդի կամքի. «Օրենք մեր եղիցին տեր և թագավոր մեր»<sup>5</sup>: Ըստ Շահամիր-

յանի՝ ապագա (անկախ) ազատագրված Հայաստանը պետք է լիներ ռամկավարական հանրապետություն, որտեղ ժողովուրդն էր լինելու երկրի բարձրագույն տերը և իշխանության աղբյուրը: Նա էր օրենքներ տալիս և կառավարում երկիրը՝ հանձին իր ներկայացուցչական մարմնի՝ խորհրդարանի՝ «Հայոց տան»: Վերջինս լինելու էր միապետանի՝ կազմված մոտ 517 պատգամավորներից:

«Հայոց տունը» ոչ միայն երկրի բարձրագույն օրենսդիր մարմինն էր, այլև բովանդակ իշխանության աղբյուրը (կրողը): Նրանից էին բխելու երկրի վարչական, երևադարձային, երևադարձային իշխանությունները: Ըստ «Որոգայքի» հեղինակի՝ «Հայոց տան» օրենքներն ու կարգադրությունները պարտադիր էին բոլորին, և ոչ ոք՝ ոչ մի գործադիր, դատական իշխանություն կամ անձնավորություն, չէր կարող դեմ գնալ կամ չհնազանդվել «Հայոց տանը»<sup>6</sup>:

Գնահատելով ամերիկյան սահմանադրությանը հասակակից այս փաստաթղթի նշանակությունը՝ պետք է ասել, որ չնայած ապագա Հայաստանի կառավարման համար նախատեսված օրենքների այս հավաքածուն կտրված էր Հայաստանի կյանքից ու իրական պայմաններից, նրա շատ թեզեր ու դրույթներ օտարածին, վերացական ու անիրական էին, բայց իր ժամանակի համար սա նշանակալի երևույթ էր հայ իրավաբանական մտքի պատմության մեջ: Ուշագրավ է, որ հետագա ժամանակաշրջանի հայ իրավաբանական միտքը օգտվել ու շարունակում է օգտվել «Որոգայք փառաց» գրքի քաղաքական ու գաղափարական առանձին թեզերից ու դրույթներից:

Արդեն 19-րդ դարում սահմանադրական-խորհրդարանական գործունեության առաջին նախաքայլը կարելի է համարել 1860 թ. արևմտահայերի Ազգային սահմանադրությունը: Հայ իրականության մեջ առաջին անգամ էր, որ գումարվեց, դարձյալ Եվրոպայից ներմուծված, յուրովի խորհրդարան հիշեցնող, արևմտահայ համայնքի ազգային գործերով ու ներքին խնդիրներով զբաղվող Ազգային ժողովը՝ իր ընտրված պատգամավորներով (երեսփոխաններով):

Արևմտահայերի քաղաքական իրավագրկության պայմաններում սահմանվում էր, որ Ազգային գործերի գլխավոր մարմինը, ազգի կամքի ու իրավունքների արտահայտիչը հանդիսանալու էր երեսփոխանական (պատգամավորական) **Ազգային ընդհանուր ժողովը**: Այն կազմված էր 140 երեսփոխաններից, որոնցից 80-ը ընտրվելու էին Կոստանդնուպոլսի թաղերից, 40-ը գավառներից, իսկ 20-ը պետք է լինեին եկեղեցականներ՝ ընտրված Կ. Պոլսի հոգևորականների կողմից<sup>7</sup>: Ազգային ընդհանուր ժողովը ընտրում էր Կ. Պոլսի պատրիարքին: Վերջինս էլ համարվում էր Ազգային ժողովի նախագահը և

<sup>1</sup> Парламенты зарубежных стран /справочник/, М., 1968, с. 26, Парламенты мира, М., 1991, с. 619.

<sup>2</sup> Е. В. Гумноба, Возникновение английского парламента, М., 1960, с. 333.

<sup>3</sup> Е. В. Гумноба, *Աշխ.*, էջ 27, 419:

<sup>4</sup> Հին Հայաստանում ժողովրդական ներկայացուցչության յուրօրինակ արտահայտություն կարելի է համարել Աշխարհաժողովները, որոնք գումարվում էին ժամանակ առ ժամանակ՝ երկրի ու ժողովրդի կյանքի ու ճակատագրի կարևորագույն /բախտորոշ/ հարցերը վճռելու կապակցությամբ:

<sup>5</sup> «Որոգայք փառաց», Մադրաս, 1773, էջ 89:

<sup>6</sup> «Հայրենիք», 1927, թիվ 8, էջ 133:

<sup>7</sup> Ստ. Պալասանյան, Պատմություն հայոց /սկզբից մինչև մեր օրերը/, Թիֆլիս, 1895, էջ 746, Մարության, Հայկական խնդիրը եւ Ազգային սահմանադրությունը Թուրքիայում /1860-1910/, Հ.Ա. /Հավելված/, Թիֆլիս, 1912, էջ 76:



իրականացնում էր գործադիր իշխանությունը: Նա միաժամանակ հանդիսանում էր միջնորդը Բ. Դռան (սուլթանական կառավարության) և հայ ազգի միջև<sup>8</sup>:

Ակներև է, որ Ազգային սահմանադրության մշակող հեղինակները (Ն. Ռուսինյան, Գ. Օտյան, Ն. Պալյան, Սիրվիլեն և ուրիշներ) քաջ ծանոթ են եղել «Ռոդայթ փառաց» գրքին: Արևմտահայ բանասեր և ազգային գործիչ Բժիշկ Վ. Թորգոմյանը հայտնում է, որ բժիշկ Սերվիլենի եղբայրը Կալկաթայից Կ. Պոլիս էր բերել «Ռոդայթ փառաց» գրքի մի օրինակ<sup>9</sup>: Որքան էլ որ Ազգային սահմանադրությունը անվանենք ոչ լիարժեք, իրավասություններից զուրկ, արևմտահայերի ներքին կյանքը, ազգային, կրոնական, կրթամշակութային և այլ գործերը կանոնակարգող մի կանոնադրություն, այդուհանդերձ, դա իր ժամանակի ու պայմանների համար նոր երևույթ էր, հայ հասարակական-քաղաքական կյանքի, հայ քաղաքական մտքի ուշագրավ թռիչք: Ազգային սահմանադրությունը պետք է դիտել որպես ազգային-մշակութային ինքնավարության մի դրսևորում: Ազգային սահմանադրության ընձեռած կրթամշակութային կյանքի զարգացման հնարավորությունները, ինչ խոսք, խթանեցին «հայ **ազգային ինքնագիտակցությունը**, որ նախերգանք էր ազատագրական շարժումի»<sup>10</sup>:

Արևմտահայերի Ազգային սահմանադրության կարևորագույն տեսական հիմնադրույթներից էր այն, որ հռչակում էր ամբողջ ազգի և նրա յուրաքանչյուր անդամի միասնության ու ամբողջականության, փոխադարձ կապի ու պատասխանատվության գաղափարը: «Ազգին ամեն մեկ անհատը առ Ազգը **պարտավորություններ** ունի, Ազգն ալ իր կողմեն ամեն մեկ անհատ պարտավորություններ ունի, դարձյալ ամեն մեկ անհատ **իրավունքներ** ունի Ազգեն և Ազգն անհատներեն»<sup>11</sup>: Արդարև, կարելի է ասել, որ արևմտահայերի Ազգային սահմանադրությունը շոշափելի հետք թողեց հայ հասարակական-քաղաքական մտքի, ազգային ինքնագիտակցության աճի ու ժողովրդավարական-պառլամենտական գաղափարների արմատավորման գործում: Արտաքին ու ներքին ազդակներով հայ մարդը աստիճանաբար ընտելանում ու հաղորդակից էր դառնում պառլամենտարիզմի արժեքներին:

Առհասարակ, խորհրդարանն իր ձևավորման սկզբունքով հանդիսանում է հասարակության ամենամերկայացուցչական ու ամենաժողովրդավարական մարմինը: Նա, թերևս, այն եզակի համապարփակ ներկայացուցչական բարձրադիր հաստատությունն է, որը կոչված է ներկայացնելու ամբողջ ազգաբնակչությանը՝ իր ձգտումներով, մտածողությամբ ու կարողություններով:

<sup>8</sup> Б. А. Борьян, Армения, международная дипломатия и СССР, ч. I, М.-Л., 1928, с. 195.

<sup>9</sup> Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Վ. Թորգոմյանի ֆոնդ, գ. 44, էջ 3:

<sup>10</sup> Մ. Վարանդյան, Հ.Յ. Դաշնակցության պատմություն, Հ. I, Փարիզ, 1932, էջ 18:

<sup>11</sup> Ստ. Պալասանյան, Նշվ. աշխ., էջ 744, Սարուխան, Նշվ. աշխ., էջ 22, նաև «Գործ», Թիֆլիս, 26 սեպտեմբերի 1908 թ.:

րով: Զանի որ խորհրդարանը՝ որպես պետական կառույց, համաժողովրդական ներկայացուցչական մարմին է և ոչ թե՛ դասակարգային, ուստի կուսակցականության տեսանկյունից ինքնըստինքյան պառլամենտարիզմի գաղափարի գլխավոր կրողները հանդիսանում են ազգային և ժողովրդավարական կուսակցությունները: Պառլամենտը և պառլամենտարիզմը խորթ են մարքսիստական տիպի կուսակցություններին: Հայտնի է, որ մարքս-լենինյան (կոմունիստական) կուսակցությունները պառլամենտը և պառլամենտարիզմը համարում էին բուրժուական հասարակարգին բնորոշ պետաիրավական հաստատություն, ուստի և իրենց պրակտիկ գործունեության ընթացքում քննադատել ու պայքարել են դրա դեմ:

Խորհրդային պետության փորձով մենք գիտենք, որ ռուսական սոցիալ-դեմոկրատների հեղափոխական թևը՝ բոլշևիկ-կոմունիստները, առհասարակ մերժեցին պառլամենտարիզմը, որպես բուրժուական իշխանության մարմին և դրան հակադրեցին **խորհրդակցությունը**: Այս կապակցությամբ տեղին է հիշել Վ. Ի. Լենինի ««Չախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» աշխատությունը<sup>12</sup>: Սակայն այդ չի նշանակում, թե կոմունիստներն ընդհանրապես չեն ցանկացել իրենց ներկայացուցչությունը ունենալ խորհրդարանում: Իրենց պայքարի պատմությունից հայտնի է, որ ռուսական մարքսիստ-սոցիալիստները պառլամենտ (Պետական դումա) էին մտնում՝ նրա ամբիոնը ծառայեցնելու իրենց կուսակցական-դասակարգային շահերին՝ քարոզչություն անելու նպատակով:

Յուրաքանչյուր երկրի ժողովրդավարության մակարդակը կարելի է չափել նրա խորհրդարանով, նրանում ընդունված ու երկրում գործադրված օրենքներով: Ժողովրդավարական համակարգի գունարեւիներ են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ սահմանադրությունը, խորհրդարանը, օրենքները, ընդդիմությունը, ազատ խոսքը, ազատ մամուլը, ինքնակառավարումը, ինքնորոշումը, հանրաքվեն և այլն: Ժողովրդավարությունը, իրոք, մարդկության համակեցության ցարդ փորձված լավագույն ձևն է, որի այբուբենը, ցավոք, նոր-նոր ենք յուրացնում: Ամեն մի պետության արժեքը, անշուշտ, չափվում է իր քաղաքացիների համար ստեղծած խաղաղ կյանքով ու բարեկեցությամբ: Ցավոք, իր տարաբախտ ճակատագրի բերումով, հայ ժողովրդին ու նրա կառավարությանը վիճակված չէին ապրել նման կյանքով: Իր անկախ պետականության նվաճման ճանապարհին հայ ժողովրդը ունեցավ մեծ ողբերգություն՝ կորցնելով իր թվաքանակի շուրջ մեկ երրորդը և իր հայրենիքի մեծ մասը: Վերընձիովվող հայ ժողովրդը և նորաստեղծ Հայոց պետականությունը, մինչ խաղաղ, բարեկեցիկ կյանքին անցնելը, խոռվախույզ ապրումների մեջ էր, սպասում էր իր Դատի արդարացի լուծմանը և պայքարում դրա համար:

Հայ ժողովրդի պատմության այդ դժվարին փուլում, Հայոց անկախ պետականության համակարգում ձևավորվեց առաջին խորհրդարանը: Առաջին

<sup>12</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, Հ. 41, Ե., 1982, էջ 48-53:

անգամ գործնականում իրականություն դարձավ շուրջ դարուկես առաջ հեռավոր Մադրասի խմբակի ծրագրած հանրապետական Հայաստանում խորհրդարան՝ «Հայոց տուն» ունենալու գաղափարը:

## 2. Արևելահայերի համագումարը

Հայաստանի խորհրդարանի պատմությունն ավելի ամբողջական ներկայացնելու և նրա գործունեությունը ճիշտ գնահատելու համար հարկ է անդրադառնալ Հայաստանի խորհրդի ձևավորման ակունքներին. այն է՝ Արևելահայերի ազգային համագումարի ու Հայոց (կենտրոնական) Ազգային խորհրդի հակիրճ նախապատմությանը:

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը մեծ փոփոխություններ ու հասարակական-քաղաքական տեղաշարժեր առաջացրեց Ռուսաստանի հսկայածավալ կայսրության մեջ: Փետրվարյան հեղափոխությամբ դրությունը հիմնովին փոխվեց նաև Անդրկովկասում: Ինքնակալության տապալման և ժողովրդավարական կարգախոսների հռչակման պայմաններում ազգային շրջաններում ու այդ թվում՝ Հայաստանում տեղի ունեցավ ազգային ինքնագիտակցության աճ, զարթոնք ապրեց ազգային կյանքը: Առաջնակարգ ու հրատապ նշանակություն ստացավ ազգային հարցը: Այս առնչությամբ սոց. դեմ. (մեմշեկի) Գ. Ղարաջյանը գրում էր, որ երկրամասում ազգային գործունեությունն ուժեղ թափով արտահայտվեց, քան սոցիալականը<sup>13</sup>:

Քաղաքական գործունեության լայն ասպարեզ իչան հայ քաղաքական կուսակցությունները, որոնցից ամենաազդեցիկը, անկասկած, ՀՀ Դաշնակցությունն էր: Հարկ է նշել, որ պատերազմի տարիներին մյուս կուսակցությունների նման զգալիորեն թուլացել էր նաև ՀՀԴ: Հայոց Մեծ եղեռնի լուրջ թվում էին մեծ թվով դաշնակցականներ: Այդուհանդերձ, ՀՀԴ-ն շարունակում էր մնալ հայ հասարակական-քաղաքական կյանքի առաջատարը: «Ներկայումս, անկասկած,- գրում էր «Կովկաս» թերթը և արտատպում էր «Մշակը»,- նա /ՀՀԴ-Ա.Հ./ ամենաազդեցիկ հայ կուսակցությունն է»<sup>14</sup>: Նրա կազմակերպությունները համեմատաբար ուժեղ էին Թիֆլիսում, Բաքվում և Երևանում<sup>15</sup>: Հեղափոխության ընձեռած լայն ու ազատ գործունեության պայմաններում կուսակցությունները անմիջական կապ հաստատեցին ժողովրդական լայն զանգվածների հետ՝ աշխատելով պատասխան ու ընթացք տալ նրանց հուզող հարցերին:

1917 թ. ապրիլին Թիֆլիսում ստեղծվեց հայ ազգային մի նոր կուսակցություն՝ Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ), որը, ըստ էության, Փետրվարյան հեղափոխության ծնունդն էր:

<sup>13</sup> Գ. Ղարաջյան, *Անդրկովկասի քաղաքական կյանքը 1918 թ., Թիֆլիս, 1919, էջ 16*:

<sup>14</sup> «Կաթառ», 1917, թիվ 140, «Մշակ», 27 հունիսի 1917 թ.:

<sup>15</sup> «Հորիզոն», 4 հունվարի 1918 թ.:

Հայ հասարակական-քաղաքական բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները, բացառությամբ հայ բոլշևիկների, հիմնականում պաշտպանում էին Ժամանակավոր կառավարության արտաքին ու ներքին քաղաքականությունը: Առաջնորդվելով բոլշևիկյան մայր կուսակցության ռազմավարությամբ ու մարտավարությամբ՝ հայ բոլշևիկները ևս հանդես էին գալիս Ժամանակավոր կառավարության դեմ: Ինչպես հայտնի է, նրանք, առաջնորդվելով իրենց ծրագրային հիմնադրույթներով, նպատակ էին դրել չքավարարվել Փետրվարյան հեղափոխության արդյունքներով, այլ այն վերածել սոցիալիստական հեղափոխության, այսինքն՝ հասնել իրենց ծրագրային խնդիրների առավելագույն իրագործման:

Հայերը, իրենց կուսակցությունների հետ միասին, արտահայտվում էին ռուսական համապետականության օգտին այն ակնկալությամբ, որպեսզի նրա օգնությամբ կարողանան լուծել մեծապես հայաթափ եղած Թուրքահայաստանի հարցը և Անդրկովկասում անցկացնել, ըստ պատմա-ազգագրական հատկանիշի, վարչական արդարացի վերաբաժանում: Միաժամանակ հայ ազգային կուսակցությունները արտահայտվում էին Անդրկովկասի ու Հայաստանի լայն ինքնավարության օգտին: Օրինակ, 1917 թ. աշնանը համառուսական Սահմանադիր ժողովի ընտրություններին գնացող Դաշնակցությունը արտահայտվում էր Ռուսաստանի ֆեդերատիվ (դաշնակցային) դեմոկրատական հանրապետության օգտին<sup>16</sup>: Բայց մի քանի օր անց՝ Սահմանադիր ժողովի ընտրությունների և Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումից հետո, ՀՀԴ Կովկասյան հատվածում կատարվում է քաղաքական էվոլյուցիա (բնաշրջում). ազգային-մշակութային ինքնավարությունից անցում է կատարվում «ազգերի ինքնորոշման» պահանջի<sup>17</sup>: Հավանաբար այս մտայնության թելադրանքով էլ հայ քաղաքական գործիչները կազմեցին «Թուրքահայաստանի ինքնորոշման մասին» դեկրետի նախագիծը:

Ընդհանուր առմամբ 1917 թ. արևելահայ հասարակական-քաղաքական գաղափարակիր հոսանքները ներկայացնում էին հիմնականում «Հորիզոն» (ՀՀԴ), «Մշակ» (հայ կադետներ), «Գաղափար» (Ս Դ հնչակ), «Հովիտ» (եկեղեցի), «Պայքար» (սոց.- դեմոկրատ) և «Վան- Տոսպ» (հայ ռամկավար) լրագրերը<sup>18</sup>: Սրանց գաղափարակիր կուսակցությունների ու հոսանքների ներկայացուցիչներն էլ ներկայացնում էին Հայ Ազգային բյուրոյի կազմը<sup>19</sup>:

1917 թ. մարտի 7-ին Թիֆլիսի Հայոց առաջնորդարանում տեղի ունեցավ վերոգրյալ արևելահայ հասարակական-քաղաքական կազմակերպութ-

<sup>16</sup> «Հորիզոն», 8 նոյեմբերի 1917 թ.:

<sup>17</sup> Նույնը, 26 նոյեմբերի 1917 թ.:

<sup>18</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, Ժ. 222, ց. 1, գ. 4, ք. 2:

<sup>19</sup> Ազգային բյուրոն կազմվել էր 1912 թ. աշնանը: Նրա գործադիր մարմինը քաղկացած էր հինգ հոգուց, մեծամասամբ դաշնակցականներից: Հետո դրա կազմը ընդլայնվեց: Ազգային բյուրոյի նպատակն էր աջակցել Ամենայն Հայոց կաթողիկոսին, Հայ Ազգային պատվիրակությանը և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին Հայկական հարցի պաշտպանության գործում:

յունների ու հոսանքների (միջկուսակցական) ժողով-խորհրդակցություն, որին մասնակցում էին մոտ 50 մարդ<sup>20</sup>։ Ժողովը նախագահում էր Մխիթար եպիսկոպոսը, իսկ քարտուղարն էր Ստ. Մախասյանը։ «Մշակ» բերրի խմբագիր Հ. Առաքելյանը, ելույթ ունենալով ժողով-խորհրդակցությունում, ասաց, որ այն հրավիրվել է Փետրվարյան հեղափոխության կուսակցությամբ՝ ծագած ազգային նոր խնդիրների լուծման, հստակ կողմնորոշվելու ու դիրքորոշում մշակելու համար։ «Պե՞տք է արդյոք,- շարունակել է հռետորը,- հրավիրել ազգային համագումար, ուր հիմնվի մի մարմին, որն իրավունք ունենա հայ ժողովրդի անուից հանդես գալու և նրա ցանկությունների բարձրագույն հանդիսանալու, նկատի ունենալով, որ ներկա պայմաններում անջատ գործունեությունը կարող է աղետալի հետևանքներ ունենալ հայ ժողովրդի համար»<sup>21</sup>։

Փետրվարյան հեղափոխությունից հետո նոր ծագած ազգային հիմնահարցերը լուծելու ճանապարհին առաջնային կարևորություն է ստանում միջկուսակցական համագործակցության խնդիրը։ Հայ քաղաքական կուսակցությունների գործողությունները կոորդինացնելու և ազգային ու քաղաքական զանգված խնդիրների շուրջ փոխգիշումային համաձայնության գալու նպատակով խորհրդակցությունում ստեղծվում է ժամանակավոր **Միջկուսակցական մարմին**։ Այս մարմնում ընդգրկված էին ՀՅԴ, ՀԺԿ, սոց.-դեմ., Էսէն և Ս Դ Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչներ։ Նրա նախագահն էր Հ. Օհանջանյանը (ՀՅԴ)։ Այսպիսով, հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների մարտյան այս խորհրդակցությունում հիմնվում է միջկուսակցական ժամանակավոր ղեկավար մի մարմին, որի առջև հարց է բարձրացվում նախապատրաստել և գումարել ազգային համագումար։ Միաժամանակ խորհրդակցությունը որոշում է՝ մինչև համագումարի հրավիրումը ազգային գործերի ղեկավարությունը դնել Ազգային բյուրոյի վրա՝ վերջինս կազմը համալրելով նոր անդամներով, այն հաշվով, որ նրանում ներկայացված լինեն հայ բոլոր կուսակցություններն ու հոսանքները<sup>22</sup>։ Ազգային բյուրոյի կազմը համալրելու նպատակով խորհրդակցությունը բազմակուսակցական հիմքի վրա ընտրում է 11 հոգուց բաղկացած մի մասնաժողով, որ և պետք է ժողովի ավարտից հետո լրացներ ու բարձրացներ Ազգային բյուրոյի և նրա գործադիր մարմնի կազմը (23 անդամ)։ Ազգային բյուրոյի կազմը բազմակուսակցական էր՝ բովով 18 հոգի, իսկ նրան կից գործադիր մարմինը՝ 5 մարդ՝ Ն. Աղբալյան, ԲԺ. Հ. Ջավրիյան, Ա. Ջամալյան, Ռոստոմ և Ս. Վրացյան<sup>23</sup>։

Ազգային բյուրոյի մեջ կուսակցական և դասակարգային համամասնությունը պահպանելու նպատակով Միջկուսակցական մարմինը որոշեց դրա կազմը ավելի ընդլայնել հասարակական-քաղաքական կազմակերպություն-

ների, միությունների, բերքերի ներկայացուցիչներով, ինչպես նաև 7 անդամ արևմտահայ միություններից, որոնք գործում էին Թիֆլիսում<sup>24</sup>։ Ի դեպ, Ազգային բյուրո, որպես անդամ, հրավիրվել էր նաև սոց.-դեմ. բոլշևիկներից «Պայքար» բերրի ներկայացուցիչ Ա. Մռավյանը, որը, սակայն, հրաժարվեց նրա աշխատանքներին մասնակցելուց<sup>25</sup>։

Ինչպես տեսնում ենք, հետփետրվարյան ժամանակաշրջանում հայ հասարակական-քաղաքական բոլոր կուսակցություններն ու հոսանքները, բացի բոլշևիկներից, համագործակցել են իրար հետ, համենայն դեպս մեծ փորձեր են արել, որն ինքնին ազգային համախմբման տեսակետից պետք է դիտել որպես դրական երևույթ։ Դրա վառ ապացույցն է այն, որ Ազգային բյուրոյի նիստերից զատ և նրան զուգահեռ, պարբերաբար գումարվում էին Միջկուսակցական մարմնի խորհրդակցություններ։ 1917 թ. մայիսի 3-ի խորհրդակցությունում Ռուսական սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության ներկայացուցիչ Ա. Խոնդկարյանը ելույթ ունենալով պարզաբանեց, որ ռուսական Էսէնական կուսակցության մեջ գոյություն ունի հայ Էսէների հոսանք, որը շուտով ստեղծելու է այդ կուսակցության հայկական մասնաճյուղը (բաժանմունքը)։ Ուստի՝ նա դիմեց Հայոց Միջկուսակցական մարմնին՝ իրենց ներկայացուցիչը ունենալու այդ մարմնի մեջ։ Էսէները դիմումը բավարարվեց<sup>26</sup>։ Այդպիսով, Միջկուսակցական մարմնում ընդգրկվել են ՀՅԴ, ՀԺԿ, սոց.-դեմոկրատ, Էսէն և Հնչակ կուսակցությունների ներկայացուցիչներ։ Հետագայում հնչակյանների ներկայացուցիչները հրաժարվեցին մասնակցել խորհրդի նիստերին<sup>27</sup>։

Նկատի ունենալով, որ 1917 թ. գարնանը՝ ապրիլին, բուրք-աղբբեջանցիներն արդեն հրավիրում են իրենց ազգային՝ մուսուլմանական համագումարը, հայ Ազգային բյուրոն որոշում է արագացնել արևելահայերի (ռուսահայերի) համագումարի նախապատրաստումը և գումարումը<sup>28</sup>։ Համագումարի նախապատրաստման ու հրավիրման գործը, բացի Ազգային բյուրոյից, դրված էր նաև Միջկուսակցական մարմնի վրա։ Այդ նույն ժամանակ նախապատրաստվում էր նաև արևմտահայերի առանձին համագումարը, որը գումարվեց 1917 թ. մայիսի սկզբներին Երևանում<sup>29</sup>։

Ապրիլի կեսերին Ազգային բյուրոյի և Միջկուսակցական մարմնի համատեղ խորհրդակցական ժողովում որոշվեց հրավիրել արևելահայերի համագումարը՝ ոչ ուշ քան երկու ամսվա ընթացքում<sup>30</sup>։ Մշակվեց ընտրակարգը, ընտրությունների կազմակերպումն ու ղեկավարումը, համագումարի օրակար-

<sup>20</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 210<sup>ա</sup>, Բ. 1, նաև Վ. Հ. Մելիքյան, 1917թ. փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Ե., 1997, էջ 262։

<sup>21</sup> Նույն տեղում։

<sup>22</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 210<sup>ա</sup>, Բ. 1-2։

<sup>23</sup> Նույն տեղում, Բ. 2։

<sup>24</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 210<sup>ա</sup>, Բ. 2-3։

<sup>25</sup> ՀՀ ՊԿԱ, ֆ. 222, ց. 1, գ. 4, Բ. 4-5։

<sup>26</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 210<sup>ա</sup>, Բ. 34։

<sup>27</sup> ՀՀ ՊԿԱ, ֆ. 222, ց. 1, գ. 4, Բ. 48։

<sup>28</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 210<sup>ա</sup>, Բ. 6-7։

<sup>29</sup> Հ. Ա. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թ., Ե., 1997, էջ 16։

<sup>30</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 210<sup>ա</sup>, Բ. 25։



պերի մեջ են եղել հայ առանձին քաղաքական գործիչներ՝ Հ. Զավրիյանը, Ս. Հարությունյանը, Հ. Սաղաթեյանը և ուրիշներ:

Համագումարում սոց.-դեմոկրատ և էսէռ պատվիրակները, հանդես գալով ինտերնացիոնալիզմի դիրքերից, մեղադրում էին հայ իրականության իշխող կուսակցությանը ազգային մեկուսացման մեջ, որ նա հայ ժողովրդին կտրում է համառուսական և համակովկասյան հեղափոխական պայքարից: Նրանք քննադատում էին Ն. Աղբալյանին և մյուս դաշնակցականներին այն բանի համար, որ անվատահոգությամբ են արտահայտում դեպի սոցիալիզմը և միջազգային հեղափոխական դեմոկրատիան<sup>41</sup>:

Արևելահայոց համագումարը գրադվել է տարածաշրջանի ներքին և արտաքին քաղաքականության, Անդրկովկասի վարչական բաժանումների, զենատվոներ մտցնելու, ազգային գործի կազմակերպման, գաղութականության և այլ խնդիրներով, որոնց քննությունը, սակայն, մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է:

Համագումարի աշխատանքները և ընտրություններն ընրացան բուռն վեճերի ու փոխադարձ մեղադրանքների մթնոլորտում: Դ. Անանունի վկայությամբ. «Միայն արտաքին վտանգն էր ստիպում հայ հոսանքներին համախմբվել մեկ դահլիճում և մեկ մարմնի մեջ»<sup>42</sup>:

Արժեքավորելով ու գնահատելով համաժողովի ընդունած որոշումները (փաստաթղթերը)՝ կարելի է վստահ լսել, որ նա դրեց ազգային պետականության գաղափարի նյութականացման առաջին հիմնաքարը: Մեր կարծիքով՝ համագումարի ընդունած առանցքային որոշումներից էր հետևյալ բանաձևը. «Ընդունելով ազգերի ինքնորոշման իրավունքը, հայ ժողովուրդը պիտի ձգտի իրականացնել իր այդ իրավունքը **պեղսականության հիմունքներով ու սկզբունքներով** (ընդգծ. մերն է - Ա. Հ.), անդրկովկասյան ժողովուրդների դեմոկրատիայի փոխադարձ համաձայնությամբ»<sup>43</sup>:

### 3. Հայոց Ազգային խորհրդի հիմնումը և գործունեությունը

Համագումարի աշխատանքների վերջնափուլում՝ հոկտեմբեր 9-ին, քաղաքականական հիմքի վրա ընտրվեց 15 հոգուց բաղկացած գործադիր մարմին՝ Հայոց (կենտրոնական) Ազգային խորհուրդ՝ կուսակցությունների պատգամավորական ներկայացուցչության և դրանց ունեցած քաղաքական կշռին համապատասխան: Հայոց Ազգային խորհրդի ժամանակավոր կազմը հետևյալն էր՝ 1. Ա. Ահարոնյան, 2. Խ. Կարճիկյան, 3. Ա. Գուլիսանդանյան, 4.

Ռ. Տեր-Սիմոնյան, 5. Ն. Աղբալյան, 6. Կ. Ղազարյան (ՀՅԴ), 7. Լ. Աթաբեկյան, 8. Հ. Տեր-Օհանյան (էսէռ), 9. Ղ. Տեր-Ղազարյան, 10. Ա. Երզնկյան (սոց.-դեմ.), 11. Ս. Հարությունյան, 12. Հ. Ալվազյան (ՀԺԿ), 13. Տ. Բեկլադյան, 14. Պ. Զաքարյան, 15. Ստ. Մամիկոնյան (անկուս)<sup>44</sup>:

Հետագայում այս կազմը փոփոխություններ կրեց: Կուսակցություններն իրավունք ունեին իրենց տրված տեղերի շրջանակներում անհրաժեշտության դեպքում անդամների փոփոխություններ կատարել: Այդ իսկ պատճառով արդեն 1918 թ. գարնանը Հայոց Ազգային խորհրդի կազմը զգալիորեն փոխվել էր: ՀՅԴ- ներկայացնում էին հետևյալ վեց անդամները՝ Ա. Ահարոնյան, Ա. Մանուկյան, Ռ. Տեր-Սիմոնյան, Ա. Բաբալյան, Խ. Կարճիկյան և Ն. Աղբալյան: ՀԺԿ երկու՝ Ս. Հարությունյան և Մ. Պապաչանյան, սոցիալ-դեմոկրատները երկու՝ Ղ. Տեր-Ղազարյան և Մ. Ղաթաբեկյան, սոցիալիստ հեղափոխականները երկու՝ Հ. Տեր-Օհանյան և Ա. Ստամբուլյան և անկուսակցական երեք՝ Ստ. Մամիկոնյան, Տ. Բեկլադյան և Պ. Զաքարյան, ընդամենը 15 անդամ<sup>45</sup>: Խորհրդի նախագահն էր Ա. Ահարոնյանը:

Հայոց Ազգային խորհուրդն իր կազմով միատարր չէր: Նրանում ներկայացված էին կովկասահայ իրականության գրեթե բոլոր աչքի ընկնող կուսակցությունները: Թե՛ համագումարում և թե՛ համագումարի ավարտից հետո Հայոց Ազգային խորհուրդում հայ քաղաքական կուսակցությունների խմբակցությունները ձեռք բերեցին համատեղ ու միասնական աշխատանք վարելու փորձ, որը հետո այնքան անհրաժեշտ էր խորհրդարանական աշխատանքի ժամանակ: Հայոց Ազգային խորհուրդը՝ որպես գործադիր մարմին, ստանձնեց արևելահայ հատվածի քաղաքական կյանքի ղեկավարությունը և դեպքերի բերումով փաստորեն դարձավ հայ ժողովրդի գերագույն իշխանությունը: Այ. Խատիսյանի վկայությամբ Հայոց Ազգային խորհուրդը փաստորեն գրավեց արդեն հեղինակազրկված Ազգային բյուրոյի տեղը<sup>46</sup>: Նա՝ իբրև գործադիր մարմին, ստանձնեց արևելահայ հատվածի քաղաքական ղեկավարությունը:

Բացի Ազգային խորհրդից, դարձյալ կուսակցական համամասնության սկզբունքով, կազմվեց նաև 35 հոգուց բաղկացած օրենսդիր մարմին՝ «Ազգային ժողով», որը լինելու էր ռուսահայերի ժամանակավոր ներկայացուցչական օրենսդիր մարմինը<sup>47</sup>:

Մինչ Անդրկովկասում տեղի էին ունենում ազգային- քաղաքական ու ժերի վերախմբավորում ու կոնսոլիդացիա, բուն Ռուսաստանում քաղաքական իրադարձությունները զարգացան գլխապետույտ արագությամբ և ունե-

<sup>41</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 16, ք. 77:

<sup>42</sup> Դ. Անանուն, նշվ. աշխ., հ. 3, էջ 655:

<sup>43</sup> «Բանքեր Հայաստանի արխիվների», 1992, թիվ 1-2, էջ 77:

<sup>44</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 16, ք. 58, Դ. Անանուն, նշվ. աշխ., հ. 3, էջ 656, «Բանքեր Հայաստանի արխիվների», 1992, թիվ 1-2, էջ 104:

<sup>45</sup> «Մայիս 28», Փարիզ, 1926, էջ 21-26, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 47:

<sup>46</sup> Այ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 18:

<sup>47</sup> «Բանքեր Հայաստանի արխիվների», 1992, թիվ 1-2, էջ 102-103:

ցան անսպասելի ավարտ: Մինչև 1917 թ. ամռան վերջը իրենցից առանձնապես քաղաքական կշիռ չներկայացնող բուլշևիկները՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, օգտագործելով ժողովրդական զանգվածներին հուզող հաշտության, հողի, հացի, ազատությունների մասին քարոզչական կարգախոսները, շոշափելի ազդեցություն նվաճեցին ու օգտվելով Ժամանակավոր կառավարության թույլ տված սխալներից ու հապաղումներից՝ 1917 թ. հոկտեմբերի 25-ին (մ. տ. նոյեմբերի 7-ին) մայրաքաղաք Պետրոգրադում զինված հեղաշրջում կատարեցին ու իշխանությունը վերցրին իրենց ձեռքը:

Անդրկովկասի քաղաքական ազդեցիկ ուժերը հիմնականում բացասաբար ընդունեցին Հոկտեմբերյան հեղաշրջումը: Եվ 1917 թ. նոյեմբերի 15-ին երկրամասի ամենահեղինակավոր երեք կուսակցությունները՝ վրաց մենշևիկները, հայ դաշնակցականները և ազերի մուսավաթականները հեղինակազրկված ու անգործության մատնված ՕԶԱԿՈՄ-ի փոխարեն ստեղծեցին նոր կառավարություն՝ Անդրկովկասյան կոմիսարիատ՝ մենշևիկ Ե. Գեզեչկորու գլխավորությամբ:

1917 թ. բուլշևիկների հոկտեմբերյան հեղաշրջումը արմատապես փոխեց իրադրությունը Անդրկովկասում: Հոկտեմբերյան դեպքերից անմիջապես հետո Հայոց Ազգային խորհուրդը հրապարակեց կոչ՝ ուղղված հայ հասարակայնությանը իր բռնելիք քաղաքական ուղու մասին: Այդ կոչում ասվում էր. «Ազգային խորհուրդը, իր գործունեության կետ նպատակ ունենալով հայ ժողովրդի կենսական շահերը, միաժամանակ պիտի ճգնի այդ շահերը ներդաշնակել ռուսական մեծ դեմոկրատիայի և մեր բոլոր հարևանների նույնպիսի շահերի հետ՝ միշտ առաջնորդ ունենալով մի կողմից առողջ պետականության և մյուս կողմից՝ ժողովուրդների եղբայրության և ազատության բարձր սկզբունքները»<sup>48</sup>:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո խզվեցին կապերը կենտրոնի (Պետրոգրադի) հետ: Երկրի քաղաքական անկայունության, ինչպես նաև բուլշևիկյան հրապուրիչ կարգախոսների ազդեցությամբ սկսեց տարերայնորեն քայքայվել ինչպես Արևմտյան, այնպես էլ Կովկասյան ռազմաճակատը: Կովկասյան բանակի քայքայման գործընթացը սկսվել էր դեռ ավելի վաղ՝ 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից, որը դրսևորվում էր դասալքումների ձևով<sup>49</sup>:

Հեղաշրջումից հետո ավելի ուժեղացան կազմալուծիչ ու անիշխանական գործընթացները: Ռուսաստանի պետական կյանքի կազմալուծման գործոններից մեկը Գ. Ղարաջյանը համարում էր. «Գյուղացիության և բանվորության լայն զանգվածների հիպնոզն ու հափշտակությունը լենինյան

բուլշևիզմով, մի հոսանք, որն իր սոցիալական մաքսիմալիզմով Ռուսաստանը հասցրեց անիշխանության»<sup>50</sup>:

Վ. Ի. Լենինի գլխավորած խորհրդային կառավարության հրահանգով Կովկասում ռուսական բանակի հրամանատարությունից հրաման էր արձակվել, որ մինչև 1917 թ. դեկտեմբերի 25-ը պետք է լիովին դատարկվեր Կովկասյան ռազմաճակատը: Ըստ հրամանի՝ այնտեղ չպետք է մնար ոչ մի ռուս զինվոր<sup>51</sup>: «1917 թ. դեկտեմբերից, - գրում էր զորավար Թ. Նազարբեկյանը, - ռուսական զորքերը, թողնելով ռազմական գույքի վիթխարի պահեստներ, սկսեցին լքել ռազմաճակատը և մեկնել դեպի Ռուսաստան: Ոչ մի ուժ, անգամ Շամխորի հայտնի մղձավանջային ջարդերը, ի վիճակի չեղան կանգնեցնել նրանց»<sup>52</sup>: Դեռ դեկտեմբերի 14-ին Բրեստ-Լիտովսկի բանակցությունների առաջին փուլում խորհրդային կողմի հրապարակած հաշտության պայմանագրի ռուսական պայմաններում ասված էր «Ռուսաստանն իր զորքերը դուրս է բերում Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Պարսկաստանի իր գրաված մարզերից, իսկ քառյակ դաշինքի տերությունները՝ Լեհաստանից, Լիտվայից, Կուլմանդիայից»<sup>53</sup>: Ինքնին հասկանալի է, թե հայ ժողովրդի համար ինչ էր նշանակում ռուսական զորքերի դուրսբերումը Արևմտյան Հայաստանից:

Կովկասյան բանակի Երկրային նոր խորհուրդը 1917 թ. դեկտեմբերի 26-ին Կովկասյան բանակի զինվորներին ուղղված դիմումի մեջ հայտնում էր, որ ինքը ձեռնամուխ է եղել «Կովկասյան բանակի պլանաչափ զորացրմանը»<sup>54</sup>: Ռուսական զորքերի՝ Արևմտյան Հայաստանից դուրս բերելու մասին էր հաստատում ժողովախորհի դեկտեմբերի 29-ին ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետի առաջին կետը<sup>55</sup>: Բանակի զորացրմանը կազմակերպված բնույթ տալու նպատակով ստեղծվել էր ռազմա-տեխնիկական կոմիտե<sup>56</sup>: Եվ այս ամենը կատարվում էր Խ. Ռուսաստանի կառավարության նախագահ Վ. Ի. Լենինի գիտությամբ և երկրի ռազմահեղափոխական խորհրդի նախագահ ու արտ. գործ. նախարար Լ. Դ. Տրոցկու հրամանով: Սակայն զորացրումը կազմակերպված չընթացավ: Ռուսական զինվորականությունը ցամաքով և ծովով (առանձին դեպքերում բռնի զինաթափման ենթարկվելով) սկսեց վերադառնալ հայրենիք: Չորքի առաջին խմբաքանակը

<sup>50</sup> ՀՀ ՀԲԿԳ ՊԿԱ, ֆ. 4051, ց. 1, գ. 44, էջ 17:

<sup>51</sup> Ա. Ամիրխանյան, Ռուս և բուլք զինադադարը 1917-1918, Ֆրեզնո, 1921, էջ 11:

<sup>52</sup> ՀՀ ՊԿԱ, ֆ. 121, ց. 2, գ. 79, թ. 16:

<sup>53</sup> Հ. Ա. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թ., Ե., 1997, էջ 50, Հ. Ն. Սարգսյան, Բրեստից մինչև Մոսկոն, Ե., 1989, էջ 29, Գ. Ա. Аветисян, Брест-Литовск: как были отторжены Турция, Ардаган и Баку, Е., 1994, с. 21:

<sup>54</sup> «Ռեկուզիցիոն կոչեր և բռնցիկներ 1902-1921», Ե., 1960, էջ 434:

<sup>55</sup> Декреты советской власти, т. 1, М., 1957, с. 298.

<sup>56</sup> Ա. Հ. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կոիվները, Ե., 1984, էջ 38:

<sup>48</sup> «Հորիզոն», 7 նոյեմբերի 1917 թ.:

<sup>49</sup> Հ. Ս. Մելիքյան, Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը, Ե., 1970, էջ 157-158:

ռազմաճակատը քեց դեկտեմբերի 10-ին<sup>57</sup>։ Արդեն 1918 թ. հունվարի վերջերին Կովկասյան ճակատը հիմնականում դատարկված էր ռուսական զորքերից<sup>58</sup>։

Ռազմաճակատի քայքայումը ամենից ավելի ծանր անդրադարձավ հայ ժողովրդի վիճակի վրա։ Հայ հասարակական-քաղաքական բոլոր ուժերը անհանգստացած էին ռուսական զորքերի հեռացումից՝ «միշտ գիտակցելով, որ առանց Ռուսաստանի ամեն ինչ վատ է լինելու»<sup>59</sup>։ Միանգամայն այլ էր բուրք-մուսավաթականների և մասամբ էլ վրաց մենչևիկների վերաբերմունքը հանդեպ ռուսական զորքերի հեռացման։ Մասնավորապես բուրք-բուրսեր-րին շատ էր դուր գալիս բուլչևիկների հռչակած՝ «առանց զավթումների ու ռազմատուգանքների անջատ հաշտության» կարգախոսը, քանզի դա իրավունք էր տալիս Թուրքիային կրկին տիրանալու ռուսական զորքերի կողմից գրավյալ հայկական հողերին։ «Տաճկական զինվորական իմպերիալիզմը, - ասում էր Ս. Կասյանը, - ձգտում էր ամբողջապես կլանել Հայաստանը, բնաջինջ անել հայ ժողովուրդը և անվրդով տիրանալ հայ արյան ծովի վրա»<sup>60</sup>։

ՕԶԱԿՈՍ-ը հեղինակագրկվեց և ղաղաքեց գործերուց։ 1917 թ. յուլիսի 1-ի կեսերին նրան փոխարինեց ազգային-կուսակցական ներկայացուցչության սկզբունքով հիմնված նոր կառավարություն՝ Անդրկովկասյան կոմիտեի անունով։ Անդրկովկասի պետք էր համարել պատմական գրականության մեջ տարածում գտած այն դատողությունը, թե Անդրկովկասյան կառավարության ստեղծումով հենց սկզբից նպատակ էր հետապնդվում Անդրկովկասը անջատել Ռուսաստանից։ Կանխավ փարատելով նման բոլոր մտայնությունը՝ «Հորիզոնը» իր առաջնորդողում գրում էր. «Անդրկովկասի կոմիտեի անունով ժամանակավոր մի իշխանություն է։ Նրա նպատակը ոչ թե Անդրկովկասը Ռուսաստանից անջատելն է, ինչպես, երևի, կփորձեն չարամիտ մարդիկ բացատրել, այլ քանի պետության կենտրոնում տիրում է քայքայում, Անդրկովկասը կառավարել և առանց կործանումի հասցնել նրան մինչև Սահմանադիր ժողով»<sup>61</sup>։ Այս նույն առնչությամբ Ա. Խատիսյանը հայտնում է, որ իշխանության գլուխ անցած կոմիտեի անունով Կովկասը հայտարարեց Ռուսաստանի անբաժան մասը<sup>62</sup>։ Այդ նույն միտքն է հաստատվում Անդրկովկասյան կոմիտեի անունով նոյեմբերի 18-ի հռչակագրով։ Այստեղ ընդգծվում էր այն միտքը, որ պահպանվելու էր համառուսաստանյան միասնական ճակատը, և որ Անդրկովկասյան կոմիտեի անունով ձեռնարկվելու է եռանդուն քայլեր անհապառ հաշ-

տություն կնքելու ուղղությամբ՝ հաշվի առնելով Արևմտյան ճակատի ընդհանուր կացությունը և Կովկասի տեղական պայմանները<sup>63</sup>։

Տարածաշրջանի այս ընդհանուր քաղաքական չափազանց բարդ ու խառնակ իրավիճակում գնալով ավելի մեծացավ Ազգային խորհուրդների դերը։

Հայոց ազգային խորհուրդը զբաղվում էր ոչ միայն քաղաքական, վարչա-քաղաքացիական, գաղթականության, պարենավորման, այլև զինվորական գործերով։ Օրինակ՝ նա ձեռնարկեց ազգային զորաբանակի՝ Հայկական կորպուսի հիմնումը, զորավար Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ, որը պետք է գրավեր Կովկասյան ռազմաճակատից հեռացող ռուսական զորքերի տեղը։ Բայց հայկական և մասամբ վրացական ազգային գնդերը անկարող եղան պատշաճ դիմադրություն ցույց տալ բուրքական կանոնավոր բանակին։

Վերջինս երկու-երեք ամսում գրավեց ոչ միայն ամբողջ Արևմտյան Հայաստանը, այլև ներխուժելով Անդրկովկաս՝ սկսեց զավթել արևելահայ տարածքները։

Անդրկովկասյան սեյմը ոչ միայն չկարողացավ կազմակերպել երկրամասի պաշտպանությունը, այլև իր ներսում առկա ազգամիջյան և սոցիալ-քաղաքական հակասությունների ու չհամաձայնեցված գործողությունների հետևանքով գործնականում նպաստեց բուրքերի ներխուժմանը Անդրկովկաս։ Այս գործում, բարձր մուսավաթական պարագլուխներից վատ, բուրք չարդարար-զավթիչներին, կարելի է ասել, մեծ ծառայություն մատուցեց նաև վրաց մենչևիկների աչ թևի պարագլուխ, բուրքասեր Ա. Չխենկելին, որի կարգադրությամբ էլ, ապրիլի վերջերին, գրեթե առանց դիմադրության, ամուր պաշտպանված Կարս բերդաքաղաքը հանձնվեց բուրքերին։

Դեռ մինչ Սեյմի կողմից Անդրկովկասի անկախության պաշտոնական հռչակումը՝ 1918 թ. ապրիլի 6-8-ը, ճակատամերձ Ալեքսանդրապոլում Հայոց Ազգային խորհրդի նախաձեռնությամբ գումարվեց հայ քաղաքական կուսակցությունների և անկուսակցական գործիչների խորհրդակցություն։ Խորհրդակցությանը մասնակցում էին Հայոց Ազգային խորհրդի անդամներ, կուսակցությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ բուլչևիկներ։ Այնտեղ քննարկվեցին ռազմաճակատի, զորքի, հաշտության, անկախության և այլ հարցեր։ Խորհրդակցությունում ընթերցվեց Խ. Կարճիկյանի նամակը, որում ընդգծվում էր այն միտքը, որ հայ ժողովուրդը չպետք է երես թեքի Ռուսաստանից, որ միայն Ռուսաստանը կարող է լինել հայ ժողովրդի անվտանգության միակ երաշխավորը։ Նա գտնում էր, որ Անդրկովկասը անկախ հայտարարելը համագոր էր հայ և վրաց ժողովուրդների ինքնասպանության, և որ Ռուսաստանը չափի հաշտվի Անդրկովկասը կորցնելու մտքի հետ<sup>64</sup>։ Ի

<sup>57</sup> «Կայծ», 1 հունվարի 1919 թ.։

<sup>58</sup> Ռ. Դարբինյան, *Բուլչևիզմը եւ Հայաստանը*, Ե., 1920, էջ 4, Հ. *Քաջագունք*, Հ. 3. *Դաշնակցությունը անելիք չունի այլևս*, Բուրքեշ, 1923, էջ 25։

<sup>59</sup> Ջ. Ս. Կիրակոսյան, *Երիտուրքերը պատմության դատաստանի առաջ /1915-ից մինչև մեր օրերը/*, Գ. 2-րդ, Ե., 1983, էջ 100։

<sup>60</sup> Ս. Աստիկյան, *Ո՛ր է եղել, Նոր Նախիջևան*, 1920, էջ 22։

<sup>61</sup> «Հորիզոն», 21 նոյեմբերի 1917 թ., տես նույնը՝ Պ. Մ. Տավրովսկի, *Закавказье после Октября*, М., 1925, с. 7-8։

<sup>62</sup> Ա. Խատիսյան, *նշվ. աշխ.*, էջ 34։

<sup>63</sup> *Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии*, Тифлис, 1919, с. 8-10։

<sup>64</sup> Հ. Ա. Ավետիսյան, *Հայկական հարցը 1918 թ.*, Ե. 1997, էջ 150։

պաշտպանություն այդ դիրքորոշման՝ խորհրդակցության մասնակիցները պատրաստակամություն հայտնեցին հրաժարվել անկախության գաղափարից, միայն թե չկտրվել Ռուսաստանից<sup>65</sup>։ Միաժամանակ հրամայական անհրաժեշտություն էր համարվում «բոլոր հնարավոր միջոցներով շարունակել երկրի պաշտպանությունը»<sup>66</sup>։ Խորհրդակցությունում քննության առնվեց Հ. Քաջագունու գեկուցումը, որի մեջ վերջինս աշխատում էր ապացուցել, որ ստեղծված պայմաններում, որպես չարյաց փոքրագույն, պետք է համաձայնվել աղոթեջանցիների ու վրացիների հետ և ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանները, այլապես կը քայքայվի Անդրկովկասյան խախտողաշունչությունը և հայ ժողովուրդը կհայտնվի բուրքերի դեմ մեն-մենակ<sup>67</sup>։ Հաշտության և պատերազմի, ինչպես նաև Անդրկովկասի անկախության մասին ներկայացվեց բանաձևի վեց նախագիծ<sup>68</sup>։ Խորհրդակցությանը մասնակից խմբակցությունների մեծամասնությունը գտնում էր, որ պետք է ճանաչել Բրեստի պայմանագիրը, Սեյմում դեմ քվեարկել Անդրկովկասի անկախությանը, ուժեղացնել երկրի պաշտպանությունը և չհեռանալ ռուսական կողմնորոշումից<sup>69</sup>։

Այս ուղղությամբ մտահոգություն արտահայտողներից մեկն էլ ՀՅ Դաշնակցություն կուսակցությունն էր։ ՀՅԴ Արևելյան Բյուրոյի պաշտոնաթերթ «Հորիզոնը» ավելի վաղ՝ փետրվարյան իր խմբագրականներից մեկում զգուշացնում էր, որ «Անդրկովկասի անկախությունն առնվազն թեթևամտություն է և ամենեթի՝ քաղաքական պատասխանատու գործիչների համար»<sup>70</sup>։ Իսկ Հ. Քաջագունին (փետրվարի 15-ին), Դաշնակցության խմբակցության անունից հանդես գալով Անդրկովկասյան սեյմի նիստում, նշում էր, որ Անդրկովկասը պետք է մնա Ռուսաստանյան դաշնակցային մեծ հանրապետության անբաժան մասը<sup>71</sup>։ Ի տարբերություն վրաց մենչևիկների և ազերի մուսավաթականների՝ ՀՅԴ Անդրկովկասի այն եզակի խոշոր կուսակցություններից էր, որ կողմնորոշված էր դեպի հյուսիս՝ Ռուսաստան, և մինչև վերջին պահը դեմ է եղել Անդրկովկասը Ռուսաստանից անջատելուն։ Հիշեցնենք, որ ՀՅԴ ծրագիրը նույնպես Ռուսաստանի հանդեպ անջատական ու անկախական որևէ պահանջ չէր դնում։ Ընդհակառակը, նա արտահայտվել է ռուսական համապետականության օգտին, սահմանափակվելով միայն Ռուսական Դաշնության շրջանակներում՝ Արևելահայաստանին վարչական ինքնավարության համեստ պահանջով։ Այդ բանը ավելի քան հստակորեն է ամրագրված կուսակցության երկրորդ ծրագրում<sup>72</sup>։ Այս կապակցությամբ անընդուն-

լի պետք է համարել ռուս հեղինակ Ի. Վլադիսլավևի արտահայտած այն միտքը, թե «Դաշնակցության ծրագրում խնդիր էր դրվում հասնել Կովկասի անկախությանը»<sup>73</sup>։ Ռազմաքաղաքական այդ բարդագույն ժամանակաշրջանում հակաանկախական և պրոռուսական կողմնորոշում են դրսևորել հայ հասարակական-քաղաքական գրեթե բոլոր ուժերը։ Չնայած նրանք հիմնականում չէին ընդունում Խորհրդային Ռուսաստանի քաղաքական վարչաձևը և տնտեսական համակարգը, սակայն ներքուստ և արտաքուստ հանդես էին բերում ընդգծված ռուսական կողմնորոշում։ «Հայերն իրենց զանազան կուսակցություններով, հավաստում է ռամկավար Ա. Դարբինյանը, կառչած էին Ռուսիո հետ միացած մնալու գաղափարին»<sup>74</sup>։ Արևելահայությունը մեծ ձգտում ուներ ամուր բռնել «ռուսական փեշից», «Բայց այդ փեշը», - Դ. Անանունի պատկերավոր բնորոշմամբ, - հակառակ հայության բուռն փափագին՝ ինքը դուրս սողաց նրա ձեռքից»<sup>75</sup>։

Հայոց Ազգային խորհրդին հիմնական ուղղություն տվող ՀՅԴ հետևողականորեն պաշտպանում էր այդ գաղափարը այնքան ժամանակ, քանի դեռ դրսից Թուրքիան, իսկ ներսից վրաց և աղոթեջանական անջատողական ուժերը չէին դրել Անդրկովկասի՝ Ռուսաստանից անջատման ու անկախության խնդիրը։ Իսկ երբ Թուրքիայի ցանկությամբ ու դրդումով վճռականորեն բարձրացվեց այդ հարցը, Սեյմի ՀՅԴ խմբակցությունը, լիակատար մեկուսացումից խուսափելու նպատակով, ստիպված ընդունեց անջատման փաստը։ Անդրկովկասյան սեյմի ապրիլի 9(22)-ի ճակատագրական նիստում Անդրկովկասի անկախության հռչակման օգտին ՀՅԴ խմբակցության ամունից հակիրճ ու զուսպ հայտարարությամբ հանդես եկավ Հ. Քաջագունին<sup>76</sup>։

Անդրկովկասի անկախության կապակցությամբ Հայոց Ազգային խորհուրդը ձայների մեծամասնությամբ արտահայտվեց «այդ անկախության դեմ»<sup>77</sup>։ Սակայն նա չկամեցավ իր վրա վերցնել գալիք ծանր պատասխանատվությունը՝ ապրիլի կեսերին (15-18-ը) գումարեց ռուսահայ ժամանակավոր ներկայացուցչական օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի արտակարգ նիստեր։ Մի քանի օր տևած բուռն քննարկումներից հետո, որպես արդեն կատարված փաստ, ի վերջո հավանություն է տրվում Անդրկովկասի անկախությանը<sup>78</sup>։

Գրեթե միաժամանակ նույնպիսի որոշում է կայացնում նաև ՀՅԴ Թիֆլիսի ներկայացուցչական ժողովը։ Ապրիլի 14-ին և 17-ին լսելով, Խ. Կարճիկյանի գեկուցումը Անդրկովկասը անկախ հայտարարելու մասին, ժողովը կայացրեց հետևյալ որոշումը. «Ստեղծված պայմաններում անկախության

<sup>65</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 213, ք. 35:

<sup>66</sup> Ա. Երզնկյան, Աշխատավորության դատարանին, Ե. 1927, էջ 36:

<sup>67</sup> Ա. Վրացյան, Անկախ և Միացյալ Հայաստան, Բոստոն, 1920, էջ 28-29:

<sup>68</sup> Հ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ. էջ 153:

<sup>69</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 213, ք. 35:

<sup>70</sup> «Հորիզոն», 25 փետրվարի 1918 թ.:

<sup>71</sup> Кавказское слово, 17 февраля 1918г.

<sup>72</sup> «Հ. Յ. Դաշնակցության ծրագիր», Կ. Պոլիս, 1908, էջ 18-19:

<sup>73</sup> Программы политических партий в России, М., 1917, с. 23.

<sup>74</sup> Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 351:

<sup>75</sup> Դ. Անանուն, նշվ. աշխ., հ. 3, էջ 612:

<sup>76</sup> Документы и материалы..., с. 215:

<sup>77</sup> Հ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 172:

<sup>78</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 124, ք. 25-33, նաև Հ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ. էջ 172-174:



հայտարարությունը որպես չարիքներից փոքրագույն քաղաքական անհրաժեշտություն է»<sup>79</sup>։ Անդրկովկասի անկախության փաստը ձայների մեծամասնությամբ ընդունեցին նաև հայ մենչևիկները<sup>80</sup>։

Պատմաքաղաքական դեպքերն ու իրադարձությունները վարպետացան այնպես, որ Անդրկովկասի դաշնակցային հանրապետության անկախության հռչակումից շատ չանցած՝ մայիսի վերջերին, տեղի ունեցավ այդ դաշնության քայքայում և դրա հիման վրա երեք ինքնուրույն հանրապետությունների հռչակում։

Անդրկովկասյան դաշնության (կառավարության և խորհրդարանի) ներսում առկա էին ազգային-տարածքային սուր վեճեր, քաղաքական իրարամբեծ կողմնորոշումներ, տարակարծություններ պատերազմի և հաշտության հարցում, միջկուսակցական հակամարտություններ և այլն, որոնք անկենսունակ էին դարձնում նման պետության գոյությունը։ Այդ էր պատճառը, որ Անդրկովկասը չկարողացավ պատշաճ դիմադրություն ցույց տալ բուլղարական ներխուժմանը։ Սրված տարածայնությունների պատճառով Անդրկովկասյան դաշնության փլուզումը դարձավ անխուսափելի։

1918 թ. մայիսի 26-ին (ցերեկվա ժամը 3-ին) լուծարվեց Սեյմը։ Նախապես ստանալով Գերմանիայի հովանավորությունը՝ նույն օրը՝ ժամը 4-ին, վրաց Ազգային խորհուրդը Ն. Ժորյախիայի նախագահությամբ՝ Վրաստանը հայտարարեց անկախ։ Այդ նույն օրը՝ մայիսի 26-ին, գումարվեց Հայոց Ազգային խորհրդի նիստ, որում վերաբերմունք ցույց տալով Վրաստանի անկախությանը՝ այն ընդունվեց որպես փաստ։ Միաժամանակ Ազգային խորհուրդը իր վրա վերցրեց հայկական շրջանների նկատմամբ ժամանակավոր կառավարության ֆունկցիաներ<sup>81</sup>։

Հաջորդ օրը՝ մայիսի 27-ին (Ս. Վրացյանը նշում է նույն օրը՝ մայիսի 26-ին)<sup>82</sup> ՀՅԴ Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի և թաղային կոմիտեների անդամների համատեղ նիստում՝ լսելով ներկա մոմենտի, Սեյմի արձակման և Վրաստանի անկախության հայտարարության մասին, ընդունեց հետևյալ բանաձևը՝ «Ի նկատի առնելով այն, որ Անդրկովկասյան Սեյմի ինքնացրությունից և Վրաստանի՝ անկախության հայտարարելուց հետո, լուծվելու է Անդրկովկասյան կառավարությունը, և հայ ժողովուրդը մնալու է բախտի բերմունքին՝ ներկայացուցչական ժողովը գտնում է անհրաժեշտ, որ Հայոց Ազգային խորհուրդը, ուժեղացնելով իր կազմը, անցնի գործելու հայության կենտրոնում՝ ստանալով կառավարական ֆունկցիաներ, օժտված դիկտատորական իրավունքներով հայ կյանքի բոլոր երևույթների և գործերի նկատմամբ»<sup>83</sup>։

Այն բանից հետո, երբ մայիսի 27-ին ազերիների Ազգային խորհուրդը հայտարարեց Ադրբեջանի անկախությունը, Հայոց Ազգային խորհրդին չէր մնում այլ բան, քան ինքնաբերաբար հայտարարել նաև Հայաստանի անկախությունը։ Մայիսի 28-ին՝ բուռն քննարկումներից հետո, Հայոց Ազգային խորհուրդը վճռեց հայտարարություն անել Հայաստանի անկախության մասին։ Այդ հիման վրա հանձնարարվեց Ա. Ահարոնյանին, Ն. Արալյանին, Հ. Քաջազունուն և Ալ. Խատիսյանին մշակել Հայաստանի անկախության պաշտոնական հայտարարագիրը, որը և լույս տեսավ մամուլում մայիսի 31-ին։ Նրանում ասվում էր. «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծարումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ՝ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն։ Որոշ ծանրակշիռ պատճառներով բողոքելով մոտիկ օրերում կազմելու Հայոց Ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական և վարչական դեկրետներով համար»<sup>84</sup>։

Միաժամանակ, մայիսի 28-ին Հայոց Ազգային խորհուրդը որոշում կայացրեց Հայաստանի (որպես ինքնուրույն պետություն) պատվիրակություն ուղարկել Բաթում՝ բուրքերի հետ հաշտության պայմանագիր կնքելու նպատակով<sup>85</sup>։ Բանն այն էր, որ մեկ օր հետո՝ մայիսի 29-ին, լրանում էր Թուրքիայի վերջնագրի ժամկետը<sup>86</sup>։ Անհրաժեշտ էր շուտափույթ պատվիրակություն ուղարկել Բաթում և հաշտության պայմանագիր կնքել՝ լուծել պատերազմի և խաղաղության խնդիրը։

Հայոց Ազգային խորհրդի պաշտոնական հայտարարության համաձայն՝ կառավարության կազմվելը հետաձգվեց։ Խնդիրն այն էր, որ նոր կառավարությունն հնարավոր չէր միանգամից կազմել, որովհետև դրա շուրջ պահանջվում էր միջկուսակցական խորհրդատվությունների և փոխադարձ համաձայնությամբ կառավարություն ձևավորելու անհրաժեշտություն։ Միաժամանակ, հարկավոր էր խորհրդակցել և կառավարության մեջ ներգրավել երևանյան այն կարող ուժերը, որոնք պետական կառույցների ձևավորման ուղղությամբ արդեն հսկայական աշխատանք էին կատարել Հայոց Ազգային խորհրդի լիազոր և Երևանի դիկտատոր Արամի գլխավորությամբ։ Մայիսի 29-ին ՀՅԴ բարձրագույն դեկավար մարմինները՝ Արևելյան և Հայաստանի Բյուրոները, ՀՅԴ Թիֆլիսի կոմիտեն և այլն հավանություն են տալիս Հայաս-

<sup>79</sup> «Հորիզոն», 11 մայիսի 1918 թ.։

<sup>80</sup> Նույն տեղում։

<sup>81</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 120, ք. 36-37։

<sup>82</sup> Ս. Վրացյան, Անկախ և Միացյալ Հայաստան, Բոստոն, 1920, էջ 41։

<sup>83</sup> «Հորիզոն», 29 մայիսի 1918 թ.։

<sup>84</sup> «Հորիզոն», 31 մայիսի 1918 թ., «Кавказское слово», 31 мая, 1918г., Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 84։

<sup>85</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 153-154։

<sup>86</sup> С. Т. Аркомед, Материалы по истории отпадения Закавказья от России, Тифлис, 1923, с. 74.

տանի անկախության հայտարարությանը, և Հովհաննես Բաջազնունին առաջադրվում է որպես վարչապետության թեկնածու<sup>87</sup>։

Հարկ է նշել, որ Հայոց Ազգային խորհրդի գործունեության թիֆլիսյան ժամանակաշրջանում նրանում ներկայացված հայ քաղաքական կուսակցությունները հիմնականում հանդես են եկել ազգային միացյալ ճակատով։ Անգամ 1918 Մայիսի 28-ի Արամյանցի տանը Հայաստանի անկախության մասին վճիռը Հայոց Ազգային խորհրդում ընդունվեց առանց որևէ ներքին պայքարի, քանզի մայիսի վերջին ստեղծված քաղաքական իրավիճակն էր թելադրում այդպես<sup>88</sup>։ Այ. Խատիսյանը վկայում է, որ անկախության բանաձևը ընդունվեց Ազգային խորհրդի բոլոր կուսակցությունների համաձայնությամբ<sup>89</sup>։ Արդարև, պատմական տվյալ պահին այլընտրանք չկար։ Իհարկե, սա ամենևին էլ չէր նշանակում, թե խորհրդի բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները, իրոք, անկեղծորեն կողմնակից էին Հայաստանի անկախությանը։

Այդ օրերին հայ ժողովուրդը ունեցավ իր երկրորդ Ավարայրը։ Մայիս-վերջյան հաղթական շաբաթը փաստորեն ծնեց Հայաստանի անկախությունը։ Այն կռվեց ոչ թե Թիֆլիսում՝ Հայոց Ազգային խորհրդի վախժվորած ու հոգեմաշ նիստում, այլ Սարդարապատում, Ղարաբիխայում և Բաշ-Ապարա-նում։

Ազգային խորհրդի շատ անդամներ երկչուտ ու թերահաւատ զգացումով էին համակված անկախության հանդեպ։ Սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչներից զատ, դաշնակցականներ՝ Ա. Ահարոնյանը, Ռ. Տեր-Սիմեոնյանը և Ա. Բաբայանը ևս տարակուսում էին անկախության խնդրում<sup>90</sup>։ Այդ մտավախությունը պետք է բացատրել 1918 թ. գարնանը, թուրքական արշավանքի պայմաններում, հայ ժողովրդի համար ստեղծված չափազանց բարդ քաղաքական վիճակով, որի ժամանակ ըստ Ս. Վրացյանի «անկախությունը կարող էր ավելի ևս ծանրացնել կացությունը»<sup>91</sup>։ Հարկ է նշել, որ անկախության խնդրում չկար միասնություն մաս ՀՅԴ շարքերում։ Օրինակ, ՀՅԴ Բաքվի կոմիտեն, որը շատ խնդիրներում համերաշխվում էր Սո. Շահումյանի դիմավորած Բաքվի կոմունայի հետ, ոչ միայն դեմ արտահայտվեց անկախությանը, այլև այն որակեց որպես «հայ ժողովրդի կամքի» ոտնահարում<sup>92</sup>։ Անկախության խնդրում կար մաս հոգեբանական արգելք, որն ամենից առաջ նշանակում էր կտրվել Ռուսաստանից։

Եվ, իրոք, Հայոց Ազգային խորհուրդը տարակուսում էր այդ հարցում, և դրա համար կային լուրջ հիմնապատճառներ։ Նրանց հիշողության դաշտում

էր 1,5 մլն հայության կորուստը, թշնամու գործը գտնվում էր Երևանի մոտեր-քում և թույլ ու անօգնական Հայաստանի անկախության հռչակումը, առանց քաղաքական ծանրակշիռ դիրքորոշումների ու երաշխիքների, կարող էր լուրջ սպառնալիքի տակ դնել արևելահայության գոյությունը։

Հակառակ հայերի՝ անկախության հարցում ամենևին չտատանվեցին վրացիները և թաթարները։ Նրանք չերկմտեցին այն պարզ պատճառով, որովհետև արդեն ունեին իրենց հովանավոր պետությունները՝ հանձինս Գերմանիայի և Թուրքիայի, իսկ Հայաստանը չուներ այդպիսին, ուստի և Հայոց Ազգային խորհուրդը հայտնվել էր անորոշության ու տարակուսանքի մեջ։

Հակառակ Հայոց Ազգային խորհրդի անդամ կուսակցությունների՝ ՍԴՀՆՀՅԱԿ կուսակցության Անդրկովկասյան կենտրոնը բուռն կերպով բողոք արտահայտեց Մայիսի 28-ի Հայաստանի անկախության հայտարարության կապակցությամբ։ Այդ որոշումը համարվեց *անօրինական*, իսկ Ազգային խորհուրդը որպես ինքնակոչ մարմին, որն «ուզուրպացիա» է կատարում հայ ժողովրդի ազատ իրավունքների դեմ<sup>93</sup>։ Նրանք, ովքեր ժխտում, քննադատում կամ կասկածի տակ են առնում Հայոց Ազգային խորհրդի Մայիսի 28-ի պատմական քայլը, այդպիսիներին պետք է հիշեցնել, որ եթե խորհուրդը տվյալ պահին իրեն չհայտարարեր հայկական գավառների գերագույն իշխանությո-ւն, ապա հայապատկան գավառները պարզապես բաժին կդառնային հարևան թուրքերին, ադրբեջանցի-թաթարներին և վրացիներին։ Հարկ է ընդգծել, որ այդպես էին վճռել մաս Կովկասի այն ժամանակվա փաստական տե-րիներ՝ Գերմանիան և Թուրքիան<sup>94</sup>։ Եվ այս առընչությամբ միանգամայն հիմ-նագուրկ է Ա. Երզնկյանի և հետագայում նրան ձայնակցած շատ հեղինակնե-րի արտահայտած այն միտքը, թե Մայիսի 28-ին Հայաստանի անկախացու-մը կատարվել է Թուրքիայի բռնի թելադրանքով<sup>95</sup>։ Այնինչ փաստերը և դեպքե-րի ու իրադարձությունների տրամաբանությունը հուշում են, որ եթե խնդիրը թողնվեր Թուրքիային, ապա մա ոչ միայն Հայաստանը չէր «անկախացնի», այլև հնարավորության դեպքում Անդրկովկասում ևս հայ չէր թողնի և արևե-լահայոց հարցը ևս կլուծեր արևմտահայոց նման։ Կնշանակի՝ Հայաստանի անկախության ակտը պատմական անհրաժեշտություն էր և ստեղծված պայ-մաններում չուներ այլընտրանք։

1918 թ. Մայիսի 28-ի պատմական որոշումից երկու շաբաթ անց՝ արդեն հունիսի 13-ին, Ազգային խորհրդի կազմած առաջին կառավարությունը պաշ-տոնապես հայտարարում է Հայաստանի անկախության մասին այն պետու-թյուններին, որոնք ներկայացուցիչներ ունեին այդ ժամանակ Թիֆլիսում և Կ. Պոլսում<sup>96</sup>։ Հայոց Ազգային խորհրդի գործունեության թիֆլիսյան շրջանում

<sup>87</sup> Յ. Իրազեկ, Մոտիկ անցյալից, Պեյրուք, 1956, էջ 35։

<sup>88</sup> «Վեմ», Փարիզ, 1934, թիվ Գ., էջ 79։

<sup>89</sup> Այ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 84։

<sup>90</sup> Ա. Բաբայան, Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Գահիրե, 1959, էջ 7։

<sup>91</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 644, ք. 1։

<sup>92</sup> «Արև», 9 հունիսի 1918 թ.։

<sup>93</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 221, ք. 1։

<sup>94</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 222, ց. 1, գ. 137, ք. 1։

<sup>95</sup> Ա. Երզնկյան, նշվ. աշխ. էջ 50-51, Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 435, Մ. Սերոբյան, Հայաստանի անկախության առթիվ, Գահիրե, 1950, էջ 9-10 և ուրիշներ։

<sup>96</sup> ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, ք. 146։

նրանում ներկայացված կուսակցությունների ներկայացուցիչների միասնությունը պայմանավորված էր արտաքին գործոններով՝ թուրքական մահաբեր ներխուժմամբ, ռուսական գործերի հեռացումով և խորհրդային կառավարության կողմից առանց Անդրկովկասի ժողովուրդների գիտության ու կամքի Բրեստի դաշնագրի ստորագրումով: Այդ դաշնագիրը իրավական հիմք տվեց Թուրքիային ներթափանցելու Անդրկովկաս և միաժամանակ թաղելու «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Բաթումի, Կարսի և Արդահանի համձնույնը դուրսին ճանապարհ էր հարթում թուրքերի համար՝ տիրանալու ամբողջ Անդրկովկասին ու բնաջնջելու Հայաստանը<sup>97</sup>: Իրոք, Բրեստի կողոպույտական հաշտության պայմանագիրը «սառը ցնցուղ» եղավ հայ քաղաքական կուսակցությունների, այդ թվում սոց. դեմ. և էսեռների համար՝ խորհրդային Ռուսաստանի կառավարությունից քաղաքականապես սառելու և հիասթափվելու տեսակետից: «Սա մի ակտ էր, - նշում էր Արկոմեդը, - որը նորանոր աղետների շրջան էր բացում Ռուսաստանի և թե, մասնավորապես, Անդրկովկասի համար»<sup>98</sup>:

Հայ քաղաքական գրեթե բոլոր ուժերը դատապարտեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Հայտնի է, որ Բրեստի կողոպույտի պայմանագրի դեմ՝ շատ կուսակցությունների հետ միասին, բուռն կերպով բողոքեցին «ձախ» էսեռները: Էսեռների կուսակցության Անդրկովկասյան կազմակերպության ԿԿ-ը ժողովրդին ուղղված կոչ հրապարակեց, որով դիմում էր Կովկասի ժողովուրդներին չճանաչել այդ պայմանագիրը և սեփական ուժերով պաշտպանել երկրամասը թշնամու ավազակային հարձակումներից<sup>99</sup>:

Հայ ազգային և ոչ ազգային կուսակցությունների և Ռուսաստանից սառելու և հիասթափվելու գլխավոր պատճառն այն էր, որ Գերմանիայի ճնշմամբ խորհրդային կառավարությունը Թուրքիային էր հանձնում ոչ միայն 1914-1917 թթ. պատերազմի ընթացքում այնքան մեծ դժվարությամբ ու անթիվ զոհերի գնով գրավյալ արևմտահայ մահանգները, այլև Արևելյան Հայաստանի մասը կազմող Կարսի մարզը, ընդհուպ մինչև Ախուրյան գետը<sup>100</sup>: Այսինքն՝ վերականգնվում էր 1877-1878 թթ. ռուս-թուրքական նախապատերազմյան պետական սահմանը: Բրեստի դաշնագրի /Կովկասին վերաբերող հատվածի/ 4-րդ կետով «Ռուսաստանը իրենից կախված ամեն ինչ կանի, որ ապահովի Արևելյան Անատոլիայի գավառների շուտափույթ մաքրումը և դրանց կանոնավոր հանձնումը Թուրքիային: Արդահանի, Կարսի և Բաթումի օկրուգները ևս անհապաղ մաքրվում են ռուսական զորքերից»<sup>101</sup>: Միաժամանակ Ռու-

սաստանը պետք է կանխեր Թուրքիայի կապիտուլյացիան<sup>102</sup>: Ավելին, Ռուսաստանի և Թուրքիայի միջև նույն մարտի 3-ին ստորագրված լրացուցիչ պայմանագրի 5-րդ կետով Ռուսաստանը պարտավորվում էր գորացրել հայկական զինվորական կազմավորումները (խմբերը), մինչդեռ Թուրքիան «իր մյուս թշնամիների դեմ պատերազմը շարունակելու անհրաժեշտությունից՝ ստիպված է իր բանակը պահել մարտական վիճակում»<sup>103</sup>:

Կարծում ենք, որ Բրեստ-Լիտովսկի կողոպույտի պայմանագիրը ինչ-որ չափով ազդակ հանդիսացավ այն բանին, որ Հայոց Ազգային խորհրդի քաղաքական ուժերի ներկայացուցիչներին ինքնաբերաբար մղեց անկախության քայլին:

Թուրք զավթիչների դեմ պայքարի հարցում բոլոր կուսակցությունները համակարծիք էին ու միասնական: Այդ նշանակում է, որ Հայոց Ազգային խորհրդում, մինչև նրա խորհրդարանական կերպարանք ստանալը, լուրջ հակասություններ ու պայքար չի դրսևորվել: Ավելին, արտաքին վտանգի սպառնալիքի տակ նրանք անգամ համագործակցել են իրար հետ:

Արդեն այլ վիճակ ստեղծվեց Հայաստանի անկախության հռչակումից հետո, երբ Հայոց Ազգային խորհրդի հիմքի վրա կազմվեց ՀՀ գերագույն օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը (խորհրդարանը), որը նույն թվականի օգոստոսի մեկից իր աշխատանքները սկսեց ՀՀ մայրաքաղաք Երևանում: Այստեղ՝ արդեն բուն հայրենիքում, գործնական աշխատանքի պայմաններում բուռն կերպով դրսևորվեց այդ կուսակցությունների ընդդիմադիր կեցվածքը:

Այսպիսով, հայ ժողովրդի հերոսական մաքառումների և Հայոց Ազգային խորհրդի թափած ջանքերի արդյունքով Հայաստանի մի փոքր հատվածը կանգնեց անկախության անխուսափելի փաստի առջև: «Մայիսի 28-ով» սկզբնավորվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը:

#### 4. Անդրանիկ կառավարության և խորհրդարանի ձևավորումը

ՀՀ անկախության հռչակումից հետո Հայոց ազգային խորհրդի առջև ծառացած էր երկու կարևոր խնդիր՝ կառավարության և խորհրդարանի ձևավորումը: Կառավարության կազմումը հետաձգվեց մինչև Բաթումի հաշտության պայմանագրի կնքումը: Պայմանագրի կնքումից անմիջապես հետո օրակարգում դրվեցին գործադիր՝ կառավարության և օրենսդիր՝ խորհրդարանի ձևավորման հարցերը:

<sup>97</sup> ՀՀ ԶԿԳ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 213, ք. 18:

<sup>98</sup> Գ. Ղարաջյան, Անդրկովկասի քաղաքական կյանքը 1918 թ., Թիֆլիս, 1919, էջ 20:

<sup>99</sup> «Հորիզոն», 29 մարտի 1918 թ.:

<sup>100</sup> История дипломатии, т. 2, М.-Л., 1945, с. 346.

<sup>101</sup> Л. У. Хуторной, Հայկական հարցը, Ե., 1995, էջ 42, Г. А. Аветисян, Брест-Литовск: как были отторгнуты Турцией Карс, Ардаган и Батум, Е., 1994, с. 70.

<sup>102</sup> ՀՀ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 118, ք. 2, «Հորիզոն», 15 ապրիլի 1918:

<sup>103</sup> Стенографический отчет 4-го Чрезвычайного съезда советов рабочих, солдатских, крестьянских и казачьих депутатов, М., 1920, с. 135:



դովրդական կուսակցության հետ<sup>112</sup>։ Կնշանակի՝ Հայաստանի համար, իրոք, շատ ծանր ժամանակաշրջանում մյուս կուսակցությունները փաստորեն բոյ-կոտեցին նորակազմ կառավարությունը և ողջ պատասխանատվությունը ՀՅԴ ստանձնեց միայնակ։ «Երեկվան ֆեդալական, հայդուկային կազմա-կերպությունը,- գրում է ռամկավար Ա. Դարբինյանը իր հուշերում,- այսօր դարձել է օրինական կառավարություն և ղեկավարում է Հայաստանի պետա-կան կյանքը։ Շատ ծանր բեռ է առել նա իր ուսերին։ Մեր մյուս կուսակցու-թյունները հեռվից և վերապահությամբ են օժանդակում նրան»<sup>113</sup>։

Այսպիսով, հայ քաղաքական կուսակցությունները չկարողացան հա-մաձայնության գալ միմյանց հետ կուսակցական սկզբունքով խառը (կոալի-ցիոն) կառավարություն կազմելու համար։

Տեսնելով, որ այդ ճանապարհով գործը չի հաջողվում, հունիսի վերջին հանձնարարվեց վարչապետին կառավարություն կազմել անհատական կար-գով<sup>114</sup>։ Հ. Քաջազնունու անդրանիկ կառավարության մեջ մտան չորս դաշ-նակցական (Հ. Քաջազնունու՝ նախարար-նախագահ, Ալ. Խատիսյան՝ արտ. գործ., Ա. Մանուկյան՝ ներք. գործ., Խ. Կարճիկյան՝ ֆինանսների) և երկու անկուսակցական (գորավար Հ. Հախվերդյան՝ զինվորական և մի փոքր ուշ՝ հուլիսի 28-ից Գ. Պետրոսյան՝ արդարադատության նախարար)։ Վերջինս համակիր էր Ժողովրդական կուսակցությանը<sup>115</sup>։

Խոսելով անդրանիկ կառավարության կազմի գործարար կարողու-թյունների մասին՝ չի կարելի համաձայնել էսեռ Ա. Խոնդկարյանի այն պնդմա-նը, թե Քաջազնունու այս կաբինետը շատ թույլ էր անձնական կազմով։ Եվ սա ասվում էր այն դեպքում, երբ այդ կառավարության մեջ էին մտնում այն-պիսի հանրաճանաչ ու փորձառու գործիչներ, ինչպիսիք էին վերոգրյալ դաշ-նակցական չորս նախարարները։ Առաջին կառավարությունը, իհարկե, եթե իրավասությունների (լիազորությունների) առումով թույլ էր, ապա անձնական կազմի տեսակետից՝ ոչ ամենևին։ Նշենք որ հետագայում նախարարություն-ների քանակը ավելացվեց։

Հայտնի է նաև, որ Հ. Քաջազնունին, լինելով ՀՅԴ շարքերում, պետա-կան տեսակետի ամենահետևողական ջատագով, ջանում էր ուժեղացնել պե-տական իշխանությունը և կուսակցական կառույցներին հնարավորին չափ հեռու պահել պետական, կառավարության գործերին միջամտելուց և ուղղա-կի ցուցումներ տալուց։

Հուլիսի կեսերին ՀՅԴ ղեկավարությունը և Քաջազնունու կաբինետը վճռապես հարց բարձրացրին Ազգային խորհուրդն ու կառավարությունը Թիֆլիսից Երևան փոխադրելու վերաբերյալ։ Սրան նպաստեց նաև վրաց կա-

ռավարության համաձայն պահանջը ու անբարյացակամ վերաբերմունքը Հայաստանի իշխանությունների հանդեպ։ Հուլիսի 13-ին Հայոց Ազգային խորհրդի և Հայաստանի կառավարության համատեղ նիստում ձայների մե-ծամասնությամբ (7 կողմ և 5 դեմ) որոշվեց հուլիսի 16-ին ամբողջ կազմով տե-ղափոխվել Երևան<sup>116</sup>։ Տեխնիկական պատճառներով մեկնումը կատարվեց հուլիսի 17-ին։ Ավելացնենք, որ Ազգային խորհրդի Երևան տեղափոխվելու հետևանքով, վիրահայոց ազգային գործերը ղեկավարելու համար, 1918 թ. ամռանը կազմվեց Վրաստանի Հայ ազգային խորհուրդ։ Այնտեղ կուսակցա-կան ներկայացուցչության սկզբունքով մտան 4 դաշնակցական, 4 Ժողովրդա-կան, 4 սոցիալ-դեմոկրատ և 3 էսեռ անդամներ<sup>117</sup>։ Վիրահայոց ազգային խորհուրդը մերժեց Հնչակյան կուսակցության առաջարկն իր ներկայացուց-չին ընդունել խորհրդի կազմում<sup>118</sup>։

Մինչ Հայաստանի նորակազմ կառավարությունը Թիֆլիսից կժամա-ներ Երևան, տեղում իշխանությունն իրականացնում էր Երևանի Հայ ազգային խորհուրդը<sup>119</sup>, Ժողովրդի կողմից Երևանի դիկտատոր ճանաչված Արամ Մա-նուկյանը ու նրա գլխավորած քաղաքային վարչությունը։ Նա կազմակերպել էր վարչություններ և սպասում էր նորընտիր կառավարության և Ազգային խորհրդի մայրաքաղաք փոխադրվելուն։ 1918 թ. հուլիսի 17-19-ի ընթացքում Հայոց Ազգային խորհուրդը և կառավարությունը Թիֆլիսից ժամանեցին Երևան<sup>120</sup>։ Կառավարության կազմը Երևանում ստացավ ավարտուն տեսք։

Այսպիսով, 1918 թ. հուլիսի երկրորդ կեսից Հայոց Ազգային խորհրդի և կառավարության Հայաստանի մայրաքաղաք փոխադրումով հայ քաղաքա-կան կյանքի կենտրոնը, որ մինչ այդ համարվում էր Թիֆլիսը, այժմ դարձավ Երևանը։

ՀՀ հռչակումից հետո Հայոց Ազգային խորհրդի առջև ծառացած մյուս խնդիրը խորհրդարանի ձևավորումն էր։ Ստեղծված արտասովոր պայմաննե-րում, երբ պակասում էին ժամանակը և հնարավորությունը խորհրդարանի համաժողովրդական ընտրություններ անցկացնելու համար, Հայոց Ազգային խորհուրդը, հետևելով Անդրկովկասյան սեյմի և Վրաց Ազգային խորհրդի օ-րինակին, դեռևս Թիֆլիսում հանգեց Հայաստանի ապագա խորհրդարանը Ազգային խորհրդի մեջ մտնող կուսակցությունների ներկայացուցիչների թվի համամասնական եռապատկման միջոցով կազմելու գաղափարին։

Սկզբում որոշվել էր խորհրդարանը կոչել *Պետական խորհուրդ*, բայց հետո այն պաշտոնապես կոչվեց «Հայաստանի խորհուրդ»։ Հասկանալի է, որ այս խորհրդարանը լինելու էր ժամանակավոր, մինչև որ Ժողովրդավարա-

<sup>112</sup> Ռ. Հովհաննիսյան, Հայ Յեղափոխական Դաշնակցության դերը ՀՀ-ի մեջ, «Աս-պարեզ», 28/29 մայիսի 1992 թ.։

<sup>113</sup> Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 432։

<sup>114</sup> «Հորիզոն», 28 հունիսի 1918 թ., «Աշխատանքի դրոշակ», 30 հունիսի 1918 թ.։

<sup>115</sup> «Ժողովուրդ», 14 օգոստոսի 1918 թ.։

<sup>116</sup> «Հորիզոն», 17 հուլիսի 1918 թ.։

<sup>117</sup> «Հորիզոն» 12 հուլիսի 1918 թ., «Ժողովուրդ», 14 օգոստոսի 1918 թ., «Աշխատանքի դրոշակ», 12 հուլիսի 1918 թ.։

<sup>118</sup> «Հորիզոն», 20 սեպտեմբերի 1918 թ.։

<sup>119</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 15, քթ. 4-5։

<sup>120</sup> «Հորիզոն», 27 հուլիսի 1918 թ., Ա. Բաբայան, նշվ. աշխ., էջ 9-12։

կան ընտրությունների ճանապարհով կիրավորվեր Սահմանադիր ժողով (նոր խորհրդարան):

1918 թ. հուլիսի վերջերին արդեն Երևանում՝ Հայոց և Երևանի ազգային խորհուրդների համատեղ նիստերում, ձայների մեծամասնությամբ որոշվեց՝ Հայոց Ազգային խորհրդի անդամների թվի, կուսակցական համամասնությամբ եռապատկելու (բացի անկուսակցականները), ինչպես նաև հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ հրավիրելու միջոցով կազմել Հայաստանի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը (խորհրդարանը)<sup>121</sup>:

Հայոց Ազգային խորհրդի չորս կուսակցությունները Հայաստանի խորհրդում ներկայացվեցին հետևյալ թվով՝ ՀՅԴ (6x3) 18, ՀԺԿ (2x3) 6, Սոց.-դեմ. (2x3) 6, Սոց.-հեղափ. (2x3) 6: Չեռապատկվեցին միայն երեք անկուսակցականները (չեզոքները): Կենտրոնական և Երևանի Ազգային խորհուրդների համատեղ նիստում խոսվում է այդ մասին: Սակայն անկուսակցականները ե-րեք տեղի փոխարեն Հայաստանի խորհրդում զբաղեցնում են երկու տեղ<sup>122</sup>: Հայոց Ազգային խորհրդի անկուսակցական երեք անդամներից Երևան են ժամանում և Հայաստանի խորհրդում զբաղեցնում երկու հոգի՝ Ստեփան Մամիկոնյանը և Պետրոս Զաքարյանը, իսկ երրորդը՝ Տիգրան Բեկլադյանը, Երևան չի գալիս և Հայաստանի կառավարության համձնարարությամբ զբաղվում է դիվանագիտական աշխատանքով: Այս մեկ անկուսակցական ներկայացուցչի պակասն էր պատճառը, որ Հայաստանի խորհուրդը պաշտոնապես 47-ի փոխարեն հենց սկզբից էլ ունեցավ ընդամենը 46 պատգամավոր:

Հայաստանի խորհրդում Դաշնակցությունը ստացավ 18, իսկ մնացած երեք կուսակցությունները (ՀԺԿ, սոց.-դեմ. և սոց.-հեղ.) 6-ական ձայն: Բայց ինչպես հետագայում խոստովանում էր սոց.-հեղ. գործիչ Ա. Խոնդկարյանը. «Ուժերի այս բաշխումը չէր համապատասխանում իրականությանը: Կասկածից դուրս է, որ Դաշնակցությունը շատ ավելի հետևորդներ ուներ, քան մյուս երեք կուսակցությունները միասին վերցրած»<sup>123</sup>: Արդյունքում՝ Հայաստանի խորհրդի հայ պատգամավորների թիվը կազմեց ընդամենը 38 մարդ:

Ինչպես արդեն ասվեց, սահմանվեց նաև, որ «Հայաստանի Հանրապետության պառլամենտի աշխատանքներին առաջին իսկ նիստից պիտի մասնակցեին հանրապետության բոլոր ազգությունների ներկայացուցիչները՝ ազգաբնակչության համեմատական թվի սկզբունքով»<sup>124</sup>: Այդ նպատակով կազմվեց մի համձնաժողով, որը բանակցեց մյուս ազգությունների ներկայացուցիչների հետ ու համաձայնության եկավ Հայաստանի խորհրդում ընդգրկել ազգային փոքրամասնությունների պատգամավորներ: Բանակցությունների

արդյունքում՝ 38 հայազգի պատգամավորներին գումարվեցին նաև ազգային փոքրամասնություններից հրավիրված ներկայացուցիչներ՝ 6 թուրք (հաշվի առնելով, որ ՀՀ կար գալիս թվով թուրք-թաթար), մեկ ռուս և մեկ քուրդ (եզդի)՝ ընդամենը 8 անդամ: Այդպիսով՝ Հայաստանի խորհրդի պատգամավորների ընդհանուր թիվը կազմեց 46 հոգի:

Համեմատության համար ասենք, որ Վրաստանի մույնատիպ (ժամանակավոր) խորհրդարանը, որը սկսել էր գումարվել հունիսի սկզբներից, մինչև հոկտեմբերի 1-ը իր կազմում չուներ ազգային փոքրամասնությունների (հայ, ռուս, թաթար) և ոչ մի ներկայացուցիչ<sup>125</sup>: Եվ սա այն դեպքում, երբ Վրաստանը պաշտոնապես կոչվում էր **Դեմոկրատական** Հանրապետություն, իսկ այնտեղ կառավարողները սոցիալիստներ էին: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ վրաց խորհրդարանում ընդգրկվեցին միայն այն բանից հետո, երբ նա ընդունեց Վրաստանի Հանրապետության քաղաքացիության մասին օրենքը<sup>126</sup>: Վրաց խորհրդարանում հայերին հատկացվեց 10 տեղ: Ըստ կուսակցական պատկանելության՝ ՀՅԴ-ին՝ 3, մյուս կուսակցություններին (ՀԺԿ, սոց.-դեմ, էսէռ)՝ 2-ական տեղ և մեկ թափուր տեղ<sup>127</sup>: 1918 թ. հոկտեմբերի 1-ից վրացական խորհրդարանի նիստերին սկսեցին մասնակցել հայ պատգամավորները<sup>128</sup>: Ինչ վերաբերում է Ադրբեյջանի խորհրդարանին (մեջլիսին)՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկումը կատարվեց ավելի ուշ՝ դեկտեմբերի սկզբներից<sup>129</sup>:

## 5. Հայաստանի խորհրդի առաջին քայլերը

Հայաստանի խորհրդի պաշտոնական բացումը տեղի ունեցավ հինգ-շաբթի օրը՝ օգոստոսի 1-ին: Ժամանակակիցներից մեկը (բժիշկ Հ. Մելիքյանը) այդ օրը համարում է Երևանի տարեգրության ամենահիշարժան օրերից մեկը<sup>130</sup>: Խորհրդարանի աշխատանքների համար հարմարացվել էր քաղաքային ակումբի շենքը, որը նախկինում պատկանում էր Երևանի թեմական դպրոցին: Նիստը բացվեց ժամը 11.30-ին: Ժողովուրդը խոնկել էր քաղաքային ակումբի շենքի առջև ու գտնվող կենտրոնական այգում և մայթերին:

Դահլիճում պատգամավորները տեղեր էին զբաղեցրել հետևյալ կերպ: Աջ կողմում՝ Հայ ժողովրդական կուսակցության խմբակցության անդամներ՝

<sup>125</sup> Նույն տեղում, 20 հունիսի 1918 թ.:

<sup>126</sup> Նույն տեղում, 9 հոկտեմբերի 1918 թ.:

<sup>127</sup> Նույն տեղում, 20 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>128</sup> «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 9 հոկտեմբերի 1918 թ.

<sup>129</sup> «Նոր հորիզոն», 28, 29 նոյեմբերի եւ 4 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>130</sup> «Հայրենիք», 1925, թիվ 9, էջ 100:

<sup>121</sup> «Հորիզոն», 27 հուլիսի 1918 թ.:

<sup>122</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, ց. 282, թ. 2, «Խոսք», 20 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>123</sup> «Վեմ», Փարիզ, 1934, թիվ Ե., էջ 47:

<sup>124</sup> «Հորիզոն», 27 հուլիսի 1918 թ.:

Ստ. Մալխասյանը, Արշ. Մխիթարյանը, Գր. Տեր-Խաչատրյանը, Հովհ. Մելիք-յանը, Գարեգ. Ենգիբարյանը և Սիր. Տեր-Մարտիրոսյանը<sup>131</sup>։

Նույն կողմում էին անկուսակցականներ՝ Ստ. Մամիկոնյանը և Պետր. Ջաքարյանը, մահմեդական 6 պատգամավորները՝ Սեիդ-Ռեզա Միր-Բաբաևը, Միրզա Ջաբար Մամեդովը, Աբաբեր-աղա Իսմայիլովը, Միր-Բադիր Միր Բաբաևը, Մամեդ-բեկ Մամեդ-Բեկովը, Ասադ-բեկ Աղաբաբ-Բեկովը, ռուս պատգամավոր՝ Իվան Ջորինը և եզդի պատգամավոր Յուսուֆ-բեկ Թեյմուրովը<sup>132</sup>։

Դահլիճի կենտրոնում տեղ էր զբաղեցրել ՀՅԴ խմբակցությունը՝ Ավ. Սահակյան, Սիր. Տիգրանյան, Սմբ. Խաչատրյան, Սահ. Թորոսյան, Արտ. Բաբաևյան, Եփր. Սարգսյան, Ռ. Տեր-Մինասյան, Հովհ. Տեր-Միրաբեկյան, Արտ. Ղազարյան, Դր. Կամայան, Հով. Բուդաղյան, Տիգ. Ռաշադյան, Թադ. Արտ. Ղազարյան, Հակ. Տեր-Հակոբյան, Հայկ. Սարգսյան, Արտ. Վանցյան, Ար. Աստվածատրյան<sup>133</sup>։ ՀՅԴ խմբակցության նախագահն էր Սմբատ Խաչատրյանը։

Չախ կողմում տեղեր էին զբաղեցրել սոցիալիստ-հեղափոխական (Էսեռական) և սոցիալ-դեմոկրատական խմբակցությունները. Էսեռներ՝ Գր. Տեր-Հակոբյան, Դավիթ Ջուբյան, Արշամ Խոնդկարյան, Գ. Տեր-Օհանյան, Տիգ. Մուշեղյան և Արմ. Ավետիքյան. սոց.-դեմոկրատներ՝ Հայկ Ավետիսյան, Թադ. Ավդաբեկյան, Մ. Ղարաբեկյան, Ա. Մելիք-Աղաջանյան, Հովհ. Ջաքարյան (մեմբերներ) և Արշավիր Մելիքյան (բուլեիկ)<sup>134</sup>։ Վերջինս առաջադրվել էր պատգամավոր Երևանի սոց.-դեմ. տեղական կազմակերպության ընդհանուր ժողովում։ Արդյունքում՝ 5 մեմբերներ և 1 բուլեիկը Հայաստանի խորհրդարան են մտնում որպես ռուսական սոց.-դեմ. կուսակցության միացյալ կազմակերպության ներկայացուցիչ<sup>135</sup>։

Դահլիճի օբյեկտներից մեկը հարմարեցված էր կառավարության անդամների համար։ Առանձին տեղ էր պատրաստված նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի համար։ Սակայն այդ օրը Վեհափառը՝ Գևորգ Ե-ն, բացակայում էր<sup>136</sup>։ Խորհրդարանի հանդիսավոր բացմանը ներկա էին Գերմանիայի,

Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի, Պարսկաստանի և Ուկրաինայի պատվիրակները<sup>137</sup>։

Ռուսաստանի մեռելածին Սահմանադիր ժողովի և Անդրկովկասյան Սեյմի (խորհրդարանի) պատվիրակների (Наказ) օրինակով՝ մշակվեց ու հաստատվեց Հայաստանի խորհրդի աշխատակարգը՝ *ռեզյումեն*<sup>138</sup>։ Հայաստանի խորհրդի ընդունված աշխատակարգի համաձայն՝ առաջին նիստը բացելու էր խորհրդի ամենատարեց անդամը, որը կատարելու էր նախագահի պարտականությունը մինչև մշտական նախագահի ու քարտուղարի ընտրությունը<sup>139</sup>։ Խորհրդի անդամների լիազորությունները ստուգելու համար ընտրվում է մանդատային հանձնաժողով։ Լիազորությունները ճշտելուց հետո խորհուրդը ձեռնամուխ է լինում նախագահի և քարտուղարի ընտրությանը։

Հայաստանի խորհրդի աշխատակարգը բաղկացած էր *ուր բաժիններից և 201 հոդվածներից*<sup>140</sup>։ Աշխատակարգով սահմանվում էր հետևյալը. խորհրդարանի պաշտոնատար անձանց ընտրություն, խորհրդարանի հանձնաժողովների ձևավորում, դրանց աշխատակարգի, օրինագծերի մշակում քննարկումների ու քվեարկությունների կարգի մասին և այլն։ Ըստ աշխատակարգի՝ խորհուրդն ուներ նախագահություն, որը կազմված էր խորհրդի նախագահից, նախագահի երկու օգնականից, քարտուղարից և նրա օգնականից։

Քվեարկությունները կատարվելու էին բաց և փակ (զաղտնի)։ Փակ քվեարկությունները կատարվում էին հատուկ պատրաստված քվեարկության շարերի (զնդերի, քվեաշարի) միջոցով<sup>141</sup>։ Աշխատակարգով նախատեսված էր նաև անվանական քվեարկություն։

Նկատենք, որ խորհրդի անդամներից շատերը մինչ այդ արդեն Անդրկովկասյան սեյմում կուտակել էին խորհրդարանական գործունեության ու օրենսդրական աշխատանքի որոշ փորձ։

Խորհրդի հանդիսավոր նիստը բացեց Հայոց Ազգային խորհրդի փոխնախագահ, ՀՅԴ պատգամավորական խմբակցության անդամ, տարիքով ավագացույցը՝ Ավետիք Սահակյանը։ Նա իր բացման խոսքում ընդգծում էր այն միտքը, որ խորհուրդը հանդիսանալու ՀՀ պետական իշխանության գերագույն իրավասու մարմինը։ Նա ունենալու էր ոչ միայն բարձրագույն օրենսդիր մարմնի, այլ առանձին ղեկավարում գործադիր իշխանության իրավասություններ։ Ա. Սահակյանը հույս էր հայտնում, որ «կյանքի երկաթյա օրենքի ուժով» կընդարձակվեն Հայաստանի սահմանները։ Վերջում նա կոչ արեց

<sup>131</sup> «Ժողովուրդ», 14 օգոստոսի 1918 թ.։

<sup>132</sup> «Հորիզոն», 9 օգոստոսի 1918 թ., «Աշխատանքի դրոշակ», 8 օգոստոսի 1918 թ.։

<sup>133</sup> Պատգամավոր Ավ. Ախարոնյանը գտնվում էր գործուղման մեջ (Կ. Պոլիս)։

<sup>134</sup> «Վեմ», Փարիզ, 1934, թիվ 2, էջ 114-115, «Հորիզոն», 7 օգոստոսի 1918 թ., «Աշխատանքի դրոշակ», 8 օգոստոսի 1918 թ.։ Խորհրդարանական կուսակցությունները իրավունք ունեին ամերաժեշտության ղեկավար փոխել իրենց պատգամավորներին՝ հետևելով մեկին և նշանակել մեկ ուրիշին։ Համաձայն կանոնի՝ պատգամավորներ փոփոխելիս՝ անպայման պետք է լինեն հետևյալով պատգամավորի գրավոր համաձայնությունը («Չանգ», 16 փետրվարի 1919 թ.)։ Այդ հիման վրա պատգամավորների կազմը հետագայում ենթարկվեց զգալի փոփոխությունների։

<sup>135</sup> «Խոսք», 20 դեկտեմբերի 1918 թ.։

<sup>136</sup> «Հայրենիք», 1925, թիվ 9, էջ 101։

<sup>137</sup> Ռ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ. 1, էջ 42 (անգլերեն)։

<sup>138</sup> «Հորիզոն», 23 օգոստոսի 1918 թ., «Վեմ», 1934, թիվ 2, էջ 87։

<sup>139</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ծ. 198, ց. 1, գ. 3, թ. 2։

<sup>140</sup> Նույն տեղում, թթ 1-11։

<sup>141</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, Ծ. 4051, ց. 1, գ. 42, թ. 2։

պատգամավորներին լծվել հայոց երիտասարդ պետության շենքի կառուցման գործին<sup>142</sup>:

Նույն օրը՝ ժամը 12-ին, «Մեր հայրենիք» օրհներգի հնչյունների ներքո խորհրդարանի շենքի գլխին բարձրացվեց հայկական եռագույն դրոշը: Հայկական եռագույնի՝ որպես հանրապետության պետական դրոշի վերաբերյալ որոշում էր կայացվել 1918 թ. հուլիսի վերջերին Երևանում Հայոց և Երևանի հայ ազգային խորհուրդների միացյալ նիստերից մեկում: «Ժողովրդի ձայնը» հայտնում է, որ այդ մասին առաջարկություն էր մտցրել Հայ ժող. կուսակցության ներկայացուցիչ Ստ. Մալխասյանը<sup>143</sup>:

**յանը:** Հանդիսավոր նիստի ավարտից հետո դրսում՝ հրապարակում, տեղի ունեցավ ՀՀ առաջին զորահանդեսը, որն ընդունեց հայկական կորպուսի հրամանատար, գորավար Թ. Նազարբեկյանը: Ականատեսը պատմում է, որ հայ ազգային զորքը շարքեշարք անցնում էր իրենց առջևից, և այդ պահին հուպմունքից հազարավոր հանդիսականների աչքերից հոսում էին արտասուքի կաթիլներ<sup>146</sup>:

Հաջորդ միատում՝ օգոստոսի 3-ին, լավեց վարչապետ Հ. Զաչապնունու կառավարության հայտարարությունը՝ հայտարարելով: Որի համաձայն՝ կառավարությունը իր գործունեության հիմքում դնում էր հետևյալ հիմնական խնդիրները՝ կասեցնել երկրի քայքայման պրոցեսը, հաստատել տարրական իրավակարգ և կատարել դատաիրավական բարեփոխումներ, բացել հաղորդակցության ուղիները, վերականգնել կապի միջոցները, մեղմացնել պարենա- յին ճգնաժամը և գաղթականների վիճակը, ստեղծել սեփական դրամական

համակարգ, վերակառուցել երկրի գինուժը, դրացիական հարաբերություններ հաստատել հարևան երկրների հետ և այլն<sup>147</sup>:

Իր ելույթում վարչապետը զարգացնում էր իրատեսական այն միտքը, որ համրապետությունում առկա անձև քառսի և ավերակների կույտի պայմաններում կառավարությունն ամեն ինչ սկսում է գրոյից և իր առջև դնում է միայն իրագործելի խնդիրներ: Հիրավի, Հայաստանի նորաստեղծ համրապետության կառավարությանը բաժին էր հասել տխուր ժառանգություն. 10-12 հազար կմ<sup>2</sup> կիսալեռնաստան և տնտեսապես քայքայված ու կազմալուծված մի երկրամաս՝ շուրջ մեկ միլիոնի հասնող բազմազգ բնակչությամբ, որից շուրջ 300 հազարը՝ գաղթականներ: «Տասը հազար քառակուսի վերստ էր այդ Հայաստանը,- գրում էր Լեոն,- մեծ մասամբ լեռ ու անապատ՝ Սևանի լճի շուրս կողմը, հայ ժողովրդի ոչ թե բնակչության տեղ, այլ գերեզման»<sup>148</sup>: «... Չկար ոգևորություն կամ հույս,- խորհում էր այդ օրերի մասին Ա. Բաբայանը,- թե պիտի կարողանանք *խեղդող օդակից դուրս հանել հայ ժողովուրդը* (ընդգծումը հեղինակինն է, Ա. Հ.)»<sup>149</sup>:

Օգոստոսի 5-ին (3-րդ նիստում) հայտագիրն առթիվ արտահայտվեցին խմբակցությունները: ԺԿԿ խմբակցությունը հիմնականում հավանություն տվեց կառավարության որդեգրելիք քաղաքականությանը, քաղաքականություն, որը չէր նույնանում ՀՅԴ ծայրահեղ ծրագրային պահանջներին: Քաջավունձու կառավարության հայտարարությունից մասնավորապես դժգոհություն է արտահայտում «ձախ» ընդդիմությունը: Այսպես՝ Էսենների խմբակցության խոսնակ Ա. Խոնդկարյանը կառավարության հայտագիրը համարում էր պարզունակ, իսկ սոց.-դեմ. խոսնակ Հ. Ազատյանը այն մնանցնում էր Ստոլիպինի կառավարության վարած քաղաքականությանը<sup>150</sup>: Պետք է ասել, որ ընդհանուր առմամբ խմբակցությունների տված գնահատականները զուսպ էին: Խորհրդարանի հաջորդ՝ օգոստոսի 6-ի (4-րդ) նիստում Քաջավունձին լրացուցիչ բացատրություններ ու պարզաբանումներ է տալիս ընդդիմադիր խմբակցությունների ու առանձին պատգամավորների արած դիտողություններին ու առարկայություններին: Նույն նիստում 23 ձայնով և 11 ձեռնպահությամբ (ոչ մի դեմ) հավանություն է տրվում կառավարության հայտագրին<sup>151</sup>: Այնուհետև օգոստոսի 15-ի նիստում ԺԿԿ խմբակցության անդամ Ս. Տեր-Մարտիրոսյանի ներկայացմամբ միաձայն հաստատվեցին պատգամավորների մանդատները<sup>152</sup>:

Խորհրդարանի աշխատանքները կազմակերպելու և օրենսդրական գործունեություն ծավալելու համար շատ կարևոր էր հանձնաժողովների ձևա-

<sup>142</sup> «Հորհրդան», 9 օգոստոսի 1918 թ.:

143 «Գործարարի ծայր», ԹԺՖԻՍ, 20 հոկտեմբերի 1918:

144 «Հոգեբան» 9 օգոստոսի 1918 թ., «Աշխատանքի դրոշակ», 11 օգոստոսի 1918 թ.:

<sup>145</sup> «Վեմ». 1934, քիվ 2, էջ 79:

<sup>146</sup> «Հայրենիք», 1925, թիվ 9, էջ 101:

<sup>147</sup> «Հորիզոն», 15 օգոստոսի 1918 թ.:  
<sup>148</sup>

148 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 404:

149 Ա. Բաքալյան, նշվ. աշխ., էջ 11:

150 «Հորիզոն», 22 օգոստոսի 1918 թ.:  
151

152 «Հորիզոն», 7 սեպտեմբերի 1918 թ., «Ժողովուրդ», 14 օգոստոսի 1918 թ.:

<sup>152</sup> «Ժողովուրդ», 18 օգոստոսի 1918 թ.:



վորումը: Եւ առանց հապաղելու, հենց օգոստոս ամսին, առաջին միստերի ընթացքում կազմվեցին խորհրդի հանձնաժողովները՝ հետևյալ սկզբունքով՝ յուրաքանչյուր հանձնաժողովում երեքական հոգի ՀՅԴ խմբակցությունից և մեկական հոգի մյուս խմբակցություններից, այսինքն՝ պահպանվեց այն համակարգը, ինչպես որ կազմվել էր խորհրդարանը: Ժամանակի ընթացքում Հայաստանի խորհրդի հանձնաժողովների ցանկը կրեց առանձին փոփոխություններ:

Հայաստանի խորհուրդն ուներ հետևյալ հանձնաժողովները՝ 1. Ֆինանսական, 2. Օրենսդրական, 3. Ինքնավարության, 4. Խմբագրական, 5. Կարգադրիչ, 6. Դպրոցական, 7. Պարենավորման, 8. Գաղթականության, 9. Բժշկա-սանիտարական, 10. Հողային, 11. Աշխատանքի, 12. Մանուշատային, 13. Նակազի և 14. Հարցապնդումների<sup>153</sup>: Ընտրվեցին հանձնաժողովների անդամները և նրանց նախագահները:

1. **Ֆինանսական հանձնաժողով** Ա. Վանցյան, Հ. Սարգսյան, Հ. Տեր-Սիբախյան, Ա. Ավետիքյան, Ա. Մելիքյան, Ս. Տեր-Մարտիրոսյան, Ի. Ջորին: 2. **Օրենսդրական** Ս. Տիգրանյան, Հ. Բուդաղյան, Ռ. Տեր-Սիմասյան, Ա. Խոնդկարյան, Հ. Ջաքարյան, Գ. Տեր-Խաչատրյան:

3. **Ինքնավարությունների** Թ. Թոշյան, Ս. Խաչատրյան, Գ. Ենգիբարյան, Հ. Ազատյան, Ա. Խոնդկարյան:

4. **Խմբագրական** Ս. Տիգրանյան, Ստ. Մալխասյան, Հ. Տեր-Հակոբյան, Հ. Ջաքարյան, Դ. Ջուրյան, Ի. Ջորին, Ա. Աղբաբ-բեկով:

5. **Կարգադրիչ** Հ. Տեր-Սիբախյան, Ե. Սարգսյան, Հ. Տեր-Հակոբյան, Ա. Ավետիքյան, Հ. Ջաքարյան, Գ. Ենգիբարյան:

6. **Դպրոցական** Տ. Ռաշմաճյան, Հ. Տեր-Հակոբյան, Ս. Տիգրանյան, Ստ. Մալխասյան, Ա. Մելիքյան, Դ. Ջուրյան, Ի. Ջորին, Ջ. Մամեդով:

7. **Պարենավորման** Տ. Ռաշմաճյան, Թ. Թոշյան, Հ. Մելիքյան, Ա. Մելիք-Աղաջանյան, Գ. Տեր-Օհանյան, Մ. Միր-Բաբան:

8. **Գաղթականության** Ա. Բաբալյան, Ռ. Տեր-Սիմասյան, Հ. Մելիքյան, Թ. Ավդալբեկյան, Գ. Տեր-Օհանյան, Ս. Ռիզա Միր-Բաբան, Յ. Բեկ Թեյմուրով:

9. **Բժշկա-սանիտարական** Ա. Ղազարյան, Ա. Բաբալյան, Հ. Տեր-Սիբախյան, Ա. Միսիրյան, Հ. Ջաքարյան, Բժ. Տեր-Հակոբյան, Ի. Խամախիով:

10. **Հողային** Հ. Ջաքարյան, Ս. Մալխասյան, Հ. Ազատյան, Ա. Տեր-Ավետիքյան, Ի. Ջորին, Ա. Խամախիով:

11. **Աշխատանքի** Հ. Սարգսյան, Ս. Տեր-Մարտիրոսյան, Ա. Մելիք-Աղաջանյան, Գ. Տեր-Օհանյան, Ա. Աղբաբ-բեկով:

12. **Մանդատային** Հ. Սարգսյան, Ս. Տեր-Մարտիրոսյան, Գ. Տեր-Օհանյան:

13. **Նակազի** Հ. Բուդաղյան, Դ. Ջուրյան, Գ. Ենգիբարյան, Հ. Ջաքարյան, Ի. Ջորին:

<sup>153</sup> ՀՀ ՊԿՊԱ, Զ. 198, g. 1, q. 15, p. 16:

14. **Հարցապնդումների** Հ. Բուդաղյան, Ս. Խաչատրյան, Ա. Ղազարյան, Գ. Տեր-Հակոբյան, Թ. Ավդալբեկյան, Գ. Ենգիբարյան<sup>154</sup>:

Ըստ աշխատակարգի՝ խորհրդի հանձնաժողովները կարող էին իրենց ներսում հիմնել ենթահանձնաժողովներ<sup>155</sup>: Ինչպես նկատում ենք, վերոհիշյալ հանձնաժողովների ցանկի շուրջ կեսը իր մեջ ներառում էր սոցիալ-տնտեսական բնույթի հարցեր: Այդ նշանակում էր, որ խորհրդարանը կոչված էր իր ուղղության կենտրոնում պահել այդ ոլորտների գործունեությունը և դրանց համար անհրաժեշտ իրավական դաշտի ստեղծումը:

Սկզբնական փուլում խորհրդարանի և նրա հանձնաժողովների աշխատանքի բացերից մեկն այն էր, որ, օրենսդրական նախաձեռնության իրավունքով, օրինագծերը ոչ թե իրենք էին մշակում, այլ, որպես կանոն, կառավարությունը:

Այս ամենից գատ՝ Հայաստանի խորհուրդն ուներ, սովորաբար խորհրդարանների համար անսովոր, այսպես կոչված «**Կարգադրիչ**» հանձնաժողով, որով փաստորեն իրականացնում էր կառավարչական բնույթի գործառույթներ (ֆունկցիաներ): Պարզվում է, որ խորհուրդն հանդիսանում էր ոչ միայն բարձրագույն օրենսդիր մարմինը, այլև ուներ գործադիր իշխանության իրավասություններ: «Մեր երիտասարդ պառլամենտը, - նկատում է «Ժողովուրդ»-ը, - հենց սկզբից սկսեց միտում ցույց տալ վերցնել իր վրա գործադիր իշխանության ֆունկցիաներ»<sup>156</sup>: Պատգամավոր Ա. Խոնդկարյանն իր հուշերում նշում էր, որ Հայաստանի խորհուրդը շատ հաճախ հանդես էր գալիս գործադիր մարմնի իրավունքներով և իր հանձնաժողովների միջոցով տնօրինում էր վարչական բնույթի գործեր, ինչպիսիք էին խոլերայի և վարակիչ հիվանդությունների դեմ պայքար, ժողովրդի պարենավորման, գաղթականների խնամատարության, անօրեն գեներ ու զինամթերք ունեցող թաղաքացիների զինաթափման և այլ գործեր<sup>157</sup>: 1918 թ. օգոստոսի 21-ի օրենքով խորհուրդն իր ձեռքը վերցրեց խոլերայի դեմ պայքարի գործը: Հայաստանի ամբողջ տարածքը հայտարարվեց խոլերայի կողմից վտանգված, իսկ խորհրդի բժշկա-սանիտարական հանձնաժողովը վարակիչ հիվանդությունների դեմ պայքարող բոլոր հիմնարկությունների վրա հսկող ամենաբարձր մարմին<sup>158</sup>: Դատապարտյալներից ներում չնորհելու կամ պատիժը մեղմացնելու իրավունքը ևս վերապահվեց խորհրդարանին: Խորհրդարանը փորձ արեց իր անմիջական վերահսկողության տակ վերցնել նաև ժողովրդական կրթության գործը<sup>159</sup>:

<sup>154</sup> «Հորիզոն», 7 սեպտեմբերի 1918 թ., «Ժողովուրդ», 25 օգոստոսի և 19 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>155</sup> ՀՀ ՊԿՊԱ, Զ. 198, g. 1, q. 8 p. 3:

<sup>156</sup> «Ժողովուրդ», 3 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>157</sup> «Վեմ», 1934, թիվ 2, էջ 74:

<sup>158</sup> «Հայաստանի խորհրդի հաստատված օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Ե., 1919, էջ 1-2:

<sup>159</sup> «Ժողովուրդ», 8 սեպտեմբերի 1918 թ.:

Խորհրդարանը հաճախ օրենքների անվան տակ հրապարակում էր վարչական հրահանգներ ու որոշումներ: Այստեղ հավանաբար պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Խորհրդարանի վերափոխված նախկին Հայոց Ազգային խորհուրդը կարծես ինքնուրույն ուժով շարունակում էր կատարել գործադիր իշխանության (մարմնի) ֆունկցիաներ: Եւ, իրավ, նրա ընդունած օրենքների ցանկի ուսումնասիրությունից դժվար չէ համոզվել, որ դրանք իրականում ոչ այնքան օրենքներ էին (բառիս իսկական իմաստով), որքան վարչական կարգադրություններ:

Խորհրդարանը, կառավարության ներկայացրած օրինագծի (օրենքի նախագծի) հիման վրա, ստեղծեց **Պետական վերահսկողության մարմին**: Հայաստանի խորհուրդը իրեն վերապահեց **պետական վերահսկիչի** ընտրության իրավունքը՝ միաժամանակ իրեն ենթարկելով վերահսկողության ամբողջ գործը<sup>160</sup>: 26 ձայնով պետական վերահսկիչ ընտրվեց (հաստատվեց) **Մինաս Բերբերյանը** (ՀԺԿ)<sup>161</sup> Ընդսմին պետական վերահսկիչը ենթակա ու հաշվետու էր Խորհրդարանին և նա կառավարությունից որևէ կախում չպետք է ունենար:

Պետական վերահսկողությունը օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության (ֆինանսական, տնտեսական և այլ) գործունեության վրա վերահսկողության իրականացման կարևոր լծակներից մեկն էր: Հիշեցնենք, որ պետական վերահսկողության մարմինը զգալի չափով նմանվում է մերօրյա սահմանադրությամբ նախատեսված Ազգային ժողովի Վերահսկիչ պալատին<sup>162</sup>:

Պետական վերահսկիչի աշխատավարձը հավասար էր նախարարի աշխատավարձին՝ ամսական 2000 ռուբլի<sup>163</sup>: Այս մարմինը վերահսկում էր հարկային և ֆինանսական հարցերը, բացահայտում էր պետական գեղծումները, պաշտոնական չարաշահումները, կոռուպցիան և այլն:

Խորհրդարանը սահմանեց նաև պատգամավորներին տրվող օրապահիկի չափը: 1918 թ. սեպտեմբերի 20-ին հաստատված առանձին օրենքով պետգանձարանից Խորհրդի անդամներին տրվում էր սննդադրամ՝ յուրաքանչյուրին ամսական 900 ռուբլու չափով կամ օրական 30 ռուբլի:

Խորհրդի անդամներին, իրենց պատգամավորական լիազորությունների սկզբում և ավարտին, երկու անգամ տրվում էր ճանապարհածախս: Նիստերից անհարգելի բացակայության դեպքում՝ պատգամավորը գրկվում էր սննդադրամի վճարից՝ բացակայած օրերի հաշվով: Այս առնչությամբ հետագայում Խորհրդարանի ներքին կանոնագրում կատարվեց հետևյալ լրացումը.

<sup>160</sup> «Վեն», 1934, թիվ 2, էջ 74:

<sup>161</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», 1991, թիվ 3, էջ 48:

<sup>162</sup> «ՀՀ սահմանադրություն», Ե. 1995, էջ 39, Հ. Խաչատրյան, Պառլամենտ եւ պատգամավոր, Ե., 1994, էջ 46:

<sup>163</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, գ. 1, գ. 86, ք. 26:

«Պառլամենտի նիստերից բացակայության հարգելի պատճառ համարել՝ որպես կամավոր բանակի մեջ մտնելը»<sup>164</sup>:

Հայաստանի Խորհրդի նախագահին, բացի պատգամավորական սննդադրամից, տրվում էր ամսական լրացուցիչ ևս 600 ռուբլի: Հետագայում, ինչպես հայտնի է, դրամի կուրսի արժեզրկմանը համապատասխան, փոփոխություն էր կատարվում նաև պատգամավորների սննդադրամի վճարաչափում: Խորհրդի անդամներին տրվում էր արձակուրդ՝ տարեկան մեկ և կես ամսվա չափով:

Սահմանվում էր նաև, որ Հայաստանի Խորհրդի անդամը չէր կարող վարել որևէ այլ պետական կամ վճարովի հասարակական պաշտոն: Այդ պաշտոնների տեսակն ու քանակը որոշում էր ինքը՝ Խորհրդարանը<sup>165</sup>: Սա պետք է համարել շատ էական լրացում, որը կոչված էր ապահովելու պատգամավորների անկախությունը, անկողմնակալությունը և արհեստավարժությունը: Սկսած սեպտեմբեր ամսից՝ նիստերը գումարվում էին շաբաթական երկու անգամ՝ երեքշաբթի և ուրբաթ օրերին, երբեմն էլ հանրապետության համար ծանր իրավիճակներում հրավիրվում էին արտակարգ նիստեր<sup>166</sup>: Արարողակարգային տեսակետից Խորհրդարանի նիստերը սովորաբար գումարվում էին երեկոյան ժամերին, որոնք երբեմն ավարտվում էին կեսգիշերին: Քվեարկությունները անցնում էին պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նիստերին ներկա էին լինում հասարակայնության ներկայացուցիչները, որոնց համար դաշինքի հետևի մասում հատկացված էին տեղեր: Միայն 1919 թ. սկզբներին, բժավոր տիֆի համաճարակի պատճառով, Խորհրդարանի դռները ժամանակավորապես փակվեցին հասարակության առաջ<sup>167</sup>:

Այսպիսով, երբ ձևավորվեց Հայաստանի Խորհրդարանը, այն իր մեջ բովանդակում էր երկրի գերագույն իշխանությունը: Գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ենթակա էր Խորհրդարանին: Խորհրդարանը ոչ միայն ընտրում էր կառավարությանը, այլև նրա ֆինանսատնտեսական գործունեությունը վերահսկում էր իր ներկայացուցչի՝ պետական վերահսկիչի միջոցով: Այսպիսով՝ Հայաստանը պառլամենտական գերակայությամբ հանրապետություն էր:

<sup>164</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, գ. 1, գ. 333, ք. 54:

<sup>165</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թիվ 3, էջ 114:

<sup>166</sup> «Հորիզոն», 9 հոկտեմբերի 1918 թ., «Ժողովուրդ», 5 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>167</sup> «Չանգ», 24 հունվարի 1919 թ.:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

### 1. Խորհրդարանական կուսակցությունները և նրանց խմբակցությունները

Քաղաքակիրթ ժողովրդավարական երկրներում հնարավոր չէ պատկերացնել խորհրդարանը առանց կուսակցությունների ներկայացուցչության, առանց քաղաքական պայքարի: Խորհրդարանը, լինելով ժողովրդավարական հաստատություն, պարտավոր է հավասարաչափ կերպով արտահայտել հասարակության բոլոր խմբերի ու խավերի շահերը, իղձերը և ձգտումները: Բայց, ցավոք, միշտ չէ, որ այդպես է լինում: Մի դեպքում՝ առանձին խմբերի ու խավերի շահերը կարող են արտահայտվել ուժեղ, մյուսում՝ բույլ, իսկ մի այլ դեպքում՝ բոլորովին անտեսվել: Դա մեծապես կախված է այնտեղ ներկայացված քաղաքական ուժերի և խմբակցությունների կշռից, դիրքորոշումներից ու վերաբերմունքից:

Խորհրդարանը վերածվում է քաղաքական կուսակցությունների ինքնադրսևորման աշխատավայրի: Այդպիսին դառնալու բոլոր նախադրյալներն ու հնարավորություններն ունենալն Հայաստանի խորհուրդը (խորհրդարանը): Հայաստանի խորհրդում պաշտոնապես գործել են չորս կուսակցական խմբակցություններ՝ ՀՅԴ, որը սկզբից մինչև վերջ եղել է կառավարող կուսակցություն և երեք ընդդիմադիր կուսակցություններ՝ ՀԺԿ, Սոց.-դեմ. (մենչևիկ և բոլշևիկ) և սոցիալիստ-հեղափոխական (Էսեռ): Այն բանից հետո, երբ 1918 թ. նոյեմբերի սկզբին ՀԺԿ-ը ՀՅԴ-ի հետ միասին կազմեց կռալիցիոն կառավարություն, այն դադարեց ընդդիմադիր կուսակցություն լինելուց: Եւ այս վիճակը շարունակվեց մինչև 1919 թ. հունիսի սկիզբը, այսինքն՝ մինչև ՀԺԿ ներկայացուցիչների՝ կառավարությունից հեռանալը և խորհրդի արձակումը:

Ինչպես տեսանք, Հայաստանի խորհրդում ընդգրկված էին ռուսահայ կուսակցությունները, քանզի խորհրդարանն ինքը փաստորեն ծնունդն էր Արևելահայերի համագումարի ընտրած Ազգային խորհրդի:

Ընդհանրապես հայ քաղաքական կուսակցությունների գործունեության և քաղաքական դիմագծի բացահայտման բանալի են համդիսանում Հայաստանի խորհրդի նիստերը: Խորհրդի առաջին իսկ նիստերից սկսվեցին հակամարտությունները և քաղաքական պայքարը պատգամավորական խմբակցությունների միջև:

Խորհրդարանական կուսակցությունների էությունը լավ հասկանալու և նրանց գործունեությունը ճիշտ բնութագրելու համար պայմանականորեն դրանք բաժանել ենք երկու խմբի՝ ազգային և ոչ ազգային: Նման բաժանում կատարելիս հիմք ենք ընդունել կուսակցությունների ծրագրային հիմնադրությունները և հետապնդած քաղաքական նպատակները: Ըստ այդ բաժանման՝ խորհրդարանում ներկայացված ազգային կուսակցություններն էին ՀՅԴ և ՀԺԿ, իսկ ոչ ազգային՝ հայ սոցիալ-դեմոկրատները (5 մենչևիկ և մեկ բոլշևիկ), և հայ էսեռները (սոցիալիստ-հեղափոխականները):

Ազգային և ոչ ազգային կուսակցությունները բնորոշող տարբերակիչ գծերից են նրանց քաղաքական ուղղվածությունը, վերաբերմունքը Հայկական հարցին, համազգային, դասակարգային և ընկերային հիմնահարցերի հանդեպ մոտեցումների ու դիրքորոշումների տարբերությունը և այլն: Եթե ազգային կուսակցություններն իրենց ծրագրերում և գործելակերպում, հենվելով գերազանցապես սեփական ժողովրդի վրա, կարևորում էին ազգային ազատագրությունն ու պետական անկախությունը՝ երկրորդելով ընկերայինը և տնտեսականը, ապա ոչ ազգային որակված կուսակցությունները, հենվելով Ռուսաստանի վրա, Հայաստանի և հայ ժողովրդի ազգային ազատագրության երաշխիքը տեսնում էին համառուսաստանյան հեղափոխական-դասակարգային պայքարի հաղթանակի և դրա հետևանքով ճնշված ժողովուրդների ու դասակարգերի սոցիալական ազատագրության մեջ: Եթե առաջին խմբի դրոշակակիրը կարելի է համարել ՀՅԴ-ը, ապա երկրորդինը՝ բոլշևիկներին՝ հանձնի Հայկոմկոսի:

Հայ քաղաքական կուսակցությունների միջև գաղափարաքաղաքական պայքարը շատ բացորոշ կերպով դրսևորվել է Հայաստանի խորհրդարանում: Ըստ իրենց քաղաքական դավանանքի և հետապնդած նպատակների՝ այնտեղ կարելի է գատորոշել երեք ուղղություն՝ «աջ» (աջակողմյան), «կենտրոն» (կենտրոնամետ) և «չախ» (ձախակողմյան): Այս առումով ձախակողմյան կուսակցություններին բնորոշ էր դասակարգային աշխարհայացքը, իսկ աջակողմյանին ու կենտրոնականին՝ ազգային գաղափարախոսությունը:

«Աջ» և «ձախ» կուսակցությունների տարաբաժանման ամենաբնութագրական հատկանիշերից մեկն այն է, որ եթե ձախակողմյան կուսակցությունները որպես կանոն կողմնակից են հողի ու արտադրության խոշոր միջոցների պետականացման և ընդհանրապես տնտեսավարման պետական սեկտորի գերակայությանը, ապա աջակողմյան կուսակցությունները պաշտպանում են մասնավոր սեկտորը, անհատական ու անձնական ձեռներեցությունը: Նման դասակարգման դեպքում մենք տեսնում ենք, որ խորհրդարանական

կուսակցություններից ՀԺԿ դասվում է աջակողմյանին, իսկ սոց.-դեմոկրատները և էսեռները՝ ձախակողմյանին:

Ինչ վերաբերում է ՀՅԴ-ը, ապա իր սոցիալիստական ծրագրային պահանջներով նա մոտենում ու մնանվում էր ձախակողմյանին, բայց գործնական քաղաքականության բնագավառում՝ պաշտպանում էր սեփականության ձևերի բազմազանությունը և տնտեսավարման ազատությունը: Այդ իսկ պատճառով, հաշվի առնելով ՀՅԴ բռնած միջանկյալ դիրքը, նրան դասել ենք «կենտրոն» ուղղությամբ:

Խորհրդանշական է, որ վերը նշված երեք հիմնական քաղաքական ուժերը խորհրդարանի դահլիճը ևս զբաղեցնում էին համապատասխան դասավորությամբ՝ աջ կողմում ՀԺԿ խմբակցությունն էր, կենտրոնում՝ ՀՅԴ, իսկ ձախ կողմում՝ էսեռ ու սոցիալ-դեմոկրատների խմբակցությունները:

Վերոգրյալ այս չորս խմբակցություններից երեքը (ՀԺԿ, սոց.-դեմ. և էսեռ) ի սկզբանե զբաղեցին ընդդիմադիր դիրք: Ընդդիմությունը կանգնած էր «աջ» և «ձախ» թևերում և բավականին դժվար է միանշանակ կերպով տալ դրանց գաղափարախոսության, քաղաքական դավանանքի ու գործելակերպի գնահատականը:

Նրանում ընդգրկված էին՝ սկսած «աջ» հայ դրամատերերի շահերն արտահատող (բուրժուական) ՀԺ կուսակցությունից, վերջացրած՝ ամենաձախ բուլշևիկյան կուսակցության ներկայացուցիչներով: Մենք համակարծիք չենք Ա. Խոնդկարյանի արտահայտած այն մտքին, թե հայ քաղաքական բոլոր կուսակցությունները դարձան «*հայ նորաստեղծ պեղական կյանքի շարժիչ ուժերը*»<sup>1</sup>: Ինչպես հետո կտեսնենք, իրականում «ձախ» կուսակցությունները (էսեռները, որի անդամն էր հենց ինքը՝ Ա. Խոնդկարյանը, և սոց.-դեմոկրատները՝ մենշևիկ ու հատկապես բուլշևիկները) փաստորեն դեմ էին Հայաստանի անկախությանը և կամա թե ակամա խարխուլում էին հայոց պետականության հիմքերը: Իսկ ինչ վերաբերում է «աջ» համարվող ՀԺԿ, ապա սա, լի-նելով իշխանության համար մղվող պայքարում ՀՅԴ գլխավոր մրցակիցը, որպես ընդդիմություն ուներ ոչ այնքան հակաանկախական ու հակապետական բնույթ, որքան՝ հակադաշնակցական:

Եթե դասակարգելու լինենք հայ քաղաքական կուսակցությունները ըստ գաղափարախոսության և ազգային-դասակարգային բովանդակության, ապա բոլոր «ձախ» կուսակցությունները ունեին ընդգծված սոցիալիստական ուղղվածություն և դասակարգային բովանդակություն, իսկ «կենտրոնի» և «աջակողմյանի» մեջ մտնող ազգային կուսակցությունները, չնայած իրենց սոցիալիստական ու ոչ սոցիալիստական, դասակարգային և ապադասակարգային գունավորումներին ու դրսևորումներին, առաջնային էին համարում համազգային խնդիրները:

<sup>1</sup> «Վեն», Փարիզ, 1934, քիվ Ե, էջ 52:

#### ա) «Աջակողմյան»

Խորհրդարանում և նրանից դուրս ամենաաջակողմյան կուսակցությունը ներկայանում էր ՀԺԿ: Նրա բարձրագույն ղեկավար մարմինը՝ ԿԿ-ը գտնվում էր Թիֆլիսում: ԿԿ-ի նախագահն էր Մ. Պապաջանյանը, իսկ փոխնախագահը՝ Ս. Հարությունյանը<sup>2</sup>: Այս կուսակցությունը համարվում էր «աջերի» գաղափարակիրը: Սա ուներ ընդգծված հակասոցիալիստական ուղղվածություն: Ժողովրդականների «աջ» դիրքավորումը դրսևորվել է հատկապես գաղափարական, երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության հարցերում: Այսպես՝ 1917 թ., սեպտեմբերին ընդունած իր առաջին ծրագրում, ՀԺԿ-ը լիովին պաշտպանում էր ռուսական Ժողովրդական ազատություն (կադետական) կուսակցության ծրագրի հիմնական կետերը՝ կապիտալի, մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների հաստատման մասին<sup>3</sup>: Իսկ օրինակ, Հայկական հարցում, պետք է ասել, որ սրանք, համեմատաբար խիստ չափավոր Հայ սահմանադրական ռամկավարների առաջադրած ծովից ծով Հայաստանի պահանջին, Դաշնակցությունից ավելի «ձախ» ու ծայրահեղ պահանջներ էին դնում ու պաշտպանում: Այդուհանդերձ, Ժողովրդականների խորհրդարանական գործունեությունը պետք է գնահատել որպես պատասխանատու և կառուցողական:

Հարկ է նշել, որ Ժողովրդական կուսակցության երկու՝ թիֆլիսյան և երևանյան հատվածների միջև կար տեսակետների ու մոտեցումների որոշ տարբերություն: Ժողովրդականների հայաստանյան հատվածը ավելի չափավոր էր ու շրջահայաց, որովհետև ավելի մոտիկից էր ծանոթ (իրագրել) Հայաստանի պայմաններին, քան թիֆլիսյան պարագլուխները: 1918 թ. օգոստոսի 14-ից Երևանում սկսեց լույս տեսնել ՀԺԿ Երևանի կոմիտեի օրգան «Ժողովուրդ» լրագիրը: Երևանում, Հայաստանի խորհրդարանի աշխատանքներին մասնակցելու հետ կապված, ՀԺԿ Երևանի վարչությունը հուլիսի 29-ի նիստում կատարեց լրացուցիչ ընտրություն: ՀԺԿ Թիֆլիսի կենտրոնական խորհրդի կողմից Երևան ժամանած Ստեփան Մալխասյանը, Արշալույս Մխիթարյանը և Երվանդ Հարությունյանը մտան ՀԺԿ Երևանի վարչության մեջ<sup>4</sup>: Արդեն 1918 թ. աշնանից ՀԺԿ տեղական կազմակերպություններ հիմնվեցին Ալաբարանի, Փամբակի, Համամուլի, Լոռիի, Դիլիջանի, Քարվաճառայի, Ն. Բայազետի, Ծաղկաձորի և այլ շրջաններում<sup>5</sup>:

1918 թ. ամռանը ՀԺԿ օրգան «Մշակի» խմբագիր Համբարձում Առաքելյանի սպանությունից հետո թերթի վերաբերմունքը փոքր-ինչ մեղմացավ ՀՅԴ - հանդեպ: 1918 թ. սեպտեմբերի 1-ից Թիֆլիսում սկսեց լույս տեսնել ՀԺԿ ԿԿ-ի նոր օրգան «Ժողովրդի ձայն» թերթը: Շուտով «Մշակի» և ՀԺԿ միջև առաջա-

<sup>2</sup> «Ժողովուրդ», 1 դեկտեմբերի, 1918 թ.:

<sup>3</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 292, ց. 1, գ. 5, թ. 1, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի քննադարան (ԳԱԹ), Դ. Անանունի ֆոնդ, գ. 78, թ. 1:

<sup>4</sup> «Ժողովուրդ», 14 օգոստոսի 1918 թ.:

<sup>5</sup> «Ժողովրդի ձայն», 8 դեկտեմբերի 1918 թ.:

ցավ սառնություն և որոշ հակասություն: «Մշակի» երիտասարդ խմբագիրները համոզեա բերեցին սոցիալիստամետ հակումներ: Ամբարյացականությունը գաղափարակից այդ երկու թերթերի միջև հասավ այն աստիճանի, որ «Մշակի» ղեկավարների 21-ի համարում նյութ տպագրվեց այն մասին, որ «իբր հայ-վրացական կոնֆլիկտի պատճառը Հայ ժողովրդական կուսակցությունն է»<sup>6</sup>:

Այս ամենից զատ՝ հարկ է նշել, որ ՀԺԿ թիֆլիսյան և երևանյան հատվածների վերաբերմունքը Հայաստանի իշխանությունների նկատմամբ տարբեր էր: Եթե ՀԺԿ հիմնադիր օրգան «Մշակը» դժգոհ էր վարչապետ Քաջագնունուց, ապա այդ նույն կուսակցության Երևանի օրգան «Ժողովուրդը» իր վստահությունն էր հայտնում նույն Քաջագնունուն<sup>7</sup>: ՀԺԿ կուսակցության թիֆլիսյան և երևանյան հատվածների միջև եղած տեսակետների ու մոտեցումների որոշ տարբերությունը, անշուշտ, իր դրոշմն էր բոլորում «աջ» խմբակցության գործունեության վրա:

Նկատի ունենալով այն համագամանքը, որ ՀԺԿ գերագույն մարմնի Թիֆլիսում գտնվելը դժվարացնում էր կուսակցական կյանքի ղեկավարումը բուն Հայաստանում, ուր վերջին մեկ տարում ծավալվում էին գլխավոր իրադարձությունները, բավականին ուշացումով՝ 1919 թ. հունիսին, ՀԺԿ ԿԿ-ր որոշեց՝ պետական կյանքի վերաբերյալ իր բոլոր իրավունքները և լիազորությունները հանձնել ՀԺԿ Հայաստանի կոմիտեին<sup>8</sup>: ՀԺԿ Հայաստանի կոմիտեի մեջ մտան ԿԿ-ի ութ անդամներ, Երևանի կոմիտեից՝ վեցը, մեկական ներկայացուցիչներ Ալեքսանդրապոլից, Նոր Բայազետից, Կարսից և ուսանող երիտասարդության երկու ներկայացուցիչ<sup>9</sup>: Դրանից հետո ՀԺԿ ծանրության կենտրոնը փոխադրվեց Երևան, որտեղ էլ նույն թվականի սեպտեմբերին գումարվեց կուսակցության 2-րդ (Բ) համագումարը:

ՀԺԿ գաղափարական պլատֆորմի հիմքում դրված էր հայկական մշակույթի և պետականության պահպանման ու զարգացման գաղափարը: Հայկական պետականությունը նրանք համարում էին միջոց հայկական մշակույթի ուրույն զարգացման համար:

Ի տարբերություն ծախակողմյան կուսակցությունների՝ ՀԺԿ հայ ժողովրդի և Հայաստանի քաղաքական կողմնորոշման հարցում եղել է ավելի ազատ:

Նրանք միակողմանիորեն չէին ջատագովում ռուսական կողմնորոշումը, թեև իրենք զուտ ռուսահայ կուսակցություն էին: «Եթե հայ ժողովրդի փրկությունը, կարգում ենք «Ժողովուրդ» թերթում, պահանջե ընդունել մի այնպիսի օրինակագիտ, որը կհակասի նույնիսկ ներկա պայմաններում Ռուսաստանի շահերին, ՀԺ կուսակցությունը դա կանի առանց վարանման»<sup>10</sup>:

<sup>6</sup> «Ժողովրդի ձայն», 22 դեկտեմբերի 1918 թ., «Մշակ», 21 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>7</sup> «Հորիզոն», 23 օգոստոսի 1918 թ.:

<sup>8</sup> «Ժողովուրդ», 18 հունիսի 1919 թ.:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Նույն տեղում, 29 օգոստոսի 1918 թ.:

«Մեզ համար, կարդում ենք նույն թերթի մեկ այլ խմբագրականում, այս կամ այն օրինակագիտ միայն միջոց է հայ ժողովրդի իդեալները իրականացնելու գործում, և մի որևէ ուրիշ երկիր կամ ժողովուրդ չի կարող լինել մեզ համար իդեալ»<sup>11</sup>: Ժողովրդականները հանգում էին այն հետևությանը, որ Հայաստանը և հայ ժողովուրդը պետք է ունենան միայն մի՝ հայկական կողմնորոշում:

Ինչպես տեսնում ենք, քաղաքական կողմնորոշման խնդրում էլ Հայ ժողովրդականները այնքան էլ կառչած չէին կաղեցներին ու Ռուսաստանին:

Ժողովրդականների ազգային նկարագիրը երևում է նաև հայ-վրացական սահմանային ընդհարման կապակցությամբ նրանց դրսևորած հետևողականությամբ՝ հայկական Լոռու շրջանը և Ախալքալաքը Հայաստանին վերամիավորելու հարցում<sup>12</sup>:

Տալով «աջակողմյան» ժողովրդական (ռամկավար) կուսակցության ընդհանուր գնահատականը՝ կարելի է ասել, որ նա, լինելով ազգային տիպի կուսակցություն, ընդունում էր ազգային շահերի գերակայությունը դասակարգային նկատմամբ: Հանդես էր գալիս ազգային դիմագծի և նրա օրինական շահերի ու պատմաքաղաքական իրավունքների պաշտպանությամբ՝ միաժամանակ հարգելով մյուս ժողովուրդների իրավունքներն ու շահերը:

#### բ) «Կենտրոն»

ՀՀԴ, որը ներկայացնում էր «Կենտրոնը», ՀՀ գոյության ամբողջ ընթացքում մնաց որպես կառավարող կուսակցություն: «Կենտրոն» խմբակցությունը՝ հանձին ՀՀԴ, կանգնած էր ազգային-պետական տեսակետի վրա: Կուսակցության նշանաբանն էր՝ սկզբում (մինչև 1918 թ. վերջը) անկախ պետականության գաղափարի իրացումը, իսկ 1919 թ. սկզբներից Միացյալ և Անկախ Հայաստանի կայացումը: Նա արտահայտում էր ժողովրդական զանգվածների մեծամասնության հայացքները և մտայնությունները: «Հ. Յ. Դաշնակցությունը, գրում է Հ. Քաջագնունին, իմ խորին համոզումով, միշտ եղել է ու միշտ մնացել գիտակցորեն թե անգիտակցորեն հայ քաղաքական ազատագրման մարտիկը, իսկ այդ ազատագրման վերջին կայանը-անկախ պետությունն է»<sup>13</sup>:

Հարկ է նշել, որ մինչև 1918 թ. Հայաստանի անկախության հռչակումը, այս կուսակցության համար ավելի մեծ կարևորություն է ունեցել ազգապահպանության խնդիրը: Ըստ Ռ. Տեր-Մինասյանի գնահատումների՝ դաշնակցության ծրագրերում և գործունեության մեջ առաջնային պլանում եղել են նախ հայության և հայրենիքի պաշտպանության, ապա՝ անկախության և պետականության հիմնախնդիրները<sup>14</sup>: Այս կուսակցությունն էր անկախության գաղափարի ամենահետևողական պաշտպանը և մարմնավորողը:

<sup>11</sup> «Ժողովուրդ», 15 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>12</sup> Նույն տեղում, 13 հոկտեմբերի 1918 թ.:

<sup>13</sup> Հ. Քաջագնունի, Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, էջ 45:

<sup>14</sup> Ռուբեն, Հ. Յ. Դաշնակցություն կազմակերպությունը, Աթենք, 1935, էջ 17:

Թեև ՀՅԴ-ն նրա «Կենտրոն» խմբակցությունը իր քաղաքական նպատակադրումներով մոտ էր «աջակողմյան» ՀԺԿ խմբակցությանը, որի համար էլ սրանք դասվում են ազգային տիպի կուսակցությունների թվին, սակայն իր շարքերի սոցիալական կազմի, սոցիալ-տնտեսական մի շարք պահանջների խնդրում նա զանազանվում էր բուրժուական որակվող «աջակողմյան» խմբակցությունից և կարծես մոտենում էր «ձախակողմյան» զուտ սոցիալ-դեմոկրատական ու սոցիալիստական խմբակցություններին: Իրոք, խորհրդարանի պրակտիկ գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքական, ազգային-պետական խնդիրներ լուծելիս «Կենտրոնը» գործակցում էր «աջերի» հետ, իսկ սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրների ժամանակ նա հիշելով իր սոցիալիստական ծրագիրն ու կոչումը, երբեմն հակվում էր դեպի «ձախ» քեր և նպաստում կիսասոցիալիստական ձեռնարկների իրագործմանը: Օրինակ, փորձ արվեց իրագործել հողի սոցիալիզացիայի գաղափարը, երկրում անցկացվեցին ռազմակոմունիստական բնույթի բռնագրավումներ, առևտրի պետական մենաշնորհ և այլն: Բայց այս ամենով հանդերձ՝ բոլոր վճռական պահերին ՀՅԴ-ն նրա խմբակցությունը նախընտրում էին մերժեմալ ու դաշնակցել ազգային նկարագիր ու նպատակներ հետապնդող «աջակողմյան» քեի հետ:

ՀՅԴ-ն նրա խմբակցության գործունեությունը բնութագրելիս ու գնահատելիս ամենից առաջ պետք է նկատի ունենալ, որ այս կուսակցության սոցիալական բազան բավականին լայն էր ու բազմաշերտ, որն էլ պատմական գրականության մեջ տեղիք է տվել տեսակետների ու մոտեցումների տարակարծությունների ու տարրերեցումների: Մասնավորապես տարակարծություններ են ծագել ՀՅ Դաշնակցության սոցիալական կազմի և դասակարգային էության շուրջ:

Խորհրդային պատմաքաղաքական գրականության մեջ, սոցիալ-դասակարգային կազմի ու բովանդակության տեսակետից, Դաշնակցությունը բնութագրվել է որպես բուրժուական, նույնիսկ խոշոր բուրժուական կուսակցություն: Սակայն սկսած 1920-ական թվականների սկզբներից՝ նոր ձևավորվող խորհրդահայ պատմագրության մեջ առաջինը՝ կուսակցական և պետական ակամավոր գործիչ Ա. Հովհաննիսյանը, հերքեց սոցիալ-դասակարգային իմաստով Դաշնակցությանը խոշոր բուրժուական կուսակցություն համարելը<sup>15</sup>: Նա այն եզակի ու հետևողական պատմաբան-հեղինակներից մեկն է, որ դասակարգային բովանդակության տեսակետից ի սկզբանե Դաշնակցությանը բնորոշեց որպես **մանրբուրժուական**, գյուղացիական կուսակցություն և այդպես էլ գրեթե մինչև վերջ (չնայած առանձին կոնյունկտուրային խտությունների) պաշտպանեց այդ տեսակետը: Ավելի ուշ նրա այս տեսակետը պաշտպանեց ու ավելի հիմնավորեց ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը<sup>16</sup>: Դաշ-

նակցություն կուսակցությանը մանրբուրժուական կուսակցությունների թվին են դասել նաև Ա. Համբարյանը, Ռ. Հովհաննիսյանը և ուրիշներ<sup>17</sup>:

Իրականում ՀՅԴ-ն սոցիալ-դասակարգային կազմի տեսակետից միատարր չէր: Նրանում ընդգրկված էին հասարակական բոլոր շերտերն ու խավերը: «Հայ ժողովրդի ազատագրության գաղափարը,» նշում էր ՀՅԴ հիմնադիրներից Լ. Սարգսյանը իր հուշերում, «իր շուրջ միացրել էր շատ տարբեր-տարբեր. բանվորից սկսած մինչև ինտելիգենտ»<sup>18</sup>: ՀՅԴ-ն ազգային լինելը երևում է թե՛ իր շարքերի սոցիալական կազմի խախտաբեկությունից ու ստվարությունից և թե՛ իր որդեգրած նպատակներից: Դաշնակցության ծրագրի ազգային-քաղաքական պահանջները հոգեհարազատ էին թե՛ հայ մտավորականին, թե՛ հայ առևտրաարդյունաբերողին, թե՛ հայ գեղջուկին (գյուղացուն) ու արհեստավորին և թե՛ վերջապես հայ սեփականագուրկ գործավորին (բանվորին): «Հայ Յեղ. Դաշնակցությունը,» կարդում ենք «Արև» թերթում, «մի կոնգլոմերատ է, այլատարր մի կուսակցություն. նրա մեջ նստած են բուրժուական տարրերից սկսած մինչև բանվորը, միլիոնատերից մինչև գյուղացին»<sup>19</sup>: Դաշնակցության շարքերի խախտաբեկությունը փաստում են ամբողջ ամենահետևողական հայ հեղափոխական մարքսիստները: Ըստ Ս. Սպանդարյանի՝ Դաշնակցությունը իրենից ներկայացնում էր «մի անասելի խառնուրդ բուրժուաների և բանվորների, գյուղացիների ու ճորտերի և կալվածատերերի»<sup>20</sup>:

Որպեսզի ամբողջական պատկերացում կազմենք ՀՅԴ թվաքանակի ու ազդեցության մասին, բերենք 1907 թ. կազմված արխիվային մի վավերագրից տվյալներ: 1907 թ. սկզբներին միայն Անդրկովկասում Դաշնակցությունը իր ազդեցության տակ է ունեցել 110 տարբեր տիպի արհմիություններ<sup>21</sup>: Այդ նույն ժամանակ կուսակցության շարքերում կային 23300 բանվոր անդամներ<sup>22</sup>: Դաշնակցության ազդեցությունը շատ ավելի մեծ էր գյուղացիության շրջանում: Պատահական չէ, որ 1916 թ. Ստ. Շահումյանը գրում էր, որ հայ գյուղացիությունը համարյա ամբողջովին գտնվում է Դաշնակցության ազդեցության տակ<sup>23</sup>: ՀՅԴ-ն ընդունած հողի սոցիալիզացիայի գաղափարը, որը վերցվել էր ռուսական էսէռների կուսակցության ծրագրից, և որը շատ հոգեհարազատ էր նաև հայ գյուղացու սրտին ու ձգտումներին, պարարտ հող էր ստեղծում Դաշնակցության ազդեցության աճի համար: 1907 թ. սկզբներին

<sup>17</sup> Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում, Երևան, 1965, էջ 267, Ռ. Փ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 9:

<sup>18</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 9, ք. 177:

<sup>19</sup> «Արև», 7 հունիսի 1918 թ.:

<sup>20</sup> Ս. Սպանդարյան, Երկեր, Հ. 1, Ե. 1959, էջ 48:

<sup>21</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 237, ք. 54:

<sup>22</sup> Նույն տեղում, ք. 53:

<sup>23</sup> Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, Ե., 1978, էջ 50:

<sup>15</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 199, ք. 25-31:

<sup>16</sup> «Լրաբեր» հաս. գիտ. ՀԽՍՀ ԳԱ, 1988, թիվ 7 (հուլիս), էջ 12-31:

Դաշնակցության շարքերում հաշվվում էին 67000 գյուղացի անդամներ<sup>24</sup>։ Եթե հաշվի առնենք, որ Հայաստանի հայ ազգաբնակչության 80-90 տոկոսը կազմում էին գյուղացիական զանգվածները (գյուղացիությունը), ապա պարզ կդառնա, թե ՀՅԴ ինչ կշիռ ու ազդեցություն ուներ գյուղացիության շրջանում։ Ըստ ամենայնի այս պարագան նկատի ունենին Ա. Հովհաննիսյանը, Լ. Խորշոդյանը և մյուսները, որ Դաշնակցությանը բնութագրում էին որպես մանր բուրժուական կուսակցություն։

Այս ամենը հիմք է տալիս ասելու, որ ՀՅԴ-ն բուրժուական կուսակցություն չէր։ Եթե, իրոք, ՀՅԴ սոցիալական հեմարանը հայ բուրժուազիան էր, ապա ինչպես էր, որ այդ մեծաքսակ կապիտալի ներկայացուցիչները չէին ֆինանսավորում իրենց «հոգեհարազատ» կուսակցությանը։ Ավելին՝ պատմությունից մենք գիտենք, որ Դաշնակցությունը իր առաքելության իրագործման ճանապարհին դրան հայթայթելու նպատակով ստիպված դիմում էր այդ նույն կապիտալիստների նկատմամբ հարկադրանքի ու ահաբեկչության<sup>25</sup>։ Հայ բուրժուազիան ոչ միայն գաղափարական, այլև նյութական օգնություն ցույց չի տվել Դաշնակցությանը։ Այդ էր պատճառը, որ նա դրան կորզելու նպատակով դիմում էր հարկադիր բռնագանձումների, որը հայտնի է «Փոքորիկ» անունով։ Բացի այդ Դաշնակցության սկզբնավորման առաջին տարիների պատմությանը քաջ ծանոթ ուսումնասիրողները գիտեն, որ, իրոք, եթե Դաշնակցությունը բուրժուական կուսակցություն եղած լիներ, ապա նրա հիմնադրմանը մասնակից հայ բուրժուազիայի երկու ճանաչված ներկայացուցիչները (Կ. Խատիսյանը և Լ. Սարգսյանը), դեռ մեկ-երկու տարի չանցած, չէին հեռանա նրանից։ Իսկ այն բանից հետո, երբ 1907 թ. կուսակցությունը իր ծրագրում ընդունեց նաև սոցիալիզմի գաղափարները, ապա դրանից հետո առավել ևս չի կարող խոսք լինել Դաշնակցության բուրժուական լինելու բովանդակության մասին։ Բայց սրա կողքին պետք է ընդունել այն իրողությունը, որ Դաշնակցության ծրագրում սոցիալիստական համադրությոնները այնպես էին

ձևակերպված, որ, ասենք, հայ առևտրաարդյունաբերական բուրժուազիան չիրտներ նրանից։

ՀՅԴ բուրժուական կուսակցություն որակելը մեղմ ասած նշանակում էր՝ խեղաթյուրել իրականությունը և մեղանչել պատմական ճշմարտության առաջ։ Շահունյանի, Սպանդարյանի և մյուսների կողմից Դաշնակցությանը նման պիտակավորում արվել է հավանաբար այն միտումով, որպեսզի հայ բանվորին ու աշխատավորությանը խրտենցեն ու հեռու պահեն այդ կուսակցությունից, խարխլեն նրա հիմքերը։ Հայ բուրժուազիան և ունևոր վերնախավը չէր կարող Դաշնակցությանը դիտել որպես իր հարազատ զավակի նաև այն պարզ պատճառով, որովհետև այս կուսակցությունն իր ծրագրերում որդեգրել էր սոցիալիստական գաղափարներ, կազմակերպում էր բանվորական գործադուլներ, հիմնում էր արհմիություններ, առաջադրում էր տնտեսական պահանջներ, պաշտպանում էր հողի սոցիալիզացիայի պահանջը և այլն<sup>26</sup>։ Հասկանալի է, որ նման ծրագրային պահանջները և գործելակերպը հայ բուրժուազիային ավելի էր հեռացնում Դաշնակցությունից և դարձնում նույնիսկ դասակարգային հակառակորդ։

Այսպիսով, վերը բերած փաստարկները մեզ բերում են այն հետևություն, որ ՀՅԴ ոչ բուրժուական էր, ոչ էլ՝ մանրբուրժուական, այլ ըստ իր սոցիալական կազմի, գաղափարախոսության ու հետապնդած նպատակների՝ ապադասակարգային, ազգային կուսակցություն էր։ Ապադասակարգային ասելով նկատի ունենք այն, որ ՀՅԴ շարքերը կարող էին մտնել հայ ազգին պատկանող բոլոր չափափաս անձինք՝ անկախ սեռի, դավանանքի ու դասակարգային պատկանելության։

Արդ, երբ Դաշնակցությունը դարձել էր հիմնական կառավարող կուսակցություն, իսկ խորհրդարանում նրա «Կենտրոն» խմբակցությունը կազմում էր հարաբերական մեծամասնություն, բնականաբար, սոցիալական նման լայն հեմարանի ու աջակցության պայմաններում այս կուսակցությունը պետք է լիներ հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքին հիմնական տոն տվողը։

#### գ) «Չախակողմյան»

Ինչպես ասվեց, խորհրդարանի ժախակողմյան կուսակցություններն էին Էսեռները և սոցիալ-դեմոկրատները (մենչևիկ և բուլչևիկ)։ Խորհրդարանում սրանց խմբակցությունների հիմնական գործելակերպը հարցապնդումներն էին<sup>27</sup>։ Խորհրդարանական քննարկումների ժամանակ ժախակողմյան խմբակցություններին ամենից ավելի հետաքրքրում ու մտահոգում էին (համեմայն դեպս, այդպես էին իրենց ցույց տալիս) Հայաստանի աշխատավորության և գաղթականության վիճակը, բնակչության պարենավորումը, կրթամշակութային հարցերը և այլն։ Չախակողմյան կուսակցությունների համար խորթ

<sup>24</sup> ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 237, ք. 55։ Ծանոթացման կարգով տեղեկացնենք, որ 1907 թ. Շուտուգարդի միջազգային սոցիալիստական կոնգրեսին ներկայացված հաշվետվությանը ընդհանուր հաշվով Դաշնակցության շարքերում հաշվառման կանգնած անդամների թիվը կազմել է մոտ 165 հազար մարդ (չենք բացառում, որ այս և նախորդ տվյալները որոշ չափով ուռճացված լինեն), որոնք ստորաբաժանված են եղել հետևյալ թվով քաղաքական, պրոֆեսիոնալ ու մարտական խմբերում։ Անդրկովկասում՝ 1951 խումբ, Թուրքիայում՝ 693, Հյուսիսային Կովկասում ու Ռուսաստանում՝ 260, Իրանում՝ 90, Բալկաններում՝ 48 և Ամերիկայում՝ 51 խումբ (ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 237, ք. 58)։ Համեմատության համար ասենք, որ ՌՍԴԲԿ միավորումից հետո այդ նույն 1907 թ. գարնանը (մայիսին) Լոնդոնում գումարված նրա 5-րդ համագումարը ներկայացնում էր ընդամենը 145 կուսակազմակերպությունների 150 հազար անդամ (Տես՝ «История КПСС, 8 месяцев работы», т. 2, М., 1966, с. 215)։ Եվ սա այն դեպքում, երբ այդ ժամանակ ՌՍԴԲԿ մեջ էին միավորված նրա երկու քեները՝ մենչևիկները և բուլչևիկները, սոցիալ-դեմոկրատական ազգային կազմակերպությունները և այլ թվում հայ «սպեցիֆիկները»։

<sup>25</sup> Մ. Վարանդյան, Հ.Յ. Դաշնակցության պատմություն, հ. 1, Փարիզ, 1932, էջ 328։

<sup>26</sup> ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 237, ք. 53։

<sup>27</sup> «Հորիզոն», 23 օգոստոսի 1918 թ.։

էին՝ Հայաստան, հայրենիք, սահման, ազատություն, անկախություն, պետականություն, ազգային մշակույթ, ազգային բանակ և համանման այլ հասկացությունները:

Ձախակողմյան կուսակցությունների ամենաբնորոշ գծերն էին հակաանկախական քաղաքական դիրքորոշումը և ընդգծված սոցիալիստական միավորությունը: Այս խումբ կուսակցությունների հակաանկախական դիրքորոշումը այնքան ուժեղ է դրսևորվել, որ հայ հասարակական-քաղաքական առանձին գործիչներ այդ հիման վրա նույնիսկ նպատակահարմար չեն գտել դրանց լիարժեք կուսակցություն անվանել: «Եթե կա մի կուսակցություն, գրում է հնչակյան գործիչ Սապահ-Գուլյանը, մի խմբակցություն, հոսանք հայ կյանքի մեջ, որ հայ պետության կատարյալ անկախության թեզը չի պաշտպանել, հայ պետության ամրապնդմանը, ուռճացմանը չի ձգտել, որպես կուսակցական հավատամք, կրեդո, ապա նա հայ հասարակական, ազգային, պետական գործերի մեջ միջամտվելու, դրանց անունից խոսելու և ոչ մի բարոյական, իրավական իրավունք ունի, նա կուսակցություն չէ այլևս, այլ բառի գիտական, հասարակական նշանակությամբ»<sup>28</sup>: Ազգային կուսակցության այս գործիչը հայ անկախ պետականության գաղափարն էր համարում հայ քաղաքական բոլոր կուսակցություններին իրար միացնող, շղթայող գլխավոր օղակը<sup>29</sup>: Ձախակողմյան կուսակցությունների սոցիալ-դասակարգային իմաստով տարբերակիչ գծերից մեկը, թերևս, այն էր, որ եթե սոցիալ-դեմոկրատները համոզե էին պալիս առաջին հերթին բանվոր դասակարգի (պրոլետարիատի) շահերի պաշտպանության դիրքերից, ապա սոցիալիստ հեղափոխականները՝ ամբողջ աշխատավորության և առաջին հերթին գյուղացիության անունից:

Ձախակողմյան կուսակցությունները իրենց ծրագրերով, հետապնդած քաղաքական նպատակներով ու գործելակերպով հայ իրականությունից, ազգային արմատներից ու ավանդներից հեռու, գրեթե առանց որևէ իրական սոցիալական հենարանի, խորհրդարանում ստացել էին 6-ական պատգամավորական տեղ և ծայրահեղ ձախ հեղափոխական ֆրակցիայի դիրքերից հոխորտում էին հայ ժողովրդին հոգևարքից նոր դուրս բերող և երկրի վերքերը նոր-նոր բուժող Հայաստանի կառավարությանը:

Ձախակողմյան կուսակցությունները կոչված էին արտահայտելու սոցիալ-տնտեսապես ու իրավապես հարստահարվող ու սեփականագուրկ զանգվածների շահերն ու պահանջները: Այդ իսկ պատճառով սրանց մշակած ռազմավարությունը և գործելակերպը անգուսպ էր ու ծայրահեղական: Բայց դժվար չէ տեսնել, որ բուն Հայաստանում սեփականագուրկ պրոլետարական (բանվորական) դասակարգի բացակայության պատճառով<sup>30</sup> այնտեղ ձախա-

կողմյան կուսակցությունների առաջացման ու գործունեության համար չկար բավարար սոցիալական հող ու հենարան:

Ի տարբերություն ՀՅԴ-ի՝ Էսեռների և սոց.-դեմոկրատների սոցիալական հողը Հայաստանում շատ խախտու էր, քանզի սրանց գաղափարախոսությունները չէին բխում հայ իրականությունից, օտարածին էին: Նրանք Հայաստանում իբրև հոսանք, կուսակցություն՝ չունեին բավականաչափ կշիռ ու հենարան: Այսպես, օրինակ, հայ Էսեռները ավելի շատ հակված էին պաշտպանել Անդրկովկասի ռուս զինվորականության ու ազգաբնակչության, քան հայ ժողովրդի ազգային-քաղաքական շահերը: Էսեռական հայտնի գործիչ Ա. Խոնդկարյանի խոստովանությամբ իրենց կազմակերպությունը «երբեք էլ տեղական խոշոր զանգվածներ չունեցավ իր հետ»<sup>31</sup>: Ավելին՝ Ա. Մոավյանը հայտնում է, որ Էսեռները «չունեին և ոչ մի ազդեցություն հասարակական-քաղաքական կյանքում»<sup>32</sup>:

Այս կապակցությամբ ոմանք կարող են առարկել, թե ինչպես կարող է պատահել, որ զուտ գյուղացիական կուսակցություն համարվող սոցիալիստ-հեղափոխականների կազմակերպությունը գերազանցապես գյուղացիական երկիր Հայաստանում չունենար բավականաչափ սոցիալական հենարան: Այստեղ խնդիրն այն է, որ Էսեռականության ազդարարին ծրագրերն ու պահանջներն արդեն ռուսական առաջին հեղափոխության ժամանակներից որդեգրել էր ՀՅ Դաշնակցությունը, ուստի այդ կտրվածքով ևս հայ Էսեռները դառնում էին ավելորդություն՝ կրկնելով ՀՅԴ-ին:

Պետք է ասել, որ հայ Էսեռների կազմակերպությունն իր աշխարհայացքով ու մարտավարությամբ հարում էր համառուսական Էսեռականության կենտրոնամետ ուղղությանը, որը գլխավորում էր Վ. Չեռնովը: Հայ Էսեռները առանձնապես համակրանք չեն ունեցել «ձախ» Էսեռների հանդեպ: Այսպես, օրինակ, «ձախ» Էսեռների 1918 թ. հուլիսյան հայտնի խռովության կապակցությամբ հայ Էսեռները ցուցաբերել են բացասական վերաբերմունք. իրենց օրգան «Աշխատանքի դրոշակը» հայտարարում էր, որ «ապստամբության ճնշումը մեզ համար ոչ մի առանձին նշանակություն չի ներկայացնում»<sup>33</sup>: Ի դեպ, «ձախ» Էսեռներին չի համակրել նաև սոց-հեղ. կուսակցության Բաքվի կոմիտեն<sup>34</sup>: Էսեռների անդրկովկասյան կազմակերպությունները հիմնականում հակառակորդ են եղել «ձախ» Էսեռներին:

ցուցիչները՝ Ա. Մելիքյանը (Տես «Խոսք», 26 հոկտեմբերի 1918 թ.), Ը. Ամիրխանյանը՝ (Տես՝ Ը. Ամիրխանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ. Մոսկվա, 1926, էջ 75), Ա. Հովհաննիսյանը՝ (Ա. Գ. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Ե, 1923, էջ 9), Բ. Բորյանը՝ (Տես՝ Բ. Բ. Բորյան, նշվ. աշխ., մաս 2-րդ, Մ.- Լ., 1929, էջ 91) և ուրիշներ:

<sup>31</sup> «Վեմ», Փարիզ, 1933, թիվ Ա, էջ 76:

<sup>32</sup> Ա. Մոավյան, Հորվածներ և ճառեր, էջ 129:

<sup>33</sup> «Աշխատանքի դրոշակ», 12 հուլիսի 1918 թ.:

<sup>34</sup> Знамя труда, 5 января, 1918.

<sup>28</sup> «Երիտասարդ Հայաստան», 15 սեպտեմբերի 1920 թ.:

<sup>29</sup> Նույն տեղում:

<sup>30</sup> Որ ՀՀ-ում բանվոր դասակարգ, ըստ էության, բացակայում էր, խոստովանում էին հենց իրենք՝ ձախակողմյան բևի ամենածայրահեղ կուսակցության՝ բոլշևիկ-ներկայա-



Ե՛վ Էստոնները, և՛ սոցիալ-դեմոկրատները համոզես էին գալիս ռուսական համապետականության պաշտպանության կարգախոսներով<sup>35</sup>։ Սրանք անգամ իրենց կուսակցական համապատասխան լիազոր մարմինները չունեին ՀՀ տարածքում և նրանց խորհրդարանական խմբակցությունները սկզբնական փուլում ուղղություն ու ցուցումներ էին ստանում Թիֆլիսում գտնվող Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական շրջանային և Էստոնական կենտրոնական ղեկավար մարմինների կողմից։ Դրա համար էլ, օրինակ, հայ սոցիալ-դեմոկրատների վրա զգալի էր վրաց սոց.-դեմ. ազդեցությունը։ Բնավ պատահական չէր այն, որ Հայաստանի խորհրդարանի սոց.-դեմ. մենչևիկ պատգամավորների կուսակցական մանդատների տակ դրված էր Վրաստանի ներքին գործոց նախարար Նոյ Ռամիշվիլու ստորագրությունը<sup>36</sup>։

Հայ սոցիալ-դեմոկրատները, որոնք հիմնականում հայ մենչևիկներն էին, հանդիսացել են ընդամենը վրաց մենչևիկների ձայնավողն ու կամակատարը։ Հայ ազգաբնակչության մեջ այն պատկերացումը կար, որ մենչևիկները վրացական կուսակցություն են կամ էլ ռուսական<sup>37</sup>։ «Չեմ հիշում մի դեպք, գրում էր պատգամավոր Ա. Բաբայանը (ՀՅԴ) իր հուշերում, - որ այլ մարդիկ (հայ սոց.-դեմ. - Ա.Հ.) պաշտպան չհանդիսանան վրաց ղեկավար շրջանների անարդար և հայավմաս գործերին»<sup>38</sup>։ Օրինակ, 1918 թ. դեկտեմբերին հայ-վրացական զինաբախման կապակցությամբ հայ մենչևիկ պատգամավորները, պաշտպանելով վրաց կառավարությանը, հայտարարում էին, թե Ախալքալաքը անհրաժեշտ է վրաց ժողովրդին որպես արոտատեղ և ինչպես կարելի է գրկել վրաց դեմոկրատիային այդ գավառից։ Իսկ պատերազմի ընթացքում այդ նույն խմբակցության անդամ Հ. Ազատյանը խորհրդարանի շենքում քաբցնում էր երիտասարդներին, որպեսզի նրանց զինվոր չտանեն<sup>39</sup>։

Հատկանշական է, որ եթե հայ սոց.-դեմ. մենչևիկները համոզես էին գալիս Ախալքալաքը Վրաստանին կցելու անհրաժեշտության օգտին, ապա հայ Էստոնները և շատ բոլշևիկներ, սուլթանովների ու նարիմանովների պես, Արցախն էլ դիտում էին որպես Ադրբեջանի անբաժան մասը։ 1920 թ. մարտին, նույնիսկ Ղարաբաղից հայ բոլշևիկ-Էստոնական պատվիրակություն է մեկնել Բաքու՝ վարչապետ Ռուսոբեկովի մոտ՝ իրենց համաձայնությունը հայտնելու Արցախը Ադրբեջանին միացնելու վերաբերյալ<sup>40</sup>։ Ահա նման հարցերում է երևում այս կամ այն կուսակցության ազգային և ոչ ազգային էությունը։

Հայ մենչևիկները միայն մեկ անգամ փորձ արեցին ներազդելու իրենց կուսակից վրաց մենչևիկյան կառավարության վրա՝ հայ-վրացական սահմանային վեճը խաղաղ ճանապարհով հարթելու նպատակով, բայց ոչ մի արդ-

յունքի չհասան։ Համենայն դեպս՝ հայ մենչևիկների այդ քայլը կարելի է համարել նրանց գործունեության ամենագնահատելի դրսևորումներից մեկը։ 1918 թ. վերջերին հայ-վրացական դիմակայության կապակցությամբ Հայաստանի խորհրդի սոց.-դեմ. խմբակցությունը և Երևանի սոց.-դեմ. կազմակերպությունը սրբափության և ողջախոհության համատեղ կոչ հրապարակեցին ու համապատասխան հեռագիր ուղարկեցին Թիֆլիս՝ ուղղված Անդրկովկասի (վրաց) սոց.-դեմ. կուսակցության մարզային (շրջանային) կոմիտեին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Ա. Չխեիձեին և կառավարության նախագահ Ն. Ժորդանիային՝ միջադեպը խաղաղ միջոցներով կարգավորելու հորդորներով<sup>41</sup>։ Նրանում ասվում էր. «Հայաստանի խորհրդի սոց.- դեմ. ֆրակցիան և Երևանի սոց.- դեմ. կազմակերպությունը նկատի ունենալով, որ սահմանների խնդիրը զենքով լուծելու վճիռը սոսկալի ոճիր է հայ և վրացի ժողովուրդների հանդեպ, որ քայքայելու է իսպառ երկուսին էլ, առաջարկում է ձեզ սպառել բոլոր միջոցները՝ արգելելու համար զինվորական գործողությունները Շահալի-Սանահին շրջանում»<sup>42</sup>։ Բայց այս ու այլ պացիֆիստական բնույթի կոչերը արդյունք չտվեցին։

Բնորոշ է, որ մինչև 1918 թ. նոյեմբերը հայ սոցիալ-դեմոկրատները կազմակերպչորեն չէին առանձնացել Անդրկովկասյան սոց.-դեմոկրատներից և չունեին անգամ իրենց սեփական կուսակցական կենտրոնական մարմինը<sup>43</sup>։ Ստացվում էր, որ հայ սոց.-դեմ. մենչևիկները շարունակում էին կառչած մնալ ու ղեկավարություն ստանալ վրաց սոց.-դեմ. կենտրոնից, իսկ այդ ղեկավարությունը հասկանալի է, իր մեջ հայանպաստ, ազգային շահի հետապնդող որևէ տարր չէր կարող պարունակել<sup>44</sup>։ Նման անհարմարությունից ազատվելու համար 1918 թ. վերջերին (նոյեմ. 21-ին) ՌՍԴԲԿ Անդրկովկասյան շրջանային կոմիտեն ստիպված եղավ ՀՀ սահմաններում մի առանձին ինքնավար Բյուրո հիմնել, որը «հանդիսանալու էր հանրապետության սահմաններում կուսակցության գերագույն մարմինը և որին պետք է դիմել կուսակցական բոլոր գործերով»<sup>45</sup>։ Նոյեմբերի սկզբից (2-ից) Երևանում սկսեց լույս տեսնել ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության «Կայծ» պաշտոնաթերթը։

<sup>41</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց. 1, գ. 5, թ. 1։

<sup>42</sup> «Ժողով», 26 հոկտեմբերի 1918 թ.։

<sup>43</sup> «Վեմ», Փարիզ, 1934, թիվ Է, էջ 45։

<sup>44</sup> Հայ սոց.-դեմոկրատներից բացառության կարգով, թերևս, կարելի էր առանձնացնել Արշակ Չուրաբյանին (Չուրաբով), որը, հավատարիմ մնալով ՌՍԴԲԿ ավանդներին, անխնա քննադատում էր մինչև այդ համառոտական շարժման մեջ եղանակ ստեղծող վրաց մենչևիկ պարագլուխների (ժորդանիաների, ծերեթեփների, չխեիձեների, չխենկելիների) անցած ազգայնականությունը, որ երկվա ինտերնացիոնալիստները մտել էին ազգային պատյան, ու դարձել՝ բացահայտ նացիոնալ-շովինիստներ։ 1919 թ. Ա. Չուրաբյանը փոխադրվեց Երևան եւ 1920 թ. հունվարի սկզբին մահացավ տիֆիզ (տես՝ «Հառաջ», 6 հունվարի 1920 թ.)։

<sup>45</sup> «Կայծ», 21 նոյեմբերի 1918 թ., «Հառաջ», Թիֆլիս, 14 հունվարի 1919 թ.։

<sup>35</sup> «Վեմ», Փարիզ, 1933, թիվ Ա, էջ 67-69։

<sup>36</sup> «Հորիզոն», 10 նոյեմբերի 1918 թ.։

<sup>37</sup> *Буржуазные и мелкобуржуазные партии...*, М., 1980, с. 147.

<sup>38</sup> Ա. Բաբայան, նշվ. աշխ., էջ 7։

<sup>39</sup> Ա. Բաբայան, նշվ. աշխ., էջ 46։

<sup>40</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 52, թ. 52։

Հայ սոց.-դեմոկրատ մենչևիկների կազմակերպական պաշտոնական անջատումը վրաց մենչևիկներից տեղի ունեցավ 1918 թ. նոյեմբերին Անդրկովկասյան սոց.-դեմ. (մենչևիկների) 8-րդ համագումարի (կոնֆերանսի) որոշումով: Համագումարը որոշում կայացրեց Անդրկովկասի սոց.-դեմ. կուսակցությունը բաժանել երեք ինքնուրույն՝ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների<sup>46</sup>: Այդ բաժանումը, անշուշտ, կապված էր Անդրկովկասյան երեք առանձին անկախ հանրապետությունների ստեղծման հետ: Այսպիսով, ինտերնացիոնալիստական որակվող այս կուսակցությունը իր կազմով ու կազմակերպական կառուցվածքով դարձավ ազգային, այսինքն՝ ըստ էության նմանվեց ու նույնացավ հայ «սպեցիֆիկներին»:

Վրաց սոց.-դեմոկրատները կազմեցին առանձին կուսակցություն և նոյեմբերի 26-ին «Էրթոբա» («Միասնություն») լրագիրը, Անդրկովկասյան փոխարեն, սկսեց անվանվել «Վրաստանի սոց.-դեմոկրատական բանվորական կուսակցության ԿԿ-ի օրգան»<sup>47</sup>: Սակայն այդ չէր նշանակում, որ հայ մենչևիկները լիակատար ինքնուրույնություն ստացան: Վրաստանի տարածքում գտնվող հայ մենչևիկները շարունակում էին կախված մնալ վրաց մենչևիկյան կենտրոնից: Նրանք պարզապես հիմնել էին Վրաստանի սոց.-դեմ. բանվորական կուսակցության Հայկական սեկցիա, որի օրգանը դարձավ «Բանվորի ձայն» թերթը: Չմոռանա՞նք տեղեկացնել, որ այդ նույն օրերին Վրաց սոց.-դեմոկրատների առաջին հիմնադիր կոնֆերանսում ընտրված ԿԿ-ի 21 անդամների թվում էին նաև Ա. Երզնկյանը և Ս. Փիրումյանը<sup>48</sup>:

Հենց այս ժամանակ էլ (1918 թ. նոյեմբերին) տեղի ունեցավ նաև Երևանի բոլշևիկների կազմակերպական անջատումը մենչևիկներից<sup>49</sup>: Ճիշտ է՝ մինչ այդ Հայաստանի բոլշևիկյան տեղական կազմակերպությունները ղեկավարվում էին ՌԿ/ԲԿ Կովկասյան Երկրային կոմիտեի կողմից, սակայն Անդրկովկասյան անկախ հանրապետությունների հռչակումից հետո, սահմանային արգելքների ու քաղաքական հալածանքների հետևանքով, անմիջական կապը փաստորեն խզվեց<sup>50</sup>:

1918 թ. նոյեմբերին Երևան կուսակցական աշխատանքի են գալիս ՌԿ/ԲԿ Թիֆլիսի կոմիտեի անդամ Ստ. Ալավերդյանը և մի քանի ուրիշ բոլշևիկներ: Սրանց ջանքերով ու ղեկավարությամբ 1918 թ. նոյեմբերին Երևանի բոլշևիկները վերջնականապես խզվում են մենչևիկներից և ստեղծում ինքնուրույն կուսակցական կազմակերպություն<sup>51</sup>: Ստեղծված Բոլշևիկյան կուսակցական մարմինը իրեն հայտարարում է տեղի կոմունիստական

կազմակերպությունների ղեկավար, իսկ «Խոսք» լեզալ շաբաթաթերթը դառնում նրա օրգանը<sup>52</sup>: Մինչ այդ արդեն 1917 թ. հուլիսին, երկու ինքնուրույն մասերի՝ բոլշևիկյանի և մենչևիկյանի էր բաժանվել Ալեքսանդրապոլի կազմակերպությունը: Բոլշևիկյան կազմակերպության նախագահն էր Պ. Արվելաձեն, իսկ քարտուղարը՝ Բ. Ղարիբջանյանը<sup>53</sup>:

Հարկ է նշել, որ սոց.-դեմ. երկու թևերի՝ մենչևիկների և բոլշևիկների տարաձայնությունների ու հակամարտությունների հիմքում ընկած էին ինչպես ռազմավարական, այնպես էլ մարտավարական բնույթի խնդիրներ: Մենչևիկները ոչ միայն հակառակ էին բոլշևիկների ծայրահեղական գործելակերպին, այլև նրանց պատկերացրած և կառուցվող սոցիալիստական հասարակարգին: «Մեծամասնական սոցիալիստական մեթոդները և գործելակերպը,՝ նշում էր հայ մենչևիկների պաշտոնաթերթը,՝ մենք միշտ գտել ենք միանգամայն սխալ և անհամապատասխան պրոլետարիատի և դեմոկրատիայի շահերին»<sup>54</sup>:

Բավականին ուշացումով էսէռները նույնպես իրենց կուսակցության լիազոր մարմինը՝ Հայաստանի կոմիտեն, հիմնեցին Հայաստանում, որը պետք է ղեկավարեր հայ էսէռների գործունեությունը հանրապետության ողջ տարածքում<sup>55</sup>: Էսէռների կուսակցության Հայաստանի կոմիտեի նախագահ Լ. Թումանյանի տված հաշվետու զեկուցումներից մեկից տեղեկանում ենք, որ իրենց կուսակցության Հայաստանի կոմիտեն կազմվել է 1919 թ. փետրվար ամսին, երբ մի քանի կազմակերպությունների ներկայացուցիչների մի խորհրդակցությունում որոշվում է ժամանակավորապես խորհրդարանի էսէռական խմբակցության վրա դնել Հայաստանի կոմիտեի ֆունկցիաները<sup>56</sup>:

Սոց.-հեղ. կուսակցության Հայաստանի գործունե կազմակերպություններից էր Երևանի կոմիտեն: Սկսած 1919 թ. հունիսից՝ էսէռների կուսակցության հայաստանյան կազմակերպության օրգանն էր «Սոցիալիստ հեղափոխական» շաբաթաթերթը:

1919 թ. սկզբներից գործելով ՀՀ սահմաններում ու հատկապես մասնակցելով խորհրդարանական ընտրարշավին՝ Հայաստանի էսէռները քարոզչության, հայության մեջ նստած ռուսասիրական ձգտումների շահարկման և այլ միջոցներով կարողացան իրենց դիրքերը մի փոքր ամրացնել: Հայաստանի մի քանի շրջաններում (Կարսում, Իջևան-Դիլիջանում, Ալեքսանդրապոլում, Ղարաքիլիսայում, Սուրմալում) հիմնվեցին տեղական նոր կազմակերպություններ<sup>57</sup>:

<sup>46</sup> «Մշակ», 21 նոյեմբերի 1918 թ.:

<sup>47</sup> «Նոր հորիզոն», 28 նոյեմբերի 1918 թ.:

<sup>48</sup> Նույն տեղում, 22 նոյեմբերի 1918 թ.:

<sup>49</sup> «Հայաստանի կոմկուսի պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 279:

<sup>50</sup> Գ. Ա. Գալոյան, Հերոսական մայիսից-հաղթական նոյեմբեր, Երևան, 1980, էջ 46:

<sup>51</sup> Գ. Բ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 264, Ծ. Պ. Աղայան, հոկտ. ունյուցիան եւ հայ ժող. ազատագրումը, Երևան, 1957, էջ 215:

<sup>52</sup> ՀՀ ԼՂԿԲ ՊԿԱ, Ծ 4012, ց. 1, գ. 32, ք. 4, Ծ. 4056, ց. 1, գ. 65, ք. 9:

<sup>53</sup> Բ. Ղարիբջանյան, Սովետական իշխանության համար մղված պայքարում (հոդվածներ, ելույթներ և նյութեր 1917-1920 թթ.) Երևան, 1966, էջ 8, ՀՀ ԼՂԿԲ ՊԿԱ, Ծ. 1022, ց. 2, գ. 12, ք. 1:

<sup>54</sup> «Բանվորի ձայն», Թիֆլիս, 23 մայիսի 1920 թ.:

<sup>55</sup> «Վեմ» Փարիզ, 1934, թիվ Ե., էջ 46:

<sup>56</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 21 օգոստոսի 1919 թ.:

<sup>57</sup> «Լրաբեր», ՀՀ ԳԱԱ, 1994, թիվ 1, էջ 119:

Եթե արևելահայության մեջ, այնուամենայնիվ, կային էսեռականության ու սոցիալիզմի գաղափարներին առանձին արձագանքողներ, ապա այդ նույն բանը չի կարելի ասել արևմտահայ գաղթականության մասին: Արևմտահայ գաղթական զանգվածները հիմնականում գնում էին Դաշնակցություն և Ս. Ռամկավար կուսակցությունների հետևից: Նրանք չէին ընկալում և չէին ընդունում սոցիալիզմի գաղափարախոսությունը նրա ցանկացած դրսևորումով: Էսեռների պաշտոնաթերթ «Սոցիալիստ հեղափոխականը» վկայում է, որ մինչև այժմ բրբահայության մեջ սոցիալիստական որևէ կազմակերպություն գոյություն չի ունեցել՝ ոչ սոցիալ-դեմոկրատական և ոչ էլ էսեռական<sup>58</sup>: Հայ էսեռները գաղթականության այդ սոցիալիստամերժության մեղավորը համարում էին Դաշնակցությանը և Սահ. ռամկավարներին: Բայց իրականում դրա գլխավոր «մեղավորը» պետք է համարել այն միջավայրը և պայմանները, որի մեջ գտնվել է արևմտահայությունը:

Քաղաքական կողմնորոշման առումով հայ էսեռները ցուցաբերել են ընդգծված ռուսական կողմնորոշում, նույնիսկ առանց կարևորություն տալու Ռուսաստանում առկա քաղաքական վարչակարգերին: Նրանք դեմ էին Հայաստանի քաղաքական անկախությանը և գտնում էին, որ նա պետք է դաշնակցային (ֆեդերատիվ) կապերով միանա Ռուսաստանին, իսկ դրան հասնելու համար Հայաստանում պետք է հաստատվի խորհրդային իշխանություն<sup>59</sup>: Ընդգծված ռուսական կողմնորոշում ուներ նաև խորհրդի «ձախ» մյուս՝ սոցիալ-դեմոկրատների խմբակցությունը: Նրանք չէին պատկերացնում Հայաստանի գոյությունը՝ առանց Ռուսաստանի: Այսպիսով, «ձախները» թեև խոսքով ընդունում էին ազգերի ինքնորոշման իրավունքը, սակայն կողմնորոշվելով դեպի Ռուսաստան՝ գործնականում դեմ էին Հայաստանի քաղաքական ինքնորոշմանն ու անկախությանը: Օրինակ, սոց.-դեմ. (մենշևիկ) Թ. Ավդալբեկյանը 1919 թ. ամռանը գրում էր. «Վտանգալից ու ծանրալուծ անկախության փոխարեն մենք՝ հայ սոցիալ-դեմոկրատներս, քարոզում ենք և քարոզելու ենք նաև ապագայում մտնել վերակազմված Ռուսաստանի իրավահավասար ժողովուրդների ազատ ու մեծ գերդաստանի մեջ»<sup>60</sup>:

Իսկ էսեռական կուսակցության Անդրկովկասի շրջանային և Թիֆլիսի կոմիտեի օրգան «Աշխատանքի դրօշակ» թերթը Հայաստանի անկախությունը որակում էր որպես «դառն հեզմանք ինքնորոշման գաղափարին ու այն ժողովրդին, որին «անկախություն է» պարգևում»<sup>61</sup>: Հայ բոլշևիկները և երիտասարդական «Սպարտակ» միությունը ևս Հայաստանի «հանրապետություն», «անկախություն» հասկացությունները առնում էին չակերտների մեջ<sup>62</sup>: Հարց է ծագում. ինչու՞ էին էսեռները և մյուս ձախակողմյան քաղաքական ուժերը դեմ

Հայաստանի անկախությանը: Նրանք դեմ էին Հայաստանի անկախությանը նախ նրա համար, որ անկախանալու դեպքում Հայաստանը կկտրվեր Ռուսաստանից, ինչպես նաև նրա համար, որ անկախացման գործընթացը կվնասեր անդրկովկասյան ժողովուրդների ինտերնացիոնալ համերաշխությանն ու համագործակցությանը:

Որքան որ էսեռները իրենց ծրագրով և գործելակերպով մոտ էին կանգնած ՀՅԴ կուսակցությանը, նույնքան էլ հեռու էին իրարից քաղաքական դավանանքով ու հետապնդած նպատակներով: Այստեղ խնդիրն ամենևին էլ այն չէ, թե սխալ կամ ճիշտ էր Հայաստանի ռուսական կողմնորոշումը, այլ բանն այն էր, որ «ձախ» կուսակցությունները հիմքից ժխտում էին Հայաստանի անկախ պետականության գաղափարը և Հայաստանն ու հայ ժողովրդին տարալուծում էին ռուսական համապետականության մեջ: Տակտիկական նկատառումով, թերևս, որոշ վերապահություն պետք է անել սոց.-դեմ մենշևիկների մոտեցման (դիրքորոշման) հարցում: Վերջիններս ճանաչում էին Հայաստանի անխակությունն ու Ռուսաստանից անջատվելու անհրաժեշտությունը այնքանով, որքանով, որ այնտեղ իշխում էր, իրենց համար անընդունելի, բոլշևիկյան վարչակարգը: Հայ սոց.-դեմ. մենշևիկներին ամենևին ցանկալի չէր բոլշևիկյան Ռուսաստանի Անդրկովկաս ու Հայաստան գալը<sup>63</sup>: Նրանք հայ ժողովրդի փրկությունը տեսնում էին «դեմոկրատական Ռուսաստանի վերականգնման մեջ»<sup>64</sup>, իսկ դրա տակ հասկանում էին հետփետրվարյան ժամանակավոր կառավարության տիպի ժողովրդավարական Ռուսաստանը: Ցավոք, սրանք «ձախ» կուսակցությունների կողմից արտահայտվող սոսկ ցանկություններ էին, որոնք հեռու էին իրական կյանքից: Բացի այդ, սոց.-դեմոկրատները և էսեռները շատ էին խոսում անդրկովկասյան ժողովուրդների միասնության ու համերաշխության մասին: Մինչդեռ միակողմանի նման քարոզը, ըստ էության, նշանակում էր կազմալուծել ու թուլացնել հայ ժողովրդի ազգային-պետական և միասնական ինքնապաշտպանական ոգին ու շահերը: Եվ դա այդ դեպքում, երբ Ադրբեջանի, Վրաստանի, էլ չենք ասում Թուրքիայի իշխող քաղաքական ուժերը անսքող զավթողական ծրագրեր ունեին Հայաստանի նկատմամբ: Չախերի թույլ տված այս բացը փակում էին հայ ազգային կուսակցությունները:

«Ձախ» կուսակցությունների ներկայացուցիչները Հայաստանի խորհրդարան էին մտել ոչ թե այն բանի համար, որ ընդունում էին Հայաստանի պետականությունը և անկախությունը, այլ Հայաստանը «կրկին իր իսկական տիրոջ» Ռուսաստանին վերադարձնելուն<sup>65</sup>: Ինչպիսիք էլ որ լինեին «ձախ» ընդդիմության՝ սոցիալիստ-հեղափոխականների, ու սոցիալ-դեմոկրատ մենշևիկների գործունեության դասակարգային, ապագային բովանդակութ-

<sup>58</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 21 օգոստոսի 1919 թ.:

<sup>59</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԼ, ֆ. 4033, ց. 7, գ. 53, թ. 1:

<sup>60</sup> «Կայծ», 2 հուլիսի 1919 թ.:

<sup>61</sup> «Աշխատանքի դրօշակ», Թիֆլիս, 13 հունիսի 1919 թ.:

<sup>62</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԼ, ֆ. 4012, ց. 1, գ. 9, թ. 2, նույնը՝ «Սպարտակ», 1 մայիսի 1919 թ.:

<sup>63</sup> «Ժողով», 10 հունվարի 1919 թ.:

<sup>64</sup> «Կայծ», 13 փետրվարի 1919 թ.:

<sup>65</sup> «Աշխատանք», 17 մայիսի 1919 թ.:

յունը, այնուամենայնիվ, դրանք հանդիսանում էին ժողովրդավարական կուսակցություններ:

Ձախակողմյան կուսակցությունների ծայրագույն ձախ թևին էին հա-  
րում բոլշևիկ-կոմունիստները, որոնք եղածներից ամենավտանգավորն էին  
երկրի անկախության և հանրապետության իշխանությունների համար:

Հայաստանի խորհրդում սոց.-դեմ. խմբակցությունը չունեւ միասնա-  
կան ու հետևողական ուղեգիծ: Դրա պատճառը ոչ միայն այն էր, որ հինգ  
մենչևիկ պատգամավորների կողքին կար մեկ բոլշևիկ (Ա. Մելիքյան), այլ  
նաև, որպես սուբյեկտիվ գործոն, նրա համար, որ խմբակցությունը գլխավո-  
րում էր մի անձնավորություն, որն Ա. Խոնդկարյանի կարծիքով «իր խառն-  
վածքով ու ունակություններով միանգամայն անհամապատասխան էր նման  
մի ծանրակշիռ պաշտոնի համար»<sup>66</sup>: Խոսքը մենչևիկ Հայկ Ազատյանի մա-  
սին է, որն հետագայում Հայաստանի խորհրդայնացման փուլում անցավ Կո-  
մունիստական կուսակցության շարքերը: Նա խորհրդի նիստում հանդես էր  
գալիս ինքնավստահ կեցվածքով ու հանդուգն տոնով աչ ու ձախ քննադա-  
տում էր կառավարությանը, ՀՅԴ-ին, մյուս կուսակցություններին<sup>67</sup>: Պատա-  
հում էին նաև դեպքեր, երբ սոց.-դեմ. խմբակցության խոսնակ Հ. Ազատյանը  
այս կամ այն հարցի առթիվ արտահայտած իր անձնական տեսակետը ներ-  
կայացնում էր որպես խմբակցության տեսակետ և դրանով իսկ խմբակցու-  
թյան անդամների մեջ առաջ բերում դժգոհություններ:

Իր հերթին, միակ բոլշևիկ պատգամավոր Ա. Մելիքյանը փաստորեն  
հանդես էր գալիս մեկուսի: Սեպտեմբերի սկզբի նիստերից մեկում նա, հան-  
դես բերելով ավելի զգաստ ու հավասարակշիռ մոտեցում, քննադատում էր իր  
խմբակցության ներկայացուցիչ Հ. Ազատյանին այն բանի համար, որ նա տե-  
ղի ու անտեղի, անհարկի քննադատում էր Հայաստանի կառավարությանը,  
մինչդեռ Անդրկովկասյան սեյմում աշխատած ժամանակ նա չէր քննադա-  
տում մենչևիկների կառավարությանը, որովհետև վրաց սոցիալ-դեմոկրատ-  
ներից նպաստ (աշխատավարձ) էր ստանում: Ա. Մելիքյանի այդ ելույթը  
խորհրդարանը դիմավորել է ծափահարությամբ<sup>68</sup>:

Հարկ է նշել, որ Ա. Մելիքյանն իր պահվածքով ու չափավորությամբ էա-  
պես տարբերվում էր մյուս ավելի արմատական ու ծայրահեղ երիտասարդ  
բոլշևիկներից: Բայց և այնպես՝ նա հավատարիմ էր մնում իր կուսակցության  
քաղաքական դավանանքին ու հետապնդած նպատակներին: Ա. Մելիքյանը  
մենչևիկներից շատ ավելի հետևողականորեն, խորհրդի նիստերի իր ելույթ-  
ներում, հանդես էր բերում ընդգծված սոցիալ-դասակարգային մոտեցում: Օ-  
րինակ, նա դասակարգային բաժանում մտցնելով հայ ժողովրդի մեջ, պա-

հանջում էր «անպայման անցնել բուրժուազիայի վրայով», հանուն ժողովրդի  
շահերի՝ զոհել դրան<sup>69</sup>:

Հայ բոլշևիկները ի սկզբանե անհանդուրժող դիրք գրավեցին ՀՀ և նրա  
կառավարության նկատմամբ: Նրանք գաղտնի ու բացահայտ առիթը բաց  
չէին բողոքում տապալելու գոյություն ունեցող վարչակարգը: Հայ բոլշևիկների  
գրաված ակնհայտ հակադաշնակցական, մարտաշունչ դիրքորոշումը բացո-  
րոշ երևում է 1918 թ. սեպտեմբերի ամսին Հայաստանի խորհրդարանում  
կարդացված մեծամասնականների հայտարարագրից: Այն տպագրվել է  
Երևանի կոմունիստական կազմակերպությունների օրգան «Խոսք» թերթում,  
որի խմբագիրն ու հրատարակիչն էր Ա. Մելիքյանը: Նրանում մասնավորա-  
պես ասվում էր. «Մենք անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ հայ ժողովրդի  
ներկա քաղաքական կացությունը երբեք չի կարելի համարել կայուն, բնական  
ու բավարար: Ժողովրդի վզին բռնությամբ և խաբեությամբ փաթաթված քա-  
ղաքական ծանր վիճակը պետք է նույնպես ուժով և դիվանագիտական  
ճարավորությամբ վերացնել: Մեր կուսակցության կողմից հանցանք կլինեք, եթե  
փորձեք որևէ մեկի ներշնչել այն միտքը, թե մեր տվյալ իրականության հետ  
պետք է հաշտվել և սկսել խաղաղ ստեղծագործական աշխատանք. այդ ոչ մի  
դեպքում<sup>70</sup>: Եվ ահա այս ամենին վերջ տալու համար հայտագրում հետևյալ  
միտքն էր զարգացվում. «Չխնայել ոչ մի զոհաբերություն և ցույց տալ ամե-  
նայն պատրաստակամություն՝ գոյություն ունեցող անարգ և խայտառակ լու-  
ծը դեմ չալրտելու համար»<sup>71</sup>:

Բայց Ա. Մելիքյանին վիճակված չէր երկար զբաղեցնելու պատգամա-  
վորական աթոռը: Այն բանից հետո, երբ 1918 թ. նոյեմբերին տեղի ունեցավ  
Հայաստանի բոլշևիկների վերջնական կազմակերպական անջատումը  
մենչևիկներից, այդ հիման վրա բոլշևիկները պահանջեցին, որ խորհրդարա-  
նում իրենց առանձին տեղ հատկացվի: Ա. Մելիքյանը նոյեմբերի 16-ի նիս-  
տում գրավոր առաջարկություն մտցրեց, որպես առանձին քաղաքական հո-  
սանքի, իրենց մեկ առանձին տեղ տալ<sup>72</sup>: Սակայն խորհուրդը ձայների մեծա-  
մասնությամբ մերժեց նման պահանջը: Դաշնակցության խմբակցությունը ա-  
ռաջարկեց բոլշևիկներին մեկ տեղ տալ սոց.-դեմ. խմբակցության հաշվին, այ-  
սինքն՝ բոլշևիկներին թողնել սոց.-դեմ. խմբակցության 6-րդ տեղը: Բայց  
մենչևիկները չհամաձայնեցին այդ առաջարկին: Նրանք գտնում էին, որ վեց  
տեղն էլ իրենց է պատկանում, և թող բոլշևիկների համար մեկ լրացուցիչ տեղ  
հատկացվի: Սակայն մանդատային հանձնաժողովը հայտնում է, որ դա  
խորհրդի ձևավորման մասին օրենքի խախտում կլինի: Զվարկությամբ անց-  
նում է ՀՅԴ խմբակցության առաջարկը. այն է՝ բոլշևիկներին մեկ տեղ հատ-  
կացնել սոց.-դեմ. խմբակցության 6-րդ տեղի հաշվին: Բայց բոլշևիկների հա-

<sup>66</sup> «Վեն», 1934, թիվ Ե, էջ 55:

<sup>67</sup> «Կառավարության լրաբեր», 6 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>68</sup> Նույն տեղում:

<sup>69</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 17, թ. 6:

<sup>70</sup> «Խոսք», 22 սեպտեմբերի 1918 թ. (թիվ 1):

<sup>71</sup> Նույն տեղում:

<sup>72</sup> «Կայծ», 21 նոյեմբերի 1918 թ.:

յաստանյան կազմակերպությունը հրաժարվում է սոց.-դեմ. խմբակցության 6-րդ տեղը գրավելուց: Դրանից հետո Ա. Մելիքյանը, իր դիմումի համաձայն, դուրս է գալիս Հայաստանի խորհրդի կազմից և նրա տեղը գրավում է մեկ ուրիշ մենշևիկ<sup>73</sup>:

Երևանի կոմունիստական կազմակերպության պաշտոնաթերթ «Խոսքի» հավաստմամբ՝ Ա. Մելիքյանի հեռացումը խորհրդարանից մենշևիկ խմբակցության բանասրկության հետևանք էր: Ըստ «Խոսքի»՝ Ա. Մելիքյանին հեռացրել են, որպեսզի սոց.-դեմ. խմբակցության 6-րդ անդամի տեղը զբաղեցնի Թիֆլիսից Երևան ժամանած Արկունեղը (Գևորգ Ղարաջյանը)<sup>74</sup>: Տեղեկացնենք, որ դեռ 1918 թ. գարնանը (մայիսին) իր դիմումի համաձայն Գ. Ղարաջյանը հեռացել էր Վրաստանի սոց.-դեմ. բանվորական կուսակցության շարքերից<sup>75</sup>: Արկունեղի խորհրդարան մտնելը նպատակ ուներ ուժեղացնել սոց.-դեմ. խմբակցությունը: Վերջինս ներկայացավ որպես խմբակցության նոր խոսնակ՝ առաջ բերելով ներքին մրցակցություն իր և Հ. Ազատյանի միջև:

Հայաստանի խորհրդում կուսակցական պատկանելություն չուներին (համեմայն դեպս, ցույց չէին տալիս) ազգային փոքրամասնությունների՝ թուրք, ռուս, եզդի ներկայացուցիչները: Նրանք բնականաբար հանդես էին գալիս Հայաստանում բնակվող բոլոր ժողովուրդների շահերի պաշտպանության պահանջով: Խորհրդում հակաանկախական և հակապետական դիրքորոշում ունեին ազգային փոքրամասնությունների, մասնավորապես 6 թուրք և 1 ռուս ներկայացուցիչները: Թուրք պատգամավորները ավելի հաճախ աշխատում էին իրենց ցույց տալ չեզոք կամ էլ վճռական պահերին խուսափում էին նիստերից ու քվեարկություններից: Թուրք-թաթարների դիրքորոշումը ՀՀ - հանդեպ ինքնըստինքյան պարզ է: Հարկ է նշել, որ հայաստանաբնակ ռուսների վերաբերմունքը հայկական պետականության նկատմամբ այնքան էլ նպաստավոր չէր: «Հայաստանում բնակվող ռուսները,- գրում էր անկուսակցական Գ. Չալխուշյանը,- երբեք չուզեին մեզ հպատակել, որովհետև ցարական կառավարության օրոք արտոնյալ դրություն կը վայելեին Հայաստանի մեջ և կուզեին նույն դրությունը պահպանել»<sup>76</sup>:

Ազգային փոքրամասնությունների պատգամավորներից, թերևս, միակ կառուցողական դիրքորոշում ցուցաբերողը քրդական միակ ներկայացուցիչն էր: Գ. Չալխուշյանը վկայում է, որ Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններից միայն եզդիները մեզ հետ էին, միշտ մեր օգնությանը կարոտ և կառավարությունը անգամ դրան բաց կթողներ նրանց Եվրոպայի մեջ իրենց շահերը պաշտպանելու համար<sup>77</sup>: Հաճախ եզդի միակ պատգամա-

վորի ձայնից էր կախված լինում այս կամ այն հարցի լուծումը: Պատգամավոր Ա. Բաբայանը հայտնում է, որ եզդի պատգամավորը մշտապես հարում էր ՀՅԴ խմբակցությանը<sup>78</sup>:

Այսպիսով, Հայաստանի խորհրդարանի ընդդիմադիր կուսակցությունների գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ դրանք եղել են թույլ: Դրա գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ թե՛ ժողովրդականները և թե՛ հատկապես սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականները Հայաստանի իրականության մեջ չունեին բավականաչափ սոցիալական հող, նրանց հետևից չէին գնում լայն հասարակաշերտեր, իսկ նրանց կուս-կազմակերպությունները տեղում թույլ էին ու տարտամ:

Ընդդիմադիր կուսակցությունների՝ Հայաստանում թուլության մյուս կարևոր պատճառն այն էր, որ խորհրդարանական «աջ» և «ձախ» երեք կուսակցությունները իրենց ղեկավար ցուցումները գործնականում ստանում էին Թիֆլիսից՝ այնտեղ գտնվող նրանց կենտրոնական մարմիններից: Վերջիններս, հեռու գտնվելով հայրենիքից, ուշացած որոշումներ էին կայացնում ու ղեկավար հրահանգներ տալիս՝ հաճախ առանց իրազեկ լինելու տեղական պայմաններին:

Ի տարբերություն Վրաստանի և Ադրբեջանի, որտեղ իրենց պետականության պաշտպանության դիրքերում էին կանգնած ոչ միայն բուրժուական, այլև տարբեր գունավորման սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական, կրոնական տիպի կուսակցություններն ու կազմակերպությունները, Հայաստանի խորհրդարանում, ընդհակառակը, բացահայտ հակապետական գիծ էին վարում «ձախ» կուսակցությունների խմբակցությունները, առանձին դեպքերում նաև աջակողմյան ՀԺԿ-ր: Վերջինս նման գործունեությունը ամենից առաջ ուղղված էր ՀՅԴ ղեկավար դիրքերն ու հեղինակությունը թուլացնելու և իշխանությունն իր ձեռքը վերցնելու հանգամանքով:

Ասպարեզում մնում էր 18 պատգամավորանոց ՀՅԴ խմբակցությունը, որը հարկադրված էր դիմակայել «աջ» ու «ձախ» խմբակցություններին: Կառուցողական աշխատանքի գրեթե ամբողջ ծանրությունը ընկած էր Դաշնակցության խմբակցության վրա: Նա էր ազատ և անկախ Հայաստանի գաղափարի ամենահետևողական պաշտպանն ու մարմնավորողը:

Խորհրդարանի «աջ» և «ձախ» ընդդիմադիր կուսակցությունների շատ առաջնորդներ այդպես էլ չբարեհաճեցին տեղափոխվել ու աշխատել հայրենիքում: Պետք է նկատի ունենալ, որ Հայաստան գալ և աշխատելը կապված էր Երևանից 7 վերստ հեռավորության վրա, կյանքը այստեղ բարեկեցիկ չէր, տարածված էին համաճարակային հիվանդությունները: Շատերը աքսորավայր էին համարում սովի, համաճարակի, գաղթականության ու ավերի երկիր Հայաստանը և նրա մայրաքաղաք Երևանը:

<sup>73</sup> «Կայծ», 24 նոյեմբերի 1918 թ., «Ամս», 1934, թիվ 2, էջ 84, «Ժողով», 30 նոյեմբերի 1918 թ.:

<sup>74</sup> «Ժողով», 22 փետրվարի 1919 թ.:

<sup>75</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, ֆ. 4051, ց. 1, գ. 39, թթ. 1-2:

<sup>76</sup> Գ. Չալխուշյան, Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 13-14:

<sup>77</sup> Գ. Չալխուշյան, նշվ. աշխ., էջ 14:

<sup>78</sup> Ա. Բաբայան, նշվ. աշխ., էջ 13:

Ի տարբերություն Հայ ժողովրդական, սոց.-դեմ. և էսեռական կուսակցությունների՝ ՀՅԴ-ն ի սկզբանե իր կառույցներով ու պատասխանատու ղեկավար գործիչներով փոխադրվեց հայրենիք (Երևան)՝ Թիֆլիսում բողոքելով միայն «Աշխատավոր» թերթի շուրջը համախմբված այն երիտասարդներին, որոնք գլխավորեցին ՀՅԴ Վրաստանի կազմակերպությունը<sup>79</sup>։ Հայաստան եկան նաև Ադրբեջանում գտնվող ՀՅԴ լավագույն ուժերը։ Դաշնակցությունը, հավատարիմ մնալով իր լավագույն ավանդներին, նախընտրեց լինել ժողովրդի հետ։ «Դաշնակցության դերը բուն Հայաստանում էլ ավելի մեծացավ, որովհետև նախորդ տասնամյակների բեղմնավոր գործունեությամբ նա խոր արմատներ էր ձգել հայ զանգվածների մեջ»<sup>80</sup>։ Դառնալով կառավարող կուսակցություն, ՀՅԴ գնալով ավելի ամրապնդեց դիրքերը ժողովրդի մեջ և պետական կառույցներում։

## 2. Արտախորհրդարանական կուսակցությունները

ՀՀ գործում էին նաև կուսակցություններ, որոնք խորհրդարանում չունեին պատգամավորական ներկայացուցչություն։ Այդպիսիներից էին Հայ Ս. Ռամկավար, ՍԴ Հնչակյան կուսակցությունները և «Սպեցիֆիկների» կազմակերպությունը։ Այս երեք քաղաքական կազմակերպություններն էլ ՀՀ ներսում առանձնապես շոշափելի կշիռ չեն ունեցել։

**Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն**։ Ինչպես հայտնի է, 1908 թ. հոկտեմբերին Արմենականների, Վերակազմյալ հնչակյան կազմակերպությունների և մի քանի այլ համախոհ խմբակցությունների միավորումով հիմնվել էր Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը<sup>81</sup>։ Սահմանադրական ռամկավարների կուսակցության ստեղծումից հետո Արմենականությունը գործնականում դադարում է այս անունով կոչվել, սակայն, հանձին իր այս նոր իրավահաջորդի, պահպանվում ու շարունակվում են նրա ուղղությունն ու ավանդները նոր անվան տակ։ Արտակ Դարբինյանի պատկերավոր արտահայտությամբ՝ Արմենականությունը եղավ ռամկավար կուսակցության շաղախը<sup>82</sup>։

Հանդես գալով երիտթուրքական հեղաշրջման փուլում, Սահմանադրական ռամկավարները իրենց մշակած ծրագրում պաշտպանեցին Օսմանյան

պետության ամբողջականության պահպանման գաղափարը<sup>83</sup>։ ՀՅԴ և Ս. Դ. հնչակյանների պես սրանք էլ արտահայտվում էին Արևմտյան Հայաստանի ինքնավարության օգտին։ Ս. ռամկավարները իրենց մերձավոր նպատակն էին համարում «օրինական միջոցներով ձեռք բերել թուրքահայերի համար ազգային լայն իրավասություններ (կրոնական, կրթական, լեզվի, մշակութի, առաջադիմության և այլն) Օսմանյան պետության մեջ»<sup>84</sup>։ Ինչպես տեսնում ենք, իր ազգային պահանջներում կուսակցությունը չափավոր էր։ Այս կուսակցության նշանաբանը ժողովրդավարությունն էր։

Ազատական ու ժողովրդավարական բովանդակություն ուներ նրա տնտեսական և սոցիալ-քաղաքական պլատֆորմը։ Ս. ռամկավարները պաշտպանում էին սեփականատիրական, ապրանքաշուկայական հարաբերությունները։ Նրանք չէին ընդունում ընկերավարության (սոցիալիզմի) վարդապետությունը, կողմ էին տնտեսական բարեփոխումներին, անհատական գործունեությանը, տնտեսական մրցությանը, ընդունում էին եւ դրամը, եւ տաղանդը, եւ աշխատանքը<sup>85</sup>։

Շարունակելով Արմենականների մարտավարական ավանդները՝ սրանք ևս դեմ էին ցուցարարությանը, աղմկարարությանը և հախուռն գործողություններին։ Ս. Ռամկավար կուսակցությունը, նախապատվություն տալով խաղաղ (ոչ հեղափոխական) գործելակերպին, այդուհանդերձ, պատրաստ էր օգնել ու օժանդակել հայրենասիրական ամեն մի ձեռնարկ, այդ թվում՝ մարտական ու ինքնապաշտպանական, եթե վտանգ է սպառնում ազգին։

Սակայն կարճ ժամանակամիջոցում կյանքը ցույց տվեց, որ Օսմանյան Թուրքիան այն երկիրն ու միջավայրը չէր, ուր հնարավոր լիներ իրագործել ծրագրային այս չափավոր, ռամկավար, ազատական պահանջները։ Ընդհակառակը, իշխանության դեկին անցած երիտթուրք պարագլուխները հայ քաղաքական ուժերի առաջ քաշած այս օրինապահ և առաջադիմական դիրքորոշմանը պատասխանեցին արևմտահայության զանգվածային տեղահանությամբ ու կոտորածներով։

Եղեռնից մազապուրծ տարագիր հայության հետ միասին Ս. Ռամկավարների գործունեության ծանրության կենտրոնը փոխադրվեց գաղթաշխարհ։ Արևմտահայ գաղթականության, հատկապես վան-վասպուրականցիների մի ստվար հատված (120 հազար) ներգաղթեց Անդրկովկաս<sup>86</sup>։ Դրանց մեջ էին նաև Ս. ռամկավարների մի հատվածը։ Փաստերը ցույց են տալիս, որ Կովկասի հայ ռամկավարները քաղաքական հայացքներով ու համոզմունքով հիմնականում ներկայացնում էին Վան-Վասպուրականի նախկին Արմենականներին, որոնք, 1915 թ. փախստական հայ գաղթականության հետ միասին

<sup>79</sup> «Վեն», Փարիզ, 1934, թիվ Ե, էջ 43։

<sup>80</sup> Նույն տեղում, էջ 47։

<sup>81</sup> Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն (1890-1940), Փարիզ, 1947, էջ 181-195, Ս. Ավետյան, Հայ ազատագրական ազգային հիսունամյա հուշամատյան (1870-1920), Փարիզ, 1954, էջ 59-60, Վ. Ղազարյան, Արմենական կուսակցություն (ակնարկներ), Բեյրութ, 1985, էջ 63։

<sup>82</sup> Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 5։

<sup>83</sup> «Ծրագիր և կանոնագիր Սահմանադրական-ռամկավար կուսակցության», Պոլիս, 1910, էջ 9-10։

<sup>84</sup> «Հայաստանի ծայն», 2 նոյեմբերի 1919 թ.։

<sup>85</sup> «Ծրագիր և կանոնագիր...», էջ 9-11։

<sup>86</sup> Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 334։

վտարանդի լինելով, ներգաղթել էին Կովկաս՝ կենտրոնավայր ունենալով Թիֆլիսը: Դեպի Անդրկովկաս ներգաղթած ժողովրդի հետ էր մաս Կանի շրջանային ակումբը: Թիֆլիսում սկսեց վերահրատարակվել «Վան-Տոսպը»: Սա փաստորեն համարվում էր տակավին 1913 թ. Վանում լույս տեսնող մուլ-նանուն թերթի իրավահաջորդն ու գործի շարունակողը: Թերթն իր առջև խնդիր էր դրել արևելահայերին լսելի դարձնել արևմտահայ ժողովրդի ձայնը<sup>87</sup>: Անդրկովկասում «Վան-Տոսպը» կուսակցության անունից իր առջև խնդիր էր դրել.

ա) Ներկայացնել հայ և օտար ընթերցողներին Նդեռնի ժամանակ ե-րիտթուրքերի գործած գազանությունները,

բ) Պաշտպանել Հայաստանը Թուրքիայից անջատելու գաղափարը,

գ) Վեր հանել ՀՀ Դաշնակցության գործած սխալներն ու աղետները թրքահայոց խնդրում ,

դ) Հոգալ թրքահայ գաղթական բեկորների գոյության մասին<sup>88</sup>:

1917 թ. մայիսին Թիֆլիսում գումարվեց Հայ ռամկավարների Վան-Վասպուրականի տարածքային (շրջանակային) ակումբի ընդհանուր ժողովը (համագումարը)՝ խնդիր ունենալով ճշտելու և հստակեցնելու համար գաղթա-կանության հետ կապված իրենց անելիքները<sup>89</sup>: Այս համագումարում Վանի շրջանային Ակումբի վարչությունը վերակառուցվեց Հայաստանի կենտրոնա-կան (շրջանային) խորհրդի, որը 1918 թ. գարնանը թուրքերի՝ Անդրկովկասի սահմանները ներխուժման պատճառով, փոխադրվեց Ռոստով, իսկ ավելի ուշ՝ 1919 թ. առաջին ամիսներին, Խորհուրդն իր գործունեությունը սկսեց նորա-կախ հանրապետության մայրաքաղաք Երևանում<sup>90</sup>:

1919թ. մարտի 24-ից Երևանում սկսեց լույս տեսնել Հայ ռամկավարնե-րի պաշտոնաթերթ «Վան-Տոսպը», որի լուսընծայումը ընդհատվել էր հայ-վրացական պատերազմի հետևանքով: Իսկ ավելի ուշ՝ 1919 թ. սեպտեմբերի 22-ից, «Վան-Տոսպի» փոխարեն սկսեց լույս տեսնել «Հայաստանի ձայն» ե-ռօրյան, որը հանդիսանում էր Հայ ռամկավար կուսակցության Հայաստանի կենտրոնական խորհրդի (շրջանային վարչության) օրգանը: Թերթի խմբա-գիրն էր հայ ռամկավար ճանաչված գործիչ Արտակ Դարբինյանը<sup>91</sup>: «Հայաս-տանի ձայնը» դարձյալ նպատակ ուներ շարունակելու «Վան-Տոսպի» բռնած ուղին: Ռամկավարների քաղաքական ձգտումներից ամենադրվատելին, թերևս, այն էր, որ նրանք ունեին արդար ու ազնիվ մղում՝ «պաշտպանելու արևմտահայ հատվածի քաղաքական շահերը»<sup>92</sup>: Ինչպես տեսնում ենք, հայ

ռամկավարների կազմակերպության հիմնական ուշադրությունը բևեռված էր Տաճկահայ խնդրի վրա:

Հայ ռամկավար կուսակցության Հայաստանի խորհուրդն իրեն համա-րում էր համահայկական Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության մասը՝ դուստր կուսակցություն<sup>93</sup>:

Տաճկահայ գաղթականության անունից հանդես եկող հայ ռամկավար-ները արտահայտվում էին հայրենիքի վերաշինության օգտին: Կուսակցու-թյուն սոցիալ-տնտեսական խնդիրների կտրվածքով իր գործունեության ուղին և մերձավոր նպատակը մասնավորապես տեսնում էր հետևյալում.

ա) զարգացնել ազգային-հասարակական նախաձեռնության ոգին մեր ժողովրդի մեջ,

բ) օժանդակել, որ Հայաստանի պետական կյանքի մեջ ստեղծվի ռամ-կավար-ժողովրդապետական իրավակարգ,

գ) պայքարել աջ և ձախ ծայրահեղությունների դեմ և այլն<sup>94</sup>:

Հայ ռամկավարները, ընդունելով ու պաշտպանելով հայոց անկախ պե-տականության գաղափարը և արտահայտվելով հայրենիքի վերաշինության օգտին, միաժամանակ թերահավատորեն էին լցված ՀՀ իշխանությունների նկատմամբ: Բացի այդ՝ նրանք ցուցաբերում էին ոչ ռուսական քաղաքական կողմնորոշում<sup>95</sup>: Հայ ռամկավարները ռուսական կողմնորոշմանը չէին հարում ամենից առաջ Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական համակարգին դեմ լինելու պատճառով: Դժվար չէ տեսնել, որ իրենց ծրագրային հիմնադ-րույթներով ռամկավարները մոտ ու մույնական էին արևելահայ իրականու-թյան ծնունդ՝ Հայ ժողովրդական կուսակցությանը: Այդ նշանակում է, որ հայ ռամկավարները դասվում են «աջակողմյան» կուսակցությունների շարքին: Արևմտահայ գաղթականության հետ Անդրկովկաս ներգաղթած ու հաստատ-ված ռամկավարները արևելահայ ժողովրդականների հետ հաստատել էին սերտ կապեր: 1919 թ. սեպտեմբերին ՀԺԿ 2-րդ համագումարում մույնիսկ սկզբունքային համաձայնություն կայացվեց Հայ ռամկավար և Հայ ժողովր-դական կուսակցությունների միավորման վերաբերյալ<sup>96</sup>: Սակայն այդ կու-սակցությունների կազմակերպչական միացումը որոշվեց հետաձգել մինչև Հայկական հարցի լուծումը<sup>97</sup>:

Հայաստանի անկախության խնդրում Հայ ռամկավարները սկզբունքո-րեն ընդունում ու պաշտպանում էին անկախության գաղափարը<sup>98</sup>: Բայց պետք է ընդգծել, որ նրանց համար առաջնայինը Տաճկահայ դատն էր ու արևմտահայ գաղթականության ճակատագիրը: Այս առնչությամբ համամիտ

<sup>87</sup> Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 336:

<sup>88</sup> «Հայաստանի ձայն», 22 սեպտեմբերի 1919 թ.:

<sup>89</sup> «Հայաստանի ձայն», 23 դեկտեմբերի 1919 թ.:

<sup>90</sup> «Հայաստանի ձայն», 15 հունվարի 1920 թ.:

<sup>91</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, ք. 131, Ա. Դարբինյան, նշվ. աշխատանք, էջ 382:

<sup>92</sup> ՀՀ ՀԶԿԺ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 72, էջ 9:

<sup>93</sup> «Հայաստանի ձայն», 15 հունվարի 1920 թ.:

<sup>94</sup> «Հայաստանի ձայն», 22 սեպտեմբերի 1919 թ.:

<sup>95</sup> Նույն տեղում, 3 հոկտ. 1919 թ.:

<sup>96</sup> Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերն, Փարիզ, 1947, էջ 393, «Հա-յաստանի ձայն», 3 հոկտեմբերի 1919 թ.:

<sup>97</sup> Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 395-396:

<sup>98</sup> «Հայաստանի ձայն», 22 սեպտեմբերի 1919 թ.:

չենք Ռ. Տեր-Մինասյանի արտահայտած այն մտքին, թե «Ռամկավարների խորք էր Հայաստանի անկախությունը և ազատությունը»<sup>99</sup>։ Հիմնականում Տաճկահայաստանի և արևմտահայ գաղթականության ճակատագրով տապակվող ռամկավարները, եթե առանձին արտահայտություններով երկրորդում էին ՀՀ-ը, դժգոհում նրա կառավարությունից, կարևորելով Տաճկահայաստանի դատը, ապա դա ամենևին էլ չէր նշանակում, թե նրանք դեմ էին անկախ Հայաստանի գաղափարին։

**ՄԴ Հնչակ կուսակցություն։** Ոչ խորհրդարանական կուսակցություններից էր նաև Ս. Դ. Հնչակյան կուսակցությունը։ Ինչպես հայտնի է, Հնչակյան կուսակցության գաղափարական երկվությունը՝ ազգային և սոցիալիստական գաղափարների մեկտեղումը, 1896 թ. Լոնդոնի համագումարից ի վեր դարձել էր կուսակցության պառակտման հիմնապատճառ։ Այս հիման վրա կուսակցության քայքայման ու կազմալուծման գործընթացները շարունակվեցին ու ավելի խորացան նաև 20-րդ դարի սկզբներին։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հնչակյան կուսակցությունը ռուսահայ իրականության մեջ ավելի ընդգծեց իր սոց.-դեմ. բովանդակությունը։ Անդրկովկասի ու հատկապես Բաքվի հնչակյանները, համերաշխելով ՌՍԴԲԿ ծրագրին և մենշևիկյան գործելակերպին, համագործակցում էին նրա տեղական կազմակերպությունների հետ, համատեղ կազմակերպում ու ղեկավարում էին բանվորական շարժումները, գործադուլային պայքարը, քաղաքական ցույցերը և այլն<sup>100</sup>։ Նրանք, մի կողմ թողնելով թուրքահայ խնդիրը, կենտրոնացնելով Կովկասում, իրենց ուշադրությունը բևեռեցին ցարիզմի տապալման և սոցիալ-տնտեսական այլ խնդիրների լուծման վրա։

1917 թ. Փետրվարյան հեղափոխության ազդեցությամբ, հունիս ամսին, Թիֆլիսում հրավիրվեց հնչակյանների ռուսահայ կազմակերպությունների առաջին շրջանային խորհրդածողովը /կոնֆերանս/, որտեղ մշակվեց Կովկասի հնչակյանների համար ինքնուրույն ծրագիր, որը շուտով լույս տեսավ Թիֆլիսում<sup>101</sup>։ Այս ծրագրում կովկասահայ հնչակյանները իրենց մերձակա պահանջը համարում էին մոտավորապես այն, ինչ որ առաջադրվում էր ՌՍԴԲԿ մենշևիկների միմիումն ծրագրում<sup>102</sup>։ Այսինքն՝ առաջին պլան էր մղվում իր հեռավոր՝ սոցիալիստական գաղափարների իրագործումը։ Հնչակյանների սոցիալ-դասակարգային իմաստով նման ձախացումը պայմանավորված էր ոչ թե բուն հայկական իրականությամբ, այլ ամենից առաջ Ռուսաստանում կատարվող լուրջ գործընթացներով։ Կովկասահայ հատվածի հնչակյանները հասան նույնիսկ այն բանին, որ 1917 թ. իրենց շրջաբերական-

ներից մեկում միամտություն ունեցան՝ Հայկական հարցի լուծումը հանձնել «միջազգային պրոլետարիատի դադասարանին»<sup>103</sup>։

Հոկտեմբերյան հեղափոխությունը հնչակյանները դիմավորեցին զուսպ ու սպասողական կեցվածքով։ Նրանք էլ բավականին մեծ հույսեր կապեցին «Թուրքահայաստանի մասին» ղեկրետի հետ և կտրուկ բացասական վերաբերմունք ցուցաբերեցին Բրեստ-Լիտովսկի դաշնագրի հանդեպ<sup>104</sup>։ Թիֆլիսում նստած ՄԴ Հնչակյան կուսակցության ԿԿ-ը մի կողմից խարազանում էր Անդրկովկասը դեմոկրատական Ռուսաստանից անջատող Սեյմին, իսկ մյուս կողմից՝ կոչ անում, զենքը ձեռքին, ոտքի ելնել պաշտպանելու հայրենիքը թուրքական մահաբեր ներխուժումից<sup>105</sup>։ Հնչակյանների Անդրկովկասյան կենտրոնը, ի տարբերություն նրա արտասահմանյան կազմակերպությունների, բուռն կերպով բողոք արտահայտեց Մայիսի 28-ի Հայաստանի անկախության հայտարարության կապակցությամբ։

Այսպիսով, ՄԴ Հնչակյան կուսակցության կովկասյան կազմակերպությունը, ըստ էության, վարել է այնպիսի քաղաքական ուղեգիծ ու մարտավարություն, ինչպիսին բնորոշ էին տեղի «ձախակողմյան» սոցիալ-դեմոկրատական ու սոցիալիստական մյուս կուսակցություններին։ Այդ իսկ պատճառով էլ այս կուսակցությունը, ըստ էության, կրկնելով ձախակողմյան կուսակցություններին, տարածաշրջանում՝ Անդրկովկասում, առանձնապես քաղաքական ազդեցիկ ուժ չէր։ ՄԴ Հնչակյան կուսակցությունը առավել ևս նորանկախ ՀՀ սահմաններում իրենից իրական որևէ ուժ չէր ներկայացնում<sup>106</sup>։ Իրավացի է ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը, երբ գրում էր, որ Արևմտյան Հայաստանում իր դիրքերը զիջած (այն անցել էր Դաշնակցության ձեռքը) Հնչակյան կուսակցությունը «Կովկասում երբեք չկարողացավ ժողովրդական լայն մասսաներին իր հետևից տանել և հայ իրականության ազդեցիկ կուսակցությունների շարքն անցնել»<sup>107</sup>։ Ինչպես արդեն ասվեց, դրա պատճառն այն էր, որ հնչակյանները Անդրկովկասում և առհասարակ ռուսահայ իրականության մեջ հանդես էին գալիս ամենից առաջ որպես ընկերավարությանը հավատարիմ սոցիալ-դեմոկրատական կուսակցություն։ Բայց մենք գիտենք, որ այդ նույն ժամանակ մարքսիստական, սոցիալիստական գաղափարախոսությամբ ու գործունեությամբ, այդ նույն իրականության մեջ, հանդես էին գալիս նույնադավան այլ կուսակցություններ, որոնք հնչակյաններից խել էին սոցիալիստականության առաջնության դափնին։ Եվ դա առաջին հերթին վերաբերում էր ՌՍԴԲԿ-ին՝ իր քնեղով ու ազգային դրսևորումներով։ Այստեղից էլ կարծես ավելորդ ու կրկնական էր դառնում Հնչակի սոցիալիստական գործու-

<sup>103</sup> Նույն տեղում, գ. 210, ք. 1։

<sup>104</sup> Буржуазные и мелкобуржуазные партии..., М., 1980, с. 137.

<sup>105</sup> ՀՀ ՀԶԿ ՊԿԱ, Ժ. 4045, ց. 1, գ. 215, ք. 1։

<sup>106</sup> «Հայրենիք», Բոստոն, 1920, էջ 31։

<sup>107</sup> Լ. Ա. Խուրշուդյան, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964, էջ 209։

<sup>99</sup> Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Է, Լոս Անջելես, 1952, էջ 316։

<sup>100</sup> ՀՀ ՀԶԿ ՊԿԱ, Ժ. 4045, ց. 1, գ. 3, ք. 35-36։

<sup>101</sup> «Շրագիր Ս. Դ Հնչակյան կուսակցության», Թիֆլիս, 1917։

<sup>102</sup> ՀՀ ՀԶԿ ՊԿԱ, Ժ. 4045, ց. 1, գ. 196, ք. 2-6։



նեությունը Անդրկովկասում: Այս կապակցությամբ, ահա թե ինչ էր գրում Հայ ռամկավարների օրգան «Վան-Տոսպը»․ «Հնչակյանությունը, որ հոս Կովկասի մեջ ավելի գտարյուն էր և բավականին ուժեղ, այժմ փաստորեն գոյություն չունի, որովհետև Ռուսական հեղափոխությունից հետո ան իր գոյության իրավունքը կորսնցուց, քանի որ իր կողքին կար անհամեմատ ավելի ուժեղ և միևնույն ատեն նույնադավան կուսակցություն մը, հանձին Ռ.Ս.դեմոկրատ կուսակցության»<sup>108</sup>:

Քաղաքական կողմնորոշման հարցում հնչակյանները արտահայտում էին ընդգծված ռուսամետ դիրքորոշում: Հնչակյան գործիչ Ռ. Պերպերյանին է պատկանում հետևյալ միտքը․ «Հայը չի կարող ապրել առանց Ռուսաստանի, ինչպես որքը՝ առանց խնամակալի»<sup>109</sup>: Ռուսաստանում ընթացող քաղաքական պայքարի խնդրում Կովկասի հնչակյանները գնալով ավելի ու ավելի են հակվում դեպի խորհրդային իշխանությունը: Օրինակ՝ կամավորական բանակի և Խ. Ռուսաստանի պայքարում, Թիֆլիսում լույս տեսնող հնչակյան «Գործավոր» թերթը իր նախապատվությունը և համակրանքը տալիս էր վերջինին<sup>110</sup>:

Պետք է ասել, որ ինչպես Անդրկովկասի, այնպես էլ դրսաշխարհում գործող հնչակյանները չեն եղել հայոց անկախ պետականության հետևողական պաշտպաններ: Նրանք, հավատարիմ իրենց առաջին ծրագրային հիմնադրույթներին, Հայաստանի անկախությունը դարձյալ չէին դիտում որպես վերջնաճակատակ, այլ նախկինի պես այն համարում էին միջոց՝ սոցիալիստական կարգերի հաղթանակի համար: Այնուամենայնիվ, ՀՀ անկախության նկատմամբ վերաբերմունքի հարցում որոշակի տարբերակում պետք է մտցնել ռուսահայ և գաղութահայ հատվածների հնչակյան կազմակերպությունների դիրքորոշումների միջև: Ակնհայտ իրողություն է այն, որ արտասահմանի հնչակյան մասնաճյուղերը համակրել ու օգնել են Հայաստանի նորանկախ պետությանը: Այս առնչությամբ Հնչակի պատմագիր Ա. Կիստուրը նկատում էր․ «1918 թ. ՀՀ հռչակումի առաջին օրեն իսկ արտասահմանի մեջ Հնչակյան կուսակցությունը, օրինակելի հայրենասիրությամբ տոգորված, զորավիգ կանգնեց ՀՀ, հակառակ նրա, որ իշխանությունը Դաշնակցությունը բռնազրաված էր»<sup>111</sup>: Այնպես որ՝ Հնչակի արտասահմանյան կազմակերպությունների գործունեությունը և դիրքորոշումները էապես տարբերվել են ռուսական ու կովկասյան հատվածների գործունեությունից: Դրսաշխարհի հնչակյան կազմակերպությունները, որպես կանոն, արտահայտվել են Հայաստանի անկախ պետականության օգտին, պաշտպանել են ՀՀ, ունեցել են արևմտյան քաղաքական կողմնորոշում: «Ունինք պետություն, գրում էր Ս. Սապահ-Գյուլյանը

ՀՀ վերաբերյալ, դա մերն է, դա մեր արյան, մեր կյանքի գնովն է առաջացել: Դա ամբողջ հայության նորածին զավակն է: Հարկավոր է նրան պահել, սնուցել, զարգացնել, ապահովել սպառնացող ամեն վտանգներից»<sup>112</sup>: Ասվածները գալիս են հաստատելու, որ իր ամբողջության մեջ Հնչակյան կուսակցությունը շարունակում էր մնալ որպես ազգային:

**ՍԴԲՀ «Սպեցիֆիկներ»**։ ՀՀ-ում աննշան թիվ էին կազմում նաև Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը կամ այսպես կոչված «սպեցիֆիկները»:

Դարասկզբին (1903 թ.) ռուսահայ իրականության մեջ ՀՅԴ-ից հեռացած սոցիալ-դեմոկրատական ընդգծված հայացքներ ունեցող երիտասարդ դաշնակցականների այս խումբը Բաքվում հիմնեց «բունդական» կազմակերպական կառուցվածք ունեցող ՍԴԲՀ կազմակերպությունը:

ՍԴԲՀ, կամ «սպեցիֆիկները»՝ իր դավանած գաղափարախոսությամբ, պաշտպանած ծրագրով ու գործելակերպով մենշևիկ-բունդական թեքման, մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպություն էր: Թեև մի շարք հարցերում այս կազմակերպությունը դրսևորել է ազգային վարքագիծ, բայց նրան պետք է դասել «ճախակողմյան» կուսակցությունների (մենշևիկ, էսէռ, բոլշևիկ) շարքում: 1907 թ. «սպեցիֆիկները» կազմեցին իրենց կազմակերպության ծրագրի և կանոնադրության նախագծերը: Ծրագրի նախագծում ընդգծվում էր կազմակերպության նվիրվածությունը սոց.- դեմոկրատական, մարքսիստական ուսմունքին, հայ բանվոր դասակարգի շահերի առաջնային պաշտպանությունը<sup>113</sup>: Ազգային հարցում սրանք պաշտպանել են հայության ազգային-մշակութային ինքնավարության պահանջը<sup>114</sup>: Նրանք վերապահումով էին մոտենում Տաճկահայ դատին՝ այն համարելով տաճկահայերի գործը<sup>115</sup>: Որպես սոցիալ-դեմոկրատներ՝ «սպեցիֆիկ» գործիչները այնքան էլ ոգեշնչված չէին հայ ազգային կուսակցությունների ազգայնական ձեռնարկներով: Մասնավորապես հայ կամավորական շարժման հանդեպ սառը և բացասական վերաբերմունք է ունեցել Դ. Անանունը<sup>116</sup>: Որպես ժողովրդավարական քաղաքական կազմակերպություն՝ ՍԴԲՀ ևս պաշտպանեց Ժամանակավոր կառավարությանը, իսկ 1918 թ. մայիսին՝ Հայաստանի անկախությունը: ՀՀ փուլում ՍԴԲՀ կազմակերպությունը Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման խնդրում նախապատվությունը տալիս էր Արևմուտքին ու մասնավորապես ԱՄՆ-ին: Օրինակ՝ սրանց գաղափարախոսներից Բ. Իշխանյանը գտնում էր, որ Հայաստանի համար նախ գերադասելի է ԱՄՆ-ի, ավա հետո Անգլիայի ու

<sup>108</sup> «Վան-Տոսպ», 26 մայիսի 1919 թ.:

<sup>109</sup> Հ. Գանգրունի, Հայաստանը 1920-21 և միջազգային դիվանագիտությունը, Պեյրոս, 1986, էջ 10:

<sup>110</sup> «Գործավոր», 24 մարտի 1919 թ.:

<sup>111</sup> Ա. Կիստուր, Նշվ. աշխ., հ. 3, Պեյրոս, 1962, էջ 11:

<sup>112</sup> «Երիտասարդ Հայաստան», 15 սեպտեմբերի 1920 թ.:

<sup>113</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ֆ. 1022, ց. 7, գ. 44, ք. 3-10:

<sup>114</sup> Դ. Անանուն, Նշվ. աշխ., հ. 3, էջ 95, «Նոր հոսանք», 1913, թիվ 2:

<sup>115</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ֆ. 1022, ց. 7, գ. 44, ք. 10-11:

<sup>116</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ֆ. 1022, ց. 7, գ. 96, ք. 29: Նույնը Դ. Անանուն, Նշվ. աշխ., հ. 3, էջ 560:

Ֆրանսիայի և միայն հետո Ռուսաստանի հովանավորությունը<sup>117</sup>։ Կարծում ենք, խնդրի նման գնահատականին պետք է մոտենալ տվյալ ժամանակաշրջանի քաղաքական համգամանքների և ուժերի հարաբերության տեսանկյունից։

«Սպեցիֆիկները» հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում էական դեր չէին խաղում։ Կազմակերպության կշիռն ու ազդեցությունը աննշան էր։ Բայց փոփոխված իրադրության պայմաններում նրանք ապրեցին գաղափարաքաղաքական զգալի հեղաշրջում և կանգնեցին Հայաստանի անկախության գաղափարի ու ազգային-պետական շահերի պաշտպանության դիրքերում։ Ավելի ուշ՝ 1920 թ. սկզբներին, ՍԴԲՀԿ-ը կազմակերպորեն ձևավորվեց որպես կուսակցություն։

Այսպիսով, վերոհիշյալ երեք արտախորհրդարանական կուսակցությունները իրենցից առանձնապես շոշափելի կշիռ չէին ներկայացնում հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում, ուստի և չունեին ու աշխատեցին էլ չունեցան իրենց ներկայացուցիչները ՀՀ խորհրդարանում։

### 3. Կառավարության առաջին ճգնաժամը

1918 թ. աշնանը տեղի ունեցավ կառավարության առաջին ճգնաժամը։ Հանրապետության սոցյալ-տնտեսական ու քաղաքական ծանր իրավիճակի թելադրանքով՝ բավականին բարդ հակասություն էր գոյացել խորհրդարանական մեծամասնության և կառավարության միջև։ Խորհրդարանի ներսում և նրա պատերից դուրս քննադատության թիրախ էր դարձել կառավարությունը, որովհետև անցնում էին ամիսներ և երկրում դրական տեղաշարժեր չէին նկատվում։ Սոցիալ-դեմոկրատ մենշևիկների օրգան «Կայծը» իր առաջնորդում գրում էր, որ արդեն երեք ամիս է անցել կառավարության հայտագրից, սակայն Հայաստանը շարունակում է մնալ վարչապետի իսկ բնորոշված՝ «ավերակների կույտ ու անձև քաոս» վիճակում<sup>118</sup>։ Մյուս կողմից կառավարական ճգնաժամի մյուս դրոշին այն էր, որ նա չունեւ պատգամավորական կայուն մեծամասնություն, որի վրա կարողանար հենվել։ Խորհրդարանը մի տեսակ անգործության էր մատնվել, լուրջ կերպով կաղում էր օրինաստեղծ աշխատանքը։

Ըննադատությունը գնում էր ոչ միայն ընդդիմության, այլև հենց իսկ դաշնակցականների կողմից։ Կառավարության հասցեին դժգոհության ու անբավականության ելույթներ եղան ՀՅԴ Հայաստանի շրջանային ժողովի նիստերի ժամանակ (1918 թ. սեպտեմբեր)։ «Գործերը դանդաղ են ընթանում, հայտնում էին շրջանային ժողովում ելույթ ունեցողները, ժողովուրդը դրական

աշխատանք չի տեսնում։ Գաղթականության գործերը անուշադրության են մատնված, և վարիչը այս ճգնաժամային թուլեին արձակուրդ է ստացել։ Վատ դրության մեջ է ժողովրդի պարենավորումը և այլն<sup>119</sup>։

Կառավարության ճգնաժամին, ինչ խոսք, նպաստեց նաև օրավուր խորացող հայ-վրացական սահմանային վեճը։ Այս առնչությամբ խորհրդարանում Զաջագունու կարիքները մեղադրվում էր՝ «ձախից»՝ արկածախնդրության, հրահրիչ քաղաքականության, իսկ «կենտրոնից» ու «աջից» պասիվության մեջ։

Չնայած սեպտեմբերի վերջերից փաստորեն սկսվել էր կառավարության ճգնաժամը, սակայն վարչապետը պաշտոնապես խորհրդարանին հրաժարական չէր ներկայացրել։

Այնուամենայնիվ, մինչև 1918 թ. հոկտեմբերը Հայաստանի պետականության հեղինակությունը և նրա գլխին կախված արտաքին՝ թուրքական մահաացու վտանգը իրենց դրոշմն էին թողնում հայ քաղաքական կուսակցությունների գործելակերպի վրա, հարկադրում նրանց հնարավորին չափ լինել ավելի զուսպ ու ըմբռնողական։ Բայց իրերի վիճակը կտրուկ կերպով փոխվեց 1918 թ. հոկտեմբերից հետո։ Թուրքիայի պարտությունից և Առաջին աշխարհամարտի ավարտից հետո մի շարք կուսակցություններ, մասնավորապես ՀՅԴ և ՀԺԿ, ձեռք բերեցին լավատեսություն և ավելի մեծ ինքնավստահություն։ Իսկ «ձախ» ընդդիմությունը ընկավ մի տեսակ հոռետեսության մեջ, որովհետև նա անկախ պետականություն կերտելու նպատակներ չէր հետապնդում։ Կնշանակի՝ 1918 թ. աշնան ամիսները հանդիսացան հայ քաղաքական կուսակցությունների դիրքորոշումների հստակեցման ժամանակաշրջան։

1918 թ. աշնանը, երբ մոտալուտ էր դարձել գերմանական դաշինքի երկրների, այդ թվում՝ Օսմանյան Թուրքիայի պարտությունը և Հայաստանում նշմարվում էին կայունացման որոշ միտումներ, իշխանատենչության հակումներ ցուցաբերող ժողովրդականները ցանկություն հայտնեցին մտնել կառավարության մեջ և ՀՅԴ-ի հետ միասին կիսել պատասխանատվությունը ժողովրդի, հայրենիքի ու պետության առաջ։ Այս կապակցությամբ հոկտեմբերի սկզբներին Թիֆլիսում գումարված ՀԺԿ երկրորդ խորհրդաժողովը կայացրեց հետևյալ որոշումը. «Ժողովը ի նկատի ունենալով Հայաստանի ներքին և արտաքին քաղաքական դրությունը, անհրաժեշտ է համարում, որ Հայաստանի կառավարությունը կազմվի կռալիցիոն սկզբունքով»<sup>120</sup>։ Այս հիման վրա ՀԺԿ ԿԿ սկզբունքային որոշում ընդունեց մտնել կռալիցիոն կառավարության մեջ<sup>121</sup>։ Հոկտեմբերի երկրորդ կեսին Թիֆլիսից Երևան ժամանեցին ՀԺԿ ԿԿ-ի անդամներ՝ Մ. Բերբերյանը, Գ. Մելիք-Ղարաբյոկյանը, Ս. Հարությունյանը, Լ. Ղուլյանը և ուրիշներ։ Հոկտեմբեր 31-ին կայացած ՀՅԴ և ՀԺԿ ներկայացուցիչների խորհրդակցությունում կայացվեց այդ համաձայնությունը։ ՀՅԴ -

<sup>119</sup> «Հորիզոն», 26 սեպտեմբերի 1918 թ.։

<sup>120</sup> «Ժողովուրդ», 6 հոկտեմբերի 1918 թ.։

<sup>121</sup> «Ժողովուրդ», 13 հոկտեմբերի 1918 թ.։

<sup>117</sup> «Ժողովուրդ», 15 նոյեմբերի 1919 թ.։

<sup>118</sup> «Կայծ», 2 նոյեմբերի 1918 թ.։

խորհրդարանական խմբակցության կողմից մասնակցում էին բժ. Ա. Ղազարյանը, Ս. Թորոսյանը և Հ. Սարգսյանը, իսկ ՀԺԿ խմբակցության կողմից՝ Ս. Հարությունյանը, Գ. Մելիք-Ղարազյոզյանը և Գ. Տեր-Խաչատրյանը<sup>122</sup>։ Ժողովրդականները պահանջում էին կառավարության կազմի կետը<sup>123</sup>։ Նախարար-նախագահ Հ. Քաջազունին միաժամանակ բանակցություններ էր վարում խորհրդարանի մյուս խմբակցությունների ավագների հետ՝ խառը կառավարություն ձևավորելու շուրջ։

ՀԺԿ-ից գատ՝ խառը կառավարության մեջ մտնելու հավակնություններ ունեին նաև սոցիալ-դեմոկրատները և էսեռները<sup>124</sup>։ Բանակցությունների ընթացքում պարզվեց, որ սոցիալ-դեմոկրատները պահանջում են առնվազն երկու տեղ և անպայման՝ ներքին ու արտաքին գործոց նախարարների արժույթը։ «Չախակողմյան» կուսակցությունները առանձնապես շատ էին խորշում ն.գ. նախարար Արամ Մանուկյանից, որը «կարգ պահելով» նրանց նկատմամբ վարում էր կոշտ ու զսպող քաղաքականություն։ Չախերն ուզում էին ստանձնել հատկապես այդ պորտֆելը, որպեսզի ազատ, հևափոխական գործունեություն ծավալելու լայն հնարավորություն ստանան։ Յուրահատուկ վարքագիծ ցուցաբերեցին էսեռները։ Նախնական հավակնություններից հետո նրանք հրաժարվեցին մտնել նոր կազմվելիք խառը կաբինետ։ Էսեռների անդրկովկասյան տարածաշրջանային կոմիտեն հավանություն տվեց խմբակցության այդ քայլին<sup>125</sup>։ Հայ էսեռները, հրաժարվելով համդերձ մտնել նոր կազմվելիք կառավարության մեջ, պահանջեցին, որ արտգործնախարարի պորտֆելը չորսվի ժողովրդականներին, իսկ ներք. գործերինը՝ սոցիալ-դեմոկրատներին<sup>126</sup>։ Բանակցությունների արդյունքում՝ խառը կառավարության մեջ մտնելուց հրաժարվեցին նաև սոց.- դեմոկրատները։ Վերջիններս խմբակցության ներկայացուցիչը հայտարարեց. «Դաշնակցության կուլի-ցիան Հայ ժողովրդական կուսակցության հետ ոչ միայն դրական փոփոխություն չի մտցնի կառավարության մեջ, այլ փաստորեն կնշանակի «ռեակցիայի ուժեղացում»<sup>127</sup>։

Պետք է ասել, որ ՀՅԴ առանձնապես մեծ հակում չունեի համագործակցելու «ձախ» ընդդիմության հետ։ ՀՅԴ ընդառաջ գնաց ՀԺԿ հետ կազմելու ՀՀ առաջին խառը կառավարությունը։ Բանակցությունները շարունակվեցին միայն «կենտրոնի» (ՀՅԴ) և «աջակողմի» (ՀԺԿ) միջև։ ՀՅԴ-ն կառավարությունը լավ էին հասկանում, որ իրենք խորհրդարանում չունեն կայուն մեծամասնություն՝ 46-ի դիմաց ընդամենը 18 տեղ։ Հասկանալի է, որ ձայների մեծան հարաբերակցության դեպքում կառավարության ամեն մի ձեռնարկ կամ

ծրագիր կարող էր խորհրդարանում տապալվել։ Ուստի՝ անհրաժեշտ էր գնալ փոխգիշման։ Դաշնակցությունը նախընտրեց համագործակցել ազգային նպատակներ հետապնդող ժողովրդականների հետ։

ՀՅԴ ընդառաջ գնաց ժողովրդականներին՝ հաշվի առնելով հետևյալ նկատառումները։ ՀՅԴ-ն ՀԺԿ կուսակցություններին արտաքին քաղաքականության հարցում իրար էին մերձեցնում այն, որ Հայկական հարցում երկուսն էլ, որպես ազգային կուսակցություն, գրեթե միական էին, իսկ ներքին սոցիալ-տնտեսական քաղաքականության ասպարեզում Դաշնակցությունը, ինքն իրեն անվանելով «սոցիալիստական», երես դարձրեց իսկական սոցիալիստներից, որովհետև գտնում էր, որ ընկերվարային բարենորոգումները ՀՀ-ում դեռևս անժամանակ են ու չհասունացած<sup>128</sup>։ Ամերիկահայ ճանաչված պատմաբան Ռ. Հովհաննիսյանի կարծիքով՝ Դաշնակցությունը Ժողովրդական կուսակցության հետ խառը կառավարություն կազմելու համաձայնություն տվեց նաև այն դրդապատճառով, որ «ակնկալվում էր ստանալ Արևմուտքի դրամատիկական պետությունների աջակցությունը, որովհետև Դաշնակցության ծրագիրը ընկերվարական էր։ Այս քայլը պիտի բարձրացներ հանրապետության հեղինակությունը»<sup>129</sup>։

Բայց միաժամանակ պետք է մատնանշել, որ «աջերի» կամ «ձախերի» հետ համագործակցության խնդրում Դաշնակցության շարքերում չկար միակարծություն։ Եթե ՀՅԴ Բյուրոն, կուսակցության հայաստանյան Կ. կոմիտեությունները հակված էին համագործակցելու աջերի հետ, ապա ՀՅԴ Վրաստանի հատվածը հավատարիմ իր սոցիալիստամետ ուղեգծին, ընդհակառակը, պահանջում էր իր երևանյան ընկերներից համագործակցել «ձախերի» հետ՝ «ստեղծել Հայաստանի սահմաններում միացյալ սոցիալիստական, դեմոկրատական ֆրոնտ, ընդդեմ բուրժուական կուսակցության ոռնակին»<sup>130</sup>։ «Մեր Երևանի ընկերները,- այնուհետև շարունակում էր ՀՅԴ Վրաստանի ԿԿ-ի և Թիֆլիսի կոմիտեի օրգան «Աշխատավորը»,- որոնք ինչ-ինչ պատճառներով թեքվել են դեպի բուրժուական կուլիցիան, պետք է հեռացնեն ու վերջացնեն իրենց այդ քաղաքականությունը»<sup>131</sup>։ Այնուամենայնիվ, համաձայնություն կայացնելով ժողովրդականների հետ՝ Դաշնակցությունը հույս ուներ (ՀԺԿ խմբակցության հետ միասին) խորհրդարանում ստեղծել կայուն մեծամասնություն և դրանով իսկ բարձրացնել խորհրդարանի աշխատանքի արդյունավետությունը։

Այսպիսի նախապատրաստական քայլերից ու նկատառումներից հետո՝ 1918 թ. նոյեմբերի 4-ին, գումարված խորհրդարանի նիստում լսվեց կառավարության հրաժարականի հարցը։ Խորհրդի նախագահ Ավ. Սահակյանը կարդաց վարչապետ Հ. Քաջազունուց ստացած հետևյալ դիմումը. «Ի նկա-

<sup>122</sup> ՀՀ ՊԿՊԱ, Զ. 199, ց. 1, գ. 10, ք. 1:

<sup>123</sup> «Հորիզոն», 10 նոյեմբերի 1918 թ.:

<sup>124</sup> ՀՀ ՊԿՊԱ, Զ. 404, ց. 1, գ. 2, ք. 1:

<sup>125</sup> «Հորիզոն», 10 հոկտեմբերի 1918 թ.:

<sup>126</sup> «Հորիզոն», 10 նոյեմբերի 1918 թ.:

<sup>127</sup> «Կայծ», 14 նոյեմբերի 1918 թ.:

<sup>128</sup> «Դրոշակ» 1920, քիվ 4-5, էջ 70:

<sup>129</sup> «Ասպարեզ», 28/29 մայիսի 1992 թ.:

<sup>130</sup> «Աշխատավոր», Թիֆլիս, 8 մայիսի 1919 թ.

<sup>131</sup> Նույն տեղում:

տի ունենալով այն, որ Հայաստանի խորհրդի մեծամասնության և կառավարության միջև ստեղծվել են այնպիսի հարաբերություններ, որոնք թույլ չեն տալիս կառավարությանը արդյունավետ աշխատանք կատարել, ուստի և կարիք են համարում ներկայացնել խորհրդին կառավարության հրաժարականը»<sup>132</sup>։ Պատգամավոր Ս. Թորոսյանը (ՀՅԴ խմբակցության կողմից) առաջարկում է ընդունել կառավարության հրաժարականը և հանձնարարել նույն Հ. Քաջազնունուն կազմել նոր կաբինետ։ Այս առաջարկին դեմ են արտահայտվում սոց.-դեմ. և էսեռական խմբակցությունները։ Սոցիալ-դեմոկրատները Հ. Քաջազնունու փոխարեն վարչապետի թեկնածու են առաջադրում Խ. Կարճիկյանին<sup>133</sup>։ Ի վերջո, ծայների մեծամասնությամբ (25 կողմ, 14 դեմ և 1 ձեռնպահ) հանձնարարվում է Քաջազնունուն կազմել նոր կառավարություն<sup>134</sup>։ Համաձայն նախնական պայմանավորվածության՝ նոր կաբինետը կազմվեց միայն ՀՅԴ և ՀԺԿ ներկայացուցիչներից։ «Չախակողմյան» սոցիալիստական կուսակցությունները չեզոքացվեցին խառը կառավարությանը մասնակցելուց։ Նոր կաբինետի ձևավորման առնչությամբ Հայ ժողովրդականների պաշտոնաթերթը իրավացիորեն զգուշացնում էր, որ այս կամ այն անհատի պաշտոնի առաջադրելիս պետք է հաշվի առնել ոչ թե նրա կուսակցական պատկանելությունը, այլ անձնական հատկանիշները, կարողություններն ու ընդունակությունը, «երկրին համար օգտակար ըլլալը»<sup>135</sup>։

Վարչապետ Հ. Քաջազնունու ներկայացմամբ նոր կառավարության մեջ մտան (4 դաշնակցական, 4 ժողովրդական և 1 անկուսակցական)։ Նրանք էին՝ Սիրական Տիգրանյան (արտ. գործ. նախ., ՀՅԴ), Արամ Մանուկյան (ներք. գործ. նախ. ՀՅԴ), Հովհաննես Հախվերդյան (գորական նախ., անկուս.), Արտաշես Էմֆիաջյան (ֆին. նախ., ՀԺԿ), Սամսոն Հարությունյան (արդար. նախ., ՀԺԿ), Միքայել Աթաբեկյան (ժող. լուսավ. նախ., ՀԺԿ), Լևոն Դուլյան (պարեն. նախ., ՀԺԿ), Խաչատուր Կարճիկյան (հանր. խնամատ. նախ., ՀՅԴ)<sup>136</sup>։

Այսպիսով, Դաշնակցությունը ստանձնեց վարչապետի, արտաքին, ներքին և խնամատարության նախարարությունները, իսկ ժողովրդականները՝ ֆինանսների, արդարադատության, պարենավորման և լուսավորության։ Թեև նախարարական պորտֆելները բաժանված էին հավասար, սակայն դժվար չէ նկատել, որ առանցքային նախարարական աթոռները զբաղեցնում էին ՀՅԴ ներկայացուցիչները։ Նախարարներ Ա. Էմֆիաջյանի, Մ. Աթաբեկյանի և Լ. Դուլյանի<sup>137</sup> բացակայության պատճառով, վարչապետ Հ. Քաջազ-

նունու հանձնարարությամբ ֆինանսների նախարարի պարտականությունը ժամանակավորապես դրվեց Խ. Կարճիկյանին<sup>138</sup>, լուսավորությանը՝ Ս. Հարությունյանի և պարենավորմանը՝ Ա. Մանուկյանի վրա։ «Ժողովրդի ծայնի» բնորոշմամբ իրենց կուսակցությունը «լծվեց հայկական պետական մակին»<sup>139</sup>։

Տեղին է նշել, որ Ֆինանսա-տնտեսական, վարչա-իրավական բնույթի աշխատանքների բնագավառներում ժողովրդական կուսակցության շարքերում կային բարձր կրթություն ու որակավորում ստացած ավելի մեծ թվով հմուտ մասնագետ կադրեր, քան Դաշնակցության։ Սակայն ինչպես տեսնում ենք, ժողովրդական նախարարները ամբողջ նվիրումով չէին կամենում երևանում աշխատել և զանազան պատրվակներով մեկնում էին Թիֆլիս և այլևս չէին վերադառնում կամ էլ պարզապես հրաժարվում էին իրենց պաշտոնից։ Ս. Վրացյանը ենթադրում էր, որ նրանք վախենում էին հիվանդություններից<sup>140</sup>։ Այդուհանդերձ, խորհրդի ընդդիմադիր խմբակցություններից մեկը՝ ժողովրդականները ևս դարձան կառավարող կուսակցություն։ Կոալիցիոն կառավարություն ստեղծելով, ՀՅԴ և ՀԺԿ կազմեցին խորհրդարանական մեծամասնություն և խորհրդարանի ղեկավար կենտրոնը մի փոքր թեքվեց «աջ»։ Ընդդիմության մեջ մնացին միայն էսեռները և սոց.-դեմոկրատները։ Վերջիններիս ընդդիմությունը ստացավ ավելի բացահայտ ու անհաշտ բնույթ։ Այս կապակցությամբ Ռ. Հովհաննիսյանը հայտնում է, որ չնայած «ձախ» (էսեռ և սոց.-դեմ.) խմբակցությունները թույլ էին, սակայն նրանց ընդդիմությունը «ուժեղանում էր մահմեդական առաջնորդների աջակցությամբ»<sup>141</sup>։

Ժողովրդականները, մտնելով կառավարության մեջ, նպատակ ունեին առաջին հերթին երկրում հաստատել կարգուկանոն, մի բան, որից խիստ կախում էր հանրապետությունը։ Սակայն կառավարության մի քանի ամիսների համատեղ աշխատանքը ցույց տվեց, որ այս խառը դահլիճը չդարձավ մեկ միասնական, համախումբ, կուռ ու համերաշխ կոլեկտիվ (մարմին)։ Նախարարությունները, ըստ կուսակցական պատկանելության, գործում էին իրարից անջատ, մի կողմը իրեն պատասխանատու չէր համարում մյուսի համար։ Նրանց միջև անվերջ մղվում էր ներքին պայքար, որն իր զագաթնակետին հասավ 1919թ. գարնանը (Մայիսի 28-ի կառավարության հայտնի հայտարարության կապակցությամբ)։

Միաժամանակ, հարկ է նշել, որ, ի տարբերություն կառավարության, այդ ընթացքում համեմատաբար ավելի արդյունավետ է եղել համագործակ-

<sup>132</sup> «Կառավարության լրաբեր», 12 նոյեմբերի 1918թ.։

<sup>133</sup> «Կայծ», 17 նոյեմբերի 1918թ.։

<sup>134</sup> «Կառավարության լրաբեր», 12 նոյեմբերի 1918թ., «Կայծ», 14 նոյեմբերի 1918թ.։

<sup>135</sup> «Ժողովրդի ծայն», Թիֆլիս, 9 նոյեմբերի 1918թ.։

<sup>136</sup> Ռ. Հովհաննիսյան, Հայաստանի հանրապետություն, հ.1, էջ 64 (անգլերեն)։

<sup>137</sup> Պաշտոնավարությունից մեկ ամիս չանցած Մ. Աթաբեկյանը հրաժարական տվեց։ Նրան փոխարինեց Գ. Մելիք-Ղարաբաղյանը /ՀԺԿ/, իսկ Լ. Դուլյանին փոխարինեց Զ. Վերմիշյանը։

<sup>138</sup> Այդ նշանակումից մի քանի օր անց՝ նոյեմբերի 13-ին, Խ. Կարճիկյանը սպանվում է իր աշխատասենյակում։ Նրա փոխարեն հանրային խնամատարության նախարար է նշանակվում Ալ. Խատիսյանը։ 1919թ. հունվարի վերջերից /Ա. Մանուկյանի մահից հետո/ վերջինիս վրա դրվեց նաև ներք. գործ. նախարարի պարտականությունները։

<sup>139</sup> «Ժողովրդի ծայն», Թիֆլիս, 10 նոյեմբերի 1918թ.։

<sup>140</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 199։

<sup>141</sup> Ռ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ.1, էջ 153 (անգլերեն)։

ցությունը ՀՅԴ և ՀԺԿ խորհրդարանական խմբակցությունների միջև, «ձախերի» դեմ մղվող պայքարում. սրանք, որպես կանոն, հանդես են եկել միասնաբար, իսկ ընդունված օրենքներն ու որոշումները, որպես կանոն, եղել են երկուսի համատեղ ձայնատվության արդյունք:

Այսպես հաղթահարվեց կառավարական առաջին ճգնաժամը և կազմվեց կռալիցիոն կառավարություն: Սակայն այդ ընթացքում չսվեց ու չքննարկվեց Քաջագունու նոր կաբինետի հայտագիրը՝ ծրագրվող արտաքին ու ներքին քաղաքական կուրսի, մոտեցումների, իրականացվելիք սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրների մասին և այլն: Պետաիրավական տեսակետից սա նշանակում էր խորհրդարանի գերակայության նսեմացում ու անտեսում, որի համար սոց.-դեմոկրատները և էսեռները մեղադրեցին կառավարությանը և կառավարող կուսակցություններին օրինազանցության մեջ: Գնահատելով այս փաստը՝ կարելի է ասել, որ չնայած վարչապետը չէր փոխվել, սակայն կաբինետի կուսակցական և թվային կազմը ավելի քան կիսով չափ փոխվել էր, ուստի և իրավական ու բարոյական տեսակետից կատարածեր վարչապետի հայտագիրը, մասնավորապես որ այդ ժամանակ քաղաքական համագամաքները կտրուկ կերպով փոխվել էին և հարկավոր էր խորհրդարանին տեղյակ պահել վարվելիք արտաքին քաղաքական կուրսին: Քաջագունու խառը կաբինետի հայտագիրը խորհրդարանում չլսելու և չքննելու դրդապատճառները բազմաթիվ են: Կարծում ենք, դրանցից ամենագորավորն այն էր, որ Դաշնակցության և ժողովրդականների տնտեսական պլատֆորմները իրարից զգալիորեն տարբերվում էին. սոցիալիստ Քաջագունու համար բավականին դժվար էր միաժամանակ մեկտեղել ու արտահայտել բուրժուական համարվող ժողովրդական նախարարների հայացքներն ու մոտեցումները տնտեսական քաղաքականության խնդրում:

Այս ամենով հանդերձ՝ վարչապետ Հ. Քաջագունուն վիճակված չէր երկար մնալու իր պաշտոնում: 1918-1919թ. սոսկալի ձմեռը բացասաբար անդրադարձավ թե՛ կառավարության և թե՛ հատկապես վարչապետի քաղաքական դիրքի ու հեղինակության վրա:

Երբ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո պատերազմում պարտված Թուրքիան իր գործերը հետ քաշեց նաև Արևելյան Հայաստանից, հայ ժողովուրդը, փորք-ինչ թեթևացած շունչ քաշեց: Բայց երկիրը տնտեսապես հայտնվել էր աննկարագրելի ծանր դրության մեջ: Որպեսզի պարզ լինի, թե ինչպիսի վնասներ էր պատճառել թուրքական արշավանքը 1918 թ., բավական է հիշատակել մի երկու փաստ: Հաշվումները ցույց են տվել, որ թուրքական զորքը և թաթարական հրոսակախմբերը Անդրկովկասում ոչնչացրել, թալանել ու ավերել են 329 հայկական գյուղ, որի անմիջական նյութական վնասը կազմել է 460 մլն. ռուբլի (1914 թ. համադրելի գներով)<sup>142</sup>: 1918 թ. վերջերին թուրքերի հետ քաշվելուց հետո միայն Ալեքսանդրապոլի գավառին հասցված նյութական վնասները, ըստ քաղաքագլուխ Լևոն Սարգսյանի հաղորդած

տվյալների, հասնում էր 2 մլրդ. ռուբլու (1918թ. համադրելի գներով)<sup>143</sup>: Պատերազմի և այլ պատճառներով Հայաստանի ավերված տնտեսությունը վերականգնելու համար ֆինանսների նախարար Ա. Էնֆիաջյանի մոտավոր հաշվարկներով կպահանջվեին 25 տարի<sup>144</sup>: Չմեռվա ցրտի պայմաններում արևելահայությունը իր հարյուր հազարավոր արևմտահայ գաղթական եղբայրների ու քույրերի հետ հայտնվեց սովի ոսկրոտ ճիւղաններում:

Նոր տարում՝ 1919թ. հունվարի 3-ից, վերսկսվեցին խորհրդի աշխատանքները: Հայ-վրացական պատերազմը նոր էր ավարտվել: Մահացու շրջափակման պայմաններում սովն ահռելի չափերի էր հասել: Սովի հետ միասին տարածվում էր համաճարակը: Երևանում կային բժավոր տիֆով 2100 հիվանդներ: Այս նիստում խորհուրդն օրենք ընդունեց խնամատարության նախարարությանը 1 մլն. ռուբլի բաց թողնելու մասին՝ բժավոր տիֆի համաճարակի դեմ պայքարելու համար<sup>145</sup>: Սովն ու համաճարակը օրական խլում էին մոտ 2000 կյանք:

Ստեղծված վիճակի համար քննադատության հիմնական թիրախ էր դարձել Քաջագունու կաբինետը: ՀՅԴ Բյուրոյի անդամ Ս. Վրացյանի խմբագրած «Չանգ» պաշտոնաթերթի առաջնորդողներից մեկում կարդում ենք. «Թե՛ մայրաքաղաք Երևանում և թե՛ գավառում մենք իշխանություն չունենք դեռ: Ամեն տեղ կան բավական առատ չինովնիկներ ու միլիցիոներներ, որոնք թուրք են գրում, ռոճիկ են ստանում, որոնցից շատերը կաշառք են ուտում, մարդ են ծեծում, զեղծումներ են կատարում, բայց պաշտոնություն պետական մտքով, կազմակերպված իշխանություն, ադմինիստրացիա չունենք, դժբախտաբար»<sup>146</sup>: Հիմնական կառավարող կուսակցության պաշտոնաթերթը փաստեր էր բերում պաշտոնյաների զեղծումների ու շահատակությունների վերաբերյալ<sup>147</sup>:

Քաջագունու կաբինետից առավել ևս դժգոհ էին «ձախ» կուսակցությունները: Նրանց մամուլում առանձնապես մեծ դժգոհություն էր արտահայտվում կառավարության ֆինանսա-տնտեսական գործունեությունից, պարենավորման ու գաղաթականության խնդիրներում ցուցաբերվող անտարբերության նկատմամբ: Հայ մեմշեիկների պաշտոնաթերթ «Կայծը» Քաջագունու կաբինետը որակում էր որպես «իմպոտենտ»<sup>148</sup>: «Չախ» խմբակցությունները քննադատում էին նաև կառավարության արտաքին քաղաքականությունը, մասնավորապես հայ-վրացական պատերազմի հարցում հավասարապես մեղադրում էին նաև Հայաստանի կառավարությանը: Պարենային սուր ճգնաժամի կապակցությամբ խորհրդարանի հունվարյան նիստերից մեկում պատ-

<sup>143</sup> «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 26 դեկտեմբերի 1918թ.:

<sup>144</sup> Նույն տեղում:

<sup>145</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.202, ց.1, գ.41, ք.3:

<sup>146</sup> «Չանգ», 14 փետրվարի 1919թ.:

<sup>147</sup> «Չանգ», 31 հունվարի 1919թ.:

<sup>148</sup> «Կայծ», 8 դեկտեմբերի 1918թ.:

<sup>142</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.291, ք.49:

գամավորներ Թ. Ավդալբեկյանը (սոց.-դեմ.) և Դ. Զուրյանը (էսէռ) նույնիսկ խորհրդարան մտցրեցին կառավարության հրաժարականի հարցը<sup>149</sup>։ Խորհրդի հունվարի 25-ի նիստում «ձախերը» բանաձև ներկայացրին Քաջագնունու խառը կաթինետին անվտանգություն հայտնելու մասին։ Նրանք պահանջում էին փոխել կառավարության ներքին և արտաքին կոշտ քաղաքականությունը հարևանների և ներքին թուրքերի նկատմամբ, վարել ավելի մեղմ ու զիջող քաղաքականություն<sup>150</sup>։ Սակայն բանաձևը մերժվեց ՀՅԴ և ՀԺԿ գերակշիռ ձայններով։

Հաշվի առնելով Հայաստանի տնտեսական ու հատկապես պարենային աղետալի վիճակը՝ հայ-վրացական պատերազմի հետևանքով առաջացած շրջափակումը, Հայաստանի խորհուրդը 1919թ. փետրվարի 4-ի նիստում որոշեց հանրապետության վարչապետ Հ. Քաջագնունուն գործուղել Եվրոպա ու Ամերիկա՝ համաձայնության (Անտանտի) պետություններից և ԱՄՆ-ից խնդրելու օգնություն՝ պարեն և առաջին անհրաժեշտության ապրանքներ<sup>151</sup>։ Գործուղման ծախսերի համար հատկացվեց 550 հազ. ռուբլի<sup>152</sup>։

Անշուշտ, անձամբ վարչապետին արտասահման գործուղելու գործում կային քաղաքական մոտիվներ. ՀՅԴ կուսակցության ղեկավարությանը այնքան էլ դուր չէր գալիս Քաջագնունու վարած լույս ներքին ու արտաքին քաղաքականությունը։ Հ. Քաջագնունին աշխատում էր կուսակցությանը հեռու պահել պետական կառավարման գործերին խառնվելուց։ Այդ իսկ պատճառով էլ արտասահման գործուղելը դարձավ պատրվակ նրան հեռացնելու կառավարության գործնական ղեկավարի պաշտոնից։

Բայց մյուս կողմից պետք է տեսնել, որ 1919թ. սկզբներին Հայաստանում ճարակած սոսկալի սովը, ցուրտը, համաճարակը պահանջում էին կառավարությունից անմաքաբոր մակարդակով քայլեր ձեռնարկել այս ու այն տեղից կենսագոյության միջոցներ հայթայթելու։ Իրոք, հանրապետության պարենային վիճակը շատ ծանրացավ հատկապես այն բանից հետո, երբ 1918թ. վերջերին (դեկտեմբերի 6-ին) թուրքական զորքերը, Արևելյան Հայաստանից հետ քաշվելով, իրենց հետ տարան կամ ոչնչացրին հացամթերքն ու պարենը, որպեսզի կոտորածներից փրկված հայությունը այժմ էլ սովից ոչնչանա։ Կ. Պոլսի ամերիկյան օգնության բաժնի պաշտոնական գործակալը այդ օրերին հեռագրում էր. «Ոչ մի տեղ հաց չկա։ Երևանում 45000 մարդ մնացել է առանց հացի։ Քաղաքի որբանոցները և զորքը սարսափելի դրության մեջ են։ Իգդիրի շրջանում չի մնացել ո՛չ ձի, ո՛չ շուն, ո՛չ կատու, ո՛չ ուղտ և ո՛չ մի այլ կենդանի։ Տեսա կանանց, որոնք իրար ձեռքից խլում են սատկած ձիու միսը։ Մի շաբաթ ևս և տասը հազար մարդկային կյանք կորած են...»<sup>153</sup>։

Տվյալներ կան, որ սովի հետևանքով Սուրմալուի գավառի բնակչության 60 տոկոսը մահացել էր<sup>154</sup>։ Մեռնում էր հիմնականում բնավեր եղած ու սովահար արևմտահայ գաղթականությունը։

1919 թ. փետրվարի 20-ին խորհրդարանի հանձնարարությամբ Սուրմալուի գավառ գործուղվեց խորհրդարանական մի հանձնաժողով՝ կազմված հինգ խմբակցությունների մեկական ներկայացուցիչներից։ Սուրմալուն պարենային տեսակետից գտնվում էր, թերևս, ամենաաղետալի վիճակում։ Հանձնաժողովին տրված էր ամենալայն լիազորություններ՝ ծանոթանալու գավառի վիճակին, ստուգելու պաշտոնատար մարմինների գործունեությունն ու հաշիվները և հանցանք կամ զեղծում նկատելու դեպքում դրանց հեղինակներին անհապաղ պաշտոններից հեռացնելու<sup>155</sup>։

Հանձնաժողովի աշխատանքը տևեց տասը օր։ Նա եղավ Իգդիրում, Կողբում և մի քանի գյուղերում, ուր տեղում ուսումնասիրեց պարենավորման և առհասարակ գործերի վիճակը, լսեց տեղի բազմազգ /հայ, թուրք, բուրդ/ ազգաբնակչության բազմաթիվ ու բազմաբնույթ բողոքներն ու ցավերը և աշխատեց հնարավորին չափ ընթացք ու լուծում տալ գավառի ու նրա բնակչության պահանջներին։

Նկատենք, որ Հայաստանում բնակվող թուրք ազգաբնակչությունը համեմատաբար ապահովված էր հացով, իսկ նրա դրկից հայությունը զանգվածորեն մեռնում էր սովահարությունից և ոչ մի օգնություն չէր ստանում նրանից։ Տեղացի մահմեդական ազգաբնակչությունը հաց ու պարեն չէր տալիս սովահար հային ու եզդուն։ Նրանք դա պատճառաբանում էին նրանով, որ Նախիջևանից ու Կարսից իրենց թուրք ղեկավարները հրամայել էին, որ «Հային հաց չտալ, հային սովամահ անել...»<sup>156</sup>։ Հասկանալի է, որ այս հանգամանքը պետք է բացասաբար անդրադառնար երկու ժողովուրդների հետագա փոխհարաբերությունների վրա։

Ահավոր սովի պայմաններում անհատ մարդկանց ու կազմակերպությունների կողմից հանրապետություն ներկրվող մթերքների մուտքը խրախուսելու նպատակով կառավարությունը (առանց սպասելու խորհրդարանի համապատասխան օրենքին) որոշում կայացրեց այն մասին, որ ՀՀ սահմանները փոխադրվող բոլոր տեսակի մթերքները ենթակա չեն բռնագրավման ու հարկման<sup>157</sup>։

1919 թ. հունվարի 25-ի խորհրդարանի նիստում պարենավորման մասնարարի տված զեկուցումից պարզվում է, որ Հայաստանում առկա բնակչության առնվազն կեսը բոլորովին հաց չուներ, իսկ մինչև մոր բերքահավաք պահանջվում էր 5,2 մլն. փութ ցորեն<sup>158</sup>։ Եվ պատահական չէր, որ այդ սոսկալի

<sup>149</sup> «Ձանգ», 7 փետրվարի 1919թ.։

<sup>150</sup> «Կայծ», 13 փետրվարի 1919թ.։

<sup>151</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 15, ք. 116։

<sup>152</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 86, ք. 27։

<sup>153</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 131, ք. 38։

<sup>154</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 422, ք. 25։

<sup>155</sup> «Ձանգ», 21 մարտի 1919թ.։

<sup>156</sup> «Ձանգ», 12 փետրվարի 1919թ.։

<sup>157</sup> «Արձագանք», Եկատերինոդար, 17 փետրվարի 1919թ.։

<sup>158</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 15, ք. 88-89։

ձմռան ընթացքում սովին, ցրտին, համաճարակին և այլ աղետների զոհ գնաց մոտ 150 հազ., իսկ որոշ տվյալներով 180 հազ. մարդ՝ հիմնականում գաղթականություն<sup>159</sup>:

Ահա, մի երկու խոսքով՝ այսպիսին էր կացությունը, որը և թելադրում էր կառավարական պատվիրակությունն արտասահման գործուղելու անհրաժեշտությունը: Հայաստանի խորհրդի փետրվարի 18-ի նիստում հաստատվեց վարչապետի գրավոր առաջարկությունը՝ իր բացակայության ժամանակամիջոցում ներք. գործոց նախարար Ալ. Խատիսյանին վարչապետի պաշտոնակատար նշանակելու մասին: Բացառությամբ էսէռների՝ մյուս խմբակցությունները հավանություն տվեցին վարչապետի առաջարկությանը<sup>160</sup>:

Ստեղծված պայմաններում մինչ վարչապետը կգործուղվեր արտասահման, խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը մեկնեց Թիֆլիս՝ մեծ տերությունների ներկայացուցիչներից օգնություն հայցելու<sup>161</sup>: Միաժամանակ, խորհրդարանը որոշում ընդունեց պարենավորման նպատակով դիմել Փարիզի միջազգային պարենավորման կոմիտեին և նույն նպատակով պատվիրակություն ուղարկել Հյուսիսային Կովկաս՝ այնտեղից որոշ օգնություն ստանալու<sup>162</sup>:

Ինչպես տեսնում ենք, խորհրդարանն ու կառավարությունը պարենավորման ուղղությամբ որոշ քայլեր ձեռնարկեցին: Սակայն դրանք բավականին ուշացած էին:

#### 4. Հայկական հարցը և արտաքին քաղաքականության խնդիրները

Թեև արտաքին քաղաքականությունը գործադիր իշխանության՝ կառավարության իրավասության ոլորտ է, բայց և այնպես՝ օրենսդրական կտրվածքով խորհրդարանը հաճախ անդրադարձել է այս բնագավառի հիմնախնդիրներին:

Ամենից առաջ խորհրդարանը արձագանքեց 1918թ. սեպտեմբերին Բաքվում տեղի ունեցած հայերի կոտորածին: Խորհրդի հոկտեմբերի 26-ի նիստում, Ավ. Սահակյանի նախագահությամբ, քննվեց օրինագիծ՝ Բաքվի աղետյալ հայերին 200 հազ. ռուբլի նպաստ տալու մասին<sup>163</sup>: ՀՅԴ խմբակցության առաջարկով խորհուրդը անբավարար համարեց 200 հազարը և միաձայն որոշեց օգնության չափը հասցնել 500 հազար ռուբլու<sup>164</sup>: Այդ նպաստի տնօ-

<sup>159</sup> Ա. Խատիսյան, *Նշվ. աշխ.*, էջ 118, Ս. Վրացյան, *Նշվ. աշխ.*, էջ 192:

<sup>160</sup> «Ժողովուրդ», 28 փետրվարի 1919:

<sup>161</sup> «Հառաջ», 6 հունվարի 1920թ.:

<sup>162</sup> «Զանգ», 7 փետրվարի 1919թ.:

<sup>163</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 15, ք. 1:

<sup>164</sup> Նույն տեղում, ք. 6, Ժ. 200, ց. 1, գ. 86, ք. 10:

րինման ու Բաքվի աղետյալներին բաշխման գործը հանձնարարվում է Ադրբեջանում նոր նշանակում ստացած Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին: Միաժամանակ, խորհուրդը, հիմք ընդունելով էսէռական խմբակցության բանաձևը, իր բողոքի ձայնը բարձրացրեց՝ նշավակելու այն գազանությունները, որոնք թուրք վայրենի հրոսակները գործադրել էին Բաքվի խաղաղ ազգաբնակչության նկատմամբ:

Բաքվի հայերի սեպտեմբերյան ջարդերի առնչությամբ նախարար-նախագահ Հ. Քաջազունին պաշտոնական տեղեկանք է տալիս այդ մասին<sup>165</sup>: Բաքվի ողբերգության կապակցությամբ խորհրդի նիստում էսէռ և սոց.-դեմ. պատգամավորների կողմից քննադատական մեղադրանքներ ուղղվեցին Հայաստանի կառավարության հասցեին, որ նա գտնվել է անտարբեր ու պասիվ դիտողի դերում, երբ 1918 թ. ամռանը թուրքական զորքերը Հայաստանի հյուսիսով Դիլիջանով, շարժվում էին դեպի Բաքու: Բուլշևիկ պատգամավոր Ա. Մելիքյանի և ձախակողմյան մյուս պատգամավորների կողմից նման մեղադրանքները զնահատելուց առաջ նախ պետք է հստակ պատկերացնել, թե ռազմա-քաղաքական ինչպիսի ծանր ու անկայուն վիճակում էր հայտնվել Բաքումի պայմանագիրը նոր ստորագրած նորանկախ, փոքրիկ, թույլ ու անօգնական Հայաստանի Հանրապետությունը: Գտնում ենք, որ ճիշտ էր վարվում Քաջազունուն կաբինետը, երբ աշխատում էր խոհեմ ու հավասարակշիռ քաղաքականությամբ Հայաստանը գերծ պահել Թուրքիայի հետ հնարավոր զինաբխիսումից ու սադրանքից, քանզի հակառակ դեպքում այն կարող էր վերջանալ ավելի մեծ ողբերգությամբ՝ ամբողջ արևելահայության բնաջնջումով:

Իր հերթին, պատմական անաչառությունը պահանջում է ասել, որ Անդրկովկասի բուլշևիկների առաջնորդ Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունան մի քանի ամիս շարունակ կարողացավ իր վրա գրավել թուրքական գլխավոր հարվածային ուժերը և դրանով իսկ օբյեկտիվորեն նպաստել Հայաստանի Հանրապետության ամրակայմանը: Այս առնչությամբ ճիշտ է նկատել Ս. Վրացյանը. «Առանց Բաքվի, Հայաստանի դեպքերը կարող էին այլ ընթացք ստանալ»<sup>166</sup>:

Պատմական ճշմարտություն է նաև այն փաստը, որ 1918թ. գարնանը Բաքվի քաղաքական անցքերի և դեպի Բաքու թուրքական զորքերի հարձակման ամբողջ վեց ամիսների ընթացքում տեղի է ունեցել տեղի բուլշևիկների և դաշնակցականների ռազմաքաղաքական համագործակցություն՝ ընդդեմ թուրքերի: Մեր կարծիքով, հիմնավոր ու պատճառաբանված չէ խորհրդային հեղինակներ՝ Ծ. Աղայանի, Ա. Կադիշևի, Խ. Բադալյանի, Ե. Սարգսյանի և այլոց այն պնդումը, թե Բաքվի կոմունայի անկման և 26 կոմիսարների զնդակահարման պատճառներից էր «դաշնակների դավաճանական գործունեութ-

<sup>165</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 15, ք. 3-4, «Ժողովուրդ», 6 նոյեմբերի 1918թ.:

<sup>166</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 157:

յունը»<sup>167</sup>։ Նշենք, որ առաջին անգամ մնան մեղադրանքով հանդես եկավ Հայկական գործերի կոմիսար Վ. Ավանեսովը՝ 1918թ. վերջերին տրված ռադիոգրով<sup>168</sup>։ Եթե թուրքական ինտերվենցիայի (մերխուժման) ժամանակ դաշնակցական առանձին գործիչներ (Մ. Արզումանյան, Մ. Հարությունյան) բանակցությունների փորձեր են արել թուրքերի հետ, ապա միայն այն բանի համար, որպեսզի հնարավորին չափ մեղմեն թուրքերի կողմից հայերի կոտորածները։ Պրոֆ. Խ. Բաղալյանի այն պնդումը, թե, ի կատարումն Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածի, Բաքվի հայ ազգային խորհուրդը պետք է քաղաքից դուրս բերեր հայկական զորամասերը<sup>169</sup>, այս կապակցությամբ ուղղակի հիշեցնենք, որ ՀՀԴ Բաքվի կենտրոնական կոմիտեությունը և նրա ազդեցության տակ գտնվող Բաքվի հայ ազգային խորհուրդը նախ բողոքել են Բաթումի դաշնագրի դեմ, չեն ենթարկվել դրա որոշումներին և կուսակցության ապակենտրոն սկզբունքի համաձայն, հաշվի առնելով իրենց տեղական պայմաններն ու առանձնահատկությունները՝ փաստորեն գործել են ինքնուրույն՝ շարունակելով համագործակցել Կոմունայի զինված ուժերի հետ։ ՀՀԴ-ի կողմից այդ պայքարը ղեկավարում էին Բյուրոյի անդամներ՝ Ռոստոմը և Ա. Գյուլխանդանյանը։ 1918 թ. հուլիսի 25-ի Բաքվի սովետի ընդլայնված նիստում Ստ. Շահումյանի արած հայտարարությունից իսկ երևում է, որ ընդհուպ մինչև Կոմունայի անկումը՝ Բաքվի դաշնակցականները ճանաչել են խորհրդային իշխանությունը թե՛ Ռուսաստանում և թե՛ Բաքվում և աջակցել նրան<sup>170</sup>։ Իսկ թե ինչու ընկավ Կոմունան, դա արդեն Դաշնակցության և Հայաստանի կառավարության մեղքը չէր։ Կոմունայի պարտության պատճառները պետք է փնտրել Հյուսիսային Կովկասից ու Խորհրդային Ռուսաստանից նրա կտրվելու, ընդհանուր շրջափակման և ներքին պաշարների ու հնարավորությունների սպառման մեջ։

\*\*\*

Հայաստանի խորհրդարանի և քաղաքական կուսակցությունների համար 1918թ. վերջերին արտաքին ոլորտի ամենատար խնդիրներից էր հայկական սահմանային վեճը։ Լոռու և Ախալքալաքի շրջանների համար տարածքային այս վեճը դարձավ մի տեսակ հայ-վրացական «Էլզաս-Լոթարինգիա»։ Սպառնելով խնդրի խաղաղ, քաղաքական կարգավորման բոլոր

<sup>167</sup> Ծ. Աղայան, Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիան և Բաքվի 1918թ. Սովետական իշխանությունը, Ե., 1948, էջ 24-25, Ա. Ե. Кадышев, Интервенция и гражданская война в Закавказье, М., с. 128-129, Խ.Հ. Բաղալյան, Դաշնակների կոնտռոլությունը գործունեության մի քանի փաստերի մասին /1918-1920թթ./ Ե., 1955, էջ 16-17, Ե. Ղ. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918, Ե., 1964, էջ 405 եւ ուրիշներ։

<sup>168</sup> «Հոկտեմբերյան սոց. մեծ ռևոլյուցիան...», էջ 256-258։

<sup>169</sup> Խ.Հ. Բաղալյան, Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918թ. Ե., 1962, էջ 37, նույնի, Դաշնակների կոնտռոլությունը գործունեության մի քանի փաստերի մասին /1918-1920թթ./, Ե., 1955, էջ 17-18։

<sup>170</sup> Ստ. Շահումյան, ԵԼԺ, հ. 5, Ե., 1978, էջ 216։

պաշարները, այն վերաճեց երկշաբաթյա զինաբախման, որը նույնպես վերջնականորեն չլուծեց կնճիոր։

Զինաբախման պատճառն այն էր, որ 1918թ. հունիսին վրացական գործը Գերմանիայի աջակցությամբ մուտք գործեց Բորչալուի գավառի Լոռու շրջանը և ժամանակավորապես գրավեց այն, իբրև թե կանխելու թուրքերի առաջխաղացումը դեպի Թիֆլիս։ Իսկ երբ 1918թ. վերջին թուրքերը հետ քաշվեցին Անդրկովկասից, վրացիները ոչ միայն իրենց գործերը դուրս չբերեցին Լոռու գոտուց, այլև սկսեցին բռնություններ գործադրել բնակչության մեծամասնությունը կազմող հայության նկատմամբ<sup>171</sup>։ Վրաստանում Հայաստանի հավատարմատար Ա. Ջամալյանի վրաց վարչապետ Ն. Ժորդանիային տված այն հարցին, թե երբ է վրացական գործը դուրս բերվելու ժամանակավորապես գրավված Լոռու շրջանից, վարչապետը պատասխանում է, որ «ժամանակավոր» բառը ոչինչ չի նշանակում և որ Լոռին իրենց ձեռքին է գտնվում՝ «իբրև պատմական Վրաստանի մի մաս»<sup>172</sup>։ Պետք է ասել, որ վրաց քաղաքական շրջանների մոտ արմատացած էր այն թյուր մտայնությունը, թե ցարիզմի կամայական վարչական բաժանումներով ստեղծված Թիֆլիսի նահանգը /այդ թվում Լոռին և Ախալքալաքը/ ամբողջությամբ վրացական պատմական տարածք է։ Ի դեպ՝ նույնպիսի համոզմունք ու հավակնություն ուներ նաև Ադրբեջանը՝ նախկին Ելիզավետպոլի նահանգի, ավելին՝ Երևանի նահանգի մի շարք գավառների նկատմամբ։

ՀՀ դիվանագիտական առաքելությունը Վրաստանում 1918թ. հոկտեմբերի 17-ին Հայաստանի արտ. գործ. նախարարին ուղղված գրությունում հայտնում էր, որ «Վրաց կառավարությունը մտադրություն ունի գրավելու Ախալքալաքի գավառը և սպասում է թուրքերի հեռանալուն։ Արդեն նշանակել են պաշտոնավորներին»<sup>173</sup>։ Եվ սա այն դեպքում, երբ գավառի ազգաբնակչության 77 տոկոսը կազմում էին հայերը և միայն 6,5 տոկոսը վրացիները<sup>174</sup>։

Եվ ահա 1918թ. աշնանը հայ-վրացական հակամարտության խորացման պայմաններում խորհրդարանը իր նիստերում մի քանի անգամ անդրադարձավ այդ խնդրին։ Ձեռնարկված քայլերի մասին զեկուցում տվեց և պատգամավորների հարցերին պատասխանեց վարչապետ Հ. Քաջազունին։ Օրինակ, հոկտեմբերի 26-ի թիվ 31 նիստում 27 ձայնով ընդունվեց հետևյալ որոշումը. «Հայ-վրացական խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով Հայաստանի խորհուրդը համձնարարում է կառավարությանը բանակցություններ սկսել վրաց կառավարության հետ՝ կոնֆերանս գումարելու սահմանագիծը որոշելու համար»<sup>175</sup>։ Դեկտեմբերի 14-ին ընդունված բանաձևում

<sup>171</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ֆ.200, ց.1, գ.99, թթ.3, 24։

<sup>172</sup> Նույն տեղում, թ.6։

<sup>173</sup> Նույն տեղում, թ.19։

<sup>174</sup> Նույն տեղում, թ.20։

<sup>175</sup> «Հորիզոն», 10 նոյեմբերի 1918թ., «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թիվ 3, էջ 129։



վրաց խորհրդարանը հույս էր հայտնում, որ «կառավարությունը բոլոր միջոցները կծեռնարկի, որպեսզի պաշտպանի պետությունը այն թշնամիներից, որոնց միակ ցանկությունը երկու հարևան ժողովուրդների միջև արյունալի բնդ-հարումներ ու երկրում անխախտություն առաջացնելն է»<sup>176</sup>։ Այստեղ դժվար է կռահել, թե վրաց խորհրդարանը «թշնամի» ասելով ո՞ւմ նկատի ուներ։ Կարծում ենք, ամենից ավելի հավանական է, որ նկատի ուներ «ՀՅ Դաշնակցություն» կուսակցությանը ու նրա կառավարությանը և ավելի քիչ հավանական է՝ Թուրքիային և կամ Ռուսաստանին։

Այդուհանդերձ, խորհրդարանների խաղաղասիրական կոչերը արդյունք չտվեցին։ Քաղաքական, խաղաղ միջոցներով չկարողանալով լուծել Լոռի-Ախալքալաքի տարածքային վեճը, մի քանի նոտաների փոխանակումից հետո սկսվեց պատերազմ՝ Հայաստանի և Վրաստանի միջև։ Չնայած ձայների մեծամասնությամբ խորհրդարանը հավանություն տվեց կառավարության վարած քաղաքականությանը, սակայն այնտեղ բացորոշ ի հայտ եկան երկու հակադիր հոսանքներ։ Ազգային թևը՝ ՀՅԴ և ՀԺԿ խմբակցությունների մեծամասնությունը կառավարությունից պահանջում էին ավելի վճռական քայլեր, իսկ ոչ ազգային՝ ձախակողմյան խմբակցությունները, հանդես գալով պատերազմների մերժման պացիֆիստական դիրքերից, հավասարապես քննադատում էին Հայաստանի և Վրաստանի կառավարություններին՝ գտնելով, որ անբույլատրելի է հարցի ուժային լուծումը։ Այդ օրերին հայ սոցիալ-դեմոկրատ մենչևիկների օրգան «Կայծը» հավասարապես քննադատում էր հայ և վրաց ազգայնամուլներին։ «Նացիոնալիստական կրքերը, - գրում էր Արկոմեդը, - մեզանում բորբոքման այն աստիճանի են հասել, որ մի «Կռքերի» (կիսակայարան Լոռիում -Ա.Հ.) կամ «Շահալուի» խնդիրը կարող է նորեն տակնուվրա անել մեր երկիրը և վտանգել մասնավորապես հայ ժողովրդի գոյությունը»<sup>177</sup>։ Մեկ այլ տեղ «Կայծը» դաշնակցականների սարքած ավանտյուրա էր համարում հայ-վրացական պատերազմը, որ «կարող էին ձեռնարկել միայն դաշնակցականների նման անհեռատես ու հակաժողովրդական քաղաքական գործիչները»<sup>178</sup>։ Որ հայ սոց. - դեմոկրատները ավելի հակված էին դեպի վրաց մենչևիկները, երևաց նրանից, որ երբ Անգլիայի և Ֆրանսիայի անդրկովկասյան ներկայացուցիչները պահանջեցին, որ վրացական զորքը մնա իր տեղում՝ Խրամ գետի ափին, իսկ հայկական զորքերը հետ քաշվեն Լոռու գրավյալ տարածքներից մինչև իրենց ելման դիրքերը՝ Ջալալօղլի-Քոլագերան գիծը, խորհրդարանի ղեկավարների 26-ի նիստում երեք կուսակցությունների (ՀՅԴ, ՀԺԿ, Էսեռ) խմբակցությունները բողոքեցին դաշնակիցների առաջարկած պայմանի դեմ։ Մինչդեռ սոց.-դեմ. խմբակցությունը «հանուն խաղաղության հաստատման» առաջարկեց ընդունել դաշնակիցների առաջարկը<sup>179</sup>։ Պայքա-

րելով հայ և վրաց ազգայնականների դեմ՝ հայ սոցիալ-դեմոկրատների նպատակն էր մերժեցնել ու միավորել Անդրկովկասի ու Ռուսաստանի ժողովուրդներին, միջազգային դեմոկրատիային։ Ըստ մենչևիկ գործիչների՝ ստացվում է, որ գերազանցապես հայաբնակ Լոռու և Ախալքալաքի հայության օրինական շահերի ու անվտանգության պաշտպանությունը և Վրաստանի զավթողական ձգտումներին արգելափակոց դնելը նացիոնալիզմ է հայերի կողմից ու հավասարաբեռ վրացականին։

Արդեն ընթացող ռազմական գործողությունները դադարեցնելու և կոնֆլիկտը հարթելու նպատակով Լոռի մեկնեց խորհրդարանական հանձնաժողով։ Նրանում ընդգրկված էին Գ. Տեր-Խաչատրյանը (ՀԺԿ), Մ. Հարությունյանը (ՀՅԴ), Ս. Խաչատրյանը (ՀՅԴ), Ա. Խոնդկարյանը (Էսեռ), Ս. Մամիկոնյանը (անկուս.) և զորավար Ղորղանյանը<sup>180</sup>։ Խորհրդարանական պատվիրակությունը, անշուշտ, օգտակար դեր խաղաց արյունահեղության շուտափույթ դադարեցման գործում։

Այն բանից հետո, երբ 1919թ. հունվարին անգլո-ֆրանսիական զինվորական հրամանատարության ներկայացուցիչների միջնորդությամբ Լոռին հայտարարվում է չեզոք գոտի, ու տեղի է ունենում ռազմագերիների փոխանակում, դրանից հետո երկու դրկից հանրապետությունների միջև հարաբերություններն սկսեցին նորմալանալ ու նույնիսկ բարելավվել։ 1919թ. փետրվարի 28-ին երկու հանրապետությունները պաշտոնապես ճանաչում են միմյանց անկախությունը<sup>181</sup>։

ՀՀ արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը եղել է Հայկական հարցի լուծումը։ Ինչպես հայտնի է, 1918թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարով Թուրքիան կապիտուլյացվեց և պարտավորվեց իր զորքերը դուրս բերել նաև Անդրկովկասից ու Հայաստանից։ 1918թ. նոյեմբերի 11-ին կապիտուլյացիայի ենթարկվեց նաև Գերմանիան և դրանով ավարտվեց Առաջին աշխարհամարտը։ Բաթումի պայմանագիրը իր ուժը պահպանեց մինչև համաշխարհային պատերազմի ավարտը՝ 1918թ. նոյեմբերը։ Այս առնչությամբ տեղին ենք համարում հիշեցնել, որ իրականությանը չի համապատասխանում պրոֆ. Խ. Բաղալյանի այն փաստարկը, թե 1918թ. օգոստոսի սկզբին Հայաստանի խորհրդարանը վավերացրել էր Բաթումի պայմանագիրը և իբրև այդ առթիվ տեղի է ունեցել զորահանդես<sup>182</sup>։ Իրականում այդ պայմանագիրը չի վավերացվել ոչ Հայաստանի և ոչ էլ Թուրքիայի խորհրդարանների կողմից։ Այն չի ընդունվել նաև Բրեստի պայմանագիրը ստորագրած պետությունների կողմից։ Բաթումի պայմանագրի մասին խոսք է եղել միայն Հայաստանի կառավարության հայտագրում, որը, սակայն, միջազգային պայմանագրի վավերացման արարողակարգ չէ։

<sup>176</sup> *Документы и материалы..., с. 467.*

<sup>177</sup> «Կայծ», 9 նոյեմբերի 1918թ.։

<sup>178</sup> «Կայծ», 29 դեկտեմբերի 1918թ.։

<sup>179</sup> «Կայծ», 29 դեկտեմբերի 1918թ.։

<sup>180</sup> «Ժողովուրդ», 22 դեկտեմբերի 1918թ.։

<sup>181</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.95, ք.99։

<sup>182</sup> Խ. Հ. Բաղալյան, Գերմանա-թուրքական օկուպանտները Հայաստանում 1918թ., Երևան, 1962, էջ 46։

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հայաստանի խորհրդարանի քննարկումների նյութ դարձավ Հայկական հարցը: Իմանալով, որ շուտով, 1919թ. սկզբին, Փարիզում բացվելու է խաղաղության կոնֆերանս որոշվեց՝ որպես հաղթանակած Անտանտի «փոքր դաշնակից», Հայաստանի պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ ներկայացնելու համար հայկական պահանջները: 1918թ. դեկտեմբերի սկզբին Հ. Օհանջանյանը Լոզանից հեռագրում էր Հայաստանի կառավարությանը և խորհրդարանին. «Դաշնակիցները, հայերին ընդունելով իբրև իրենց կողմից կռվող տարր, ճանաչում են Հայաստանի անկախությունը և իրավունք են տալիս մասնակցելու կոնֆերանսին: Շուտով ուղարկեցեք պատգամավորներ պետք եղած մանդատներով»<sup>183</sup>: Թեև Հայաստանը Փարիզի խաղաղության կոնֆերանսին պաշտոնապես հրավիրված չէր, սակայն հանրապետության պահանջներն այնտեղ ներկայացնելու համար դեկտեմբերի 3-ին խորհուրդը ձայների մեծամասնությամբ որոշեց Եվրոպա ուղարկել պատվիրակություն, որի ղեկավար նշանակվեց Ավետիս Ահարոնյանը<sup>184</sup>: Խորհրդի մի քանի փակ միստերում քննության առնվեցին Հայաստանի կառավարության կողմից Եվրոպա պատվիրակություն ուղարկելու և դրա կարգավիճակի (իրավասության սահմանների) հետ կապված հարցերը: Տրվեցին հրահանգներ, որոնք պետք է դրվեին պատվիրակության գործունեության հիմքում<sup>185</sup>:

Դարձյալ ՀՀԴ և ՀԺԿ խորհրդարանական խմբակցությունների համաձայնությամբ որոշվեց, որ Փարիզի խաղաղության կոնֆերանս մեկնող պատվիրակության կազմը և նրան տրվելիք ղեկավար հրահանգները պետք է որոշի ոչ թե խորհրդարանը, այլ՝ կառավարությունը: Այս բանի դեմ բուռն կերպով բողոքեցին «ձախերը»<sup>186</sup>: Նրանք իրենց բողոքը հիմնավորում էին այն բանով, որ գերագույն իշխանությունը խորհրդարանն է և ոչ թե կառավարությունը, ուստի՝ երկրի ու ժողովրդի համար կարևորագույն հարցերի վճռման իրավունքը վերապահվում է խորհրդարանին: «Կենտրոն» և «աջակողմյան» խմբակցությունները անհանգստանալու հիմքեր չունեին, քանզի կառավարությունը կազմված էր իրենց ներկայացուցիչներից: Վերջիններս սկսեցին ավելի հաճախ հաշվի չնստել ձախակողմյան խմբակցությունների հետ և պետության ու ժողովրդի համար կարևոր հարցերը վճռելու իրավունքը հանձնել կառավարությանը, որպեսզի «ձախերը» այդ գործում, որևէ մասնակցության ու միջամտության հնարավորություն չունենան:

Կառավարող և խորհրդարանում կայուն մեծամասնություն կազմող «Կենտրոն», և «աջակողմյան» խմբակցությունները սկսեցին ավելի հաճախակի դիմել նման քայլերի, որպեսզի մեկուսացնեն «ձախերին» երկրի քաղա-

քական կյանքին մասնակցելուց: Այս գործելակերպի համար, մեր կարծիքով, հիմք հանդիսացավ նաև արտաքին նպաստավոր այն հանգամանքը, որ 1918 թ. աշնանը, հայ ժողովրդի ռիսկին թշնամի Օսմանյան Թուրքիայի պարտությունից հետո Հայաստանի կառավարությունը ինքնավստահություն ձեռք բերեց և սկսեց այլևս բանի տեղ չդնել «ձախերին»՝ Հայաստանի և հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի պատասխանատվությունը կիսելու իմաստով: Ինքնին հասկանալի է, որ նման գործողությունների հետևանքով ինքնաբերաբար նեղացվում ու սահմանափակվում էր գերագույն իշխանության խորհրդարանի դերը: Խորհրդարանը միայն ձայների մեծամասնությամբ որոշում կայացրեց պատվիրակության նախատեսվելիք ծախսերի համար բաց թողնել 700 հազ. ռուբլի վարկ: Էսեռ և սոցիալ-դեմոկրատ խմբակցությունները պահանջեցին, որ այդ գումարը կրճատվի կիսով չափ՝ թողնելով 340 հազ. ռուբլի<sup>187</sup>: Եվ սա այն դեպքում, երբ Վրաստանի նույնատիպ պատվիրակության կարիքները հոգալու համար վրաց պառլամենտը որոշել էր հատկացնել 1,5 մլն. ռուբլի<sup>188</sup>:

1918 թ. դեկտեմբերի 5-ին և 7-ին նախարարների խորհուրդը, լսելով վարչապետի զեկուցումը Եվրոպա պատվիրակություն ուղարկելու մասին, որոշեց ստեղծել պատվիրակություն հետևյալ կազմով. Ա. Ահարոնյան (նախագահ, ՀՀԴ), Մ. Պապաջանյան (ՀԺԿ) և Հ. Օհանջանյան (ՀՀԴ), վերջինս գտնվում էր Բեռլինում և նրանց պետք է միանար Փարիզում: Միաժամանակ, հաստատվեց պատվիրակության գործունեության հրահանգը<sup>189</sup>: Նշենք, որ պատվիրակության հետ Եվրոպա մեկնեցին նաև արևմտահայ ներկայացուցիչներ՝ Վ. Փափազյանը և Տ. Թերզիբաշյանը<sup>190</sup>: Ընդհանուր թվով պատվիրակությունը խորհրդականների, քարտուղարների և այլ օժանդակ աշխատակիցների հետ միասին կազմել է 14 մարդ<sup>191</sup>: Խորհրդի էսեռական և սոց. դեմոկրատական խմբակցությունները շատ էին ուզում ընդգրկվել պատվիրակության կազմում և մասնակցել բանակցություններին<sup>192</sup>: Դրա համար էլ նրանք պահանջում էին ընդլայնել պատվիրակության կազմը: Սակայն հաշվի առնելով, որ սոցիալ-դեմոկրատները և էսեռները իրենց քաղաքական դիրքորոշումներով ու գաղափարական մոտեցումներով, ըստ էության, դեմ էին Հայ Դատին, նրանց ներկայացուցիչների առկայությունը արհեստական խոչընդոտներ ու բարդություններ կարող էր ստեղծել պատվիրակության կանոնավոր ու արդյունավետ աշխատանքի համար, մերժվեց նրանց առաջարկը: Սահմանվեց պատվիրակության իրավասությունների շրջանակը:

<sup>183</sup> «Ժողովուրդ», 11 դեկտեմբերի 1918թ.:

<sup>184</sup> Ռ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, Հ. 1, էջ 251, (անգլերեն), նաև «Լրաբեր» 1994, թիվ 1, էջ 102:

<sup>185</sup> «Ժողովուրդ», 4 և 6 դեկտեմբեր 1918 թ.:

<sup>186</sup> «Կայծ», 8 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>187</sup> «Ժողովուրդ», 25 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>188</sup> «Նոր հորիզոն», 1 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>189</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 80, Հ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ. էջ 328:

<sup>190</sup> «Կայծ» 30 հունվարի 1919 թ.:

<sup>191</sup> «Ժողովուրդ», 25 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>192</sup> «Հառաջ», Թիֆլիս, 14 հունվարի 1919 թ.:

ՀՀ պատվիրակության խնդիրն էր՝ իրենց առաջարկություններով, խնդրանքներով, ծանոթություններով, հանրային նպաստավոր կարծիք ստեղծելու միջոցով, հաղթած տերությունների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա: Դեկտեմբերի 7-ին պատվիրակությանը հրահանգ տրվեց Փարիզի խաղաղության վեհաժողովում պաշտպանել Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը, այսինքն՝ Անդրկովկասի հայկական շրջաններից և տանկահայ նահանգներից ստեղծել մեծ Հայաստան: Տաճկաստանից պահանջվելու էին հայկական վեց վիլայեթները առանց ոչ հայաբնակ ծայրագավառների ու սեփական ելքով դեպի ծով: Ընդ որում՝ առանձին ծանոթագրությամբ պատվիրակությանը լիազորում էին, որ տարածքային պահանջները ըստ կարիքի կարող են կրճատվել՝ ընդունելով նվազագույնը երեք վիլայեթ (Վան, Բաղեշ և Էրզրում) առանց ոչ հայաբնակ ծայրագավառների: Ի դեպ, դեպի ծով տանող ելքին տրվելու էր ավելի կարևորություն, քան տարածքային մեծությունը<sup>193</sup>: Դաշնակցության որոշ գործիչներ՝ Ռ. Տեր-Մինասյանը, Հ. Զաչազյանին հանդես էին գալիս ավելի համեստ պահանջներով: Վերջինս նույնիսկ գտնում էր, որ պետք չէ դեպի ծով ելք պահանջել, իսկ Կիլիկիայի մասին առհասարակ խոսք չկար: Համեմատության համար ասենք, որ եթե ՀՀ-ի հիմնականում գոհանում էր ավելի չափավոր սահմաններով, ապա Ժողովրդականները, որոնք կոալիցիայի մեջ էին Դաշնակցության հետ, պնդում էին ծովից ծով Հայաստանի վրա՝ Կիլիկիայի հետ միասին:

Միաժամանակ, ՀՀ պատվիրակությանը հանձնարարվեց համագործակցել Պողոս Նուբար փաշայի գլխավորած Արևմտահայ Ազգային պատվիրակության հետ և միասնաբար պաշտպանել Հայոց Դատը:

Դեկտեմբերի 4-ին Գևորգ Ե կաթողիկոսը 1912 թ. իր իսկ կողմից նշանակված Հայ Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշային հղած նամակով իրազեկ էր պահում վերջինիս, որ ՀՀ կառավարության կողմից մի պատվիրակություն է ուղարկվում Եվրոպա՝ առաջիկա միջազգային կոնգրեսում Հայ Դատը պաշտպանելու և դրան արևմտական լուծում տալու առաքելությամբ: Կաթողիկոսը հորդորում է փաշային երկու պատվիրակություններով միախորհուրդ գործելու և Հայ արդար դատը հաղթական հանգրվանին հասցնելու<sup>194</sup>:

1919 թ. հունվարի 18-ին Փարիզում բացվեց խաղաղության վեհաժողովը: Հայաստանի պատվիրակությունը Փարիզ հասավ փետրվարի սկզբին: Հասնելով Փարիզ՝ հենց սկզբից էլ սառնություն ու հակամարտություն առաջացավ ՀՀ և Պողոս Նուբարի պատվիրակությունների միջև, որոնք էլ անկասկած իրենց բացասական ազդեցությունն ունեցան Հայկական հարցի դրական լուծման ընթացքի վրա: Հայկական երկու պատվիրակությունների միջև առկա սառնությունը ուղղակի անդրադարձն էր այն շերտանստվածքի, որ գո-

յություն ուներ արևելահայության՝ ի դեմս Արարատյան Հանրապետության (ինչպես որ արևմտահայ շատ գործիչներ անվանում էին Հայաստանի Հանրապետությանը) և Կովկասի արևմտահայ գաղթականության ու առհասարակ դրսաշխարհի գաղութահայության միջև: Պետք է նկատել, որ այդ շրջանում մի տեսակ խորթություն ու խուլ դժգոհություն էր գոյացել արևելահայության և արևմտահայության միջև: Վերջիններս, ինչպես հարկն է, մասնակից չէին հանրապետության պետական և հասարակական կյանքին: Արևմտահայերի այն ժամանակվա տրամադրություններին արտահայտող Անդրանիկը, Բաթումի դաշնագրից հետո, հարկադրված իր գործամասով և 25 հազար գաղթականներով հեռացել էր 12 հազ. քառ. կիլոմետրանոց հանրապետության սահմաններից և ամրացել Չանգեզուրում՝ օտարոտի /անբարյացակամ/ դիրք գրավելով, «թուրքերի ձեռքով ստեղծված» Հայաստանի Հանրապետության նկատմամբ<sup>195</sup>: Ի կատարումն Բաթումի հաշտության պայմանագրի 5-րդ հոդվածի՝ 1918 թ. հուլիսի 6-ին Հայկական կորպուսի հրամանատար գեմ.-լեյտենանտ Թ. Նազարբեկյանի հրամանով Անդրանիկն իր ջոկատով հեռացվել էր Հայկական կորպուսի կազմից<sup>196</sup>:

Արևմտահայության համար ավելի մեծ հեղինակություն էր Պողոս Նուբարը, քան ՀՀ կառավարությունը: Այս մտայնության մեջ 1919 թ. փետրվարի 6-13-ը Երևանում հրավիրվեց Արևմտահայերի 2-րդ համագումարը, որի պատգամավորները ընտրվել էին գաղթականներից՝ ընդամենը 55 մարդ: Համագումարի օրակարգը հիմնականում նվիրված էր արևմտահայ գաղթականության հետագա ճակատագրի հիմնահարցին: Այդ համագումարում զարգացվեց նաև արևելահայ և արևմտահայ հատվածների միավորմամբ մեկ միասնական պետության ստեղծման գաղափարը: Այնտեղ ընդունվեց քաղաքական բանաձև *Ազադ և Միացյալ Հայաստան* ստեղծելու մասին: Պահանջվում էր նաև դատարանով պատժել Հայոց Մեծ Եղեռնի դահիճներին<sup>197</sup>:

Սկզբնական փուլում Հայկական հարցի լուծումը վեհաժողովում կարծես որևէ կասկած չէր հարուցում: Միայն հարցն այն էր, թե քանի նահանգ և ինչ տարածք պետք է միացվեր Հայաստանին: 1919 թ. փետրվարի 12-ին հայկական երկու պատվիրակությունները մշակեցին և ընդունեցին հայկական բաղձանքներն արտահայտող մի հուշագիր (memorandum), որով պահանջվում էր ստեղծել Միացյալ և Անկախ Հայաստան մեկ ամբողջական տարածքի վրա: Արևմտահայ յոթը նահանգները՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքի, Խարբերդի, Սվազի և Տրապիզոնի մի մասը՝ դեպի ծով ելքի համար, Կովկասահայաստանը Արցախի հետ միասին և Կիլիկիայի չորս սանջակները, մի խոսքով՝ լայնատարած մի պետություն՝ Սև ծովից մինչև Միջերկրական<sup>198</sup>:

<sup>193</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 183, ք. 7, Ա. Խատիսյան, ՀՀ ծագումը և զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 117:  
<sup>194</sup> «Ժողովուրդ», 27 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>195</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 254:

<sup>196</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 112, ք. 17:

<sup>197</sup> Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 254-258:

<sup>198</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 291, ք. 28:

1919 թ. փետրվարի 26-ին Ա. Ահարոնյանը և Պողոս փաշան մասնակցեցին Տասի խորհրդի նիստին և ներկայացրին հայկական պահանջները<sup>199</sup>։ Հայկական միացյալ պատվիրակությունը կոնֆերանսին ներկայացրեց նաև վերոհիշյալ պահանջների սահմաններով գծված ապագա Մեծ Հայաստանի համապատասխան քարտեզը<sup>200</sup>։ Հայկական պահանջների հուշագիրը վավերացվեց 1919 թ. փետրվարի 24-ից մինչև ապրիլի 21-ը Փարիզում գումարված Արևմտահայ Ազգային համագումարում<sup>201</sup>։

Խաղաղության վեհաժողովին ներկայացվող հայկական պահանջների փաստաթղթի տակ կար ինչպես Պողոս փաշայի, այնպես էլ Ա. Ահարոնյանի ստորագրությունը։ Վերջինս ՀՀ կառավարության կողմից լիազորված էր պաշտպանելու առավելագույնը արևմտահայ 6-7 մահաճգններից մինչև նվազագույնը 3-4 մահաճգն։ Եվ ահա Փարիզում գաղութահայության ճնշմամբ և ընդհանուր ոգևորության պայմաններում նա ստորագրում է դաշմակից տերություններին ներկայացվող ծովից ծով Հայաստան ստեղծելու պահանջների հուշագրի տակ։ Ավելացնենք, որ, բացի գաղութահայ ռամկավարներից, Միացյալ Հայաստանի գաղափարը Կիլիկիայի հետ միասին, հետևողականորեն պաշտպանում էին նաև գաղութահայ հնչակյանները<sup>202</sup>։ Ծովից ծով Հայաստան ստեղծելու պահանջին կողմ էին նաև գրեթե բոլոր արևմտահայ դաշմակցականները<sup>203</sup>։

Բացի Միացյալ և մեծ Հայաստան ստեղծելու պահանջից, այդ փաստաթղթում խոսվում էր Հայաստանի մանդատի, նրա Ազգերի լիզա մտնելու, պատերազմից կրած վնասների դիմաց հատուցումներ ստանալու մասին։ Վերոհիշյալ պահանջ-առաջարկները հիմնավորելու համար հուշագրում փաստական տեղեկություններ էին բերվում հայերի տեղահանությունների, կոտորածների, բռնագրավումների և նրանց կրած ամեն տեսակ զրկանքների մասին<sup>204</sup>։ Օրինակ, Հայաստանի պատվիրակությունը Փարիզի խաղաղության վեհաժողովին էր ներկայացրել աշխահամարտի տարիներին հայ ժողովրդի կրած նյութական վնասների չափը, որը կազմել էր 14 մլրդ. ֆրանկ<sup>205</sup>։

Նկատի ունենալով, որ խաղաղության վեհաժողովում Մեծ տերություններից Հայաստանի նկատմամբ առանձնապես մեծ հետաքրքրություն էր հանդես բերում ԱՄՆ-ը, հայկական պատվիրակությունները ցանկություն հայտնեցին Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի հովանավորությունը (խնամակալությունը, մանդատը) հանձնել ԱՄՆ-ին կամ էլ նոր կազմվելիք Ազգերի լիգային։ Մասնավորապես ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը շատ

էր հետաքրքրվում Հայաստանով և հույս կար, որ ԱՄՆ-ը կստանձնի Հայաստանի մանդատը։ Ա. Ահարոնյանը իր քաղաքական օրագրում 1919 թ. մարտի 28-ի ամսաթվի տակ նշում էր, որ «Ամբողջ Հայաստանը՝ Կիլիկիայից մինչև Կովկաս տրվելու էր Ամերիկայի մանդատի տակ»<sup>206</sup>։ Ապրիլի 24-ի թվակիր մի գեկուցագրի մեջ նույն Ա. Ահարոնյանը հայտնում էր, որ «Ամերիկայի թե՛ հասարակական կարծիքը, և թե՛ նախագահ Վ. Վիլսոնը մեր մանդատի ջերմ պաշտպաններից են։ Արգելքը շարունակում է մնալ Մոնրոյի սկզբունքը»<sup>207</sup>։ Այս գեկուցագրից մի քանի օր առաջ՝ ապրիլի 17-ին Վ. Վիլսոնը, ընդունելով հայ պատվիրակներ՝ Ահարոնյանին և Պողոս փաշային, հավաստիացրել էր, որ «Եթե երբևէ Ամերիկան որևէ երկրի մանդատը ընդունելու լինի, ապա դա կլինի անպայման Հայաստանը»<sup>208</sup>։ 1919 թ. մայիսի 14-ին Չորսի խորհուրդը որոշեց Հայաստանի մանդատը տալ ԱՄՆ-ին։ Ազգերի լիգան ևս որոշում է Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին։ Ծրագրվում էր, որ մանդատի տևողությունը պետք է լիներ 10 տարի, որը երկկողմ համաձայնությամբ կարող էր երկարաձգվել։ Հայաստանի մանդատը ստանձնելու դեպքում՝ ԱՄՆ-ը Հայաստան պետք է ուղարկեր 50 հազար ամերիկյան զինվոր՝ երկիրը պաշտպանելու համար<sup>209</sup>։ Բայց Ա. Ահարոնյանի տեղեկացմամբ՝ 1919 թ. սեպտեմբեր-հոկտեմբերից արդեն ձայներ էին լսվում Ամերիկայի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու կասկածելիության մասին<sup>210</sup>։ Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի արտգործ. նախարար Լորդ Բերգոնը մի առիթով Պ. Նուբար փաշային հայտնել էր, որ Ամերիկյան Հայաստանի մանդատը չի ընդունի<sup>211</sup>։ Իրոք, 1920 թ. հունիսի սկզբին Ամերիկյան սենատը՝ 52 ձայնով ընդդեմ 33-ի մեծեց ընդունել Հայաստանի մանդատը<sup>212</sup>։ Ումանք դա պատճառաբանել են նրանով, որ Հայաստանը Ազգերի լիգայի անդամ չէ<sup>213</sup>։ Մի այլ վավերագրի իրազեկմամբ՝ Հայաստանի մանդատը չընդունվելու գլխավոր դրոշմապատճառը եղել է զորավար Ջ. Հարբորտի ներկայացրած գեկուցագիրը, որում պարունակված նյութը և տրված եզրակացությունը չեն եղել հօգուտ մանդատի<sup>214</sup>։ Պետք է նկատի ունենալ, որ Հայաստանի մանդատը ընդունելու դեպքում ԱՄՆ-ը հինգ տարում պիտի ծախսեր 757 մլն. դոլար<sup>215</sup>։

Հայկական հարցի կապակցությամբ էական է հայ քաղաքական կուսակցությունների արտահայտած դիրքորոշումները Հայաստանի մանդատի և նրա քաղաքական կողմնորոշման հարցերում։ Հայ քաղաքական կուսակ-

<sup>206</sup> Ա. Ահարոնյան, *Սարդարապատից մինչև Սեւր և Լոզան, Պոսքըն, 1943, էջ 19*։

<sup>207</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, գ. 1, զ. 35, թ. 118։

<sup>208</sup> Նույն տեղում։

<sup>209</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, գ. 1, զ. 548, թ. 119, նաև «Աշխատավոր» 30 ապրիլի 1920 թ.։

<sup>210</sup> Ա. Ահարոնյան, *նշվ. աշխ.*, էջ 29։

<sup>211</sup> Ա. Ահարոնյան, *նշվ. աշխ.*, էջ 31։

<sup>212</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, գ. 1, զ. 576, թ. 133։

<sup>213</sup> Նույն տեղում, թ. 176։

<sup>214</sup> Նույն տեղում, գ. 2, զ. 7, թ. 1։

<sup>215</sup> Հայաստանը միջազգային դիվ... փաստաթղթերում, Ե, 1972, էջ 611։

<sup>199</sup> Ա. Ահարոնյան, *Սարդարապատից մինչև Սեւր և Լոզան, Պոսքըն, 1943, էջ 10*։

<sup>200</sup> «Արձագանք», *Եկատերինոդար, 21 մարտի 1919 թ.*։

<sup>201</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, գ. 1, զ. 35, թ. 149։

<sup>202</sup> «Երիտասարդ Հայաստան», 28 օգոստոսի 1920 թ.։

<sup>203</sup> «Ասպարեզ», 28/29 մայիսի 1922 թ.։

<sup>204</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, գ. 1, զ. 291, թ. 28, «Վեմ», 1934, թիվ Ե/5, էջ 30։

<sup>205</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, գ. 1, զ. 291, թ. 231։

ցությունների մեծամասնությունը՝ ՀՅԴ, ՀԺԿ, Հայ ռամկավարները, «սպեցիֆիկները» այդ ժամանակ արտահայտվում էին Հայաստանի արևմտյան կողմնորոշման (արևելման) օգտին, իսկ սոցիալ-դեմոկրատները և էսէռները ապավինում էին միայն ռուսական հովանավորությանը:

Այսպիսով, Հայկական հարցում ՀՀ պատվիրակությունը գործել է նախարարների խորհրդի տված հրահանգի շրջանակներում: Սակայն նա, հայ ազգային պատվիրակության հետ միասին, պաշտպանել է Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծման առավելագույն պահանջը:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

### 1. Օրինաստեղծ աշխատանքը

Ինչպես ընդունված է ամբողջ աշխարհում, խորհրդարանների գործունեության հիմնական առաքյալը, ինչին որ կոչված են դրանք, հանդիսանում է օրինաստեղծ աշխատանքը, անհրաժեշտ իրավական դաշտի ստեղծումը, որը և պետք է ապահովի տվյալ երկրի բնականոն կենսագործունեությունը: Խորհրդարանը կյանքի, ժամանակի պահանջների թելադրանքով ստեղծում է ինչպես իր սեփական մշակած օրենքները, այնպես էլ ընդօրինակում ու հարմարեցնում է դրսի շատ օրենքներ:

Անկախության հռչակումից հետո, չնայած հանրապետության տնտեսական և քաղաքական դժնդակ պայմաններին, այնուամենայնիվ, նորակազմ խորհրդարանն ու կառավարությունը առանձին ճիգեր գործադրեցին եվրոպական ժողովրդավարական երկրների օրինակով կազմակերպելու և քիչ թե շատ բնականոն հունի մեջ դնելու Հայաստանի պետական և հասարակական կյանքը: Անհրաժեշտ էր երկրում հաստատել իրավական նորմերից բխող կարգուկանոն: Սակայն այդ ճանապարհին առկա էին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ, նույնիսկ հոգեբանական խոչընդոտներ ու դժվարություններ: Էական դժվարություններից մեկն այն անիշխանական հոգեբանությունն էր, որ տիրում էր Հայաստանի բնակչության մի սովոր հատվածի մեջ: Եվ դա զարմանալի չէր: «Երկարատև պատերազմը,- գրում էր իրավաբան, խորհրդարանի պատգամավոր Վարդգես Ահարոնյանը իր հուշերից մեկում,- սովոր, ռուս պետականության փլուզումը, Հայաստանի մեղ սահմանների վրա կախված արտաքին վտանգը՝ այս բոլորը հիմնիվեր խախտել էր բնակչության մեջ հարգանքը դեպի օրենքը»<sup>1</sup>:

<sup>1</sup> Վ. Ահարոնյան, Դատարանը Հայաստանի Հանրապետության մեջ /«Հայրենիք», 1939, թիվ 7, էջ 127/:

1917-1918 թթ. Ռուսական կայսրության փլուզման հետևանքով ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում պետաիրավական նախկին հիմնարկները մեծապես քայքայվել էին: Քանի որ ՀՀ որպես պետական միավոր անջատվել էր փաստորեն նախկին Ռուսական կայսրությունից և համարվում էր նրա իրավահաջորդը (բաղդարամասը), ուստի՝ այստեղ ավանդույթի ուժով ու ինքնուրույն դեռևս պետք է զգացվեր նախկին շատ օրենքների պահպանման անհրաժեշտությունը: Այս գիտակցությամբ էլ, թեև որոշ ուշացումով, 1918 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի խորհուրդն իր 42-րդ նիստում, գործնականում, առանց քննարկման, հաստատեց օրենսդրական հանձնաժողովի ներկայացրած օրինագիծն այն մասին, որ «Հայաստանի Հանրապետության տարածքի վրա ժամանակավորապես գործադրվում են նախկին ռուսական կայսրության, ժամանակավոր կառավարության, Անդրկովկասի կոմիսարիատի և Սեյմի օրենքները՝ Հայաստանի խորհրդի փոփոխումներով ու լրացումներով»<sup>2</sup>: Այսպես՝ մի քանի օր անց 1918 թ. դեկտեմբերի 13-ի խորհրդի հաստատած «Ձինվորական աստիճանաբաշխման մասին» օրենքով ՀՀ-ում ժամանակավորապես պահպանվեցին սպայական և դասային այն աստիճանները, որ գոյություն ունեին ռուսական բանակում: Ձինվորական աստիճանաբաշխման իրավունքը վերապահվեց կառավարությանը<sup>3</sup>:

Խորհրդարանի և կառավարության առջև ծառացած անհետաձգելի խնդիրներից էր դատական իշխանության ձևավորումը, դրա հայացումը և ժողովրդավարացումը: Դեկտեմբերի 6-ին Հայաստանի խորհուրդը հաստատեց արդարադատությանը վերաբերող ևս մի քանի օրենքներ: Հայաստանի նորակազմ հանրապետությունում շարունակում էին գործել ռուսական տիրապետությունից ժառանգություն մնացած երկու կարգի դատարաններ՝ քաղաքացիական և զինվորական, չհաշված, իհարկե, ժամանակավորները: Իր հերթին՝ քաղաքացիական դատարանները երկու կարգի էին՝ **սպորին** և **վերին**: Ստորին կամ Հաշտարար դատարանը իրավասու էր լուծելու քրեական փոքր գործեր՝ առավելագույնը մինչև վեց ամսվա բանտարկության կամ 500 ռուբլու տուգանքի պատժաչափով: Իսկ վերին կամ Շրջանային դատարանը կոչված էր լուծելու ծանր հանցագործությունները և քաղաքացիական խոշոր հայցերը: Ձինվորականների գործերով զբաղվում էր զինվորական դատարանը: Այսպիսին էր վիճակը ցարիզմի օրոք, որը գրեթե նույնությամբ պահպանվեց ՀՀ-ում: Դեկտեմբերի 6-ին հաստատվեց արդարադատության նախարար Ս. Հարությունյանի (ՀԺԿ) կազմած «Դատական հիմնարկությունների մասին» օրինագիծը, որով ռուսական օրենքների հիմունքներով Հայաստանում մտցվում էին հետևյալ դատական ատյանները.

1) Հաշտարար դատարան՝ հանրապետությունում կար ընդամենը 25 այդպիսի դատարան:

2) Երևանի շրջանային դատարան՝ քաղաքացիական և վարչական բաժանմունքներով<sup>4</sup>:

3) Դատական վճռաբեկ պալատ և գերագույն ատյան՝ իրենց երկու համապատասխան բաժանմունքներով՝ քաղաքացիական և քրեական<sup>5</sup>:

4) Երդվյալ ատենակալների դատարան, որը գործելու էր Երևանի շրջանային դատարանին կից՝ որոշ քրեական գործերի համար<sup>6</sup>:

Ավելի ուշ 1919 թ. ապրիլի 3-ի հաստատված օրենքով Երևանի շրջանային դատարանին կից հիմնվեց նաև կարևորագույն գործերի գծով բնիչի պաշտոն<sup>7</sup>: Ահա այսպիսին էր ՀՀ դատաստանական ատյանների համակարգը: Այս դատարաններից գատ՝ ժամանակի ընթացքում ստեղծվեցին նաև այլ դատարաններ՝ արտակարգ և ռազմադատային, որոնք, սակայն, հիմնվում էին հանգամանքների ստիպողական թելադրանքով և ունեին ժամանակավոր բնույթ:

Չնայած այն բանին, որ արդարադատության նախարար Ս. Հարությունյանը գտնում էր, որ դատական ատյանների բարձր պաշտոնյաներին պետք է նշանակի գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, բայց և այնպես Հայաստանի խորհուրդը ձայների մեծամասնությամբ որոշում է, որ դրանց ընտրի (նշանակի) խորհրդարանը<sup>8</sup>: Բացի այդ՝ խորհրդարանը 27 կողմով որոշում է, որ երդվյալ ատենակալներ կարող են լինել միայն տղամարդիկ, քանզի հայ ամոթխած և նահապետական սովորույթներով ապրող կինը դեռևս պատրաստ չէ մնան պաշտոնավարության համար (արդարադատ վճիռ կայացնելու)<sup>9</sup>:

Ավելի վաղ՝ խորհրդարանի հոկտեմբերի 28-ի թիվ 27 օրենքով սահմանվել էր, որ, փոփոխություններ կատարելով քրեական, զինվորական և քաղաքացիական դատավարության օրենքների (օրենսգրքի) համապատասխան հոդվածներում, «Նորին կայսերական մեծության» փոխարեն այսուհետ դա-

<sup>4</sup> 1920 թ. գարնանը շրջանային դատարաններ հիմնվեցին Ալեքսանդրապոլում և Կարսում (Տես՝ «ՀՀ օրենքների հավաքածու 1920 թ.», էջ 53):

<sup>5</sup> Նախկինում Հայաստանի տարածքում այսպիսի բարձրագույն դատական ատյաններ չկային: Դատական ատյանը /Судебная палата/ գտնվում էր փոխարքայության մայրաքաղաք Թիֆլիսում, իսկ Սենատը՝ կայսրության մայրաքաղաք Պետերբուրգում: Այժմ, երբ Հայաստանը դարձել էր ինքնուրույն պետականություն, անհրաժեշտ էր, որ նա ունենար իր սեփական բարձրագույն դատական ատյանները:

<sup>6</sup> «Ժողովուրդ», 13 եւ 29 դեկտեմբերի 1918 թ., «Հայրենիք», 1939, թիվ 7, էջ 129-130, Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 524:

<sup>7</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները (1918-1919 թթ.), մաս 1, Երևան, 1919, էջ 56:

<sup>8</sup> «Ժողովուրդ», 18 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> ՀՀ ՊԿՊԱ, Զ. 200, ց. 1, գ. 86, ք. 15, «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918 - 1919 թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 22, «Ժողովուրդ», 13 դեկտեմբերի 1918 թ., «Կայծ», 26 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>3</sup> ՀՀ ՊԿՊԱ, Զ. 200, ց. 1, գ. 86, ք. 17-18, «Ձանգ», 5 հունվարի 1919 թ.:

տավճիռները կայացվում ու հրապարակվում են. «Հանուն Հայաստանի Հանրապետության»<sup>10</sup>:

Հայաստանում դատական բարեփոխումների առաջնահերթ խնդիրներից էր դատավարության հայացումը, դատական օրենսգրքերի հայերեն թարգմանումը, դատավարության և դատավճռի հայերեն կայացումը: Հայացման գործընթացը համեմատաբար հեշտ կատարվեց հաշտարար դատարաններում և ավելի դժվար՝ շրջանային և զինվորականում:

Երկրի ժողովրդավարացման և իրավակարգի հաստատման ճանապարհին էական քայլ պետք է համարել այն, որ 1918 թ. սեպտեմբերի 17-ին Ն. Գ. մախարար Ա. Մանուկյանի կողմից գավառական բոլոր կոմիսարներին իջեցված շրջաբերականով դադարեցվեցին և ուժը կորցրած համարվեցին Երևանի նախկին Ազգային խորհրդի կողմից մասնավոր և պաշտոնատար անձանց անունով տրված արտակարգ լիազորությունները, վկայականները, վավերագրերը և այլ քղբերը<sup>11</sup>: Այսուհետ այդ անձնավորությունները կարող էին գործել միայն ընդհանուր հիմունքներով՝ իրենց վերապահված օրենքի շրջանակներում:

Հանրապետությունում օրինականությունը վերականգնելու և կարգուկանոն հաստատելու նպատակով խորհրդի առաջին նիստերից մեկում Ն. Գ. մախարար Արամի ներկայացմամբ քննության է առնվում «Անօրինական զենք կրողների զինաթափման, մասնավոր զենքերի ու զինամթերքների առգրավման ու պետականացման մասին» օրինագիծը: Հիմնավորելով այս օրինագծի անհրաժեշտությունն ու հրատապությունը՝ Ա. Մանուկյանը տեղեկացնում էր, որ հանրապետությունում հաշվվում է մոտ 60 հազարից մինչև 150 հազար հատ զենք<sup>12</sup>: Մարդկանց ձեռքում մնան քանակությամբ զենքի առկայությունը առաջ էր բերում ներքին անկայունություն, ազգամիջյան արյունահեղություններ: Ամենուրեք կարելի էր հանդիպել մեծ ու փոքր բազմապիսի զինված խմբերի: Մարդկանց միջև սովորական վեճերը հաճախ ուղեկցվում էին արյունահեղությամբ ու սպանություններով: Օրինակ՝ Ախտալի շրջանում մեկ գառան պատճառով կոտորվել էին երեք ընտանիք: Տեղում կարգը վերականգնելու համար շրջան էր բերվել մեկ զումարտակ գործ<sup>13</sup>:

Բռնագրավելով անօրինական պահվող զենքը՝ կառավարությունը երկակի հույսեր էր տաժում. մի կողմից ամրապնդել երկրի ներքին կայունությունը, իսկ մյուս կողմից մասնավոր անձանցից բռնագրավված զենքով զինել նորաստեղծ հայկական բանակը: Ժողովրդի զինաթափման հետ միաժամանակ երկրում պետք է ուժեղացվեր միլիցիայի կազմը, իսկ հանրապետության սահմանները պետք է ամուր պաշտպանվեին գործի կողմից:

<sup>10</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 16-17:

<sup>11</sup> «Ժողովուրդ», 19 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>12</sup> «Ժողովուրդ», 29 օգոստոսի 1918 թ.:

<sup>13</sup> Նույն տեղում:

Նախարարության ներկայացրած օրինագիծը հողվածական քննարկման ենթարկվեց խորհրդարանում: Բնակչության ձեռքից մասնավոր զենքի առգրավման ու պետականացման խնդիրը տարակարծություններ ու բանավեճ առաջացրեց խորհրդարանում: Ներկայացված օրինագծին կտրականապես դեմ արտահայտվեցին սոցիալ-դեմոկրատները, մասամբ նաև ժողովրդականները<sup>14</sup>: Պատգամավոր Ա. Մելիքյանը, օրինակ, գտնում էր, որ «ամեն քաղաքացի իրավունք ունի զենք ունենալ և պաշտպանել իր հեղափոխական իրավունքները»<sup>15</sup>: Որքան էլ տարօրինակ հնչի՝ օրենքի և օրինականության մասին շաղակրատող սոցիալ-դեմոկրատները հարցադրում էին անում՝ «ինչպե՞ս թե ժողովրդին զինաթափ անել»<sup>16</sup>: Օրինագծի քննարկումը ընթացավ երեք նիստով, կատարվեց երեք հողվածական ընթերցում և որոշ ուղղումներով օգոստոսի 29-ի (թիվ 11-րդ) նիստում այն ընդունվեց ձայների մեծամասնությամբ (կողմ՝ 20, դեմ՝ 9)<sup>17</sup>:

Հիմք ընդունելով այս օրենքը՝ Ն. Գ. մախարարի կարգադրությամբ յուրաքանչյուր շրջանում կազմվելու էին հատուկ հանձնախմբեր՝ գրավելիք զենքերն ու զինամթերքները ստանալու և ցուցակագրելու համար: Ձեռքը կամովին չհանձնելու դեպքում գործադրվելու էին հարկադրական միջոցներ: Ձինաթափման ժամանակ արգելվում էր խուզարկություններ կատարել: Բռնագրավման ենթակա չէին միայն որսորդական փամփշտակալ չունեցող հրացանները և սառը տեսակի զենքերը: Համաձայն օրենքի՝ պարտագանգները վարչական կարգով ենթարկվելու էին բանտարկության մինչև երեք ամիս կամ տուգանքի մինչև 3000 ռուբլու չափով<sup>18</sup>:

Ի լրումն այս օրենքի՝ 1919 թ. հունվարի 13-ին որոշում է կայացվում, որպես պետական զույք, գրավել, անկախ նրանց ձեռքբերման եղանակներից՝ քրեք, բեքուքները, ինչպես նաև մոսին և լեբելի հրացանների սվինները<sup>19</sup>: Սակայն առաջ գնալով ասենք, որ այս օրենքը հետևողականորեն չկենսագործվեց: Հետագայում էլ մեծ քանակությամբ անօրինական զենք մնաց շատ հանցավոր տարրերի ձեռքում, որոնք էլ միջոց էին դառնում զանազան քրեածին ու անիշխանական գործողությունների համար:

Խորհրդարանի իրավասության մեջ էր մտնում բանտարկյալներին ներում շնորհելը կամ նրանց պատիժը մեղմացնելը<sup>20</sup>: Խորհրդարանը ձայների մեծամասնությամբ մերժեց «Մահապատժի մասին» օրինագիծը, որի գոր-

<sup>14</sup> «Ժողովուրդ», 2 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>15</sup> «Ժողովուրդ», 29 օգոստոսի 1918 թ.:

<sup>16</sup> «Ամ», 1934, թիվ Ը, էջ 90:

<sup>17</sup> «Ժողովուրդ», 5 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>18</sup> Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ., մաս 1, Երևան, 1919, էջ 2-4, «Ժողովուրդ», 12 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>19</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 86, թ. 22, «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 42:

<sup>20</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 57-58:

ծաղրումը նման արտակարգ իրադարձություններում հավանաբար անհրաժեշտություն էր: Դեմ քվեարկողների քվում ձախերի հետ միասին եղել են նաև ժողովրդականները: Տեղեկացմանը, որ վերջիններիս 1917 թ. սեպտեմբերին ընդունած առաջին ծրագրում կետ կար այն մասին, որ մահապատիժը դատական պրակտիկայից անպայման և ընդմիջտ պետք է հանվի<sup>21</sup>: Ի դեպ՝ համեմատության համար ասենք, որ Վրաց ժամանակավոր խորհրդարանը, որ մեծամասնություն էին կազմում սոցիալիստները, ընդունել էր մահապատիժ մասին օրինագիծը<sup>22</sup>: Նույն իր ժամանակին մտցրել էր նաև Ա. Կերենսկու գլխավորած ժամանակավոր կառավարությունը Ռուսաստանում: Իսկ Հայաստանում համանման օրենքի գործադրումը մերժվեց: Չախակողմյան խմբակցությունները այս օրինագիծը մերժելիս՝ ունեին իրենց քաղաքական նկատառումները, իսկ աջակողմյան ժողովրդականները ելուն էին գուտ հումանիստական դիրքերից:

Ծանր հանցանքների համար մահապատիժ մտցնելը ուներ սկզբունքային նշանակություն: Օրինագիծը, օրինակ, մահապատիժ էր նախատեսում ՀՀ պետական դավաճանության, գոյություն ունեցող պետական կարգը բռնի ուժի միջոցով փոփոխման, բացահայտ ապստամբության, ռազմադաշտը լքելու և թշնամու մոտ փախչելու և այլ հանցանքների դեպքում: Հասկանալի է, որ ձախակողմյան խմբակցությունները պետք է դեմ քվեարկեին, որպեսզի իրենք կառավարող քաղաքական ուժի ու իշխանությունների դեմ պայքարի իրավական լայն ու անվտանգ դաշտ ունենան: Այնուամենայնիվ, 1919 թ. հուլիսի 24-ին ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվեց «Մահապատիժ մասին» օրենքը, որի համաձայն երկրում որպես պատժի առավելագույն չափ՝ մտցվեց մահապատիժ՝ զնդակահարումով<sup>23</sup>: Նույն քվեակնի երկրորդ կեսից, երբ շրջանառության մեջ մտավ հայկական դրամը՝ պետական դրամանիշը, կեղծողների համար ևս սահմանվեց մահապատիժ<sup>24</sup>:

\*\*\*

Խորհրդարանի օրենսդրական աշխատանքի կարևոր ոլորտներից էին տնտեսական ու մասնավորապես մենաշնորհային քաղաքականության խնդիրները:

1918 թ. սեպտեմբերի 11-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց օրենք «Բամբակի մենավաճառության մասին»<sup>25</sup>: Համաձայն օրենքի՝ ՀՀ տարածքի վրա բամբակի առևտուրը հայտարարվում էր պետական մենաշնորհի (մոնոպոլիա): Բամբակատերը պարտավոր էր յոթ օրվա ընթացքում՝ ակցիգային հարկերի վարչությանը տեղեկություն հայտնել իր բամբակի քանակության և տեղի մասին: Օրենքը խախտողներին սպառնում էր տուգանք մինչև 15 հա-

զար ռուբլի, բամբակի բռնագրավում և դատաստանական կարգով բանտարկություն մինչև վեց ամիս ժամկետով: Նկատենք, որ բանտարկությունները կատարվում էին վարչական կարգով՝ Ն. Գ. նախարարության կողմից: Օրենքի ընդունման օրվանից արգելվում էր բամբակի արտահանությունը Հայաստանի սահմաններից<sup>26</sup>:

Ի լրումն բամբակի մենաշնորհի մասին 1918 թ. սեպտեմբերի 11-ի օրենքի՝ դրա վերաբերյալ հետագայում ընդունվեցին մի քանի լրացուցիչ օրենքներ՝ 1918 թ. նոյեմբերի 25-ի, դեկտեմբերի 3-ի, 1919 թ. փետրվարի 7-ի և այլն<sup>27</sup>: Մասնավորապես նոյեմբերի 25-ի՝ բամբակի մենաշնորհի մասին լրացուցիչ օրենքով սահմանվում էր, որ բոլոր բամբակատերերը պարտավոր են մինչև 1918 թ. դեկտեմբերի 31-ը պետական մենավաճառքի պահեստներին հանձնել իրենց մոտ եղած ամբողջ բամբակը, հակառակ դեպքում՝ այն կդիտվի ապօրինի, թաքցված և հարքունիս կգրավվի: Ընդսմին ֆինանսների նախարարությանը իրավունք էր վերապահվում թաքցված բամբակը հայտնաբերողներին վարձատրել այդ բամբակի արժեքի երկու երրորդի չափով<sup>28</sup>:

Բամբակի մենաշնորհային գնի վերաբերյալ խորհրդարանում սուր բանավեճեր (դեբատներ) ընթացան խմբակցությունների միջև: ՀՅԴ և ՀԺԿ խմբակցությունները միասնաբար առաջարկում էին բամբակի հումքը բամբակատերներից գնել փութը 103 ռուբլով: Մինչդեռ, «ձախերը» մասնավորապես սոց.-դեմ. խմբակցությունը, առարկելով «աջակողմյանի» և «կենտրոնի» այդ «բուրժուական», «կուլակային» առաջարկին, պահանջում էին բամբակի մենաշնորհային գնման գները իջեցնել՝ փութը մինչև 30 ռուբլի, այսինքն՝ ափսիքի քան երեք անգամ<sup>29</sup>: Ինքնին հասկանալի է, որ մեծ գների դեպքում բամբակատերը իր հումքը կը թաքցներ և ոչ մի կերպ չէր վաճառի պետությանը, էլ չենք ասում, որ նա շահագրգռված չէր լինի հաջորդ տարի բամբակամշակությամբ զբաղվել: Այնուամենայնիվ, ձախերի «ճնշման» տակ կողմերը գալիս են փոխզիջումային համաձայնության. բամբակի փթի մենաշնորհային գինը սահմանվում է՝ մաքրած և մամլածին 49 ռ. 50 կոպ., ոչ մամլածինը՝ 43 ռ. 50 կոպ. և հունդավորինը՝ 25 ռ.<sup>30</sup>: Միաժամանակ, օրենքը պահանջում էր, որ բամբակատերը իր տարաներով, պարկերով և փոխադրամիջոցներով պետք է հումքը անվճար փոխադրեր պետական պահեստներ: «Սպեցիֆիկ» Բ. Իշխանյանի գլխավորած վիճակագրական բաժանմունքի ներկայացրած տվյալներով իշխանությունների ձեռնարկած միջոցառումների հետևանքով, ընդամենը չորս ամսում (1919 թ. նոյեմբեր - 1920 թ. փետրվար) Հայաստանից

<sup>21</sup> «Ժողովուրդ», 26 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>22</sup> «Աշխատանքի դրոշակ», 5 հուլիսի 1918 թ.:

<sup>23</sup> ՊԿՊԱ, Ժ. 206, ց. 1, գ. 29, թ. 26:

<sup>24</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 58, թ. 114:

<sup>25</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1 գ. 15, թ. 28, Ժ. 200, ց. 1 գ. 86, թ. 3:

<sup>26</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Երևան 1919, էջ 4-5, ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 86, թ. 4:

<sup>27</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 41, թ. 16:

<sup>28</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, թ. 26:

<sup>29</sup> «Կայծ», 24 նոյեմբերի 1918 թ.:

<sup>30</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, թ. 26, «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 26:



արտահանվել է 49929 փութ բամբակ<sup>31</sup>։ Բամբակի մենաշնորհի մտցնելը հիմնավորվում էր տարադրամ ձեռք բերելու անհրաժեշտությամբ, մի արժույթ, առանց որի հնարավոր չէր ՀՀ արտասահմանյան հիմնարկությունները պահել, ինչպես նաև երկրի համար այնքան անհրաժեշտ իրեր ու ապրանքներ ներմուծել։ Մյուս կողմից բամբակի խնդիրը ինչ-որ տեղ նաև Հայաստանի թեթև արդյունաբերության զարգացման հարց էր<sup>32</sup>։ Պետք է ասել, որ բամբակի առևտրի մենաշնորհի վերաբերյալ վերահսկողությունը պահպանվեց մինչև վերջ՝ մինչև հանրապետության անկումը<sup>33</sup>։ Դա երևում է նրանից, որ թեև Հայաստանի երկրորդ գումարման խորհրդարանը 1920 թ. մարտի 22-ին ընդունել էր նոր օրենք, համաձայն որի բամբակի մենաշնորհի օրենքը չպետք է տարածվեր 1920 թ. բամբակի բերքի վրա, այսինքն՝ փորձ արվեց կասեցնել մենաշնորհը<sup>34</sup>, սակայն 1920 թ. օգոստոսի 6-ին Բյուրո-կառավարությունը դարձյալ օրենք ընդունեց վերականգնել մենաշնորհը։ Այնտեղ ասվում էր. «Բամբակի մենաշնորհի գործերի վերաբերյալ վերականգնել նախկին կոնտրոլի դրությունը»<sup>35</sup>։ Մենաշնորհի իրականացման համար սեպտեմբերի 15-ին բացվեց 20 մլն. ռուբլու վարկ<sup>36</sup>։

Հարկ է ընդգծել, որ տնտեսական առումով բամբակի պետական մենաշնորհը բացասաբար էր անդրադառնում բամբակագործության զարգացման վրա, որովհետև պետական մենաշնորհի վաճառքի պայմաններում խթան, շահագրգռվածություն չկար դրա ընդարձակման և ինտենսիվացման համար։ Իր ժամանակին Աշ. Հովհաննիսյանը, տալով բամբակի պետական մենաշնորհի քաղաքականության գնահատականը, նշում էր, որ այն արմատախիլ էր անում գյուղատնտեսության այդ ճյուղը, ցամաքեցնում իր իսկ վայրտա-յին ֆոնդի աղբյուրները<sup>37</sup>։ Դրանի արագ արժեզրկման պայմաններում շատ գյուղացիական տնտեսություններ գերադասում էին բամբակի փութը 49 ռ. 50 կոպեկով մթերելու փոխարեն, այն օգտագործել որպես անասնակեր<sup>38</sup>։ Տվյալներ կան այն մասին, որ կառավարության մենաշնորհային քաղաքականության պատճառով հազարավոր փթեթով բամբակ գյուղացին կամ վերավաճառող կապալառուն նման ցածր գներով պարգապես չէին մթերում պետությանը, որովհետև, եթե ֆինանսների նախարարության սահմանված գներով բամբակը իրենց պահեստներից փոխադրեին պետական պահեստարանները, ապա դրա արդյունքում հազիվ փոխադրման ծախսերը կհանձնին։ Ուստի և բամբա-

կի մի զգալի մասը մնում էր տեղում և փառում<sup>39</sup>։ Այս ամենի հետևանքով գնա-լով կրճատվում էին բամբակի ցանքատարածությունները, ուստի և՛ ստացվող հումքը։ Այսպես, օրինակ, եթե 1914 թ. պատերազմից առաջ Հայաստանի սահմաններում տարեկան ցանվում էր 35-ից մինչև 40 հազար դեսյատին և ուրից ստացվում էր տարեկան միջին հաշվով 500-ից մինչև 600 հազար փութ մաքուր բամբակ, ապա 1920 թ. ցանվել էր ընդամենը 1500 դեսյատին՝ Սուրմալուի և Էջմիածնի գավառներում<sup>40</sup>։

Բամբակից զատ՝ մենավաճառի քաղաքականություն էր իրականացվում այլ մթերատեսակների վրա։ 1918 թ. հոկտեմբերի 1-ի նիստում ընդունված թիվ 16 օրենքով ՀՀ մտցվեց գետնախնձորի մենաշնորհ։ 0,5 մլն. փութ գետնախնձորի գնման համար բաց թողնվեց 13,4 մլն. ռ. վարկ։ Արգելվեց գետնախնձորի ազատ առևտուրը և դրա արտահանումը հանրապետության սահմաններից դուրս։ Այն խախտողները ենթարկվում էին դատաստանական կարգով բանտարկության մինչև 3 ամիս կամ տուգանքի մինչև 3000 ռուբլի<sup>41</sup>։ Նույնատիպ պատժի էին ենթարկվում կարտոֆիլի պետական գնման օրենքը խախտողները։ Պետությանը անհրաժեշտ էր 0,5 մլն. փութ կարտոֆիլ։ Կառավարությունը փութը գնում էր 20 ռուբլով<sup>42</sup>։

Մի այլ նիստում խորհուրդը օրինագիծ է ընդունում Դիլիջանի անտառների խոզակաղիմն ու աճարի պտուղը հավաքելու՝ առաջինն՝ անասուններին կերակրելու, իսկ երկրորդը՝ ճարպ պատրաստելու համար<sup>43</sup>։ Հանձնարարվեց Ն. Գ. նախարարության պարենավորման բաժանմունքին՝ Դիլիջանի շրջանի անտառներում 50 հազար փութ խոզակաղիմ և նույնքան /50 հազ. փութ/ էլ աճարի սերմ հավաքելու, որի համար բաց թողնվեց 650 հազ. ռուբլի<sup>44</sup>։ Մտցվեց նաև խաղողի մենաշնորհ։ Խաղողի ստիպողական գնումները այգետերերից նպատակ էին հետապնդում, հանրապետությունում շաքարի սղության պատճառով բանակի և այլ կարիքների համար դոշաբ պատրաստել։ Խաղողի գնման պետական գին էր սահմանվել փութը 40 ռուբլի<sup>45</sup>։ Խորհրդի ընդունած մեկ այլ օրենքով կրկնապատիկ բարձրացվեցին ոգելից խմիչքների և խաղողի գինիների ակցիզային հարկերը<sup>46</sup>։

1918 թ. երկրորդ կեսին հանրապետությունում շատ սուր էր կանգնած աղի պրոբլեմը։ Բացն այն էր, որ Հայաստանի բոլոր աղահանքերը (Կաղզվանի,

<sup>31</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, ք. 117։

<sup>32</sup> «Ժողովուրդ», 11 դեկտեմբերի 1918 թ.։

<sup>33</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, ք. 3։

<sup>34</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 58, ք. 9։

<sup>35</sup> Նույն տեղում, ք. 60։

<sup>36</sup> Նույն տեղում, ք. 190։

<sup>37</sup> Ա. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Երևան, 1923, էջ 6։

<sup>38</sup> «Ժողովուրդ», 4 մարտի 1920 թ.։

<sup>39</sup> «Հայաստանի ծայն», 9 նոյեմբերի 1919 թ.։

<sup>40</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 511, ք. 114։

<sup>41</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 4, ք. 3, ֆ. 200, ց. 1, գ. 86, ք. 7։

<sup>42</sup> «Ժողովուրդ», 6 հոկտեմբերի 1918 թ.։

<sup>43</sup> «Կառավարության լրաբեր», 15 հոկտեմբերի 1918 թ.։

<sup>44</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, ք. 11։

<sup>45</sup> «Հայաստանի կոոպերացիա», 15 փետրվարի 1919 թ., էջ 117։

<sup>46</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.» մաս 1, Երևան, 1919, էջ 8-9։

Կողքի Նախիջևանի և այլն) գտնվում էին թշնամու տիրապետության տակ: Այդ իսկ պատճառով օրակարգ մտցվեց նաև աղի մեմաշնորիի հարցը<sup>47</sup>:

Խորհրդարանում և նրա պատերից դուրս մեմաշնորիի ու բռնագրավումների քաղաքականությանը առանձնապես տոն էին տալիս սոցիալ-դեմոկրատները<sup>48</sup>: Օրինակ, նրանք պահանջում էին ոչ միայն մտցնել բամբակի մեմաշնորի, այլև բռնագրավել այն:

Հայաստանի խորհրդում բամբակի գնման, գների չափի որոշման կամ թե ուղղակի բռնագրավման հարցերը ոչ թե զուտ տնտեսական բնույթի խնդիրներ էին, այլ քաղաքական, փաստորեն դասակարգային հաշիվներ մաքրելու խնդիր. բամբակատեր բուրժուազիայի ու բանվոր դասակարգի միջև: Բայց իրականում Հայաստանում դույզն-ինչ ոչ բուրժուազիա կար և ոչ էլ իսկական բանվոր դասակարգ: Խորհրդարանական քննարկումների ընթացքից երևում է, որ մեմաշնորիի կամ բռնագրավումների հարցերում ՀՅԴ խմբակցությունը ավելի հակված էր պաշտպանելու մեմաշնորի, իսկ ժողովրդականները՝ ո՛չ մեմաշնորի և ո՛չ էլ առավել ևս բռնագրավումները: Վերջիններս պաշտպանում էին ազատ առևտրի գաղափարը<sup>49</sup>:

1918 թ. սեպտեմբերի 4-ի նիստում սոցիալ-դեմոկրատների խմբակցությունը, պարենավորման խնդրում նկատի ունենալով մոտալուտ սովի վտանգը, հացահատիկի պետականացման պահանջ դրեց: Հաշվի առնելով Խորհրդային Ռուսաստանի փորձը՝ պատգամավոր Ա. Մելիքյանը գտնում էր, որ կառավարությունը պետք է իր ձեռքը վերցնի պետության մեջ բոլոր մթերքները և դրանք հավասարաբար ձևով բաշխի բոլորին<sup>50</sup>: Նա պաշտպանում էր մեմաշնորի և ոչ թե ազատ առևտուրը, քանզի նրա կարծիքով՝ ազատ առևտուրը մեմաշնորի էր միայն մի խումբ շահամուլների (սպեկուլյանտների) համար: Կառավարությունը ևս պաշտպանեց հացի մեմաշնորիի սկզբունքը: Ն.Գ. Գալստյանը Արամ Մանուկյանի տեղեկացմամբ՝ սեպտեմբերի սկզբի տվյալներով պետական պահեստում կար 35042 փութ ցորեն<sup>51</sup>: Նախարարը հացի ազատ առևտուրը աննպատակահարմար էր համարում այն պատճառով, որ պետությունը ի վիճակի չէր խալվարը մի քանի հազար ռուբլով հաց գնելու և գործին ու գաղթականությանը կերակրելու համար:

1918 թ. երկրորդ կեսին խորհրդարանի օրենսդրական աշխատանքներում պետական մեմաշնորիին վերաբերող օրինագծերը կազմեցին բավականին մեծ թիվ: Բայց պետք է ասել, որ մեմաշնորիի քաղաքականությունը ոչ միշտ էր հետևողականորեն իրականացվում: Խորհրդարանը, իհարկե, ընդունում էր համապատասխան օրենքներ, սակայն փաստերը ցույց են տալիս, որ կառավարությանը չէր հաջողվում դրանք հետևողականորեն կենսագործել:

<sup>47</sup> «Կառավարության լրաբեր», 15 հոկտեմբերի 1918 թ.:

<sup>48</sup> «Ժողովուրդ», 15 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>49</sup> «Բանբեր Հայաստանի արխիվների», 1990, թիվ 3, էջ 110:

<sup>50</sup> «Կառավարության լրաբեր», 10 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>51</sup> Նույն տեղում:

Այսպես, օրինակ, Հայաստանի գյուղատնտեսության մեջ տիրող վիճակին քաջատեղյակ «Հայաստանի կոոպերացիա» երկշաքաթաթերթը իր համարներից մեկում տեղեկացնում էր, որ բրնձի և չալթուկի մեմաշնորիի հայտարարելու օրից անցել է բավականին ժամանակ, սակայն կառավարությունը հավաքել է բրնձի միայն աննշան մասը: 1918 թ. վերջերին ՀՀ սահմաններում ստացված մոտ 350 հազ. փութ չալթուկից կառավարությունը 1,5 ամսվա ընթացքում բնակչությունից գործնականում բռնագանձել էր ընդամենը 5000 փութ<sup>52</sup>:

Հարկադիր մթերումների գործը համեմատաբար բարվոք էր ցորենի ուղղությամբ: 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով Հայաստանին անցած տարածքի բնակչությունը հավաքել ու ամբարել էր մոտ 2,5 մլն. փութ (տվյալները կլորացված են): Մեմաշնորիի հետևանքով պետականացվել էր մոտ 200 հազար փութ<sup>53</sup>: Գյուղացիները իրենց ստացած բերքի մի մասը զարտուղի ճանապարհներով փութը 150-180 ռուբլով կարողացան վաճառել հիմնականում գաղթականությանը և քաղաքի ունևորներին<sup>54</sup>:

Տալով մեմաշնորիի ու բռնագրավումների քաղաքականության գնահատականը՝ մյուս կողմից պետք է ասել, որ դրանք ընդհանուր առմամբ հեռանկարային տնտեսական քաղաքականության տեսակետից ճիշտ չէին: Նման քաղաքականությունը չէր խթանում արտադրողների անձնական շահագրգռվածությունն ու ձեռներեցությունը: Բայց մյուս կողմից ազգաբնակչության համար ստեղծված արտասովոր ծանր պայմաններում դա հարկադիր քայլ էր: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ եթե հացամթերքի և մի քանի այլ կենսաապահովման միջոցների ժամանակավորապես պետական մեմաշնորի հայտարարելը ինչ-որ ձևով արդարացվում էր, ապա մյուսներին՝ բամբակին, խաղողին և այլն, սխալ էր: Գյուղատնտեսական առանձին մթերքների ու հումքի, ինչպես նաև արդյունաբերական առանձին ապրանքների վաճառքի ու արտահանման մեմաշնորի առաջ էր բերում ներքին սպեկուլյացիա, որից օգտվում էին շահամուլ մարդիկ՝ պետական մեմաշնորի դարձնելով որպես սեփական հարստացման միջոց: Շահամուլության դեմ պայքարի նպատակով ավելի ուշ սահմանվեցին բանտարկություններ և մեծ զումարի տուգանքներ: Հատկապես պարենի, վառելիքի, դեղորայքի և այլ կենսական անհրաժեշտ ապրանքների շահադիտական, չափազանց բարձր գներով վաճառքի կամ գները միտումնավոր բարձրացնելու նպատակով քաղցնելու դեպքում ֆինանսների նախարարությունը կարող էր հարուցել քրեական գործ<sup>55</sup>: Չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ մեմաշնորիի ու բռնագրավումները իրականացնելիս՝ տեղում թույլ էին տրվում անօրինականություններ ու շահատակություններ:

<sup>52</sup> «Հայաստանի կոոպերացիա», 1 փետրվարի 1919 թ. (թիվ 3), էջ 81-82:

<sup>53</sup> «Հայաստանի կոոպերացիա», 15 փետրվարի 1919 թ. (թիվ 4), էջ 117:

<sup>54</sup> Նույն տեղում:

<sup>55</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 176:

Առանձին շրջաններում և գյուղերում գյուղացիությունը տրանջում ու դժգոհություն էր հայտնում հացի պետական մեռաշնորհից: Օրինակ՝ 1918թ. աշնանը նման դժգոհություն են հայտնել Դարաչիչակի (Ծաղկաձորի) տեղա-  
մասի Ռեդամալ և Վերին Ախտա գյուղերի բնակիչները<sup>56</sup>: Վավերագրերից մեկում տեղեկանում ենք, թե Մեսրոպ անուհով մի խմբապետ իր 300 հեծյալ-  
ներով ինչպիսի անօրինականություններ է արել Ռեդամալ գյուղում: «Հնարա-  
վոր չէ նկարագրել, թե ինչ սարքեցին այստեղ այդ յանիշարները. բռնագրավե-  
ցին հացը, ալյուրը, գարին, խոտը, պահանջեցին ոչխար, հավ, սարքեցին բռնություն, նույնիսկ Վանուշ Սարիբեկովից վերցրին կինը և տարան... Բալա-  
նեցին գյուղը, ծեծեցին շատերին»<sup>57</sup>: Հիշյալ գյուղի հասարակությունը բողո-  
քագիր է ներկայացրել Հայաստանի խորհրդարան և սոցիալ-դեմոկրատ խմբակցության միջոցով պահանջել քննության առնել բռնագրավումների ժա-  
մանակ պաշտոնյաների և զորամասերի թույլ տված անօրինությունների հար-  
ցը: Հացամթերքի բռնագրավումներ կատարելու համար սովորաբար գավառ-  
ներ ու գյուղեր էին ուղարկվում բազմաթիվ լիազորներ ու նրանց ենթակա  
պաշտոնյաներ, որոնք տեղում գյուղացու ընտանիքի կազմի համեմատ որոշ  
քանակի ցորեն թողնելով, մնացածը պետականացնում էին: Այդ ընթացքում  
տեղի էին ունենում խժոժություններ, զեղծումներ, ժողովրդական հուզումներ<sup>58</sup>:  
«Լիազորների ճնշումը, - փաստում էր կառավարող կուսակցության պաշտո-  
նաթերթ «Զանգը», - չափ ու սահման չունի. ծեծում են ամենքին՝ և՛ կոմիսա-  
րին, և՛ հասարակ գյուղացուն: Գյուղացին չգիտի ի՞նչ ամե, ո՞ւմ դիմել, ռեկվի-  
զիցիաները այնքան են հաճախ կրկնվում, որ գյուղացու մոտ ոչ կարտոֆիլ, ոչ  
խոտ և ոչ էլ կաղամբ է մնացել, մի կողմ թողած ցորենը»<sup>59</sup>: Նման քաղաքակա-  
նությունը կարելի է ասել, որ շատ բանով հիշեցնում էր այդ նույն ժամանակ  
Խ. Ռուսաստանում իրականացվող ռազմական կոմունիզմի պարենմաս-  
նատրման քաղաքականությունը:

Երևանի նահանգային պարենային բաժնի վարիչը զինվորական նա-  
խարարին ուղղված գրություններից մեկում հայտնում էր. «Զինվորական իշ-  
խանությունները գյուղերում ինքնագլուխ բռնագրավում են (реквизируют)  
հացը և չնայած մեր պահանջներին ու բողոքներին՝ դրանք չեն դադարում և  
զնայով ընդունում են ավելի սպառնալից չափեր»<sup>60</sup>: Շատ հաճախ բռնագրա-  
վումները կատարվում էին սահմանված կարգի (օրենքի) կոպիտ խախտում-  
ներով: Տեղերում թույլ էին տրվում չարաշահումներ, անօրինություններ ու  
բռնություններ: Հաճախ էլ օգտվելով տեղերում անբավարար վերահսկողու-  
թյունից, կարգուկանոնից՝ իրենց հերթին բռնագրավումներ (ավելի ճիշտ՝ կողո-  
պուտներ) էին կատարում առանձին անկանոն զինյալ կազմավորումներ

(մաուլգերիստներ), որոնք, ոտնակոխ անելով ամեն մի օրենք ու օրինակա-  
նություն, կատարում էին բռնագրավումներ, անիրավություններ, սպանու-  
թյուններ՝ ահ ու սարսափ տարածելով ամենուրեք: Միայն Էջմիածնի գավա-  
ռում կային մեկ տասնյակից ավելի նման անկանոն զինյալ խմբեր<sup>61</sup>: Երևանի  
նահանգական գործերի կառավարիչը Ն.Գ. նախարար Արամին ուղղված  
գրությունում տեղեկացնում էր, որ աշխարհագրային (պարտիզանական)  
զնդի թվով հինգ սպաներ, չճանաչելով ոչ մի իշխանություն և օրենք, ինքնագ-  
լուխ հնձել են արտերը և յուրացրել հացահատիկը<sup>62</sup>:

Անօրինություններ էին անում ոչ միայն աշխարհագրայինները, այլև,  
առանձին դեպքերում, կամոնավոր գործը և տեղական իշխանությունները: Օ-  
րինակ՝ զինվորները քաղցից մղված կողոպտել ու ավերել էին Էջմիածնի գա-  
վառի Ալիբեկյու և Ջեռրփաքլու գյուղերի այգիները<sup>63</sup>: Ջառ գյուղի բնակիչները  
բողոքել են զինվորների բռնությունների դեմ, իսկ Բաշգառնի գյուղի բնակիչ-  
ները՝ պարենավորման վարչության դեմ, նորմայից ավելի ցորեն պահանջելու  
կապակցությամբ<sup>64</sup>: Եղվարդ գյուղից «Ժողովուրդ» թերթի խմբագրությանը  
հասցեագրված մի նամակում տեղեկացվում է հետևյալը. «Հացահատիկի  
ստիպողական առգրավման համար Եղվարդ էր ժամանել մի գորախումբ պու-  
լիմենտներով (զնդացիներով-Ա.Հ.): Խուզարկությունների ընթացքում բռնագ-  
րավվածի համար ստացականներ չեն տալիս, գրավում են ինչ իրանց դուր է  
գալիս՝ յուղ, թխած հաց, ցորեն: Ոմանք հուսահատությունից ինքնասպանու-  
թյան փորձեր արեցին»<sup>65</sup>: Կարելի է բերել այսօրինակ բազմաթիվ փաստեր,  
բայց եղածն էլ բավական է համոզվելու համար, թե որքան ծանր էր անդրա-  
դառնում մեռաշնորհի և դրան ուղեկից բռնագրավումների քաղաքականու-  
թյունը առանց այն էլ թշվառ վիճակում գտնվող գյուղացիական տնտեսություն-  
ների վրա:

Խորհրդարանը հարցապնդումների ժամանակ հաճախակի անդրա-  
դառնում էր տեղերում թույլ տրված շահատակությունների խնդրին: Առանձ-  
նապես սուր իրավիճակ էր ստեղծվել Էջմիածնի գավառում: 1918թ. սեպտեմ-  
բերի 17-ի (թիվ 19-րդ) նիստում խորհրդարանը, չգոհանալով զինվորական և  
ներքին գործերի նախարարների տված բացատրություններով, Էջմիածնի  
գավառում տեղի ունեցած դժգոհությունների և ընդհարումների մասին, որոշեց  
ստեղծել արտակարգ լիազորություններով խորհրդարանական հատուկ քննիչ  
հանձնաժողով (Ա. Ղազարյան, Գ. Ենգիբարյան, Մ. Աղաջանյան և Ա. Խոնդ-  
կարյան կազմով) և գործուղել Էջմիածին՝ տեղում քննություն կատարելու և  
հարկ եղած դեպքում շրջանի պաշտոնյաներին աշխատանքից հեռացնելու<sup>66</sup>:

<sup>56</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.404, ց.1, գ.17, ք.1-4:

<sup>57</sup> Նույն տեղում, ք.6:

<sup>58</sup> «Հորիզոն», 9 հոկտեմբերի 1918թ.:

<sup>59</sup> «Զանգ», 27 հոկտեմբերի 1918թ.:

<sup>60</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.201, ց.1, գ.102, ք.1:

<sup>61</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.201, ց.2, գ.625, ք.13:

<sup>62</sup> Նույն տեղում, ց.1, գ.102, ք.7:

<sup>63</sup> «Ժողովուրդ», 12 սեպտեմբերի 1918թ.:

<sup>64</sup> «Ժողովուրդ», 19 սեպտեմբերի 1918թ.:

<sup>65</sup> «Ժողովուրդ», 26 սեպտեմբերի 1918թ.:

<sup>66</sup> «Ժողովուրդ», 22 սեպտեմբերի 1918թ.:

Միաժամանակ, խորհուրդն ընդունեց մի բանաձև, որով հանձնարարվում էր կառավարությանը և ի մասնավորի զինվորական ու Ն.Գ. մախարարություններին, կտրուկ միջոցներ ձեռք առնել Էջմիածնում հասարակական կարգն ու խաղաղությունը վերականգնելու նպատակով:

Գյուղատնտեսական մթերքների պետական մենաշնորհներից ու մասնակի բռնագրավումներից զատ՝ թույլ էին տրվել նաև բնակարանների, վառելանյութի, մասնավոր պահեստների, քարվանսարանների, կրպակների և նույնիսկ մասնավոր մանուֆակտուրաների ու գործարանների բռնագրավումներ: Այսպես, օրինակ, 1918թ. նոյեմբերի 27-ին բռնագրավվել են որոշ այլագլխների՝ Աբրահովի, Մեխտիկի և ուրիշների մանուֆակտուրաները՝ բանակի ու որքերի կարիքների համար<sup>67</sup>: 1920թ. հուլիսին պետականացվեց Ն. Շուստովի զինուկոնյակի գործարանը՝ իր ողջ շարժական և անշարժ գույքով ու կայքով<sup>68</sup>:

1919-1920 թթ. ընթացքում խորհրդարանը բնակարանների բռնագրավման վերաբերյալ որոշ փոփոխություններով 4-5 անգամ օրենք ընդունեց: Բռնագրավումների անկանոն կարգը աստիճանաբար հստակեցվեց և դրա իրավունքը վերապահվեց միմիայն քաղաքային ինքնավարություններին<sup>69</sup>:

ՀՀ համար նման ծանր ու դժվարին ժամանակներում խորհրդարանը իր օրինաստեղծ աշխատանքում զբաղվում էր ոչ միայն տնտեսական բնույթի խնդիրներով, այլև հոգևոր, մշակութային հարցերով:

Խորհրդարանը մի քանի ընթերցումով քննության առավ դպրոցական հանձնաժողովի մշակած օրինագիծը՝ «դպրոցների մասին»: Այնտեղ պաշտպանվում էր այն ճիշտ գաղափարը, որ դպրոցը պետք է քաղաքականությունից հեռու լինի, այսինքն՝ ապաքաղաքականացվի ու ապակուսակցականացվի: Օրենքում ասվում էր, որ ՀՀ դպրոցը դադարում է պետության մենաշնորհի լինելուց, և որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի սեփական միջոցներով դպրոց բացել<sup>70</sup>: Օրենքը պաշտպանում էր ապակենտրոն, ազատ դպրոցի գաղափարը: Հարկադրանք չգործադրելով ծխական դպրոցների նկատմամբ՝ միաժամանակ առաջին քայլերը սկսեցին ձեռնարկվել նախկին պետական դպրոցների ազգայնացման ուղղությամբ: 1918թ. սեպտեմբերի 10-ին խորհրդարանը գրեթե միաժամանակ որոշեց ունենալ հանրային կրթության առանձին մախարարություն<sup>71</sup>: Չանսալով եղած դժվարություններին՝ 1918թ. հոկտեմբերի 1-ից սկսվեց նոր ուսումնական տարին: Խորհրդարանը, դպրոցական հանձնաժողովի ներկայացմամբ, սահմանեց նաև ուսուցիչների վարձատրության չափը:

<sup>67</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 178, ք. 1:

<sup>68</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 193, ք. 2-4:

<sup>69</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 202, ց. 1, գ. 333, ք. 90-91:

<sup>70</sup> «Հորիզոն», 18 հոկտեմբերի 1918թ.:

<sup>71</sup> «Հորիզոն», 9 հոկտեմբերի 1918թ.

թե՛ քաղաքային և թե՛ գյուղական դպրոցների համար այն տարեկան կազմում էր 6000 ռուբլի, այսինքն՝ ամսական 500 ռուբլի<sup>72</sup>:

1919 թ. մայիսին մշակվեց օրինագիծ լեզվի մասին<sup>73</sup>: Այն կազմել էր կառավարության մախաձեռնությամբ ստեղծված երեք հոգանոց մասնաժողովը՝ Գ. Խոջամիրյան, Գ. Խատիսյան և Կ. Հովհաննիսյան կազմով<sup>74</sup>: Օրինագիծը կազմված էր 13 հոդվածից: Այնտեղ հռչակվում էր, որ հանրապետության սահմաններում պետական-պաշտոնական լեզուն համարվում է հայերենը: Օրինագիծը պարտավորեցնում էր պետական պաշտոնատար անձանց մեկ տարվա ընթացքում տիրապետելու հայերենին (բանավոր և գրավոր): Բացի այդ, գերատեսչություններում, հաստատություններում, հիմնարկ-ձեռնարկություններում, բանակում և այլուր հաղորդակցման, քաղաքացիների ընդունելությունների անցկացման, գրագրության և գործավարության լեզուն դարձյալ լինելու էր միայն հայերենը: Պաշտոնատար անձանց լեզվի իմացությունը ստուգելու համար հիմնվելու էին հանձնաժողովներ: Հայոց լեզու չիմացողները ենթարկվելու էին քննության և անհաջողության դեպքում ազատվելու պաշտոնից: Լեզվի կանոնները չկատարելու դեպքում՝ յուրաքանչյուր հիմնարկություն կամ քաղաքացի կարող էր բողոք ներկայացնել: Դատարանի վճիռը պարտադիր էր բոլորի համար<sup>75</sup>: Հաշվի առնելով, որ օրինագծի առանձին հոդվածներ ունեն լրացման և հստակեցման կարիք, փաստաթուղթը վերադարձվեց լրամշակման:

Լեզվի մասին օրինագծի վերջնական հաստատումը տեղի ունեցավ ապրիլի ուշ՝ երկրորդ գումարման խորհրդարանի կողմից 1919 թ. դեկտեմբերի 26-ին:

Լեզվի մասին օրենքի կարևորությունն ու հրատապությունն այն էր, որ Հայոց անկախ պետության մեջ շարունակվում էր տիրապետող մնալ ռուսաց լեզուն: «Մինիստրություններից սկսած մինչև հետին պաշտոնատներում, մտահոգ գրում էր «Ձանգը», իշխողը ռուսերենն է, գրագրությունը ռուսերեն, խնդիրները ընդունվում են ռուսերեն, պատասխանները տալիս՝ ռուսերեն: Իսկ, օրինակ, զինվորական մախարարության մեջ հայերեն լեզուն ուղղակի հալածված է»<sup>76</sup>:

Հարկ է նշել, որ արդարադատությունը ևս կատարվում էր ռուսերեն: Պետական պաշտոնյաներից շատերը մայրենի լեզվին լավ չէին տիրապետում կամ պարզապես փնձանոթ էին դրան: Կամա թե ակամա զոյանում էր մի տեսակ լեզվական պատենշ ու խորթություն կառավարության, պաշտոնության և հասարակ ժողովրդի միջև: Հատկապես այդ վիճակից մեծ չափով

<sup>72</sup> «Հորիզոն», 9 հոկտեմբերի 1918թ.:

<sup>73</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, ք. 125-126:

<sup>74</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, ք. 126:

<sup>75</sup> Նույն տեղում, ք. 125-126:

<sup>76</sup> «Ձանգ», 24 հունվարի 1919 թ.:

տուժում ու նեղվում էր արևմտահայ գաղթականությունը, որը հասկանալի պատճառներով բոլորովին անհաղորդ էր ռուսերեն լեզվին:

Պաշտոնական լեզվի գործավարությունների հայացման գործում ոչ պակաս դժվարություն էին ստեղծում օտար տերմինները. լայն գործածություն չունեին կամ պարզապես չկային դրանց հայերեն համարժեքները: Օտար տերմինները հայացնելու և հայոց լեզուն օտարաբանությունից մաքրելու նպատակով Թիֆլիսում հիմնվեց մի հանձնաժողով՝ Ստ. Լիսիցյանի նախագահությամբ: Հանձնաժողովը ձեռնամուխ եղավ համանման բառարանի կազմմանը: Խորհրդարանը 150 հազար ռուբլու վարկ բացեց՝ իրավաբանական, բժշկա-սանիտարական, տեխնիկական և գիտական-դպրոցական տերմինների բառարան կազմելու և հրատարակելու համար<sup>77</sup>:

1919 թ. հունվարի 17-ին Հայաստանի խորհրդարանը հաստատեց «ՀՀ տոն օրերի մասին» օրինագիծը: Սահմանվեցին ընդհանուր պետական ու ազգային-կրոնական հետևյալ տոները՝ Նոր տարվա, Ծննդյան և Մկրտության, Մեռելոցի, Վարդանանց և Բարեկենդանի, Տեառնընդառաջի, Լուսավորչի մուտն ի Վիրապ, Չատկի երկուշաբթի և երեքշաբթի, Աշխատանքի, Համբարձման, Թարգմանչաց, Վարդավառի, Ս. Աստվածածնի և այլն<sup>78</sup>:

Ամբողջ հանրապետությունում տոների կապակցությամբ ոչ աշխատանքային (հանգստյան) օրեր սահմանվեցին՝ հունվարի 1-ը, 6-ը, ռուսական մեծ հեղափոխության՝ փետրվարի 27-ը (ն. տ. մարտի 12-ը), մայիսի 1-ը, օգոստոսի 1-ը (խորհրդարանի բացման օրը), երկու ճրագալույցների օրը<sup>79</sup>:

Բացի վերոհիշյալ ընդհանուր տոներից՝ ռուսների և մահմեդականների համար պաշտոնապես գրանցվում ու թույլատրվում են նաև նրանց կրոնական և աշխարհային տոները: Հանրապետության բազմազգ բնակչության համար ազգային-կրոնական տոների հաշվառումը և օրենսդրորեն սահմանումը վկայում էր հանրապետությունում խղճի ու դավանանքի ազատության և ընդհանրապես ՀՀ ժողովրդավարական բնույթի մասին:

Հայաստանում պակասում էին շատ օրենքներ: Այդպիսին էր, օրինակ, մամուլի մասին օրենքը: Սակայն բոլոր տիպի (խորհրդարանական և ոչ խորհրդարանական) կուսակցությունների համար առկա էին ազատ խոսքի ու գործունեության հնարավորություններ: Հանրապետությունում փաստորեն չկար զրաքննություն: Արդյունքում ստացվում էր այնպես, որ առանձին թերթեր ոչ միայն հակապետական քարոզչության համար չէին հետապնդվում ու պատիժ չէին կրում, այլև երբեմն ակամա և անպատիժ տպագրում էին ռազմական բնույթի գաղտնիքներ: Այսպես, օրինակ, ՀՅԴ Վրաստանի ԿԿ-ի և Թիֆլիսի կոմիտեի օրգան «Նոր աշխատավորը» տպագրել էր, իսկ ՀՅԴ Շիրակի ԿԿ-ի պաշտոնաթերթ «Շիրակի աշխատավորը» արտատպել էր տեղե-

կություն այն մասին, որ Հայաստանում կառուցվում է երկու գրահագնացք «բրոննիկ»<sup>80</sup>:

Կային զանգվածային լրատվության այնպիսի միջոցներ, որոնք գտնվում էին կառավարության հսկողության տակ: Այդպիսի ամենագլխավոր միջոցը Հայաստանի հեռագրական գործակալությունն էր (ՀՀԳ): Այն հիմնվել էր խորհրդի 1918թ. դեկտեմբերի 18-ի օրենքով<sup>81</sup>, որը գործում էր կառավարությանը կից ու ղեկավարվում էր նրա հրահանգներով, այսինքն՝ անկախ չէր:

1919 թ. սեպտեմբերի 20-ին բացվում է Երևանի ռադիոկայանը<sup>82</sup>, որի կառուցման համար խորհրդարանը 1918թ. նոյեմբերի 16-ի ընդունած օրենքով թույլատրել էր բաց թողնել 200 հազ. ռուբլի վարկ<sup>83</sup>: Որոշ աղբյուրներում այդ գումարը նշված է 20 հազ. ռուբլի, որը սխալ է կամ վրիպակ<sup>84</sup>:

Ն.Գ. Նախարար Արամ Մանուկյանի կարգադրությամբ հանձնարարվեց փոստ-հեռագրական հիմնարկություններին, որ 1918թ. նոյեմբերի 1-ից Հայաստանի տարածքում, բոլոր հեռագրատներում հեռագրերը գրվեն և ընդունվեն հայերեն, ինչպես նաև ռուսերեն լեզուներով<sup>85</sup>: 1919թ. փետրվարին Հայաստանը փոստ-հեռագրական կոնվենցիաներ է կնքում Վրաստանի և Ադրբեջանի հետ, որոնք մարտի 11-ին միաձայն կերպով հաստատվում են Հայաստանի խորհրդում<sup>86</sup>:

Հայաստանի խորհրդի իրավասությունների մեջ էր մտնում այն, որ նա հաստատում էր միջպետական պայմանագրեր, կոնվենցիաներ, լիազորում էր կառավարությանը ուրիշ պետությունների հետ բանակցություններ վարելու, պայմանագիր-համաձայնագրեր կնքելու, դիվանագիտական միսիաներ (ներկայացուցչություններ) ու պատվիրակություններ հաստատելու և այլն:

Հարկ է նշել, որ խորհրդի կազմը և կառուցվածքը այնքան էլ չէին նպաստում նրա օրինաստեղծ աշխատանքին:

Բացի օրենսդրական գործունեությունից՝ Խորհրդի պատգամավորները տարբեր ժամանակներում խմբերով այցելել են գավառները (Էջմիածին, Ղամաքու, Սուրմալու, Ղարաքիլիսա, Շիրակ, Նոր-Քայազետ և այլն) և տեղերում ծանոթացել ազգաբնակչության, գաղթականության, զորքի վիճակին ու կարիքներին և իրենց օգտակար առաջարկություններով ու դիտողություններով նպաստել կառավարության ու տեղական իշխանությունների աշխատանքների բարելավմանը: 1918-1919 թթ. սովի ու համաճարակի ժամանակաշրջանում, ինչպես արդեն ասվել է, արտախորհրդարանական լայն գործունեություն էր տանում բժշկա-սանիտարական հանձնաժողովը՝ շրջելով գա-

<sup>80</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, ք. 148:

<sup>81</sup> Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 86, ք. 18:

<sup>82</sup> Նույն տեղում, ք. 68:

<sup>83</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 2, գ. 105, ք. 69:

<sup>84</sup> Նույն տեղում, գ. 86, ք. 13:

<sup>85</sup> «Ժողովուրդ», 19 սեպտեմբերի 1918թ.:

<sup>86</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 95, ք. 99 (1):

<sup>77</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 202, ց. 1, գ. 52, ք. 14:

<sup>78</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, ք. 26, ֆ. 202, ց. 1, գ. 46, մաս 1, ք. 4, «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», էջ 49-50:

<sup>79</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, ք. 79, ֆ. 199, ց. 1, գ. 27, ք. 114-115:

վառներում ու գյուղերում<sup>87</sup>։ Խորհրդարանը շաբաթական առնվազն մեկ անգամ լսում էր կառավարության զեկույցը սովի ու համաճարակի վերաբերյալ։

ՀՅԴ խմբակցությունը, իրեն համարելով հանրապետությունում տիրող իրավիճակի համար գլխավոր պատասխանատու մարմին, ստեղծել էր ներքին գործերի խնդիրներով զբաղվող մի ենթահամաժողով, որի նպատակն էր՝ հետևել Հայաստանի ներքին կյանքին ու համապատասխան միջոցներ ձեռնարկել պայքարելու նեգատիվ երևույթների դեմ։ Խմբակցությանը կից գործող այս մարմնին կարող էր դիմել տեղեկություններ իմացող ցանկացած քաղաքացի<sup>88</sup>։ Նման ձեռնարկը, ինչ խոսք, ուներ հասարակական կարծիքի ուժեղացման, հասարակության առողջացման, ամեն տեսակ չարաշահումներն ու ապօրինությունները կանխարգելող նպատակներ։

## 2. Խորհրդարանի ֆինանսավարկային գործունեությունը

Խորհրդարանի գործունեության կարևոր ոլորտներից էին բյուջեն, ֆինանսավարկային քաղաքականությունը։ Հանրապետության իշխանությունները մեծ ձգտում ունեին ստեղծելու սեփական ֆինանսական համակարգ, հանգամանք, որն անկախ պետականության կարևոր երաշխիքներից է։ Սկզբնական շրջանում քանի որ շատ դժվար էր ինքնուրույն ֆինանսական համակարգ ստեղծելը, միառժամանակ պահպանվեց ֆինանսական միությունը Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև։ Շրջանառության մեջ էր Անդրկովկասյան դրամը՝ բոները։ Դեռ Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի օրոք բաց էր թողնվել 300 մլն ռուբլի, որի պատասխանատվությունը ընկնում էր բոլոր երեք հանրապետությունների վրա։ Բայց քանի որ այդ գումարն արդեն սպառվել էր, 1918թ. հունիսի 20-ին Հայաստանի և Վրաստանի կառավարությունների միջև կնքվում է ֆինանսատնտեսական պայմանագիր համատեղ 200 մլն ռուբ. բոն բաց թողնելու մասին<sup>89</sup>։ Այդ գումարը բաշխվելու էր հետևյալ կերպ՝ Վրաստանին՝ 120 մլն. ռուբ., իսկ Հայաստանին 80 մլն. ռուբ.<sup>90</sup>։ Կողմերը բոները շրջանառությունից կարող էին հանել 1919թ. դեկտեմբերի 31-ից ոչ շուտ<sup>91</sup>։ Իսկ այդ ընթացքում պետք է քայլեր ձեռնարկվեին սեփական դրամանիշ մտցնելու ուղղությամբ։

Հայաստանի և Վրաստանի կողմից 200 մլն ռուբլի բոներ բաց թողնելու կապակցությամբ Ադրբեջանի կառավարությունը բողոք հայտնեց, որ առանց իր գիտության ու համաձայնության է մնան համաձայնագիր կայացվել, մինչդեռ ինքը ունի բոների մասնաբաժնի իրավունք։ Ադրբեջանական կողմի բողո-

քից հետո՝ սեպտեմբերի 6-ին, երեք հանրապետությունների լիազորները համաձայնագիր են ստորագրում շրջանառության մեջ եղած բոների նկատմամբ պատասխանատվության և լրացուցիչ 280 մլն ռուբլու դրամանիշներ տպագրելու մասին։ Նախատեսվում էր 280 մլն ռուբլուց 120 մլն-ը թողնել Վրաստանին, իսկ 80-ական մլն. ռուբլին Հայաստանին ու Ադրբեջանին<sup>92</sup>։

Ավելի ուշ՝ նոյեմբերի 15-ին, Վրաստանը և Ադրբեջանը լրացուցիչ պայմանագիր են կնքում, որով որոշվում է բաց թողնել նոր, լրացուցիչ բոներ՝ 160 մլն ռուբլու չափով՝ 80 մլն.-ը Վրաստանին և 80-ը Ադրբեջանին<sup>93</sup>։ Իսկ Հայաստանին իրավունք էր վերապահվում, եթե ինքը անհրաժեշտ կհամարեր լրացուցիչ բոներ ստանալու, ապա կարող էր համապատասխան պայմանագիր կնքել Վրաստանի և Ադրբեջանի հետ։ Վերոհիշյալ ֆինանսատնտեսական համաձայնագրերից դժվար չէ նկատել, որ դրանք, որպես կանոն, կնքվել են Վրաստանի համար ավելի նպաստավոր պայմաններով։

Հայաստանի խորհրդարանը 1918 թ. դեկտեմբերի 17-ին ընդունած օրենքով իրավունք տվեց Հայաստանի կառավարությանը Վրաստանի և Ադրբեջանի հետ հավասար իրավունքներով նոր բոներ թողարկելու համար<sup>94</sup>։ 1919թ. փետրվարի 10-ին համաձայնություն կայացվեց Հայաստանի և Վրաստանի միջև բոների երրորդ խմբաքանակը 320 մլն ռուբլու չափով թողարկելու մասին, որից 160-ը բաժին էր հասնելու Հայաստանին<sup>95</sup>։ Արդեն 1919թ. կեսերից շրջանառության մեջ են մտցվում արտասահմանում տպված հայկական դրամանիշերը (չեկերը), որոնք համարժեք էին անդրկովկասյան բոներին<sup>96</sup>։ Թե՛ անդրկովկասյան բոները, և թե՛ հայկական դրամանիշերը պետության կողմից ոսկու ֆոնդով և համապատասխան ապրանքային զանգվածով ապահովված չէին և դրանց շարունակական էմիսիաների հետևանքով դրամը մեծ արագությամբ արժեզրկվում էր։

Գալով խորհրդարանի բյուջետային աշխատանքին՝ պետք է ասել, որ նրա գործունեության շրջանում չի եղել հանրապետության տնտեսական ու սոցիալական զարգացման հստակ ծրագիր, փաստորեն չկար ման հիմնավորված տարեկան ամբողջական պետբյուջե, որը քննարկվեր ու հաստատվեր Խորհրդի կողմից։ Պետական ծախսերը կատարվում էին համաձայն *նախահաշիվների*, որը կազմում էր կառավարությունը և հաստատում խորհրդարանը։ Այստեղից էլ խորհրդի կողմից այս կամ այն նպատակի համար նախատեսվող վարկային հատկացումները ստանում էին օրենքի տեսք, անգամ եթե այդ գումարը կազմեր մի քանի հազար ռուբլի։ Ստացվում էր այնպես, որ խորհրդարանը օրենքների տեսքով պարբերաբար որոշումներ էր ընդունում վարկ բաց թողնելու մասին։ Խորհրդարանի կողմից հաստատված տարեկան

<sup>87</sup> «Ժողովուրդ», 13 հոկտեմբերի 1918թ.։

<sup>88</sup> «Զանգ», 8 հունվարի 1919թ.։

<sup>89</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.200, ց.1, գ.12, ք.40։

<sup>90</sup> «Հորիզոն», 20 հուլիսի 1918թ.։

<sup>91</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.200, ց.1, գ.12, ք.40։

<sup>92</sup> «Հորիզոն», 11 սեպտեմբերի 1918թ.։

<sup>93</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.200, ց.1, գ.84, ք.7։

<sup>94</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները», մաս 1, Երևան 1919, էջ 32։

<sup>95</sup> «Կայծ», 13 փետրվարի 1919թ.։

<sup>96</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, ց.1, գ.14, մաս 2, ք.74։

նախահաշիվների այդ ամբողջությունն էլ փաստորեն կազմում էր հանրապետության տարեկան պետությունը:

Այդպիսով, բյուջեն ձևավորվում էր նախահաշիվների միջոցով: Նախահաշիվները բաժանվում էին երկու մեծ խմբի՝ սովորական և արտակարգ ծախսերի: Շատ դեպքերում էլ խորհրդարան էին մտցվում, անհետաձգելի դեպքերի ու հանգամանքների թեւադրանքով, նախահաշիվից դուրս պահանջվող լրացուցիչ վարկեր տրամադրելու հարցեր, որոնք պետական վերահսկիչի համապատասխան եզրակացությունից հետո սովորաբար հաստատվում էին:

Պետությունից եկամտի հիմնական աղբյուրը հարկերն ու տուրքերն էին, որոնք ևս սահմանվում էին խորհրդարանի կողմից: Հայաստանի խորհրդի 1918թ. նոյեմբերի 6-ի թիվ 36 օրենքով 1919թ. հունվարի մեկից ամեն կարգի առևտրաարդյունաբերական ձեռնարկումների համար սահմանվեց տուրքի այսպիսի չափ. մինչ 25 հազ. ռուբլու շահույթ ապահովող ձեռնարկությունների համար՝ 12 տոկոս, իսկ 25 հազ. ռուբլուց ավելիի դեպքում՝ մինչև 15 տոկոս<sup>97</sup>:

Խորհրդարանը ֆինանսական քաղաքականությունը իրականացնելիս ելնում էր ոչ այնքան հանրապետության ֆինանսատնտեսական հնարավորությունից, որքան կատարվելիք հատկացման նպատակահարմարությունից: Դրա համար էլ որպես կանոն ավելի մեծ էին լինում ծախսերը, քան եկամուտները: Անկուսակցական գործիչ Գ. Չախուշյանի հայտնած տվյալներով՝ 1918թ. սեպտեմբերի մեկից մինչև 1920թ. հունվարի մեկը Հայաստանի գանձարանը ունեցել էր մոտ 30 մլն, իսկ ծախս 300 մլն հայկական չեկերով<sup>98</sup>: Չնայած դրսից ստացվող առանձին ֆինանսատնտեսական օգնություններին, այնուամենայնիվ, հանրապետությունում ծախսերը միշտ գերազանցել են եկամուտները: Այսինքն՝ ֆինանսաբյուջետային հաշվեկշիռը եղել է բացասական: «Չանգ» պաշտոնաթերթը գրում էր, որ խորհրդարանի ֆինանսական հանձնաժողովը «մինչև այժմ ոչ մի գաղափար չունի պետական մուտքերի մասին»<sup>99</sup>:

Ֆինանսաբյուջետային խնդրում խորհրդարանի և կառավարության միջև երբեմն ծագում էին ընդհարումներ: Կառավարության ներկայացրած նախահաշիվների հաստատումով կամ մերժումով էլ կարելի պարզել, թե խորհրդարանը ինչպիսի վերաբերմունք է ցույց տվել կառավարությանը:

Սովորաբար ֆինանսները այն գլխավոր լծակն են, որով խորհրդարանը իրենից կախվածության մեջ է դնում կառավարությանը: Բայց հաճախ կառավարությունը, խախտելով սահմանված կարգը, աշխատում էր ազատվել այդ կախվածությունից, և դա նրան հաջողվում էր: Բանն այն է, որ խորհրդարանի հաստատած ֆինանսական նախահաշիվները մասնավորեցված էին, այսինքն՝ համապատասխան պարագրաֆներով ու հոդվածներով ունեին ի-

<sup>97</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 21-22:

<sup>98</sup> Գ. Չախուշյան, Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 12:

<sup>99</sup> «Չանգ», 5 հունվարի 1919թ.:

րենց ֆինանսական ծախսերի կոնկրետ հասցեատերերը: Նման տարբերակված բաժանումը, ինչ խոսք, հեշտացնում էր վերահսկման գործը: Բայց հաճախ էր պատահում, որ կառավարությունը, ձգտելով իրեն ազատել խորհրդարանի կաշկանդող կապանքներից, խախտում էր խորհրդարանի սահմանած կարգը՝ նախահաշիվի մի պարագրաֆում հաստատագրված գումարը ծախսում էր մեկ ուրիշ հոդվածի տակ: Այսինքն՝ կառավարությունը նախահաշիվում սահմանված գումարները ծախսում էր իր հայեցողությամբ այնպես, ինչպես ինքն էր նպատակահարմար գտնում: Հենց այս հողի վրա էլ կառավարության և խորհրդարանի միջև ծագում էին առանձին կոնֆլիկտային իրավիճակներ: Օրինակ՝ 1918թ. աշնանը կառավարությունը, առանց պառլամենտի գիտության ու թույլտվության, գետնախնձոր գնելու գումարներից Ն. Գ. նախարարության պարենավորման բաժանմունքին էր տրամադրել 8,5 մլն ռուբլի վրաստանից, Հյուսիսային Կովկասից և Ուկրաինայից հաց (ալյուր), ծխախոտ, շաքար և այլ մթերքներ գնելու համար<sup>100</sup>: Բացի այդ արձանագրվել են այնպիսի դեպքեր, երբ կառավարությունը, առանց խորհրդարանի թույլտվության, գումարներ էր ծախսում (հատկապես ռազմական բնույթի) և հետին թվով միայն խորհրդին համապատասխան օրինագծեր էր ներկայացնում<sup>101</sup>:

Ֆինանսաբյուջետային քաղաքականության ոլորտում թույլ էին տրվում այլ խախտումներ ու շեղումներ: Իսկ այն պահերին, երբ խորհրդարանի լիազորությունները լրիվ ծավալով անցնում էին կառավարությանը (դա տեղի ունեցավ 1919թ. գարնանը, մեկ ամսով և 1920թ. վեց ամսով), այդ ընթացքում ինքնըստինքյան ստացվում էր այնպես, որ կառավարությունն ինքն էր իրեն ֆինանսավորում:

Այնուամենայնիվ, յուրացնելով եվրոպական ժողովրդավարական երկրների ֆինանսավարկային քաղաքականության սկզբունքները, ՀՀ-ում ևս սկսեցին աստիճանաբար արձատավորվել այդպիսիք: 1919թ. հունվարի 3-ին Հայաստանի խորհուրդը հաստատեց օրենք՝ 1919թ. ֆինանսատնտեսական նախահաշիվների կազմման, քննարկման ու հաստատման կարգի մասին: Այնտեղ սահմանվում էր հետևյալը: Յուրաքանչյուր նախարարության եկամուտների ու ծախսերի իր նախահաշիվները կազմում և մինչև փետրվարի 1-ը ներկայացնում էր ֆինանսների նախարարություն: Յուրաքանչյուր նախարարություն ելնում էր նախահաշիվի նախագիծը ենթարկում էր նախնական քննության միջգերատեսչական նախահաշիվային հանձնաժողովում<sup>102</sup>: Վերջինս բաղկացած էր տվյալ նախարարության, ֆինանսների նախարարության և պետական վերահսկողության լիազորի ներկայացուցիչներից: Նախահաշիվները քննող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահին նշանակում էր ֆինանսների նախարարը: Հիշյալ երեք գերատեսչությունների ներկայացու-

<sup>100</sup> «Կայծ», 28 նոյեմբերի եւ 1 դեկտեմբերի 1918թ.:

<sup>101</sup> «Կայծ», 26 հունվարի 1919թ.:

<sup>102</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919թ.», մաս 1, Երևան, 1919, էջ 38:

ցիչները, եթե համաձայնության էին գալիս, ապա նախահաշվի նախագծին հավանության էր տրվում, իսկ եթե ծագում էին տարաձայնություններ, ապա նրանցից յուրաքանչյուրը, այդ մասին տեղյակ պահելով իր վերադասին, նախահաշվի նախագծին կցում էր իր սեփական (մասնավոր) եզրակացությունը:

Նախահաշվային հանձնաժողովի կողմից քննարկված նախահաշիվների նախագիծը ի մի էր բերվում ֆինանսների նախարարությունում և համապատասխան եզրակացությամբ ուղարկվում նախարարների խորհուրդ: Նախարարների խորհուրդը, քննարկելով ու հարթելով վիճելի հարցերը, հավանություն էր տալիս նախահաշիվների նախագծին և դրանք կրկին վերադարձնում ֆինանսների նախարարություն: Վերջինս էլ հավանության արժանացած այդ համահավաք տվյալների հիման վրա կազմում էր պետական տարեկան եկամուտների ու ծախսերի (եկամտի) ամբողջական նախագիծը: Դրանից հետո եկամտի (բյուջեի) նախագիծը ներկայացվում էր նախարարների խորհուրդ և այնտեղ հավանության արժանանալուց ու պետական վերահսկիչի համապատասխան եզրակացությունից հետո՝ ոչ ուշ քան 1919թ. մարտի 20-ը մտցվում էր Հայաստանի խորհուրդ՝ քննարկման ու հաստատման համար: Հայաստանի խորհրդարանի կողմից հաստատվելուց հետո այն դառնում էր օրենք և դրվում գործողության մեջ<sup>103</sup>:

Առաջ գնալով ասենք, որ այս նույն օրենքի պահանջներով կազմվեց նաև եկամտի 1920թ. պետական տարեկան նախահաշիվը միայն այն տարբերությամբ, որ դրա կազմում քննարկման ու հաստատման նախապատրաստական փուլը պետք է տեղի ունենար 1919 թ. նոյեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 20-ը<sup>104</sup>:

1919 թ. նոյեմբերի 17-ին երկրորդ գումարման խորհրդարանի «ֆինանսական նախահաշիվների և պետական եկամտացույցը կազմելու, քննելու և հաստատելու մասին» հաստատած լրացուցիչ օրենքով.

ա) 1920 թ. բյուջետային տարին հաշվվում էր նույն տարվա հունվարի մեկից.

բ) նախարարությունների և պետական վերահսկողության եկամուտքի նախահաշիվների նախագծերը միաժամանակ ուղարկվում են ֆինանսների նախարարություն՝ յոթ օրինակ և պետական վերահսկողություն մեկ օրինակ՝ 1919 թ. նոյեմբերի 10-ից ոչ ուշ<sup>105</sup>: Միաժամանակ, ղեկավարվելով ռուսական նախկին պետության մեջ գոյություն ունեցող օրենքների ժողովածուի (Свод — законно), հ. I, մաս I, հոդված 116-ով, եթե պետական եկամտացույցը (բյուջեն) մինչև նախահաշվային ժամանակաշրջանի (բյուջետային տարվա) սկիզբը չի հաստատվում, ապա ուժի մեջ է մնում նախորդ տարվա եկամտացույցը<sup>106</sup>: Ի դեպ, միջազգայնորեն ընդունված և ՀՀ կիրառվող այս կարգը (օ-

<sup>103</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.202, ց.1, գ.41, ք.4:

<sup>104</sup> Նույն տեղում, գ.48, ք.83:

<sup>105</sup> ՊԿՊԱ Ժ.202, ց.1, գ.333, ք.23:

<sup>106</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.202, ց.1, գ.63, ք.51:

րենքը) տեղ է գտել նաև ժամանակակից ՀՀ նորահաստատ սահմանադրության թիվ 76 հոդվածում<sup>107</sup>:

ՀՀ ֆինանսների նախարարության արխիվային ֆոնդի (202) նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ձգձգումների պատճառով խորհրդարանը չի հասցրել նախատեսված ժամկետում քննել ու հաստատել տարեկան կամ կիսամյակային պետբյուջեի ֆինանսական նախահաշիվը: Այսպես՝ 1919 թ. ապրիլի 30-ին ֆինանսների նախարարը զեկուցում էր նախարարների խորհրդին, որ առ այսօր 1919 թ. ծախսերի նախահաշիվը չի քննվել ու հաստատվել Հայաստանի խորհրդում, ուստի, համաձայն սահմանված օրենքի, նախարարությունը շարունակում է գործել 1918 թ. նախահաշվով<sup>108</sup>: Մասնավորապես, 1919 թ. հունվար-ապրիլ ամիսների համար պետական հիմնարկությունները պետք է օգտվեին 1918թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների համար բացված վարկերի չափով<sup>109</sup>:

Ցավոք, արտասովոր ծանր պայմաններում հայտնված ու չափազանց կարճատև կյանք ապրած ՀՀ-ը չկարողացավ և չէր էլ կարող բնականոն օրենսդրական ու ֆինանսատնտեսական կյանք ունենալ:

### 3. Հողային խնդիրը

Նախքան հողային հարցի խորհրդարանական քննարկումներին անցնելը համառոտակի կանգ առնենք կուսակցությունների ագրարային ծրագրերի վրա: Ինչպես հայտնի է, դեռ ռուսական առաջին հեղափոխության տարիներին, երբ առանձնապես շատ սուր էր կանգնած ագրարային-գյուղացիական հարցը, քաղաքական շատ կուսակցություններ հենց այդ հեղափոխության փորձով մշակեցին կամ ավելի հստակեցրին իրենց ագրարային ծրագրերը:

Համառուսական սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունը (էստեռները), որը կազմակերպորեն ձևավորվել էր 1902թ. սկզբին նարոդնիկական տիպի մի շարք խմբակների ու կազմակերպությունների միափորումից, իրենից ներկայացնում էր գյուղացիական տիպի կուսակցություն: Սրանք 1906թ. հունվարին իրենց առաջին համագումարում մշակեցին վերջնական ագրարային ծրագիրը<sup>110</sup>:

Էստեռները ագրարային հարցում առաջ էին քաշում ու պաշտպանում հողի *սոցիալիզացիայի* (համայնացման) գաղափարը: Սրա իմաստն այն էր, որ

<sup>107</sup> «ՀՀ Սահմանադրություն», Ե., 1995, էջ 36-37:

<sup>108</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.202, ց.1, գ.52, ք.17:

<sup>109</sup> Նույն տեղում, ք.18:

<sup>110</sup> В. Н. Гинев, Аграрный вопрос и мелкобуржуазные партии в России в 1917г., Ленинград, 1977, с. 12-13 и 34.



պետք է բռնագրավվեին ամեն տիպի կալվածատիրական ու մասնատիրական հողերը և տրվեին համայնքների և տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինությանը: Այսինքն՝ վերացվելու էր հողի մասնավոր սեփականությունը և այն հայտարարվելու էր համաժողովրդական սեփականություն: Եւ այդ համաժողովրդական հայտարարված հողը հավասարաբարական սկզբունքով, աշխատանքային ու սպառողական նորմաներով տրվելու էր ամբողջ գյուղացիությանը՝ նրանից օգտվելու համար<sup>111</sup>: Նախատեսվում էր ժամանակ առ ժամանակ կատարել հողերի վերաբաժանություն ու հավասարեցում: Էստոնների ծրագրում հատկանշականն այն էր, որ նրանք ուզում էին վերացնել միայն հողի մասնավոր սեփականությունը՝ պահպանելով, սակայն, արտադրության մյուս միջոցների մասնավոր սեփականությունը: Այլ կերպ ասած՝ նրանք պաշտպանում էին միայն հողի սոցիալիզացիան, բայց ոչ արտադրության համայնացումը (ինչպես որ ծրագրում էին բոլշևիկները): Էստոների նման մտահանգումը ելուն էր կոնկրետ այդ ժամանակվա գյուղացիության մեծամասնության այն պահանջից, որ իրենք երազում են հողի սոցիալիզացիայի մասին, սակայն անվստահությամբ և նույնիսկ թշնամաբար են վերաբերվում արտադրության սոցիալիզացիային: Գյուղացիական այս պահանջը այնքան պոպուլյար ու գերիշխող էր, որ պատահական չէ, որ գյուղացիական 242 նակագների ձևով այն նույնիսկ դրվեց 1917թ. հոկտեմբերի 26-ի (ն.տ.նոյեմբերի 8-ի) «Հողի մասին» հայտանի դեկրետի հիմքում:

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին ՀՅԴ-ն տեսնելով, որ էստոների ագրարային ծրագիրը ամենից ավելի է մոտ ու հոգեհարազատ գյուղացիության մեծամասնության ցանկությանը և ձգտումներին, ինքը ևս պաշտպանեց հողի սոցիալիզացիայի գաղափարը և այն ամրագրեց կուսակցության 1907թ. Վիեննայի 4-րդ ընդհանուր ժողովում ընդունված երկրորդ ծրագրում: ՀՅԴ նվազագույն ծրագրի Անդրկովկասին վերաբերող տնտեսական պահանջներում առաջադրվում էր հետևյալը.

1. Հողի սոցիալիզացիա (համայնացում)
2. Հողը դադարում է մասնավոր սեփականության և առուծախի առարկա լինելուց
3. Արբունի, կրոնական, կալվածատիրական հողերը դարձնել ժողովրդի սեփականություն
4. Հողից օգտվելու իրավունքը պատկանում է աշխատավորներին, աշխատավորական սկզբունքով:
5. Հողը պատկանում է համայնքին և տեղական ինքնակառավարման մարմիններին և այլն<sup>112</sup>:

<sup>111</sup> Մ. Նեկրասով, *Ինչպիսի կարգեր են հարկավոր ժողովրդին, Ս. - Պետերբուրգ, 1907, էջ 30:*

<sup>112</sup> «Ծրագիր Հ.Յ. Դաշնակցության», *Թիֆլիս, 1917, էջ 27, «Հորիզոն», 1 հունիսի 1917թ., «Արև», 28 ապրիլի 1917թ.:*

Այդ նշանակում է, որ Դաշնակցությունը ագրարային խնդրում որպես էստական տիպի սոցիալիստական կուսակցություն՝ հողային-գյուղացիական խնդրում արտահայտվել է հողի համայնացման օգտին: Հողի համայնացման ու հավասարեցման մեջ գյուղացիությունը տեսնում էր սոցիալական արդարության երաշխիք: Այլ է խնդիրը, թե հետագայում այն կյանքում ինչպես կիրառործվեր: Մի խոսքով՝ ՀՅԴ հողային ծրագիրը, նմանվելով էստականին, հակոտնյա է եղել հողի մասնավոր սեփականությանը, առք ու վաճառքին, որովհետև աշխատավոր գյուղացիության մեծամասնությունը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում՝ այն ժամանակներում, մի շարք հանգամանքների թելադրանքով, դեմ էր արտահայտվում հողի մասնավոր սեփականությանը: Հայ գյուղացիությունը հիմնականում հավանություն է տվել Դաշնակցության, ասել է թե՛ էստոների հողային ծրագրին: Բայց այդ ծրագրի գործադրումը կյանքում այլ ընթացք ստացավ:

Ռուսական սոցիալ-դեմոկրատական կուսակցության երկու թևերը՝ մենշևիկները և բոլշևիկները, դարձյալ ռուսական առաջին հեղափոխության տարիներին վերջնականորեն ձևակերպեցին և ավարտուն տեսք տվեցին իրենց ագրարային ծրագրերին: Եթե մենշևիկները հանդես էին գալիս հողի *մուհիցիալացման*, ապա բոլշևիկները՝ հողի *ազգայնացման* պահանջով: Մենշևիկյան մուհիցիալիզացիայի ծրագրի էությունն այն էր, որ կալվածատիրական հողերը մասնակի հետգնման միջոցով պետք է վերցվեին նրանց տերերից և համձնվեին տեղական ինքնակառավարման մարմիններին (մուհիցիալիստներին), որոնք էլ իրենց հերթին հողը վարձակալության կտային գյուղացիներին: Սրանց կողքին պահպանվելու էր հողի սեփականատեր գյուղացիների կարգախոսը: Ռուսական Սոց.-դեմ. կուսակցության բոլշևիկյան թևը համոզե էր գալիս կալվածատիրական, եկեղացական և այլ տիպի հողերի անվերապահ բռնագրավման ու ազգայնացման, այսինքն՝ պետականացման պահանջով:

Երբ համեմատում ենք էստոների հողի սոցիալիզացիայի և բոլշևիկների ազգայնացման ծրագրերը, ապա տեսնում ենք զգալի նմանություն և նույնքան էլ տարբերություն դրանց միջև: Ե՛վ հողի ազգայնացումը, և՛ «սոցիալիզացիան» ենթադրում են հողի մասնավոր սեփականության վերացում: Բայց եթե ազգայնացման ժամանակ հողը դառնում է պետական սեփականություն, ապա սոցիալիզացիայի ժամանակ այն անցնում էր համայնքների, կոոպերատիվների, տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինությանը: Էստոները դեմ էին հողի պետականացմանը նրա համար, որպեսզի այն չլինեին պետական բյուրոկրատական ապարատի ձեռքը և չարաշահման չենթարկվեր<sup>113</sup>: Եվ պետք է ասել, որ, իրոք, նրանք ճիշտ էին իրենց մտավախությունների մեջ:

<sup>113</sup> В. Н. Гинев, указ. соч., с.35; Программы политических партии в России, М., 1917, с. 53:

1906 թ. էստեռների կուսակցության ներսում առաջացավ մի խումբ, որը պաշտպանեց հողի ազգայնացման պահանջը: Սրանք շուտով առանձնացան էստեռներից և հիմնեցին «Ժողովրդական սոցիալիստների» (էնէսների) ինքնուրույն կուսակցությունը<sup>114</sup>: Համառուսական էստեռական, սոցիալ-դեմոկրատական՝ մենշևիկյան և բոլշևիկյան կուսակցությունների հայկական հատվածները (կազմակերպությունները) հետևողականորեն պաշտպանում էին իրենց մայր կուսակցությունների ծրագրային պահանջները ինչպես ռազմավարական ու մարտավարական այլ խնդիրներում, այնպես էլ ագրարային հարցում:

Ինչ վերաբերում էր ՀԺԿ, ապա նրա հողային ծրագիրը ուներ երկակի բնույթ: Իրենց առաջին ծրագրում սրանք մի կողմից հանդես էին գալիս կալվածատիրական, ուղեխային, կաբինետային, վանքապատկան, խոշոր մասնատիրական հողերի ստիպողական (հարկադրական) բռնագրավման և ըստ աշխատանքային նորմաների երկրագործ ընտանիքներին բաժանելու օգտին<sup>115</sup>, իսկ մյուս կողմից պահպանվելու էին մանր հողատերերի, ագարակատերերի, գործարանների տարածքներում եղած գեմստվային և այլ հիմնարկությունների հողատիրման իրավունքները: Մասնավոր սեփականատերերի հողերը պետք է գնվեին պետության հաշվին՝ արդարացի գներով<sup>116</sup>: Որքան էլ անսովոր հնչի, բուրժուական համարվող այս կուսակցությունը դեմ է արտահայտվել առք ու վաճառքին<sup>117</sup>:

Արտախորհրդարանական քաղաքական ուժերից հողային խնդրի լուծման ամբողջական և հստակ ծրագիր չունեին «սպեցիֆիկները»: Սրանք թույլատրելի էին համարում թե՛ պետական և թե՛ մասնավոր հողային սեփականության ձևերը: Օրինակ Դ. Անանուրը Հայաստանում հողային հարցի լուծման ճանապարհին թույլատրելի էր համարում հողի պետականացումը և դրանք տեղական վարձակալության տալը հող մշակողներին՝ «խրախուսելով թե՛ կոլեկտիվ և թե՛ անհատական ձեռներեցությունը»<sup>118</sup>: Պետական հողատիրության կողքին Անանուրը անհրաժեշտ էր գտնում նաև «նպաստել մասնավոր հողատիրության ինստիտուտի գոյությանը՝ նպատակ ունենալով խրախուսել մարդկանց մասնավոր ձեռներեցությունը»<sup>119</sup>: ՍԴ Հնչակյանները հողային խնդրում պաշտպանում էին մենշևիկների մոնիցիպալացման գաղափարը<sup>120</sup>:

Ինչպես տեսնում ենք, հայ քաղաքական կուսակցությունները, առաջնորդվելով իրենց կուսակցությունների ագրարային ծրագրերով, տարակարծիք էին հողային խնդրի լուծման ուղիների ու բովանդակության հարցում: Այսպես՝ հայ մենշևիկները պաշտպանում էին հողի մոնիցիպալացման ծրա-

գիրը, ՀՅԴ-ն և էստեռները հողի համայնացման գաղափարը, իսկ Հայ ժողովրդականները վճռականորեն դեմ էին հողերի բռնագրավմանը և համայնացմանը: Վերջիններս պաշտպանում էին հողի մասնավոր սեփականությունը, բայց ոչ կալվածատիրական հողատիրությունը: Տեսակետերի այս բազմազանությունը խանգարում էր հողային խնդրի արագ լուծմանը: Համեմատության համար ասենք, որ հողային հարցի լուծումը Վրաստանում ավելի իրատես դրվեց և լուծման ավելի գործնական քայլեր արվեցին, քան Հայաստանում: 1918թ. նոյեմբերին հիմնական կառավարող վրաց սոց.-դեմ. կուսակցության խորհրդակցություններից մեկում որոշվեց հրաժարվել մենշևիկյան մոնիցիպալիզացիայի ծրագրից և հողը որպես **մասնավոր սեփականություն ոչ բարձր գներով վաճառել գյուղացիներին**<sup>121</sup>: Այսինքն՝ ընտրվեց հողային հարցի լուծման ստոյիպինյան ուղին: Թույլատրվելու էր հողի ազատ առք ու վաճառք: Հիմնավորելով իրենց այս քայլը՝ վրաց մենշևիկների առաջնորդ Ն. Ժորդանիան գտնում էր, որ ստեղծված պայմաններում անկարելի է մոնիցիպալիզացիան կյանքում իրականացնել: Այդ իսկ պատճառով 1918թ. նոյեմբերին գումարված վրաց մենշևիկների 8-րդ խորհրդաժողովը որոշեց՝ պետության հողային ֆոնդը վերածել կտորների (պարցեկների) ու մատչելի գներով տալ գյուղացիներին որպես սեփականություն<sup>122</sup>: Այդ վճռի դեմ բողոքեցին վրաց էստեռները, ազգային-դեմոկրատները, սոցիալիստ-ֆեդերալիստները, բայց զուր: Այն գործադրվեց, բայց ոչ, իհարկե, հստակորեն և հետևողականորեն:

Հողային խնդիրը այլ ընթացք ունեցավ Հայաստանում: Թեև խորհրդարանում հիմնականում տոն տվող ՀՅԴ խմբակցությունը էստեռականի հետ միասին պաշտպանում էր հողի սոցիալիզացիայի գաղափարը, սակայն, երբ խոսք էր գնում դրան օրենքի ուժ տալու և կենսագործելու մասին, ապա ՀՅԴ խմբակցության մեծամասնությունը ձեռնպահ էր մնում: Նույն կերպ հողերի համայնացմանը դեմ էր արտահայտվում նաև կառավարությունը՝ գտնելով, որ դեռևս վաղաժամ է անցնել նման քաղաքականության: Բոլոր խմբակցությունները, թերևս, մեկ հարցում միակամ էին, դա՛ այն էր, որ պետք է վերացվեր կալվածատիրական հողատիրությունը: Հայ խմբակցությունների դրսևորած հետևողականությունը այս խնդրում պետք է բացատրել քաղաքական այն համագամանքով, որ Հայաստանում մշակելի ու լավորակ հողերը գտնվում էին գերազանցապես մահմեդական կալվածատերերի ձեռքում, ուստի և պետք էր դրանց զրկել իրենց այդ տնտեսական հենարանից: Հայ ժողովրդականները նույնպես գտնում էին, որ կալվածատիրական հողերը պետք է հանձնել ժողովրդին<sup>123</sup>:

Այսպիսով՝ հայ քաղաքական գրեթե բոլոր կուսակցությունները արտահայտվել են կալվածատիրական հողատիրության վերացման և հողի պետա-

<sup>114</sup> В. Н. Гинев, *նշվ. աշխ.*, էջ 36:

<sup>115</sup> «Ծրագիր Հայ ժողովրդական կուսակցության», Ե., 1919, էջ 11-12:

<sup>116</sup> «Ժողովուրդ», 29 սեպտեմբերի 1918թ.:

<sup>117</sup> «Ծրագիր...», էջ 11:

<sup>118</sup> «Հայաստանի կոոպերացիա», 30 նոյեմբերի 1919թ. (թիվ 19), էջ 581:

<sup>119</sup> «Հայաստանի կոոպերացիա», 30 նոյեմբերի 1919թ., էջ 582:

<sup>120</sup> ՀՀ ԶԲԿ ՊԿԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 196, ք. 7:

<sup>121</sup> «Նոր հորիզոն», 24 նոյեմբերի 1918թ., «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 20 նոյեմբերի 1918թ.:

<sup>122</sup> «Նոր հորիզոն», 24 նոյեմբերի 1918թ.:

<sup>123</sup> «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 12 նոյեմբերի 1918թ.:

կան կամ ինքնավարական-համայնքային սեփականության պայմաններում, դրանք երկրագործ բնակչությանը, ըստ աշխատանքային և սպառողական նորմաների, բաժանելու օգտին: Նրանք թույլատրելի են համարել հողի մասնավոր սեփականություն միայն փոքր չափերով (ցածր նորմաներով) և պայմանով, որ այն պետք է մշակվեր միայն երկրագործի և իր ընտանիքի անդամների սեփական աշխատանքով:

Հայաստանի բնակչությանը սովահարությունից փրկելու և երկրի արտադրողական ուժերը վերականգնելու ու խթանելու ամենահուսալի ուղին նախ սեփական գյուղատնտեսության զարգացումն էր: Իսկ դրա համար անհրաժեշտ էր հողային խնդրին սկզբունքային ու վերջնական լուծում տալ:

Ամենից առաջ նշենք, որ հողային հարցում առաջին պլանում կանգնած էր ոչ թե հողասակավությունը, այլ հողակարգավորումը, գյուղացիությանը անհրաժեշտ սերմացուով և գյուղատնտեսական ապահովելը: Օրինակ՝ խորհրդարանական հանձնաժողովներից մեկը՝ պատգամավոր Ս. Թորոսյանի գլխավորությամբ, ուսումնասիրելով Էջմիածնի ու Սուրմալուի գավառները, հանգել էր այն հետևության, որ հողային խնդրում «մտահոգիչը ոչ այնքան հողասակավությունն էր, որքան սերմացու չլինելը»<sup>124</sup>: Պարզվել է, որ եղած հողերի միայն չնչին մասն է ցանված եղել: Որ Հայաստանի Հանրապետությունում հողային խնդիրը սուր բնույթ չուներ, փաստում էր նաև իշխող կուսակցությանը ոչ համակիր «սպեցիֆիկ» Դ. Անանունը և ուրիշներ<sup>125</sup>: «Հողի պատկանությունը չէ մեզ հաղթող երևույթը, գրում էր Դ. Անանունը, այլ հայկական սակավամարդությունը»<sup>126</sup>: Շիրակի մահանգապետ Կ. Սասունին հայտնում էր, որ «Հայաստանում հողի պակաս չկար»<sup>127</sup>: Բանն այն է, որ հանրապետության սահմաններում թուրք-մահմեդական տարրերի աստիճանական արտագաղթի հետևանքով գոյացել էին մեծ քանակությամբ անմշակ ու անաշխատող հողեր: Խնդիրը միայն սահմանված կարգով ու նորմաներով դրանք կարիքավոր ազգաբնակչությանը բաշխելն էր և մշակության համար համապատասխան պայմանների (սերմացուի, գործիքների, ոռոգման և այլն) ապահովումը:

Գալով հողային խնդրի խորհրդարանական քննարկումներին՝ պետք է ասել, որ հողային օրենսդրության բացակայության պայմաններում, ի սկզբանե խորհուրդը որոշեց առաջնորդվել 1917 թ. դեկտեմբերի 16-ի Անդրկովկասյան կոմիսարիատի և 1918 թ. մարտի 7-ի Անդրկովկասյան Սեյմի ընդունած արքունական, նախկին ուղեյային, եկեղեցական, վանքապատկան, մասնավոր հողատերերի (կալվածատերերի), ինչպես նաև հիմնարկությունների և իրավական անձների կալվածքների բռնագրավման մասին հողային օրենքնե-

րով<sup>128</sup>: Մասնավորապես Սեյմի մարտի 7-ի թիվ 203 օրենքը սահմանում էր հետևյալը.

1. Բացի այն հողաբաժիններից, որ հիշված են ներկա օրենքի 2-րդ հոդվածում, մնացած բոլոր մասնատիրական հողերը ձրիաբար գրավվում են և կազմում հողային ֆոնդ.

2. Գրավման ենթակա կալվածքների տերերին թողնվում են հողաբաժիններ հետևյալ չափերով. ա) եթե գրավող կալվածքը գտնվում է մի շրջանում, ուր արժեքավոր կուլտուրաների տնտեսություն է վարվում՝ 7 դեսյատին. բ) հացահատիկային տնտեսության շրջանում՝ 15 դեսյատին. գ) գերազանցապես անասնապահական տնտեսության շրջանում՝ 40 դեսյատին<sup>129</sup>:

Ծանոթագրության կարգով տեղեկացնենք, որ հողային կոմիտեներին իրավունք էր տրվում, կախված տեղական պայմաններից, կատարել հողային հավելում հետևյալ չափով՝ առաջին կարգախմբինը մինչև 10 դես., երկրորդինը՝ մինչև 20 և երրորդինը՝ մինչև 50 դեսյատին<sup>130</sup>:

Համաձայն այդ օրենքի՝ բռնագրավման ենթակա մնացած ավելցուկ հողերը վերաձվելու էին պետական հողային ֆոնդի և հողային կոմիտեների կողմից աշխատանքային ու սպառողական նորմաներով (չափաբաժիններով) տրվելու էին աշխատավոր գյուղացիության կարիքները բավարարելու համար:

Ինչպես տեսնում ենք, Սեյմի մարտի 7-ի հողային օրենքը առհասարակ չէր վերացնում հողի մասնավոր սեփականության ինստիտուտը, նախկին կալվածատերերին լիովին չէր հողազրկում, այլ միայն հարկադրաբար կրճատում էր նրանց ունեցածի չափը՝ սահմանելով մինչև 7, 15 և 40 դեսյատին:

Ավելացնենք, որ Սեյմի մարտի 7-ի օրենքի Հայաստանում կիրարկման դեպքում հողային մեծ ֆոնդ չէր գոյանա: Բանն այն է, որ, ինչպես հայտնի է, Անդրկովկասյան մահանգների մեջ կալվածատիրական հողատիրությունը Երևանի մահանգում թույլ էր զարգացած: Կովկասյան տարեցույցի 1907թ. տվյալներով՝ Երևանի մահանգում (մահանգի վեց գավառներում, առանց Նախիջևանի գավառի) մասնավոր կալվածատիրական հողերը կազմել են ընդամենը 79475 դեսյատին (կյուրացրած ընդամենը 80 հազար դեսյատին) հողային սեփականություն<sup>131</sup>: Եթե նկատի ունենանք, որ մահանգի հողատերերը եղել են հիմնականում մանր հողային սեփականատերեր և որ այդ 80 հազար դեսյատինից պետք է դուրս հանվեն ամեն սեփականատիրոջը հասնելիք չափաբաժինները՝ առնվազն 7,15 և 40 դեսյատինով, ապա այդ 80 հազար դեսյատին հողային ֆոնդը կարող էր շուրջ կիսով չափ կրճատվել:

<sup>124</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 2, թ. 48:

<sup>125</sup> «Նոր սերունդ», 17 մարտի 1920թ.:

<sup>126</sup> «Հայաստանի կոոպերացիա», 30 սեպտեմբերի 1919թ., էջ 581:

<sup>127</sup> Կ. Սասունի, Մայիսյան խռովությունը և թաքարական ապստամբ շրջանները, Պեյ-րոն, 1968, էջ 152-153:

<sup>128</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 203, ց. 1, գ. 753, թ. 8, «Հորիզոն», 10 մարտի 1918թ.:

<sup>129</sup> Сборник заказов, инструкций и разъяснений по министерству земледелия, сост. Асатиани, Тифлис, 1918, с. 46; «Հայաստանի կոոպերացիա», 15 հունիսի 1919թ., (թիվ 12), էջ 375:

<sup>130</sup> Сборник законов..., с. 46.

<sup>131</sup> Кавказский календарь на 1907г., Тифлис, 1906, с. 72-80.

Հիմք ընդունելով Անդրկովկասյան Սեյմի հողային օրենքը՝ Հայաստանի պայմանների համար խորհրդարանը 1918թ. դեկտեմբերի 7-ին հատուկ որոշումով գրեթե նույնությամբ ընդունեց Սեյմի հիշյալ հողային օրենքը: Այսինքն՝ նախկին կալվածատերերին թողնվում էին հողաբաժիններ միայն հետևյալ չափերով. ա) արժեքավոր կուլտուրաների մշակության շրջաններում՝ 7 դեսյատին. բ) հացահատիկային տնտեսության շրջաններում՝ 15 դեսյատին և գ) անասնապահական շրջաններում 40 դեսյատին<sup>132</sup>: Գյուղատնտեսության և պետությունների գլխավոր վարչությանը կից հիմնվեց հողային գլխավոր կոմիտե (նախագահն էր Թ. Տոշյանը), իսկ տեղերում՝ գավառական հողային կոմիտեներ, որոնք և պետք է կատարեին կալվածատիրական, եկեղեցական, վանքապատկան և այլ մասնատիրական տիպի կալվածքների գրավման և դրանք հողագուրկ ու սակավահող բնակչությանը վերաբաժանման գործը: Բացի այդ, ընդունվեց ժամանակավոր հողային կոմիտեների կանոնադրություն:

Համաձայն կանոնադրության՝ վերոհիշյալ նորմաներից ավել հողերը անհատույց վերցվում էին նրանց նախկին տերերից և հանձնվում հողային կոմիտեների իրավասությանը: Հողային կոմիտեները՝ որպես դեմոկրատական իշխանության մարմիններ, պետք է որոշեին հողագուրկ և սակավահող գյուղական բնակչության քանակը և ըստ աշխատանքային ու սպառողական նորմաների (ըստ կարիքի և մշակելու հնարավորության)՝ բաժանել ժողովրդին<sup>133</sup>:

Սակայն պետք է նշել, որ հողային կոմիտեների կողմից կալվածատիրական, եկեղեցապատկան և այլ մասնատիրական հողերի բռնագրավման ու պետականացման գործը կատարվում էր շատ դանդաղ ու անկանոն կերպով<sup>134</sup>: Հողային վերափոխումների խնդրով մտահոգ էսեռների կուսակցության պաշտոնաթերթը իր համարներից մեկում, գետեղելով Հողային գլխավոր կոմիտեի հայտարարությունը, տեղեկացնում էր, որ արդեն կազմակերպված են գավառական հողային կոմիտեներ, և նրանք սկսել են ի կատար ածել հողային բարեփոխումների վերաբերյալ օրենքները<sup>135</sup>: Այդ ամենը հայտարարությունների կարգով կարծես նորմալ էր ընթանում, սակայն իրական կյանքում հողերի բռնագրավումների իրագործումը հանդիպում էր մի շարք դժվարությունների ու արգելափակոցների:

Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել մի շատ էական հանգամանքի վրա: Հողային խնդրի ձգձգման ու անորոշության պատճառներից մեկն այն էր, որ, եթե հանրապետության հողային իրավասության մարմինները անցնեին, օրինակ, եկեղեցական ու վանքապատկան հողերի բռնագրավման, այդ

նշանակում էր, որ պետք է բռնագրավվեին նաև Ս. Էջմիածնի կալվածքները: Մինչդեռ հանրապետությունը, որ այդ կալվածքների եկամուտներով էին պահվում Գևորգյան ճեմարանը, մատենադարանը, տպարանը, թանգարանը և այլն: Ուստի՝ խլել այդ հողերը նշանակում էր գրկել հայ ազգին իր նվիրական հիմնադրություններից: Նման քայլը կարող էր առաջ բերել ժողովրդի ընդվզում, ինչպիսին որ տեղի ունեցավ ցարիզմի օրոք՝ 1903-1905 թթ. ընթացքում: Հասկանալի է, որ Դաշնակցությունը հազիվ թե գնար մեծ քայլի: Եղավ մի պահ, երբ առանձին «տաք գլուխների» պատճառով, որոշ սառնություն ու օտարացում նկատվեց եկեղեցու և իշխանությունների միջև: Բայց դա հարթվեց: Կառավարությունը չգնաց ինքնասպանության: ՀԺԿ, որը նույնպես ազգային էր, գտնում էր, որ վանքապատկան հողերը առայժմ պետք է մնան անձեռնմխելի (չնայած իրենց ծրագրերում խոսվում էր դրանց բռնագրավման մասին) և հողային հարցի վերջնական ու համապարփակ լուծումը թողնել Հայոց ապագա Սահմանադիր ժողովին<sup>136</sup>: Որոշվում է Էջմիածնապատկան կալվածքները չբռնագրավել<sup>137</sup>: Այստեղ մենք տեսնում ենք երկվություն ու հակասություն հիմնական կառավարող կուսակցության որդեգրած ագրարային ծրագրի և գործնական քաղաքականության միջև:

Հողային խնդրի ձգձգման պատճառներից մեկն էլ այն էր, որ ՀՀ սահմանները վերջնականապես որոշված չէին: Դրա համար էլ իշխանությունները գտնում էին, որ հնարավոր չէ հողային ֆոնդի քանակը ճիշտ որոշել և հաստատուն հողային վերաբաժանություն կատարել: Այդ իսկ պատճառով շատերը գտնում էին, որ պետք է բավարարվել հողային ժամանակավոր օրենքներով ու մասնակի բարեփոխումներով մինչև որ կլուծվի Հայկական հարցը, կիրավիրվի Միացյալ Հայաստանի Սահմանադիր ժողովը, և այն ժամանակ հողային խնդիրը արմատական ու համապարփակ լուծում կստանա: Ինքնին հասկանալի է, որ վերը նշված հանգամանքները առաջ էին բերում անորոշություն հողային խնդրի լուծման գործում:

Անարդյունավետ էր հողային կոմիտեների աշխատանքը<sup>138</sup>: Սրանք չունեին ավելցուկ հողերի գրավման և կարիքավոր գյուղացիներին հատկացման հստակ ծրագիր: Էլ չենք խոսում, որ իրենց աշխատանքի ընթացքում երբեմն թույլ էին տրվում չարաշահումներ ու անարդարություններ: Այսպես, օ-

<sup>136</sup> «Ժողովուրդ», 25 հոկտեմբերի 1918թ.:

<sup>137</sup> «Հորիզոն», 31 դեկտեմբերի 1917թ.:

<sup>138</sup> Ավելի ուշ՝ 1920 թ. հունիսի 4-ի հողային օրենքով անգործության մատնված հողային կոմիտեները փոխադրվեցին գյուղնախարարի կողմից նշանակվող հողային հատուկ մարմիններով, որոնք ունեին ավելի լայն իրավասություններ: Երեքական հոգուց բաղկացած հողային այս մարմինները ևս կոչված էին իրականացնելու մասնատիրական և քրյալ հողերի պետականացման, դրանք սակավահող գյուղացիներին բաշխման, զաղթականության տեղավորման, տեղերում ծագած հողային վեճերի կարգավորման և այլ խնդիրներ: Այս ուղղությամբ որոշ գործնական քայլեր կատարվեցին, սակայն հետագա քաղաքական դեպքերը թույլ չտվեցին շարունակել հողային բարեփոխումների գործընթացը:

<sup>132</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.203, ց.2, գ.129, ք.4:

<sup>133</sup> «Հորիզոն», 4 հունվարի 1918 թ.:

<sup>134</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.198, ց.1, գ.2, ք.48:

<sup>135</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 21 օգոստոսի 1919թ.:

րինակ, ՀՅԴ Էջմիածնի շրջանային կոմիտեի պաշտոնաթերթը տեղեկացնում է, որ Էջմիածնի և Սուրմալուի գավառների հողային կոմիտեն հողերի գրավումները փոխանակ կատարելու խոշոր կալվածատերերից, դրանք իրականացում է միայն առանձին մանր հողատերերի նկատմամբ, որոնց տարածքը չի գերազանցում 12-14 դեսյատինը<sup>139</sup>։ «Մենք զարմանում ենք,- հարց է տալիս թերթը,- թե հողային կոմիտեն ինչու է մի կողմ թողել հենց իր կողքին ընկած վանքապատկան 500 դեսյատին հողերը և Շաղրուի Աթարբեկյանների հարյուրավոր դեսյատին տարածությամբ կալվածքները... և ընկել է հեռավոր գյուղեր ու ընդունում է մանր հողեր»<sup>140</sup>։ «Մեզ համար,- եզրահանգում էր «Արարատյան աշխատավորը»,- մի բան է պարզ, որ մեր հիշատակված հողային կոմիտեն գործունյա և աշխատունակ չէ»<sup>141</sup>։ Կառավարությունը նախատեսել էր Աթարբեկյանների 460 դեսյատին կալվածքը դարձնել փորձացուցադրական հողամաս<sup>142</sup>։

Այնուամենայնիվ, կիսատ-պռատ կերպով Նոր Բայազետի, Կոտայքի, Մաղկաձորի, Էջմիածնի շրջաններում հողային կոմիտեների կողմից կատարվեցին հողերի մասնակի պետականացման և բաշխման ձեռնարկներ<sup>143</sup>։ Այսպես, պատմական մի տեղեկանքից իմանում ենք, որ մինչև 1919թ. վերջերը հողային կոմիտեները ընդունել էին 21 մասնատիրական և 7 վանքապատկան կալվածքներ՝ ընդամենը 8775 դեսյատին 1439 քառ. սաժեն<sup>144</sup>։

Չնայած հողային հարցի համապարփակ լուծումը ձգձգվում էր, բայց խորհրդարանն ու կառավարությունը աչքաթող չէին անում գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ իրավական և ֆինանսական պայմանների ստեղծումը։ Բացի հողային բարեփոխումների ուղղությամբ ձեռնարկված մասնակի քայլերից՝ խորհրդարանն ու կառավարությունը մտահոգ էին գյուղացիական տնտեսությունները անհրաժեշտ սերմացուով և գյուղտնիսնիկայով ապահովելու խնդրում։

Հանրապետության իշխանությունները քաջ գիտակցում էին, որ երկրի համար կենսական նշանակություն ունեւ գյուղատնտեսության զարգացումը, մանավանդ, որ շատ քարձ էր 1918-1919 թթ. ձմռան աղետալի սովի հիշողությունը։ Արդեն 1919թ. մարտի 29-ի օրենքով, գյուղատնտեսական աշխատանքները սկսվելուն պես 50 մլն ռուբլի վարկ բացվեց սերմացու և գյուղատնտեսական գործիքներ (ինվենտար) ձեռք բերելու համար<sup>145</sup>։ 1919թ. սեպտեմբերին Երևանում բացվեց երկրագործական գործիքների ու մեքենաների կենտրոնական պահեստ<sup>146</sup>։ 1919թ. ամռանը արտասահմանից ստացվեցին 15 հազար

գերանդիներ ու մանգաղներ և մատչելի գներով վաճառվեցին ազգաբնակչությանը<sup>147</sup>։ Օգնությունը հիմնականում կատարվում էր դրսից։ 1919 թ. դեկտեմբերին խորհրդարանը առանձին օրենքով թույլատրում է ֆինանսների նախարարին արտասահմանից գնվելիք սերմացուի և պարենային այլ մթերքների համար 300 մլն. ռուբլու արտաքին փոխառություն կնքել՝ տասից ոչ ավել տոկոսով<sup>148</sup>։ Գյուղատնտեսական գործիքներ գնելու նպատակով 1920թ. մարտի 1-ին խորհրդարանը բացեց 50 մլն. ռուբլու վարկ։ 1920թ. զարմանացանի սերմացու հայթաթելու համար փետրվարի 16-ի օրենքով բացվեց 227500 հազար ռուբլու նախահաշվով վարկ<sup>149</sup>։ Մայիսին հանրապետության գյուղնախարարությունը ձեռք բերեց 9 տրակտոր և այլն<sup>150</sup>։

Այս ամենով հանդերձ, ՀՀ-ում այլևայլ խնդիրների մեծ հողային խնդիրը ևս ամբողջությամբ վերացած մնաց չլուծված։ Սրա հիմնական պատճառները պետք է փնտրել ոչ միայն կառավարության ու խորհրդարանի ցուցաբերած հապաղման ու անվճռականության, այլ նաև հանրապետության կարճատև կյանքի (ժամանակի սղության), երկրի սոցիալ-քաղաքական զարգացման անորոշության, իսկ վերջում՝ դեպքերի ու իրադարձությունների աննպաստ զարգացման մեջ։

#### 4. Գաղթականության հարցերը խորհրդարանում

ՀՀ ներքին կյանքի բարդ հիմնահարցերից էր գաղթականության ու որբերի խնդիրը, որը մշտապես գտնվել է խորհրդի ուշադրության կենտրոնում։ Այդ նպատակով ստեղծվել էր առանձին՝ «գաղթականության» հարցերի հանձնաժողով։ Գաղթականության խնդրով էին զբաղվում նաև նախարարների խորհրդի խնամատարության և ներքին գործերի նախարարությունները։

Խորհրդում պարբերաբար լսվել են գաղթականության վիճակի, տեղաբաշխման, պարենավորման, խնամքի, աշխատանքի և այլ հարցեր։ 1918 թ. սեպտեմբերի 1-ի նիստում գաղթականության խնդրի շուրջ հանգամանալի զեկուցումով հանդես եկավ պատգամավոր Ռ. Տեր-Մինասյանը<sup>151</sup>։ Այստեղ 31 կողմով անցնում է սոց.- դեմ. խմբակցության առաջարկած բանաձևը, որով պահանջվում էր շուտափույթ օգնություն հասցնել որբերին և կազմակերպել գաղթականությանը աշխատանքի մեջ ներգրավման գործը<sup>152</sup>։

<sup>139</sup> «Արարատյան աշխատավոր», 2 հոկտեմբերի 1919 թ.։

<sup>140</sup> «Արարատյան աշխատավոր», 2 հոկտեմբերի 1919 թ.։

<sup>141</sup> Նույն տեղում։

<sup>142</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, ք.422, ք.27։

<sup>143</sup> Ռուբեն, նշվ. աշխ. հ.է, Լոս Անճելես, 1952, էջ 298։

<sup>144</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, ք.422, ք.27։

<sup>145</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, ք.86, ք.28, ք.422, ք.27։

<sup>146</sup> Նույն տեղում, ք.422, ք.27։

<sup>147</sup> Նույն տեղում, ֆ.199, ց.1, ք.43, ք.129։

<sup>148</sup> Նույն տեղում, ֆ.202, ց.1, ք.333, ք.44։

<sup>149</sup> Նույն տեղում, ք.80։

<sup>150</sup> ՀՀ ՆՊ ՊԿԱ, ֆ.102, ց.1, ք.10, ք.31։

<sup>151</sup> «Կառավարության լրաբեր», 6 սեպտեմբերի 1918թ.։

<sup>152</sup> Նույն տեղում։

1918 թ. սեպտեմբերի 28-ին խորհուրդն ընդունեց ևս մի օրենք «Կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին»: Համաձայն այս օրենքի՝ աշխատունակ գաղթականներին տրվելու էր աշխատանք, իսկ անաշխատունակներին՝ նպաստ: Բացի այդ (թիվ 15 օրենքով)՝ յուրաքանչյուր գաղթական ընտանիքի, պետական ազատ, լքված ու անտեր հողերի հաշվին, տրվում էր հողակտոր աշխատող ձեռքերի թվի համեմատ և այլն<sup>153</sup>: Մեկ այլ օրենքով (հոկտեմբերի 8-ի) նախատեսվում էր գաղթական կանանց համար բացել պետական ջուլիականոցներ, որոնք պետք է ապահովվեին համապատասխան բամբակահույժով ու սարքավորումներով<sup>154</sup>:

Հայաստանի խորհրդի 1918 թ. հոկտեմբերի 11-ի նիստում դարձյալ լսվեց գաղթականության հարցը: Պաշտոնապես արձանագրված 330 հազ. հոգուց շտապ օգնության կարիք ունեին 10 հազ. որբեր, 25 հազար անճարներ, 1000 հաշմանդամներ (անկյալներ), 26,5 հազար մասնակի օգնության կարիք ունեցողներ<sup>155</sup>: Կառավարության կազմած նախահաշվով 10 հազար որբի ծախսերը հոգալու համար ամսական պահանջվում էր 1,5 մլն ռուբլի: Գաղթականի դրամական նպաստը օրական կազմում էր 60 կոպ. (մեկ շնչի հաշվով): Գաղթականների սոցիալական պաշտպանվածության համար որպես նվազագույն չափաբաժին յուրաքանչյուր շնչին օրական տրվում էր կես ֆունտ ալյուր<sup>156</sup>: 1918 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1919 թ. հունվարի 1-ը գաղթականությանը ցույց տրվելիք օգնության ծախսերը, ըստ կառավարության կազմած նախահաշվի, կազմել էին 12736250 ռուբլի (շուրջ 13 մլն. ռուբլի)<sup>157</sup>:

Բացի օրենսդրական ակտեր ընդունելուց՝ խորհրդարանը ժամանակ առ ժամանակ շրջաններ էր գործուղում հանձնախմբեր՝ տեղում մոտիկից ծանոթանալու գաղթականության վիճակին ու խորհրդարանին համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ ներկայացնելու համար: Այսպես՝ 1918 թ. դեկտեմբերին խորհրդարանական հանձնախմբեր գործուղվեցին Սուրմալուի և Ղամարլուի շրջաններ, ուր գաղթականության դրությունը շատ ավելի ծանր էր: Խորհրդարանի փոխնախագահ Գ. Տեր-Խաչատրյանի (ՀԺԿ) առաջարկով որոշվում է Սուրմալու և Ղամարլու գործուղվող պատգամավորական հանձնախմբերին լիազորել «տեղում անել կարգադրություններ կառավարության միջոցով»<sup>158</sup>:

Թշվառ գաղթականությանը շուտափույթ և անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար 1918թ. երկրորդ կեսից ՀՀ տարածքը բաժանվել էր տասը գաղթականական շրջանների: Նկատենք, որ Հայաստանում և Կովկասում գտնվող հայ գաղթականության թվաքանակի վերաբերյալ եղած տվյալները

հաճախ տարբեր են: Դրա հիմնական պատճառն այն է, որ արևմտահայ գաղթականն ու արևելահայ փախստականը, ըստ քաղաքական հանգամանքի, գտնվել են անընդհատ տեղաշարժերի մեջ, էլ չենք հաշվում այն, որ գաղթականության առանձին խմբեր էլ արտագաղթել էին Անդրկովկասից կամ էլ ներգաղթել այնտեղ: Դրա համար էլ հաշվառող մարմինները հնարավորություն չեն ունեցել գաղթականության թվաքանակի վերաբերյալ ստույգ և հաստատուն տվյալներ տալ: Խնամատարության նախարարության 1918թ. դեկտեմբերի 6-ի թվագրված թիվ 1 թյուլետենի համաձայն՝ Հայաստանի տարածքում առկա գաղթականության թիվը կազմել է մոտ 350 հազար մարդ. 1) Երևանում (իր արվարձաններով)՝ 75 հազ. գաղթական, 2) Աշտարակի շրջ.՝ 30, 3) Ախտա-Ելենովկա՝ 22, 4) Բաշզառնի՝ 15, 5) Նոր Բայազետի՝ 38, 6) Դարալագյազի՝ 36, 7) Բաշ-Ապարանի՝ 35, 8) Էջմիածնի՝ 70, 9) Ղարաքիլիսայի՝ 16 և 10) Դիլիջանի՝ 13 հազար մարդ, ընդամենը՝ 350 հազար գաղթական<sup>159</sup>: Որոշ հաշվումներով 1918 թ. երկրորդ կեսին գաղթականությունը կազմել է ՀՀ ողջ ազգաբնակչության շուրջ 45 տոկոսը<sup>160</sup>:

Գաղթականությանը կարելի էր բաժանել երկու խմբի (մասի)՝ արևմտահայ և արևելահայ գաղթականներ: Արևելահայ գաղթականներին կարելի է անվանել փախստականներ: Ըստ «Հոսանք» թերթի հրապարակած տվյալների՝ առկա ողջ գաղթականներից 180 հազարը արևելահայ էին, իսկ 170 հազարը՝ արևմտահայ<sup>161</sup>: Արևելահայ գաղթականները հիմնականում ներկայացնում էին 1918 թ. թուրքական արշավանքի և արևելահայ մի շարք շրջանների՝ Կարսի, Ալեքսանդրապոլի, Շարուր-Նախիջևանի, Սուրմալուի, Թալիսի, Սարդարապատի, Ղարաքիլիսայի և այլնի բռնագավթման հետևանքով իրենց բնակության վայրերից արտագաղթածները, որոնք դարձել էին փախստական-գաղթական: Սակայն, երբ 1918 թ. վերջերից աշխարհամարտում պարտված թուրքերը հետ են քաշվում Անդրկովկասից ու Արևելյան Հայաստանից, արևելահայ փախստականները կրկին վերադառնում են թուրքերից մաքրված իրենց նախկին բնակության վայրերը: Մինչդեռ արևմտահայ տարագիրները, որոնց մի զգալի մասը դեգերում էր նաև Վրաստանում և Հյուսիսային Կովկասում, կայուն բնակություն չէր կարողանում գտնել ու ներքուտ սպասում էր հայկական հարցի արդարացի լուծմամբ վերադառնալ իր հայրենիք՝ «Երկիր»: Զանի որ Հայկական հարցի լուծումը ձգձգվում էր, ապա մնում էր գաղթականության տեղավորման խնդիրը լուծել հանրապետության տարածքում: Իսկ դա մասամբ հնարավոր էր լինում շնորհիվ այն հանգամանքի, որ տարբեր դրդապատճառներով Հայաստանից արտագաղթում էին շատ այլազգիներ՝ գերազանցապես թուրք-բաթարներ: Ուստի և դրանց ամայացած գյուղերն ու բնակավայրերը զբաղեցնում էր արևմտահայ գաղթականությունը:

<sup>153</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.200, ց.1, գ.86, ք.6, Ժ.199, ց.1, գ.4, ք.2-3:

<sup>154</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.200, ց.1, գ.86, ք.7:

<sup>155</sup> «Կառավարության լրաբեր», 15 հոկտեմբերի 1918 թ.:

<sup>156</sup> «Հառաջ», 6 ապրիլի 1920 թ.:

<sup>157</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.200, ց.1, գ.36, ք.9:

<sup>158</sup> «Զանգ», 5 հունվարի 1919 թ.:

<sup>159</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.199, ց.22, ք.4, «Հոսանք», 14 նոյեմբերի 1918 թ.:

<sup>160</sup> «Ժողովուրդ», 12 սեպտեմբերի 1918 թ.:

<sup>161</sup> «Հոսանք», 14 նոյեմբերի 1918 թ.:

Կառավարության ու խորհրդարանի առանձնահատուկ հոգածության առարկա էր որբերի խնդիրը: 1918թ. հոկտեմբերի 11-ի նիստում ընդունված օրենքով գաղթական որբերի խնամքի և դաստիարակության գործը պետությունը վերցրել էր իր վրա: Այդ գործի անմիջական վարույթը հանձնվել էր հանրային խնամատարության նախարարությանը: Վերջինս համակարգում բացվել էր հատուկ որբանոցային բաժին: Որբանոց էին ընդունվում մինչև 15 տարեկան ծնողազուրկ կամ անխնամակալ երեխաները<sup>162</sup>:

Դժոհակ պայմաններում հայտնված գաղթականության վիճակը փոքր-ինչ բարելավելու համար խորհրդարանը և խնամատարության նախարարությունը համագործակցում էին իրար հետ: Խնամատարության նախարար Ալ. Խատիսյանը կազմել էր գաղթականության խնդրին վերաբերող գործունեության ծրագիր, որին հավանություն է տրվում խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 11-ի նիստում<sup>163</sup>:

1918թ. վերջին (դեկտեմբերին) խնամատարության նախարարության հավաքած տվյալներով՝ Հայաստանում կային մոտ 40 հազար թափառական ու անտեր որբեր, որոնցից տակավին հաշվառման և պետական ու բարեգործական կազմակերպությունների խնամքի տակ էին վերցվել ընդամենը 15612-ը: Հանրապետությունում կային շուրջ հինգ տասնյակի հասնող որբանոցներ, որոնցից ամենամեծը Ալեքսանդրապոլիցն էր՝ 1219 որբով<sup>164</sup>:

1919 թ. մայիսի 1-ից խնամատարության նախարարության ենթակայության որբանոցները իրենց ավելի քան 14 հազ. որբերով ու կահավորանքով հանձնվում են Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի խնամակալությանը<sup>165</sup>: Հայաստանի կառավարության հետ կայացրած համաձայնությամբ՝ օգնության Ամերիկյան կոմիտեն իր վրա էր վերցրել բոլոր որբանոցների ծախսերը<sup>166</sup>: Միաժամանակ, ջանքեր գործադրվեցին նոր որբանոցներ բացելու ուղղությամբ:

Բացի պետական հաշվառման մեջ գտնվող որբերից՝ կային մասնաժամանակապես որբեր: Այսպես, օրինակ, Կարսի մարզի Բեզլի Ահմեդ և Նախիջևան տեղամասերում կային 1500-ի չափ անապաստան որբեր, իսկ Իջևանի շրջանում մոտ 200<sup>167</sup>: Նախատեսվում էր անապաստան որբերին ևս հանձնել պետական որբանոցներին:

Խորհրդարանի տեսադաշտում էր ոչ միայն գաղթականության ու հատկապես որբերի խնամքի ֆինանսական ապահովության, այլև նրանց աշխատանքի մեջ ներգրավելու գործը: Այսպես, օրինակ, 1919 թ. դեկտեմբերին արդեն երկրորդ խորհրդարանի հաստատած մի օրենքով, խնամատա-

րության և աշխատանքի նախարարության միջոցով, նախատեսվում էր 2550 որբերի համար բացել 35 արհեստանոց. 7-ը՝ հյուսնության, 8-ը՝ կոշկակարության, 8-ը՝ կարուձևի, 4-ը՝ ձեռնարվեստի, 3-ը՝ գուլպայագործի և 5-ը՝ ջուլ-հականոցի<sup>168</sup>:

1919 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվով՝ որբախմամ նպատակների համար խնամատարության և աշխատանքի նախարարության անունով բացվում է շուրջ 65 մլն ռուբլու վարկ<sup>169</sup>:

Անշուշտ, գաղթականության խնամատարության ոլորտում իշխանության առանձին օղակներ ու անհատ պաշտոնավորներ բույլ էին տալիս չարաշահումներ: Ցավոք, նման երևույթներ դրսևորվում էին կյանքի այլ բնագավառներում: Բայց, կարծում ենք, իրավացի չեն այն բնագավառները, ովքեր նման չարաշահումները անվերապահորեն վերագրում են ամբողջ կառավարությանը, իշխանության բոլոր մարմիններին ու պաշտոնավորներին: Պետական իշխանության մարմիններում աշխատում էին մեծ թվով ազնիվ ու իրենց գործին անձնուրացորեն նվիրված մարդիկ, որոնք օրնիբուն տառապում էին ժողովրդի հոգսերով ու կարիքներով, անմիջապես շփվում էին նրա հետ, երբեմն վարակվում էին համաճարակային հիվանդություններով և նրանց շրջանում ևս հաճախակի էին մահվան դեպքերը: Այդպիսի պայծառ դեմքերից մեկն էր, օրինակ, նախարար Արամ Մանուկյանը:

Գաղթականության ստվար զանգվածներ կային Վրաստանում, Հյուսիսային Կովկասում և այլուր: Խորհրդարանը, կառավարությունը միջոցառումներ էին ձեռնարկում գաղթականությանը Վրաստանից, Հյուսիսային Կովկասից, Բաքվից, Իրանից, Հյուսիսային Միջագետքից հայրենիք փոխադրելու ուղղությամբ: Վրաստանի սահմաններում գտնվող հայ գաղթականությանը օգնություն ցույց տալու համար խորհրդարանի հոկտեմբերի 23-ի թիվ 29-րդ - նիստում ընդունվում է օրինագիծ Վիրահայ Ազգային խորհրդին 5 մլն ռուբլի միանվագ նպաստ տրամադրելու մասին<sup>170</sup>: Իսկ նոյեմբերի 16-ին խորհրդի 37-րդ նիստում հաստատվում է մի օրինագիծ, որով արտագործնախարարության հաշվեհամարով բացվում է 300 հազար ռուբլու վարկ Իրանում գտնվող հայ գաղթականներին օգնելու համար<sup>171</sup>:

Հայաստանի խորհրդարանն ու կառավարությունը զբաղված էին ոչ միայն արևմտահայ, այլև անդրկովկասյան (Ադրբեջանի և Վրաստանի) տարբեր շրջաններում հայ ազգաբնակչության անվտանգության ապահովման և անիրաժեշտության դեպքում նրանց հայրենիք ներգաղթեցնելու խնդիրներով: Ադրբեջանի իշխանությունների վարած հայափախած ու ջարդարարական քաղաքականության հետևանքով գաղթականական (փախստա-

<sup>162</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.86, ք.8:

<sup>163</sup> «Ձանգ», 5 հունվարի 1919թ.:

<sup>164</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.199, ց.1, գ.22, ք.8, 84:

<sup>165</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.202, ց.1, գ.41, ք.90:

<sup>166</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.202, ց.1, գ.131, ք.133թ:

<sup>167</sup> «Հառաջ», 6 ապրիլի 1920թ.:

<sup>168</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.202, ց.1, գ.333, ք.41-42:

<sup>169</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.86, ք.69, ֆ.202, ց.1, գ.333, ք.41:

<sup>170</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 19-20:

<sup>171</sup> «Կայծ», 21 նոյեմբերի 1918թ.:

կան) խմբեր էին գոյացել վերոգրյալ հանրապետության գավառներում: Ուստի՝ կենսական անհրաժեշտություն էր դարձել այս կարգախմբի հայ փախստականներին ներգաղթեցնել և վերաբնակեցնել Հայաստանում: Միայն Նուխի, Արեշի, Շամախու, Գյոթբայի և Ղուբայի գավառներից 20 հազար հայերի Հայաստան տեղափոխելու ծախսերի համար 1919 թ. ամռանը օրենք է ընդունվում 9, 7 մլն ռուբլի վարկ բացելու մասին<sup>172</sup>: 1919 թ. կառավարության, հայրենակցական միությունների և գաղթականների թափած ջանքերի շնորհիվ Հայաստան ներգաղթեցին միայն 16431 մարդ<sup>173</sup>: Տարբեր խանգարիչ հանգամանքների պատճառով չհաջողվեց իրագործել հայերի զանգվածային ներգաղթը:

1919 թ. կեսերից՝ ինչպես ողջ հանրապետության սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում, այնպես էլ գաղթականության շրջանում կայունացման որոշ միտումներ նկատվեցին. մի կողմից ամերիկյան ալյուրը մեղմեց սովը (հաշվառված գաղթականը կայուն կերպով ստանում էր կես ֆունտ հաց), մյուս կողմից՝ 1919 թ. զարմանից ընդարձակվեցին ՀՀ սահմանները, որոնք գաղթական բնակչության վերաբաշխման ու բնակեցման ավելի մեծ հնարավորություններ էին ստեղծում: Արդեն 1919թ. սեպտեմբերին ընդունված քաղաքացիների գորակոչի մասին օրենքը տարածվեց նաև արևմտահայերի վրա<sup>174</sup>: Եվ վերջապես Փարիզում բացված խաղաղության կոնֆերանսը հույսեր էր ներշնչում, որ դրականապես կլուծվի Հայկական հարցը և արևմտահայերը հնարավորություն կստանան վերադառնալ Երկիր և վերականգնել ու շենացնել ավերված օջախները:

## 5. Խորհրդարանը և կուսակցությունները բնակչության սոցիալական պաշտպանվածության մասին

Դրամի արժեզրկման ու ապրանքների թանկացման հետ կապված, խորհրդարանն ու կառավարությունը պարբերաբար կատարում էին բյուջետային հիմնարկությունների աշխատողների աշխատավարձի հավելումներ (ինդեքսացիա): Այդ բանը կատարվում էր խորհրդարանի ընդունած օրենքներին համապատասխան: Օրինակ, 1919թ. ապրիլ ամսին բյուջետային աշխատողներին տրվեց լրացուցիչ մեկամսյա աշխատավարձ: Դրա համար խորհրդարանը թույլ տվեց ֆինանսների նախարարությանը բացել 4,3 մլն. ռուբլու

վարկ<sup>175</sup>: Նույն թվականի մայիս ամսին պետական ծառայողների աշխատավարձը բարձրացվեց 50 տոկոսով<sup>176</sup>:

Ժամանակ առ ժամանակ խորհրդարանն ու կառավարությունը նպաստի կարգով որոշ հատկացումներ էին կատարում սոցիալական անպաշտպան շերտերին: Այդ բանի կարիքը առանձնապես մեծ չափով զգացվեց 1918-1919թթ. ձմռան ծանր սովի ու համաճարակի շրջանում: 1919թ. հունվարի 8-ին խորհրդարանն օրենք հաստատեց խնամատարության նախարարության անունով 1620 հազար ռուբլի վարկ բացել Հայաստանի տարածքի չքավոր ազգաբնակչությանն օգնություն ցույց տալու համար<sup>177</sup>: 1919 թ. հունվարին խնամատարության նախարարության ներկայացրած օրինագծով Երևանի չքավոր ազգաբնակչությանը տաք կերակուր բաժանելու և այլաբնույթ օգնություն ցույց տալու վերաբերյալ բաց է թողնվում 1,6 մլն. ռուբլի<sup>178</sup>: Օրինագիծը ընդունվում է միաձայն: 1919 թ. ապրիլի 3-ին դարձյալ խնամատարության նախարարության անունով բացվեց 3 մլն ռուբլի վարկ՝ համաճարակի դեմ պայքարելու նպատակով<sup>179</sup>:

Խորհրդարանական բննարկումների ժամանակ ընկերային բնույթի հարցեր ու հարցաւնդումներ ամենից ավելի մտցնում էին «ճախակողմյան» խմբակցությունները: Օրինակ՝ 1918թ. նոյեմբերի 8-ի նիստում սոց.-դեմ. խմբակցությունը առաջարկություն արեց ՀՀ բոլոր պետական պաշտոնյաների ու ծառայողների աշխատավարձի նվազագույն չափը սահմանել ամսական 400 ռուբլի<sup>180</sup>: Այս առաջարկության բնույթը հետաձգվեց անորոշ ժամանակով: Նվազագույն աշխատավարձի բարձրացման մասին սոց.-դեմ. խմբակցության արած առաջարկին որպես մասնակի լուծում՝ 1919թ. հունվարի 7-ին խորհրդի նիստում որոշվեց պետական ծառայողների աշխատավարձը ավելացնել 30 տոկոսով, դրա նվազագույն չափը սահմանել 200 ռուբլուց ոչ պակաս<sup>181</sup>: «Ձախերը» ժողովրդի սոցիալական կենսապայմանների բարելավման ու բարձրացման ուղղությամբ պահանջներ էին դնում, զգայացունց ելույթներ ունենում: Բայց նրանց չէին հետաքրքրում հանրապետության ֆինանսական հնարավորությունները:

ՀՀ-ում գոյություն ունեւ բյուջետային հիմնարկությունների ու հաստատությունների աշխատանքի վարձատրության 15 աստիճանանոց սանդղակ: Այդ սանդղակի գագաթին կանգնած էր հանրապետության վարչապետը, այնուհետև գալիս էին նախարարները, խորհրդարանի պատգամավորները, պետական միջին պաշտոնյաները և այլն: Առաջ գնալով ասենք, որ 1920թ. մար-

<sup>172</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.245, ց.1, գ.7, ք.24:

<sup>173</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.205, ց.1, գ.575, ք.1:

<sup>174</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.202, ց.1, գ.333, ք.8:

<sup>175</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.202, ց.1, գ.41, ք.31:

<sup>176</sup> Նույն տեղում, ք.38:

<sup>177</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919թ.», մաս 1, Երևան, 1919, էջ 39:

<sup>178</sup> «Կայծ», 30 հունվարի 1919թ.:

<sup>179</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները...», էջ 55:

<sup>180</sup> «Կայծ», 17 նոյեմբերի 1918թ.:

<sup>181</sup> «Կայծ», 30 հունվարի 1919թ.:



տի 3-ին երկրորդ խորհրդարանն օրենք ընդունեց պատգամավորների կարգախումբը, սկսած 1919թ. սեպտեմբերի 1-ից, 13-րդ կատեգորիայի 3-րդ կարգից փոխադրել 14-րդ կատեգորիայի 3-րդ կարգը: Դրա հետևանքով յուրաքանչյուր պատգամավորի սննդադրամը ամսական ավելացավ 1350 ռուբլով<sup>182</sup>:

Քանի որ տեղական պատերազմների, հայ ժողովրդի կրած գրկանքների և այլ հայտնի պատճառների հետևանքով Հայաստանի տնտեսությունը քայքայվել էր, այն վերականգնելու և առաջ մղելու համար ժամանակ էր պահանջվում: Ուստի՝ հասկանալի էր, որ չէր կարող խոսք լինել սեփական միջոցներով ու հնարավորություններով հանրապետության բնակչության սոցիալական կայուն պաշտպանվածության մասին: Ստեղծվել էր մի կացություն, որտեղ խոսքը գնում էր ոչ այնքան ժողովրդի սոցիալական պաշտպանվածության ու որոշակի կենսամակարդակ ապահովելու, որքան պարզապես մարդկանց սոսկ ֆիզիկական գոյությունը մի կերպ պահպանելու մասին: Խնամատարության նախարարության հաղորդած տվյալներով՝ բնակչության և ուսուցիչական գոյության մի զգալի մասը նյութական առումով փաստորեն գտնվում էր գաղթականի վիճակում և պետությունից ստանում էր նպաստ: 1919թ. նպաստ ստացող չքավոր ազգաբնակչության թիվը կազմել է 271041 մարդ, որոնցից յուրաքանչյուրը գաղթականի պես օրական ստացել է կես ֆունտ ալյուր<sup>183</sup>: Նման չափով ալյուրի բաժանումը բնակչությանը որպես նպաստ ամսական պետգանձարանի վրա նստում էր ավելի քան 25 մլն. ռուբլի: Եթե սրան գումարենք նաև նպաստ ստացող գաղթականներին, ապա կստացվի, որ նպաստի կարոտ սոցիալական այս չքավոր շերտերին մի կերպ հացով կերակրելու համար ամսական պահանջվել է ավելի քան 54 մլն ռուբլի<sup>184</sup>:

Կարելի է ասել, որ ստեղծվել էր մի վիճակ, երբ հանրապետության ազգաբնակչության շուրջ 40-50 տոկոսը որպես կարիքավոր կամա թե ակամա ապրում էր պետության գանձարանի հաշվին: Այստեղից հասկանալի է դառնում, թե ինչպիսի ծանր կացության առջև էր կանգնած Հայաստանի կառավարությունը: Նման պայմաններում մնում էր ապավինել դրսի՝ արտասահմանյան երկրների ու պետությունների մարդասիրական ու բարեգործական օգնությանը: Պետք է ասել, որ աշխարհամարտից մոր դուրս ելած շատ պետություններ, այդ թվում նաև արևմտաեվրոպական, իրենք էլ առանձնապես բարվոր վիճակում չէին: Դրանցից առանձնանում էր, թերևս, միայն ԱՄՆ-ը: Հենց նա էլ եղավ Հայաստանին հիմնական պարենային օգնություն ցույց տվողը: Սկսած 1919թ. գարնանից Հայաստան հասցվեց 1,3 մլն փութ (569 վագոն) ալյուր և 257 հազ. փութ ցորեն<sup>185</sup>: Հայաստան բերվեցին նաև մեծ քանա-

կությամբ հագուստ, կտորեղեն, դեղորայք, խտացրած կաթ, շաքար, կակաո և այլ մթերքներ: Տեղեկացնենք, որ 9 ամսվա ընթացքում (1919թ. հունիսից մինչև 1920թ. փետրվար) Հայաստան ներմուծված ավելի քան 5,5 մլն փութ համախառն ապրանքներից 4,2 մլն փութը կամ ընդհանուրի 77 տոկոսը կազմել են միայն ամերիկյան ապրանքներն ու մասնավորապես ամերիկյան օգնության ալյուրը<sup>186</sup>:

Բացի այդ, ինչպես արդեն ասվել է, Ամերիկյան նպաստատույց կոմիտեն իրականացնում էր 15000 որբերի խնամքը, որոնց վրա ծախսվել էր 90 մլն. ռուբլի: Իսկ մինչ ամերիկյան պարենային օգնությունը կհասներ Հայաստան, նախորդ վեց ամիսների ընթացքում սովից, հիվանդություններից ու ցրտից հանրապետությունում մահացավ մոտ 150 հազար<sup>187</sup>, իսկ որոշ տվյալներով՝ 180 հազար մարդ<sup>188</sup>: Գնահատելով ամերիկյան մարդասիրական օգնության նշանակությունը՝ պետք է ասել, որ ինչպիսին էլ որ եղած լինի ԱՄՆ-ի քաղաքական դերը Հայկական հարցում, այնուամենայնիվ, հայ երախտապարտ ժողովուրդը երբեք չպետք է մոռանա ամերիկյան հայափրկիչ օգնությունը:

Այս տեսակետից կեղծ ու գրպարտչական պետք է համարել, օրինակ, պատմաբան Խ. Բաղալյանի, էլի առանձին հեղինակների քարոզչական այն պնդումը, երբ «անգլո-ամերիկյան գիշատիչ իմպերիալիզմի» դեմ պայքարի մոլուցքով տարված, ոչ միայն ուրանում են ԱՄՆ-ի ցուցաբերած օգնությունը հայ ժողովրդին, այլև գտնում, որ ամերիկացիները կողոպտում էին Հայաստանը<sup>189</sup>, և որ «Ամերիկյան իմպերիալիստները իրենց կողոպտիչ քաղաքականությամբ գերազանցում էին անգլո-ֆրանսիական իմպերիալիստներին»<sup>190</sup>: Այնուհետև պրոֆ. Խ. Բաղալյանը հայտարարում է, որ ամերիկյան արյունոտ իմպերիալիզմը «հազարավոր անմեղ մանուկների (նկատի ունի որբերին- Ա.Հ.) գրկելով սեփական հայրենի հողից, բռնի կերպով փոխադրում էր օվկիանոսի մյուս ափը, որպես ստրուկներ Ռուլ-ստրիտի մոնոպոլիստների համար»<sup>191</sup>: Ավելին՝ հեղինակի կույր ատելությունը այնտեղ է հասնում, որ ընդամենը պատահական, չստուգված ու չհաստատված մեկ տեղեկանքի հիման վրա արվում է հետևյալ պատասխանատու եզրահանգումը. «Ամերիկյան իմպերիալիստները ոչ միայն Հայաստանի երեխաներին մասսայաբար բռնում էին Ամերիկա, որպես ստրուկներ, այլև ժողովրդի մեջ առաջ էին բերում մեծ թվով զոհեր՝ թունավորումների ճանապարհով»<sup>192</sup>: Կարծում ենք, վերոհիշյալ

<sup>182</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.202, ց.1, գ.106, ք.12, գ.580, ք.4:

<sup>183</sup> «Հատաք», 6 ապրիլի 1920թ.:

<sup>184</sup> Նույն տեղում:

<sup>185</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 242:

<sup>186</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.427, ք.117:

<sup>187</sup> Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 118:

<sup>188</sup> Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 192, 251:

<sup>189</sup> Խ. Հ. Բաղալյան, Անգլո-ամերիկյան գիշատիչ իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականությունը Հայաստանում 1919-1920թթ., Ե., 1951, էջ 55-56:

<sup>190</sup> Խ. Հ. Բաղալյան, նշվ. աշխ., էջ 60:

<sup>191</sup> Նույն տեղում, էջ 60-61:

<sup>192</sup> Նույն տեղում, էջ 61:

քաղվածքները չի կարելի գնահատել այլ կերպ, քան մարտնչող մարքսիստի հիվանդագին դատողություն:

## 6. Բանակի և պաշտպանության հարցերը խորհրդարանում և կուսակցությունները

Ազգային և ոչ ազգային կուսակցությունները խորհրդարանում հակադիր մոտեցում ունեին հայկական ուժեղ բանակ ունենալու խնդրում: ՀՅԴ և ՀԺԿ խմբակցությունները, հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը, ոչ միայն արտահայտվում էին ուժեղ բանակ ունենալու օգտին, այլև բոլոր հնարավոր միջոցներով օժանդակում դրան: Սրան հակառակ՝ «ձախակողմյան» խմբակցությունները, պատճառաբանելով ու շահարկելով ժողովրդի նյութական (սոցիալական) ծանր պայմանները, ուղղակի դեմ էին քվեարկում բանակի համար ֆինանսական հատկացումներ տրամադրելում: Ահա թե ինչ է գրում «Խոսքը» մեմշևիկ Հ. Ազատյանի խոսքերով. «Ժողովուրդը քաղցած է, գուրկ աշխատավոր ձեռքերից, իսկ նրա պառլամենտը հնարավոր է համարում ինչ-ինչ նպատակների համար 16 հազար մարդուց բաղկացած զորք պահել՝ ամսական նրա վրա մոտ յոթ միլիոն ռուբլի ծախսելով: Մեր զորքի բանակն ու նրա վրա արված ծախսերը Հայաստանի համար ոչ թե շռայլություն պետք է համարել, այլ ժողովրդի շահերի դեմ ուղղված մի անորակելի հանցանք»<sup>193</sup>: Ըստ Հ. Ազատյանի՝ հանցանք էր համարվում բանակ պահելու համար ծախսեր անելը:

Ինչո՞ւ էին «ձախերը» նման բացասական վերաբերմունք ցուցաբերում բանակի խնդրում: Նրանց պատկերացմամբ՝ հայկական բանակը գործիք է դաշնակցական կառավարության ձեռքին հարևան հանրապետությունների ու ժողովուրդների նկատմամբ «ավանտյուրիստական» քաղաքականություն իրագործելու ճանապարհին: «Ձախերը» գտնում էին, որ պետական միջոցները պետք է ծախսել պարենավորման գործի վրա և ոչ թե ռազմական<sup>194</sup>: Ավելին՝ Հ. Ազատյանը պահանջում էր ըստ էության ցրել զորքը և դրա փոխարեն մտցնել, այսպես կոչված, ժողովրդական միլիցիայի համակարգ:

Ձախակողմյան խմբակցությունների առաջարկությամբ՝ 1919թ. հունվարի 7-ին խորհուրդը օրինագիծ ընդունեց հայկական բանակի մասնակի գորացրման մասին: Հաստատված օրինագծով 25 տարեկանից բարձր հասակ ունեցող զինվորները գորացրվում են<sup>195</sup>: ՀՅԴ և ՀԺԿ ազգային խմբակցությունները ընդառաջ գնացին նման քայլի այն պատճառով, որ թուրքական գոր-

քը հետ էր քաշվել, հայ-վրացական պատերազմը ավարտվել էր և այդ ժամանակ Հայաստանին իրական լուրջ վտանգ չէր սպառնում:

Ռազմաքաղաքական և պաշտպանական հարցերի քննարկման կապակցությամբ հաճախ հրավիրվել են խորհրդարանի հայ պատգամավորների խորհրդակցություններ: Այդպիսի մի խորհրդակցություն է գումարվել 1919թ. մարտի 16-18-ին<sup>196</sup>: Լսելով ՀՀ կառավարության նախագահի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի զեկուցումը՝ «Հայաստանի սահմաններին սպառնացող վտանգի և զորքի անկազմակերպ վիճակի մասին» որոշվում է լրացուցիչ 10 մլն ռուբլու վարկ հատկացնել բանակի վերակառուցման և գորացման համար: Բացի այդ, երկրի պաշտպանության գործը արագացնելու համար կառավարությանը տրվում են լայն իրավունքներ<sup>197</sup>:

Այս խորհրդակցության հրավիրման նախաձեռնողն ու տոն տվողը ՀՅԴ խմբակցությունն էր: Երկրի պաշտպանության ամրակայման և զորքի վերակառուցման մասին ՀՅԴ խմբակցության կազմած որոշման նախագիծն էլ դրվեց խորհրդակցության աշխատանքի հիմքում: Խորհրդակցությունում ՀՅԴ խմբակցության բանաձևը պաշտպանեց ՀԺԿ խմբակցությունը, իսկ սոց.-դեմ. և էսեռները մերժեցին երկրի պաշտպանության ամրապնդման ուղղված ձեռնարկները: Վերջիններս ցուցադրաբար հեռացան խորհրդակցությունից<sup>198</sup>: Նման պարագաներում է երևում այս կամ այն կուսակցության և նրա ընդդիմության պատասխանատու կամ անպատասխանատու լինելը: Հասկանալի է, որ «ձախ» ընդդիմության դիրքորոշումը չէր ծառայում հայրենիքի պաշտպանության շահերին: Գնալով խմբակցությունների միջև առկա նման հակասությունները ավելի էին խորացնում խորհրդարանի ճգնաժամը:

## 7. Խորհրդի ճգնաժամը և արձակումը

Խորհրդարանում հաճախակի տեղի են ունեցել կոնֆլիկտային միջադեպեր: Հայաստանի խորհրդի փաստորեն ոչ ընտրովի պատգամավորական կազմը իրապես չէր արտահայտում քաղաքական ուժերի հարաբերակցությունը ազգաբնակչության մեջ: Խորհուրդն իր կազմով փաստորեն չունեւ ժողովրդական ներկայացուցչություն և չէր արտահայտում ժողովրդի հավաքական կամքն ու ընթերցումները: Օրինակ՝ սոց.-դեմոկրատները և էսեռները խորհրդում ունեին պատգամավորներ, սակայն նրանք լայն աջակցություն չունեին ժողովրդի կողմից:

Խորհրդարանն իր շուրջ տասնամյա գործունեության ընթացքում համարձակություն չունեցավ բարձրաձայն (հրապարակավ) հայտարարել Հա-

<sup>193</sup> «Կայծ», 22 հունվարի 1919թ.:

<sup>194</sup> «Կայծ», 13 փետրվարի 1919թ.:

<sup>195</sup> «Կայծ», 30 հունվարի 1919թ.:

<sup>196</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, Ժ. 199, ց. 1, գ. 27, ք. 193-194:

<sup>197</sup> Նույն տեղում, ք. 194:

<sup>198</sup> Նույն տեղում:

յաստանի անկախության մասին, քանզի նրա պատգամավորների առնվազն կեսը գիտակցաբար և անգիտակցաբար մերժում էր Հայաստանի անկախությունը:

Որ Հայաստանի խորհրդում, ըստ կուսակցությունների, պատգամավորների քանակական հարաբերակցությունը չէր արտացոլում իրականությունը, երևում էր նաև 1918 թ. վերջերին տեղի ունեցած Երևանի քաղաքային դումայի ընտրություններից: ՀՅԴ-ն այդ ընտրությունների ժամանակ ստացավ երկու անգամ ավելի ձայն, քան մյուս երեք կուսակցությունները միասին վերցրած<sup>199</sup>: Ինչպես արդեն ասվել է, առանձնապես սոցիալական հենարան չունեին Էսեռական և սոց.-դեմոկրատական խմբակցությունները: Քաղաքային դումայի ընտրությունների արդյունքով նախատեսված 60 տեղերից սոցիալիստական «ձախ» թևը (Էսեռ և սոց.-դեմ.) ստացավ ընդամենը 4 տեղ<sup>200</sup>:

1919 թ. սկզբներին ակնհայտ հակասություն էր առաջացել հասարակայնության և խորհրդարանի պատգամավորության կազմի միջև: Դեռ 1919 թ. հունվարի կեսերից խորհրդարանում և նրա պատերից դուրս ձայներ էին լսվում նրա արձակման մասին: Հունվարի 17-ին «Չանգում» տպագրվում է առաջնորդող «Խորհրդարանը արձակել» խորագրով<sup>201</sup>: ՀՅԴ և ՀժԿ, խորհրդարանում ստեղծելով կայուն մեծամասնություն, գործնականում այլևս հաշվի չէին նստում «ձախերի» հետ: Պատահում էր, որ նախարարները պարզապես չէին պատասխանում «ձախակողմյան» խմբակցությունների հարցումներին ու հարցապնդումներին<sup>202</sup>:

Այդ իսկ պատճառով 1919 թ. սկզբներից անհետաձգելի խնդիր դարձավ խորհրդի արձակումը և նոր ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով ընտրովի խորհրդարանի ձևավորումը: Խորհրդի և հասարակայնության միջև այդ առնակատման գագաթնակետը հանդիսացավ 1919 թ. փետրվարի 28-ին խորհրդարանում տեղի ունեցած միջադեպը<sup>203</sup>: Այդ օրը քվորում չլինելու պատճառով խորհրդարանի հերթական նիստը չկայացավ: Սակայն Էսեռների առաջարկով ընդդիմությունը որոշեց հրավիրել մասնավոր խորհրդակցություն: Տեղեկանալով այդ մասին՝ խորհրդարանի դահլիճում գտնվող հասարակայնության ներկայացուցիչները սպառնալիքների և ուժի գործադրման միջոցով ձախողում են խորհրդակցության կայացումը: Ամբոխի միջից լսվում են բացականչություններ. «Չե՛նք ուզում այսպիսի խորհրդարան», «Մենք պահանջում ենք ընտրովի խորհրդարան», «Դո՛ւրս, ինքնակոչ պատգամավորներ»<sup>204</sup>: Այդ օրերին խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը գտնվում էր Թիֆլիսում: Խորհրդարանի փոխնախագահ, Էսեռ Դ. Ջուր-

յանը ուժով հեռացվում է ամբիոնից: Ընդդիմադիր մամուլը հայտնում է, որ Դ. Ջուրյանին ամբիոնից հեռացնելու նպատակով երկու կողմնակի անձնավորություններ, նույնիսկ, մաուզեր են հանել, լիցքավորել ու պահել նրա վրա<sup>205</sup>: Մի քանի պատգամավորների միջամտությունից հետո կրքերը հանդարտվում են և զրգոված հասարակությունը ցրվում է: Սրանով էլ ավարտվում է խորհրդարանի փետրվարյան միջադեպը: Անշուշտ, սա լուրջ ահազանգ էր Հայաստանի խորհրդի ճգնաժամի ու արձակման մասին:

Փետրվարյան միջադեպից մի քանի օր անց՝ 1919թ. մարտի 4-ին, ՀՅԴ Երևանի քաղաքային կոմիտեն հանրապետությունում խորհրդարանի նոր ընտրություններ անցկացնելու վերաբերյալ Հայաստանի քաղաքացիներին ուղղված ընդարձակ դիմում-կոչ հրապարակեց: Նրանում մասնավորապես ասվում էր. «Եթե թանկ է ձեզ համար ձեր իրավունքը, պահանջեցե՛ք, որ այս պառլամենտը ցրվի և նրա տեղը հրավիրվի, ամենամոտիկ ժամանակներում, նոր, ընտրովի և ժողովրդական պառլամենտ»<sup>206</sup>:

Խորհրդարանի միջադեպը և նրա ցրելու մասին լուրերը ցավագին կերպով ընդունեցին ձախակողմյան կուսակցությունները: Էսեռների կուսակցության Երևանի կոմիտեն հրապարակեց մի թուցիկ, որում միջադեպի համար մեղադրվում էր ՀՅԴ կուսակցությունը, որ իբր նա է հասարակությանը զրգռել խորհրդարանի սոցիալիստական թևի դեմ: ՀՅԴ Երևանի քաղաքային կոմիտեն պատասխան հայտարարությամբ հերքեց Էսեռների մեղադրանքը՝ պահանջելով փաստացի ապացույցներ<sup>207</sup>: Նույն կերպ կառավարող կուսակցությանը մեղադրեցին նաև սոցիալ-դեմոկրատ մենշևիկները<sup>208</sup>:

Մյուս կողմից այս տխուր միջադեպը կարելի է որակել որպես ոտնձգություն խորհրդարանի, նրա պատգամավորների անձեռնմխելիության իրավունքի վրա: Բայց սրա կողքին կրկին հիշեցնենք, որ Հայաստանի խորհուրդը ընտրովի խորհրդարան չէր: Այնտեղ նստած էին ընդամենը կուսակցությունների ներկայացուցիչները:

Հիշեցնենք, որ երբ սկսեց գործել Հայաստանի խորհուրդը, նա չունեց մշակված որևէ կանոնակարգ կամ օրենք՝ իր գործունեության ժամկետի վերաբերյալ: Հայաստանում չկար նախագահ կամ թագավոր, որ, ասենք, աշխարհի մյուս երկրների օրինակով արձակեր խորհրդարանը: Մնում էր, որ նա ինքը արձակեր իրեն: Միայն նա կարող էր խորհրդարանի ընտրությունների մասին օրենք ընդունել և նոր ընտրություններ նշանակել:

1919 թ. զարմանք խորհրդարանի ներսում առաջացել էին սուր հակասություններ, որոնք էլ բացասաբար էին անդրադառնում նրա աշխատանքների արդյունավետության վրա: Այդ պատճառով 1919 թ. ապրիլի 27-ին խորհուրդն օրենք ընդունեց՝ իր աշխատանքները մեկ ամսով դադարեցնելու և այդ

<sup>199</sup> «Վեն», Փարիզ, 1934, թիվ Ե., էջ 50:

<sup>200</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.203, գ.1, գ.230, ք.29:

<sup>201</sup> «Չանգ», 17 հունվարի 1919 թ.:

<sup>202</sup> «Կայծ», 7 հունվարի 1919թ.:

<sup>203</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ.404, գ.1, գ.35, ք.1:

<sup>204</sup> «Աշխատավոր», 26 մարտի 1919թ., «Կայծ», 16 մարտի 1919թ.:

<sup>205</sup> «Պայքար», 15 մարտի 1919թ.:

<sup>206</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ.4047, գ.1, գ.137, ք.2:

<sup>207</sup> «Չանգ», 14 մարտի 1919թ.:

<sup>208</sup> «Կայծ», 16 մարտի 1919թ.:

ընթացքում խորհրդարանի իրավունքները կառավարությանը հանձնելու մասին<sup>209</sup>։ ՀՅԴ-ն և ՀԺԿ խմբակցությունների առաջարկած համատեղ օրինագիծը բաղկացած էր երեք կետից։

1. Խորհրդի աշխատանքները դադարեցնել մեկ ամսով, 2. դադարի միջոցին խորհրդի բոլոր իրավունքները հանձնել կառավարությանը և 3. հանձնարարել կառավարությանը արտակարգ կարևորության դեպքում հրավիրել խորհրդի արտակարգ նիստ<sup>210</sup>։

Տեղեկացնենք, որ այսպիսի պրակտիկա (խորհրդարանը արձակուրդ ուղարկելու վերաբերյալ) առաջինը կիրառվել էր Ադրբեջանում, երբ նրա անկախության հռչակումից անմիջապես հետո՝ հունիսի կեսերին, օրենսդիր մարմնի իրավունքով Գանձակում գումարվող նրա Ազգային խորհուրդը քաղաքական բարդ ու անկայուն հանգամանքների թելադրանքով, Ադրբեջանի փաստական տեր Նուրի փաշայի ցուցումով, արձակվեց և ամբողջ իշխանությունը (գործադիր և օրենսդիր) հանձնվեց Ֆ. Խանխոյսկու նորակազմ կառավարությանը<sup>211</sup>։ Եվ վերջապես թուրքերի և ապա անգլիացիների կողմից Բաքուն գրավվելուց հետո միայն 1918 թ. դեկտեմբերի 1-ին (շուրջ 6 ամիս անց) թարմացված ու համալրված կազմով (120 պատգամավորներով) վերաբացվեց Ադրբեջանի Ազգային խորհուրդը (խորհրդարանը)՝ Մ. Ռասուլզադեի նախագահությամբ։ Ի դեպ՝ Ադրբեջանի խորհրդարանի 120 պատգամավորական տեղերից 21-ը զբաղեցնում էին հայերը<sup>212</sup>։

Կնշանակի՝ Հայաստանի խորհրդարանի աշխատանքների ժամանակավոր դադարի աշխատառնը նորություն չէր և այն ժամանակների արտակարգ իրավիճակների թելադրանքով այդպիսի քայլի հավանաբար դիմել են նաև ուրիշ երկրները։

Ս. Վրացյանը վկայում է, որ Հայաստանի խորհրդի այս արձակուրդով փաստորեն վերջ տրվեց նրա գործունեությանը, թեև մայիսի վերջին և հունիսի սկզբին գումարվեց ևս մի քանի նիստ<sup>213</sup>։ Այդ մեկ ամսվա ընթացքում (ապրիլի 27-ից մինչև մայիսի 27-ը կռաւիցիոն կառավարությունը հասցրել էր ընդունել ու հրապարակել 99 օրենք։ Ընդ որում՝ դրանցից 96-ը նախարարների խորհրդում ընդունվել էր միաձայն և միայն 3-ը՝ ձայների մեծամասնությամբ։ Կառավարության հաստատած օրենքներից 70-ը իր ժամանակին անցել էին խորհրդարանի հանձնաժողովների քննարկումների խոհանոցով<sup>214</sup>։ Բայց այդ մեկամսյա արձակուրդը ամենևին էլ չհաղթահարեց խորհրդարանի ճգնաժամը։

<sup>209</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, ք. 32։

<sup>210</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Ե., 1919, էջ 61, «Կայծ», 15 հունիսի 1919 թ.։

<sup>211</sup> «Աշխատանքի դրոշակ», 23 հունիսի 1918 թ., «Կայծ», 13 փետրվարի 1919 թ.։

<sup>212</sup> «Ժողովրդի ձայն», Թիֆլիս, 3 դեկտեմբերի 1918 թ.։

<sup>213</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 253։

<sup>214</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, ք. 88։

Սովորաբար քաղաքակիրթ, խորհրդարանական երկրներում օրենքներն ընդունում է օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը։ Բայց հեղափոխական, անցման ժամանակաշրջաններում չի բացառվում, որ ժամանակավորապես օրենքներ ընդունի նաև կառավարությունը։ Օրինակ, մինչև օրենսդիր մարմնի ձևավորումը այդպիսի քայլի են դիմել Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունը, խորհրդային կառավարությունը, Անդրկովկասյան կոմիսարիատը և այլն։ Սակայն Հայաստանի պարագայում արտասովորն այն էր, որ կառավարությունը յուրացնում էր արդեն գործող օրենսդիր մարմնի լիազորությունները՝ նրան ուղարկելով հարկադիր արձակուրդ։ Ինչպես կտեսնենք հետագայում, Հայաստանի խորհրդի ապրիլի 27-ի մեկամսյա արձակուրդը վատ նախադեպ համդիսացավ Հայաստանի հետագա խորհրդարանական գործունեության համար։

Եվ ահա Հայաստանի կառավարությանը տրված՝ խորհրդարանի օրենսդրական լիազորությունների մեկամսյա ժամկետի վեջին օրերին ընդունվեցին երկու շատ սկզբունքային և առարկությունների տեղիք տվող ակտեր, որոնք էլ ավելի խորացրին խորհրդարանական ճգնաժամը և ի վերջո դարձան նրա արձակման հիմնական շարժառիթը։ Նկատի ունենալով, որ մոտենում է Հայաստանի անկախության առաջին տարեդարձը ու հաշվի առնելով մի շարք ներքին ու արտաքին հասունացած անհետաձգելի հանգամանքներ, կառավարությունը համարձակություն վերցրեց իր վրա ընդունելու երկու պատասխանատու օրենքներ՝ «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին» և սրանից բխող «Հայաստանի խորհրդի համալրման մասին»։

1919 թ. մայիսի 26-ին նախարարների խորհուրդը ընդունեց օրենք «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին»։ Օրենքն ընդունվել էր կառավարության անդամների հետևյալ ձայնատվությամբ՝ 5 կողմ, 1 դեմ և 1 ձեռնպահ<sup>215</sup>։ Հաջորդ օրը՝ մայիսի 27-ին, դրան հաջորդեց մյուս օրենքը (ակտը)՝ «Հայաստանի խորհրդի համալրման մասին»։ Օրենքն ընդունվել էր 6 ձայնով ընդդեմ 2-ի<sup>216</sup>։ Այս վերջին ակտը կազմում էր առաջինի տրամաբանական շարունակությունը։ Կառավարությունը ելնում էր այն գաղափարից, որ Միացյալ Հայաստանը պիտի ունենար նաև միացյալ խորհրդարան։ Այսինքն՝ ՀՀ խորհրդարանը պետք է համալրվեր արևմտահայ ներկայացուցիչներով։

1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախության առաջին տարեդարձի օրը՝ որպես պատմական հարմար պահ, պաշտոնապես կատարվեց համապատասխան հայտարարություն։ Երկու ակտերն էլ հրապարակվեցին մայիսի 28-ին։ Փաստական անճշտություն պետք է համարել այն, որ «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության 7-րդ հատորում

<sup>215</sup> «Ժողովուրդ», 11 հունիսի 1919 թ.։

<sup>216</sup> Նույն տեղում։

1919 թ. մայիսի 28-ի պատմական ակտի մասին որոշման ընդունումը վերագրվել է ոչ թե Հայաստանի կառավարությանը, այլ խորհրդարանին<sup>217</sup>:

Անխակության տարեդարձի տոնակատարության կապակցությամբ կազմակերպված Հայաստանի խորհրդի ու կառավարության հանդիսավոր նիստում, որն ի դեպ նախագահել է կրթության նախարար Գ. Մելիք-Ղարազյոզյանը (ՀԺԿ), վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանն իր բացման խոսքից հետո կարդաց հետևյալ պաշտոնական հայտարարագիրը (հռչակագիրը). «Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն:

Ուղիղ մեկ տարի առաջ ռուսահայերի համագումարից ընտրված Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց իրեն Անդրկովկասյան հայկական գավառների բարձրագույն իշխանություն: Ազգային խորհրդի կազմած կառավարությունն այդ քաղաքական ակտի մասին պաշտոնապես պետությունների ներկայացուցիչներին հայտնելուց հետո այս մի տարվա մեջ փաստորեն հաստատել է իր իշխանությունը Անդրկովկասի հայկական գավառներում:

1919 թ. փետրվար ամսին Երևան քաղաքում կայացած Արևմտահայ երկրորդ համագումարը հանդիսավոր կերպով հայտարարեց, որ նա Հայաստանը միացյալ և անկախ է ճանաչում: Այժմ Անդրկովկասում և Օսմանյան կայսրության սահմաններում գտնված պապենական հայկական հողերի միացման և անկախության այս ակտը կատարելով, Հայաստանի կառավարությունը հայտարարում է, որ Միացյալ Հայաստանի պետական ձևն է ռազմավար հանրապետությունը, և որ ինքը հանդիսանում է միացյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի կառավարությունը սույն ակտը հրատարակում է 1919 թ. ապրիլի 27-ի պառլամենտի որոշմամբ կառավարությանը տրված հատուկ լիազորությունների հիման վրա»:

Նախարարների խորհրդի նախագահի և արտ. գործ. նախարարի փոխանորդ՝ Ալ. Խատիսյան  
Ներք. գործ. նախարարի փոխանորդ՝ Ս. Մանասյան  
Զինվորական նախարար՝ գոր. Բր. Արարատյան  
Արդարադատության նախ. փոխանորդ՝ Հ. Չմշկյան  
Հանր. կրթ. նախարարի փոխանորդ՝ Գ. Մելիք-Ղարազյոզյան  
Խնամատարության նախարար՝ Ս. Թորոսյան  
Պարենավորման նախարար՝ Բ. Վերմիշյան  
Ելևմտյան նախ. փոխանորդ՝ Գ. Զաղեթյան  
Գործերի կառավարիչ՝ Գ. Խատիսյան

<sup>217</sup> «Հայ ժողովրդի պատմություն» (Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ.) հ. 7, Երևան, 1967, էջ 52:

28 մայիսի 1919 թ., ք. Երևան<sup>218</sup>:

Ինչպես տեսնում ենք, հայտարարագրի տակ ստորագրել են նաև Ժողովրդական կուսակցության նախարարները: Սակայն Գ. Մելիք-Ղարազյոզյանն իր հուշերում գրում է, որ ինքը Միացյալ Հայաստանի ակտի ընդունման օրը ներկա չի եղել կառավարության նիստին<sup>219</sup>: Ալ. Խատիսյանի ընթերցած այս հայտարարագիրը ընդունվեց որոտընդոտ կեցցեներով ու ծափողջույններով: Ապա նույն ճառը և հայտարարագիրը կարդացվեց ֆրանսերեն լեզվով դաշնակից պետությունների ներկայացուցիչների համար<sup>220</sup>:

1919 թ. մայիսի 28-ի անկախության օրը Երևանում անցկացվեց շքերթ, գորահանդես, տոնախմբություններ, հայտարարվեց համաներում (ամնիստիա), հուշարձանի կառուցման մրցանակաբաշխություն, հանգանակվեց 100 հազար ռուբլի «Ազատության զոհերին» հուշարձան կառուցելու համար<sup>221</sup>: Ավելի ուշ՝ օգոստոսի 29-ին, Ս. Աստվածածնի վերափոխման օրը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե. ս. պատարագ մատուցելով՝ օրհնեց ու սրբազորեց Միացյալ և Անկախ Հայաստանի տոնը: Միաժամանակ, Մայր Աթոռ ս. Էջմիածնի կողմից Հայաստանի անկախության փոխառության ֆոնդին նվիրաբերվեց 1 մլն ռուբլի<sup>222</sup>:

Հայաստանի կառավարության մայիսի 28-ի ակտը առանձին շրջաբերականով ողջունեցին ՀՅԴ բյուրոն, ՀՅԴ «Երկրի» Կենտրոնական կոմիտեն, կուսակցության այլ ղեկավար մարմիններ: ՀՅԴ բյուրոյի հայտարարության մեջ ասված է. «ՀՅԴ Բյուրոն պատմական վարկյանի խոր գիտակցությամբ ջերմապես ողջունում է Հայաստանի միացման և անկախության ակտի պաշտոնական հայտարարությունը»<sup>223</sup>:

Միացյալ և Անկախ Հայաստանի մասին ակտը ուրախությամբ ողջունեցին պետական և հասարակական շատ կազմակերպություններ, այդ թվում՝ Հայաստանի կոոպերատիվների միությունը՝ Հայկոոպը<sup>224</sup>: Անհետաքրքիր չէ նշել, որ Հայաստանի անկախության առաջին տարեդարձը հեռագրով շնորհավորել են Ադրբեջանի խորհրդարանն ու կառավարությունը<sup>225</sup>: Մայիսի 28-ի Հայաստանի երկու հատվածների միացման մասին կառավարության հայտարարությունը սրտագին ողջունեց նաև Արևմտահայ գործադիր մարմինը<sup>226</sup>:

<sup>218</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, ց. 1, գ. 56, ք. 15, Ժ. 200, ց. 1, գ. 35, ք. 84, գ. 282, ք. 10, նաև

«Միացյալ և Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 86-87:

<sup>219</sup> Բանբեր Հայաստանի արխիվների, Ե., 2002, թիվ 1, էջ 94:

<sup>220</sup> «Միացյալ և Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 80-81:

<sup>221</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 291, ք. 404, Ժ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, ք. 112:

<sup>222</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, ց. 1, գ. 176, ք. 22:

<sup>223</sup> «Միացյալ և Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 88:

<sup>224</sup> «Հայաստանի կոոպերացիա», 1 հուլիսի 1919 թ. (թիվ 13), էջ 384:

<sup>225</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 201, ց. 1, գ. 43, ք. 25:

<sup>226</sup> «Միացյալ և Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 92:

Այս ակտի գերնպատակը՝ մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ կառավարություն գաղափարի որպես պետական քաղաքականության աստիճանական իրագործումն էր։ «Այդ ակտի նպատակն էր,՝ մտահանգում էր Ս. Վրացյանը, արագացնել հայ ժողովրդի երկու հատվածների միությունը և հայտարարել ի լուր աշխարհի հայ ժողովրդի անհողորդող կամքը՝ անկախ պետական կյանքով ապրելու»<sup>227</sup>։ Արված հայտարարությունը պետք է արմապնդվեր գործնական քայլերով։ Նախատեսվում էր, բանակցելով արևմտահայ քաղաքական շրջանակների հետ, կազմել միացյալ Հայաստանի կառավարություն և միացյալ խորհրդարան<sup>228</sup>։ Այս պատմական նշանակություն ունեցող հայտարարությունը չՀԴ և ՀՀ կառավարության համապատաստի ինքնագործունեության արդյունք չէր, այլ նախապատրաստվել էր քայլ առ քայլ, նախընթաց պատմաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների տրամաբանությամբ։ 1918 թ. դեկտեմբերի սկզբին խորհրդարանի և կառավարության որոշումով Եվրոպա մեկնող ՀՀ պատվիրակությանը հանձնարարական էր տրվել Փարիզի խաղաղության համաժողովում պաշտպանել Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը<sup>229</sup>։ Ձորավար Գ. Ղորղայանը հայտնում է, որ Փարիզում գտնվող Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան ավելի վաղ՝ 1918 թ. նոյեմբերի 30-ին, «Դաշնակիցներին հաղորդել էր Միացյալ Հայաստանի անկախ պետության ստեղծման մասին»<sup>230</sup>։

Մեկ այլ հանդիմանողությամբ իրազեկվում է, որ 1918 թ. դեկտեմբերի 17-ին դաշնակից երկրների գիտությամբ Պոդոս Նուբար փաշան արել է Արևմտյան Հայաստանի (վեց վիլայեթների) և Կիլիկիայի միացյալ անկախության հայտարարություն և այդ հիման վրա նույնիսկ կազմվել կառավարություն: Այս կապակցությամբ ռամկավար գործիչ ու պատմաբան Ա. Դարբինյանը հետևյալ պարզաբանումն է անում: Ազգային պատվիրակությունը գտնում էր, որ Տաճկահայաստանի և Ռուսահայաստանի հարցերը չպետք է միացնել իրար և նման ձևով կատարել միացյալ Հայաստանի հայտարարությունը: Պ. Նուբարը պատճառաբանում էր, որ քանի դեռ Ռուսաստանը իր վերջնական խոսքը չի ասել Ռուսահայաստանի խնդրում, ուստի «Տաճկահայաստանի հարցը պետք է անջատ պահել, որպեսզի դաշնակից պետությունները ռուսական հարցը պատճառ չդարձնեն տաճկահայ դատի լուծման ձգձգման համար»<sup>231</sup>:

Պողոս փաշայի և արևմտահայ շատ գործիչների մտավախությունն այն էր, որ վաղ քե ուշ Ռուսաստանը պիտի գրավի Հայաստանը<sup>232</sup>։ Փաշայի այս բացատրությունից կարելի է հասկանալ այն, որ նա ուզում էր հասնել

<sup>227</sup> Ս. Վրացյան, Բանակցություններ Ազգային պատվիրակության և ՀՀ միջև, Պոսթըրմ, 1920, էջ 6:

228 Նույն տեղում:

229 ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1. գ. 183, ք. 7:

230 «Чтен», 1934, б., էջ 29-30:

231 Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 419:

232 Մ. Գ. Շիրազցի, նշվ. աշխ., էջ 397:

Տաճկահայաստանի (եթե հնարավոր էր մաս Կրիկիայի հետ) ինքնուրույն անկախության հռչակմանը, ինքն էլ դառնար նրա վարչապետը։ Այս ակնկալությանը էլ կազմվեց նույնիսկ կառավարություն։ Պողոս փաշայի գլխավորած կաբինետում ընդգրկվել էին Գաբրիել Նորատունկյանը (արտ. գործ. նախարար), Ոսկան Մարտիկյանը (ներք. գործ. նախ.), Արշակ Չոպանյանը (կրթության և արվեստի նախ.) և ուրիշներ<sup>233</sup>։ Հասկանալի է, որ այս ամենը կատարվեց և մնաց փաստորեն թղթի վրա։ Այս առթիվ Ա. Ահարոնյանը Փառիգից արտ. գործ. նախարար Ս. Տիգրանյանին ուղղված 1919 թ. ապրիլի 24-ի թվագիր նամակում հայտնում էր. «Ձեզ հեռագրել եմ, որ այստեղ Պողոս փաշայի կառավարություն գոյություն չի ունեցել և չունի»<sup>234</sup>

Սրան հակառակ Արևմտահայ ազգային պատվիրակությունը օտարոտի վերաբերմունք ցուցաբերելով դեպի իրական Հայաստանի Հանրապետությունը՝ Արևմտյան Հայաստանը հակադրում էր ՀՀ-ը: Պողոս փաշան ՀՀ գոյությունը համարում էր նույնիսկ վնասակար Հայկական դատի համար<sup>235</sup>: Այդ հիման վրա նա նույնիսկ դիմակայել է օտար պետությունների կողմից ՀՀ ճանաչմանը՝ գտնելով, որ «դա իբր կարող է թուլացնել Տաճկահայաստանի դատը: Իսկ այդ գործում փաշային օգնել է նաև Անդրանիկը»<sup>236</sup>: Ինքնին հասկանալի է, որ նման դիրքորոշումն ու վերաբերմունքը չէր կարող նպաստել Հայկական հարցի ամբողջական լուծմանը: Հայ ժողովրդի իրական կառավարությունն ու ուժը ոչ թե Փարիզում էր, այլ բուն Հայաստանում:

Աշխարհամարտի հաղթական ավարտից ու Թուրքիայի պարտությունից հետո Հայաստանի իշխանությունները պաշտպանեցին Միացյալ Հայաստանի գաղափարը և հնարավորության սահմաններում ձեռնամուխ եղան դրա իրագործմանը։ Միացյալ Հայաստանի (այսինքն՝ Հայաստանի Արևելյան և Արևմտյան հատվածների միավորման մասին) գաղափարին ժամանակի պարբերական մամուլում առաջին անգամ հանդիպում ենք 1918 թ. դեկտեմբերին։ ՀԺԿ Երևանի կոմիտեի պաշտոնաթերթ «Ժողովրդի» դեկտեմբերի 8-ի համարում «Ազատ Հայաստան» խորագրով հրապարակման մեջ որոշակիորեն արծարծվում էր Միացյալ և Ազատ Հայաստանի գաղափարը. «Միացյալ և Ազատ Հայաստան» դա կլինի արմատական լուծումը Հայկական հարցի, դա կլինի ամենանպատակահարմարը թե՛ միջազգային խաղաղության և թե՛ հայ ժողովրդի շահերի տեսակետից»<sup>237</sup>։ Միացյալ և Ազատ Հայաստանի գաղափարը առաջին անգամ հրապարակավ հռչակեց ու պաշտպանեց 1919 թ. փետրվարի 6-13-ին Երևանում հրավիրված Արևմտահայերի երկրորդ համագումարը, որը ներկայացնում էր շուրջ 200 հազար արևմտահայերի։

<sup>233</sup> «Մոծազանք». Եկատերինոդար, 10 հունվարի 1919 թ.:

234 «Գաղափարական կարգավորության դոկումենտներից», Ե., 1922, էջ 10:

235 11. Ստրասսան, Հասարակական Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 274:

236 ՀՀ ՊԿՊԼ. Ծ. 200. գ. 1, գ. 431, ք. 62:

237 «Ժողովուրդ», 8 դեկտեմբերի 1918 թ.:

Համագումարում ձայների մեծամասնությամբ ընդունված քաղաքական բանաձևի թիվ 5 կետով հանձնարարվում էր նորընտիր Գործադիր մարմնին՝ «գործնական քայլեր անել Արարատյան Հանրապետության կառավարության և խորհրդարանի հետ Միացյալ, Ազատ Հայաստանի անկախությունը հայտարարելու և մեկ համագլխի միություն իրականացնելու համար»<sup>238</sup>։ Բանաձևի այս կետին դեմ են արտահայտվել միայն Ռամկավար կուսակցության հինգ անդամները։ Վերջիններս որպես բողոքի նշան հայտարարություն արեցին և հրաժարվեցին մասնակցել համագումարի հետագա աշխատանքներին<sup>239</sup>։ Այս կապակցությամբ նրանք հանդես եկան մի ընդարձակ հոդված-հայտարարությամբ «Ինչո՞ւ հեռացանք արևմտահայ Բ համագումարից» վերտառությամբ, որում փորձում էին պարզաբանել ու հիմնավորել համագումարից իրենց հեռանալու դրդապատճառները»<sup>240</sup>։ Բայց պետք է ասել, որ գաղթականության խնդրում ՀՅԴ և Հայ ռամկավար կուսակցությունները հիմնականում համագործակցել են իրար հետ։

Ինչևէ, ձայների մեծամասնությամբ բանաձևը ընդունվեց և ինը հոգուց բաղկացած նորընտիր Գործադիր մարմինը պետք է բանակցեր Պողոս Նուբարի, ՀՀ կառավարության ու խորհրդարանի հետ Միացյալ, Ազատ Հայաստանի պետական-օրենսդրական հիմքերը ստեղծելու նպատակով։

Արևմտահայերի համագումարը փետրվարի 13-ի իր վերջին նիստում ողջունի նամակով դիմում է հանրապետության վարչապետին, որում մասնավորապես ասվում էր. «Համագումարը հավատացած է, որ Արարատյան Հանրապետության կառավարությունը կը փութա օր առաջ հայտարարել Միացյալ, Ազատ Հայաստանի անկախությունը և գործնական քայլեր առնել միացումը իրականացնելու համար կյանքի մեջ»<sup>241</sup>։

Համագումարը նույն բովանդակությամբ դիմել է նաև Հայաստանի խորհրդարանին՝ հավատացած լինելով, որ խորհրդարանը չի ուշացնի իր որոշումը<sup>242</sup>։ Համագումարից հետո նորընտիր գործադիր մարմինը դիմեց Հայաստանի կառավարությանը՝ առաջարկելով «հայտարարություն անել Միացյալ Հայաստանի մասին»<sup>243</sup>։ Ահա սրանք էին այն հիմնական կովաններն ու շարժառիթները, որոնք մղեցին կառավարությանը Հայաստանի երկու մասերի միացման վերաբերյալ հայտարարություն անելու։

Կառավարության մյուս քայլը խորհրդարանը արևմտահայ ներկայացուցիչներով համալրելն էր։ Դրա համար ևս կային հիմքեր։ Տաճկահայ գաղթականությունը իրեն խորթացած էր զգում Արարատյան Հանրապետությունում, և ինչպես հարկն է, չէր մասնակցում երկրի հասարակական-քաղաքա-

կան կյանքին։ Նրանք գտնում էին, որ «Հայաստանի կառավարությունը հավասար աչքով չի նայում ռուսահայ և տաճկահայ գաղթականությանը»<sup>244</sup>։ Դեռ 1918 թ. վերջերին արևմտահայ գործիչ Արսեն Կիտուրը դժգոհություն էր արտահայտում այն բանից, որ տաճկահայ չունի իր ձայնը ՀՀ խորհրդարանում, «որ կարող լինե՞ր խոսելու իր ցավերի մասին»<sup>245</sup>։

Նախարարների խորհրդի կողմից մայիսի 27-ին հաստատված և հաջորդ օրը հրապարակված օրենքով, որպես երկու Հայաստանների իրական միացման արտահայտություն, որոշվեց Հայաստանի խորհրդի կազմը համալրել արևմտահայերի 12 ներկայացուցիչներով։ Օրենքում ասված էր. «Հրավիրել Հայաստանի խորհրդի նիստերին մասնակցելու որպես խորհրդի լիիրավ անդամներ՝ Արևմտահայ գործադիր մարմնի կողմից ընտրված 12 ներկայացուցիչներ»<sup>246</sup>։ «Մշակ» թերթը տեղեկացնում էր, որ դեռ մարտ ամսին ՀՅԴ - Հայաստանի կազմակերպությունը և ՀՅԴ խորհրդարանական խմբակցությունը հարց էին բարձրացրել 12 արևմտահայ ներկայացուցիչներ խորհրդարանում ներգրավելու մասին<sup>247</sup>։

Նախատեսված էր, որ արևմտահայ 12 պատգամավորների ներգրավումից հետո խորհրդարանը պիտի ունենար միայն մեկ նիստ՝ կառավարությանը նոր լիազորություններ տալու համար և պիտի ցրվեր՝ տեղի տալով նոր ընտրովի խորհրդարանին<sup>248</sup>։ Իհարկե, նախատեսված էր նաև կառավարության ակտերի վավերացումը խորհրդարանում։ Սակայն դեպքերն այնպես զարգացան, որ անհնարին դարձավ «ակտի» քննարկումը, իսկ մի քանի օր անց խորհրդարանը ինքնալուծարման ենթարկվեց։

Բայց այստեղ մտահոգություն է առաջացնում այն հանգամանքը, որ վերոհիշյալ արևմտահայ 12 ներկայացուցիչները ըստ կուսակցական պատկանելության եղել են դաշնակցականներ կամ նրանց հարողներ։ Մինչդեռ մենք գիտենք, որ Կովկաս ապաստանած արևմտահայ գաղթականության մեջ զգալի կշիռ ու ազդեցություն ունեին Հայ ռամկավարները և անաչառ մոտեցման դեպքում այդ 12 անդամների թվում պետք է որ լինեին նաև ռամկավարներ։ Բայց քանի որ նրանք հեռացել էին համագումարից և Արևմտահայ նորընտիր գործադիր մարմինը բաղկացած էր միայն դաշնակցական ներկայացուցիչներից, ուստի և նրա ընտրած 12 ներկայացուցիչներն էլ կուսակցական պատկանելությամբ դաշնակցականներ էին կամ ՀՅԴ համակիրներ։ Դրանք էին՝ Կարո (Արմեն) Սասունին, Վաղարշակ Յոխիկյանը, Արսեն Կիտուրը, Վահագն Զրմոյանը, Հմայակ Մանուկյանը, Արմենակ Մաքսապետյա-

<sup>238</sup> «Համառոտ տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի», Ե., 1919 էջ 13-14։

<sup>239</sup> «Ժողովուրդ», 28 փետրվարի 1919 թ.։

<sup>240</sup> «Վան-Տոսպ», 31 մարտի 1919 թ.։

<sup>241</sup> «Համառոտ տեղեկագիր...» էջ 17, Ս. Վրացյան, Բանակցություններ ազգային պատվիրակության և ՀՀ միջև, Պոսթըն, 1920, էջ 4-5։

<sup>242</sup> «Համառոտ տեղեկագիր...», էջ 18։

<sup>243</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, Ժ. 199, g. 1, q. 14, մաս 1, p. 30։

<sup>244</sup> ՀՀ ՀԶԿ ՊԿԱ, Ժ. 4047, g. 1, q. 144, p. 2։

<sup>245</sup> «Կայծ», 29 դեկտեմբերի 1918 թ.։

<sup>246</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, Ժ. 199, g. 1, q. 14, մաս 1, p. 114, q. 27, p. 213, Ժ. 200, g. 1, q. 282, p. 9։

<sup>247</sup> «Մշակ», 20 մարտի 1919 թ.։

<sup>248</sup> «Միացյալ և Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 96։

նը, Ջավեն Կորկոտյանը, Վարդան Առաքելյանը, Հայկ Կոստյանը, Վան-Փուշը, Հայրապետ Հայրապետյանը և Արտաշես Միրզոյանը<sup>249</sup>:

Մեր կարծիքով, անշուշտ, իրավական, էլ չենք ասում բարոյական տեսակետից պատշաճ չէր ու կառավարության իրավասությունից միանգամայն դուրս էր խորհրդարան ինչ-որ թվով պատգամավորներ իրավիքելու մասին որոշում կայացնել: Եթե մայիսի 28-ի միացման ակտը այսպես թե այնպես կարելի էր օրինական համարել այն մեկ անգամ ևս վավերացնելով խորհրդարանում, ապա ոչ մի կերպ չի կարելի արդարացնել կառավարության որոշումը 12 արևմտահայ ներկայացուցիչներ խորհրդարան ներգրավելու մասին:

Այդուհանդերձ, որոշումն արդեն կայացվել էր ու դարձել իրողություն:

Ինքնին հասկանալի է, որ կառավարության որոշմամբ 12 թուրքահայ ներկայացուցիչների մուտքը խորհրդարան ապահովում էր ՀՅԴ-ի կայուն մեծամասնությունը, որն էլ մեծ անհանգստություն ու վրդովմունք առաջ բերեց ընդդիմության շրջանում: Միացյալ և Անկախ Հայաստանի հայտարարությունը ու արևմտահայ 12 պատգամավորների հրավերը Հայաստանի խորհուրդ մեծ աղմուկով դիմավորեցին «աջ» և «ձախ» կուսակցությունների ներկայացուցիչները:

1919 թ. հունիսի 4-ին խիստ լարված պայմաններում տեղի ունեցավ խորհրդարանի նիստը: Այդ նիստին մասնակցում էին նաև 12 արևմտահայ ներկայացուցիչները, որոնց խորհրդարան մտնելուն դեմ էին ՀԺԿ, սոց.-դեմ. և էսեռական խմբակցությունները: Արդեն նախապես կազմած հայտարարություններով ամբիոն են բարձրանում առաջինը սոց.-դեմ. խմբակցության պատգամավոր Գ. Ղարաջյանը<sup>250</sup>, իսկ հետո՝ ՀԺԿ կողմից պատգամավոր Գ. Տեր-Խաչատրյանը: Նրանք իրենց կուսակցության ու խմբակցության անունից հայտարարեցին, որ կառավարությունը կատարել է ապօրինի քայլ, փաստորեն պետական հեղաշրջում, ուստի իրենք այսօրվանից հրաժարվում են խորհրդի աշխատանքներին մասնակցելուց<sup>251</sup>:

Հայ ժողովրդական կուսակցության հայտարարության մեջ մասնավորապես ասվում էր. «Կառավարության արած քայլը ոչ միայն պետական հեղաշրջում և հարված է սահմանադրության դեմ, այլ այդ քայլը նույնիսկ խորհրդարանի իրավասությունից վեր է... Այդ ապօրինության հետևանքով ժողովրդական կուսակցությունը չի ճանաչում Հայաստանի խորհուրդը և կառավարությանը որպես օրինական մարմիններ: Ֆրակցիան հեռանում է խորհրդարանից և հետ է կանչում ժողովրդական նախարարներին կառավա-

րությունից և հայտարարում է ակտիվ բոյկոտ խորհրդարանական ընտրությունների դեմ<sup>252</sup>:

Արդեն հունիսի կեսերին ժողովրդական նախարարները պաշտոնապես դուրս եկան կառավարությունից ու դրանով վերջ տրվեց ՀՅԴ-ՀԺԿ կոալիցիային: Նշենք, որ 1919 թ. մայիսի վերջի և հունիսի սկզբի խորհրդարանական ճգնաժամի շրջանում ՀԺԿ Հայաստանի կոմիտեի անդամ, ՀՀ արդարապետության նախարարի օգնական Հարություն Չմշկյանը, պաշտոնասիրությունից մղված, ընդունելի համարեց արևմտահայ 12 ներկայացուցիչների մուտքը խորհրդարան և իր դիմումի համաձայն հեռացավ իր կուսակցության շարքերից: Դրանից հետո, որպես վարժատրություն, նա ստացավ նախարարի պաշտոն<sup>253</sup>: Իսկ ՀԺԿ Երևանի կոմիտեն որոշեց կուսակցության կարգապահությունը խախտելու համար Հ. Չմշկյանին վտարել կուսակցության շարքերից:

Հայտարարությունների ընթերցումից հետո, որպես բողոքի նշան, ժողովրդական և սոց.-դեմ. պատգամավորները թողեցին խորհրդարանը ու ցուցադրաբար հեռացան դահլիճից: ՀԺԿ և սոց.-դեմոկրատներին հետևեցին էսեռները: Նախ սոց.-հեղափոխական խմբակցության անունից արտակարգ հայտարարություն անելու համար ծայն է խնդրում Լ. Թումանյանը, բայց նախագահը մերժում է ծայն տալ, որովհետև մինչ այդ արդեն խոսք էր խնդրել վարչապետի պաշտոնակատարը և նա արդեն գտնվում էր ամբիոնի մոտ: Այդուհանդերձ, պատգամավոր Լ. Թումանյանը, խախտելով աշխատակարգը, տեղից սկսում է բարձրաձայն կարդալ իրենց հայտագիրը՝ խանգարելով Ալ. Խատիսյանին: Դահլիճում բարձրանում է աղմուկ, ժխտ, որից հետո էսեռները նույնպես թողնում և հեռանում են դահլիճից: Էսեռները ևս քննադատում էին կառավարության արարքը, բայց, ինչպես հետո կտեսնենք, նրանք, ի տարբերություն ժողովրդականների և սոց.-դեմոկրատների, մասնակցեցին նոր խորհրդարանի ընտրություններին: Էսեռների հեռանալուց հետո դահլիճում մնում են միայն ՀՅԴ խմբակցությունը և արևմտահայ 12 ներկայացուցիչ պատգամավորները: Այդ օրը մահմեդական խմբակցությունը նիստին բոլորովին չէր ներկայացել: Այսուհանդերձ, նիստը շարունակվում է: Վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանն իր ելույթում սկսում է բացատրություններ տալ, թե ինչու կառավարությունը հանդես եկավ նման ակտերով<sup>254</sup>: «ՀՀ սահմանները, մատնանշում էր հռետորը, հասել են նախկին Թուրքիայի սահմանները. Կարսի մահանգի 3/4-ը մեր ձեռքին է, բացի Ախալցխայի շրջանից, որ վրացիների ձեռքին է և Օլթին, որ ժամանակավորապես գտնվում է տեղական մահմեդականների ձեռքը: Պետք էր արևմտահայ գաղթականությանը բնակեցնել իր երկրում: Դրդապատճառներից մեկն էլ այն էր, որ «Դաշնակից-

<sup>249</sup> «Աշխատանք», 7 հունիսի 1919 թ., «Միացյալ և Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 81:

<sup>250</sup> ՌՍԴԲԿ (մեմշկիկ) հայ հատվածը հրապարակեց նաև կոչ ուղղված հայ ժողովրդին, որում Դաշնակցական Հայաստանի կառավարության մեկ տարին քննադատվում էր որպես կոլոնիալիզմ: Կորստաբեր ու արկածախնդրական հայ ժողովրդի համար (Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 404, ց. 1, գ. 8, թթ. 1-3):

<sup>251</sup> ՀՀ ԼԶԿՓ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 2, գ. 121, թ. 1, ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 393, ց. 2, գ. 118, թ. 1, «Ժողովուրդ», 6 հունիսի 1919 թ.:

<sup>252</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 292, ց. 1, գ. 2, թ. 1, Լ. Թուրունջյան, Հ.Յ.Դ. իբրեւ պետական գործուն, Կ. Պոլիս, 1921, էջ 41-42:

<sup>253</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 404, ց. 1, գ. 38, թ. 2:

<sup>254</sup> Լ. Թուրունջյան, նշվ. աշխ., էջ 42:



ների» մոտ կասկած կար, թե ՀՀ չի ձգտում բացարձակ անկախության, և որ նա իբր վարանում է Ռուսաստանից կտրվել»<sup>255</sup>։ Վարչապետի պաշտոնակատարը միացման հայտարարության անհրաժեշտությունը բացատրում էր նաև նրանով, որ շուտով անցկացվելու են խորհրդարանի ընտրություններ և ուստի հարկավոր էր, որ արևմտահայ գաղթականությունը իրեն զգար որպես իր միացյալ հայրենիքի լիարժեք քաղաքացին ու տերը<sup>256</sup>։ Հայտարարության ընդունման դրդիչ համգամանքներից մեկն էլ պետք է համարել այն, որ կառավարությունը մտավախում էր, որ նման կազմով խորհրդարանը հազիվ թե ընդուներ Միացյալ և Անկախ Հայաստանի ակտը։ Խառնախմբի պարզաբանում էր, որ Հայաստանի երկու հատվածների միավորման ակտի պաշտոնական հայտարարումից հետո բնականաբար պետք է որ խորհրդարանի կազմում ընդգրկվեին արևմտահայերի ներկայացուցիչները և դրա համար կառավարությունը խորհրդարան հրավիրեց արևմտահայ 12 ներկայացուցիչների<sup>257</sup>։

Այնուհետև նա կանգ է առնում ՀՀ ներքին ու արտաքին քաղաքականության հիմնախնդիրներին։ Ելույթի վերջում Ալ. Խառնախմբի հայտարարում է, որ կառավարությունը գիտակցում է իր արածը և պատասխանատու է դրան<sup>258</sup>։ Հայաստանի կառավարության գլխավոր հիմնափաստարկն այն էր, որ ներկայիս իրական ՀՀ պետք է դառնար Միացյալ և Անկախ Հայաստանի միջուկը։

Հայաստանի կառավարության կողմից Միացյալ Հայաստանի անկախության մասին հայտարարած ակտը ու միաժամանակ 12 արևմտահայ պատգամավորների խորհրդարան հրավիրելը ներքաղաքական ուժեղ պայքար առաջ բերեց հատկապես Հայաստանի երկու ազդեցիկ՝ ՀՅԴ և ՀԺ կուսակցությունների միջև։ Սրանց միջև սկսված պայքարը դուրս եկավ խորհրդարանի և կառավարության շրջանակներից։ Այդ օրերին ՀԺԿ պաշտոնաթերթեր՝ «Ժողովրդի ձայնը» և «Ժողովուրդը» հանդես եկան մեղադրանքներով։ Ժողովրդականների թիֆլիսյան հատվածի օրգան «Ժողովրդի ձայնը» սխալ ու ապօրինի էր համարում հատկապես այն, որ «կառավարությունը իրեն համարում է Միացյալ ՀՀ կառավարություն»<sup>259</sup>։ «Կազմել Միացյալ Հայաստանի կառավարություն,-շարունակում էր թերթը,- միմիայն ռուսահայերից, առանց թուրքահայերի մասնակցության, արդեն ոչ միայն անզգույշ քայլ է, այլև աններելի վարմունք»<sup>260</sup>։

Իսկ ՀԺԿ երևանյան հատվածի պաշտոնաթերթ «Ժողովուրդը» կառավարական ակտերը որակեց որպես «պետական հեղաշրջում»<sup>261</sup>։ Մեր կարծիքով, կառավարության ընդունած վերոհիշյալ ակտերը պետական հեղաշր-

ջում չի կարելի դիտել այն մասով, որ խորհրդարանն այդ ժամանակ իր օրենսդիր լիազորությունները հանձնել էր կառավարությանը։ Եվ ասենք, օրինակ, չի կարելի Հայաստանի կառավարության այս քայլը համեմատել ցարական կառավարության 1907 թ. հունիսի 3-ի օրենքի հետ, երբ վարչապետ Պ. Ստոլիպինը, առանց օրենսդիր մարմնի՝ Պետական դումայի տված լիազորությունների ու գիտության, օրենք հրապարակեց 2-րդ Պետական դումա արձակելու և 3-րդը՝ հրավիրելու մասին։

Ժողովրդականները արևմտահայության իրավունքների ու ջանքերի բռնաբարում համարեցին հայտարարության այն հատվածը, որտեղ ՀՀ ներկա կառավարությունը իրեն հռչակում էր «Միացյալ և Անկախ Հայաստանի կառավարություն»՝ անտեսելով Ազգային պատվիրակության ու նրա ղեկավար Պողոս Նուբար փաշայի գոյությունը։ Այստեղ կարծում ենք, որ ժողովրդականներին մտահոգում էր ոչ այնքան խնդրի իրավաբանական կողմը, որքան այն, որ Միացյալ Հայաստանի կառավարության ղեկին հավակնում էր իրենց քույր կուսակից ու պաշտելի Պողոս Նուբարը։ Եվ նրանք ցանկանում էին այդ բաղձալի պաշտոնին տեսնել ոչ թե դաշնակցականի, այլ ռամկավար Պողոս փաշային։ Մեզ թվում է, թե այս տարածայնությունների հիմքում ընկած էին ավելի շատ կուսակցական ու անձնական հաշիվները, քան թե համապետական ու համազգային գերագույն շահերը։ Հիշեցնենք, որ ՀԺԿ-ը իր ստեղծման պահից ամենից ավելի մտահոգ էր ռուսահայ ու կովկասահայ հիմնախնդիրներով, բայց, ի հեճուկս Հայ ռամկավարների՝ սկսեց ավելի ու ավելի կարևորել արևմտահայ դատը և նրանց հետ հանդես գալ միասնաբար՝ որպես հակակշիռ ՀՅ Դաշնակցությանը։

Որպես ստեղծված վիճակից դուրս գալու ելքը՝ ժողովրդականները առաջարկում էին այն, որ Հայաստանի ներկա կառավարությունը խորհրդարանի միջոցով պաշտոնապես դիմի Փարիզի արևմտահայ Ազգային գործադիր մարմնին ու պատվիրակությանը և առաջարկի հայության երկու հատվածների ներկայացուցիչներից կազմել ժամանակավոր կառավարություն և հրավիրել Միացյալ Հայաստանի հիմնադիր /Սահմանադիր/ ժողով<sup>262</sup>։ Հայ ժողովրդականները գտնում էին, որ խորհրդարան հրավիրված արևմտահայ 12 ներկայացուցիչները ընտրված են միայն Հայաստանի սահմաններում ապաստանած մոտ 200 հազ. արևմտահայերի կողմից, որոնք ներկայացնում են արևմտահայության ընդամենը մի հատվածը և հեռու ամբողջ բրբախայության արտահայտիչը լինելուց։ Ըստ ժողովրդականների՝ գաղութահայության շահերի գլխավոր արտահայտիչը Փարիզի Արևմտահայ գործադիր մարմինն է, առանց որի հետ համաձայնության գալու՝ անընդունելի ու անօրինական են ներկայիս ՀՀ կառավարությանը Միացյալ Հայաստանի կառավարություն համարելը և Երևանի արևմտահայ գործադիր մարմնի կողմից 12 արևմտահայերի՝ որպես Միացյալ Հայաստանի խորհրդարան ուղարկելը։

<sup>255</sup> «Միացյալ և Անկախ Հայաստան», Կ. Պոլիս, 1919, էջ 94։

<sup>256</sup> Նույն տեղում, էջ 95։

<sup>257</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 35, ք. 87։

<sup>258</sup> «Ժողովուրդ», 11 հունիսի 1919 թ.։

<sup>259</sup> «Ժողովրդի ձայն», 3 հունիսի 1919 թ.։

<sup>260</sup> Նույն տեղում։

<sup>261</sup> «Ժողովուրդ», 4 հունիսի 1919 թ.։

<sup>262</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 11, գ. 35, ք. 116, «Ժողովրդի ձայն», 3 հունիսի 1919 թ., «Ժողովուրդ», 4 հունիսի 1919 թ.։



դի պատգամավորներ: Ինչպես միշտ, օթյակները, ամֆիթատրոնը և վերնասրահը լցված էին հասարակայնության ներկայացուցիչներով:

Նիստը բացվեց երեկոյան ժամը 9-ին: Ընդառաջ գնալով 12 արևմտահայերի հարցապնդմանը՝ բնմարկվեց արևմտահայությանը դեպի Երկիր ներգաղթի կազմակերպման խնդիրը: Ջեկուցեց խնամատարության նախարար Ս. Թորոսյանը: Տաճկահայ պատգամավորներից ելույթներով հանդես եկան Կարո Սասունին, Հմայակ Մանուկյանը և Արմենակ Մաքսապետյանը: Որոշվեց արագացնել ներգաղթի գործը: Դրանից հետո խորհրդարանը 22 ժայնով որոշում ընդունեց առհասարակ դադարեցնել իր աշխատանքները, քանի որ երկու-երեք շաբաթից հետո պիտի կայանային նոր խորհրդարանի ընտրությունները<sup>270</sup>:

Խորհրդարանի վաղաժամկետ արձակման գլխավոր պատճառն այն էր, որ ժողովրդական, սոց. դեմ. և էսէռական խմբակցությունները հեռացել էին խորհրդարանից: Եվ չէր մնում այլ բան, քան արձակուրդ հայտարարելով՝ փաստորեն արձակել խորհրդարանը:

Այսպիսով, ստեղծված փակուղային վիճակից դուրս գալու նպատակով էր, որ ընդհատվեցին, իսկ հետո էլ դադարեցվեցին խորհրդի աշխատանքները, իսկ նրա օրենսդրական իրավունքները անցան գործադիր իշխանությանը՝ կառավարությանը: Հունիսի 5-ը համարվում է Հայաստանի խորհրդի փակման օրը: Սակայն արդեն գործում էր նոր խորհրդարանի ընտրությունների կենտրոնական համձնաժողովը և որոշված էր ընտրությունների օրը: Ահա այսպիսի ավարտ ունեցավ Հայաստանի ոչ ընտրովի անդրամիկ խորհրդարանը:

Ջննելով և վերագնահատելով կառավարության մայիսյան հայտարարությունը և նրա շուրջ ծագած առաջին խորհրդարանի ճգնաժամը՝ գալիս ենք այն հետևության, որ, անկախ կառավարությանը տրված օրենսդրական լիազորություններից և անկախ խնդրի հետագա ճակատագրից, իրավական ու բարոյական տեսակետից, այնուամենայնիվ, ավելի ճիշտ կլիներ, որ նման կարևորությամբ հայտարարության ակտը ընդունվեր խորհրդարանի կողմից:

Ի մասնավորի, եթե կարելի էր հաշտվել Միացյալ Հայաստանի մասին հայտարարության հետ, ապա, որքան էլ գորավոր էին վարչապետի պաշտոնակատարի բերած փաստարկներն ու մեկնաբանությունները, իրավաբարոյական տեսակետից, մեղմ ասած, ճիշտ չէր թեկուզ և մեկ օրով խորհրդարան պատգամավոր ընդգրկել առանց նրա գիտության: Դա կառավարության իրավասությունից դուրս էր և այդ ընդունված երկու ակտերն առհասարակ նահանջ էին պառլամենտարիզմի սկզբունքներից: Պետք է նկատի առնել, որ կատարվել էր խորհրդի թվակազմի փոփոխություն, մի պարագա, որի փոփոխման համարձակություն չէր ունեցել անգամ խորհրդարանը: Նախորդ 10 ամիսների ընթացքում խորհրդի կազմը մնացել էր անփոփոխ (46 հոգի): Եվ

<sup>270</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 20, ք. 56, «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Ե., 1919, էջ 61:

ահա կառավարությունը մեկ հարվածով այն դարձնում է 58: Կարծում ենք, որ այս խնդրում ընդդիմության արտահայտած բողոքն ու դժգոհությունը որոշակի հիմքեր ունեին և առանձին դեպքերում կառավարության հասցեին ուղղված բննադատությունը տեղին էր:

Արդարև, որքան էլ ընդունելի կամ վիճարկելի լինեն այս ճգնաժամի հետ կապված հակամարտող կողմերի թեր և դեմ փաստարկները, մի բան պարզ է, որ այս ամենի հիմնապատճառն այն էր, որ Հայաստանը տակավին չուներ իր հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը: Հանրապետությունում սահմանադրության և այլ հիմնարար օրենքների բացակայության պատճառով մեր խորհրդարանն էր խախտում իր իրավասության շրջանակները՝ ստանձնելով նաև գործադիր մարմնի ֆունկցիաներ, մերթ էլ կառավարությունն էր գործադիր իշխանությանը զուգահեռ ստանձնում օրենսդիր մարմնի լիազորություններ: Խորհրդարանի դերի նսեմացման և գործադիր իշխանության դերի աստիճանական մեծացման միտումը ուժեղացավ հատկապես երկրորդ խորհրդարանի օրոք:

Հանրագումարի բերելով Հայաստանի խորհրդի օրենսդրական գործունեության արդյունքները՝ տեսնում ենք, որ 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակամիջոցում ընդունվել է ընդամենը 63 օրենք<sup>271</sup>, իսկ 1919 թ. հունվարից մինչև հունիսը ընկած ժամանակամիջոցում կայացել է 27 նիստ, իսկ 5 նիստ չի գումարվել քվորում չլիներ պատճառով: Հաստատվել են 53 օրենք, որոնց մեծ մասը եղել է ժամանակավոր<sup>272</sup>: Ամբողջությամբ վերցրած՝ խորհուրդն իր տասնամյա գոյության ընթացքում, մեր հաշվումներով, ընդունել է 116 օրենք: Այդ օրենքներից հիմնականների թվին կարելի է դասել՝ արդարադատության և դատարանակազմության, մենաշնորհի, անօրինական զենքի բռնագրավման, դպրոցների, գաղթականների խնամատարության մասին և այլ օրենքներ:

<sup>271</sup> «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 1-37:

<sup>272</sup> «Հառաջ» 6 հունվարի 1920 թ., «Հայաստանի հաստատած օրենքները 1918-1919 թթ.», մաս 1, Երևան, 1919, էջ 38-61: ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 86, էջ 32-36:

## ՊԼՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՎ ԿՈՒՍԱԿԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 1. Խորհրդարանի ընտրությունները և կուսակցությունները

1919 թ. գարնանից ՀՀ վիճակը սկսեց նկատելիորեն կայունանալ ու բարելավվել: Ընդարձակվեցին հանրապետության սահմանները՝ ամփամապես իր մեջ ներառելով Արցախից մինչև Օլթի՝ շուրջ 67 հազար քառ. կմ. տարածք: Ամերիկյան ալյուրը մեղմեց սովը: Հանրապետության բնակչությունը անցավ համեմատաբար խաղաղ աշխատանքի: Շինականը ուղղեց կորացած մեջքը և սկսեց վարուցանքը: Համայն հայությունը Փարիզի խաղաղության վեհաժողովից սրտատրոփ սպասում էր Հայկական հարցի արդարացի լուծմանը: Դրական տեղաշարժեր նկատվեցին տնտեսական ու կրթամշակութային կյանքում: Այնպես որ՝ հանրապետությունում ակնբախ էին կայունացման միտումները:

Եվ ահա նման պայմաններում օրակարգի հարց դարձավ Հայաստանի նշանակովի խորհրդարանի արձակումը և ժողովրդական ընտրությունների միջոցով նոր, իսկական խորհրդարանի կազմավորումը: Նոր խորհրդարանի ընտրությունների արագացման համար արտաքին ազդակ հանդիսացավ այն, որ 1919 թ. մարտի 12-ին բացվեց Վրաստանի նորընտիր Սահմանադիր ժողովը<sup>1</sup>: Նրա հանդիսավոր բացմանը ներկա էր նաև Հայաստանի խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը:

1919 թ. մարտի վերջին կառավարությունը օրինագիծ ներկայացրեց խորհրդարանի այլընտրանքային ընտրությունների մասին: Մենչևիկյան «Կայծը» տեղեկացնում էր, որ խորհրդարանի ընտրությունների օրինագիծը արդեն պատրաստ է և խորհրդի կողմից ընդունվելուց հետո այն կիրառարակվի<sup>2</sup>:

Այս կամ այն երկրի ժողովրդավարության, նրանում առկա քաղաքական ազատությունների աստիճանը կարելի է որոշել նաև խորհրդարանի ընտրություններով: Որ ՀՀ ժողովրդավարական երկիր էր՝ ընդունում էին մույնիսկ ընդդիմության առանձին գործիչներ: «Ընդդիմ. մեզ մոտ գոյություն ու-

<sup>1</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 291, ք. 76, «Ձանգ», 16 մարտի 1919 թ.:

<sup>2</sup> «Կայծ», 26 մարտի 1919 թ.:

նեցող քաղաքական ազատությունների և ընդհանուր ընտրական սիստեմի, նշել է ՀԺԿ տեսաբան Հ. Ստեփանյանը, ժողովուրդը հնարավորություն է ստացել ոչ միայն իր ձայնը լսելի դարձնելու, այլև իր սեփական բախտը տնօրինելու: Կուսակցությունները ակտիվորեն մասնակցում են քաղաքային խորհուրդների, ազգային հաստատությունների և պառլամենտի ընտրություններին»<sup>3</sup>:

Փետրվարյան հայտնի միջադեպից հետո խմբակցությունների փոխհամաձայնությամբ արդեն կազմվել էր «Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին» օրինագիծը, որը բաղկացած էր տասը գլուխներից և 111 հոդվածներից<sup>4</sup>: Այնտեղ ներկայացված էին ընտրությունների հետ կապված բոլոր պայմաններն ու պահանջները: Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին օրենքը մշակելիս՝ հիմք էր ընդունվել ռուսական Սահմանադիր ժողովի ընտրությունների մասին «Պոլոժենիան» Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՈՄ)-ի մտցրած փոփոխություններով<sup>5</sup>: Սահմանվում էր ընտրությունների ժողովրդավարական համակարգ՝ ընդհանուր, ուղղակի, հավասար, համեմատական և գաղտնի քվեարկության միջոցով, առանց ազգի, կրոնի ու սեռի խտրության<sup>6</sup>: Համաձայն խորհրդարանի ընտրությունների մասին օրենքի երկրորդ հոդվածի՝ պատգամավորների թիվը սահմանվում էր 80 մարդ<sup>7</sup>: Ամեն մի ընտրող քաղաքացի կարող էր ընդգրկվել միայն մեկ ընտրացուցակում: Ընտրելու իրավունք ունեին 20 տարին լրացած երկու սեռի բոլոր քաղաքացիները: Ընտրական իրավունք էր տրվում նաև հանրապետությունում գտնվող արևմտահայ գաղթականներին առանց որևէ սահմանափակման<sup>8</sup>: Իսկական զինվորական ծառայության մեջ գտնվողները ընտրություններին մասնակցելու իրավունք չունեին<sup>9</sup>: Նույն կերպ, իսկական զինծառայության մեջ գտնվողները զրկվում էին նաև զեմստվային և քաղաքային ինքնավարության մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունքից<sup>10</sup>: Սա արվում էր բանակը ապակուսակցականացնելու և զինվորականներին քաղաքական պայքարից հեռու պահելու նպատակով: Նման ընտրակարգ մտցնելիս, մասնավորապես, հաշվի էր առնվել այն հանգամանքը, որ 1917-1918 թթ. ռուսական զորքի քայքայման ու կազմալուծման գործում զգալի են եղել զինծառայողներին ընտրական իրավունք տալը ու ընտրապայքարին մասնակից դարձնելը:

<sup>3</sup> Հ. Ստեփանյան, Հայ ժողովրդական կուսակցությունը համազգային և ապաղասապարզային է, Ալեքսանդապոլ, 1919 թ. էջ 1:

<sup>4</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց. 1, գ. 62, քթ. 1-14:

<sup>5</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, ք. 43:

<sup>6</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 276:

<sup>7</sup> «Օրենք Հայաստանի պառլամենտի ընտրությանը», ա. տ. և ք., էջ 1:

<sup>8</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, ք. 43:

<sup>9</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց. 1, գ. 62, ք. 1, «Ժողովուրդ», 4 մայիսի 1919 թ.:

<sup>10</sup> ՀՀ ՊԿՊԱ, 199, ց. 1, գ. 14, մաս 1, ք. 127:

Ընտրությունների գործի կազմակերպման ու ղեկավարման համար ստեղծվում են կենտրոնական, գավառական, շրջանային, քաղաքային, գյուղական և քաղաքապային ընտրական հանձնաժողովներ: 10-րդ հոդվածով կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին ընտրում էր խորհրդարանը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավասությունների մեջ մտնում էին.

ա) Կազմակերպել ու նախապատրաստել քվեաթերթիկները և ընտրացուցակները,

բ) Զննել և հաստատել պատգամավորության թեկնածուների ցանկը,

գ) Ընդհանուր հսկողություն իրականացնել խորհրդարանի ընտրությունների ընթացքի վրա,

դ) Ընտրությունների արդյունքների հիման վրա կազմել պատգամավորական թեկնածուներից պատգամավոր ընտրվածների ցանկը, նրանց տալ վկայական (մանդատ) պատգամավոր ընտրվելու մասին,

ե) Տնօրինել ընտրությունների կապակցությամբ հատկացված պետական վարկերը և միջոցները,

զ) Բոլոր ընտրական հանձնաժողովներից ստացված ընտրությունների արդյունքների, բողոքարկումների և այլնի մասին նյութերը բննել, վիճակագրական մշակման ենթարկել և խորհրդարանի բացումից հետո ողջ գործավարությունը հանձնել նրան<sup>11</sup>:

Մինչև ընտրությունների օրը քվեաթերթիկները պետք է արդեն կնքված լինեին, դրսի մաքուր կողմից, ընտրական որևէ (կենտրոնական, քաղաքային, շրջանային կամ գյուղական) հանձնաժողովի կնիքով<sup>12</sup>:

Հայաստանի խորհրդարանի ընտրությունները անցկացվելու էին համամասնական համակարգով՝ ըստ կուսակցական ցուցակների: Այսինքն՝ յուրաքանչյուր կուսակցություն, հասարակական կազմակերպություն կամ ազգային հոսանք ներկայացնում էր իր թեկնածուների ընդհանուր ցանկը, որն էլ դրվելու էր համաժողովրդական քվեարկության:

Կազմվեց ընտրությունների կազմակերպման ու անցկացման կենտրոնական ընտրական հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ս. Խաչատրյան (նախագահ), Դ. Գեղամյան, Ա. Բաբայան և Ա. Խոնդկարյան (անդամներ)<sup>13</sup>: Նշանակվեցին գավառական հանձնաժողովների նախագահները և հրահանգիչները: Հիմնվեցին նաև գավառամասային և գյուղական ընտրական հանձնաժողովները: Գավառներում ընտրական հանձնաժողովներին մեծ աջակցություն էին ցույց տալիս գավառական կոմիսարները: Վերջիններիս «աջակցությունը» ընտրական հանձնաժողովներին այնքան մեծ էր, որ հիմքեր կան ենթադրելու, որ դրանք հնարավոր է ազդած լինեն ընտրությունների արդյունքների վրա:

1919 թ. մարտի 31-ին Հայաստանի խորհրդի նիստում ընդունվեց խորհրդարանի ընտրությունների մասին օրենքը: Միաժամանակ հաստատվեց կենտրոնական ընտրական հանձնաժողովին 200 հազ. ռուբլի վարկի բացումը՝ ընտրությունների ծախսերի համար<sup>14</sup>:

Արդեն ապրիլի վերջին կազմվել էին ընտրողների ցուցակները, որոնցում նշված էին 20 տարեկանից բարձր երկու սեռի բնակչությունը: Ցուցակագրված ընտրողների քանակը, առանց Կարսի և Շարուր-Նախիջևանի շրջանների, կազմել է ընդամենը 365780 մարդ<sup>15</sup>:

Պատգամավորության թեկնածուները առաջադրվեցին ըստ կուսակցությունների: Արդեն մայիս ամսին խորհրդարանի ընտրություններում ներկայացված էին հետևյալ կուսակցությունների և ազգային փոքրամասնությունների թեկնածուների ցուցակները. թիվ 1. ՀՅԴ՝ 120 պատգամավորության թեկնածու, 2. ՀԺԿ՝ 60, 3. Էսեռական՝ 35, 4. քրդական՝ 2, 5. ասորական՝ 6. Արազածնոտի անկուս. գյուղաց. միություն՝ 18, և թիվ 7. մահմեդական (թուրքական)՝ 16<sup>16</sup>: Այսպիսով, խորհրդարանի ընտրություններում պաշտոնապես ներկայացված ու գրանցված էին քաղաքական կուսակցությունների ու հասարակական-ազգային խմբերի ընդամենը յոթ ցուցակ:

Սկսված ընտրարշավում առաջատարը ՀՅԴ կուսակցությունն էր ու նրա 120 հոգանոց պատգամավորական թեկնածուների ցանկը: Ընտրապայքարում ՀՅԴ առաջադրած կարգախոսներն էին. 1. «Միացյալ և Անկախ Հայաստան», 2. «Ամբողջ իշխանությունը աշխատավոր ժողովրդին», 3. «Հողը՝ աշխատավորին», 4. «Գործը՝ գործազուրկին», 5. «Հացը՝ ժողովրդին», 6. «Ժողովուրդների համերաշխություն և եղբայրություն» և այլն:

Պոտենցիալ առումով ՀՅԴ-ի գլխավոր մրցակիցը ՀԺԿ-ն էր: Սակայն ինչպես արդեն ասվել է, 1919 թ. մայիսի 28-ին կառավարության հայտնի հայտարարությամբ հաջորդած դեպքերով, հունիսի սկզբից, ժողովրդականները, ինչպես նաև սոցիալ-դեմոկրատները (մենշևիկ և բոլշևիկ) խորհրդարանական ընտրություններին բոյկոտ հայտարարեցին:

Հայ սոց.-դեմ. մենշևիկների բոյկոտի դրդապատճառներից մեկն հավանաբար այն պետք է համարել, որ քաղաքային և տեղական ինքնավարությունների ընտրությունների փորձով իրենք էլ էին համոզվել, որ խորհրդարանի ընտրություններում բավարար հաջողություն չեն ունենա: Բավական է միայն հիշեցնել, որ 1918 թ. դեկտեմբերի 15-ին Երևանի քաղաքային ինքնավարության ընտրություններում, սոց.-դեմոկրատների ու նրանց օրգան «Կայծի» նա-

<sup>14</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 27, ք. 128, ֆ. 202, ց. 1, գ. 41, ք. 25, «Ձանգ», 2 ապրիլի 1919 թ., «Նոր աշխատավոր», Թիֆլիս, 24 հունիսի 1919 թ.:

<sup>15</sup> Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 277, Բ. Հովհաննիսյան, նշվ. աշխ. հ. 1, էջ 471 (անգլերեն): «Ժողովուրդ» թերթի հայտնած տվյալներով՝ ընտրողների թիվը կազմել է 380 հազ. մարդ, տես՝ «Ժողովուրդ», 18 հունիսի 1919 թ.:

<sup>16</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 7, ք. 1-8, «Հայաստանի աշխատավոր», 25 մայիսի 1919 թ.:

<sup>11</sup> «Օրենք Հայաստանի պառլամենտի ընտրությանը», ա. տ. և ք., էջ 4-5:

<sup>12</sup> «Արարատյան աշխատավոր», 13 հունիսի 1919 թ.:

<sup>13</sup> «Ժողովուրդ», 13 ապրիլի 1919 թ.:

խընտրական ուժեղ քարոզչության պայմաններում<sup>17</sup> մեծշիկները ստացել էին ընդամենը մեկ տեղ, այն դեպքում, երբ ՀՅԴ՝ 42, ՀԺԿ՝ 14, ԷսԷ՝ 3 տեղ<sup>18</sup>։

Ինչ վերաբերում էր բոլշևիկների կողմից խորհրդարանական ընտրությունների բոլկոտին, ապա պետք է ասել, որ մինչև 1919 թ. կեսերը սրանք ՀՀ-ում եւ քանակով, եւ ծավալած գործունեությամբ էական դեր չէին խաղում, որ եթե ընտրությունները չբոլկոտեին էլ, միևնույն է, հազիվ թե կարողանային պատգամավորական որևէ թեկնածու անցկացնել։ Այդ ժամանակ Հայաստանում բոլշևիկյան գաղափարներով առաջնորդվող ամենամակտիվ կազմակերպությունը երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» միությունն էր։ Նա խընտրական փուլում «Սպարտակ» կազմակերպությունը ևս կոչ հրապարակեց խորհրդարանի ընտրությունները բոլկոտելու մասին<sup>19</sup>։

Պետք է ասել, որ խորհրդարանների բոլկոտի գաղափարը բոլշևիկ-լենինյանների համար նորություն չէր։ Դա գալիս էր դեռ ռուսական առաջին Պետական դումայի ընտրությունների ժամանակներից։ Հայտնի է, որ հեղափոխական մարքսիստների (կոմունիստների) համար պառլամենտը և պառլամենտարիզմը «իբրև բուրժուական մնացուկ» արդեն համարվում էր անցած էտապ<sup>20</sup>։ Ուստի՝ նրանք գտնում էին, որ պետք էր պայքարել նրա դեմ։ Լենինյանների նպատակը դասակարգային իշխանության մարմինների՝ բանվորագյուղացիական և զինվորական խորհուրդների ու պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումն էր։ Բացի այդ, խորհրդարանի ընտրություններին մասնակցելը նրանք անթույլատրելի էին համարում նաև այն տեսակետից, որ «այդ կարող է սխալ հասկացվել մասսաների կողմից և ստեղծել տպավորություն, թե կոմունիստները ճանաչում են գոյություն ունեցող դաշնակցական Հայաստանը և ընդունում նրա անջատումը Սովետական Ռուսաստանից»<sup>21</sup>։

Ի տարբերություն սոցիալ-դեմոկրատ բոլշևիկների ու մեծշիկների, անշուշտ, խորհրդարանի ընտրություններում որոշակի թվով տեղեր կշահեր ՀՀ-ում երկրորդ ազդեցիկ կուսակցությունը՝ ՀԺԿ։ Սակայն, ցավոք, սա էլ փորձեց ձախողել ընտրությունները՝ ելնելով ավելի շատ իր էգոիստական-պատվախնդրական շահերից ու ոչ այնքան հիմնավոր այլ պատճառաբանություններից։ Ընտրությունները ձախողելու նպատակով, ՀԺԿ Հայաստանի կոմիտեն մի քանի կոչ հրապարակեց։ Հայաստանի քաղաքացիներին ուղղված հունիսի 8-ի, 15-ի և 18-ի թվակիր կոչերում ՀԺԿ-ը, ՀՅԴ կուսակցության ու կառավարության հասցեին ուղղված բազմաթիվ մեղադրանքներից գատ, նշում էր ժողովրդի սովալյուկ, ծանր վիճակը՝ գտնելով, որ այժմ ընտրություններ անցկացնելու ժամանակը չէ, որ այժմ դաշտային աշխատանքների եռում

չըջան է, որ Հայաստանին չեն կցված բոլոր գավառները և որ ընտրություններին չեն մասնակցելու Նախիջևանի, Կարսի, Շարուր-Դարալագյազի, Ախալքալաքի, Ղարաբաղի և Զանգեզուրի շրջանների ազգաբնակչությունը և այլն<sup>22</sup>։ Գրեթե նույն պատճառաբանություններով ընտրությունները հետաձգելու պահանջ էին դնում նաև սոց. -դեմ. մեծշիկները, որոնք մայիսի 20-ին հանդես եկան առանձին հայտարարությամբ<sup>23</sup>։

Ընտրությունները հետաձգելու վերաբերյալ ընդդիմության առարկությունները պետք է համարել տակտիկական խաղ հենց թեկուզ այն բանով, որ ամիսներ առաջ ընտրությունների ժամկետը սահմանել էր խորհրդարանը՝ գրեթե բոլոր խմբակցությունների համաձայնությամբ<sup>24</sup>։ Մի՞թե այն ժամանակ նրանք չգիտեին, որ հունիս ամիսը գյուղատնտեսական աշխատանքների եռուն շրջան է, և որ Հայաստանի ծանր վիճակը հայտնի էր բոլորին ու մի երկու-երեք ամսում այդ ուղղությամբ երկրում հրաշք չէր կարող կատարվել։ Այդ ինչպե՞ս եղավ, որ կառավարության մայիսյան երկու ակտերի ընդունումից հետո նոր գտան, որ հունիսի 21-23-ը ընտրությունների համար հարմար ժամանակ չէ։ Այնպես որ՝ ակնհայտ էր ընտրությունները բոլկոտողների միտումը։

Որոշ հեղինակներ (Ս. Վրացյան, Հ. Տեր-Հակոբյան) ընտրություններում ՀԺԿ կողմից կազմակերպված բոլկոտի էական շարժառիթներից մեկն էլ համարում էին այն, որ խորթության ու անհամաձայնության որոշակի շերտանստվածք էր գոյացել այս կուսակցության երևանյան և թիֆլիսյան ղեկավար հատվածների միջև։ Դա երևաց նրանից, որ Թիֆլիսում նստած այս կուսակցության ղեկավար կենտրոնը՝ ԿԿ-ը, խորհրդարանական ընտրությունների համար ներկայացրած 65 պատգամավորական թեկնածուների ցանկում առաջին տեղերը հատկացրել էր թիֆլիսցի թեկնածուներին, իսկ վերջին տեղերը՝ երևանցիներին<sup>25</sup>։

Պատմաբան Ռ. Հովհաննիսյանը գտնում է, որ ժողովրդականների բոլկոտի դրդապատճառներից էր նաև այն, որ «նրանք թեկնածուները, անկասկած, կհավաքեին ոչ ավել քան մի քանի հազար ձայն»<sup>26</sup>։

Ինչևէ, փաստն այն է, որ ժողովրդական կուսակցությունը բոլկոտեց խորհրդարանի ընտրությունները։ Ընտրությունների նախօրյակին, հունիսի 20-ին ՀԺԿ-ն հանեց իր պատգամավորական թեկնածուների ցանկը, ընտրությունների ցուցակից։ Միաժամանակ պարզվում է, որ ՀԺԿ (թիվ 2) ցանկի տակ պաշտոնաթերթում թույլ է տրվել ստորագրությունների անճշտություն, որի համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դա համարեց ընտ-

<sup>17</sup> «Կայծ» 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համարները։

<sup>18</sup> Կայծ. 22 դեկտեմբերի 1918 թ.։

<sup>19</sup> ՀՀ ՀԶԿ ՊԿԱ, Ժ. 4012, ց. 1, գ. 11, ք. 1։

<sup>20</sup> Վ. Ի. Վենին, ԵԼԺ, հ. 41, Ե., 1982, էջ 48։

<sup>21</sup> Ա. Մելքոնյան, Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը, Ե., 1965, էջ 82։

<sup>22</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, Ժ. 292, ց. 1, գ. 3, ք. 1։

<sup>23</sup> «Կայծ», 20 հունիսի 1919 թ.։

<sup>24</sup> «Աշխատավոր», Թիֆլիս, 29 հունիսի 1919 թ.։

<sup>25</sup> Ս. Վրացյան, Խորհրդականներ, Պոսթըն, 1924, էջ 67, 3. Իրազեկ, Մոսկվ անցյալից, Պեյրուք, 1956, էջ 54։

<sup>26</sup> Ռ. Հովհաննիսյան, Նշվ. աշխ., էջ 472 (անգլերեն)։

րական օրենքի խախտում<sup>27</sup>: Այս հիման վրա էլ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ՀԺԿ թեկնածուների ցուցակը հետ վերադարձրեց: Այս կապակցությամբ ՀԺԿ Հայաստանի կոմիտեն բողոք ներկայացրեց Կենտրոնական հանձնաժողովին<sup>28</sup>:

Պետք է ասել, որ հունիսյան օրերին չափազանց լարված էին հարաբերությունները Ժողովրդական և Դաշնակցություն կուսակցությունների միջև: Բանը հասնում է այնտեղ, որ հունիսի 10-ին Ժողովրդական կուսակցության պատգամավորական նախկին խմբակցության անդամ, ՀԺԿ Երևանի կոմիտեի նախագահ Կ. Գյուլնազարյանը, փողոցում հանդիպելով ՀՅԴ պաշտոնաթերթ «Հայաստանի աշխատավորի» խմբագիր Վ. Խորենուն, ձեռնափայտով երկու հարված է հասցնում նրան: Այդ հիման վրա, Գ. Գ. նախարարի կարգադրությամբ, Կ. Գյուլնազարյանը ձերբակալվում ու բանտարկվում է<sup>29</sup>:

Այդպիսով, կողմերը գրավեցին անհաշտ դիրք, և այդպես էլ չհաղթահարվեց կառավարախորհրդարանական ճգնաժամը:

Չայնակցելով ժողովրդականներին՝ խորհրդարանի ընտրությունները բոյկոտելու մարտավարություն վարեցին նաև ռամկավարները: «Վան-Տոսպը» կոչ էր անում. «Քաղաքացիներ, մի՛ մասնակցեք առաջիկա պառլամենտական ընտրություններին»<sup>30</sup>: Ռամկավարների ազդեցությունը ամենից առաջ մեծ էր արևմտահայ գաղթականության վրա, ուստի և նրանց հայտարարած բոյկոտի ծայրն ուղղված էր հիմնականում գաղթական ազգաբնակչությանը<sup>31</sup>:

Իր հերթին Պողոս Նուբար փաշան հունիսի 13-ին Փարիզից Ամենայն Հայոց վեհափառին ուղղված հեռագրով հավանություն էր տալիս խորհրդարանը բոյկոտելու ժողովրդական-ռամկավարների դիրքորոշմանը և խորհուրդ տալիս քրքահայ գաղթականությանը՝ չմասնակցելու ընտրություններին<sup>32</sup>: Այս ֆոնի վրա միանգամայն անհեթեթ է հնչում մտացածին այն դատողությունը, թե «Դաշնակների կառավարությունը որոշել էր արևմտահայերին գրկել պառլամենտի ընտրություններին մասնակցելու ընտրական իրավունքից»<sup>33</sup>: Այնինչ իրականում հակառակ երևույթն է տեղի ունեցել: Ընտրությունների մասին օրենքով՝ ընտրելու իրավունք ուներ նաև Հայաստանի տարածքում ապաստանած արևմտահայ գաղթականությունը: Սրա համար իրավական հիմք էր ծառայում 1919 թ. մայիսի 28-ի կառավարության հայտագիրը «Միացյալ և Անկախ Հայաստանի մասին»: Սակայն նրանց մի մասը չմասնակցեց ընտրություններին ոչ թե այն բանի համար, որ կառավարությունը

գրկել էր նրանց խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունքից, այլ պարզապես հակադաշնակցական զանազան քարոզիչների գործունեության և հենց իրենց՝ գաղթականության սոցիալ-քաղաքական ծանր կացության թելադրանքով՝ նրանք ուղղակի խուսափում էին քվեարկություններին մասնակցելուց:

Խորհրդարանի ընտրություններում թիվ 3 ընտրացանկով հանդես էր գալիս Հայ սոցիալիստ-հեղափոխականների (Էսեռների) կուսակցությունը: Չնայած Էսեռները նույնպես կողմ էին ընտրությունների հետաձգմանը, բայց նրանք մասնակցեցին դրան: Հարկ է նշել, որ Էսեռների պատգամավորական թեկնածուների ցանկը ազգային կազմի տեսակետից միատարր չէր՝ ինտերնացիոնալ էր՝ 35-ից 29-ը հայ էին, 4-ը՝ ռուս և 2-ը՝ քուրդ-թաթար<sup>34</sup>:

Ի տարբերություն հայ ժողովրդականների ու սոցիալ-դեմոկրատների՝ հայ Էսեռները մասնակցեցին խորհրդարանի ընտրություններին՝ ձգտելով խորհրդարանական տեղեր շահել: Սա, թերևս, այն եզակի կուսակցություններից էր, որ, գործելով Հայաստանում, չէր ընդունում Հայաստանի անկախ պետականությունը: Եվ նրա նախընտրական մրցարշավը ընթանում էր հակաանկախական ու համառուսականության կարգախոսներով<sup>35</sup>: Էսեռները բացահայտ հայտարարում էին. «Եկել ենք Հայաստանի պառլամենտ՝ պահելու այս երկիրը և հանձնելու իր իսկական տիրոջը՝ Ռուսաստանին»<sup>36</sup>: Այս տեսակետից հատկանշական է Էսեռների ընտրապայքարի հետևյալ կարգախոսներից մեկը. «Եթե կամենում ես, որ ռուս թագավորը գա, ծայն տուր թիվ երրորդին»<sup>37</sup>: Էսեռների ընտրաշավի բնորոշ կարգախոսներից էր նաև «Կովկասյան ժողովուրդների և ռամկավար ֆեդերատիվ Ռուսաստանի եղբայրական միությունը»<sup>38</sup>: Էսեռների կուսակցության Հայաստանի կոմիտեի հրապարակած նախընտրական կարգախոսներում և քարոզամիջոցներում չկա ոչ մի արտահայտություն կամ ակնարկ Հայաստանի ազատության, անկախության և պետականության պաշտպանության մասին<sup>39</sup>: Մնացած հարցերում՝ տնտեսական, ընկերային, ռամկավարական ազատությունների Էսեռները պարզապես կրկնում էին ՀՅԴ նախընտրական կարգախոսները:

Կնշանակի՝ խորհրդարանական ընտրություններին մասնակցող երկու գլխավոր քաղաքական կուսակցությունների՝ ՀՅԴ և Էսեռների սոցիալ-տնտեսական ծրագրերը ըստ էության համընկնում էին, բայց քաղաքական՝ անկախ պետականության խնդրում՝ նրանց դիրքորոշումները և մոտեցումները հակադիր էին:

<sup>27</sup> «Կայծ», 29 հունիսի 1919 թ.:

<sup>28</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, ք. 138, Ժ. 202, ց. 1, գ. 42, մաս 1, ք. 127:

<sup>29</sup> «Ժողովուրդ», 13 հունիսի 1919 թ., «Կայծ», 18 հունիսի 1919 թ.:

<sup>30</sup> «Վան-Տոսպ», 16 հունիսի 1919 թ.:

<sup>31</sup> Նույն տեղում, 23 հունիսի 1919 թ.:

<sup>32</sup> Ռ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 572 (անգլերեն):

<sup>33</sup> Հ. Ս. Կարապետյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Ե., 1961, էջ 62:

<sup>34</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 7, ք. 3:

<sup>35</sup> Ռ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ. 1, էջ 473 (անգլերեն):

<sup>36</sup> «Հայաստանի աշխատավոր», 1 օգոստոսի 1919 թ.:

<sup>37</sup> «Ժողովուրդ», 2 հունիսի 1919 թ.:

<sup>38</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 22 հունիսի 1919 թ.:

<sup>39</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 15 և 22 հունիսի 1919 թ.:

Ընտրացանկի հաջորդ՝ թիվ 4-ը զբաղեցնում էին քրդական երկու պատգամավորական թեկնածուները: Այն ներկայացնում էին ընդամենը երկու բեկ, որոնցից մեկը գեներալ-մայոր Ալաշրաֆբեկ Շամշադինովն էր: Իսկ թիվ 5 ցանկը, որ ներկայացրել էր ասորական ազգային խորհուրդը, ուներ երեք պատգամավորության թեկնածու:

Այնուհետև թիվ 6՝ Արագածոտնի անկուսակցական աշխատավորական գյուղացիական միության պատգամավորության թեկնածուների ցանկում ներկայացված էին 18 մարդ, որը գլխավորում էր բժիշկ, Կարբի գյուղի բնակիչ Արտաշես Մելքոնյանը: Հիշյալ 18 թեկնածուներից 13-ը ազգությամբ հայ էին, իսկ 5-ը՝ թուրք-թաթար: Եւ վերջապես թիվ 7՝ թուրքական պատգամավորական թեկնածուների ցանկը կազմված էր 16 հոգուց: Սա միակ ցանկն էր, որ պատրաստված էր արաբատառ թուրքերենով<sup>40</sup>: Այս ցուցակը ներկայացված էր որպես անկուսակցական: ՀՀ Դաշնակցության էջմիածնի շրջանային կոմիտեի օրգան «Արարատյան աշխատավորը», հավաստում է, որ չնայած թիվ 7 ցուցակը անվանապես համարվում էր անկուսակցական, սակայն «իր էությամբ անկուսակցական չէ: Դա «Մուսավաթն» է դիմակավորված, ձևափոխված: Այդ ցանկի մեջ մտնում է «Մուսավաթի» Երևանի կոմիտեն՝ իր ամբողջ կազմով»<sup>41</sup>:

Վերոհիշյալ բոլոր ցուցակները հաստատվել ու հրապարակվել էին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Բացի հիշյալ յոթ ցուցակներից, պատգամավորական թեկնածուների առանձին ցուցակ է ներկայացրել նաև Ալեքսանդրապոլի գավառի «գյուղացիական միությունը»: Վերջինս հիմնվել էր 1919 թ. մարտին և գտնվում էր տեղի բուլձեհկյան կազմակերպությունների ազդեցության տակ<sup>42</sup>: Սակայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը այս ցուցակը չի հաստատել՝ պատճառաբանելով, որ այն ներկայացվել է ուշացումով: Ի պատասխան դրա՝ Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիների երկրորդ համաժողովը հունիսի 15-ին որոշում է կայացնում միանալ ժողովրդականներին ու սոցիալ-դեմոկրատներին և բոյկոտել խորհրդարանի ընտրությունները<sup>43</sup>:

Կուսակցական և ոչ կուսակցական պատգամավորական թեկնածուների ցանկերի համար, ընտրությունների կապակցությամբ, հրապարակայնություն և հարկ եղած վերահսկողություն իրականացնելու տեսակետից առանձնապես էական պետք է համարել խորհրդարանի ընտրությունների մասին օրենքի 10-րդ հոդվածի այն մասը, որում ասվում էր. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմի մեջ, անդամի իրավունքով, մտնում են մեկական հոգի ընտրողների այն խմբերի կողմից, որոնք թեկնածուների առանձին ցանկ

են ներկայացրել»<sup>44</sup>: Այդպիսի ներկայացուցիչներ ընդգրկվում էին նաև համապատասխանաբար գավառական, շրջանային, քաղաքային, գյուղական և բաղամասային հանձնաժողովների կազմում:

Արխիվային նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտրաբաժիր մայրաքաղաքում և գավառներում ընթացել է բավականին սուր: Այսպես, օրինակ, ընտրողների թվով ամենամեծ շրջան համարվող էջմիածնի գավառում ընտրապայքարի ժամանակ արձանագրվել են ծեծկոտուքներ, փոխադարձ վիրավորանքներ<sup>45</sup>: Էջմիածնի գավառի ընտրական հանձնաժողովի նախագահը հունիսի 9-ի գրությամբ՝ խնդրում էր գավառի կոմիսարին, որ «ամենակարևոր կարգադրություն անի իրեն ենթակա պաշտոնյաներին՝ ներազդելու և պատժելու ընտրությունների հայտարարությունները, կուսակցական թեկնածուների ցուցակները և պլակատները պատռողներին»<sup>46</sup>: Գավառի կոմիսարն էլ հրահանգում է գավառամասերի կոմիսարներին կտրուկ միջոցներ ձեռք առնել՝ կանխելու նման հակաիրավական գործողությունները:

Ընտրությունները կայացան Հայաստանի խորհրդի որոշած օրերին՝ հունիսի 21, 22 և 23-ին: Ինչպես որ նախատեսված էր ընտրությունների մասին օրենքով, կենտրոնական ընտրական հանձնաժողովը տաս օրվա ընթացքում ամփոփելով ընտրությունների արդյունքները՝ հուլիսի 3-ին պաշտոնապես դրանք հրապարակեց մամուլում:

**Խորհրդարանի ընտրությունների աղյուսակ<sup>47</sup>:**

<sup>44</sup> «Օրենք Հայաստանի պառլամենտի ընտրությանը», ա. տ. և բ., էջ 4:

<sup>45</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 216, ց. 1, գ. 61:

<sup>46</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 216, ց. 1, գ. 61, բ. 10:

<sup>47</sup> «Հայաստանի աշխատավոր», 3 հուլիսի 1919 թ.: Խորհրդարանի ընտրությունների հիշյալ աղյուսակը հավանաբար վերջնականը չէ, որովհետև ցուցակագրված 365780 հոգուց այստեղ՝ ընտրությունների մասնակիցների թիվը կազմել է 223092 մարդ, մինչդեռ առանձին աղբյուրներից հայտնի է, որ խորհրդարանի ընտրություններին մասնակցել են 258880 մարդ կամ բոլոր ընտրողների երեք քառորդը (տես՝ «Նոր աշխատավոր», 24 հուլիսի 1919 թ., Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 278): Ինչևէ, մեր ձեռքի տակ եղած սույն աղյուսակի տվյալներով կարելի է կատարել որոշ ընդհանրացումներ:

<sup>40</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 7, քք. 5-8:

<sup>41</sup> «Արարատյան աշխատավոր», 15 հունիսի 1919 թ.:

<sup>42</sup> Գ. Ա. Գալոյան, Հերոսական մայիսից- հաղթական նոյեմբեր, Ե., 1980, էջ 39, 50:

<sup>43</sup> «Շիրակի աշխատավոր», 25 հունիսի 1919 թ., «Կայծ», 22 հունիսի 1919 թ.:



	Քաղաքների, գավառների և շրջանների անվանումը	թիվ 1 ՀՅԴ	թիվ 2 ՀԺԿ	թիվ 3 Էսէռ	թիվ 4 քրդակ ան	թիվ 5 ատրա կան	թիվ 6 գյուղ. միութ.	թիվ 7 բուր րակ ան	ընդամ ենը
1	Երևան	5690	24	318	-	2	6	101	6141
2	Ալեքսանդրա պոլ	3886	35	130	-	-	2	1	4054
3	Նոր Բայազետ	3190	-	5	-	-	-	-	3195
4	Վաղարշա- պատ	45129	-	811	1	2	2585	1582	50110
5	Կոտայքի /ուշ թիվ/	5375	-	1448	-	-	10	-	6833
6	Ղամաղուտի շրջան	10022	-	1178	912	170	10	268	12560
7	Սյունիքի շրջ.	9135	-	1648	412	-	74	3273	12567
8	Քարվաճառյա ք. և 3 գյուղ	2681	-	67	-	-	3	-	2751
9	Ն. Ախտայի շրջան	13813	44	815	-	-	-	14	14542
10	Շիրակի շրջան	27260	550	516	-	-	-	902	29228
11	Դարալագյազի /ուշ թիվ/	10081	103	81	-	-	-	-	10265
12	Ուլուխանլուի շրջան	668	-	-	-	-	1	4684	5353
13	Նոր Բայազետի շրջան	25052	2	40	-	-	22	-	25116
14	Գիլիգանի գավառ	13280	-	1391	-	-	50	2	14723
15	Ղարաբլիխա յի շրջան	23153	-	220	-	-	80	82	23535
	ընդ. գումարը	198415	758	8668	1325	174	2843	1090 9	223092

Այդուսակից երևում է, որ ընտրությունները կայացել են ներկայացված բոլոր շրջաններում: Ցավոք, մի քանի շրջաններում (Նախիջևան, Շարուր, Կարս,

Ջանգեզուր և այլն) հնարավոր չեղավ ժամանակին կազմակերպել ու անցկացնել ընտրությունները: Պատճառն այն էր, որ դրանք նոր էին միացվել ՀՀ-ին կամ էլ քաղաքական անկայուն վիճակը թույլ չէր տալիս: Նախատեսվում էր ՀՀ սահմաններում և նրա սահմաններից դուրս, հանրապետության օրենքների հիման վրա, հետագայում անցկացնել խորհրդարանի լրացուցիչ ընտրություններ 50 նոր պատգամավորական տեղերի համար<sup>48</sup>: Դրանով Միացյալ և Անկախ Հա-յաստանի խորհրդարանը բաղկացած պիտի լիներ 130 պատգամավորներից: Այդուսակից ցույց է տալիս նաև, որ թիվ 1 ցուցակը (ՀՅԴ) հաղթել է բոլոր ընտրա-կան շրջաններում, բացառությամբ Ուլուխանլուի (Ջանգեփասարի), որը բնակեց-ված էր գերազանցապես բուրք ազգաբնակչությամբ: Հասկանալի է, որ սրանք ի-րենց քվեն պետք է տալին թիվ 7՝ բուրքական ցուցակին:

Խորհրդարանի ընտրություններին իրենց մասնակցությունն են բերել նաև արևմտահայ գաղթականները<sup>49</sup>: Սակայն պետք է ասել, որ նրանց մաս-նակցությունը զանգվածային բնույթ չկրեց: Շատ դեպքերում գաղթական ընտրողները դրևորել են պասիվություն և չեն ներկայացել ընտրական տե-ղամաս<sup>50</sup>: Ընտրությունների կապակցությամբ արևմտահայ գաղթականութ-յանը դրևորած պասիվության գործում, ինչ խոսք, որոշակի դեր խաղաց նաև Հայ ռամկավարների հայտարարած բռնկոտը: Հարկ է նշել, որ ընտրություն-ներին ակտիվ մասնակցություն չունեցան նաև մահմեդականները:

Ըստ կուսակցական կազմի՝ ընտրությունների արդյունքով ՀՅԴ պատ-գամավորության թեկնածուներից՝ թիվ 1 ցուցակ, ընտրվել էին 72 պատգամա-վորներ, էսէռներից՝ թիվ 3 ցուցակ՝ 4, Արագածոտնի անկուսակցական գյուղա-ցիական միությունից՝ թիվ 6-ից՝ 1<sup>51</sup>, թիվ 7 ցուցակից երկու թուրք-թաթար և մեկ քուրդ՝ եզդի<sup>52</sup>: Ընդամենը 80 պատգամավոր: Ստորև ներկայացնում ենք պատգամավորների ցուցակը<sup>53</sup>:

<sup>48</sup> «Քաղվածքներ ՀՅԴ 9-րդ ընդ. ժողովի որոշումներից», Ե., 1920, էջ 29:

<sup>49</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 119, ք. 65:

<sup>50</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 43, ք. 84:

<sup>51</sup> Թիվ 6 ցուցակից պատգամավոր ընտրվեց Արագածոտնի անկուսակցական գյու-ղացիական միության «Սինդիկատի» ղեկավար, բժիշկ Արտաշես Մեղրոնյանը: Սկզբում նա դաշնակցական էր, այն էլ՝ խմբապետ դաշնակցական: Հետագայում, անձնական ընդհարում ունենալով մեկ ուրիշ խմբապետի հետ, խուլվեց ու հեռացավ Դաշնակցությունից: Դրանից հետո նա մտավ էսէռների կուսակցության շարքերը: Իսկ ավելի ուշ, չհամակերպվելով էսէռների հետ, հեռացավ նաև այս կուսակցությունից և արդեն խորհրդարանի ընտրությունների ժամանակ ներկայացավ որպես անկուսակ-ցական՝ գլխավորելով թիվ 6՝ Արագածոտնի գյուղացիական միության ցուցակը (տես՝ «Հայաստանի աշխատավոր», 19 հունիսի 1919 թ., «Շիրակի աշխատավոր», 18 հունի-սի 1919 թ.):

<sup>52</sup> Թուրք-մահմեդական պատգամավորները կազմել են երկու հոգի: Սովորաբար պատմական գրականության մեջ քուրդ ժողովրդի այս մեկ ներկայացուցիչն դասել են բուրք-թաթար երկու ներկայացուցիչների թվում և ներկայացրել որպես երեք հոգուց կազմված մահմեդական խմբակցություն, որը, սակայն, մեր կարծիքով արդարացի չէ:

<sup>53</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 3, ք. 22-23, գ. 32, ք. 5, ֆ. 276, ց. 1, գ. 119, ք. 98-99:

1. Ահարոնյան Ավետիս
2. Աղբալյան Նիկոլ
3. Արղուբյան Հովսեփ
4. Արարատյան Սարգիս
5. Արեղյան Արտաշես
6. Ավագյան Ներսես
7. Աղաբաբ-բեկով Ասադ-բեկ (թուրք)
8. Բաբայան Արտաշես
9. Բարսեղյան Պերճուհի
10. Բաբայան Վարդ
11. Բալայան Գերասիմ
12. Բաղալյան Հովակիմ
13. Գյուլխանդանյան Աբրահամ
14. Գրիգորյան Սիրաբ
15. Յաղջյան Հայկ
16. Յուլյան Զաքար
17. Զառաֆյան Լևոն
18. Զուբյան Դավիթ (Էսեռ)
19. Թադևոսյան Լևոն
20. Թեյմուրով Յուսուֆ - բեկ (եզդի)
21. Թորոսյան Սահակ
22. Թումանյան Լևոն (Էսեռ).
23. Խատիսյան Ալեքսանդր
24. Խատիսյան Գևորգ
25. Խաչատրյան Սմբատ
26. Խորենի Վահան
27. Խոնդկարյան Արշամ (Էսեռ)
28. Կանայան Դրաստամատ
29. Ղազարյան Կորյուն
30. Ղազարյան Արշակ
31. Մանասյան Սարգիս
32. Մանուկյան Հմայակ
33. Մաքսապետյան Արմենակ
34. Մելիքյան Հովակիմ
35. Մանուկյան (Ջալյան) Կատարինե
36. Միրաբյան Եմովք
37. Մելքոնյան Արտաշես (գյուղ. միութ.)
38. Միրբաբան Միր-Բադիր (թուրք)
39. Մինախորյան Վահան (Էսեռ)
40. Հովհաննիսյան Արշակ

41. Հարությունյան Մարտիրոս
42. Հովսեփյան Արտաշես
43. Նալբաջյան Արամ
44. Նավասարդյան Վահան
45. Նազարյան Արտաշես
46. Շանթ Լևոն
47. Շիրինյան Արշակ
48. Շահինյան Գառնիկ
49. Պետրոսյան Լևոն
50. Պապայան Խոսրով
51. Ջամալյան Արշակ
52. Սահակյան Ավետիք
53. Սահակյան Վառվառե
54. Սասունի Կարո
55. Սարգսյան Եփրեմ
56. Սարգսյան Հայկ
57. Սեպուխ Արշակ
58. Սաֆրաստյան Արամ
59. Վարանդյան Միքայել
60. Վարշամյան Գևորգ
61. Վրացյան Սիմոն
62. Տեր-Դավթյան Հովսեփ
63. Տեր-Մինասյան Ռուբեն
64. Տեր-Միքայելյան Հովհաննես
65. Տեր-Հակոբյան Հակոբ
66. Տիգրանյան Սիրական
67. Տերտերյան Համբարձում
68. Տեր-Հարությունյան Գեղամ
69. Տեր-Թորոսյան Վարդան
70. Տեր-Գևորգյան Միքայել
71. Տեր-Միքայելյան Անուշավան
72. Տեր-Գրիգորյան Միհրան
73. Փաստրմաճյան Գարեգին
74. Փավստյան Վահան
75. Քաջազունի Հովհաննես
76. Քաջբերունի Ռուբեն
77. Քալաշյան Գառնիկ
78. Օհանջանյան Համազասպ
79. Օհանջանյան Ավետիս
80. Ջեքիտ Ջեմիլ /Տիգրան Ծամուր/

Խորհրդարանի 80 պատգամավորներից 13-ը արևմտահայեր էին, իսկ երեքը՝ կին<sup>54</sup>։ Նկատի ունենալով արևմտահայության անորոշ ու յուրահատուկ իրավիճակը՝ կարելի է ասել, որ արևմտահայ պատգամավորները կազմեցին ոչ պաշտոնական խմբակցություն և 1919 թ. ամռանը ՀՀԴ Արևելյան բյուրոյի որոշմամբ լուծարված արևմտահայ գործադիր մարմնի գործերն ու իրավասությունները դրվեցին այդ խմբակցության վրա<sup>55</sup>։

Ինչպես ասվեց, հունիսյան ընտրություններին չմասնակցեցին ժողովրդականները, հայ ռամկավարները և սոց.-դեմոկրատները։ Այնուամենայնիվ, թիվ 2 ցուցակին (ՀԺԿ), չնայած հայտարարված բոյկոտին, առանձին ընտրատարածքներում՝ Ալեքսանդրապոլում, Դարալագյազում, Ախտալույում, Երևանում ընտրողները որոշ ձայներ են տվել (758) այս կուսակցության պատգամավորական թեկնածուների օգտին։ Ծշմարտությունը պահանջում է ասել, որ եթե Ժողովրդական կուսակցությունը չբոյկոտեր ու մասնակցեր ընտրություններին, ապա անկասկած կշահեին պատգամավորական մի շարք տեղեր։

Հարկ է նշել, որ ժողովրդականները և սոցիալ-դեմոկրատ մենչևիկները, խորհրդարանի ընտրությունների բոյկոտից հետո այլևս գործում մասնակցություն չունեցան Հայաստանի պետական կյանքին։ Բայց և այնպես ՀԺԿ - շարունակում էր մնալ որպես ՀՀ և կովկասահայ երկրորդ ազդեցիկ կուսակցությունը՝ ՀՀԴ-ից հետո։ ՀԺԿ խորհրդարանի բոյկոտից հետո, թեև հետ քաշվեց քաղաքական լայն գործունեության ասպարեզից, բայց մյուս կողմից չպետք է անտեսել, որ ժողովրդականները իրենց պատգամավորական ներկայացուցչությունները ունեին հանրապետության քաղաքային դոմաներում, գավառական զեմստովոներում։ Նրանք տեղական ինքնակառավարման մարմիններում քանակով երկրորդն էին ՀՀԴ-ից հետո։ Այնպես որ եթե խորհրդարանում նրանք չունեին խմբակցություն, ապա տեղական իշխանության մարմիններում ժողովրդականները ազդեցիկ ընդդիմություն էին։ Նրանք հաճախակի ընդդիմանում ու քննադատում էին գործադիր մարմինների ու գավառական կոմիսարների թույլ տված խախտումներն ու անօրինականությունները, պայքարում էին մենաշնորհի, կառավարության վարած բռնագրավումների քաղաքականության դեմ և այլն։

Այսուհանդերձ, ՀԺԿ, որն իր էությանը ու դավանանքով որակվում էր որպես բուրժուական և ուներ իշխանատենչ հակումներ, ընդհանուր առմամբ անհաջողություն կրեց ու փաստորեն հեռացավ ակտիվ քաղաքական գործունեության ասպարեզից։ Կարծում ենք, որ այս իմաստով բնութագրական է «սպեցիֆիկների» նրանց տված հետևյալ գնահատականը. «Այս կուսակցությունը (ՀԺԿ-Ա. Հ.), լինելով բուրժուական իր էությամբ ու դավանանքով, մնաց առանց բուրժուազիայի իր կազմով։ Քաղաքական տարտամ ու երերում,

<sup>54</sup> Պատգամավոր Մանուկյան-Ջալյան Կատարինեն հանգուցյալ Արամ Մանուկյանի այրին էր։

<sup>55</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ. 4047, ց. 1, գ. 144, ք. 3։

հետևողական ու անհեռատես դիմագծով մա երագում էր միշտ իշխանական բարձերի մասին և այդ նպատակով մղած պայքարը փոխանակ նշանադրած կետին հասցնելու՝ վնասում էր կամ իրեն և կամ պետությանը»<sup>56</sup>։ Ի դեպ՝ խորհրդարանական ընտրություններում ձայներ չշահեցին մեկ փոքրաթիվ անդամներ ունեցող «սպեցիֆիկները»՝ Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը<sup>57</sup>։ Սրանք տակավին չէին կազմակերպվել որպես ինքնուրույն կուսակցություն։ Ավելի ուշ՝ 1920 թ. հունվարին, տեղի ունեցավ «սպեցիֆիկների» կուսակցական ձևավորումը, որից հետո նրանք կոչվեցին Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն (ՀՍԴԲԿ)։ Բանվորագուրկ Հայաստանի Հանրապետությունում «սպեցիֆիկները» այնքան քիչ հետևողներ ունեին, որ ընտրություններին չներկայացան առանձին ցուցակով։

Ինչպես ասվեց՝ թիվ 3 ընտրացանկով չորս պատգամավորական տեղ ստացավ էսեռների կուսակցությունը։ Տեղին է նշել, որ իրենց անկախ Հայաստանի քաղաքացիներ չհամարող էսեռներին պատգամավորական չորս տեղերի նվաճման գործում մեծ չափով օգնել է հատկապես Հայաստանում բնակվող ռուս ազգաբնակչությունը։ Պատահական չէր, որ սկսած 1919 թ. հունիսից լույս էր տեսնում էսեռների օրգան «Սոցիալիստ հեղափոխական» շաբաթաթերթը մեկ ռուսերեն լեզվով<sup>58</sup>։ Բնութագրական է մեկ այն, որ խորհրդարանում էսեռ պատգամավորները, որպես կանոն, ելույթ էին ունենում ռուսաց լեզվով<sup>59</sup>։

Ընտրապայքարի ընթացքի և արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արձանագրվել են ընտրակարգի խախտման դեպքեր, առանձին կեղծիքներ, հարկադրանք ընտրողների նկատմամբ, անկանոնություններ և այլն, որոնք հավանաբար ազդած պետք է լինեն ընտրությունների արդյունքների վրա։ Այս մասին ավելի հանգամանորեն փաստում էր ընդդիմությունը։ Ընդդիմադիր մամուլը այլևայլ օրինախախտումների կողքին, մասնավորապես, մատնանշում է այն պարագան, որ դաշնակցական թիվ 1 ցանկի քվեաթերթերը, ի տարբերություն մյուսների, տպված են եղել այլ որակի թղթի վրա՝ մեծ ու հաստ տառերով։ Այնինչ համաձայն ընտրությունների մասին օրենքի 50-րդ հոդվածի՝ «ընտրատուները (քվեաթերթերը- Ա.Լ.) արտաքուստ պետք է միակերպ լինեն, որը հաստատում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը»<sup>60</sup>։ Համաձայն սոց.դեմոկրատների պաշտոնաթերթ «Կայծի» տեղեկացման՝ ՀՅԴ ընտրատուները որքան էլ որ ծավլում էր, մույնիսկ հեռվից նկատվում էր, որ Դաշնակցության ընտրատուներն է<sup>61</sup>։ Մի այլ ընդդիմության՝ էսեռների օր-

գան «Սոցիալիստ հեղափոխական» թերթը հայտնում է, որ «ընտրության օրերին այլուր էին բաժանում թիվ 1-ի (ՀՅԴ-ի-Ա.Լ.) ցուցակին ձայն տվողներին, իսկ կոմիսարներն ու միլիցիոներները մտրակի ուժով էին գյուղացիներին ուղարկում քվեատուների մոտ»<sup>62</sup>։ Տեղեկություններ են հայտնվում նաև այն մասին, որ առանձին գավառներում ու գյուղերում (օրինակ՝ Սարդարապատում, Սուրմալուում, Համամլուում), ընտրական տեղամաս է ներկայացել միայն տան մեծը (ծխի գլուխը) ու քվեարկել իր և ընտանիքի մյուս (ընտրական հասակի) անդամների փոխարեն։ Որոշ ընտրատարածքներում էլ ընտրությունները սկսվել են ուշացումով։ Օրինակ՝ Բաշ Գառնիում դրանք սկսվել են ոչ թե հունիսի 21-ին, այլ ընտրությունների միայն վերջին օրը՝ հունիսի 23-ին<sup>63</sup>։ Արձանագրվել են չկնքված քվեատուներ և այլն<sup>64</sup>։

Պատահել են նաև այնպիսի դեպքեր, երբ քվեարկություններին մասնակցած են համարվել մարդիկ, որոնք մահացած են եղել, սակայն նրանց անունները պահպանվել էին ընտրացուցակներում<sup>65</sup>։ Բայց կարծում ենք, որ շատ դժվար է միանշանակորեն հաստատել կամ ժխտել ընդդիմության մեղադրանքները ընտրությունների ժամանակ թույլ տրված զեղծարարությունների մասին։ Մեզ թվում է, որ պարտված կողմը իշխանությունների ու Դաշնակցության կատարած խախտումները մատնանշելիս, անշուշտ, դրանք չափազանցել է, որը բնականաբար անում է ցանկացած պարտված կուսակցություն, որպեսզի փրկի իր վարկն ու հեղինակությունը ժողովրդի աչքում։ Մյուս կողմից էլ ակներև փաստ է այն, որ ընտրությունների ընթացքում, իրոք, թույլ են տրվել զանազան տիպի խախտումներ։

Հայաստանի խորհրդարանի ընտրությունների կապակցությամբ հարկ է նշել, որ առանձին խախտումներ թույլ են տրվել ոչ միայն հիմնական կառավարող ՀՅԴ, այլև էսեռների կողմից։ Օրինակ՝ ընտրությունների առնչությամբ իր պաշտոնական դիրքի չարաշահմամբ ՀՀ ընտրական օրենքի թիվ 96-րդ - հոդվածի խախտում է թույլ տվել պատգամավորության էսեռ թեկնածու Ա. Խոնդկարյանը։ Վերջինս, օգտվելով պարենավորման մախարարության մեջ կարևոր պաշտոն գրադեցնող իր կուսակից ընկերների ծառայությունից, «օգնել է», որպեսզի Սուրմալուի գավառի մի շարք գյուղերի (Հախվերիս, Բլուր, Փանիկ-Ալեխլու և այլն) գյուղացիները ստանան սերմացուի դիմաց մեկ դես-յատինի համար 2000 ռուբլի փող, պայմանով, որ նրանք իրենց քվեները տան թիվ 3 (էսեռների) ցուցակին<sup>66</sup>։ Այս փաստը հավաստող հեղինակ Պ. Ավետիսյանը երաշխավորել է այն ապացուցել։ Ընտրությունների արդյունքների ամփոփագրից երևում է, որ թիվ 3 ցուցակը ընդամենը 15 ընտրական շրջանից ու քաղաքից ամենաշատ ձայն (1648) հավաքել էր հենց Սուրմալուի շրջանից։

<sup>56</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 1022, ց. 7, գ. 72, էջ 8։

<sup>57</sup> Ս. Վրացյան, Խորհրդավորներ, Պոսթըն, 1924, էջ 68։

<sup>58</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 201, ց. 1, գ. 43, ք. 85։

<sup>59</sup> «Մշակ», 28 նոյեմբերի 1920 թ.։

<sup>60</sup> «Օրենք Հայաստանի պառլամենտի ընտրությանը, ա.տ.և ք., էջ 14։

<sup>61</sup> «Կայծ», 29 հունիսի 1919 թ.։

<sup>62</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 5 հուլիսի 1919 թ.։

<sup>63</sup> Նույն տեղում, 10 օգոստոսի 1919 թ.։

<sup>64</sup> «Կայծ», 2 հուլիսի 1919 թ.։

<sup>65</sup> «Ժողովուրդ», 2 հուլիսի 1919 թ.։

<sup>66</sup> «Հայաստանի աշխատավոր», 17 և 20 հունիսի 1919 թ.։

Այնպես որ՝ միակողմանի է ընտրություններում թույլ տրված խախտումների համար մեղադրել միայն Դաշնակցությանը: Պետք է նկատի ունենալ, որ ցանկացած խորհրդարանական ընտրության ժամանակ տեխնիկապես հնարավոր չէ ապահովել ընտրությունների 100 տոկոսանոց անաչառություն: Այդպիսի շեղումներ ավել կամ պակաս չափով դրսևորվել են առաջներում: Այդպիսիք արձանագրվում են նաև մեր օրերում, անգամ ամենաքաղաքակիրթ, դասական պառլամենտական համարվող երկրներում:

ՀՅԴ-ի հաղթանակը խորհրդարանի հունիսյան ընտրություններում միանգամայն օրինաչափ էր: Ընտրությունների արդյունքները արտահայտում էին քաղաքական կուսակցությունների ուժերի հարաբերակցությունը հանրապետությունում: Ժողովրդի մեջ ՀՅԴ-ի կշռի ու հեղինակության մասին էին հավաստում ոչ միայն խորհրդարանի ընտրությունները, որը ոմանք համարում էին պատահականություն, այլև տեղական՝ քաղաքային ու գավառային ինքնավարության ընտրությունները: Այսպես, օրինակ, 1918թ. դեկտեմբերի 15-ին կայացած Երևանի Զոհաքային դումայի ընտրությունների արդյունքներով՝ 60 տեղից (չորս կուսակցությունների մասնակցությամբ) Դաշնակցությունը շահել էր 42 տեղ<sup>67</sup>: Իսկ 1919թ. փետրվարի 12-ին Ալեքսանդրապոլի գավառում զեմստվային ընտրություններում նախատեսված 45 իրավասու տեղերից 33-ը զբաղեցրել էին դաշնակցականները, մնացածը անկուսակցականներ ու մյուս կուսակցությունների համակրողներ<sup>68</sup>: 1920թ. հունվարին Կարսի քաղաքային ինքնավարությունների ընտրությունները ևս ավարտվել էին ՀՅԴ-կատարյալ հաղթանակով. ընտրված 55 պատգամավորական տեղերից 49 զբաղեցրել են դաշնակցականներ, 4-ը՝ ժողովրդականներ և 2-ը՝ էսեռներ<sup>69</sup>:

Հունիսյան ընտրություններում ՀՅԴ-ի տպավորիչ հաղթանակը վկայում էր նրա լայն ժողովրդականության մասին: Նա դա ապացուցել էր դեռ 1917թ. նոյեմբերին՝ համառուսական Սահմանադիր ժողովի ընտրություններում: Այդ ընտրությունների ժամանակ Դաշնակցության ստացած 558400 քվեները կրկնակի շատ էին, քան հայ քաղաքական մյուս բոլոր կուսակցությունների հավաքած ձայները միասին վերցրած<sup>70</sup>: Հիշեցնենք, որ 1917թ. ՀՅԴ որևէ իշխանություն չուներ, որ իր պաշտոնական դիրքը չարաշահելով և ընտրությունները «կեղծելով»՝ այդքան ձայներ նվաճեր: ՀՅԴ-ն, լինելով նախ և առաջ համագլխի իդեալներ ու ձգտումներ ունեցող կուսակցություն, սոցիալապես հենվում էր լայն հասարակաշերտերի և ամենից առաջ հայ գյուղացիության, աշխատավորության և մանր արհեստավորության վրա, մի խոսքով՝ նրանց, որոնք կազմում էին Հայաստանի ազգաբնակչության 80-90 տոկոսը<sup>71</sup>:

Ահա թե ինչով էր պայմանավորված ՀՅԴ հաղթանակը: Մյուս կողմից ՀՅԴ-հաղթանակը պայմանավորված էր նաև նրանով, որ այդ ժամանակ ՀՀ-ում, բացի Դաշնակցությունից, չկար ուրիշ ավելի կազմակերպված կուսակցություն:

Այսպիսով, չնայած ընտրությունների ժամանակ թույլ տրված առանձին խախտումներին ու անկանոնություններին, այնուամենայնիվ, խորհրդարանի հունիսյան ընտրությունները պատմական նշանակության իրադարձություն պետք է համարել հայ ժողովրդի հազարամյակների պատմության մեջ: Առաջին անգամ էր, որ հայը ընտրում էր Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմին: Դրանով էլ նա հաղորդակից էր դառնում ժողովրդավարության տարրերին:

## 2. Խորհրդարանի բացումը և հանձնաժողովները

Նորընտիր խորհրդարանի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Հայաստանի խորհրդի հրավիրումից ուղիղ մեկ տարի անց՝ 1919թ. օգոստոսի 1-ին: Խորհրդարանի նիստը բացեց նրա ավագագույն անդամ Ավետիք Սահակյանը, քարտուղարն էր կրտսերագույն անդամ Ենովք Միրաքյանը: Բացման օրը ներկա էին 56 պատգամավոր:

Ի տարբերություն առաջին խորհրդարանի, որը պաշտոնապես կոչվում էր «Հայաստանի խորհուրդ», այս նոր ընտրովի օրենսդիր մարմինը կոչվեց «Հայաստանի պառլամենտ»<sup>72</sup>: Նշենք նաև, որ խորհրդարանի բացման օրը հայտարարությամբ հանդես եկավ ՀԺԿ Հայաստանի կոմիտեն: Նա մեկ անգամ ևս բողոքեց ընտրությունների ժամանակ թույլ տրված ապօրինությունների ու զեղծարարությունների կապակցությամբ, պահանջեց անվավեր համարել հունիսյան ընտրությունները և նշանակել խորհրդարանի նոր ընտրություններ<sup>73</sup>: Բայց այս բողոքը ընդամենը ինքնահանգստացման միջոց էր և որևէ գործնական նշանակություն այլևս ունենալ չէր կարող:

1919 թ. օգոստոսի 5-ին կայացավ խորհրդարանի պաշտոնական առաջին նիստը, որտեղ հաստատվեցին հունիսի 21-23-ին խորհրդարանական ընտրություններում ընտրված 80 պատգամավորների մանդատները: Մանդատային հանձնաժողովի կողմից գեկուցեց Հ. Բուդաղյանը: Արձանագրվեց, որ մի շարք ընտրատարածքներում (Ղարաքիլիսա, Համամլու, Բաշ Գառնի և այլն) թույլ են տրվել առանձին խախտումներ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք էապես չեն ազդել ընտրությունների վերջնական արդյունքների վրա, ուստի՝ որոշվեց մանդատները հաստատել, միաժամանակ ընդունել ի գիտություն ընտրությունների առանձին խախտումների ու անկանոնությունների մասին փաստերը:

<sup>67</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, Ժ. 203, ց. 1, գ. 230, ք. 29, «Ժողովուրդ», 18 դեկտեմբերի 1918թ.:

<sup>68</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, Ժ. 205, ց. 1, գ. 1023, ք. 2:

<sup>69</sup> «Հատաք», 23 հունվարի 1920թ.:

<sup>70</sup> «Ասպարեզ», 28/29 մայիսի 1922թ., Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 33:

<sup>71</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 498, ք. 28:

Այնուհետև մանդատային հանձնախմբի նախագահ Հ. Բուդաղյանի ամփոփ զեկուցումից հետո ընտրվեց խորհրդարանի նախագահությունը: Նախագահ ընտրվեց Ավետիս Ահարոնյանը, փոխնախագահներ՝ Լևոն Շանթը և Սարգիս Արարատյանը, ավագ քարտուղար՝ Հակոբ Տեր-Հակոբյանը, իսկ կրտսեր քարտուղար՝ Արամ Սաֆրաստյանը<sup>74</sup>: Խորհրդարանի նախագահության կազմի քվեարկությունից ձեռնպահ մնացին էսեռները և «Արագածոտնի գյուղացիական միության» ներկայացուցիչը<sup>75</sup>:

Խորհրդարանի գործունեության ընթացքում նախագահության կազմը փոփոխություններ կրեց: Դեպքերի բերումով պատգամավոր Ա. Ահարոնյանը այդպես էլ չվերադարձաւ հայրենիք և չվարեց խորհրդարանի և ոչ մի նիստ: Այստեղ հարց է ծագում. իսկ ինչո՞ւ Ա. Ահարոնյանին ընտրեցին խորհրդարանի նախագահ, երբ նա, գտնվելով արտասահմանում, զիջավորում էր ՀՀ դիվանագիտական պատվիրակությունը: Այս հարցին, կարծում ենք, հստակ է պատասխանել խորհրդարանի ավագ քարտուղար Հ. Տեր-Հակոբյանը: Նա Ա. Ահարոնյանին նախագահ ընտրելը բացատրում էր նրանով, որ խորհրդարանը ցանկանում էր դրանով ՀՀ պատվիրակության նախագահին «ավելի հեղինակություն ու կշիռ տված լինել վեհաժողովի առջև»<sup>76</sup>: Այս նույն միտքն է հաստատում նաև Վ. Փափազյանն իր հուշերում<sup>77</sup>:

Շուտով փոփոխություն կատարվեց խորհրդարանի նախագահության կազմում: Օգոստոսի 10-ին Ս. Արարատյանը ընտրվում է նախարար և բնականաբար ազատվում փոխնախագահի պարտականությունից<sup>78</sup>: Հետագա ժամանակաշրջանում խորհրդարանի փոխնախագահի պարտականություններ են կատարել պատգամավորներ՝ Հովսեփ Արղությանը, Սիրական Տիգրանյանը, Ավետիք Սահակյանը և Հովհաննես Բաջազյունին: Պատգամավոր Ավ. Խոնդկարյանն իր հուշերում տխրությամբ էր վերհիշում իրենց (էսեռական) ներկայացուցչի չընդգրկվելը նախագահության կազմում<sup>79</sup>:

Մինչ նոր վարչապետի ընտրությունը և նոր կաբինետի կազմումը օգոստոսի 5-ի նիստում լսվեց վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանի զեկուցումը կառավարության վերջին ամիսների գործունեության, վարած ներքին ու արտաքին քաղաքականության մասին: Վարչապետի պաշտոնակատարը հայտնեց, որ վերջին երկու ամսվա ընթացքում կառավարությունը հրատարակել է 152 օրենք և 300-ից ավելի վարչական կարգադրություն<sup>80</sup>: Դրանից հետո կառավարությունը ցած է դնում իր լիազորությունները խորհրդարանի առջև: Վերջինս ընդունում է կաբինետի հրաժարականը: Օգոստոսի 7-ի

նիստում՝ նախագահությամբ Ս. Արարատյանի (Ահարոնյանը և Շանթը բացակայում էին) նախարար-նախագահ (վարչապետ) ընտրվեց Ալեքսանդր Խատիսյանը և հանձնարարվեց նրան կազմելու հանրապետության նոր կառավարություն<sup>81</sup>: Փաստենք, որ վարչապետի հավանական թեկնածուներից էր նաև Ա. Գարոն (Փաստրմաշյանը), որը վայելում էր մեծ հեղինակություն թե՛ արևելահայերի, և թե՛ արևմտահայերի շրջանում<sup>82</sup>: Նա Հայաստանի դեսպանն էր ԱՄՆ-ում, սակայն քվեարկության դրվեց միայն Ալ. Խատիսյանի թեկնածությունը: Վարչապետի ընտրության արդյունքներն էին՝ 40 կողմ և 8 դեմ:

Տեղեկացնենք, որ շատ պատգամավորներ՝ Ա. Ահարոնյան, Ա. Գարո, Մ. Վարանդյան, Հ. Օհանջանյան, Հ. Արղության, Մ. Հարությունյան, Հ. Բաջազյունի և ուրիշներ, տևական գործուղումների, դիվանագիտական աշխատանքի, պետական պաշտոնավարության և այլ պատճառներով բացակայում էին հանրապետությունից: Սովորաբար քվեարկությունների ժամանակ ձայների համեմատական սակավությունը պետք է բացատրել նաև նրանով, որ տարբեր ժամանակներում ոչ պակաս տասը պատգամավոր՝ նախարարներ կամ նախարարի տեղակալներ էին, որոնք ընդունված օրենքով քվեարկություններին մասնակցելու իրավունք չունեին<sup>83</sup>: Այդ իսկ պատճառով էլ խորհրդարանական քվեարկության ձայները սովորաբար չէին անցնում 40-50-ից:

Օգոստոսի 10-ի նիստում հաստատվեց կառավարությունը հետևյալ կազմով՝ Ալ. Խատիսյան (նախարար-նախագահ և արտգործնախ.), Ա. Գյուլխանդանյան (ներք. գործ. և արդարադատության), Ս. Արարատյան (ֆինանս. և պարենավ.), Ավ. Սահակյան (խնամ. և աշխատանքի), Ն. Արքայան (հանր. կրթ. և արվեստի) և զեմ. Խ. (Զր.) Արարատյան (գորական)<sup>84</sup>: Ինչպես նկատում ենք, կառավարության կազմը կուսակցական պատկանելության տեսակետից միատարր էր՝ բաղկացած գուտ դաշնակցականներից:

Օգոստոսի 15-ի նիստում լսվեց կառավարության հայտագիրը, որում ներկայացված էին նոր կաբինետի ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն ու մոտեցումները: Հայտագրում մասնավորապես ընդգծվում էր. «Նոր կառավարությունը՝ հենված բովանդակ հայ ժողովրդի դարավոր իրավունքի և իդճերի վրա, իր ամբողջ կարողությամբ պիտի պաշտպանի և ձգտի իրականացնել Միացյալ և ամբողջացրած Հայաստանի անկախության գաղափարը»<sup>85</sup>: Տնտեսության բնագավառում Խատիսյանի կաբինետը պարտավորվում էր ըստ ամենայնի խրախուսել օտար ներդրումները Հայաստանում: Հողային խնդրում կառավարությունը պետք է իրագործեր կալվածատիրական, եկեղեցապատկան հողերի ազգայնացում և դրանց բաշխու-

<sup>74</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 86, ք. 40, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 30:

<sup>75</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 10 օգոստոսի 1919 թ.:

<sup>76</sup> Զ. Իրազեկ, Մոտիկ անցյալից, Պեյրուք, 1956, էջ 55:

<sup>77</sup> Վ. Փափազյան, Իմ հուշերը, հ. 3, Կահիրե 1957, էջ 71-72:

<sup>78</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 4:

<sup>79</sup> «ՀՀ օրենքների հավաքածու 1919թ.» (իրատարակություն պառլամենտի), ա.տ. և ք., էջ 2, «Անմ», 1934, քիվ 2, էջ 80:

<sup>80</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 10 օգոստոսի 1919 թ.:

<sup>81</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 86, ք. 40:

<sup>82</sup> Ռ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ. 1, էջ 475 (անգլերեն):

<sup>83</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 10:

<sup>84</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 86, ք. 40-41:

<sup>85</sup> «Հայաստանի աշխատավոր», 16 օգոստոսի 1919 թ.:

մը գյուղացիներին՝ աշխատանքային և սպառողական նորմաներով: Կրթության ասպարեզում խնդիր էր դրվում սկզբնական կրթությունը դարձնել ընդհանուր, պարտադիր և ձրի<sup>86</sup>:

Խատիսյանի կաթինետի հայտագրին անվտանգություն են հայտնում միայն էսէռները<sup>87</sup>: Նրանք առարկում էին այն բանում, որ արտաքին քաղաքականության բնագավառում կառավարությունը պետք է հրաժարվի արևմտյան կողմնորոշումից և հակվի դեպի Ռուսաստանը: Բացի այդ, նրանք գտնում էին, որ հողերի բաշխման ձևը տակավին չի որոշված, և որ դպրոցների պետականացումը սխալ է կիրառվում կյանքում և այլն: Կառավարության հայտագիրն ընդունվում է 28 ձայնով՝ ընդդեմ 2-ի<sup>88</sup>:

Այդ օրերին նորընտիր վարչապետ Ալ. Խատիսյանը հեռավոր Ամերիկայից ստացավ նախկին վարչապետ Հ. Քաջագնունու, ծրագրային բովանդակությամբ ծավալուն նամակը, որում վերջինս խորհուրդներ էր տալիս, թե ինչպիսի քաղաքական ուղեգիծ ցանկալի կլինի, որ վարի նորակազմ կառավարությունը<sup>89</sup>:

Հ. Քաջագնունին իրավամբ համարվում է այն ժամանակվա ՀՀ ամենահեռատես, չափավոր ու հավասարակշիռ քաղաքական գործիչներից մեկը: Վարչապետ եղած ժամանակ, նա առաջնորդվում էր զուտ պետական մտածելակերպով՝ երկրորդական պլան մղելով կուսակցականը: Հ. Քաջագնունին ջանում էր իրեն պատասխանատու զգալ ոչ թե Դաշնակցություն կուսակցության, այլ միայն ժողովրդի ու խորհրդարանի առջև: «Քաջագնունու գործողումը, փաստում էր Ռ. Տեր-Մինասյանը, նշանակում էր ըստ էության հեռացում և Դաշնակցության ազդեցության ուժեղացում»<sup>90</sup> պետական կառավարման մեջ:

Եվ, ահա, Խատիսյանին ուղղված նամակում Քաջագնունին դնում էր պետական գործերում կուսակցության միջամտության սահմանափակման և աստիճանաբար դուրս մղման անհրաժեշտությունը: «Մենք, գրում էր նամակի հեղինակը, դառնալով միակ կառավարող կուսակցություն և տնօրինելով երկրի բախտը՝ չենք կարող միակողմանիորեն սահմանափակվել զուտ կուսակցական, ծրագրային սկզբունքներով, այլ նաև պետք է ելնենք մեր երկրի կեցության իրական պայմաններից ու կարիքներից: Մեր գործը պետք է լինի ոչ թե մեր կուսակցության գաղափարների քարոզչությունն ու սկզբունքների ցուցադրումը, այլ երկրի վերաշինումը»<sup>91</sup>:

Առաջ գնալով ասենք, որ Ալ. Խատիսյանի կաթինետը հիմնականում հավատարիմ մնաց Հ. Քաջագնունու խորհուրդներին: Պետք է ասել, որ Խա-

տիսյանը ևս Քաջագնունու պես պետական մտածողության գործիչ էր և գտնում էր, որ կուսակցությունը չպետք է միջամտի կառավարության ընթացիկ պետական գործերին: Ռուբենը նկատում է, որ Խատիսյանի կառավարության ընդհանուր տեսակետն ու որդեգրած ուղղությունը մնում էր քաջագնունիական: «Խատիսյանը ձգտում էր չեզոքացնել Բյուրոն ու կուսակցության մարմինները և ավելի շատ հենվել պառլամենտի վրա»<sup>92</sup>: Բայց պետք է ասել, որ Խատիսյանը այդ բանը՝ չեզոքացումը, կատարում էր շատ զգուշորեն և մեծ տակտով: Նա կուսակցության հանդեպ վարում էր խուսաճական, փափուկ քաղաքականություն: Արդյունքում Խատիսյանը ձգտում էր հենվել եւ խորհրդարանի, եւ կուսակցության, եւ իշխանության վրա:

\* \* \*

Խորհրդարանի օրենսդրական աշխատանքի կազմակերպման, օրենքների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ խորհրդարանին եզրակացություններ տալու համար ստեղծվեցին 12 հանձնաժողովներ: Պատգամավոր Ա. Ջամալյանի ներկայացմամբ ձևավորվեցին հետևյալ հանձնաժողովները<sup>93</sup>:

1. **Օրենսդրական** (հետագայում Վարչաօրենսդրական), (7 անդամ), Գ. Վարչանյան (նախագահ), Հ. Տերտերյան (քարտուղար), Հ. Բուդաղյան, Ս. Խաչատրյան, Գ. Խատիսյան, Կ. Ղազարյան, Դ. Զուրյան:

2. **Ֆինանսարկղային** (8 անդամ), Վ. Նավասարդյան (նախագահ), Վ. Տեր-Թորոսյան (քարտ.), Հ. Սարգսյան, Լ. Թադևոսյան, Հ. Յաղչյան, Ա. Գյուլխանդանյան, Վ. Մինախորյան, Ա. Աղաբաբ-բեկով:

3. **Ինքնավարությունների** (7 անդամ), Ա. Ղազարյան (նախ.), Գ. Զալաշյան (քարտ.), Լ. Զառաֆյան, Ն. Ավագյան, Վ. Բաբայան, Լ. Թումանյան, Ա. Մելիքյան:

4. **Պարենավորման** (9 անդամ), Գ. Զալաշյան (նախ.), Լ. Պետրոսյան (քարտ.), Ա. Սահակյան, Ն. Ավագյան, Մ. Տեր-Գևորգյան, Հ. Մանուկյան, Ա. Նազարյան, Մ. Միրբաբև, Վ. Մինախորյան:

5. **Հողային** (8 անդամ), Ա. Սահակյան (նախ.), Հ. Սարգսյան (քարտ.), Ս. Գրիգորյան, Ա. Հովհաննիսյան, Հ. Տերտերյան, Ե. Սարգսյան, Ա. Խոնդկարյան, Ա. Մելքոնյան:

<sup>92</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 232:

<sup>93</sup> Այս խորհրդարանում ևս հանձնաժողովների ու դրանց նախագահների կազմը կրել են փոփոխություններ:

<sup>86</sup> Նույն տեղում:

<sup>87</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 30 օգոստոսի 1919թ.:

<sup>88</sup> «Հայաստանի աշխատավոր», 21 օգոստոսի 1919թ.:

<sup>89</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թթ. 91-94, այս նամակի մասին հանգամանորեն տես՝

Ա. Հակոբյան, Կենսական պետության առաջնությունը («Երկիր», 7 ապրիլի 1992թ.):

<sup>90</sup> Ռուբեն, Հայ լեղափոխականի մը հիշատակները, հ. Է, Լոս Անճելես, 1952, էջ 276:

<sup>91</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 91:

6. Աշխատանքի և խնամապարտության (9 անդամ), Վ. Խորենի (նախ.), Գ. Շահինյան (քարտ.), Ս. Գրիգորյան, Վ. Սահակյան, Յու. Թեյմուրով, Ա. Աբեղյան, Լ. Ջառաֆյան, Ա. Հովհաննիսյան, Լ. Թումանյան:

7. Ներգաղթի և վերաշինության (7 անդամ), Հ. Տեր-Դավթյան (նախ.), Ռ. Քաջբերունի (քարտ.), Ռ. Տեր-Մինասյան, Կ. Մանուկյան-Ջալյան, Ա. Օհանջանյան, Ա. Հովսեփյան (Մալխաս), Հ. Մանուկյան:

8. Դպրոցական-կրթական (7 անդամ), Ս. Թորոսյան (նախ.), Պ. Բարսեղյան, Ե. Սարգսյան, Վ. Խորենի, Ա. Աբեղյան, Վ. Սահակյան, Գ. Շահինյան:

9. Զինվորական (8 անդամ), Ռ. Տեր-Մինասյան (նախ.), Հ. Մելիքյան (քարտ.), Ն. Աղբալյան, Ս. Վրացյան, Ա. Բաբալյան, Ա. Ջամալյան, Վ. Բաբալյան, Ա. Գյուլխանդանյան:

10. Խմբագրական (4 անդամ), Ն. Աղբալյան, Ս. Վրացյան, Վ. Նավասարդյան, Գ. Խատիսյան:

11. Բժշկա-սանիտարական (6 անդամ), Ա. Բաբալյան (նախ.), Հ. Մելիքյան (քարտ.), Կ. Մանուկյան-Ջալյան, Ա. Ղազարյան, Հ. Տեր-Դավթյան, Ե. Միրաբյան:

12. Հանրօգույ՝ չեռնարկների ու շինությունների (4 անդամ), Ա. Հովսեփյան (Մալխաս), Հ. Յաղչյան, Ա. Օհանջանյան, Լ. Թադևոսյան<sup>94</sup>:

Ինչպես տեսնում ենք, խորհրդարանի ութ պատգամավորներից բաղկացած թույլ ընդդիմությունը բավականաչափ կերպով ներկայացված էր հանձնաժողովներում:

Խորհրդարանի հանձնաժողովները հրավիրում էին իրենց առանձին նիստերը: Խորհրդարանի ընդունած ներքին կանոնադրության (աշխատակարգի) համաձայն՝ պահանջվում էր, որ յուրաքանչյուր օրենսդրական գործ (օրինագիծ կամ ակտ) խորհրդարան մտցվի միմիայն համապատասխան հանձնաժողովներում նախապես մշակվելուց, քննության ենթարկվելուց և այնտեղ հավանություն ստանալուց հետո: Ըստ աշխատակարգի՝ օրինագծերը կարող էին խորհրդարանի քննությանը (օրակարգ) դրվել ոչ շուտ քան խմբակցություններին, պատգամավորներին, ինչպես նաև կառավարությանը նախապես բաժանելուց առնվազը երեք օր անց<sup>95</sup>:

Խորհրդարանական աշխատանքի բնորոշ կողմերից մեկն էլ այն էր, որ պետական կառավարման, գործադիր իշխանության հետ առնչվող օրինագծեր ու խնդիրներ, որոնք մշակվել էին հանձնաժողովներում կամ անհատ պատգամավորների կողմից՝ խորհրդարան մտցնելուց առաջ անպայման պետք է ունենային կառավարության կարծիքը՝ համապատասխան եզրակացությամբ: Բայց պետք է ասել, որ օրինաստեղծ աշխատանքի հիմնական կատարողը կառավարությունն էր, քանզի նա, որպես գործադիր իշխանություն,

իր պրակտիկ աշխատանքում զգում էր համապատասխան օրենքների ու օրենսդրական ակտերի պակասը, ուստի և որպես օրվա պահանջ՝ հանդես էր գալիս օրենսդրական նախաձեռնություններով: «Օրենսդրական նախաձեռնության» կառավարության նախապատվության իրավունքը, մեկնաբանում է իրավաբան Հ. Խաչատրյանը, սովորաբար բացատրվում է նրանով, որ գործադիր իշխանությունը, հենվելով աստիճանավորական մասնագիտական լայն ապարատի վրա, նախագծեր նախապատրաստելու ավելի մեծ հնարավորություններ ունի, քան շարքային պառլամենտականները<sup>96</sup>: Ինքնըստինքյան հասկանալի է, որ օրենքների հիմնական գործադրողը կառավարությունն է, ուստի և շատ կարևոր էր այդ օրենքների մշակման և ընդունման փուլերում ստանալ կիրառողի՝ կառավարության համաձայնությունը:

Սովորաբար նախարարություններում կազմվում էին օրինագծերը, որոնք քննարկվում էին նախարարների խորհրդի նիստերում: Այնտեղ հավանության արժանանալուց հետո օրինագծերը ներկայացվում էին խորհրդարան, համապատասխան հանձնաժողովներին՝ քննարկման ու եզրակացություններ ստանալու համար: Ընդամենը ոչ մի նախարարություն ինքնուրույն չէր կարող օրինագիծ մտցնել խորհրդարան՝ առանց նախարարների խորհրդի համաձայնության (որոշման), 1919 թ. նոյեմբերի 28-ի խորհրդարանի հաստատած օրենքով՝ կառավարության կողմից խորհրդարան մտնող օրինագծերը պետք է ունենային վարչապետի և համապատասխան նախարարի ստորագրությունը, իսկ ֆինանսական հոդված պարունակող օրինագծերը (վարկ, հարկ, բյուջե և այլն), նաև անպայման՝ ֆինանսների նախարարի ստորագրությունը<sup>97</sup>: Օրինագծերը պետք է լինեին հայերեն լեզվով, վեցական օրինակից, նույնքան էլ կից բացատրություններ ու հավելվածներ<sup>98</sup>: Կային օրինագծեր, որոնք առաջին խորհրդարանից՝ Հայաստանի խորհրդից, տեղափոխվեցին երկրորդ խորհրդարան: Դրանց մի մասը անցել էր առաջին խորհրդարանի հանձնաժողովների փորձաքննությունը:

Օրենքը խորհրդարանում հաստատվելուց հետո նրա իսկական օրինակը վավերացվում էր խորհրդարանի նախագահի և ավագ քարտուղարի կողմից և տրվում պաշտոնական հրապարակման<sup>99</sup>: Իսկ օրենքը կամ օրենսդրական ակտը ուժի մեջ էր մտնում հրապարակման օրվանից: Միջազգային իրավական տերմինաբանությամբ այդ արարողակարգը կոչվում է պրոմուլգացիա (պետական ակտի հրապարակում)<sup>100</sup>:

Ըստ կանոնակարգի՝ խորհրդարանի նիստերը գումարվում էին երկու-չափի և ուրբաթ օրերին, որպես կանոն երեկոյան ժամերին: Սահմանվեց նաև պատգամավորների ռոճկաչափը: Համաձայն 1919 թ. հուլիսի 29-ի օրեն-

<sup>94</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 32, ք. 6-11, «Հայաստանի աշխատավոր», 14 օգոստոսի 1919թ.:

<sup>95</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 27, ք. 11 եւ 79:

<sup>96</sup> Հ. Խաչատրյան, Պառլամենտ և պատգամավոր, Երևան, 1994, էջ 31:

<sup>97</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 46, մաս 2, ք. 130, գ. 333, ք. 1:

<sup>98</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 46, մաս 2, ք. 134:

<sup>99</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 36, ք. 8:

<sup>100</sup> Парламенты, М., 1967, с. 348-352.

քի՝ սկսած նույն թվականի օգոստոսի 1-ից յուրաքանչյուր պատգամավորի համար սննդադրամ (ռոճկաչափ) էր սահմանվում ամսական 2000 ռուբլի՝ հավելելով ևս 100 տոկոս, այսինքն՝ ամսական աշխատավարձը կազմում էր 4000 ռուբլի<sup>101</sup>։

Հայաստանի ֆինանսական վիճակի վատթարացման և դրամի արագ սղաճի հետևանքով, ինչպես այլ պաշտոնյաների, այնպես էլ պատգամավորների աշխատավարձի չափը սկսեց արագորեն բարձրանալ։ 1920 թ. հունվարի 1-ից պատգամավորների աշխատավարձը (սննդադրամը) կազմեց ամսական 6800 ռուբլի<sup>102</sup>։ Արդեն 1920 թ. հուլիսի 1-ից խորհրդարանի պատգամավորների, պետական նախարարների և Պետական վերահսկիչի աշխատավարձը կազմում էր ոչ ավել, ոչ պակաս 42 հազար ռուբլի<sup>103</sup>։ Նման փաստը ինքնին վկայում է հանրապետության ֆինանսատնտեսական աղետալի վիճակի մասին։

Կազմվում էր խորհրդարանի ծախսերի ամենամսյա նախահաշիվ։ Այսպես օրինակ, 1920 թ. հունվար ամսվա ֆինանսական նախահաշվի գումարը կազմել էր 873160 ռուբլի, որից պատգամավորներին որպես սննդադրամ (աշխատավարձ) 544 հազ. ռուբլի, արտակարգ նպաստ՝ 10 հազ. ռուբլի, հանձնաժողովներին օրապահիկ և ճանապարհածախս՝ 41666 ռ., տպագրական ծախքեր՝ 100 հազ. ռ., դիվանի (արխիվի)՝ 68 հազար ռ. և այլն<sup>104</sup>։ Խորհրդարանին կից հիմնվել ու գործում էր գրադարանը։

### 3. Ընդդիմությունը երկրորդ խորհրդարանում և նրանից դուրս

Ռանկավար, կենսունակ պետության ամենաբնորոշ գծերից մեկը, անպայման, բազմակուսակցական հիմքի վրա իսկական ընդդիմության ձևավորումն է։ Հայաստանի երկրորդ խորհրդարանում պաշտոնական գրանցում ունեին հետևյալ խմբակցությունները. 1) ՀՅ Դաշնակցության՝ 72, 2) սոցիալիստ-հեղափոխական (էսեռ)՝ 4, 3) մահմեդական (թաթար)՝ 3 և 4) Արագածոտնի գյուղացիական միության՝ 1 պատգամավոր<sup>105</sup>։ Իրականում հազիվ թե կարելի էր մեկ պատգամավորից կազմված հոսանքը խմբակցություն անվանել։ Սա ուղղակի արված է պայմանականորեն։

Խորհրդարանում մի տեսակ ճահիճի դեր էր կատարում մահմեդական խմբակցությունը։ Պետք է ասել, որ 2 թուրք-թաթար ներկայացուցիչները, անտարբեր գտնվելով Հայաստանի ճակատագրի նկատմամբ և պատասխա-

նատվությունից ու անախորժությունից խուսափելու նպատակով, որպես կանոն գրավում էին չեզոք, անտարբեր ու խուսափողական դիրք<sup>106</sup>։ Իսկ երբեմն երբեմն նրանք աջակցում էին էսեռներին։

Երկրորդ խորհրդարանում ՀՅԴ խմբակցության հիմնական ընդդիմությունը էսեռական էր՝ իր չորս պատգամավորներով։ Իսկ ինչ վերաբերում էր իրեն անկուսակցական համարող միակ պատգամավոր Արտաշես Մելքոնյանին, ապա նա սկզբում ցույց չէր տալիս իր ով լինելը, իսկ ավելի ուշ գործնականում դրսևորեց իրեն։ Նա խորհրդարանի աշխատանքների ընթացքում ավելի ու ավելի բացորոշ ձայնակցում էր էսեռների խմբակցությանը։

Բայց ինքնին հասկանալի է, որ ՀՅԴ 72 պատգամավորանոց խմբակցության դեմ ընդդիմություն ուժ պատգամավորից բաղկացած ընդդիմությունը չէր կարող քիչ թե շատ լուրջ մրցակցություն առաջացնել։ Ահա սա նկատի ունենալով, որ Հայաստանի խորհրդարանում փաստորեն ընդդիմություն չկար<sup>107</sup>։ Ինչ խոսք, այս խորհրդարանում, համեմատած նախորդի հետ, ընդդիմությունը շատ ավելի թույլ էր։ Բայց ասել, թե առհասարակ «Պատվամենտ չկար Հայաստանում»<sup>108</sup>, արդեն բացահայտ միտողական գնահատական է, որի հետ նույնպես չի կարելի համամիտ լինել։

Այնուամենայնիվ, խորհրդարանում, թեև շատ թույլ, բայց կար ընդդիմություն, որը կառավարության դեմ պայքարում էր հիմնականում հարցապնդումների, հարցերի, հայտարարությունների և այլ ձևերով։ Անշուշտ, հարցապնդումը ևս պետք է համարել գործադիր մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ձև։ Սակայն առաջ անցնելով նշենք, որ գործադիր իշխանության այս կամ այն մարմնին կամ էլ պաշտոնատար անձանց ուղղված պատգամավորական հարցապնդումները շատ հաճախ մնում էին անպատասխան։

Այս խորհրդարանում նույնպես էսեռները շարունակում էին իրենց նախկին քաղաքական ուղեգիծը։ Որպես ինտերնացիոնալիստներ և ժողովուրդների բարեկամության ջատագովներ, նրանք հանդես էին գալիս հանրապետության ազգային փոքրամասնությունների, ազգային ու համայնքային իրավունքների պաշտպանության պահանջով։ Այսպես, օրինակ, խորհրդարանի առաջին նիստերից մեկում (օգոստոսի վերջերին) նրանք հարցապնդում ուղղեցին ներքին գործերի նախարարին, թե հայտնի է արդյոք իրեն, որ վերջին երեք շաբաթվա ընթացքում Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառների մի շարք գյուղեր (Փաշաքենդ, Թաթեարլու, Աղվերան, Դալեյար, Նուրմուս, Ալիբեկ, Ջանֆիղա, Իգդալու, Կարխուն և այլն) «մաքրել» են թուրք ազգաբնակչությունից և թալանի ու կոտորածի էնթարկել<sup>109</sup>։ Հարցապնդում մտցնող-

<sup>101</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 27, ք. 223, ֆ. 202, ց. 1, գ. 333, ք. 6։

<sup>102</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 202, ց. 1, գ. 333, ք. 58։

<sup>103</sup> Նույն տեղում, ք. 154։

<sup>104</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 61, ք. 1-2։

<sup>105</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, 3. 1, գ. 41, ք. 1։

<sup>106</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 25, ք. 37։

<sup>107</sup> Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. է, Լոս Անճելես, 1952, էջ 228։

<sup>108</sup> Հ. Քաջազմունի, Հ. Յ. Դաշնակցությունը անելիք յունի այլևս, Երևան, 1994, էջ 30։

<sup>109</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 7 սեպտեմբերի 1919 թ.։



ները միաժամանակ ցանկանում էին իմանալ, որ եթե այս հայտնի է նախարարին, ապա ինչ միջոցներ են ձեռք առնվում վերջ տալու համար նման անօրինականություններին:

Ինքնին հասկանալի է, որ նման հարցապնդում կատարելիս՝ էսէն-բուրքական խմբակցությունները հանդես էին գալիս միասնաբար: Փաստերը ցույց են տալիս, որ, իրոք, տեղ են գտել մի շարք ապօրինություններ ու բռնություններ թուրք ազգաբնակչության նկատմամբ<sup>110</sup>: Անշուշտ, պետք է դատապարտել ազգամիջյան թշնամանքի ու անհանդուրժողականության վրա հիմնված այդօրինակ գործողությունները: Բայց մյուս կողմից էլ հայ էսէն ինտերնացիոնալիստները չպետք է նաև մոռանան, որ համանման չարագործություններ շատ ավելի դաժան դրսևորումներով ու ծանր հետևանքներով կատարվել ու կատարվում էին հայ ազգաբնակչության նկատմամբ թուրք-թաթարական վարչական ենթակայության շրջաններում՝ Բաքվում, Արեշում, Նուխիում, Շիրվանում, Գանձակում և այլուր, էլ չենք խոսում Արևմտյան Հայաստանի մասին:

Հայ էսէնների ինտերնացիոնալիզմը երևում է նաև Արցախյան խնդրում նրանց ցուցաբերած դիրքորոշումից: Այդ ինտերնացիոնալիզմը լավ հասկանալու համար բավական է բերել մի հատկանշական փաստ էսէնների կուսակցության Ղարաբաղի կազմակերպության օրգան «Աշխատանքից»։ «Ղարաբաղը կենսական կապերով է կապված Ադրբեջանի հետ և երբեք չի ոգևորվել Հայաստանին միանալու գաղափարով»<sup>111</sup>: Կարծում ենք այստեղ մեկնաբանությունները ավելորդ են: Սա մի դիրքորոշում էր, որը պաշտպանում էին նաև շատ հայ բոլշևիկներ:

Կառավարող գլխավոր կուսակցության դեմ, քաղաքական դեպքերի ու իրադարձությունների նպաստավոր զարգացմանը զուգընթաց, էսէնների խմբակցությունը ակտիվացնում էր իր գործունեությունը: Սրանք, ունենալով ընդգծված ռուսական կողմնորոշում և արտահայտվելով ռուսական համապետականության օգտին, գտնում էին, որ Հայաստանը պետք է դաշնակցային (ֆեդերատիվ) կապերով միանա Ռուսաստանին: Իրենց նպատակին հասնելու համար հայ էսէնները գտնում էին, որ Հայաստանում պետք է հաստատվի խորհրդային իշխանություն<sup>112</sup>: Այս հիման վրա էլ հայ էսէններն իրենց կողմնակցությունն ու համակրանքն էին արտահայտում բոլշևիկներին, խորհրդարանում հանդես էին գալիս նրանց պաշտպանությամբ, իրենց մամուլում տեղեր հատկացնում բոլշևիկներին և այլն:

Տեղեկացնենք, որ խորհրդարանի աշխատանքների սկսմանը գրեթե զուգահեռ՝ օգոստոսի երկրորդ տասնօրյակին հանրապետության երկրորդ քաղաք Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ էսէնների կուսակցության Հայաս-

տանի կազմակերպության առաջին խորհրդաժողովը (կոնֆերանսը)<sup>113</sup>: Պատահական չպետք է համարել խորհրդաժողովի Ալեքսանդրապոլում հրավիրելը: Բանն այն էր, որ այստեղ բավականին ուժեղ էին «ձախ» ուժերի՝ կուսակցությունների դիրքերը՝ սկսած մեմշևիկ-անկախականներից ու էսէններից վերջացրած բոլշևիկներով: Այս իմաստով էլ դարձյալ պատահական չէր, որ մի քանի ամիս անց հենց Ալեքսանդրապոլը դարձավ մայիսյան ապստամբության գլխավոր կենտրոնը (օջախը):

Կոնֆերանսում լավելի ու քննարկվել են հետևյալ օրակարգային հարցերը՝ կուսակցության Հայաստանի կոմիտեի, Հայաստանի խորհրդի (հին խմբակցության) հաշվետվությունները, ընթացիկ մոմենտը և վերաբերմունքը դեպի Հայաստանի անկախության հարցը, էսէնների խորհրդարանական նոր խմբակցության մարտավարությունը, կազմակերպչական հարցեր, և այլն<sup>114</sup>: Կուսակցության Հայաստանի կոմիտեի գործունեության մասին զեկուցեց Լ. Թումանյանը: Հավանություն է տրվում և՛ կուսակցության Հայաստանի կոմիտեի, և՛ խորհրդարանական նախկին խմբակցության գործունեությանը<sup>115</sup>: Կոնֆերանսը բավարար է գնահատում նաև նոր խորհրդարանի ընտրությունների արդյունքները: Էսէնների կոնֆերանսը լսելով խորհրդարանական խմբակցության վարելիք մարտավարության մասին՝ հրահանգեց նրան վարել «**Հեղհողական օպոզիցիայի գործունեություն**»<sup>116</sup>: Հիշեցնենք նաև, որ կոնֆերանսի հրավիրումից մի տասը օր առաջ, նույն կուսակցության Երևանի կազմակերպության ընդհանուր ժողովում, Ա. Խոնդկարյանի զեկուցմամբ, նույն հարցի վերաբերյալ ընդունվել էր հետևյալ մարտավարությունը. խորհրդարանական նոր խմբակցությունը պետք է լիներ «**անպարասխանապուր օպոզիցիայի դերում**»<sup>117</sup>:

Հայաստանի ու հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման հարցում կոնֆերանսում հետևողականորեն ընդգծվում էր կուսակցության միանշանակ ռուսական դիրքորոշումը: Էսէնները կտրականապես դեմ էին արտահայտվում Հայաստանի կառավարության վարած արևմտամետ քաղաքականությանը: Կոնֆերանսի մասնակիցները հանգում են այն հետևության, որ Փարիզի հայկական պատվիրակության ծրագիրը «հայ ժողովրդին տանում է դեպի վերջնական կործանում»<sup>118</sup>: Լսելով Ա. Խոնդկարյանի զեկուցումը Հայաստանի անկախության մասին՝ կուսակցությունը շարունակում էր պաշտպանել հակաանկախական տեսակետը:

Կոնֆերանսում Դավիթ Զուրյանը զեկուցեց Հայաստանում գործող կուսակցությունների նկատմամբ իրենց վերաբերմունքի մասին: Նրանք իրենց

<sup>113</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 17 հուլիսի 1919 թ.:

<sup>114</sup> Նույն տեղում:

<sup>115</sup> Նույն տեղում, 4 սեպտեմբերի 1919 թ.:

<sup>116</sup> Նույն տեղում:

<sup>117</sup> Նույն տեղում, 10 օգոստոսի 1919 թ.:

<sup>118</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 4 սեպտեմբերի 1919 թ.:

<sup>110</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 57, ք. 8:

<sup>111</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 12 հոկտեմբերի 1919 թ.:

<sup>112</sup> ՀՀ ԶԶԿԿ ՊԿԱ, Ժ. 4033, ց. 7, գ. 53, ք. 1:

համակրական վերաբերմունքն ու գործակցությունը արտահայտեցին «ճախ» կուսակցություններին ու հոսանքներին, ի մասնավոր՝ բոլշևիկներին:

Էսէռների խմբակցության կողմից բոլշևիկներին պաշտպանելը բացորոշ դրսևորվեց 1920 թ. փետրվարի 20-ի խորհրդարանի թիվ 67 նիստում, երբ պատգամավոր Վ. Մինախորյանը հարցապնդումով հանդես եկավ՝ ն. գ. նախարարի հրահանգով հունվարի 31-ին Հայաստանում ձերբակալված մի քանի բոլշևիկների ազատ արձակման պահանջով<sup>119</sup>: Ի գիտություն հայտնենք, որ դեռ 1919 թ. դեկտեմբերի 31-ին ն. գ. նախարարը արել էր հետևյալ կարգադրությունը. «Ես՝ ն. գ. ն. Գյուլխանդանյանս, նկատելով Գանձակի բնակիչ Ասքանազ Մոսվյանի և Վլադիկավկազի բնակիչ Նիկոլայ Պանֆիլովի հակապետական ագիտացիան ու պրոպագանդան, որոշեցի նրանց բանտարկել Երևանի կենտրոնական բանտում երեք ամսվա ժամկետով»<sup>120</sup>: Այս հրամանի պատճենները հանձնվել են շրջանային դատարանի դատախազին առ ի գիտություն և Երևանի կենտրոնական բանտի պետին առ ի գործադրություն:

Դրանից հետո էլ կատարվեցին ուրիշ ձերբակալություններ: Օրինակ, փետրվար ամսին ձերբակալվել և քրեական գործ էր հարուցվել Դիլիջանի գիմնազիայի մի քանի ակտիվիստ ուսուցիչների և աշակերտների նկատմամբ: Իսկ մի փոքր ուշ Երևանում ձերբակալվել էին Սահակյանը և Պողոսյանը, Ալեքսանդրապոլում՝ Ս. Խանոյանը և ուրիշներ<sup>121</sup>: Իհարկե, բանտարկությունների մասին տեղյակ էին պահել Երևանի շրջանային դատարանի դատախազին:

Ձերբակալված բոլշևիկները մեղադրվում էին արգելված գրականություն տարածելու, թուրք փաշաների հետ գործակցելու, գործի ու բանվորության մեջ հակապետական պրոպագանդա անելու, թուլացիկներ տարածելու մեջ և այլն<sup>122</sup>: Ն. գ. նախարարը խորհրդարանում հրապարակեց իր տրամադրության տակ եղած մի շարք փաստեր<sup>123</sup>: Այդուհանդերձ՝ էսէռները պահանջեցին ձերբակալված բոլշևիկներին ազատ արձակել: Էսէռներին պաշտպանեց նաև «անկուսակցական» պատգամավոր Ա. Մելքոնյանը՝ անբավարար համարելով նախարարի տված բացատրությունները:

Երբ խնդրին մոտենում ենք առաջին հայացքից, ապա տեսնում ենք, որ, իրոք, ժողովրդավարական երկրին բնորոշ չէ, եթե չասենք հակաիրավական է ն.գ. նախարարի քայլը, երբ բանտարկություն է կատարվել առանց դատարանի վճռի: Այս պարագան հիմք ուներ պատգամավոր Ա. Խոնդկարյանը, որ նման ձերբակալությունը համարում էր անօրինական: Նա գտնում էր, որ եթե նրանք հանցավոր են, ապա պետք է գործը հանձնվեր դատաքննչական մար-

միններին և պատիժն էլ կայացվեր դատարանով (օրենքով)<sup>124</sup>: Բայց, երբ ծանոթանում ենք գործին ըստ էության, ապա տեսնում ենք, որ ն.գ. նախարարի նման քայլը ինքնագլուխ բռնարարք չէր: Նախարարը ձերբակալությունների ու բանտարկությունների նմանօրինակ վճիռներ կատարելիս՝ առաջնորդվել է Ռուսաստանի ժամանակավոր կառավարության 1917 թ. օգոստոսի 4-ի այն օրենքով, որ հեղափոխությանը սպառնացող վտանգների և այլնի դեպքում բացառիկ արտոնություններ պետք է տրվեն զինվորական և ներքին գործոց նախարարներին՝ առանձին անձանց ու խմբերի վնասակար գործունեության դեմ առնելու համար<sup>125</sup>: Իսկ մենք արդեն գիտենք, որ Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 6-ի հաստատած օրինագծով՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես ուժի մեջ էին մնում ցարիզմի և Ժամանակավոր կառավարության օրենքները: Եվ բացի այդ՝ Ա. Գյուլխանդանյանը պարզաբանում է, որ մեծամասնականների ձերբակալման որոշումը կայացրել է Նախարարների խորհուրդը, իսկ ինքը պարզապես դա գործադրել է<sup>126</sup>:

Չնայած էսէռների հարցապնդումը մի քանի ձերբակալված բոլշևիկների (Ա. Մոսվյան, Ս. Կասյան, Ն. Պանֆիլով, Ե. Սևյան, Լ. Ուլիբեկյան) ազատ արձակման մասին մերժվում է (5 կողմ, 33 դեմ և 3 ձեռնպահ)<sup>127</sup>, սակայն շուտով՝ դեռ երեք ամսվա ժամկետը չլրացած, կառավարության գիտությամբ սրանք բանտից ազատ են արձակվում՝ պայմանով, որ հեռանան Հայաստանի սահմաններից<sup>128</sup>: Օգտվելով իշխանությունների ներողամտությունից՝ նրանք ավելի եռանդազին ծավալեցին իրենց գործունեությունը:

Ընդդիմությունը ավելի լայն շրջանակով էր հանդես գալիս խորհրդարանից դուրս: Եվ ինչպես ասվեց, դրանցից ամենաանհաշտն ու ամենավտանգավորը բոլշևիկներն էին: Մինչև 1919 թ. կեսերը նրանք ՀՀ տարածքում շատ քիչ էին: Ս. Վրացյանը հայտնում է, որ նրանց մատների վրա կարելի էր հաշվել (Ա. Մելիքյան, Պ. Մակինցյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Ալավերդյան, Բ. Ղարիբջանյան, Հ. Սարուխանյան, Բ. Բատիկյան և մի քանի աշակերտներ)<sup>129</sup>:

1919 թ. գարնանից (ապրիլից) բոլշևիկների նախաձեռնությամբ Երևանում հիմնվել ու զաղտնի գործունեություն էր տանում կոմունիստական-երիտասարդական «Սպարտակ» միությունը՝ Ղ. Ղուկասյանի գլխավորությամբ<sup>130</sup>: Միությունն իր մասնաճյուղերն ուներ գավառներում: «Սպարտակի» բյուրոն տեղավորված էր Աստաֆյան փողոցի վրա: 1919 թ. մայիսի 1-ին կազ-

<sup>124</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 78, ք. 1:

<sup>125</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 79, ք. 6, ՀՀ ՀԶԿԲ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 258ա, ք. 3:

<sup>126</sup> ՀՀ ՀԶԿԲ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 258ա, ք. 9:

<sup>127</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 64, ք. 41, գ. 52, քք. 18-19:

<sup>128</sup> ՀԶԿԲ ՊԿԱ, ֆ. 4010, ց. 1, գ. 15, քք. 1-2:

<sup>129</sup> Ս. Վրացյան, Ինչու՞ և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը, Թեհրան, 1982, էջ 39:

<sup>130</sup> Գ. Ա. Аветисян, Комсомол Закавказья в борьбе за победу и упрочение советской власти, Ер., 1964, с.160-161.

<sup>119</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 64, ք. 1, ՀՀ ՀԶԿԲ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 258ա, ք. 2, «Հառաք», 24 փետրվարի 1920 թ.:

<sup>120</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 79, ք. 6:

<sup>121</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 79, ք. 6, ՀՀ ՀԶԿԲ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 258ա, ք. 2:

<sup>122</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 64, ք. 2, ՀՀ ՀԶԿԲ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 258ա, ք. 3:

<sup>123</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 64, քք. 4-7:

մակերպությունը լույս տեսցրեց համաճարձ քերթը, սակայն ընդամենը մեկ համար<sup>131</sup>:

Պետք է ասել, որ «Սպարտակ» վարում էր թե՛ ընդհատակյա և թե՛ բացահայտ գործունեություն: Նրանք թողնուցիկներ էին բազմացնում ու տարածում, գրականություն էին փոխադրում, ժողովներ հրավիրում, կապեր հաստատում ՌԿ(Բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի հետ<sup>132</sup>: Այսպես, 1919 թ. ամռանը Բեռլինը Վեդիի հայտնի կոմիտեի ժամանակ երիտասարդ կոմունիստների այս կազմակերպությունը հրապարակեց ու տարածեց թուրքիկ, որում քննադատում էր կառավարությանը և կոչ անում գործին չկոճել ապստամբ թուրքերի դեմ: Նշենք նաև, որ այդ նույն դեպքերի կապակցությամբ ձախակողմյան թևի մեկ այլ կուսակցության՝ հայ էսեռների պաշտոնաթերթը Բեռլինը Վեդիի դեպքերը որակում էր որպես Հայաստանի կառավարության կողմից ձեռնարկված «ավանտյուրա»<sup>133</sup>: Հայտնի է, որ այդ աղետալի դեպքերի ժամանակ գոհվեց մոտ 200 հայ զինվոր<sup>134</sup>: Հայաստանի պաշտոնական շրջանները այդ անհաջողությունը վերագրեցին «Սպարտակի» թուրքիկների պարտավորական քարոզչությանը: Ն. գ. նախարարությանը հաջողվեց ձեռքարկել թուրքիկի հեղինակներին ու տարածողներին: Ժամանակավորապես բանտարկվեցին Ա. Խանջյանը, Դ. Ղուկասյանը, Ա. Բուդաղյանը, Ե. Չուբարը և ուրիշներ<sup>135</sup>:

Արդեն սկսած 1919 թ. երկրորդ կեսից՝ բոլշևիկների թիվը Հայաստանում սկսեց մեծանալ: 1919 թ. կեսերից հայ բոլշևիկները, հալածվելով վրացական և ադրբեջանական իշխանությունների կողմից, մի քանի հարյուրի չափ ապաստան են գտնում Հայաստանում և Չեզոք գոտում: 1919 թ. հուլիսին ՌԿ(Բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն Հայաստան ուղարկեց իր ներկայացուցիչներ՝ Ս. Կասյանին և Ա. Մռավյանին<sup>136</sup>: Գալով Հայաստան՝ բոլշևիկները խոստացան գրավել լոյալ դիրք և չձավալել հակապետական գործունեություն: Նրանցից շատերը նույնիսկ ստացան պաշտոններ:

Հարկ է նշել, որ բոլշևիկների Հայաստան ապաստանելու առաջին ամիսներին կառավարությունը ցուցաբերում էր ներողամտություն ու հանդուրժողականություն նրանց հանդեպ: Այս տեսակետից հատկանշական է հետևյալ փաստը. 1919 թ. կեսերից, երբ բոլշևիկները սկսել էին ակտիվանալ Հայաստանում և այդ հիման վրա ՀՅԴ դեկավար մարմիններն ու խորհրդարանական խմբակցությունը բազմիցս գրավոր ու բանավոր զգուշացնում էին կառավարությանը նրանց հավանական վտանգի մասին ու առաջարկում էին լինել ավելի զգոն, անհաշտ ու վճռական, բայց մ.գ. նախարար Ա. Գյուլյան-

դանյանը, տալով պատասխան մեծ զգուշացումներին, ասում է, թե «Ինքը, հեղափոխական լինելով, չի կարող հեղափոխականներին հալածել»<sup>137</sup>:

Հայաստան ապաստանած բոլշևիկները, ՌԿ(Բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի ներկայացուցիչների նախաձեռնությամբ, 1919 թ. սեպտեմբերին Երևանում գումարեցին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների խորհրդակցություն: Նրա աշխատանքներին մասնակցում էին Արշ. Մելիքյանը, Դ. Ղուկասյանը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Ս. Խանդանը, Ս. Ալավերդյանը, Հ. Յաղոբյանը, Մ. Արդյանը, Դ. Շահվերդյանը և ուրիշներ<sup>138</sup>: Խորհրդակցությունում մշակվում է Հայաստանում բոլշևիկյան կուսակցության հիմնական մարտավարությունը և ստեղծվում է կենտրոնական ղեկավար մարմին՝ **Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ)**<sup>139</sup>: «Սպարտակ» երիտասարդական կազմակերպությունը ևս պետք է ղեկավարվեր Արմենկոմի կողմից<sup>140</sup>:

Խորհրդակցության հանձնարարությամբ Ս. Կասյանը 1919 թ. դեկտեմբերին հրատարակեց «Ո՞ր է ելքը» խորագրով գրքույկը<sup>141</sup>: Գրքույկում, անշուշտ, կան ճշմարիտ փաստեր և դատողություններ, բայց դժվար է համաձայնել հիմնական գնահատականների և շարադրանքի մարտնչող անհանդուրժողականության հետ:

1920 թ. սկզբներից Հայաստանի սահմաններից դուրս ծավալվող ռազմաքաղաքական փոփոխությունները նպաստավոր պայմաններ ստեղծեցին Հայաստանի բոլշևիկների ու նրա ղեկավար մարմնի՝ Արմենկոմի գործունեության ակտիվացման համար: Սա մի կողմից կապված էր Կարմիր բանակի հաղթանակների ու դեպի Կովկաս մուտք գործելու, ինչպես նաև այդ շրջանում Խորհրդային Ռուսաստանի և քեմալականների միջև նկատվող մերձեցման, իսկ մյուս կողմից Անտանտի երկրների կողմից Հայաստանի և Անդրկովկասյան մյուս հանրապետությունների դե-ֆակտո (փաստացի) ճանաչման հետ: Քաղաքական այս իրապայմաններում 1920 թ. հունվարին Երևանում հրավիրվեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը, ուր դրվեց քաղաքական խնդիր. «Պատրաստ լինել իշխանությունը գրավելու, երբ նեցուկ կունենանք մի հարևան երկիր, որով հնարավոր կլինի կապվել բանվորագյուղացիական Ռուսաստանի հետ»<sup>142</sup>:

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների հունվարյան անկեզայլ կոնֆերանսում ընտրվեց Արմենկոմի նոր կազմ, որի մեջ մտան Ս. Կասյանը, Ս. Ալավերդյանը, Դ. Ղուկասյանը («Սպարտակից»), Ա. Մռավյանը, Ա. Նուրիջանյանը, Հ. Պողոսյանը, Դ. Շահվերդյանը, Ս. Մարտիկյանը

<sup>131</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿՊԱ, ֆ. 4012, ց. 1, գ. 32, ք. 1:

<sup>132</sup> Ս. Վրացյան, Ինչու՞ և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը, Թեհրան, 1982, էջ 42:

<sup>133</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 12 հոկտեմբերի 1919 թ.:

<sup>134</sup> «Նոր աշխատավոր», Թիֆլիս, 22 հուլիսի 1919 թ.:

<sup>135</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 64, ք. 4, նաև Դ. Ա. Аветисов, նշվ. աշխ., էջ 199:

<sup>136</sup> «Հայաստանի կոմկուսի պատմության ուղիվազներ», Երևան, 1967, էջ 283:

<sup>137</sup> Ռուբեն, նշվ. աշխ. էջ 344:

<sup>138</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿՊԱ, ֆ. 4012, ց. 1, գ. 32, ք. 3, ֆ. 4056, ց. 1, գ. 65, ք. 7:

<sup>139</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿՊԱ, ֆ. 4056, ց. 1, գ. 65, ք. 8:

<sup>140</sup> Խ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., գիրք 2-րդ, Երևան, 1975, էջ 479:

<sup>141</sup> «Հայաստանի կոմկուսի պատմության ուղիվազներ, Երևան, 1967, էջ 284:

<sup>142</sup> Ս. Կասյան, Չախության հիվանդությունը մեզանում, «Նոր աշխարհ», Թիֆլիս, 1920, թիվ 2, էջ 11:

(թեկնածու)<sup>143</sup>: Արմենկոմի նախագահը Ս. Կասյանն էր: Բայց նրա ձեռքակալներուց և Հայաստանից արտաքսվելուց հետո (1920 թ. փետրվար) նախագահ ընտրվեց Ս. Ալավերդյանը<sup>144</sup>:

1920 թ. փետրվար-ապրիլ ամիսներին Հայաստանի շատ շրջաններում տեղի ունեցած տեղական կազմակերպությունների կոմիտեաները լիովին պաշտպանեցին Արմենկոմի քաղաքական գիծը ապստամբության նախապատրաստվելու հարցում<sup>145</sup>: Մեր կարծիքով, սխալ է առանձին հեղինակների տարածած այն տեսակետը, թե մինչ մայիսյան ժամանակահատվածում Արմենկոմը մատնված էր անգործության: Արխիվային վավերագրերը ցույց են տալիս, որ նա տանում էր թե՛ գործնական-կազմակերպական (ընդլայնելով տեղական կազմակերպությունների շարքերը) և թե՛ գրավոր-քարոզչական աշխատանք՝ գործի մեջ և բնակչության շրջանում: Մինչև մայիսյան ապստամբությունը Արմենկոմը հրատարակել էր բազմաթիվ թոռցիկներ, որոնք ունեին բացահայտ հակակառավարական, հակադաշնակցական ուղղվածություն<sup>146</sup>:

Ըստ մարտավարության՝ Հայաստանում գործող բոլշևիկներին և նրանց կազմակերպությունները կարելի է բաժանել մի քանի թևերի: Ինչպես արդեն մեկ անգամ ասվել է՝ Հայաստանի բոլշևիկներից ամենաչափավոր թևին էր պատկանում Ա. Մելիքյանը: Վերջինս իր հայացքներով ու գործելակերպով չէր շտապում Հայաստանի խորհրդայնացման հարցում: Նա, օրինակ, գտնում էր, որ Հայաստանում չկան բավարար նախադրյալներ՝ կոմունիստական վարչաձևի հաստատման համար: Հարկ է նշել, որ Բ. Ղարիբջանյանը նույնպես վաղաժամ էր համարում «ընդհանուր ապստամբությունը դաշնակցական կառավարութեան դեմ»<sup>147</sup>:

Ա. Մելիքյանի, Բ. Ղարիբջանյանի դրսևորած չափավոր թևին հակառակ՝ ձախ, ծայրահեղական գիծ էին պաշտպանում երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» միությունը (Ղ. Ղուկասյան, Ա. Խանջյան, Ա. Բուդաղյան), ինչպես նաև Ալեքսանդրապոլի և Երևանի կազմակերպություններից շատերը, որոնք ձգտում էին բանվորասակավ Հայաստանում դրսի օգնությամբ հաստատել «պրոլետարիատի դիկտատուրա»: Հավանաբար տարածայնությունների այս հոդի վրա էլ 1920 թ. փետրվարի 24-ին Ա. Մելիքյանի կարգաձև հրապարակային մի դասախոսության կապակցությամբ, որը որակվել էր որպես հակակոսակցական, ՌԿ/Բ/Կ Երևանի քաղաքային կոմիտեի որոշմամբ հեղինակը վտարվել է բոլշևիկների երևանյան կազմակերպությունից:

<sup>143</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 3, գ. 257, ք. 1:

<sup>144</sup> Խ. Հ. Բարսեղյան, Հայաստանի Կոմունիստական կուսակցության կազմավորումը, Երևան, 1980, էջ 25:

<sup>145</sup> Գ. Ա. Գալոյան, Հերոսական մայիսից-հաղթական նոյեմբեր, Երևան, 1980, էջ 61:

<sup>146</sup> ՀՀ ՊԿԱ, Ժ. 198, ց. 1, գ. 64, ք. 6:

<sup>147</sup> Ռ. Փիրումյան, Հայաստանը Հ. Յ. Դ. Բոլշևիկ հարաբերությունների ոլորտում 1917-1921, Երևան, 1997, էջ 174:

Միաժամանակ դիմում է հղվել Կովկասյան եկրային կոմիտեին՝ նրան կուսակցության շարքերից վերջնականապես հեռացնելու մասին<sup>148</sup>:

Ա. Մելիքյանը այն եզակի կոմունիստներից էր, որ Հայաստանի համար շատ վտանգավոր էր համարում համաշխարհային հեղափոխությունը՝ պատճառաբանելով, որ նա շրջապատված է անբարեհույս դրացիներով, ուստի և պահանջում էր Հայաստանի կառավարությունից «չեզոք դիրք գրավել ինպեքիալիզմի և սոցիալիզմի հակամարտ ուժերի հանդեպ»<sup>149</sup>: Նա ոչ միայն բացասաբար արտահայտվեց, այլև դատապարտեց 1919թ. վերջերից և 1920 թ. սկզբներից ծայր առած թուրք-բոլշևիկյան համագործակցությունը:

Վերը նշված երկու՝ աջ Ա. Մելիքյանի և ձախ՝ «Սպարտակ» թևերի արանքում հիմնականում միջակա քաղաքական գիծ էր պաշտպանում Հայաստանի կոմիտեն (Արմենկոմը), թեև նրա մեջ կային առանձին ծայրահեղականներ (Ա. Նուրիջանյանը, Ղ. Ղուկասյանը): Ինչպես վկայում է Ս. Վրացյանը. «Հայաստանի կոմիտեն՝ Արմենկոմը, ընդհանուր առմամբ դեմ էր ծայրահեղ քայլերին և ուզում էր՝ մինչև ռուս բանակը չմտնեմա Հայաստանի սահմաններին, չդիմել ծայրահեղ գործողությունների: Նա սահմանփակվում էր միայն կազմակերպական, նախապատրաստական աշխատանքներով և քարոզչությամբ»<sup>150</sup>: Ի տարբերություն երիտասարդ, տաքարյուն կոմունիստների՝ Արմենկոմի մարտավարությունը ընդհանուր առմամբ պետք է համարել տանելի:

Արտախորհրդարանական ձախակողմյան հոսանքների թվին պետք է դասել սոցիալ-դեմոկրատ մենշևիկներին, որոնք փոքրաքանակ ու թույլ կազմակերպություններ ունեին Հայաստանի առանձին շրջաններում: Եղածներից ամենուժեղը ՌՄԴԲԿ (մենշևիկների) Ալեքսանդրապոլի կազմակերպությունն էր: Հարկ է նշել, որ 1918թ. նոյեմբերին հայ մենշևիկների՝ վրաց մենշևիկներից անջատումից հետո առաջացավ այսպես կոչված «Անկախ սոցիալիստների կուսակցությունը», որը պաշտպանում էր ինտերնացիոնալիստական գիծ և նրա ղեկավար ու ոգեշնչող Ա. Չուրաբյանի անունով հաճախ այս կազմակերպության մեջ մտնող մենշևիկներին անվանել են նաև «գուրաբականներ»: Սրանք ևս իրենց գործունեությունը հիմնականում ծավալեցին Ալեքսանդրապոլում:

Հայ անկախ սոցիալիստները կազմեցին և Ալեքսանդրապոլում հրատարակեցին իրենց ծրագիրը, որի քննադատությամբ հանդես եկավ ճանաչված բոլշևիկ Բ. Ղարիբջանյանը: Նա այդ ծրագիրը որակում էր որպես բուրժուա-դեմոկրատական բովանդակության ծրագիր, իսկ Անկախ սոցիալիստ-

<sup>148</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, Ժ. 1022, 4, գ. 73, ք. 1, 4056, ց. 1, գ. 3, ք. 1-2:

<sup>149</sup> «Ժողովուրդ», 29 փետրվարի 1920թ.:

<sup>150</sup> Ս. Վրացյան, Ինչո՞ւ և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը, Թեհրան, 1982, էջ 44:

ներին՝ «սոցիալ- կադետների կազմակերպություն»<sup>151</sup>։ Անկախ սոցիալիստները իրավամբ դեմ էին պայքարի հեղափոխական մեթոդին և կողմնակից էին արևմուտքի սոցիալիստների մատնանշած հասարակական- քաղաքական ու տնտեսական էվոյուցիոն (բնաշրջան) ուղուն։ Անկախ սոցիալիստների ճանաչված ղեկավարներից էր Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ, երբեմնի դաշնակցական Լևոն Սարգսյանը։ 1920 թ. սկզբներին Անկախ սոցիալիստները միավորվեցին «սպեցիֆիկների» հետ և հիմնեցին Հայաստանի սոցիալ- դեմոկրատական բանվորական կուսակցությունը (ՀՍԴԲԿ)<sup>152</sup>։

Ինչպես հայտնի է, 1918 թ. Հայաստանի անկախության հռչակումից և Բաքվի սեպտեմբերյան ողբերգական դեպքերից հետո Սոցիալ- դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը (ՍԴԲՀԿ) կամ այսպես կոչված «սպեցիֆիկները», իր գործունեության ծանրության կենտրոնը փոխադրեց Հայաստանի նորանկախ հանրապետություն։

1920 թ. հունվարի 18-ին «սպեցիֆիկները» հանդես եկան մի կոչ- հայտարարությամբ, որով ազդարարեցին անկախ Հայաստանի հողի վրա նոր կուսակցության՝ Հայաստանի սոցիալ - դեմոկրատական բանվորական կուսակցության (ՀՍԴԲԿ) հիմնադրման մասին<sup>153</sup>։ Այդ նշանակում էր, որ «սպեցիֆիկները» վերաճում են քաղաքական- կազմակերպական նոր որակի՝ կուսակցության։ ՀՍԴԲԿ-ի հիմնադիր անդամներն էին՝ Դավիթ Անանույր, Պետրոս Ջաքարյանը, Բախշի Իշխանյանը, Յուլյա Խանգադյանը, Գագիկ Պիճիկյանը, Խաչիկ Սամվելյանը, Տրդատ Տրդատյանը և ուրիշներ<sup>154</sup>։ Ինչպես ասվեց, նորահիմն կուսակցությանը միացան այսպես կոչված Անկախ սոցիալիստները՝ հայ մենշևիկների մի մասը։

Հունվարի 18-ի հայտարարությունը բովանդակային առումով փաստորեն ուներ ծրագրային նշանակություն։ Հայտարարում կրկին ընդգծվում էր նորաստեղծ կուսակցության հավատարմությունը սոցիալիզմի ուսմունքին և սոցիալ- դեմոկրատական գործելակերպին։ Բայց դրա հետ միաժամանակ վերազանհատման էին ենթարկվում նախկին կազմակերպության քաղաքական նվազագույն ծրագրի որոշ կետեր և առաջադրվում էր կուսակցության մոտակա քաղաքական գործունեության հետևյալ պլատֆորմը. «Ամուր ոտքերով կանգնել ազգային պետականության տեսակետի վրա, այսինքն՝ ընդունել հայ ժողովրդի ազգային ինքնորոշումը, որ է՝ միացյալ Հայաստանի որպես քաղաքական ուրույն միավորի, անկախությունը»<sup>155</sup>։ Այդ նշանակում է, որ ՀՍԴԲԿ-ը իր հիմնադրման պահից ընդունել է Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը։

Միջկուսակցական և կառավարության հետ փոխհարաբերությունների խնդիրներում նրանք գտնում էին, որ բոլոր կուսակցությունները՝ պետք է մոռանան խմբակային հաշիվները, հետաձգեն սկզբունքային տարաձայնությունները և մշակեն փոխզիջումային հաշտության և համագործակցության ուղեգիծ<sup>156</sup>։ Հայ քաղաքական կուսակցությունների մերձեցման ու համագործակցության հիմքում պետք է դրվեր Հայոց անկախ պետականության կայացման գաղափարը։ Եվ այս դժվարին խնդրի իրականացման ճանապարհին ամենամեծ պարտականությունը և պատասխանատվությունը ընկնելու էր կառավարող ՀՅԴ կուսակցության վրա։ Հայաստանի սոցիալ- դեմոկրատները ամենևին էլ համակրանք չէին տաժում կառավարող Դաշնակցության կուսակցության հանդեպ, տեղն եկած պահին ուժեղ քննադատության փրախ էին դարձնում նրան։ «Դաշնակցության խնդրում, - կարդում ենք նրա որոշումներից մեկում, - որպես կառավարող կուսակցություն, մեր վերաբերմունքն այն է, որ նա կարող է արժանանալ մեր բարոյական աջակցությանը այն ժամանակ, եթե մեր ժողովրդին ու երկրին, մեր պետությանն ու անկախությանը կսպառնա վտանգ՝ արտաքին թե ներքին ուժերի հարվածներից»<sup>157</sup>։

ՀՍԴԲԿ-ը թեև քանակապես շատ փոքրաթիվ էր, սակայն նրանում ընդգրկված մարդիկ, ինչ խոսք, ՀՍԴԲԿ շարքերում ավելի քան մեկ և կես տասնամյակի ընթացքում անցել էին քաղաքական պայքարի դպրոց ու ձեռք էին բերել հարուստ փորձառություն։ Ինքնին հասկանալի է, որ իր սոցիալական կազմով զուտ բանվորական համարվող նման տիպի կուսակցությունը բուն Հայաստանում չուներ քիչ թե շատ ամուր սոցիալական հենարան, քանզի բանվոր դասակարգ, որպես այդպիսին, հանրապետության ներսում փաստորեն չկար, եթե, իհարկե, չհաշվենք այն մի քանի հազար երկաթուղային և առանձին գործատուների բանվորներին ու բաղնիքների քիսաչիներին՝ ընդամենը շուրջ 10 հազար<sup>158</sup>։

Նկատի ունենալով, որ ներկա փոփոխված քաղաքական պայմաններում արդեն հնացել էին «սպեցիֆիկների» ծրագրի տեսա-գործնական շատ կետեր ու առաջադրույթներ, ուստի՝ անհրաժեշտություն առաջացավ վերանայել ու մշակել նոր ծրագիր։ Այդ նպատակով 1920 թ. մայիսի 28-ին (Հայաստանի անկախության երկրորդ տարեդարձի օրը) Ալեքսանդրապոլում գումարվեց կուսակցության համագումար (կոնֆերանս)<sup>159</sup>։

Օրակարգային հիմք հարցերից կենտրոնականը կուսակցության ծրագիրն էր, որը վերջնականապես մշակվեց և ընդունվեց համագումարում։ Նոր ծրագրում, ընդհանուր դրույթների ձևով, խոսվում էր բուրժուազիայի և պրոլետարիատի դասակարգային հակամարտության, վերջինիս կողմից սոցիալական հեղաշրջում կատարելու անխուսափելիության և սոցիալիստական հա-

<sup>151</sup> ՀՀ ԶԲԿ ՊԿԱ, Ժ 4009, ց. 1, գ. 55, ք. 14-15, Բ. Ղարիբջանյան, Սովետական իշխանության համար մղված պայքարում, Երևան 1966, էջ 143։

<sup>152</sup> Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ. Ե., 1976, էջ 510։

<sup>153</sup> ՀՀ ԶԲԿ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 7, գ. 68, ք. 1։

<sup>154</sup> Նույն տեղում։

<sup>155</sup> Նույն տեղում։

<sup>156</sup> Նույն տեղում։

<sup>157</sup> ՀՀ ԶԲԿ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 7, գ. 72, էջ 8։

<sup>158</sup> «Հայաստանի աշխատավոր» 16 սեպտեմբերի 1919թ.։

<sup>159</sup> ՀԶԿ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 7, գ. 72, էջ 3, ՀՀ ՊԿԱ, Ժ. 393, ց. 1, գ. 303, ք. 1։

սարակության հաստատման անհրաժեշտության մասին, որով ըստ նրանց, ազատություն կստանալ որ միայն պրոլետարիատը, այլև համայն մարդկությունը<sup>160</sup>։ Ծրագրում տեսական մի քանի դրույթներ էլ ընդօրինակված էր գերմանական սոց.-դեմոկրատների էրֆուրտի ծրագրից<sup>161</sup>։

Նոր ու ինքնուրույն էր ծրագրի գործնական մասը։ Առանձնահատուկ տեղ էր տրվում հայ ժողովրդի պետական ինքնորոշման փաստին։ Նրանում ընդգծվում էր, որ կուսակցությունը կանգնած է Միացյալ և Անկախ Հայաստանի պետականության տեսակետի վրա<sup>162</sup>։ «ՀՍԴԲԿ,- կարդում ենք ծրագրում,- մեցուկ է կանգնում Միացյալ Հայաստանի քաղաքական անկախությանը, պաշտպանում է նրա պետական ինքնուրույնությունը՝ իբրև ռամկավար հանրապետություն»<sup>163</sup>։

Հայաստանի սոցիալ-դեմոկրատները, իրենց համարելով բանվորական կուսակցություն, գործնականում ոչ մի առավելություն կամ արտոնություն չէին նախատեսում այդ դասակարգին։ Նրանք բանվորների համար պահանջում էին 8-ժամյա աշխատանքային օր, շաբաթական հանգիստ, կանանց ու երեխաների գիշերային աշխատանքի արգելում<sup>164</sup>, մի խօսքով՝ այնպիսի պահանջներ, որոնց կարելի էր հանդիպել այդ ժամանակվա իրեն ժողովրդավարական համարող ցանկացած կուսակցության ծրագրում։

Կուսակցության մայիսյան համագումարը ընտրեց հինգ հոգուց բաղկացած Կենտրոնական կոմիտե, որի նախագահը հերթականությամբ փոփոխվելու էր<sup>165</sup>։ ՀՍԴԲԿ ԿԿ-ի նախագահ փոխնեփոխ ընտրվեցին ԿԿ-ի անդամներ Բ. Իշխանյանը, Տր. Տրդատյանը և ուրիշներ։

Արտախորհրդարանական ընդդիմադիր կուսակցություններից ամենաազդեցիկը շարունակում էր մնալ *Հայ Ժողովրդականը*։ 1919թ. սեպտեմբերին Երևանում գումարվեց ՀԺԿ երկրորդ համագումարը։ Չնայած ՀԺԿ-ն խորհրդարանում պատգամավորական ներկայացուցչություն չուներ, սակայն գոյության երկու- երեք տարվա ընթացքում բավականին ամրապնդվել էին կուսակցության դիրքերը՝ ռուսահայ իրականության մեջ։ 71 պատգամավորների մասնակցությամբ տեղի ունեցած այս համագումարը նշանավորվեց նրանով, որ փոփոխություն կատարվեց երկու տարի առաջ՝ 1917թ. սեպտեմբերի առաջին համագումարում ընդունված ծրագրում։

Ամենից առաջ 2-րդ համագումարում ընդունված նոր ծրագրով խորհրդարանի կողքին ընդունվում էր նախագահական (պրեզիդենտական) ինստիտուտի անհրաժեշտությունը, բայց առաջնությունը տրվում էր ժողովրդական ներկայացուցչությանը՝ խորհրդարանին։ Դա երևում է նոր ծրագրի հետևյալ

կետից. «Ոչ մի որոշում, կարգադրություն, հրաման, ինչ ամուն էլ որ կրի և ումից էլ որ բխի, չի կարող օրենքի ուժ ստանալ, եթե հիմնված չէ պառլամենտի որոշման վրա»<sup>166</sup>։

Բացի այդ, կուսակցության գործող ծրագիրը համապատասխանեցվեց Հայաստանի քաղաքական նոր իրողություններին, այսինքն՝ անկախ Հայաստանի պայմաններին։ Պաշտպանելով անկախ պետականության գաղափարը՝ կուսակցությունն իր առջև ծրագրային նպատակ էր դնում «Հայաստանի անջատված մասերից ստեղծել Միացյալ և Անկախ Հայաստան՝ իր սեփական ժողային ելքով»<sup>167</sup>։ Ծրագրում շատ ուժեղ կերպով ամրագրված էին՝ Հայաստանը դեմոկրատական, պառլամենտական, իրավական հանրապետություն դարձնելու սկզբունքները։ Ժողովրդականների համար անփոփոխելի սկզբունքներ էին մնում՝ հայ ազգի գոյության ու մշակույթի պաշտպանության, էվոլյուցիոն զարգացման, ազգային լինելու, իրավական- պառլամենտական պետություն հիմնելու գաղափարները։

Կուսակցության ծրագրի ընդունումից զատ՝ ժողովրդականների համա- ժողովը քննարկեց օրահերթ այլաբնույթ խնդիրներ, այդ թվում կուսակցության քաղաքական դիրքորոշման հարցը։ Համագումարը ընդգծեց իր անվերապահ համակրանքը դեպի դաշնակիցները, այսինքն՝ ցուցաբերում էր արևմտյան կողմնորոշում<sup>168</sup>։

ՀԺԿ համագումարը ներկա քաղաքական պահի (մոմենտի) վերաբերյալ ընդունեց մի ըմբոստ բանաձև՝ ուղղված Հայաստանի իշխանությունների դեմ։ Համագումարը երկրի վիճակը բնութագրում էր «սոսկալի», իսկ կառավարող կուսակցությանը՝ «անճարակ»<sup>169</sup>։ Որոշվեց այդ բանաձևի պատճենները ուղարկել Հայաստանի կառավարությանը և խորհրդարանին՝ ի գիտություն։

Համագումարի այդ բանաձևը լուրջ անհանգստություն առաջացրեց իշխանությունների շրջանում։ Բանն այն էր, որ քաղաքական մոմենտի մասին ըմբռնված բանաձևը, մի քանի օր անց, թուրքիկի ձևով բազմացվեց «Ժողովուրդ» թերթի տպարանում։ Իշխանությունները հանդես բերելով զգոնություն՝ գտան, որ այդ բանաձև- թուրքիկը կարող է հասարակությանը մղել ըմբոստացման ու հեղաշրջման։ Ուստի՝ սեպտեմբերի 19-ին մ. գ. նախարարի հրամանով խուզարկվում ու կնքվում են թերթի խմբագրատունը և «Լույս» տպարանը։ Մի քանի օրով դադարում է «Ժողովուրդ» թերթի լույսընծայումը<sup>170</sup>։ Ի պատասխան դրա՝ հայ ժողովրդականները իշխանություններին մեղադրեցին «մամուլի ազատությունը» սահմանափակելու մեջ։ Եվ այս ամենը տեղի էր ունենում այն դեպքում, երբ ՀՀ բացակայում էր մամուլի ու գրաքննության մասին օրենքը։

<sup>160</sup> ՀՀ ՊԿՄԱ, Ժ. 404, ց. 1, գ. 12, ք. 3-4։

<sup>161</sup> ՀՀ ՀԲԿ ՊԿՄԱ, Ժ. 1022, ց. 7, գ. 72, էջ 4։

<sup>162</sup> ՀՀ ՀԲԿ ՊԿՄԱ, Ժ. 1022, ց. 7, գ. 72, էջ 5։

<sup>163</sup> ՀՀ ՊԿՄԱ, Ժ. 404, ց. 1, գ. 12, ք. 5։

<sup>164</sup> ՀՀ ՊԿՄԱ, Ժ. 404, ց. 1, գ. 12, ք. 7։

<sup>165</sup> ՀՀ ՀԲԿ ՊԿՄԱ, Ժ. 1022, ց. 7, գ. 72, ք. 14։

<sup>166</sup> «Ծրագիր Հայ Ժողովրդական կուսակցության», Երևան, 1919, էջ 5։

<sup>167</sup> Նույն տեղում, էջ 3։

<sup>168</sup> «Ժողովուրդ», 24 սեպտեմբերի 1919թ.։

<sup>169</sup> ՀՀ ՊԿՄԱ, Ժ. 404, ց. 1, գ. 39, ք. 1, «Հայաստանի ծայն», 3 հոկտեմբերի 1919թ.։

<sup>170</sup> «Ժողովուրդ», 24 և 26 սեպտեմբերի 1919թ.։

Այս ամենով հանդերձ՝ ՀԺԿ և նրա պարբերականները երկրորդ խորհրդարանի գումարման առաջին մեկ- երկու ամիսներին ոչ մի կերպ չէին հաշտվում նրա գոյության փաստի հետ, այն համարում էին անօրինական ճանապարհով ընտրված։ Սակայն մի փոքր ավելի ուշ մենք տեսնում ենք, որ «Ժողովուրդը» և «Ժողովրդի ձայնը» արդեն «փշերը թողած» տեղեկություններ էին տպագրում խորհրդարանի նիստերի և նրա ընդունած օրենքների ու որոշումների մասին։ Իսկ 1920 թ. մայիսյան ճգնաժամի օրերին և հետագա ամիսներին լիովին կանգնում՝ հանրապետության ու նրա անվտանգության պաշտպանության դիրքերում։

ՀՀ Դաշնակցությունից ու Հայաստանի իշխանություններից իր գուսպ (խուլ) դժգոհությունն էր արտահայտում հայ ժողովրդականների դուստր կուսակցությունը՝ **Հայ ռամկավարները**։

1919թ. դեկտեմբերի վերջերին (21-ից 28-ը) երևանում կայացավ Ռամկավար կուսակցության Հայաստանի շրջանային պատգամավորական ժողովը՝ համագումարը<sup>171</sup>։ Սա Անդրկովկասի հայ ռամկավարների երկրորդ (Բ) համագումարն էր։ Այս համագումարի ժամանակ կազմակերպությունը այլևս սահմանափակված չէր Վան- Վասպուրականի գաղթականության շրջանակով, այլ իր մեջ էր ներառել արևմտահայ մյուս ռամկավար՝ Խարբերդի, Տիգրանակերտի, Կարիհի, Բաղեշի, Սվազի, Խնուսի, Ալաշկերտի, Մուշի, Տրապիզոնի գաղթական հատվածները<sup>172</sup>։

Համագումարին մասնակցում էին 24 պատգամավոր վճռական ձայնի իրավունքով և 12 հոգի խորհրդակցական ձայնով՝ ընդամենը 36 պատգամավոր<sup>173</sup>։

Օրակարգի հարցերից էին՝ կուսակցության Հայաստանի խորհրդի և տեղական ակումբների զեկուցումները, քաղաքական մոմենտը, ռամկավար կուսակցությունների ու հոսանքների միացման խնդիրը, գաղթականության հարցը և այլն<sup>174</sup>։ ՀՌԿ Հայաստանի կենտրոնական խորհրդի կողմից համա- ժողովը բացեց Արտակ Դարբինյանը։ Ձեկուցումներով հանդես եկան պատգամավորներ՝ Ն. Հակոբյանը, Մ. Մալոյանը և ուրիշներ։

Համագումարը արտահայտեց ընդգծված արևմտյան քաղաքական դիրքորոշում։ Քաղաքական մոմենտի և Հայկական հարցի վերաբերյալ ընդունված բանաձևում ասվում էր. «Համագումարը, լսելով քաղաքական կացության մասին տրված զեկուցումը և անոր շուրջ արտահայտված մտքերը, որոշեց՝ վստահություն հայտնել դաշնակից պետություններուն և Փարիզի կոնֆերանսի վարած քաղաքականությանը Հայկական հարցի նկատմամբ»<sup>175</sup>։ Նույն հարցի վերաբերյալ ընդունված բանաձևի մեկ այլ կետում՝ (ը) հատուկ

ընդգծվում էր հետևյալը. «Իրական պայմանների թելադրանքով Հայաստանը պետք է կոթնի դաշնակից պետությունների աջակցության վրա»<sup>176</sup>։ Միաժամանակ, համագումարը մեծ կարևորություն էր տալիս նաև Ռուսաստանի դիրքին<sup>177</sup>։

Ինչ վերաբերում էր 1919թ. մայիսի 28-ի «Միացյալ և Անկախ Հայաստանի մասին» կառավարության հայտնի ակտին տրված գնահատականին, ապա համագումարը, դրսաշխարհի ռամկավարներին և հայ ժողովրդականներին համախորհուրդ, քաղաքական սխալ ու անընդունելի էր համարում նրա այն մասը, որով Արարատյան (ՀՀ) կառավարությունը իրեն հայտարարում էր Միացյալ Հայաստանի կառավարություն։ Դա որակվում էր որպես բռնաբարում թուրքահայության կամքի և իրավունքի<sup>178</sup>։ Հայ ռամկավարները բնականաբար վստահություն չէին տածում ինչպես ՀՀ կառավարության, այնպես էլ խորհրդարանի հանդեպ։

Խորհրդարանական և արտախորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունները տեսնելով, որ առանձին - առանձին չեն կարողանում ինչպես հարկն է հակազդել կառավարող կուսակցությանը, իշխանությունների դեմ արդյունավետ պայքարելու համար ժամանակ առ ժամանակ միավորվում էին, հանդես էին գալիս համատեղ հայտարարություններով, բողոքներով ու համախոսականներով։ Օրինակ՝ համատեղ հայտարարություն է արձանագրվել ընդդիմադիր կուսակցությունների Ալեքսանդրապոլի կազմակերպություններում։ Կառավարության սուր քննդատությամբ միասնաբար հանդես եկան ՀԺԿ Ալեքսանդրապոլի կոմիտեն, սոցիալ-դեմոկրատ մենչևիկների Ալեքսպոլի կազմակերպությունը, Հայ ռամկավարների կուսակցության Ալեքսանդրապոլի ակումբը՝ «Ծ»-ն, Անկախ ընկերվար (սոցիալիստների) Ալեքսանդրապոլի կազմակերպությունը<sup>179</sup>։

Ընդդիմությունը կառավարությանը, Դաշնակցությանը մեղադրում էր ամեն տեսակ մեղքերի մեջ։ Հանրապետությունում ստեղծված սոցիալ- տնտեսական ծանր կացության պատճառը մերկապարանոց ձևով վերագրվում էր կառավարությանը։ Ընդդիմադիր մամուլը՝ «Ժողովուրդ», «Ժողովրդի ձայն», «Սոցիալիստ հեղափոխական», «Աշխատանքի դրոշակ», «Հայաստանի ձայն», «Նոր կեանք», «Կայծ» և այլն, ազատորեն ու անխնա քննադատում էին կառավարությանը՝ նրա վարած քաղաքականությունը, պաշտոնյաների թերացումները, անիրազեկությունը, շահատակությունները։

Բայց մյուս կողմից պետք է ասել, որ կառավարությանը, իշխանություններին ոչ պակաս սրությամբ քննադատում էր նաև դաշնակցական մամուլը։ ՀՀԴ Բիւրոյի օրգան «Հառաջի» էջերում, որի խմբագիրն էր Ս. Վրացյանը, խմբագրականներ ու բազմաթիվ հոդվածներ էին լույս տեսնում կառավարու-

<sup>171</sup> Ա. Յափումյան, նշվ. աշխ., էջ 45։

<sup>172</sup> «Հայաստանի ձայն», 23 դեկտեմբերի 1919թ.։

<sup>173</sup> Նույնը, 4 հունվարի 1920թ.։

<sup>174</sup> Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 392, «Հայաստանի ձայն», 7 նոյեմբերի 1919թ.։

<sup>175</sup> «Հայաստանի ձայն», 25 հունվարի 1920թ.։

<sup>176</sup> Նույն տեղում։

<sup>177</sup> Ա. Դարբինյան, նշվ. աշխ., էջ 398։

<sup>178</sup> «Հայաստանի ձայն», 25 հունվարի 1920թ.։

<sup>179</sup> ՀՀ ՊԿՊԱ, Զ.404, ց. 1, գ. 36, ք. 1.։

յան քննադատությամբ: Քննադատվում էին նաև Բյուրոն և խորհրդարանը: Վերջինս համարվում էր «խոստարան, իսկ կառավարությունը բույլ ու անկարող»<sup>180</sup>: Այն ժամանակ բոլորն էլ միաբերան ընդունում էին, որ ՀՀ-ն դեռևս հեռու էր իրավական պետություն ու քաղաքացիական հասարակություն լինելուց:

Եթե հանրապետության ներսում քաղաքական կուսակցությունների միջև կար ներքին դիմակայություն, ապա դրա աշխարհում նրանք ավելի հաճախ հանդուրժել են իրար և նույնիսկ գտել համագործակցության եզրեր: Նման գործակցության փորձեր են արվել, օրինակ ՍԴ-Հնչակ և ՀՅԴ-ամերիկյան կազմակերպությունների միջև: 1919 թ. դեկտեմբերին ՍԴ-Հնչակ կուսակցության ամերիկյան շրջանի Կենտրոնական վարիչ մարմնի և ՀՅԴ-Ամերիկայի ԿԿ-ի միջև բանակցություններ են ընթացել համագործակցելու նպատակով: Նրանք համագործակցել են՝ հիմք ընդունելով հետևյալ պայմանները. 1) նյութական օգնություն հասցնել Հայաստանի Հանրապետությանը, Կիլիկիայի և Հայաստանի այլ ազատագրված վայրերին, 2) օժանդակել կամ ուժ տալ կամավորական շարժումին ու ներգաղթին և 3) կուսակցական ոչ մի կաշկանդում<sup>181</sup>: Բայց արխիվային գործից պարզ չեն դառնում այդ համագործակցության արդյունքները: Ինչևէ, անկախ բանակցությունների արդյունքից, պետք է հավաստել, որ գաղթաշխարհի հայ քաղաքական կուսակցությունները հիմնականում սևեռում ուշադրություն ու շահագրգիռ հոգածություն են ցուցաբերել ՀՀ ճակատագրի հանդեպ, հնարավորության սահմաններում հանգստանկություններ կազմակերպել<sup>182</sup>: Նրանք անհրաժեշտության դեպքում մի կողմ են դրել միջկուսակցական, քաղաքական-գաղափարական մանրախնդիր վեճերն ու տարաձայնությունները և սատար կանգնել ՀՀ, Հայկական հարցի և այլ ազգաշահ խնդիրների լուծմանը:

#### 4. ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը

Սույն ենթաբաժնում հարկ ենք համարում առանձնահատուկ և ավելի հանգամանորեն անդրադառնալ ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովին (համագումարին), քանզի Դաշնակցությունը հիմնական կառավարող կուսակցությունն էր, և նրա այս համաժողովի ընդունած կարևորագույն որոշումները ուղենշանային դեր են խաղացել թե՛ ՀՀ և թե՛ կուսակցության հետագա ողջ գործունեության համար:

ՀՅԴ պատմության մեջ բոլոր ընդհանուր ժողովները եղել են այն հանգրվանները, որոնցից հետո կուսակցության համար քացվել են տեսական

ու գործնական աշխատանքի նոր ու լայն հորիզոններ: Այդ տեսակետից հատկանշական էր նաև 9-րդ ընդհանուր ժողովը: Չնայած այստեղ կուսակցության նոր ծրագիր չի ընդունվել, բայց իր կայացրած որոշումներով և ծրագրամետ բանաձևումներով ժողովն ուղենշային է: Ավելին՝ մեր կարծիքով՝ սա ՀՅԴ դարձակետային համագումարներից մեկն է:

Այս ընդհանուր ժողովի որոշումներում ամենանշանակալին, թերևս, Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի պաշտպանումն ու վավերացումն էր: Ընդհանուր ժողովը հայոց անկախ պետականության պայմաններում հաստատականորեն կանգնեց, Ն. Աղբալյանի պատկերավոր խոսքերով ասած, հայ ժողովրդի արյունով ոռոգված այդ նորածիլ հանրապետությունը խնամելու և հաստատուն ծառ դարձնելու աներկբա դիրքորոշման վրա<sup>183</sup>:

Այս համագումարը շրջադարձային էր նաև այն իմաստով, որ հայոց նորածին անկախ պետականության իրողության պայմաններում ՀՅԴ պատասխանում էր փակել քաղաքական պայքարի առաջին՝ գրեթե երեսնամյա շրջանը, և անցնել հաջորդին՝ պետականության կերտմանն ու տնտեսության վերաշինությանը: Բայց, ավաղ, արտաքին ու ներքին ուսխների դավերի հետևանքով, այն շատ կարճ տևեց:

\*\*\*

Ավելի քան հինգ տարի կուսակցության ընդհանուր ժողով չէր հրավիրվել. պատճառը սկսված աշխարհամարտն էր և դրա հետևանքով հայ ժողովրդի համար ստեղծված քացառիկ ծանր ռազմաքաղաքական իրավիճակը: Պատերազմի ավարտից հետո, քիչ թե շատ տանելի պայմաններում, հնարավորություն ստեղծվեց այն գումարել արդեն անկախացած հայրենիքի մայրաքաղաքում:

1919 թ. մարտի 1-ին ՀՅԴ Արևելյան և Հայաստանի բյուրոները հայտարարության ձևով հրապարակել էին 9-րդ ընդհանուր ժողովի օրակարգը՝ բաղկացած հինգ խումբ հարցերից: Լսվելու և քննարկվելու էին.

ա) Կուսակցության կենտրոնական մարմինների (երկու բյուրոների, Կ. կոմիտեների, խորհրդարանական խմբակցության և այլն) գեկուցումներ ու հաշվետվություններ՝ թվով 7 ենթահարց

բ) Սոցիալ-քաղաքական բնույթի (Սահմանադիր ժողովի, արտաքին ու ներքին քաղաքականության, զորքի, ներգաղթի, կրթության, վերաշինության, ֆինանսների, պարենավորման և այլն) թվով 12 ենթահարց

գ) Ծրագրային-կազմակերպական խնդիրներ (ծրագրի, կանոնադրության, կուսակցության ֆինանսների) 5 ենթահարց

դ) Կուսակցության ընթացիկ կյանքի (արխիվների, քանգարանի, հրատարակությունների և այլն) 8 ենթահարց

ե) Ընտրություններ<sup>184</sup>:

<sup>180</sup> Ռուբեն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, հ. է., Լոս Անձելես, 1952, էջ 227:

<sup>181</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, ց. 1, գ. 107, ք. 3:

<sup>182</sup> Ա. Կիսուր, Աշխ., հ. 2, էջ 149-154:

<sup>183</sup> «Աշխատավոր», 5 հոկտեմբերի 1919 թ.:

<sup>184</sup> ՀՀ ԶԶԿ ՊԿԱ, Ժ. 4047, ց. 1, գ. 136, ք. 1, «Հառաջ», 6 մարտի 1919 թ.:



Մինչ Ընդհանուր ժողովի հրավիրումը կուսակցական կազմակերպությունների կենտրոնական ու տեղական ղեկավար մարմինները 1919 թ. գարնան և ամռան ամիսներին կատարել էին զգալի նախապատրաստական ու կազմակերպական աշխատանք, կայացել էին շրջանային ու ռայոնական ժողովներ, լայն հնարավորություններ էին ընձեռվել նախաձեռնությունների, առաջարկությունների ու դիտողությունների համար: Ընտրվել էին Ընդհանուր ժողովի պատգամավորներ՝ կուսակցության գրեթե բոլոր իրավասու մարմինների մասնակցությամբ: Համագումարին մասնակցում էին 61 պատգամավոր՝ վճռական ձայնով (աշխարհի տարբեր կողմերից) և 19-ը՝ խորհրդակցական (կառավարության ՀՅԴ անդամներ ու մի խումբ կուսակցական գործիչներ), ընդամենը 80 պատգամավոր<sup>185</sup>:

ՀՅԴ Բյուրոների նախապես արված հայտարարության համաձայն ժողովը բացվելու էր 1919 թ. օգոստոսի 15-ին, Երևանում<sup>186</sup>: Սակայն, ինչպես հայտնի է, այդ օրերին տեղի ունեցող թուրք-թաթարական ապստամբական ելույթները (խռովությունները), մասնավորապես Բեյլուկ Վեդիի արյունալի կոիվները, ինչպես նաև առանձին պատգամավորների ուշացումը պատճառ դարձան, որ համաժողովի հրավիրումը հետաձգվի: Արևելյան Բյուրոյի օգոստոսի 11-ի նիստում որոշվեց հետաձգել ժողովի հրավիրումը<sup>187</sup>: Եվ այն վերջապես բացվեց 1919 թ. սեպտեմբերի 27-ին:

9-րդ Ընդհ. ժողովը գումարվում էր մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովուրդը Փարիզի խաղաղարար համաժողովից անհամբեր սպասում էր Հայկական հարցի վերջնական լուծմանը: Տակավին մնում էին չլուծված հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված բազմաթիվ այլ հիմնահարցեր: Ահա թե ինչ էր գրում կուսակցության պաշտոնաթերթ «Հառաջը»՝ Ս. Վրացյանի խմբագրությամբ, Ընդհանուր ժողովի բացման օրը. «Երեսուն տարվա հեղափոխական անդուլ գործունեությունից հետո մեր կուսակցությունը կանգնած է իր ծրագրի ամենակարևոր կետի իրագործման նախօրյակին: Հայաստանի Հանրապետության գոյության փաստը առաջ է բերել մի շարք առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիրներ, որոնց լուծումը չի կարող հետաձգվել: Հայ աշխատավորության գաղափարական ղեկավար կուսակցությունը՝ ՀՅԴ, Ընդհ. ժողովի պատգամավոր ընկերները տոգորված են մի ձգտմամբ՝ ամրացնել մեծ հեղափոխության»<sup>188</sup> նվաճումները, կայուն դարձնել Միացյալ և Անկախ Հայաստանի Հանրապետությունը, ամրապնդել Հայաստանի դեմոկրատական իրավակարգը, ապահովել դեմոկրատիայի սոցիալական բարգավաճումը: Մենք համոզված ենք, որ ներկա Ընդհանուր ժողովի ղե-

րը Հայաստանի իրականության մեջ և մեր կուսակցության կյանքում շատ մեծ է լինելու<sup>189</sup>:

1919 թ. սեպտեմբերի 27-ին, երեկոյան ժամը 8-ին, խորհրդարանի դահլիճում տեղի ունեցավ կուսակցության համագումարի հանդիսավոր բացումը:

Նիստը խոհուն ճառով բացեց Ն. Աղբալյանը: Նա հակիրճ կերպով բնութագրեց կուսակցության գործունեության վերջին հինգ տարիների արդյունքները՝ նվաճումները, հերոսությունները, հաջողությունները, բացթողումները, հիասթափությունները, ողբերգությունը:

Ն. Աղբալյանի բացման խոսքից հետո ՀՀ կառավարության կողմից Ընդհ. ժողովը ողջունեցին վարչապետ Ալ. Խատիսյանը, Երևանի քաղաքապետ Մ. Մուսիմյանը և ուրիշներ:

Ընդհ. ժողովի նախագահներ ընտրվեցին՝ Հովսեփ Արղությանը, Վահան Խորենին և Մովսես Պետրոսյանը, որոնք հերթականությամբ վարում էին նիստերը:

Նախնական հարցերից հետո ժողովն անցավ բուն օրակարգին և լսեց Արևելյան (Ռուսաստան ու Իրան) և Հայաստանի (Արևմտյան Հայաստան, Թուրքիա, գաղթախներ) Բյուրոների մանրամասն զեկուցումները:

Արևելյան Բյուրոյի կողմից զեկուցեց Սիմոն Վրացյանը, իսկ Հայաստանի Բյուրոյի կողմից՝ Ռուբեն Տեր-Մինասյանը: Հաշվետու ժամանակաշրջանում երկու Բյուրոներն էլ ունեցել էին մեծ կորուստներ: Հայաստանի Բյուրոյի 9 անդամներից մահացել կամ սպանվել էին 7-ը, իսկ Արևելյան Բյուրոյից՝ 2-ը: Այդ կորուստների թվում էին Ա. Վռամյանը, Է. Ակնունին, Հրաչը (Հայկ Թիրաթյան), Ս. Բարսեղյանը, Ռ. Ջարդարյանը, Խ. Կարճիկյանը, Ա. Մամուկյանը, Ստ. Ջորյանը, Ա. Շահխաթունին, որոնք կամ սպանվել էին կամ մահացել բնական մահով<sup>190</sup>:

Ժողովի ընթացքն ու արդյունքները ճիշտ հասկանալու և գնահատելու համար անհրաժեշտ է հպանցիկ անդրադառնալ կուսակցության ներքին կյանքին և կազմակերպական վիճակին նախահամագումարյան փուլում:

Հաշվետու հինգ տարիների ընթացքում հայ ժողովրդի հետ միասին մեծ չափով տուժել էր նաև ՀՅԴ: Կուսակցության բազմահազար ղեկավար ու շարքային անդամներ զոհվել էին կամավորական շարժման ժամանակ, Հայոց Մեծ եղեռնի, թուրք-թաթարական հետագա հարձակումների, 1918-1919 թթ. ձմռան սովի ու համաճարակի, վրաց ու բուլղար բռնությունների և այլնի հետևանքով: Այս ամենը բացասաբար էր անդրադարձել կուսակցության կազմակերպությունների աշխատանքի ու մարտունակության վրա: Երկրի՝ թուրքերի կողմից գրավված ու օկուպացված շրջաններում խիստ բուլացել էին կուսակցական մարմինները, որոնք փաստորեն գտնվում էին կիսաքայքայված ու կազմալուծված վիճակում:

<sup>189</sup> «Հառաջ», 27 սեպտեմբերի 1919 թ.:

<sup>190</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, ց. 1, գ. 54, ք. 31, «Հառաջ», 9 հոկտեմբերի 1919 թ.:

<sup>185</sup> «Քաղվածքներ ՀՅԴ. 9-րդ ընդհանուր ժողովի որոշումներից», Ե., 1920, էջ 3-4 (այսուհետև՝ «Քաղվածքներ...»):

<sup>186</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ. 4047, ց. 1, գ. 136, ք. 1:

<sup>187</sup> Նույն տեղում գ. 144, ք. 8:

<sup>188</sup> Նկատի ունի 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը:

1918 թ. մայիսի վերջերին, երբ հռչակվեց Հայաստանի անկախությունը, ՀՅԴ մտավոր ու կենսունակ ուժերի մեծագույն մասը գտնվում էր Հայաստանից դուրս: Նրանք կուսակցական ղեկավար մարմինների հրահանգով Թիֆլիսից, Բաքվից և մերձակա ու հեռավոր արտասահմանի այլ քաղաքներից ու վայրերից, չնայած շատ ծանր պայմաններին, վերադարձան Հայաստան՝ նորանկախ հանրապետության վերաշինության գործին լծվելու:

Նախահամագումարյան ժամանակաշրջանում կուսակցության կազմակերպական վիճակի մասին խոսելիս պետք է հաշվի առնել մի շատ կարևոր առանձնահատկություն: Ստեղծվել էր այնպիսի մի վիճակ, երբ ՀՀ տարածքում կար 300 հազար արևմտահայ գաղթականություն, որի մեջ կուսակցական պատկանելությամբ ամենամեծ տեսակարար կշիռը կազմում էին ՀՅԴ անդամները և համակրողները: Սրանք հայրենակցական հիմունքներով ստեղծել էին արտատարածքային կուսակցական կազմակերպություններ: Մինչև 9-րդ Ընդհ. ժողովը, ավելի ստույգ, մինչև 1919 թ. վերջերը, ՀՀ սահմաններում գործում էին հայրենակցական հիմունքներով ստեղծված կուսակցության հետևյալ արտատարածքային մարմինները՝ Վասպուրականի, Լեռնապարի, Բագրեվանդի, Հարք-Ապահունիքի, Դուրան-Բարձրավանդակի, Բարձր Հայքի, Փոքր Հայքի և այլ Կենտրոնական կոմիտեությունները և ենթակոմիտեները, որոնք ամենեին չէին ենթարկվում տեղական ԿԿ-ներին: Այսպես, օրինակ, Երևանում հաստատված արևմտահայերի Վասպուրականի և Լեռնապարի ՀՅԴ ԿԿ-ը գործում էր նույն Երևանի տեղական Մրգաստանի ԿԿ-ից անկախ: Կամ Ալեքսանդրապոլի շրջանում գոյություն ունեցող Դուրան-Բարձրավանդակի ԿԿ-ը գործում էր տեղական Քարի և Ջրաբերդի ԿԿ-ներից ինքնուրույն<sup>191</sup>: Նույն կերպ, մինչև տարածքում զուգահեռաբար գործող արևելահայ և արևմտահայ կուսակցական մարմիններ կային նաև հանրապետության սահմաններից դուրս՝ Թիֆլիսում և այլ վայրերում<sup>192</sup>:

Չնայած մինչև տարածքում զուգահեռ գործող արևելահայ և արևմտահայ կուսակցական կազմակերպությունների գլխին կար երկու բյուրո՝ համապատասխանաբար Արևելյան և Հայաստանի, կուսակցության ներսում ստեղծված նման կազմակերպական տարանջատված վիճակը սպառնում էր նրա միասնությանը, ջլատում պետական և հասարակական գործերը:

Արևմտահայ դաշնակցականների կազմակերպությունները սփռված էին ՀՀ գրեթե բոլոր գավառներում ու շրջաններում, այսինքն՝ այն վայրերում, որտեղ կար արևմտահայ հոծ գաղթականություն: Այդպիսիք էին՝ Երևանի, Թալինի, Աշտարակի, Էջմիածնի, Նոր Բայազետի, Կոտայքի (Կրբուլախ), Ղամարուլի, Ղարաքիլիսայի, Դիլիջան-Քարվաճառայի, Սուրմալուի, Ալեքսանդրապոլի, Ջանգեզուրի շրջանային կազմակերպությունները<sup>193</sup>: Դրանցում ընդգրկված էին մեծ թվով արևմտահայ դաշնակցականներ: 1919 թ. սեպ-

տեմբերի նախահամագումարյան տվյալներով միայն չորս շրջանների՝ Երևանի, Թալինի, Ալեքսանդրապոլի և Կարսի արտատարածքային կազմակերպություններում հաշվվում էր մոտ 8000 արևմտահայ անդամ<sup>194</sup>:

ՀՀ տարածքում գործող արևմտահայ դաշնակցական բոլոր կոմիտեների և ենթակոմիտեների աշխատանքների միավորման ու կազմակերպման գործերը վարում էր «Երկրի» ԿԿ-ն<sup>195</sup>: Վերջինս հիմնվել էր հավանաբար 1917 թ. գարնանը՝ գաղթականության դեպի երկիր վերադարձի շրջանում<sup>196</sup>: 1919 թ. ապրիլից «Երկրի» ԿԿ-ն հրատարակում էր իր օրգան «Աշխատանք» եռօրյա թերթը՝ Հ. Մանուկյանի (Խորոզյանի) խմբագրությամբ:

\*\*\*

Կուսակցության գերագույն ժողովի կենտրոնական քաղաքական հիմնախնդիրը Հայկական հարցն էր, որի հիմքում ընկած էր Միացյալ և Անկախ Հայաստանի պահանջը: Հաշվի առնելով Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հայկական հարցի համապարփակ լուծման համար ստեղծված նպաստավոր ռազմաքաղաքական և դիվանագիտական պայմանները՝ ՀՅԴ, իբրև ՀՀ հիմնական կառավարող կուսակցություն, Հայաստանի ամբողջությունը վերականգնելու նպատակով առաջ քաշեց և պաշտպանեց նրա երկու գլխավոր հատվածների (ռուսահայ և տաճկահայ նահանգների) միավորումից Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու մասին գաղափարը:

Միացյալ և Անկախ Հայաստանի տեսլականը կուսակցության գործնական քաղաքականության հիմնաքար դառնալու համար պետք է վավերացվեր ու նյութականացվեր կուսակցության համաժողովում: Մինչ համագումարի հրավիրումը՝ ՀՅԴ Բյուրոն մշակել էր Հայաստանի պահանջները, որում պաշտպանվում էր Միացյալ Հայաստանի գաղափարը առանց Կիլիկիայի և, նույնիսկ, առանց ելքի՝ դեպի ծով:

Այդ ուղղությամբ հրահանգ էր տրված թե՛ կառավարությանը և թե՛ Փառիզ մեկնած ՀՀ պատվիրակությանը<sup>197</sup>: Բայց հանգամանքների բերումով այդ քաղաքականությունը հետևողականորեն չանցկացվեց: Պողոս Նուբար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակությունը և գրեթե ողջ գաղութահայությունը, այդ թվում գրեթե բոլոր արևմտահայ դաշնակցականները, ձգտում էին նաև Կիլիկիայի անկախությանը՝ կամ առանձին, կամ Հայաստանի հետ միասին<sup>198</sup>: Այս քաղաքական խնդիրը քննության առնվեց ժողովում, որտեղ ի հայտ եկան տարբեր տեսակետներ ու մոտեցումներ: Այդ կապակցությամբ Բյուրոյի անդամ Ռ. Տեր-Մինասյանը իր հուշերում գրում էր. «Թեև նախորդ

<sup>194</sup> «Հառաջ», 2 հոկտեմբերի 1919 թ.:

<sup>195</sup> Հ. Տասնապետյան, Հ.Յ.Դ.-ն կազմակերպական կառույցի հոլովությամբ, Պեյրուք, 1985, էջ 101:

<sup>196</sup> «Ազդակ» շաբաթօրյակ, 1973, թիվ 36, էջ 571:

<sup>197</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 200, Ռուբեն, նշվ. աշխ., էջ 170, «Ազդակ» շաբաթօրյակ, 1973, թիվ 38, էջ 607:

<sup>198</sup> Ռուբեն, նույն տեղում, «Ասպարեզ», 28/29 մայիսի 1992 թ.:

<sup>191</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 155:

<sup>192</sup> Նույն տեղում:

<sup>193</sup> «Հայաստանի աշխատավոր», 27 ապրիլի 1919 թ.:

Բյուրոյի անդամները (այդ թվում և ինքը՝ Ա. Հ.) և շատ պատգամավորներ պնդեցին Հայաստանի սահմանների հարցում չափավոր քաղաքականության անհրաժեշտության մասին՝ մատնանշելով Կիլիկիան և ուրիշ հատվածներ Միացյալ Հայաստանի սահմաններից դուրս ձգելու մասին, սակայն Ընդհ. ժողովը, ձայների մեծամասնությամբ, բանաձևեց հետևյալը. «Հայաստանի սահմանները որոշելու խնդրում արտաքին քաղաքականությունը պիտի ղեկավարվի այն ծրագրով, որը 1919 թ. փետրվարի 12-ին ներկայացվել է Փարիզի հաշտության համաժողովին»<sup>199</sup>։ Այսպիսի որոշում կայացվեց Ընդհանուր ժողովում Հայկական հարցի վերաբերյալ առաջադրված ինը տարբեր բանաձևերի համադրման հիման վրա<sup>200</sup>։

Այսպիսով, կուսակցության 9-րդ Ընդհ. ժողովը հավանություն տվեց 1919 թ. փետրվարի 12-ին Փարիզի հաշտության համաժողովին Հայաստանի միացյալ պատվիրակության ներկայացրած Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու ծրագրին, մի ծրագիր, որով ենթադրվում էր ստեղծել Ռուսահայաստանից, Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներից և Կիլիկիայից բաղկացած հայկական պետություն։ Այդ նշանակում էր, որ նորընտիր Բյուրոն, ինչ կուսակցությունը պետք է առաջնորդվեին Միացյալ Հայաստանի ծավալում (առավելագույն) սահմանների պահանջով։ Սակայն պատմաքաղաքական հետագա անցքերը ցույց տվեցին, որ չափավոր պահանջներ ներկայացնող պատգամավորները՝ Ռուբենը, Վրացյանը, Բաբայանը և ուրիշներ, ավելի իրատես դուրս եկան, քան մեծամասնություն կազմող արմատականները։ Բայց եթե Հայաստանի սահմանների, այդ թվում Կիլիկիայի խնդրում, ժողովականների կարծիքները բաժանվեցին, ապա Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստան ունենալու հարցում նրանք մնացին անսասան։

Հիրավի, անհրաժեշտ էր կուսակցության, ամբողջ ժողովրդի ջանքերը նպատակամղել բուն Հայաստանի երկու հատվածների միասնացման գործին և ոչ թե ուժերի մի մասը ջլատել ու սպառել Կիլիկիայում, որը, ինչպես հետո պարզ դարձավ, մեծ տերությունների, մասնավորապես Ֆրանսիայի դիվանագիտական խարդավանքների հետևանքով ունեցավ ողբերգական ավարտ։

1920 թ. աշնանը քեմալական Թուրքիայի և բուլշևիկյան Ռուսաստանի համատեղ ու կոպիտ ռազմաքաղաքական միջամտության և Արևմուտքի մեծ տերությունների դրսևորած անհետևողականության ու անտարբերության հետևանքով ոչ միայն չիրագործվեց Սևրի դաշնագրով նախատեսված Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի գաղափարը, այլև աշխարհի շատ պետությունների կողմից արդեն պաշտոնապես ճանաչված ՀՀ-ը կորցրեց իր անկախությունը և խորհրդայնացվեց։

\*\*\*

Ընդհ. ժողովի առջև ծառացած դժվարին ու առանցքային հարցերից մեկը կուսակցության ծրագրի վերաքննության խնդիրն էր։ Կուսակցության 8-րդ համագումարից հետո, անցած հինգ տարիների ընթացքում, Հայաստանում և համաշխարհային մասշտաբով տեղի էին ունեցել վիթխարի փոփոխություններ. աշխարհամարտ, ռուսական և օսմանյան կայսրությունների փլուզում, Հայաստանի անկախության հռչակում և այլն։

Համաշխարհային պատերազմին հաջորդած քաղաքական արմատական տեղաշարժերը, բնականաբար, անխուսափելի անհրաժեշտություն դարձրին համապատասխան փոփոխություններ կատարել 1907 թ. Վիեննայի Ընդհ. ժողովում հաստատված կուսակցության գործող ծրագրում։ Այս կապակցությամբ կուսակցության հայտնի գործիչ Ա. Ջամալյանը գրում է. «Ստեղծված նոր կացությունը անհրաժեշտ էր դարձնում Դաշնակցության ծրագրի վերաքննությունը, ոչ միայն այն պատճառով, որ նրա ազգային-քաղաքական պահանջը պետք է նոր ձևակերպություն ստանար, այլև այն պատճառով, որ անկախ պետականության սահմաններում գործելու կոչված կուսակցությունը պիտի դժվարանար տեղականապես գործել մի ծրագրով, որ բոլորովին այլ քաղաքական պայմանների հաշվառմամբ էր կազմված»<sup>201</sup>։

Ակնհայտ էր դարձել, որ կուսակցության ծրագրի մի քանի կետեր (դրույթներ) հնացել էին։ Հնացել էր ամենից առաջ նրա «Նվազագույն պահանջներ»-ի բաժինը։ Այս բաժնում, ինչպես հայտնի է, նախատեսված էին երկու իրարից անջատ Հայաստաններ՝ Արևմտյան և Արևելյան, որոնցից մեկը տեղական լայն ինքնավարությամբ և դաշնակցային կապերով միացած պիտի մնար Թուրքիային, իսկ մյուսը՝ Ռուսաստանին<sup>202</sup>։ Ծրագրային այս պահանջը տվյալ ժամանակաշրջանի ու պայմանների համար միակ տրամաբանական ու հնարավոր միջոցն էր։ Այս քաղաքական դավանանքով էլ հայ ժողովուրդը մտավ համաշխարհային պատերազմի մեջ՝ անցնելով Անտանտի (Համաձայնության) երկրների կողմը՝ որպես նրանց «փոքր դաշնակից»։ Սակայն 1915 թ. Հայոց Մեծ Եղեռնը, 1917 թ. վերջերից ռուսական զորքերի հեռանալը Անդրկովկասից, Բրեստի կողոպտիչ հաշտության պայմանագիրը և այլ անբարենպաստ հանգամանքներ այլևս ավելորդ էին դարձնում խոսել երկու Հայաստանների ինքնավարության իրականացման մասին։ Ստեղծված պայմաններում ՀՀԴ Բյուրոն, դուրս գալով կուսակցության ծրագրի շրջանակներից, նախ հրահանգ տվեց Արևելյան Հայաստանի անկախության առաջարկին, ապա և առաջադրեց Հայաստանի Արևելյան և Արևմտյան հատվածների միավորումով Միացյալ Հայաստանի անկախության պահանջը<sup>203</sup>։ Որքան էլ դժոխային լինեին այս ակտերին ծնունդ տվող պատճառները, այնուամենայնիվ, այն աստիճանաբար հայ ժողովրդի համար դարձավ միա ու արյուն։

<sup>201</sup> «Հայրենիք», 1931, թիվ 8, էջ 110։

<sup>202</sup> «Հ.Յ. Դաշնակցության ծրագիր», Կ. Պոլիս, 1908, էջ 17-18։

<sup>203</sup> «Հայրենիք», 1931, թիվ 8, էջ 106։

<sup>199</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 170, «Քաղվածքներ...» էջ 5։  
<sup>200</sup> «Հայրենիք», 1929, թիվ 5, էջ 68։

Հետևաբար անհրաժեշտ էր, որ հասունացած այս պահանջը նոր ձևակերպում ստանար նոր ծրագրի մեջ: Եվ այդ ձևակերպումը տրվեց Ընդհանուր ժողովում՝ համձին «Միացյալ և Անկախ Հայաստանի» մասին բանաձևի:

Ժողովում ծրագրային նշանակության փոփոխությունը կայանում էր ընդամենը հետևյալ երեք առանցքային կետերում.

ա) Նվիրագործել Անկախ և Միացյալ Հայաստանի հայտարարությունը և նրա ամբողջացման ու զարգացման ձգտել բոլոր գործությամբ, ժողովրդավար (դեմոկրատիկ) հանրապետության հիման վրա:

բ) Չեղյալ համարել կուսակցության նվազագույն ծրագրի Ռուսահայաստանի և Տաճկահայաստանի վերաբերյալ քաղաքական պահանջները:

գ) Ամբողջական ծրագրի վերաքննությունը հետաձգվում է հաջորդ Ընդհանուր ժողովին<sup>204</sup>:

Այսպիսով, 9-րդ համագումարը հանգում է իր ծրագրային գերագույն նպատակին՝ Միացյալ և Անկախ Հայաստան կերտելու գաղափարին: Ժողովի գրեթե մյուս բոլոր որոշումները բխում էին Միացյալ և Անկախ Հայաստանի ծրագրային հիմնապահանջից: Պետության արտաքին ու ներքին քաղաքականությունը իրականացնելիս՝ դարձյալ որպես հիմք պետք է համարվեր Միացյալ և Անկախ Հայաստանի հիմնանպատակը: Պետք է ասել, որ այն ժամանակ Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծումը միանգամայն իրականանալի գործընթաց էր:

Հիրավի, կուսակցության 9-րդ Ընդհ. ժողովը շրջադարձային, պատմական եղավ այն իմաստով, որ փաստորեն առանց կենսագործման չեղյալ համարվեց 1907-ի Վիեննայի 4-րդ Ընդհ. ժողովում ընդունված նվազագույն ծրագրի քաղաքական պահանջների բաժինը՝ Հայաստանի երկու հատվածների ինքնավարության մասին, և դրա փոխարեն որդեգրվեց Հայաստանի անկախության պահանջը:

Կուսակցության համաժողովը, բանաձևելով Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծման մասին պահանջը, ելնում էր այն հաստատ համոզումից, որ «ստեղծված պայմաններում Հայաստանի անկախությունը հայ աշխատավորության ֆիզիկական ապահովության և քաղաքական ազատագրության միակ գրավականն է»<sup>205</sup>:

Նոր ձևակերպում պետք է ստանային նաև կուսակցության նվազագույն ծրագրի մեջ առաջադրված քաղաքացիական, տնտեսական և մշակութային պահանջները, որովհետև դրանք նախատեսված ու համապատասխանեցված էին Թուրքիայի և Ռուսաստանի իրականությանն ու պայմաններին: Օրինակ՝ 1907 թ. ծրագրում խոսվում էր արքունական տիպի հողերի, պաշտոնյաների պարտադիր երկու-երեք գլխավոր լեզու իմանալու, մշտական գործի փոխարեն՝ ժողովրդական միլիցիայի մասին և այլն<sup>206</sup>: Մինչդեռ Հա-

յաստանի անկախության հռչակումից և ՀՅԴ հիմնական կառավարող կուսակցություն դառնալուց հետո նրա գործունեության գլխավոր դաշտն էր լինելու նորանկախ Հայաստանի Հանրապետությունը՝ նրա ազգային, քաղաքական, տնտեսական և մշակութային վերաշինությունը:

Կնշանակի 1907 թ. կուսակցության նվազագույն ծրագրի քաղաքական, տնտեսական և մշակութային բնույթի շատ պահանջներ ևս արդեն հնացել էին, ուստի՝ դրանք պետք է վերափոխվեին և համապատասխանացվեին ՀՀ կյանքի պայմաններին: Մասնավորապես խնդիր էր առաջադրվում. «Ռամկավարացնել պետության վարչական ամբողջ մեխանիզմը՝ վերացնելով միապետական կարգերի մնացորդները և կյանքի կոչելով ու գործունեության լայն ասպարեզ տալով տեղական ինքնավարություններին ու գյուղացիական կազմակերպություններին»<sup>207</sup>:

Սակայն Ընդհանուր ժողովը չէր կարող մի քանի շաբաթում ուսումնասիրել այն դժվարին խնդիրները, որոնք կապված էին կուսակցության ծրագրի քաղաքական վերաքննության հետ: Դրա համար էլ նա բավականացավ միայն մի քանի փոփոխություն կատարելով: Առաջինը, ինչպես արդեն ասվեց, ծրագրային ձևակերպում տրվեց Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարին, և երկրորդ՝ նվազագույն ծրագրի մեջ կատարեց մի քանի սրբագրություններ, որպեսզի այն կարողանար հիմք դառնալ կուսակցության գործնական աշխատանքների համար՝ մեր ազգային պետության մեջ<sup>208</sup>: Ժողովը հրահանգ տվեց նորընտիր Բյուրոյին, կուսակցական մարմիններին առաջժողովարկել նվազագույն ծրագրում արված մի քանի խմբագրական-սրբագրական բնույթի փոփոխություններով՝ մինչև հաջորդ տարի հրավիրվելիք հերթական Ընդհանուր ժողովը, որտեղ և նախատեսվում էր մեկամյա վերամշակումից, կյանքի փորձով հաշվառումից ու ստուգումից հետո միայն ընդունել կուսակցության փոփոխված և ամբողջական ծրագիրը: Ժողովը չուզեց դեպքերի տրամաբանությունից առաջ ընկնել, նախընտրեց ծրագրի վերաքննությունը հետաձգել առնվազն մեկ տարով՝ ամենից առաջ հետևելով ու սպասելով Փարիզի խաղաղության համաժողովում Հայկական հարցի լուծման արդյունքներին:

Պատմաքաղաքական հետազա աննպաստ հանգամանքների հետևանքով այլևս նպատակահարմար չգտնվեց կուսակցության վերամշակված և ամբողջացված ծրագրի ընդունումը:

\*\*\*

**Արտաքին քաղաքականություն.** - Յուրաքանչյուր համաժողովի աշխատանքներում ամենագնահատելին և արժեքավորը, թերևս, նրա ընդունած որոշումներն են: Կուսակցության ղեկավար մարմինների ներկայացուցիչների տված զեկուցումների ու հաշվետվությունների, տեղի ունեցած ելույթների ու

<sup>204</sup> «Զաղվածներ...», էջ 4-5, Ռուբեն, նշվ. աշխ., էջ 205:

<sup>205</sup> «Զաղվածներ...», էջ 7:

<sup>206</sup> «Հ.Յ. Դաշնակցության ծրագիր», Կ. Պոլիս, 1908, էջ 19-20:

<sup>207</sup> «Զաղվածներ...», էջ 8:

<sup>208</sup> «Հայրենիք», 1931, քիվ 8, էջ 110:

Գործնականում Ընդհանուր ժողովի որոշումները՝ Միացյալ և Անկախ Հայաստանի, ինչպես նաև Ղարաբաղի և Զանգեզուրի Հայաստանին կցման

Ռուբեն, նշվ. աշխ., էջ 185:

**Տնտեսական քաղաքականություն.** - Տնտեսական քաղաքականության հարցերում համաժողովի կայացրած որոշումներից առանձնապես սկզբունքային

217 «Հառաջ», 2 հոկտեմբերի 1919 թ.:

քային և կողմնորոշիչ դեր խաղաց հետևյալ բանաձևը. «Երկրի մեջ տնտեսություն ստեղծելու տեսակետից, անհրաժեշտ նախապայման համարելով դրամագլխի ազատ մուտքը, դաշնակցական կառավարությունը պիտի քաջալերի թե՛ օտար և թե՛ մասնավաճ, հայկական դրամագլխի մասնակցությունը երկրի վերաշինության, ճարտարարվեստի, հաղորդակցության և առևտրի զարգացման համար»<sup>218</sup>

Բանն այն էր, որ հասարակական-քաղաքական որոշ շրջանների կողմից հանրապետության ներսում և, հատկապես, դրսում այն թյուր միտքն էր տարածվում, թե Հայաստանի դաշնակցական կառավարությունը ոչ միայն չի քաջալերում մասնավոր տնտեսական (ձեռնարկչական) գործունեությունը, այլև ամեն կերպ արգելք է հանդիսանում ապրանքաշուկայական հարաբերություններին ընդհանրապես: Ցավոք՝ ՀՅԴ հասցեին համանման մեղադրանքներ արվում են նաև մեր օրերում: Այս ամենը արվում է՝ ելնելով այն տրամաբանական դատողությունից, որ ՀՅԴ իր բնույթով սոցիալիստական է, հետևաբար և դեմ կլինի մասնավոր սեփականությանը և շուկայական տնտեսությանը: Բայց իրականում այդպես չէր: ՀՅԴ միշտ էլ թույլատրելի է համարել սեփականության ձևերի բազմազանությունը՝ սկսած արտադրական ձեռնարկությունների ու հողի մասնավոր սեփականությունից, վերջացրած պետական-համաժողովրդական անօտարելի սեփականության վրա հիմնված կոոպերատիվ ու համայնական տնտեսություններով:

Իրականում Հայաստանի կառավարությունը, ինչպես և յուրաքանչյուր կառավարություն, հավաքական նախաձեռնության կողքին ամեն կերպ ուժ էր տալիս ու խրախուսում մասնավոր ձեռներեցությունը և «նույնիսկ դրամական նպաստ էր բաց թողնում անհատ արդյունաբերողներին՝ այս կամ այն տնտեսական ձեռնարկն սկսելու համար»<sup>219</sup>: Սույն որոշումը դարձավ ուղեցույց Հայաստանի կառավարության գործնական քաղաքականության համար: Այդ մասին ընդգծվեց նաև կառավարության հայտագրում: Եվ այս իմաստով այնքան էլ հիմնավոր չէ այն վարկածը, թե արտերկրի հայ դրամատերերը (առևտրաարդյունաբերական կապիտալը) իրենց կապիտալները չէին ներդնում Հայաստանի տնտեսության մեջ այն պատճառով, քանզի, իբր, վախենում ու խրտնում էին դաշնակցական կառավարության սոցիալիստամետ քաղաքականությունից: Թեև ՀՀ իռչակվել էր իբրև ռամկավարական հիմնական կողորժողություն, բայց պետք է տեսնել, որ այդ ռամկավարության հիմնական կողորժողությունը, տակավին ծանոթ չէր ժողովրդավարության շատ սկզբունքների: Ամբողջատիրական երկու դաժան (ցարական և սուլթանական) վարչակարգերին սովոր հայության երկու հատվածներում էլ հնարավոր չէր համապատասխան (միանգամից) ժողովրդավարություն արմատավորել: Դրա համար ժամանակ էր պահանջվում: Իսկ մինչ այդ, կյանքի բնականոն ռիթմը պահպանելու, անհիշխանական երևույթների դեմ պայքարելու համար կարևորվում

ու արդարացվում էին նաև հեղափոխական առանձին միջոցառումների դիմելու անհրաժեշտությունը<sup>220</sup>:

**Չորք.** - Դրոյի տված զեկուցման հիման վրա ընդունվեց համապատասխան որոշում՝ բոլոր քաղաքացիների պարտադիր երկամյա զինվորական ծառայության, բանակը բոլոր առումներով հայացնելու և այն հայոց պետության պաշտպանությանը ծառայեցնելու հրամայականի մասին<sup>221</sup>: Մարտունակ և որակյալ բանակ ունենալը կուսակցությունը տեսնում էր մի կողմից հզոր տնտեսության, իսկ մյուս կողմից ռազմիկների բարոյական կայունության ու հայրենիքին նվիրվածության մեջ:

**Փաղթականություն.** - Ընդի. ժողովը զբաղվեց նաև փաղթականության ու ներգաղթի հարցերով: Ներքին քաղաքականության վերաբերյալ ընդունված որոշումների 9-րդ (Թ) կետով նախատեսվում էր «աջակցել ու կազմակերպել դրսի հայության ներգաղթը Հայաստան»<sup>222</sup>: Կազմակերպական տեսակետից ժողովը խնդիր դրեց ուժեղացնել կուսակցական մարմինների գործունեությունը Երկրում (Արևմտյան Հայաստանում)՝ իբրև ներգաղթի իրագործման անհրաժեշտ նախապայման<sup>223</sup>:

Ինչպես արևմտահայ 2-րդ համագումարում, այնպես էլ ՀՅԴ այս ընդհանուր ժողովում, որպես առաջնահերթ քաղաքական նշանակության խնդիր, որոշվեց «պայմաններ ստեղծել արևմտահայ փախստականները դեպի իրենց ծննդավայրը՝ Երկիր ներգաղթեցնելու համար»<sup>224</sup>: Եվ պետք է ասել, որ Հայաստանի կառավարությունը բավականաչափ միջոցներ ու ջանքեր գործադրեց Հյուսիսային Կովկասում, Վրաստանում, Ադրբեջանում, Իրանում և Միջագետքում գտնվող փաղթականներին հայրենիք վերադարձնելու ու վերաբնակեցնելու ուղղությամբ: Բավական է ասել որ իրանահայ փաղթականության վերաբնակեցման, Միջագետքի ու Բաքվի փաղթականությանն օգնելու համար նախարարների խորհուրդը հատկացրեց 10.5 մլն. ռուբլի<sup>225</sup>:

1919 թ. դեկտեմբերի 4-ի կառավարության մի գրությունից տեղեկանում ենք, որ առաջիկայում Բաքվից, Թիֆլիսից և Գանձակից սպասվում է մոտ 80 հազար փաղթականների հոսք դեպի Հայաստան, որոնց ընդունման ու տեղավորման համար ձեռնարկվել են միջոցառումներ<sup>226</sup>: Սակայն Հայաստանի անկախության ու պետականության դեմ ուղղված կործանարար գործընթացները կասեցրին կուսակցության և կառավարության կանխագծումները ներգաղթի ասպարեզում:

**Կամավորական շարժում.** - Վերլուծելով Արևելյան և Հայաստանի Բյուրոների գործունեությունը՝ մասնավորապես հավանություն տրվեց կամա-

<sup>220</sup> «Զաղվածներ...», էջ 8-9:

<sup>221</sup> Նույն տեղում, էջ 10-11:

<sup>222</sup> «Զաղվածներ...», էջ 9:

<sup>223</sup> Նույն տեղում:

<sup>224</sup> «Համառոտ տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի», Ե., 1919, էջ 12:

<sup>225</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 11, ք. 141, գ. 14, մաս 2, ք. 7:

<sup>226</sup> Նույն տեղում, գ. 43, ք. 92:

<sup>218</sup> «Զաղվածներ...», էջ 13, «Հառաջ», 4 ապրիլի 1920 թ.:

<sup>219</sup> «Հառաջ», 4 ապրիլի 1920 թ.:

փորական շարժման կազմակերպմանը՝ այդ շարժումը նկատելով որպես «հայ ժողովրդի ինքնապաշտպանական մեկ պատմական փաստ և մեր քաղաքական ազատագրության ազդակ»<sup>227</sup>:

Չկամենալով վիճարկել նման գնահատականի իրավացիությունը՝ մյուս կողմից, որպես պատմական փաստ, ուզում ենք արձանագրել, որ Հայկական հարցին նպաստավոր լուծում տալու խոստումով նիկոլայների և փրոնցովների կողմից բորբոքվող այդ շարժումը, այնուամենայնիվ, շեղում էր ՀՅԴ 8-րդ Ընդհ. ժողովի նախանշած չեզոքության (յուլայության) մասին ուղեգծից, մասնավորապես որ Բյուրոյի անդամներ՝ Արամ Մանուկյանը, Արշակ Վառձյանը և էլի ուրիշներ դեմ են եղել դրան<sup>228</sup>: Ընդհանրապես, կամավորական շարժման ռազմաքաղաքական նշանակության մասին խոսելիս, գտնում ենք, որ նրա դերը չպետք է գերազնահատել: Հեղինակներ կան, որ այնպես ոգևորությամբ են գրում այդ մասին, որ, կարծես, եթե հայ կամավորական այդ փորքաթիվ խմբերը չլինեին, ռուսները չէին կարողանա գրավել Արևմտյան Հայաստանը: Հիրավի, ինչ դեր ու տեսակարար կշիռ կարող էին խաղալ մի քանի հազարանոց հայ կամավորները Անդրկովկասում գտնվող կեսմիլիոնանոց ռուսական բանակում:

**Մամուլ.** - Ընդհանուր ժողովը առանձին որոշում կայացրեց կուսակցական մամուլի մասին: Ամեն մի կուսակցության ու կառավարության ժողովրդավարության ու բացախսության աստիճանը կարելի է չափել նաև նրա մամուլով, նրանում թույլատրվող քննադատության ու ինքնաքննադատության ազատությամբ և կարծիքների բազմազանությամբ: Եվ պետք է ասել, որ թե՛ ամբողջ հանրապետությունում լույս տեսնող մի քանի տասնյակ անուն թերթերի ու ամսագրերի և թե՛ ՀՅԴ կուսակցական մամուլի համար հիմնականում ապահովված էր այդպիսի ազատության և բազմակարծության հնարավորություն:

Ժողովը հրահանգ տվեց նորընտիր Բյուրոյին ամեն կերպ նպաստելու կուսակցական մամուլի զարգացմանը: Պահանջվեց ունենալ մեկ կենտրոնական օրգան, որը պետք է լինեի կուսակցության գլխավոր ուղղության ու քաղաքականության արտահայտիչը: Այդ օրգանը դարձավ «Հառաջ»-ը: Կուսակցության գիտական օրգանն էր դառնալու «Դրոշակը», որի հրատարակությունը ընդհատվել էր Առաջին աշխարհամարտի տարիներից: Հետագա ամբարենպաստ հանգամանքները ևս հնարավորություն չտվեցին «Դրոշակի» լույսընծայմանը: Եվ այն սկսեց վերահրատարակվել միայն 1925 թվականից՝ ՀՅԴ 10-րդ (Ժ) Ընդհ. ժողովի որոշումով<sup>229</sup>:

**ՀՅԴ պատմություն.** - Ընդհ. ժողովը կազմեց հատուկ մարմին (Միքայել Վարանդյան, Ռուբեն Տեր-Մինասյան և Սիմոն Վրացյան)՝ կուսակցության արխիվները կարգի բերելու, պատմության վերաբերյալ նյութեր հավաքելու ու

«Դիվան ՀՅԴ» մատենաշարով հրատարակելու և կուսակցության պատմությունը գրելու համար<sup>230</sup>: Ավելի ուշ լույս տեսան «Դիվան»-ի երկու հատորները<sup>231</sup>, իսկ Մ. Վարանդյանը գրեց ՀՅԴ պատմությունը երկու հատորով և այլն<sup>232</sup>:

**ՀՅԴ երեսնամյակ.** - ՀՅԴ հիմնադրման երեսնամյակի առթիվ ժողովը որոշեց 1920 թ. աշնանը հանդիսավոր կերպով տոնել ՀՅԴ երեսնամյակը: Նախատեսվում էր 1922-ին արձան կանգնեցնել Հայաստանի մայրաքաղաքում ազատության համար զոհված բոլոր ընկերների հիշատակին: Այդ նպատակով կազմակերպվելու էր հանգանակություն և հայտարարվելու էր մրցույթ: Բացի այդ, որոշում ընդունվեց՝ մինչև 1922 թ. Հայաստանի մայրաքաղաքում ստեղծել ՀՅԴ պանթեոն, և այնտեղ փոխադրել Հայաստանից դուրս բաղված կուսակցության ղեկավար ընկերների աճյունները<sup>233</sup>: Սակայն, ինչպես ասում են, շաբաթն ավելի շուտ եկավ, քան ուրբաթը, և համաժողովի շատ կանխազգուշաներ մնացին անկատար:

**Գերագույն դատական ատյան.** - Ընդհ. ժողովը որպես նորույթ հիմնեց Գերագույն դատական ատյան, որը մնայուն բնույթ ուներ: Դատական ատյանի նախագահ ընտրվեց Իշխան Հովսեփ Արղությանը: Վերջինս հետագայում (Իրանում Հայաստանի դեսպան նշանակվելուց հետո) փոխարինեց տեղակալը՝ Հովսեփ Տեր-Դավթյանը, իսկ անդամներն էին Լևոն Թադևոսյանը և Մերուժան Օզանյանը: Անաչառությունը ապահովելու նպատակով Դատական ատյանի անդամը կուսակցության որևէ կազմակերպական մարմնի անդամ չէր կարող լինել<sup>234</sup>:

Գերագույն դատական ատյանը իրավասու էր քննության առնելու անհատ դաշնակցականների, ԿԿ-ների, կառավարության դաշնակցական պաշտոնյաների, խորհրդարանի ՀՅԴ խմբակցության անդամների, Բյուրոյի դրամական, քրեական և հակակարգապահական գործերը և համապատասխան վճիռ կայացնել: Դատական ատյանը խախտումներ, հանցանքներ, անօրինականություններ հայտնաբերելու և արձանագրելու ղեկավար այդպիսիների գործերը հանձնում էր պետական դատարան կամ էլ իր հայեցողությամբ վճիռ էր արձակում՝ մինչև կուսակցությունից վտարելը<sup>235</sup>:

Այս մարմինն ուներ կուսակցության մեջ մի տեսակ վերահսկիչ և վերստուգիչ բարձրագույն ֆունկցիա: Դատական ատյանի վճիռը գործնականում վերջնական էր: Այն վերաքննելու և բեկանելու իրավունք ուներ միայն Ընդհանուր ժողովը: Եվ պետք է ասել, որ դատական ատյանը եղել է շատ գործուն մարմին: Նրա կայացրած վճիռները անկասելի էին ու արդարացի, որոնք հե-

<sup>230</sup> ՀՀ ԶԿԿ ՊԿԱ, Ժ. 4047, ց. 1, գ. 157, ք. 3, «Հառաջ», 13 նոյեմբերի 1919 թ.:

<sup>231</sup> «Դիվան ՀՅԴ», հ. 1, Պոսքըն, 1934, հ. 2, Պոսքըն, 1934:

<sup>232</sup> Մ. Վարանդյան, ՀՅԴ պատմություն, հ. 1, Փարիզ, 1932, հ. 2, Գահիրե, 1950:

<sup>233</sup> «Զաղվածներ...», էջ 20:

<sup>234</sup> Հ. Տասնապետյան, ՀՅԴ կազմակերպական կառույցի հուլիսյան, Պեյրուք, 1985,

էջ 112:

<sup>235</sup> «Հառաջ», 9 հունվարի 1920 թ.:

<sup>227</sup> «Զաղվածներ...», էջ 16:

<sup>228</sup> Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 254, 338:

<sup>229</sup> «Դրոշակ», 1925, թիվ 1, էջ 1:

տամուտ էին նախ և առաջ ՀՅԴ անդամի, անկախ զբաղեցրած պաշտոնից ու դիրքից, անձնական մաքրության ու գաղափարաբարոյական անաղարտության պահպանմանն ու ամրապնդմանը:

**Ընտրություններ.** - ՀՅԴ Բյուրոների՝ Արևելյան և Հայաստանի հնգամյա գործունեությունը գնահատելիս՝ Ընդհանուր ժողովը խիստ քննադատության ենթարկեց երկուսին էլ: Չնայած երկու Բյուրոների ունեցած մարդկային կորուստներին, այնուամենայնիվ, փաստվեց, որ անցած հինգ տարիների վայրիվերումների ընթացքում նրանք չեն կարողացել մշակել մեկ ընդհանուր ուղեգիծ և ինչպես հարկն է դեկավարել կուսակցական կյանքը<sup>236</sup>: Դրա փոխարեն Բյուրոների անդամները, իրերի բերումով, ավելի հաճախ ստանձնել են գործադիր պաշտոններ՝ ընդգրկվելով Ազգային Բյուրոյում և Խորհրդում, Սեյմում, Անդրկովկասյան կառավարությունում և այլն<sup>237</sup>: Արդյունքում՝ կուսակցությունը չի ունեցել միասնական ուղեգիծ (տեսակետ), նրա մարմինները իրարից կտրված են եղել և գործել են տարբեր ուղղություններով: Կուսակցության նոր բարձրագույն գործադիր մարմին՝ Բյուրո ընտրելիս, ցանկություն հայտնվեց, որպեսզի նա, հավաքական վճիռներ կայացնելու հիման վրա, կարողանա կորոշիմացնել կուսակցական մարմինների գործունեությունը:

Նախկին երկու Բյուրոների (Հայաստանի և Արևելյանի) փոխարեն ընտրվեց մեկ Բյուրո՝ բաղկացած յոթ անդամից և երեք փոխանդամից<sup>238</sup>: Այդ նշանակում էր, որ կուսակցությունը, ապակենտրոն երկու Բյուրոների փոխարեն այժմ պիտի ունենար ՀՅԴ մեկ Բյուրո՝ գործադիր մարմնի իրավունքներով: Սրան համապատասխան՝ պետք է փոփոխվեր նաև կուսակցության Կանոնադրությունը:

Նորընտիր Բյուրոյի կազմում էին անդամներ՝ Համազասպ Օհանջանյանը, Աբրահամ Գյուլխանդանյանը, Սիմոն Վրացյանը, Արշակ Ջամալյանը, Սարգիս Արարատյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Արմեն Գաբուն (Փաստրմաճյան), փոխանդամներ՝ Գևորգ Ղազարյանը, Արսեն Շահմազյանը և Վահան Նավասարդյանը: Բյուրոյի նիստերին վճռական ձայնի իրավունքով մասնակցում էին միայն անդամները: Բյուրոյի նստավայրը Հայաստանի մայրաքաղաքն էր:

\*\*\*

Ընդհանուր ժողովը անդրադարձավ կուսակցության կազմակերպական (շինարարության) խնդիրներին քանզի հատկապես ՀՀ առաջացումով նրա գործունեության համար հայրենիքում և դրսում ստեղծվել էին նոր պայմաններ: Ուստի անհրաժեշտ էր կուսակցության կազմակերպական աշխատանքները կատարելագործել՝ համապատասխանեցնելով նոր պայմաններին ու պահանջներին: Նախկին անլեզավ ու կիսալեզավ ՀՅԴ դարձել էր միանգա-

մայն ազատ ու մույնիսկ կառավարող կուսակցություն իր անկախ հայրենիքում: Այստեղից էլ նյութական անհրաժեշտություն էր դարձել կուսակցության կազմակերպական կանոնների փոփոխությունը:

Ամենից առաջ կանոնադրական-կազմակերպական առումով պետք է լուծվեր երկու կարևոր խնդիր: Նախ, հաշվի առնելով, որ ՀՅԴ դարձել էր կառավարող կուսակցություն, անհրաժեշտություն էր առաջացել, թույլ չտալ միևնույն անձին համատեղելու կուսակցական և պետական ղեկավար պաշտոններ: Սա ընդունված կարգ էր և բնորոշ էր բոլոր քաղաքակիրթ ժողովրդավարական պետություններին: Համաձայն այս փոփոխության (հոդված 65)՝ «Կառավարության դաշնակցական անդամները միաժամանակ կուսակցական որևէ մարմնի անդամ չեն կարող լինել»<sup>239</sup>: Այդ նշանակում էր, որ միանգամից Բյուրոյի չորս անդամներ, որոնք կառավարության մեջ էին որպես նախարարներ (Ա. Գյուլխանդանյան և Ս. Արարատյան) կամ ունեին պետական պաշտոններ արտասահմանում (Հ. Օհանջանյան և Ա. Գաբուն), կամ պետք է թողնեին պետական պաշտոնները, կամ էլ գրկվեին Բյուրոյի անդամությունից: Արդյունքում կառավարության մեջ գտնվող ՀՅԴ բյուրոյի անդամները հարկադրված դադարեցին գործունե կերպով մասնակցել Բյուրոյի աշխատանքներին: Կուսակցության գերագույն գործադիր մարմնի բեռը ընկավ Ս. Վրացյանի, Ա. Ջամալյանի և Ռ. Տեր-Մինասյանի ուսերին, որոնց օգնում էին երեք փոխանդամները՝ Գ. Ղազարյանը, Վ. Նավասարդյանը և Ա. Շահմազյանը: Ի դեպ՝ վերջինս պատասխանատու պաշտոն ուներ Ջանգեզուրում:

Այնուհետև, մյուս կանոնադրական փոփոխությունն այն էր, որ, նկատի ունենալով միևնույն տարածքում (շրջանում) իրարից անկախ և իրար զուգահեռ կուսակցական մարմինների (տեղական և գաղթական) գոյությունը չի համապատասխանում կուսակցության ծրագրային և կանոնադրական պահանջներին, ժողովը որոշեց.

«ա) Թույլ չտալ մի ԿԿ-ի սահմաններում մեկ այլ ԿԿ-ի գոյությունը և բ) տվյալ ԿԿ-ի սահմանների մեջ եղած բոլոր կոմիտեները պիտի ենթարկվեն այդ շրջանի ԿԿ-ին միայն»<sup>240</sup>: Պատգամավոր Ռ. Տեր-Մինասյանը հավաստում էր, որ ժողովը նման որոշման հանգեց այն հիմնավորմամբ, կուսակցության մեջ նոր կուսակցություն ստեղծելու տրամադրություններ կային<sup>241</sup>:

Համաձայն այս որոշման ու նոր մշակված կանոնադրության պահանջների՝ «Երկրի» ԿԿ-ը իրահանգ է ստանում Բյուրոյից՝ միանալ Երևանի ԿԿ-ին և արևմտահայ կոմիտեները միացնելու ու ձուլելու տեղական կազմակերպություններին: Ընդ որում՝ «Երկրի» ԿԿ-ի այն անդամները, որոնք գտնվում էին Երևանում, պետք է միանային Երևանի ԿԿ-ին, իսկ մյուս շրջաններում գտնվող անդամները՝ տեղի կոմիտեները<sup>242</sup>: Այսպիսի որոշում կայացնելիս՝

<sup>239</sup> «ՀՅԴ կազմակերպական կանոններ», Ե., 1919, էջ 13:

<sup>240</sup> «Քաղվածներ...», էջ 23, Ռուբեն, նշվ. աշխ., էջ 151:

<sup>241</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 154:

<sup>242</sup> «Հառաջ», 15 նոյեմբերի 1919 թ.:

<sup>236</sup> Հ. Տասնապետյան, *Մույն տեղում*, էջ 99:

<sup>237</sup> «Քաղվածներ...», էջ 14-15:

<sup>238</sup> «ՀՅԴ կազմակերպական կանոններ», Ե., 1919, էջ 9:



Ընդհանուր ժողովը ելնում էր այն միասնական համոզմունքից, որ Միացյալ Հայաստանի հռչակումով պետք է վերանան հատվածային խնդիրները կուսակցության ներսում, քանզի ամեն վայրի համար կուսակցության ծրագիրը մեկն է:

Ընդհանուր ժողովը նորոգման էր հարստականություն դրեց վերացնել երկու հատվածների միջև եղած տարակարծություններն ու անվստահությունը, ստեղծել միաձուլ կազմակերպություն և բոլոր տարրերին լծել կուսակցական և պետական շինարար աշխատանքի<sup>243</sup>: Բյուրոն պետք է քանդեր զուգահեռ կազմակերպությունները և դրանց փոխարեն ստեղծեր նոր՝ ձուլելով երկուսին իրար հետ: Ի դեպ՝ կանոնադրական այս սկզբունքը տարածվում էր հիմնականում ՀՀ կազմակերպությունների վրա և պարտադիր չէր գաղութներին (հայկական գաղթօջախներին)<sup>244</sup>:

Ի կատարումն ՀՅԴ 9-րդ Ընդհ. ժողովի որոշման և Բյուրոյի կարգադրության՝ Երևանի և «Երկրի» Կենտրոնական Կոմիտեները 1919 թ. նոյեմբերի 15-ի միացյալ նիստում որոշեցին՝ միանալով կազմել մեկ ԿԿ և այսուհետ գործել «Երևանի ԿԿ» անունով: Իսկ նոյեմբերի 24-ի Երևանի ԿԿ-ի և Երկրի ԿԿ-ի հրապարակած համատեղ շրջաբերականով հրահանգվում էր շրջանների արևմտահայ և տեղական բոլոր մարմիններին ու ընկերներին. «Անհապաղ միանալ՝ կազմելու համար մի մարմին և միասին վարելու տեղական կուսակցական գործերը»<sup>245</sup>:

Կուսակցության արևմտահայ արտատարածքային հատվածների ձուլման ու կենտրոնացման գործը հաջողությամբ իրականացվեց հատկապես Վ. Խորենու, Կորյունի, Մ. Օզանյանի, Հ. Դեվեճյանի, Վ. Քրմոյանի, Կ. Սասունու, Վ. Նավասարդյանի, Նորիսյանի և ուրիշների թափած եռանդուն ջանքերի շնորհիվ<sup>246</sup>: Արդեն 1919 թ. վերջերին միավորումը հիմնականում ավարտվել էր: Հաջողվեց առանց ներքին ցնցումի ստեղծել միաձուլ կազմակերպություն:

Կանոնադրական այս էական փոփոխությունը ամենեւին էլ չէր հակառակում կուսակցության ապակենտրոնացման ոգուն և, ինչ խոսք, նպաստեց նրա շարքերի միասնության ու համախմբվածության ամրապնդմանը:

Կուսակցության նոր հաստատված և շուտով լույս տեսած Կանոնագրով<sup>247</sup> ՀՀ բաժանվեց կուսակցական երեք կազմակերպական շրջանների՝ Երևանի («Մրգաստանի»), Ալեքսանդրապոլի («Շիրակի») և Կարսի («Ջրաբերդի») Կ. Կոմիտեությունների, ինչպես նաև երկու՝ Ջանգեզուրի ու Լեռնային Ղարաբաղի կոմիտեությունների: Վերջիններս ուղղակիորեն կապված էին

Բյուրոյի հետ՝ ընդգծելու համար այդ շրջանների վրա Հայաստանի ունեցած անվիճելի իրավունքը<sup>248</sup>:

Կուսակցության կազմակերպական միասնության ամրապնդման շնորհիվ՝ կրճատվեց (պակասեց) կուսակցական մարմինների թիվը, ուժեղացվեց դրանց շարժունակությունը: Այսպես, եթե նախքան Ընդհանուր ժողովը ՀՅԴ ամփոփված էր կուսակցության 26 մարմիններում (Բյուրոն, ԿԿ-ներ և կոմիտեություններ), ապա ժողովից հետո իրականացված կազմակերպական վերակառուցմամբ բողոքվեց ընդամենը 16 մարմին, այսինքն՝ կրճատվեց 10-ով<sup>249</sup>:

Որպես նորույթ, հաշվի առնելով երկաթուղու աշխատանքի կարևորությունը ՀՀ-ում, հիմնվեց ոչ-տարածքային «Երկաթուղիների Կ. Կոմիտեություն», և երկաթուղային աշխատողների (ուր հաշվում էր մոտ 6000 մարդ) կազմակերպման ու նրանց վրա հսկողության գործը հանձնարարվեց ՀՅԴ Բյուրոյի անդամ Ա. Ջամալյանին: Երկաթուղային Կ. Կոմիտեի ծավալած արդյունավետ կազմակերպական, քաղաքական-դաստիարակչական գործունեության շնորհիվ՝ զգալիորեն բարելավվեց երկաթուղու աշխատանքը: Այդ կոմիտեի ջանքերով կառավարությունը հիմնականում բավարարում տվեց այդ համակարգում աշխատող գործադուլավորների արդարացի պահանջներին<sup>250</sup>:

ՀՅԴ կուսակցության կազմակերպական օղակները ստորաբաժանվում էին հետևյալ կարգով՝ գյուղական, թաղային, գավառակային, գավառական, քաղաքային, Կենտրոնական կոմիտեների և Բյուրոյի<sup>251</sup>:

Կուսակցությունը ճյուղավորված էր հանրապետության բոլոր անկյուններում: Նրա շարքերում էին ընդգրկված սոցիալական գրեթե բոլոր խավերի ներկայացուցիչներ՝ առաջին հերթին աշխատավոր զանգվածներ՝ գյուղացիներ, բանվորներ, արհեստավորներ, ինչպես նաև մտավորականներ, ծառայողներ, ուսանողներ: Նա իր կազմակերպական ցանցն ուներ նաև աշակերտության մեջ: Ազգային կազմի տեսակետից ՀՅԴ կազմակերպություններ կային նաև ասորիների և եզդիների շրջանում: Չնայած նոր Կանոնադրությամբ անդամակցության պայմանները դժվարացվեցին (պահանջվում էր 7 հոգու երաշխավորություն), այդուհանդերձ՝ գնալով կուսակցության շարքերն աճում էին:

Սակայն, ցավոք, անկախ պետականություն կերտող 9-րդ համաժողովի նախագծած որոշումները և կազմակերպական սկզբունքները, դեպքերի հետագա աննպաստ զարգացման հետևանքով հնարավոր չեղավ մինչև վերջ հետևողականորեն կենսագործել:

1919 թ. նոյեմբերի 2-ին Երևանում փակվեց ՀՅԴ 9-րդ Ընդհ. ժողովը, որի աշխատանքները տևեցին մեկ ամսից ավելի՝ ուղիղ հինգ շաբաթ:

<sup>243</sup> Ռուբեն, նշվ. աշխ., 156:

<sup>244</sup> Նույն տեղում, էջ 159:

<sup>245</sup> «Աշխատավոր», 10 դեկտեմբերի 1919 թ.:

<sup>246</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 158:

<sup>247</sup> «ՀՅԴ կազմակերպական կանոններ», Երևան, 1919:

<sup>248</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 157-159, «Ազգակ շաբաթոյակ», 1973, թիվ 37, էջ 586:

<sup>249</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 159:

<sup>250</sup> Նույն տեղում, էջ 161:

<sup>251</sup> «ՀՅԴ կազմակերպական կանոններ», Ե., 1919, էջ 4:

Այս համագումարի արդյունքները ամփոփելիս և նրա նշանակությունը գնահատելիս՝ այն պետք է որակել որպես **հայկական պետականության գաղափարի կայացման ու ամրապնդման համագումար**։ Այս համագումարով է, որ ՀՀԴ հրաժարվում է մինչ այդ որդեգրած ինքնավարության նպատակադրումից և հաստատականորեն իր դրոշի վրա պարզում «Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան» ստեղծելու նվիրական ձգտումը։

## 5. Խորհրդարանը և կառավարությունը

ՀՀ, որպես ռանկավար հանրապետություն, տակավին չուներ Սահմանադրություն։ Այն պետք է ընդունվեր միացյալ հայկական պետության ստեղծումից հետո։ Պետության գլուխ կանգնած էին խորհրդարանը և կառավարությունը։ Հայաստանի խորհրդարանը մեկպալատանի էր։ ՀՀ չուներ նախագահ (պրեզիդենտ)։ Նախագահական համակարգ մտցնելը նույնպես կնախվում էր Հայկական հարցի լուծման և Սահմանադիր ժողովի հրավիրման հետ։ Իսկ մինչ այդ նախագահի իշխանությունը տրոհված էր խորհրդարանի և կառավարության միջև։

Հանրապետության ամենաբարձր պաշտոնատար անձը համարվում էր վարչապետը։ Չնայած սահմանադրության բացակայությանը՝ ակներև է այն փաստը, որ և՛ խորհրդարանը, և՛ կառավարությունը առաջնորդվում էին հանրապետական, ռանկավար կառավարման սկզբունքներով և միտում ունեին դառնալու այդպիսին։

Խորհրդարանի և կառավարության գործունեության ու փոխհարաբերությունների ողջ ընթացքում մենք հանդիպում ենք դեպքերի, երբ կառավարությունը երբեմն անտեսում էր խորհրդարանի գոյությունը, գերազանցելով իր իրավասության (լիազորությունների) սահմանները՝ շրջանցում նրան։ Իսկ խորհրդարանն էլ, կամա թե ակամա, հաճախ հաշտվում էր ստեղծված կացության հետ։

Հանրապետության ռանկավար կառավարման համակարգի արմատավորման ուղղությամբ նշանակալի ձեռնարկ պետք է համարել այն, որ 1919 թ. մայիսի 23-ին նախարարների խորհրդի ընդունած օրենքով ՀՀ մտցվեցին գեմստվային ինքնավարություններ, որոնց ընտրակարգը չէր տարբերվում խորհրդարանի ընտրություններից<sup>252</sup>։ Բացի այդ, Երևանում հիմնվեց դատական պալատ, օկրուգային դատարան և սենատ։ Վերացվեցին նախկին դասային ու հաշտարար դատարանները<sup>253</sup>։

Խորհրդարանի իրավասության մեջ էր մտնում նախարարների խորհրդի առաջարկությամբ (ներկայացմամբ) դատական պալատի և Շրջանային

դատարանի անդամների հաստատումը<sup>254</sup>։ Խորհրդարանին էր վերապահվում դատական վճիռներով (կարգով) դատապարտյալներին ներում շնորհելը, նրանց գործը վերաքննության տալը և այլն։ Խորհրդարանին էր վերապահված նաև սենատին և դատական պալատին վերաբերող օրենքների, քրեադատավարության կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու իրավունքը<sup>255</sup>։

Դեռ 1919 թ. հունիսի 5-ից, երբ արձակվել էր Հայաստանի խորհուրդը և նրա օրենսդրական իրավասությունները անցել էին կառավարությանը, հաջորդ օրը՝ հունիսի 6-ին, նախարարների խորհրդի ընդունած օրենքի հիման վրա, նա իրեն իրավունք վերապահեց, արտակարգ հանգամանքների թելադրանքով, ամբողջ հանրապետությունում կամ նրա առանձին շրջաններում հայտարարել ռազմական դրություն ու հիմնել ռազմադաշտային դատարաններ։ Այսպես, օրինակ, երբ 1919 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Դիլիջան-Ղազախի գավառը ազգամիջյան բախումների հետևանքով հայտնվեց բացառիկ ծանր պայմաններում, նախարարների խորհրդի հունիսի 6-ի օրենքով զավառում մտցվեց ռազմական դրություն, իսկ Դիլիջանի ջոկատի պետին թույլատրվեց տեղում հիմնել ռազմադաշտային դատարաններ։ Եվ պետք է ասել, որ դեռ ցարիզմի և ժամանակավոր կառավարության ժամանակներից նախկին օրենքներով պահպանվել ու գործում էին ռազմադաշտային դատարանները։ Այդպիսիք գործել էին Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում և այլն։

Արդեն 1919 թ. սեպտեմբերին Հայաստանի նորընտիր խորհրդարանում էսէռ պատգամավոր Լ. Թումանյանը հարցապնդում է անում հունիսի 6-ի այդ օրենքը վերանայելու մասին։ Հիշյալ պատգամավորը հարց է տալիս, թե մնան օրենք ինչո՞ւ պետք է մտցնել նախարարների խորհուրդը և ոչ թե խորհրդարանը<sup>256</sup>։ 1919 թ. սեպտեմբերի 24-ին ՀՀ ռազմական նախարար գեմ.-մայոր Արարատյանը հրաման է արձակում՝ կանգնեցնելու ռազմադաշտային դատարանների գործունեությունը մինչև որ խորհրդարանը համապատասխան ընթացք կտա նախարարների խորհրդի հիշյալ օրենքին<sup>257</sup>։

Հանրապետությունում ժողովրդավարական իրավակարգի հաստատման ճանապարհին էական քայլ պետք է համարել նաև այն, որ 1920 թ. հունվարի 2-ին խորհրդարանի հաստատած նոր օրենքով՝ իր ուժը կորցրած համարվեց 1919 թ. հուլիսի 7-ի կառավարության հրապարակած օրենքը «Արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի մասին»։ Համաձայն այս նոր օրենքի՝ Արտակարգ քննիչ հանձնաժողովում եղած գործերը պետք է հանձնվեին ընդհանուր (քաղաքացիական) դատական քննիչներին, իսկ ար-

<sup>254</sup> Նույն տեղում, Ֆ. 202, ց. 1, գ. 333, թթ. 4-5։

<sup>255</sup> Նույն տեղում, գ. 303, թ. 11։

<sup>256</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 198, ց. 1, գ. 36, թ. 5։

<sup>257</sup> Նույն տեղում, թ. 3։

<sup>252</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 422, թ. 21։

<sup>253</sup> Նույն տեղում, թ. 21 և 23։

տակարգ դատարանի գործերը՝ Շրջանային դատարանին<sup>258</sup>։ Սույն օրենքի գործադրման պատասխանատվությունը դրվում է արդարադատության նախարարության վրա։

Կառավարության և խորհրդարանի ընդունած օրենքների բնույթից ու բովանդակությունից դժվար չէ կռահել, որ կառավարությունը որպես կանոն հակված է եղել ընդունել այնպիսի օրենքներ ու օրենսդրական ակտեր, որպեսզի արտակարգ օրենքներ, հանձնաժողովներ ու դրություններ մտցնելով՝ ուժեղացնի կոշտ իշխանությունը, վերացնի (համահարեցնի) օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատվածությունը, իսկ խորհրդարանն էլ իր բնույթին ու խաղաղասիրական էությանը համապատասխան՝ հակված էր երկիրն ու հասարակությունը ղեկավարել քաղաքացիական, ռամկավար բնույթի օրենքներով։ Բայց, ցավոք, դեպքերի ու իրադարձությունների աննպաստ թելադրանքով ժամանակ առ ժամանակ խորհրդարանը հարկադրված էր լինում կառավարության ճնշման տակ զիջումների գնալ։

Այն պահերին, երբ կառավարությունը ստանձնում էր օրենսդրական իրավասություններ, նա աշխատում էր գործող օրենսդրության մեջ կատարել այնպիսի փոփոխություններ, որպեսզի հնարավորին չափ սահմանափակվեր դատարանի լիակատար անկախությունը։ Այսպես՝ նախարարների խորհուրդը 1919 թ. հուլիսի 8-ի նիստում քաղաքացիական դատավարության օրենսգրքի երկու հոդվածներում կատարեց հետևյալ փոփոխությունը։

Հոդ. 945.- «Օրինական ուժ ստացած դատական վճիռները, նախքան նրանց ի կատար ածելը, արդարադատության նախարարի միջոցով ներկայացվում են ՀՀ նախարարների խորհրդին՝ ի հայեցողություն» և հոդ. 946.- «Հանրապետության նախարարների խորհրդի որոշումը դատարանի վճիռն ստիճան արդարադատության նախարարը առաջարկում է ամփոփապես այն դատարանին, որտեղ կայացել է վճիռը»<sup>259</sup>։

Վերոհիշյալ հոդվածներից ստացվում է, որ նախարարների խորհուրդը կարող էր անհարկի վիճարկել դատարանի վճիռը, հավանություն չտալ դրան և այլ որոշում կայացնել։ Այս ամենը նշանակում է, որ չէին ապահովվում դատարանի լիակատար անկախությունը և նրա վճիռների վերջնական ու անկասելի լինելու հանգամանքը։

Չնայած խորհրդարանը և կառավարությունը կուսակցական պատկանելության առումով գրեթե միատարր էին և տանում էին միևնույն կուսակցության քաղաքական ուղեգիծը, սակայն պետք է ասել, որ գործնական աշխատանքի ոլորտում միշտ չէ, որ նրանց միջև ամեն ինչ հարթ էր ընթանում։ Երբեմն իրար էին բախվում գործադիր և օրենսդիր իշխանությունների գերատեսչական շահերը։ Առանձին դեպքերում արձանագրվել են կոնֆլիկտային իրավիճակներ՝ խորհրդարանի ու կառավարության միջև։ Սրա տիպիկ ար-

տահայտությունն էր 1920 թ. ապրիլի 7-ի (թիվ 80-րդ) նիստը, ուր քննվեց միլիցիայի ենթակայության խնդիրը։

Բանն այն է, որ 1919 թ. մայիսի 23-ի զեմստվային ինքնավարությունների մասին ժամանակավոր օրենքի 2-րդ հոդվածում կառավարությունը մտցրել էր մի ծանոթություն, համաձայն որի՝ ոստիկանությունը ենթարկվում էր իրեն՝ կառավարությանը։ Արդ, երբ անցել էր շուրջ մեկ տարի, խորհրդարանը, հարստացած նոր կենսափորձով, համապատասխան օրինագծով հարց է հարուցում՝ տեղերում ոստիկանությանը դուրս բերել գավառային կոմիսարների ենթակայությունից և հանձնել գավառական զեմստվային ինքնավարություններին։ Ձեկուցող, պատգամավոր Ս. Թորոսյանը բացատրում էր՝ այդ նշանակովի գավառական կոմիսարները գործում են ինքնագլուխ, բյուրոկրատիկ մեթոդներով և հաճախ թույլ են տալիս զեղծումներ ու շահատակություններ։ Ի դեպ՝ այդպիսիներից մեկն էր Էջմիածնի գավառական կոմիսար Գևորգ Ալբունյանը, որը կաշառակերության համար ՀՅԴ Գերագույն դատական ատյանի վճռով վտարվեց կուսակցությունից և նրա գործը հանձնվեց պետական դատարան<sup>260</sup>։

Տեղական ոստիկանությունը գավառական կոմիսարների ենթակայությունից դուրս բերելու և նորահիմն զեմստվային ինքնավարություններին հանձնելու մասին օրինագծին առարկում է մ.գ. նախարար Ա. Գյուլխանդամյանը՝ պատճառաբանելով, թե իբրև կառավարությունը ծանոթ չէ խնդրին և առաջարկում է հետաձգել օրինագծի քննությունը։ Օրենսդրական հանձնաժողովի անդամներ՝ Հ. Տերտեռյանը և Գ. Վարչամյանը հավաստում են, որ դեռ երեք շաբաթ առաջ այս խնդրի շուրջ բանակցել են մ. գ. նախարարության պաշտոնյաների հետ, սակայն համաձայնության չեն հասել։ Իսկ հարցի քննարկումից չորս ամիս առաջ Դիլիջանի զեմստվային ինքնավարությունը առաջարկել էր տեղի միլիցիան հանձնել իր ենթակայությանը, բայց դարձյալ մ. գ. նախարարությունը մերժել էր<sup>261</sup>։

Պատգամավորների հիմնավոր փաստարկներից հետո նախարար Ա. Գյուլխանդամյանը վրդովված հեռանում է խորհրդարանի դահլիճից։ Վարչապետ Ալ. Խատիսյանը փորձում է պաշտպանության տակ առնել նախարարին ու նախարարությանը՝ առաջարկելով հետաձգել հարցի քննարկումը և օրինագիծը տալ կառավարության եզրակացության։ Պատգամավոր Ս. Թորոսյանը տեղեկացնում է, որ կառավարությունը ծանոթ է օրինագծին։

Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը նույնպես փորձում է հետաձգել տալ հարցի քննարկումը և օրինագիծը ուղարկել կառավարության կարծիքի, սակայն դա հիմնում լավում են ձայներ, աղմուկ։ Մի խումբ պատգամավորներ հայտարարում են. «Նախագահությունը կամայականություններ է կատարում, մենք թույլ չենք տա շարունակելու նիստը, մինչև չքվեարկվի այս

<sup>258</sup> Նույն տեղում, *Ֆ. 202, ց. 1, գ. 333, ք. 70*, «ՀՀ օրենքների հավաքածու 1920 թ.», էջ 1-2:  
<sup>259</sup> «Կառավարության լրաբեր», 2 հուլիսի 1919 թ.:

<sup>260</sup> «Հառաջ», 9 հունվարի 1920 թ.։  
<sup>261</sup> ՀՀ ՊԿՊԱ, *Ֆ. 198, ց. 1, գ. 52, ք. 43*։

օրինագիծը»<sup>262</sup>։ Նախագահ Ավ. Սահակյանը ստիպված ինքնավարությունների մասին ժամանակավոր օրինագիծը, արված համապատասխան փոփոխությամբ, դնում է քվեարկության, և որը ընդունվում է (26 կողմ, 1 դեմ և 4 ձեռնպահ)։ Միաժամանակ, սահմանվում է, որ միլիցիան ենթարկվելով ինքնավարություններին՝ նրա ծախսերը պետք է որ հոգան ինքնավարությունները<sup>263</sup>։ Վերոհիշյալ փաստը ցոյց է տալիս, որ խորհրդարանը անդեմ ու անկերպարան մարմին չէր։ Այնտեղ շատ հաճախ կառավարությանը քննադատողի, կառուցողական ընդդիմության ու հակակշռի դերում հանդես էր գալիս ամենից առաջ ՀՅԴ խմբակցությունը, համեմայն դեպս նրա անդամների մեծամասնությունը։

Խորհրդարանի և կառավարության միջև թերևս ամենասուր բախումը տեղի ունեցավ 1920 թ. հունվարի սկզբին, երբ ՀՅԴ խորհրդարանական խմբակցության բանավեճերի (դեբատների) ընթացքում դրվեց վարչապետի ու կառավարության վստահության հարցը։

Պետք է ասել, որ մինչ կառավարության հունվարյան ճգնաժամը, դեռ 1919 թ. հոկտեմբերի սկզբներին հայացքների ու մոտեցումների որոշակի թեւեռացում էր գոյացել խորհրդարանի և կառավարության միջև՝ ինժեներ Ս. Ջավախչիյի տնտեսական ծրագրի նախագծի ֆինանսավորման կապակցությամբ 4 մլն ռուբլի հատկացնելու օրինագծի շուրջը։ Խորհրդարանում քննադատության ենթարկվեց ռուս ինժեներ Ս. Ջավախչիյի գլխավորած հիդրոտնտեսական ծրագրի (էլեկտրակայաններ ու ռոռզման համակարգեր կառուցելու, հողերի յուրացման, ճահիճների չորացման, հեղեղների դեմ պայքարելու) նախագծի մշակման կապակցությամբ միջոցների փոշիացումը։ Մինչ օրինագծի քննարկումը Հայ ինժեներների միությունը բացասական կարծիք էր հայտնել ռուս ինժեների ծրագրի վերաբերյալ։ Այս խնդրով հարցապնդում արվեց կառավարությանը։ Կասկածելով այդ ծրագրի իրատեսության ու օգտավետության վրա՝ քննադատական ելույթներով հանդես եկան պատգամավորներ՝ Ա. Օհանջանյանը, Վ. Խորենին, Վ. Փափազյանը և ուրիշներ<sup>264</sup>։ Այնուամենայնիվ, ձայների պարզ մեծամասնությամբ հավանություն է տրվում Ջավախչիյի խմբի կողմից հետազոտությունների համար 4 մլն ռուբլի հատկացնելու մասին օրինագծին<sup>265</sup>։ Ծրագրվում էր 14 ինժեներներով և 200-ից ավելի բանվորներով ու տեխնիկներով 10 ամսվա ընթացքում մշակել նախագիծը, որի հետագա կենսագործմամբ հնարավոր կլիներ մասնավորապես ռոռզեյի դարձնել 160 հազ. դես. հող և ստանալ 150 հազ. ձիաուժ էլեկտրաէներգիա<sup>266</sup>։

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարությունը ազգային կապիտալի հանդես վարել է հովանավորչական քաղաքականություն։ Հայաստանի ընդերքի և ջրային պաշարների հետազոտման ու շահագործման, ջրանցքների, հիդրոէլեկտրակայանների, երկաթուղիների, արդյունաբերական ձեռնարկությունների և այլնի կոնցեսիա տալու հավասար պայմանների դեպքում ՀՀ կառավարությունը նախապատվությունը տվել է հայկական ազգային կապիտալին<sup>267</sup>։ Այսպես՝ 1920 թ. հունվարին ՀՀ նախարարների խորհուրդը հաստատում է Ջանգու (Հրազդան) գետի ջուրը էներգետիկ նպատակներով շահագործելու Իլյա Մալիյանի «Մալիյան և որդիք» առևտրական տան (ընկերության) ներկայացրած կոնցեսիոն պայմանագրի նախագիծը<sup>268</sup>։ Այդ հիման վրա մերժվում է օտարազգի դրամատերերի (անգլիացի կապիտալիստների) համանման առաջարկը<sup>269</sup>։ Նման քաղաքականության իրականացման գործում բնականաբար խորհրդարանն ու կառավարությունը միասնական էին։ Բայց կային առանձին հարցեր, որոնց լուծման շուրջ խորհրդարանի և կառավարության միջև ծագում էին տարակարծություններ ու ներքին դիմակայություն։ Այդպիսի խնդիրներից էր, օրինակ, կաղրային քաղաքականությունը, որի շուրջ խորհրդարանի և կառավարության միջև սուր տարաձայնություններ ծագեցին 1920 թ. սկզբներին։

Խորհրդարանի հունվարյան առաջին նիստերից մեկում վարչապետ Ավ. Խատիսյանը օրինագիծ է ներկայացնում խորհրդարան՝ արդարադատության առանձին նախարարություն հիմնելու, իսկ Ա. Զիլինգադյանին (Դարբինյանին) էլ որպես դրա նախարար առաջադրելու մասին։ Մինչ այդ լուծարվել էր պարենավորման նախարարությունը։ Վարչապետը գյուղատնտեսության և պետ. գույքերի նախարարի թեկնածու է առաջադրում Վ. Փափազյանին, իսկ հաղորդակցության նախարարի պաշտոնակատար՝ Հ. Տեր-Միքայելյանին և խնդրում է հաստատել այդ երեքի թեկնածությունները<sup>270</sup>։ Այս հարցի կապակցությամբ առաջինը վարչապետի ու կառավարության սուր քննադատությամբ ելույթ է ունենում պատգամավոր Ավետիս Օհանջանյանը։ Նա առաջարկություն է անում փոխել առհասարակ ամբողջ կաբինետը։ Ա. Օհանջանյանի կարծիքով, օրինակ, ն.գ. նախարար Ա. Գյուլխանդանյանը գլուխ չի հանում իր ծանր պարտականությունից։ Նա մույնպիսի գնահատական է տալիս ֆինանսների նախարար Ս. Արարատյանի գործունեությանը։ Նախարարական նոր թեկնածուների վերաբերյալ՝ հռետորը առարկում է Վ. Փափազյանի թեկնածությանը՝ գտնելով, որ նա բոլորովին անհամապատասխան է գյուղատնտեսության նախարարի պաշտոնին։ Պատգամավոր Օհան-

<sup>262</sup> ՀՀ ՊԿՊԱ, նույնը, ք. 44։

<sup>263</sup> Նույն տեղում, ք. 45։

<sup>264</sup> «Ժողովուրդ», 8 հոկտեմբերի 1919 թ.։

<sup>265</sup> Նույն տեղում, 17 հոկտեմբերի 1919 թ.։

<sup>266</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 19 հոկտեմբերի 1919 թ.։

<sup>267</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 203, ց. 1, գ. 497, քք. 10-44։

<sup>268</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 203, ց. 1, գ. 497, քք. 12 եւ 37։

<sup>269</sup> Նույն տեղում, ք. 43։

<sup>270</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 57, ք. 6։

ջանյանը առաջարկում է կառավարության մեջ ընդգրկել կուսակցության ճանաչված գործիչներ՝ Ռ. Տեր-Մինասյանին և Ս. Վրացյանին<sup>271</sup>:

Այնուհետև կառավարության հասցեին քննադատության խոսք է ուղղում պատգամավոր Ս. Թորոսյանը: Նա վարչապետին մեղադրում է անվճարականության մեջ: «Ես գիտեմ, հայտարարում է Ս. Թորոսյանը, - կամ շատ սխալ գործեր, ես գիտեմ՝ եղել են ամարդար գործողություններ այս կամ այն նախարարության կողմից, ինչպես օրինակ՝ Ջանֆիդայի, Ազարակի և մյուս գյուղերի խաղաղ ազգաբնակչության վտարմանը դեմ է եղել նաև վարչապետը, բայց կատարվել է այդ ապօրինությունը»<sup>272</sup>:

Բննարկվող հարցի շուրջ նիստում հանդես եկան այլ պատգամավորներ՝ Կ. Սասունին, Հմ. Մանուկյանը, Մալխասը, Ա. Մաքսապետյանը, որոնք քննադատեցին կառավարության քաղաքականությունը գաղթականության խնդրում: Օրինակ՝ Կ. Սասունին գտնում էր, որ կառավարությունը անտարբեր վերաբերմունք ունի դեպի արևմտահայությունը: Նա բերում էր հետևյալ փաստը, որ Հայաստանում հաշվվում է 16 հազար պետական պաշտոնյա, որոնց մեջ արևմտահայերի թիվը 100-ի չի հասնում<sup>273</sup>: Եվ սա այն դեպքում, երբ 1919 թ. մայիսի 28-ի «Միացյալ և Անկախ Հայաստանի մասին» ակտով արևմտահայերը համարվում էին ՀՀ լիարժեք քաղաքացիներ:

Վարչապետը հանդես գալով նիստում՝ տալիս է որոշ բացատրություններ ու պարզաբանումներ և հայտնում, որ ինքը պատրաստ է ընդունել հրաժարականը: Պատգամավոր Հմ. Մանուկյանը առաջարկում է քվեարկության դնել կառավարության վստահության հարցը: Կատարվում է գաղտնի քվեարկություն: Սակայն ձայների մեծամասնությամբ խորհրդարանը վստահություն է հայտնում վարչապետին (կողմ՝ 25, դեմ՝ 3 և ձեռնպահ՝ 6)<sup>274</sup>:

Խորհրդարան - կառավարություն փոխհարաբերությունների պարզաբանման շատ էական կողմերից է պետական վերահսկողության իրականացման խնդիրը: Ինչպես արդեն ասվել է, պետական վերահսկողությունը իրականացվում էր Պետական վերահսկիչի միջոցով, որը միանգամայն անկախ էր գործադիր իշխանությունից՝ կառավարությունից, և պատասխանատու էր միայն խորհրդարանի առաջ: Տեղեկացնենք, որ խորհրդարանական այս կառույցը ընդօրինակվել էր Անդրկովկասյան սեյմից:

Մինչև 1919 թ. հունվարը պետական վերահսկիչի պաշտոնը, որ իր նշանակությամբ ու ռոճիկաչափով հավասարագոր էր նախարարի հաստիքին, վարում էր ՀԺԿ անդամ, հասարակական և պետական գործիչ, իրավաբան ու ֆինանսիստ Մյուսա Բերբերյանը: Սակայն, ցավոք, շատ հայ մեծամեծների պես, նա ևս վախճանվեց համաճարակից: Նրա փոխարեն ժամանակավորա-

պես պաշտոնակատար նշանակվեց Ի. Ս. Պողոսյանի<sup>275</sup>, իսկ ավելի ուշ՝ 1919 թ. հոկտեմբերի 24-ին, խորհրդարանը պետական վերահսկիչ ընտրեց անկուսակցական Գրիգոր Ջաղեթյանին, որը մինչ այդ զբաղեցնում էր ֆինանսների նախարարի պորտֆելը<sup>276</sup>: Եվ նա մնաց այդ պաշտոնում մինչև հանրապետության անկումը:

Պետական վերահսկողության այս մարմինն առաջնորդվում էր խորհրդարանի կողմից հաստատված «Պետական վերահսկողության ընդհանուր կանոնների մասին» օրենքով: 1919 թ. դեկտեմբերի 30-ին հաստատված հաստիքացուցակով՝ նրանում ընդգրկված էին 95 աշխատող՝ ամսական նախահաշիվը 373100 ռուբլի աշխատավարձ<sup>277</sup>:

Պետական վերահսկողությունն այն գորավոր լծակներից էր, որով խորհրդարանը ներազդում էր կառավարության վրա: Եվ կարելի է ասել, որ ՀՀ գոյության ընթացքում պետական վերահսկողության այս մարմինը դարձավ խորհրդարանի աչքն ու ականջը, նրա վստահելի փորձաքննիչն ու հանձնակատարը: Այդպիսով, խորհրդարանի իրավասության մեջ էր մտնում ոչ միայն պետական բյուջեի հաստատումը, այլև նրա կատարման վերահսկողությունը: Այդքանով էլ խորհրդարանը վերադաս էր կառավարությունից:

## 6. Կուսակցություն-խմբակցություն-կառավարություն հարաբերությունները

ՀՀ կառավարության կուսակցական ձևը ինքնին բխում էր հանրապետության պետական կառուցվածքի խորհրդարանական բնույթից: Այսինքն՝ ամենուրեք ընդունված կարգ է, որ խորհրդարանական երկրներում կառավարությունները լինում են կուսակցական: Այդ կարգի համաձայն՝ վարչապետը ընտրվում էր խորհրդարանի կողմից, նախապես կուսակցությունների միջև համաձայնություն կայացնելու միջոցով, առանց ժամկետի որոշման: Վարչապետի հրամանով էին նշանակվում և ազատվում նախարարները: Իսկ նախարարի տեղակալները նշանակվում էին համապատասխան նախարարի ներկայացմամբ և վարչապետի հաստատմամբ<sup>278</sup>:

Խորհրդարանական խմբակցությունը այն հիմնական խողովակն է, որով կուսակցությունը անցկացնում է իր քաղաքականությունը:

Ինչպես տեսանք նախորդ ենթագլխում, ՀՀԴ 9-րդ ընդհ. ժողովը (համագումարը) ճշտեց ու կանոնակարգեց կուսակցություն- խմբակցություն և կառավարություն փոխհարաբերությունները: Ընդհանուր ժողովում ընդուն-

<sup>271</sup> Նույն տեղում, ք. 7:

<sup>272</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 57, ք. 8:

<sup>273</sup> Նույն տեղում, ք. 9:

<sup>274</sup> Նույն տեղում, ք. 17:

<sup>275</sup> «Չանգ», 17 հունվարի 1919 թ.:

<sup>276</sup> «ՀՀ օրենքների հավաքածու 1919 թ.», էջ 29:

<sup>277</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 56:

<sup>278</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 282, ք. 3:

ված որոշումներում և նոր «Կազմակերպական կանոններում» սահմանվեցին այդ փոխհարաբերությունների և իրավասությունների բաշխման շրջանակներն ու սկզբունքները: Ընդհանուր ժողովի ընդունած սկզբունքով՝ կառավարությունը ենթակա ու պատասխանատու էր միայն խորհրդարանին: Իր հերթին՝ խորհրդարանն էլ պատասխանատու էր ժողովրդի առաջ: Հաստատված նոր կանոնադրությամբ՝ Բյուրոն վերահսկում էր միայն ՀՅԴ խորհրդարանական խմբակցության գործունեությունը և կառավարության վրա կարող էր ազդել միայն իր այդ խմբակցության միջոցով:

1920 թ. խորհրդարանի հունվարի 8-ի նիստում, երբ քննարկում էր կառավարության քաղաքականության կուսակցականացման մասին հարցը ՀՅԴ Բյուրոյի անդամ, պատգամավոր Ս. Վրացյանը ամենայն պատասխանատվությամբ հայտարարեց, որ կուսակցության 9-րդ «Ընդհ. ժողովից հետո Բյուրոն ոչ մի դեպքում դուրս չի եկել այն սահմանից, որ գծել է Ընդհանուր ժողովը»<sup>279</sup>: Իսկ այդ նույն նիստում վարչապետ Ալ. Խատիսյանը, հավաստիացնելով խորհրդարանին, ասաց. «Բյուրոն ոչ մի ազդեցություն չի գործել կառավարության վրա: Մենք մեր բոլոր դիրեկտիվները ստացել ենք ֆրակցիայից: Ես հրավիրել եմ նախարարության պաշտոնին Ռուբենին, Վրացյանին: Նրանք մերժել են՝ նկատի ունենալով կուսակցական պարտականությունները, Բյուրոյի աշխատանքները»<sup>280</sup>:

Խորհրդարանի ՀՅԴ ստվար խմբակցությունը հանդիսանում էր մի տեսակ կապող օղակ, շարժափոկ Բյուրոյի և կառավարության միջև: Իրավացի էր, օրինակ, Խատիսյանի կարիքները, երբ իրեն պատասխանատու էր համարում միայն խմբակցության առջև<sup>281</sup>: Կուսակցությունը, առաջնորդվելով պառլամենտարիզմի սկզբունքներով, աշխատում էր որպես կանոն իր քաղաքականությունն անցկացնել խորհրդարանական խմբակցության միջոցով: Իր հերթին կառավարությունն իրեն պատասխանատու էր համարում լայն առումով միայն խորհրդարանի, իսկ նեղ իմաստով՝ ՀՅԴ խմբակցության առաջ և նրա միջոցով միայն՝ Բյուրոյի:

Այնուամենայնիվ, ճշմարտությունը պահանջում է ասել, որ արձանագրվել են նաև դեպքեր, երբ ՀՅԴ Բյուրոն ուղղակի միջամտել է խորհրդարանի ներքին գործերին: Այսպես, օրինակ, դեռ Հայաստանի խորհրդի օրոք (1919 թ. հունիսին), երբ անկուսակցական պատգամավոր Ստ. Մամիկոնյանը Արցախում ծավալված իրադարձությունների կապակցությամբ դիմել էր խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանին նիստ հրավիրելու հարցով, չգիտես ինչու խորհրդարանի նիստ վերագումարելու մասին հարցը լսվել է ՀՅԴ Բյուրոյում: Արևելյան Բյուրոյի հունիսի 16-ի նիստում մերժվել էր Մամիկոնյանի խնդրանքը՝ Ղարաբաղի դեպքերի առթիվ խորհրդարանի նիստ գումար

րելու մասին. «Բյուրոն գտնում է, որ չի կարելի հարգել Մամիկոնյանի խնդրանքը»<sup>282</sup>, կարողում ենք նիստի արձանագրության մեջ:

Խորհրդարանական խմբակցությունը նոր ընտրվելիք վարչապետի (նախարարապետի) թեկնածությունն առաջադրելիս՝ նախապես պետք է ստանար նաև ՀՅԴ Բյուրոյի համաձայնությունը: Նախարարական թեկնածուների ցանկը խորհրդարան ներկայացնելուց առաջ նախարարապետը ստանում էր միայն խմբակցության համաձայնությունը, իսկ կառավարության դաշնակցական անդամները պատասխանատու էին խմբակցության առջև<sup>283</sup>: Բացի այդ՝ ՀՅԴ խմբակցությունն իր օրինաստեղծ աշխատանքում միանգամայն ինքնուրույն էր: Ավելին՝ ըստ Վ. Նավասարդյանի՝ մինչև 1920 թ. բոլշևիկների մայիսյան ապստամբությունը, կուսակցության հսկողությունը և միջամտությունը խմբակցության և կառավարության գործունեության վրա արտահայտվել է շատ թույլ<sup>284</sup>:

Ահա, այսպիսի ճկուն, ժողովրդավարական մեխանիզմով էին հիմնականում գուգորդվում ու կարգավորվում կուսակցության, խորհրդարանական խմբակցության և կառավարության փոխհարաբերությունները 1919 թ. երկրորդ կեսին և 1920 թ. առաջին երեք-չորս ամիսներին, այսինքն՝ մինչև 1920 թ. բոլշևիկների մայիսյան հայտնի ապստամբությունը, երբ պատմաքաղաքական իրադարձությունների թելադրանքով ՀՅԴ Բյուրոն ամբողջ կազմով ստանձնեց կառավարությունը:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, մինչև մայիսյան հայտնի դեպքերը ստեղծվել և գործում էր կուսակցություն-խորհրդարանական խմբակցություն-կառավարություն հարաբերությունների փոխգիշտմանյին ճկուն (շարժուն) համակարգ, որի միջոցով ոչ կուսակցությունն էր անհարկի միջամտում պետական գործերին, և ոչ էլ կառավարությունն ու խորհրդարանական խմբակցությունն էին բոլորովին մեկուսացված կուսակցության ու նրա գերագույն գործադիր մարմնի՝ Բյուրոյի նախանշած քաղաքական ուղեգծից:

Բայց մնան ժողովրդավարական մեխանիզմի գործադրումը հանդիպում էր դիմադրության ՀՅԴ կուսակցության և խմբակցության առանձին շրջանակներում: Այդ ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ Բյուրոն միջամտել ու կաշկանդել է թե՛ խորհրդարանական խմբակցության և թե՛ կառավարության ինքնագործունեությունը: Օրինակ՝ Բյուրոյի ներկայացուցիչ Ռուբենը արգելել է խմբակցությունում առանձին քննարկման նյութ դարձնել 1920 թ. գարնանը Արցախում ձեռնարկված ապստամբության ձախողման հանգամանքները: Եվ նախապես պարզվել էր, որ այդ ձախողման գլխավոր պատասխանատուն եղել է ՀՅԴ Բյուրոյի կողմից Արցախ գործուղված Արսեն Միքայելյանը<sup>285</sup>:

<sup>282</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 144, թ. 1:

<sup>283</sup> «ՀՅԴ կազմակերպական կանոններ», Երևան, 1919, էջ 12:

<sup>284</sup> Վ. Նավասարդյան, ՀՅԴ-դաշնակցության անելիք, Գահիրե, 1924, էջ 189:

<sup>285</sup> «Ազդակ շաքաթօրյակ», 23 սեպտեմբերի 1973 թ. (թիւ 41):

<sup>279</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 57, թ. 7:

<sup>280</sup> Նույն տեղում:

<sup>281</sup> Ռուբեն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, հ.է, Լոս Անճելես, 1952, էջ 233:

Եթե առանձին դեպքերում արձանագրվել է Բյուրոյի միջամտությունը խմբակցության աշխատանքներին, ապա դա հիմնականում դրսևորվել է ոչ թե օրենսդրական, այլ քաղաքական բնույթի խնդիրների ծագման ժամանակ, որպեսզի խմբակցությունը շեղում չկատարի կուսակցության մշակած ընդհանուր քաղաքական ուղեգծից: Կարծում ենք խորհրդարանական սկզբունքի բնորոշ դրսևորումներից է այն, որ խմբակցություն ունեցող ամեն մի կուսակցություն իրավունք ունի և պետք է իր քաղաքականությունը անցկացնել այդ խմբակցության միջոցով: Եվ այս առնչությամբ չի կարելի համամիտ լինել Հ. Զաքազունու ժխտողական այն գնահատականին, թե խորհրդարանում չկար նաև դաշնակցական խմբակցություն, «որովհետև սա դրված էր Դաշնակցության Բյուրոյի խիստ հսկողության տակ և պարտավոր էր կատարելու նրա հրամանները»<sup>286</sup>: Եվ սա ասում է մի գործիչ, որ այդ խորհրդարանի գործունեության գրեթե ամբողջ ժամանակամիջոցում գտնվել է արտասահմանում և բնականաբար այնքան էլ իրազեկ չէր շատ մանրամասների:

Ընդհանուր առմամբ, եթե ՀՅԴ Բյուրոն ազդել է իր խմբակցության գործունեության վրա, ապա մինչև 1920 թ. մայիս ամիսը կուսակցության ու նրա Բյուրոյի ազդեցությունը խմբակցության աշխատանքների վրա արտահայտվել է թույլ կերպով: Այս կապակցությամբ Ռ. Տեր-Մինասյանը վկայում էր, որ «Բյուրոյի գործունեությունը պետական, պառլամենտական ոլորտներում ավելի շատ երևութական էր, քան էական»<sup>287</sup>: Իսկ Ս. Վրացյանը հավաստում էր, որ Բյուրոն որևէ ազդեցություն չի ունեցել մեր ներքին քաղաքականության վրա: Նա ազդել է միայն բացառիկ պարագաներում<sup>288</sup>:

Սակայն դրությունը կտրուկ փոխվեց 1920 թ. գարնանը (ապրիլ-մայիսին), երբ քաղաքական հանգամանքների թելադրանքով ՀՅԴ Բյուրոն խմբակցության առջև պահանջ ներկայացրեց իշխանությունը հանձնել իրեն: Հիշեցնենք, որ դեռ ապրիլի սկզբից, խախտելով կուսակցության կազմակերպական կանոնների այն կետը, որ Բյուրոյի անդամը միաժամանակ չի կարող կառավարության անդամ լինել<sup>289</sup>, Բյուրոյի չորս անդամներ մտան կառավարության մեջ՝ ստանալով նախարարական պորտֆելներ<sup>290</sup>: 1920 թ. ապրիլի 3-ին խորհրդարանի թիվ 78 նիստում նախագահող Լ. Շանթը որպես ի գիտություն՝ խորհրդարանին տեղյակ պահեց նախարարական կազմի համալրման մասին: Նախարարական պոստեր ստանձնեցին ՀՅԴ Բյուրոյի անդամներ՝ Հ. Օհանջանյանը (արտ. գործ. նախ.), Ա. Ջամալյանը (հաղորդակցության), Ռ. Տեր-Մինասյանը (գորական) և Ս. Վրացյանը (գյուղատնտ. և աշխատանքի)<sup>291</sup>: Սա նախադրու է հանդիսացավ այն բանին, որ մեկ ամիս անց պահանջ-

վի Ա. Խատիսյանի կաբինետի հրաժարականը, և իշխանությունը անցնի Բյուրոյի՝ կուսակցության բարձրագույն գործադիր մարմնի ձեռքը: Դրանով իսկ հաղթանակ տարավ Բյուրոյի անդամ Ռուբենի և նրա կողմնակիցների տեսակետը՝ կառավարության կուսակցական ղեկավարման մասին: Հարկ է նշել, որ ՀՅԴ խմբակցության մի ստվար խումբ մինչև վերջ դեռ արտահայտվեց Բյուրոյի կառավարություն դառնալուն<sup>292</sup>:

Մյուս կողմից, ՀՅԴ խմբակցությունը խորհրդարանական քննարկումների ժամանակ միշտ չէ, որ եղել է միասնական: Արևմտահայ հասարակական-քաղաքական գործիչ, պատգամավոր Կ. Սասունին իր աշխատություններից մեկում նշում էր, որ խորհրդարանում դաշնակցական խմբակցությունը բաժանված էր մի քանի ոչ պաշտոնական խմբերի, որոնցից և ոչ մեկը չունեք հստակ ծրագիր<sup>293</sup>:

Ինչպես ՀՅԴ ներսում, այնպես էլ խորհրդարանական խմբակցությունում ակնհայտ դրսևորվում էին երկու թև. աջ՝ *ազգային* և ձախ՝ *ընկերվարական* հոսանքները: Որ ՀՅԴ ներսում և խորհրդարանական խմբակցության մեջ գոյություն ունեին «աջ» և «ձախ» թևեր՝ վկայում է ընդդիմադիր ՀԺԿ - պաշտոնաթերթ «Ժողովուրդը»: Նա իր առաջնորդողներից մեկում, վկայակոչելով խորհրդարանում ուժեղ ընդդիմության բացակայության փաստը, հանգում է այն հետևության, որ այդ պատճառով ՀՅԴ խմբակցությունը, ըստ էության, բաժանվել է երկու թևի. մեկը՝ «ձախ», դեպի ծայրահեղ սոցիալիզմը և դասակարգային անողորմ պայքարը, իսկ մյուսը՝ դեպի ազգային և հակասոցիալիստական<sup>294</sup>:

ՀՅԴ հատվածային տեսակետից, եթե ազգային հոսանքը ներկայացնում էին հիմնականում կուսակցության արևմտահայ ներկայացուցիչները, ապա ընկերայինը՝ ռուսահայը: Խորհրդարանական խմբակցության արևմտահայ պատգամավորները (13-15 հոգի), ներկայացնելով գուտ ազգային հոսանքը, առհասարակ չէին ընկալում սոցիալիզմը ընդհանրապես և դասակարգային պայքարը մասնավորապես<sup>295</sup>: Արևմտահայ պատգամավորների (Ա. Մաքսապետյան, Մալխաս, Սեպուհ, Հ. Մանուկյան և այլք) մտահոգության առանցքը Հայաստանը միացյալ և անկախ դարձնելու հարցն էր, ինչպես նաև երկիրը հայացնելը, հայերենը պետական լեզու դարձնելը և այլն: Արևելահայ պատգամավորներ՝ Վ. Խորենին, Վ. Նավասարդյանը, Ա. Ջամալյանը, Ս. Թորոսյանը և ուրիշներ, ունեին ընդգծված ընկերվարական հակումներ:

ՀՀ քաղաքական կողմնորոշման հարցում ևս ՀՅԴ խորհրդարանական խմբակցության անդամները ունեին տարբեր դիրքորոշումներ: Քանի դեռ Հայկական հարցը լուծման ընթացքի մեջ էր, և մեծ ակնկալիք կար Փարիզի խա-

<sup>286</sup> Հ. Զաքազունի, Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, էջ 30:  
<sup>287</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 233:  
<sup>288</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 57, ք. 7:  
<sup>289</sup> «Հ. Յ. Դ. կազմակերպական կանոններ», Երևան, 1919, էջ 13:  
<sup>290</sup> «Ազգայնաբարձրակ», 9 սեպտեմբերի 1973 թ. (թիվ 39):  
<sup>291</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 52, ք. 29:

<sup>292</sup> «Ազգայնաբարձրակ», 23 սեպտեմբերի 1973 թ. (թիվ 41):

<sup>293</sup> Կ. Սասունի, Մայիսյան խռովությունները և քաղաքական ապստամբ շրջանները, Պեյրուք, 1968, էջ 17:  
<sup>294</sup> «Ժողովուրդ», 13 հունվարի 1920 թ.:  
<sup>295</sup> Նույն տեղում:

դադարյան համաժողովից, ինչպես կառավարությունը, այնպես էլ ՀՅԴ խմբակցությունը հիմնականում պաշտպանում էին արևմտյան քաղաքական դիրքորոշումը: Սակայն 1920 թ. քաղաքական հանգամանքների կտրուկ փոփոխման հետևանքով պատգամավորական խմբակցության զգալի մասը, քաղաքական կողմնորոշման առումով, ավելի ու ավելի հակվեց դեպի Ռուսաստանը: Պետք է ասել, որ ՀՅԴ խմբակցության մեջ կային պատգամավորներ, որոնք միշտ էլ ունեցել են անփոփոխ ռուսական կողմնորոշում (դրանք հիմնականում եղել են ռուսահայ և ավելի սոցիալամետ պատգամավորները) և կային պատգամավորներ (սրանք էլ գերազանցապես արևմտահայեր էին), որոնք այդպես էլ մնացին արևմտյան դիրքորոշման վրա:

Ինչպես ՀՅԴ շարքերում, այնպես էլ խորհրդարանի դաշնակցական խմբակցության ներսում բացորոշ կերպով դրսևորվում էին երկու մոտեցում. մեկը՝ «հեղափոխական գաղափարների ջատագով», իսկ մյուսը՝ «պետական», որոնք հաճախ անհաշտ բնույթ էին ստանում և տեղիք տալիս գաղափարաքաղաքական առճակատումների:

Խմբակցությունում կային գործիչներ, որոնք պահանջում էին կառավարությունից առաջնորդվել **հեղափոխական օրենքներով**: Ինչպես արդեն գիտենք, այս մտայնության գաղափարախոսներն էին՝ Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Ջամալյանը և ուրիշներ<sup>296</sup>: Սրանք գտնում էին, որ կառավարությունը չպետք է կաշկանդվի օրենքներով ու իրավական մորմերով, այլ հարկ եղած դեպքում պետք է դիմի **բացահայտ հեղափոխական միջոցների**<sup>297</sup>: Ռուբենը և իր փոքրաթիվ կողմնակիցները գտնում էին, որ ա) կառավարությունը պետք է կանգնի կուսակցական սկզբունքների վրա, բ) իրագործի ՀՅԴ ծրագիրը և գ) կուսակցությունը իր սիստեմով պետք է լինի կառավարություն: Ըստ Ռուբենի՝ «Հայ ժողովրդի և Դաշնակցության ուժը **կոմիսարության** մեջ է»<sup>298</sup>: Ռ. Տեր-Մինասյանի այս մոտեցման նպատակն այն էր, որ կուսակցական կառույցների միջոցով ուժեղացվեր պետության հիմքը:

Կուսակցության և ՀՅԴ խորհրդարանական խմբակցության ներսում պետական և հեղափոխական հոսանքների մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար տեղին է մեջ բերել այն դասախոսությունը, որ 1919 թ. դեկտեմբերի 25-ին Արշակ Ջամալյանը կարդացել է խորհրդարանի դահլիճում պատգամավորների և այլ ունկնդիրների առջև: Ինչպես վերևում ենք նշել, Ա. Ջամալյանը հարում էր Ռուբենի գլխավորած «հեղափոխական» հոսանքին: Նրա կարդացած «Իրավական թե հեղափոխական պետություն» թեմայով դասախոսության մեջ տուրք է տրվում ընկերվարական հեղափոխական գաղափարներին: Նա խիստ քննադատության էր ենթարկում Հայաստանի կառավարությանը և անգամ խորհրդարանին որպես հին օրենքներով

առաջնորդող մարմիններ և դրանց փոխարեն առաջարկում էր ստեղծել նոր՝ հեղափոխական կառավարություն, որն իրեն չպետք է կաշկանդի օրենքներով<sup>299</sup>: Ջամալյանի ելույթը դաշնակցական և ոչ դաշնակցական (Էսեռ, «սպեցիֆիկ», արևմտահայ) ունկնդիրների շրջանում այնպիսի տարակուսանք ու արձագանք է առաջացնում, որ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 26-ին, ՀՅԴ Բյուրոյի հերթապահ անդամ Ս. Վրացյանը, հաշվի առնելով կուսկազմակերպությունների և անհատ անդամների կողմից հայտնված բողոքները, Ա. Ջամալյանի դասախոսությունում պարունակած դրույթները և անձամբ նրա անձնական վարքագիծը, որպես Բյուրոյի անդամի, հանձնում է կուսակցության Դատական ատյանի շուտափույթ քննությանը<sup>300</sup>: Հունվարի 3-4-ին ՀՅԴ դատական ատյանը, լսելով Բյուրոյի անդամ Ա. Ջամալյանի դեկտեմբերի 25-ին կարդացած դասախոսության մասին հարցը, նրան ենթարկում է «հանդիմանության» և պարտավորեցնում, որ նա մամուլի միջոցով լուսաբանի իր դասախոսության իսկական իմաստը<sup>301</sup>:

Խորհրդարանական խմբակցության և կուսակցության ներսում առկա մյուս հոսանքը «պետականության» և «իրավական նորմերին» հավատարիմ ուղղությունն էր, որը Հ. Քաջազունու բացակայության պայմաններում պաշտպանում էին Ս. Վրացյանը, Ալ. Խատիսյանը, Գ. Ղազարյանը, Ա. Չիլիզարյանը և ուրիշներ: Այս հոսանքի կողմնակիցները գտնում էին, որ Հայոց պետականության հաստատումից հետո Դաշնակցությունը պետք է աստիճանաբար, իբրև քաղաքական հեղափոխական կուսակցություն, իր դերը թուլացնի՝ տեղի տալով և ասպարեզը թողնելով միայն պառլամենտին և կառավարությանը<sup>302</sup>: «Ես կարծում էի, - գրում էր պետականության գաղափարի հաստատական պաշտպան Ս. Վրացյանը իր հուշերում, - որ իշխանությունը պետք է ղեկավարվի պետական օրենքներով և արտակառավարական անհատական կամ կոմիտեական արարքները պետական գործերը վարելու հարցում անթույլատրելի են, մանավանդ, եթե այդ արարքները չեն վայելելու ժողովրդականությանը»<sup>303</sup>:

Ինչպես տեսնում ենք, թե՛ ՀՅԴ շարքերում և թե՛ նրա խորհրդարանական խմբակցության ներսում այս կամ այն առօրեական խնդիրների լուծման շուրջ ծագում էր տեսակետների ու մոտեցումների լայն սպեկտր, սակայն մի հիմնախնդրում՝ Հայ ազգային Դատի ու համազգային հիմնախնդիրների պաշտպանության գործում, նրանք միշտ էլ համդեռ են եկել միասնաբար: Հենց դրանում է կայանում քանակապես ստվար ու սոցիալապես բազմատարր սույն կուսակցության ուժն ու կենսունակությունը: «Որքան էլ, - գրում է բոլշևիկ Ա. Կարինյանը, - տարբեր են եղել դաշնակցական զանազան տեսա-

<sup>296</sup> Ս. Վրացյան, *Կյանքի ուղիներով*, հ. Ե, Բեյրութ, 1966, էջ 113, Ռուբեն, նշվ. աշխ., էջ 342:

<sup>297</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 275:

<sup>298</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 57, ք. 12:

<sup>299</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ. 4047, ց. 2, գ. 23, ք. 4-7:

<sup>300</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ. 4047, ց. 2, գ. 23, ք. 1:

<sup>301</sup> Նույն տեղում, ք. 9-10:

<sup>302</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 275:

<sup>303</sup> Ս. Վրացյան, *Կյանքի ուղիներով*, հ. Ե., Բեյրութ, 1966, էջ 153:



բանների որոնումները և հայացքները այս կամ այն մոմենտին, այս կամ այն երկրորդական խնդրի նկատմամբ՝ բայց և այնպես՝ հիմնականում նրանք միշտ ունեցել են մի ընդհանուր ուղի, մի գիծ. միշտ գործել են միասնաբար և այդպես միացյալ շարքերով էլ հանդես են եկել»<sup>304</sup>:

Դժվար չէ նկատել, որ ժողովրդի, հանրապետության իրական կյանքում առկա դժվարությունները բնականաբար իրենց արտացոլումն էին ստանում նաև ՀՅԴ խմբակցության անդամների վարքագծի ու դիրքորոշումների վրա: Այնպես որ՝ խմբակցությունը միապաղաղ, անկերպարան ու ՀՅԴ Բյուրոյին հիւսկանակատար մարմին չէր: Ռուբենը հիշում է, որ խորհրդարանում խորենինները և նավասարդյանները ըմբոստանում էին կառավարության դեմ գրեթե այնչափ, որչափ էսէտները»<sup>305</sup>:

Այսպիսով, ՀՅԴ խմբակցությունում ամենից ավելի բացորոշ պայքար էր գնում պետական իշխանության երկու ձևերի հաստատման միջև՝ *պատկանահական-ժողովրդավարական և կուսակցական-ամբողջարհրական*: Չնայած ՀՅԴ խմբակցության մեծամասնությունը դեմ էր իշխանության կուսակցականացմանը (որն իր հետ ծնելու էր կուսակցական մենիշխանություն), 1920 թ. զարմանը դեպքերն ու իրադարձությունները Անդրկովկասում և Հայաստանում այնպես զարգացան, որ խորհրդարանը զիջեց, հեռացավ ակտիվ գործունեությունից և ասպարեզը թողեց ՀՅԴ Բյուրոյին:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

### 1. Օրենսդրական աշխատանքը: Սոցիալ-տնտեսական և կրթամշակութային խնդիրներ

Երկրորդ գումարման խորհրդարանի օրենսդրական աշխատանքը համեմատական կարգով աչքի էր ընկնում ավելի մեծ հասունությամբ ու արհեստավարժությամբ, քան Հայաստանի խորհրդինը, որտեղ, ինչպես արդեն գիտենք, շատ օրենքներ ու օրինագծեր ունեին պարզապես կառավարչական հրահանգի ու որոշման տեսք: Այս խորհրդարանի կարևոր օրինագծերից կարելի է համարել այն, որ 1919 սեպտեմբերին ի քննության դրվեց «ՀՀ տարածքում երդվյալ ատենակալների դատարան մտցնելու մասին» օրինագիծը, որը հավանության էր արժանացել նախարարների խորհրդում<sup>1</sup>: Մի փոքր ուշ այն հաստատվեց և դրվեց գործողության մեջ:

Իրոք որ, ամեն մի պետության ժողովրդավարության մակարդակի կարևոր չափանիշներից է երկրի դատական համակարգը ու առաջին հերթին երդվյալ ատենակալների ինստիտուտ ունենալը: Հիշեցնենք, որ դատական համակարգի ձևավորման հարցը քննվել էր դեռ Հայաստանի խորհրդում (1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին), անգամ կազմվել էր «Դատաստանական հիմնարկությունների մասին» օրինագիծ և կատարվել դրա առաջին ընթերցումը: Ըստ օրինագծի՝ Հայաստանի դատական համակարգը ունենալու էր հետևյալ աստիճանակարգը (դատական ատյանները)՝ 1) հաշտարար դատավորներ, 2) ինստանցիոն (տարածքային) դատարան, 3) շրջանային դատարան և 4) դատական պալատ: Այդ ժամանակ էլ ՀԺԿ խմբակցությունը առաջարկ մտցրեց երդվյալ ատենակալների ինստիտուտ ունենալու մասին<sup>2</sup>:

1919 թ. հոկտեմբերի 10-ին օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկավ խորհրդարանի նախագահությունը և առաջարկություն մտցրեց, ս. թ. հոկտեմբերի 19-ի օրենքի հիման վրա՝ «պետական կամ այլ հասարակական

<sup>304</sup> Ա. Կարինյան, Դաշնակցությունը և իր զինակիցները, Երևան, 1932, էջ 34:  
<sup>305</sup> Ռուբեն, Նշվ. աշխ. հ., Է, Լոս Անձեղես, 1952, էջ 235-236:

<sup>1</sup> ՀՀ ՊԿՊԱ, Զ. 198, ց. 1, գ. 27, թ. 41:  
<sup>2</sup> «Կայծ», 5 դեկտեմբերի 1918 թ.:

վճարովի պաշտոն վարող պատգամավորներին (բացի նախարարներից և նրանց օգնականներից) պատգամավորական կոչումից զրկելու մասին»<sup>3</sup>։

Հաշվի առնելով, որ 1920 թ. հունվարի 31-ին Հայաստանի համալսարանի բացումից հետո որոշ պատգամավորներ անցան դասախոսական աշխատանքի, իսկ մի քանիսն էլ գործուղվել էին դիվանագիտական աշխատանքի՝ նույն թվականի մարտի 1-ին ընդունվեց լրացուցիչ օրենք, որով բացառություն արվեցին համալսարանի դասախոս և դիվանագիտական ներկայացուցիչ նշանակված պատգամավորների համար<sup>4</sup>։ Այս կատեգորիայի մարդկանց պատգամավորական կոչումը լիարժեքորեն պահպանվեց։ Ինչ վերաբերում էր պատգամավոր նախարարներին և նրանց օգնականներին, ապա ինչպես ասվել է, 1919 թ. սեպտեմբերի 19-ի օրենքով սրանք թեև պահպանում էին իրենց պատգամավորական կոչումը, սակայն զրկվում էին խորհրդարանում քվեարկությանը մասնակցելու իրավունքից<sup>5</sup>։ 1919 թ. հոկտեմբերի 23-ին պատգամավոր Վ. Խորենին օրինագիծ մտցրեց՝ «70 տարին լրացած պետական պաշտոնյաներին ծերության պատճառով պաշտոնաթող անելու և կենսաթոշակի ուղարկելու մասին»<sup>6</sup>։ Խորհրդարանը քայլեր ձեռնարկեց ուժեղացած պետական ապարատը կրճատելու ուղղությամբ։ Ստեղծվեց ժամանակավոր հանձնաժողով, որի միջոցով սկսեց կրճատվել պետական ծառայողների թիվը։ Ս. Վրացյանը վկայում է, որ 16 հազարանոց պետպաշտոնյաների թիվը (որի մեջ, ի դեպ, ներառված էին նաև ոստիկանությունը և երկաթուղային ծառայողները) կրճատվեց 4 հազարով։ ՀՀ վերջին շրջանում մնացել էր ընդամենը 12 հազար պաշտոնյա<sup>7</sup>։

Խորհրդարանի գործունեության տեսադաշտում են եղել երկրի սոցիալ-տնտեսական և կրթամշակութային զարգացման հարցերը։ Դա երևում է նրա ընդունած օրենքներից ու օրինագծերից։ Հանրապետության սոցիալական և կրթամշակութային կյանքի զարգացումը, ինչ խոսք, մեծ չափով կապված էր նրա տնտեսական վիճակի հետ։

Հայաստանի տնտեսությունը թույլ էր զարգացած։ Արդեն մեր կողմից քանիցս նշված հայտնի պատճառներով այն չէր կարող ուժեղ զարգացած լինել, որովհետև նախկինում Արևելյան Հայաստանը հանդիսանում էր ընդամենը ցարական Ռուսաստանի ագրարային կցորդը։ Պետք է ասել, որ տնտեսական ծանր վիճակ էր տիրում հանրապետությունում։ Հանրապետության տնտեսական ծանր դրությունը պետք է բացատրել ոչ միայն և ոչ այնքան կառավարության կամ խորհրդարանի անգործությամբ ու անկարողությամբ, որքան այն ծանր ժառանգությամբ, որ ստացել էր ցարիզմից և այն համընդ-

հանուր իրավիճակից, որն այդ շրջանում այնքան բնորոշ էր պատերազմից մոր դուրս եկած մնացած բոլոր երկրներին։

Այդուհանդերձ՝ հանրապետության տնտեսական կյանքում կատարվեցին նկատելի տեղաշարժեր և դրական փոփոխություններ։ Հայաստանն իր համեմատական կայունացմամբ հասավ Խառնիսյանի վարչապետության շրջանում։ Հանրապետության տնտեսական ծանր և քաղաքական անկայուն պայմաններով հանդերձ՝ կարճ ժամանակամիջոցում տեղի ունեցան տնտեսական և հասարակական-մշակութային դրական մի շարք փոփոխություններ։ Եվ այդ իմաստով անհիմն են խորհրդահայ պատմագրության մեղադրանքները. սևացնելով հանրապետության պատմությունը՝ դրական ոչ մի բան չէին տեսնում։ Նույն կերպ, այժմ էլ քննադատելով կոմունիստական ամբողջատիրական, հակադեմոկրատական ռեժիմը, չի կարելի ասել, թե դրանց օրոք տնտեսական, մշակութային ոչ մի լավ բան չի ստեղծվել։ Դա կույր քննադատություն է և պետք է մերժվի։

Որոշ փոփոխություններ կատարվեցին գյուղատնտեսության, անասնապահության, հանքարդյունաբերության, ապրանքափոխանակության բնագավառներում և այլն։

Շրջանառության մեջ էր դրվել հայկական դրամանիշը, որը տպագրվում էր Լոնդոնում։ Շրջանառության մեջ էին նաև ոսկե և արծաթե դրամները։ Հիմնվեցին պետական բանկեր (գանձատներ)։ Բարձրացվեց ակցիզային (աւուղակի) հարկը, կազմակերպվեց մաքսային գործը։ 1919 թ. երկրորդ կեսից սկսեց աշխուժանալ առևտուրը։ Երկրից արտահանվում էին բամբակ, կոնյակ, այլ խմիչքներ, բուրդ, կաշի, մորթի, պղինձ, աղ, չոր խոտ և այլն<sup>8</sup>։

Գյուղատնտեսության և պետգույքերի նախարարությանը կից գործում էր պետական ընդհանուր վիճակագրության գլխավոր բաժանմունքը, որի կառավարիչն էր «սպեցիֆիկ» Բ. Իշխանյանը։ Նրա բաժանմունքի հավաքած տվյալներով՝ մեկ տարվա ընթացքում (1919 թ. մարտից մինչև 1920 թ. մարտի 1-ը) պետության և մասնավոր մարդկանց կողմից արտահանվել է (չհաշված բամբակը) ընդամենը 170 հազ. փութ կամ 36032780 ռ. արծողությամբ ապրանք, որը հիմնականում խմիչք էր և կաշվեղեն<sup>9</sup>։ Վիճակագրական բաժանմունքը միաժամանակ տվյալներ է հրապարակել, որ ընդամենը չորս ամսում (1919 թ. նոյեմբեր- 1920 թ. փետրվար) Հայաստանից արտահանվել է 49929 փութ բամբակ<sup>10</sup>։ Այսպիսով, ոչ լրիվ տվյալներով՝ մեկ տարում Հայաստանից արտահանվել է շուրջ 220 հազար փութ համախառն ապրանք։

Ներմուծվում էին՝ նավթամթերք, հացահատիկ, ալյուր, բրինձ, շաքար, ձուկ, օճառ, թեյ, բուսական յուղ, կակաո, կտորեղեն, ապակի, դեղորայք և այլն։ Ներմուծումը, համեմատած արտահանման հետ, ուներ շատ մեծ տեսակարար կշիռ։ Այսպես՝ վերը նշված ժամանակաշրջանից ավելի պակաս

<sup>3</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 27, ք. 87։

<sup>4</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 81-82։

<sup>5</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 10, «ՀՀ օրենքների հավաքածու 1919 թ., էջ 15-16։

<sup>6</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 27, ք. 103։

<sup>7</sup> Ս. Վրացյան, Էջեր մոտիկ անցյալից («Հայրենիք», Բոստոն, 1924 թիվ 5 (մարտ), էջ 115)։

<sup>8</sup> Ա. Մ. Հակոբյան, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1992, էջ 15։

<sup>9</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 427, ք. 107-112։

<sup>10</sup> Նույն տեղում, ք. 117։

ժամկետում (9 ամսում) Հայաստան է ներմուծվել ավելի քան 5,5 մլն փութ համախառն ապրանք, որի արժեքը, չճշտված տվյալներով, կազմել է մոտ 443 մլն ռուբլի: Հատկանշական է, որ Հայաստան ներմուծվող այդ ապրանքների (5,5 մլն փութ) ընդհանուր ծավալում 77 տոկոսը (4,2 մլն փութ) կազմել են միայն ամերիկյան ապրանքներն ու մասնավորապես ամերիկյան օգնության հացամթերքը<sup>11</sup>: Այդ ընթացքում բացվեցին մի շարք գործարաններ, ջուլհականոցներ ու արհեստանոցներ՝ օճառի, կաշվի, կոնյակի, հախճապակու, ծխախոտի, մանածագործության և այլն: Վարչապետ Ալ. Խատիսյանի հայտնած տվյալներով՝ արդեն 1920 թ. կեսերին Հայաստանում աշխատում էր 67 գործարան<sup>12</sup>: Գյուղատնտեսության բնագավառում 1919 թ. ստացվել էր 1,7 մլն աստիճան խաղողի սպիրտ: Տեղաշարժեր նկատվեցին կրթության և առողջապահության գործում: 1919 թ. կեսերին հանրապետությունում կար 30 հիվանդանոց՝ 1600 մահճակալով: 1919-1920 ուստարում Հայաստանն ուներ շուրջ 500 տարբեր տիպի դպրոց, շուրջ 50 հազ. աշակերտներով: 1919 թ. մայիսից որոշվեց բացել համալսարան և այլն<sup>13</sup>:

Ահա համառոտ այսպիսին էր հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը, որի համար իրավաօրենսդրական փոքրիշատե պայմաններ էին արդեն ստեղծվել նախընթաց փուլում և ավելի մեծ աշխատանք էր սպասվում այժմ՝ Երկրորդ խորհրդարանից:

Խորհրդարանը նկատելի ուղադրություն դարձրեց վերաշինության հարցերին: Մասնավորապես, 1920 թ. ապրիլին Երևանի հատակագծման և կառուցապատման նպատակով որոշվեց բացել 22904950 ռ. վարկ<sup>14</sup>: Դրա տնօրինումը հանձնվեց խնամատարության և վերաշինության նախարարության գլխավոր ճարտարապետի վարչությանը: Այդ վարչության գլխավոր ճարտարապետն էր ակադեմիկոս Ալ. Թամանյանը: Այս շրջանում էլ նա գծեց քաղաքամայր Երևանի զարգացման առաջին գլխավոր հատակագիծը: Խնդիր դրվեց պատշաճ ուղադրություն դարձնել հանրապետության տարածքում գտնվող պատմամշակութային նշանակություն ունեցող հուշարձանների վերականգնմանն ու պահպանությանը: Այդպիսի հուշարձանների թվին էին դասվում Սարդարի պալատը, Անիի հուշարձանները, հանրապետության տարածքում գտնվող տաճարները, եկեղեցիները, ամրոցները, մզկիթները և այլն<sup>15</sup>:

1919 թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանի փոխնախագահ Լ. Շանթի վավերացմամբ հաստատվեց օրենք «Պետական լեզվի մասին»: Սա այն օրենքներից էր, որի նախագիծը կազմվել էր առաջին խորհրդարանի ժամանակ, բայց վերամշակման կարիք ունենալու պատճառով դրա ընդունումը

ձգձգվել և փոխանցվել էր երկրորդ խորհրդարան: Այս օրենքով հայերենը որպես պետական լեզու դառնում էր պարտադիր բանական, բոլոր պետական ու հասարակական հիմնարկություններում ու հաստատություններում: Պետական և հասարակական բոլոր հաստատությունները պարտավոր էին վեց ամսվա ընթացքում հայերենը դարձնել պետական գործավարության լեզու<sup>16</sup>:

Առաջնորդվելով լեզվի մասին օրենքով՝ հաղորդակցության, գյուղատնտեսության, խնամատարության և վերաշինության նախարարությունները 1920 թ. հունիսի 5-ին պաշտոնական հայտարարություն արեցին այն մասին, որ իրենց հասցեագրված ռուսաց լեզվով գրությունները այսուհետ ուղադրության չեն արժանանա և կմնան անպատասխան<sup>17</sup>: Այս կապակցությամբ առանձնապես շատ էին նեղվում գորական և ֆինանսների նախարարությունները, որոնց ուղարկած գրություն-շրջաբերականները որպես կանոն ռուսերեն լեզվով էին<sup>18</sup>:

Ի կատարումն «Պետական լեզվի մասին» օրենքի՝ բանակում հայերենը արմատավորելու և միակ պաշտոնական լեզու դարձնելու նպատակով նախարարների խորհրդի 1920 թ. մայիսի 30-ի հրահանգով ոչ ուշ քան մինչև մույն թվականի օգոստոսի մեկը զինվորական նախարարության համակարգում գրագրությունը և գործավարությունը պիտի տարվեին միայն հայերենով: Իսկ հայագրի այն սպաները, ովքեր չէին տիրապետում մայրենի լեզվին, սույն հրահանգով պարտավոր էին անմիջապես ձեռնամուխ լինել նրա տիրապետմանը: Այսուհետ արգելվում էր զինվորական նախարարության համակարգում ծառայության վերցնել հայոց լեզվին չտիրապետող անձանց<sup>19</sup>: Բացառություն էին կազմում միայն նրանք, ովքեր իրենց հատուկ մասնագիտական գիտելիքներով ու պատրաստվածությամբ տվյալ ժամանակամիջոցում անհրաժեշտ էին գործմասերին ու հիմնարկություններին: Այդուհանդերձ՝ մի քանի ամսվա ընթացքում զինվորական ծառայությունից ազատվեցին և բանակից զորացրվեցին 81 օտարագրի սպաներ ու աստիճանավորներ<sup>20</sup>: Սակայն կարծում ենք, որ այդպիսի քայլը տվյալ ժամանակաշրջանում արդարացված չէր: Որպես հավելում լեզվի մասին օրենքի՝ 1920 թ. հունիսի 15-ին ընդունվեց օրենք ՀՀ-ում պետական լեզվին՝ հայերենին չտիրապետող պետական ծառայողներին (պաշտոնյաներին) աշխատանքից ազատելու մասին: Ըստ այս օրենքի՝ այդպիսիներին տրվելու էր տարեկան դրույքի չափով միանվագ դրամական վարձատրություն և Հայաստանի սահմաններում երկաթուղով անվճար երթևեկման հնարավորություն:

<sup>16</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 30:

<sup>17</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 203, ց. 1, գ. 116, ք. 38

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> Մ. Լ. Կարապետյան, Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920), Եր., 1996, էջ 76:

<sup>20</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, ց. 1, գ. 142, ք. 189:

<sup>11</sup> Նույն տեղում, ք. 117:

<sup>12</sup> «Շակատամարտ», Կ. Պոլիս, 3 հուլիսի 1920 թ.:

<sup>13</sup> Մ. Մ. Հակոբյան, Հայաստանի Հանրապետություն, Ե., 1992, էջ 15-17:

<sup>14</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 58, ք. 12:

<sup>15</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, ց. 1, գ. 22, ք. 22:

Հայոց լեզվին չտիրապետող բարձրորակ պաշտոնյաներին ու մասնագետներին չկորցնելու և այս օրենքի համաձայն իրենց պաշտոններից հախուռն չազատելու նպատակով մինչ այդ՝ 1919 թ. նոյեմբերի 28-ի մեկ այլ օրենքով հանձնարարվել էր հանրային կրթության և արվեստի նախարարությանը Երևանում և Ալեքսանդրապոլում բացել հայոց լեզվի դասընթացներ՝ պետական պաշտոնատար ամձանց համար<sup>21</sup>։ Այստեղ խնդիրն այն էր, որ հայերենին չէին տիրապետում ոչ միայն այլազգի, այլև, ցավոք, հայազգի պաշտոնյաներից շատերը։ Պետական պաշտոնավարման համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող հայազգի կադրեր բուն Հայաստանում շատ քիչ էին։ Այդպիսիք համեմատաբար ավելի ստվար թիվ էին կազմում հարևան հանրապետություններում՝ Վրաստանում և Ադրբեջանում։ Ըստ կուսակցական պատկանելության՝ բարձր որակավորում ունեցող արհեստավարժ կադրեր ամենաշատ հաշվվում էին ՀԺԿ շարքերում։ Քիչ թվով մասնագետ-կադրեր կային նաև սոց. դեմոկրատների, էսեռների և մյուս ընդդիմադիր կուսակցությունների շարքերում։ Սակայն, իր հերթին, հիմնական կառավարող Դաշնակցություն կուսակցությունը այնքան էլ ոգեշունչ չէր պետապարատում, պետաիրավական հաստատություններում ներգրավել իրեն ախոյան կուսակցությունների ներկայացուցիչներին։ Նման կադրային քաղաքականությունը, ինչ խոսք, բացասաբար պետք է անդրադառնար հանրապետության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի վրա։

1919 թ. սեպտեմբեր-դեկտեմբերին ընդունվեցին օրինագծեր՝ Ազգագրական-մարդաբանական թանգարան, պետական հանրային գրադարան, թատերական վարժարան հիմնելու մասին, որոնք դրվեցին հանրային կրթության և արվեստի նախարարության իրավասության տակ<sup>22</sup>։ Ազգագրական թանգարանին էր հանձնվում «Հայոց ազգագրական ընկերության» շարժական և անշարժ ամբողջ գույքը։ Թանգարանի պահպանության համար հատկացվեց 30 հազ. ռուբլի վարկ<sup>23</sup>։ 1920 թ. մարտի 24-ին խորհրդարանը հաստատեց Հայաստանի պետական հանրային գրադարանի կանոնադրությունը։ Պետք է ասել, որ կուլտուր-գիտական և կրթական հիմնարկությունները պահպանվում ու ֆինանսավորվում էին պետության միջոցներով<sup>24</sup>։

1920 թ. հունվարի 3-ին ընդունվեց օրենք՝ եկեղեցին պետությունից անջատելու մասին<sup>25</sup>։ Ապրիլի 3-ին հաստատվեց մեկ այլ օրինագիծ՝ հայոց հոգևոր ուսումնական հաստատությունների և ծխական-եկեղեցական դպրոցների աշխարհականացման ու պետականացման մասին<sup>26</sup>։ Ընդ որում կատարվելու էր մինչ այդ չբացված եկեղեցական դպրոցների գույքի մասնակի

քոնագրավում (սեկուլյարիզիցիա)<sup>27</sup>։ Միաժամանակ հայտարարվում էր խղճի ազատություն։ Առարկաների դասավանդումը դպրոցներում պետք է տարվեր մայրենի լեզվով։ Թույլատրելի էին համարվում ինչպես պետական, նույնպես և ոչ պետական դպրոցները։ Օրենքում պահանջ էր դրված դպրոցը հեռու պահել քաղաքականությունից և այլն<sup>28</sup>։

Մշակվեցին դպրոցական ուսումնամեթոդական ծրագրեր։ Ն. Աղբալյանի և Գ. Ղազարյանի նախարարության շրջանում քայլեր արվեցին արմատախիլ անել ուսման մեթոդաբանական բնույթը, կրթությանը կից կարևորություն տալով նաև աշակերտների մոտ աշխատանքային դաստիարակությանը, պրոֆեսիոնալ կողմնորոշմանը, արհեստների տիրապետմանը։ 1920 թ. մայիսից հայերենին չտիրապետող ուսուցիչները ազատվեցին աշխատանքից<sup>29</sup>։ Դպրոցն ու կրթությունը ավելի ու ավելի դառնում էին ազգային ու հայեցի։ Հայաստանի խորհրդարանի ընդունած վերոհիշյալ օրենքներում ընդհանրականն այն էր, որ գերազանցապես դաշնակցականներից բաղկացած խորհրդարանը ընդգծում էր իր ազգային բովանդակությունը։

ՀՀ խորհրդարանն ու կառավարությունը քայլեր ձեռնարկեցին նաև անգրագիտության վերացման (հաղթահարման) ուղղությամբ։ 1920 թ. հունվարի 5-ին խորհրդարանի հաստատած օրենքով ժողովրդի կրթությանը նպաստելու համար հիմնվում են. ա) անգրագետ հասակավորների համար գրագիտական դասընթացներ. բ) թերվարժ (կիսագրագետ) հասակավորների համար՝ գրավարժական դասընթացներ և գ) գրագետ հասակավորների համար՝ ժողովրդական համալսարաններ<sup>30</sup>։ Այդ դասընթացները կազմակերպվելու էին վեց ամիս տևողությամբ, որոնցում դասավանդվելու էին հայոց լեզու, գրականություն, աշխարհագրություն, թվաբանություն, բնագիտություն, հասարակական գիտություններ և այլն։ Դասընթացներն ու ժողովրդական համալսարանները կարող էր հաճախել անեն որ՝ առանց կրոնի, ազգի և սեռի խտրության։ Դրանցում կրթությունը անվճար էր։ Ուշադրություն է դարձվել նաև մաթադպրոցական հիմնարկների ստեղծմանը։ 1920 թ. հունվարի 2-ին կառավարությունը օրինագիծ մտցրեց խորհրդարան՝ պահանջելով 222 հազ. ռուբլի վարկ՝ հանրապետության 15 վայրերում մանկապարտեզներ բացելու համար<sup>31</sup>։

Նկատի ունենալով մանկավարժական կադրերի պակասը՝ հանրային կրթության և արվեստի նախարարության առաջարկությամբ 1919 թ. հոկտեմբերի 2-ին խորհրդարանը օրենք հաստատեց զինապարտության տարիքի հաստիքավոր ուսուցիչներին և վերատեսուչներին զորակոչից (զինծառայությամբ)։

<sup>21</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 202, ց. 1, գ. 333, ք. 30։

<sup>22</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 20, քք. 57-59, 94, ֆ. 203, ց. 1, գ. 57, ք. 47։

<sup>23</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 202, ց. 1, գ. 333, ք. 7, «ՀՀ օրենքների հավաքածու 1919 թ.», էջ 10։

<sup>24</sup> «ՀՀ օրենքների հավաքածու 1920 թ.», էջ 41-42։

<sup>25</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 20, ք. 1։

<sup>26</sup> Նույն տեղում, ք. 40։

<sup>27</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, ք. 240։

<sup>28</sup> «Կառավարության լրաբեր», 10 սեպտեմբերի 1918 թ.։

<sup>29</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 207, ց. 1, գ. 136, ք. 2։

<sup>30</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 202, ց. 1, գ. 303, ք. 73։

<sup>31</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2776, ք. 4։

յունից) ազատելու վերաբերյալ<sup>32</sup>։ Բացի այդ, հաշվի առնելով ազգաբնակչության ցածր կենսամակարդակն ու վնասվածությունը և նպատակ դնելով դպրոցահասակ երեխաներին ներգրավելու կրթության ոլորտում՝ 1919 թ. որոշում ընդունվեց երկրում մտցնել անվճար տարրական ուսուցում<sup>33</sup>։ Այնուհետև կառավարության հրահանգով սահմանվեց պարտադիր տարրական ուսուցում<sup>34</sup>։ Սակայն դպրոցներում համապատասխան դասագրքերի ու գրեմական պիտույքների սղության պատճառով այդ ազգանպաստ որոշումները մնացին կիսակատար։

Առանձին քայլեր ձեռնարկվեցին կրթության ոլորտ չքավոր, գաղթական և որբ երեխաներ ընդգրկելու ուղղությամբ։ Պետության հաշվին սրանց տրվում էր պատսպարան, անվճար սնունդ, գրեմական պիտույքներ։ Կրթության նախարարության ոչ լրիվ տվյալներով՝ օգնության կարիք ունեցող այդպիսի դպրոցահասակ երեխաների թիվը հասնում էր շուրջ 22 հազարի<sup>35</sup>։

Չնայած հանրապետության ֆինանսատնտեսական սուղ հնարավորություններին՝ այնուամենայնիվ բավականաչափ ուշադրություն էր դարձվում բնակչության սոցիալական պաշտպանվածության խնդիրներին։ Իր հայացքներով սոցիալիստ, դաշնակցական Վ. Խորենին 1920 թ. հունվարին խորհրդարան ներկայացրեց բանվորության նվազագույն աշխատավարձի մասին օրինագիծը, որով չափահասների համար ամսական սահմանվում էր 2000 ռուբլի աշխատավարձ, իսկ անչափահասների համար՝ 1300 ռուբլի<sup>36</sup>։ Սակայն հաշվի առնելով հանրապետության տնտեսական ծանր դրությունը՝ խորհրդարանը որոշեց ժամանակավորապես հետաձգել օրինագծի ընդունումը։ Դրանի արժեզրկման պայմաններում կառավարության ներկայացմամբ խորհրդարանը համապատասխան օրենքով բարձրացնում է կենսաթոշակների և այլ նպաստների չափերը։ Այսպես՝ 1920 թ. մարտի 24-ին հաստատված օրենքով կենսաթոշակների չափերը ավելացան մի քանի անգամ՝ 325-ից մինչև 500 տոկոսով<sup>37</sup>։

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում պատերազմում զոհվածների ընտանիքների պաշտպանությանը։ Այս կապակցությամբ ուշագրավ ենք համարում կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանի կազմած և 1919 թ. սեպտեմբերի 29-ի թիվ 2956 գրությամբ նախարարների խորհուրդ ու խորհրդարան ուղարկված օրինագիծը. «Հայաստանի ազատագրության կռվում զոհված զինվորների զավակներին ձրի դասական (դպրոցական - Ա. Հ.) պիտույքներ մատակարարելու մասին»։ Երեք կետից բաղկացած այս նախագիծը բովանդակում էր հետևյալ կետերը.

1) Սկսած 1919 թ. սեպտեմբերի 1-ից պետական գանձարանի հաշվին ձրի դասական պիտույքներ մատակարարել այն բոլոր դպրոցականներին, որոնց ծնողները զոհ են գնացել Հայաստանի ազատագրական պայքարին՝ սկսած 1914 թ. սեպտեմբերի 1-ից։

2) Հիշյալ պիտույքները մատակարարել կամավորների, զինվորների, սպաների, բժիշկների և գթության քույրերի զավակներին։

3) Հիշյալ նպաստի գործը հանձնարարել հանրային կրթության և արվեստի նախարարությանը՝ այդ նպատակի համար տրամադրելով նրան 200 հազար ռուբլի<sup>38</sup>։

Խորհրդարանի դպրոցական-կրթական հանձնաժողովը վերաքննության է ենթարկում այդ նախագիծը և որոշ ձգձգումներից հետո 1920 թ. հունվարի 5-ին հաստատում հետևյալ բովանդակությամբ. «Պետության հաշվին անվճար դասական պիտույք մատակարարել ՀՀ դպրոցներում սովորող բոլոր այն չքավոր դպրոցականներին, որոնց ծնողները զոհվել են Հայաստանի ազատագրության ու պաշտպանության և հայ ժողովրդի ինքնապաշտպանության համար»<sup>39</sup>։ 5 հունվարի, 1920 թ., խորհրդարան, փոխնախագահ՝ Լ. Շանթ։

Ի կատարումն այս օրենքի՝ նույն օրվա նիստում խորհրդարանն ընդունում է մեկ այլ օրենք, որով 1919/1920 ուստարում վերոհիշյալ կարգախմբի դպրոցական երեխաների համար, պետության հաշվին անվճար դասական պիտույք մատակարարելու նպատակով, բացվում է 100 հազար ռուբլի վարկ<sup>40</sup>։

Հայ գրողների, գիտնականների և հրապարակախոսների նյութական պայմանները քիչ թե շատ մեղմելու նպատակով՝ 1919 թ. հուլիսին նախարարների խորհուրդը հատկացնում է 100 հազ. ռուբլի<sup>41</sup>։ Հեղինակների երկերի հրատարակության համար հատկացվեց 3,2 մլն ռուբլի, նույնքան գումար էլ՝ գիտական և գեղարվեստական գրականության թարգմանությունների համար<sup>42</sup>։

1920 թ. ամանորյա առաջին նիստում (թիվ 57) խորհրդարանի դպրոցական-կրթական հանձնաժողովի նախագահ Ս. Թորոսյանը օրինագիծ ներկայացրեց «Հանրային կրթության պաշտոնյաների ռոճիկի հավելման մասին», որն հաստատվեց հաջորդ օրը 27 ձայնով<sup>43</sup>։

1920 թ. հունվարի 8-ի նիստում նախարար Ն. Աղբալյանը դարձյալ հանդես է գալիս օրենսդրական նախաձեռնության իրավունքով և օրինագիծ է ներկայացնում՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս գտնվող հայ

<sup>32</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 207, ց. 1, գ. 49, մաս 2, ք. 56։

<sup>33</sup> Նույն տեղում, գ. 114, ք. 6։

<sup>34</sup> Նույն տեղում։

<sup>35</sup> Նույն տեղում, գ. 116, ք. 81, գ. 420, ք. 27։

<sup>36</sup> «Հառաջ», 1920, թիվ 6։

<sup>37</sup> «ՀՀ օրենքների հավաքածու 1920 թ.», էջ 43։

<sup>38</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, 1, գ. 98, ք. 44։

<sup>39</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 72։

<sup>40</sup> Նույն տեղում, ք. 73, «ՀՀ օրենքների հավաքածու 1920 թ.», էջ 7։

<sup>41</sup> «Կառավարության լրաբեր», 24 հուլիսի 1919 թ.։

<sup>42</sup> Ա. Մ. Հակոբյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1992, էջ 17-18։

<sup>43</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 52, ք. 3-5։

կրթական գործին նպաստելու համար 1,5 մլն ռուբլի վարկ հատկացնելու մասին: Խորհրդարանը, լսելով թերևս և դեմ կարծիքները, 18 ձայնով որոշում է կառավարության 10 միլիոն ռուբլու պահուստային ֆոնդից 1.5 միլիոնը հատկացնել կրթության գործի համար<sup>44</sup>: Բացի այդ, նախարար Ն. Աղբալյանի նախաձեռնությամբ նախահաշիվ կազմվեց՝ Ջանգեզուրում բացել 45 տարրական դպրոց՝ 82 դասարաններով, և մեկ միջնակարգ դպրոց<sup>45</sup>: Կրթության և արվեստի նախարարը, հանդես բերելով պահանջկոտություն ու հետևողականություն, 1920 թ. մարտի 13-ի թիվ 1186 գրությամբ ֆինանսների նախարարության բյուջե-գանձարանային բաժնից պահանջում էր, որ հաստատված ժամանակավոր նախահաշիվով իր ենթակայության տակ եղած վարկից, առանց իր կարգադրության, ոչ մի հիմնարկության վարկ չբացել<sup>46</sup>: Այս ամենը ինքնին ցույց է տալիս, թե որքան զգալի են եղել Ն. Աղբալյանի ծառայությունները հայ մշակույթի ու լուսավորական-կրթական գործում:

1920 թ. մարտի 5-ին թիվ 71 նիստում Ավ. Սահակյանի նախագահությամբ ֆինանսաբյուջետային հանձնաժողովի անդամ Հ. Սարգսյանը օրինագիծ է ներկայացնում «Վաստակավոր գրողներին օգնելու համար վարկ բաժնալու մասին»<sup>47</sup>: Պատգամավոր Ս. Վրացյանը առաջարկում է նախատեսված վարկի չափը մեկից հասցնել 1,5 մլն ռուբլու, իսկ էսեռ Ա. Խոնդկարյանը առաջարկում է վարկը բաց թողնել գրողների ընկերությանը: Հանձնարարվում է ավելի ամբողջական օրինագիծ մտցնել խորհրդարան<sup>48</sup>:

1920 թ. ամռանը, Հայաստանի ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հետագա խորացման պայմաններում, թանկացումների դեմն առնելու նպատակով ընդունվում է «Օրենք գների բարձրացման մասին»: Օրենքը նախատեսում էր մինչև երկու տարվա բանտարկություն կամ մեկ մլն ռուբլու տուգանք այն անձանց նկատմամբ, ովքեր շահադիտական նպատակով առաջնահերթ անհրաժեշտության ապրանքները (պարեն, վառելանյութ, դեղորայք և այլն) կվաճառեն տնտեսապես չհիմնավորված չափազանց բարձր գներով<sup>49</sup>:

Այսպիսով, չնայած Հայաստանի նյութական սուղ հնարավորություններին ու քաղաքական ոչ այնքան կայուն վիճակին՝ հանրապետության խորհրդարանի ու կառավարության գործունեությունը ունեցել է ընդգծված սոցիալական ուղղվածություն, աշխատավորության շահերը պաշտպանելու միտում, որով էլ ընդգծվում էր երկրի հիմնական քաղաքական դեկավար ուժի՝ ՀՅԴ սոցիալիստական բովանդակությունը:

## 2. Ֆինանսավարկային հարցերը խորհրդարանում

Հայաստանի խորհրդարանը իր երկամյա գործունեության ընթացքում համապատասխան օրենքներով ու հրահանգումներով կատարել է ֆինանսական հատկացումների հանրապետության կենսագործունեության ամենատարբեր ոլորտների համար՝ տնտեսական, սոցիալական, կրթամշակութային, պաշտպանական, խնամատարական և այլն<sup>50</sup>:

Հատկանշական է, որ խորհրդարանի կողմից կատարվող ֆինանսական հատկացումների հիմնական մասը գնում էր երկու կարևոր ոլորտների (հողվածների) բանակի ու պաշտպանության և զարթոցանության ու որբերի խնամքի վրա: Խորհրդարանը միջոց ու ջանքեր չէր խնայում առաջին հերթին ամրապնդելու ու գորացնելու հայոց բանակը: Դա հատկապես երևում է ֆինանսական այն հատկացումներից, որ արվել են պաշտպանության ու բանակի կարիքների համար: Վարչապետ Ա. Խատիսյանի հաղորդած տվյալներով՝ 1919 թ. կեսերին բանակի վրա ամսական ծախսվում էր 500 մլն. ռուբլի: Ըստ նրա՝ պետբյուջեի ամբողջ ծավալի շուրջ 75 տոկոսը գնում էր բանակի և պաշտպանության նպատակների վրա<sup>51</sup>: ՀՀ փորձը ցույց տվեց, որ սեփական բանակ պահելը դժվարին խնդիր է և կապված է հսկայական ծախսերի հետ: Մարտունակ և որակյալ բանակ ունենալու առաջին նախապայմանը, ամշուշտ, հզոր տնտեսություն ունենալու մեջ է:

Ֆինանսական հատկացումների մյուս խոշոր քնազավառը բնակչության խնամատարությունն էր ու հատկապես զաղթականների ու որբերի պահպանությունը: Սա դեռ բավական չէր, ՀՀ խորհրդարանն ու կառավարությունը իրենց սուղ հնարավորության պայմաններում հարկադրված էին լինում օգնության ձեռք մեկնել նաև հանրապետության սահմաններից դուրս իր արյունակից եղբայրներին: Այսպես, օրինակ, 1919 թ. դեկտեմբերին խորհրդարանի հաստատմամբ ՀՀ կառավարությունը Ախալքալաքի հայ ազգաբնակչության կարիքների համար հատկացրեց 10 մլն ռուբլի վարկ<sup>52</sup>: Իսկ 1920 թ. փետրվարին հանրապետության օգնության ֆոնդից նույն զավառի հայ բնակչությանը բաց թողվեց 30 հազ. փութ հացահատիկի սերմացու<sup>53</sup>:

Խոսելով խորհրդարանի ֆինանսավարկային գործունեության մասին, հարկ է ասել, որ մինչև 1920 թ. մայիսը, այնուամենայնիվ, նա ներագրում ու

<sup>50</sup> 1919 թ. երկրորդ կեսից ՀՀ ֆինանսական համակարգում արդեն գործածության մեջ էին հայկական չեկերը և այլ դրամանիշեր: Նոյեմբեր ամսին խորհրդարանը թույլատրեց կառավարությանը՝ ֆին. նախարարին, ըստ կարիքի բաց թողնել 400 մլն, իսկ 1920 թ. ապրիլին 500 մլն ռուբլու չեկեր ու այլ դրամանիշեր: (Տես՝ «ՀՀ օրենքների հավաքածու 1919 թ.», էջ 42-43 և «ՀՀ օրենքների հավաքածու 1920 թ.», էջ 62:

<sup>51</sup> «Ճակատամարտ», 3 հուլիսի 1920 թ.:

<sup>52</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, գ. 1, գ. 14, թ. 123:

<sup>53</sup> Նույն տեղում, գ. 118, թ. 38:

<sup>44</sup> Նույն տեղում, գ. 57, թ. 3:

<sup>45</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, գ. 1, գ. 339, թ. 6:

<sup>46</sup> Նույն տեղում, թ. 12:

<sup>47</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, գ. 1, գ. 52, թ. 22:

<sup>48</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, գ. 1, գ. 32, թ. 2:

<sup>49</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, գ. 1, գ. 333, թ. 176:

չափավորում էր կառավարության տնտեսապես չհիմնավորված քայլերը: Բայց արդեն Բյուրո-կառավարության ժամանակաշրջանից՝ 1920 թ. մայիսից, երբ խորհրդարանը հարկադիր արձակուրդի ուղարկվեց, կառավարության կողմից բաց թողնվեցին տնտեսապես չհիմնավորված հսկայական ֆինանսավարկային միջոցներ, որոնք էլ շատ ավելի մեծ տեմպերով արժեզրկեցին թղթադրամը ու Հայաստանը հայտնվեց ֆինանսական ճգնաժամի մեջ:

Բյուրո-կառավարությունում ֆինանսների նախարարը Ա. Գյուլյանը դանդաղ էր, որը մասնագիտորեն այնքան էլ չէր տիրապետում ֆինանսատնտեսական, վարկային ու հարկային քաղաքականության հարցերին: 1920 թ. հունվարին նա արդեն մեկ անգամ սուր քննադատության ենթարկվել էր խորհրդարանում ն. գ. նախարարի պաշտոնում եղած ժամանակ: 1920 թ. երկրորդ կիսամյակում հանրապետության ֆինանսական վիճակի կտրուկ վատթարացումը պետք է բացատրել նաև նրանով, որ խորհրդարանը չէր գործում, չկար օրենսդիր մարմնի վերահսկողությունը կառավարության ֆինանսական գործունեության վրա: Իսկ վերջինս էլ յուրացնելով խորհրդարանի լիազորությունները՝ ֆինանսավորում էր ինքն իրեն՝ ինչպես ուզեր և որքան ցանկանար:

Այդ շրջանում ամենաբուռն կերպով գործում էր միայն թղթադրամի տպագրության մեքենան: Հայկական դրամի արժեզրկման դիմամիկան ցույց տալու համար բերենք հետևյալ աղյուսակը<sup>54</sup>:

Օտար դրամների հարաբերակցությունը հայկական չեկերի նկատմամբ 1920 թ.			
1. ԱՄՆ-ի մեկ դոլարը	մարտ հայկ. ռուբլի	մայիս հայկ. ռուբլի	նոյեմբեր հայկ. ռուբլի
	560	1000	28000
2. Թուրքական մեկ լիրան	470	900	20000
3. Վրացական 1000 ռ. բոները	2000	5000	10000

Այսինքն՝ 8 ամսվա ընթացքում հայկական դրամը արժեզրկվել էր ավելի քան 50 անգամ: 1920 թ. 11 ամիսների ընթացքում բաց էր թողնվել արդեն 11 մլրդի հայկական չեկ<sup>55</sup>: Կարելի է վստահ ստել, որ Բյուրո-կառավարությունը ֆինանսա-տնտեսական առումով ավելի խորացրեց երկրի ֆինանսական ճգնաժամը՝ փաստորեն այն հասցնելով կրախի:

<sup>54</sup> Գ. Չախուշյան, Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լիներ մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 12:  
<sup>55</sup> Գ. Չախուշյան, նշվ. աշխ. էջ 12:

Ֆինանսների կայունացման երաշխիքը կառավարությունը տեսնում էր Հայաստանի միջազգային ճանաչման մեջ, որը հնարավորություն կտար արտաքին փոխառություններ ու վարկեր վերցնել<sup>56</sup>: Հայաստանի ֆինանսական վիճակի անընդհատ վատացման կապակցությամբ արտասահմանում փոխառություններ կնքելու համար, կառավարության որոշմամբ 1920 թ. հունիսի կեսերին նախկին վարչապետ Ա. Խատիսյանը գործուղվեց արտասահման<sup>57</sup>: Նախատեսվում էր կնքել 20 մլն դոլարի «Անկախության փոխառություն»<sup>58</sup>:

Ի դեպ, «Անկախության փոխառության» կապակցությամբ ընդդիմադիր Ժողովրդական, Ռամկավար, ՀՍԴ կուսակցությունները, ինչպես նաև «Անկուսակցականների միությունը» հավանություն տվեցին և օժանդակեցին կառավարության այդ ձեռնարկին<sup>59</sup>: Անգամ արտասահմանի հնչականները պատրաստակամություն հայտնեցին առանց որևէ նախապայմանի մասնակցել «Անկախության փախառությանը»՝ այն համարելով ազգային, պետական մեծ կարևորության գործ<sup>60</sup>: Փոխառության մարումը պետք է սկսվեր 1925 թ. և ավարտվեր 1930 թ.<sup>61</sup>: Բայց դա ի վիճակի չէր փրկելու դրությունը:

Հայաստանի կառավարության ֆինանսատնտեսական քաղաքականության բացթողումներից պետք է համարել այն, որ ներքին ռեսուրսները և դրսից ստացվող վարկերն ու օգնությունը ներդրվում էին ոչ այնքան տնտեսությունը, արտադրողական ուժերը զարգացնելու, հիմնական ֆոնդերը նորացնելու, տեխնիկան ու սարքավորումները կատարելագործելու նպատակով, որքան կենսամթերքներ գնելու, մարդկանց նյութապես օգնելու համար: Միզուցե այդպես էլ պետք է լինել, քանզի որբերով ու գաղթականներով լեցուն, պատերազմից քայքայված ու անորոշության մեջ գտնվող հանրապետության ազգաբնակչության համար առաջնայինը գոյապահպանության խնդիրն էր:

Ֆինանսավարկային գործունեության հետ է առնչվում նաև առևտրամաքսային քաղաքականությունը: Հայաստանի կառավարությունը իրականացնում էր առևտուրը խրախուսող մաքսային քաղաքականություն: Հանրապետությունում գործում էին առաջին և երկրորդ կարգի հետևյալ մաքսային կետերը՝ Ջուլֆայի, Սարիղամիշի, Կարաուրզանի, Քուլագերանի, Երևանի, Կաղզվանի, Ուզունբալայի, Շահթախթի, Իգդիրի և այլն<sup>62</sup>: Մաքսային կետերը առաջնորդվում էին Հայաստանի խորհրդարանի կողմից մշակված և ընդունված կանոնադրությամբ: Հանրապետության ներսում ամեն տեսակ ապրանքների ու կենսամթերքների տեղափոխությունն ազատ էր: Տակավին

<sup>56</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 35, ք. 89:

<sup>57</sup> Նույն տեղում, գ. 576, ք. 157:

<sup>58</sup> Նույն տեղում, գ. 511, ք. 79, Ժ. 199, ց. 1, գ. 176, ք. 3-4:

<sup>59</sup> «Հայաստանի ծայն», 22 հունիսի 1920 թ., «Ժողովուրդ», 23 հունիս 1920 թ.:

<sup>60</sup> «Երիտասարդ Հայաստան», 15 սեպտեմբերի 1920 թ.:

<sup>61</sup> «Հայաստանի կոոպերացիա», 31 հուլիսի 1920 թ. (թիվ 14), էջ 532:

<sup>62</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 52, ք. 17:

1918 թ. սեպտեմբերից սահմանվել էր, որ արտասահմանից բոլոր տեսակի ապրանքների մուտքը (ներմուծումը) հանրապետություն ազատ է և մաքսատուրքի (հարկման) ենթակա չէ: Ներմուծվող ապրանքները սահմանազրկվին պարզապես պետք է ցուցակագրվեն<sup>63</sup>:

1919 թ. հունիսի 17-ին ՀՀ դիվ. ներկայացուցիչ Տ. Բեկզադյանը Ադրբեջանի կառավարության հետ կնքեց միմյանց միջև տարանցիկ ազատ առևտրի պայմանագիր, մեկ տարի ժամկետով: Այդ պայմանագրով արտոնվեց Հայաստանին Ադրբեջանից գնելու մինչև 8 մլն. փութ նավթամթերք՝ միջազգային սահմանված զներով<sup>64</sup>: Բայց հայ-ադրբեջանական աննպաստ քաղաքական հարաբերությունները թույլ չտվեցին այս պայմանագիրը հետևողականորեն իրագործել: Ի տարբերություն Ադրբեջանի՝ Հայաստանի հարաբերությունները համեմատաբար ավելի բարվոք էին Վրաստանի հետ: 1919 թ. նոյեմբերի 5-ին ազատ տրանզիտի մասին պայմանագիր է ստորագրվում Վրաստանի հետ, դարձյալ երկու կողմից առանց մաքսատուրքի: Պայմանագիրը կնքվել էր երեք տարի ժամկետով: Ընդ որում՝ կողմերին իրավունք էր տրվում ամեն տարի այն վերանայել ու կրկին վավերացնել: Իհարկե, միջպետական պայմանագրերը վավերացնում էին խորհրդարանները: Հիշյալ պայմանագիրը միաժամյան հաստատվում է Հայաստանի խորհրդարանի 1919 թ. նոյեմբերի 11-ի նիստում<sup>65</sup>: Պետք է ասել, որ Հայաստանի խորհրդարանը շատ քիչ առիթներ է ունեցել միջպետական այլաբնույթ պայմանագրեր վավերացնել: Ընդհանուր առմամբ կառավարության առևտրամաքսային քաղաքականությունը առանձնապես չէր նպաստում բյուջեի եկամուտների համալրմանը:

### 3. Ներգաղթի խնդիրը խորհրդարանում

Հայաստանի խորհրդարանն ու կառավարությունը արևմտահայության՝ դեպի Երկիր ներգաղթի խնդիրը բնականաբար կապում էին Հայկական հարցի բարենախառն լուծման ընթացքի հետ: Հայկական պատվիրակությունները երբեմն իրենց հակասական գործողություններով տակավին շարունակում էին դիվանագիտական ջանք թափել Եվրոպայի ու Ամերիկայի քաղաքական շրջաններում:

Հայկական հարցի լուծումն արագացնելու և հայ ժողովրդի անվտանգությունը բուրքական հավանական սպառնալիքից պաշտպանելու մտահոգությամբ 1919 թ. օգոստոսին Հայաստանի խորհրդարանը հուշագիր ընդունեց ուղղված Ամերիկայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի,

Բելգիայի, Սերբիայի, Հունաստանի, Ռումինիայի, Չինաստանի, Իսպանիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Հոլանդիայի, Պորտուգալիայի և Իրանի խորհրդարաններին<sup>66</sup>: Թվարկված երկրները Հայաստանը դիվանագիտորեն ճանաչած ոչ բոլոր պետությունների ցանկն էր: 1919 թ. հուլիսի 17-ին Փարիզի խաղաղության խորհրդաժողովը հրաման էր արձակել՝ հայ գաղթականներին հնարավորություն տալ վերաբնակվելու իրենց նախկին բնակության վայրերում<sup>67</sup>:

1920 թ. գարնանը, երբ մեծ տերությունները փաստացի ճանաչել էին ՀՀ և արդեն մշակվում էր Թուրքիայի հետ ապագա հաշտության պայմանագրի նախագիծը, ավելի գործնական հողի վրա դրվեց աշխարհասփյուռ արևմտահայ գաղթականությանը՝ դեպի Երկիր ներգաղթեցնելու խնդիրը: «Միացյալ Հայաստանի անկախության հայտարարումից հետո, - գրում էր «Հայաստանի աշխատավորը», - ամենամեծ խնդիրը տնտեսության վերականգնման և արևմտահայության ներգաղթի կազմակերպումն էր իր բուն հայրենիք»<sup>68</sup>: Հայաստանի քաղաքական ղեկավարությունը քաջ գիտակցում էր, որ առանց զանգվածային ներգաղթի Միացյալ Հայաստանի գաղափարը կարող էր վերածվել մեռած տառի:

Ներգաղթի խնդիրներով զբաղվող, արևմտահայ գործիչ, պատգամավոր Ա. Մաքսապետյանի ներկայացրած տվյալներով՝ 1919 թ. գարնանը Կովկասում կային 222 հազ. գաղթական, Բաղդադ-Բակուբեում՝ 15 հազ. , Հալեպում՝ 80 հազ., Եգիպտոսում՝ 10 հազ. և այլն<sup>69</sup>: Դեռ 1918 թ. վերջերին, երբ Թուրքիան արդեն պարտվել էր, արևմտահայ հասարակական-քաղաքական գործիչ Ա. Կիսուրը հարց էր բարձրացնում, որ «Տաճկահայր պետք է վերադառնա Երկիր ու տեր դառնա իր երկրին և ունեցվածքին»<sup>70</sup>: Տեղեկություններ կան, որ 1919 թ. ամռանը արևմտահայ գաղառներում և Կիլիկիայում եղել է 360 հազար հայ<sup>71</sup>:

Հույս էր հայտնվում, որ արևմտահայերի ներգաղթը դեպի Երկիր կթեթևացներ կովկասահայ ժողովրդի վիճակը: Արևմտահայ մի ստվար հատված կար Հյուսիսային Կովկասում, ուր մինչև 1920 թ. գարունը տնօրինում էր Դենիկինը: ՀՀ կառավարության հարաբերությունները Դենիկինի իշխանության հետ բարեկամական էին (բացի ռազմաքաղաքական ու տնտեսական հանգամանքներից) նաև այն ակնկալիքով, որ այնտեղ կար հարյուր հազարի չափ հայ գաղթականություն, որ գտնվում էր քիչ թե շատ տանելի պայմաններում<sup>72</sup>: Ծրագրվում էր այստեղի գաղթական հայությանը կամ ծովով կամ էլ

<sup>66</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 26 օգոստոսի 1919 թ.:

<sup>67</sup> Ա. Մաքսապետյան, Սարդարապատից մինչև Սեւր և Լոզան (քաղաքական օրագիր), Պոսթըն, 1943, էջ 28:

<sup>68</sup> «Հայաստանի աշխատավոր», 20 հունիսի 1919 թ.:

<sup>69</sup> Նույն տեղում:

<sup>70</sup> «Կայծ», 29 դեկտեմբերի 1918 թ.:

<sup>71</sup> «Կայծ», 27 հունիսի 1919 թ.:

<sup>72</sup> Ռուբեն, մշվ. աշխ., հ. Է, Լոս Անջելես, 1952, էջ 258:

<sup>63</sup> «Հորիզոն», 23 հոկտեմբերի 1918 թ.:

<sup>64</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 12, ք. 42-43:

<sup>65</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, ֆ. 202, ց. 1, գ. 333, ք. 52-53, ֆ. 200, ց. 1, գ. 86, ք. 80-81:



Վրաստանի վրայով փոխադրել Երկիր: Կան բազմաթիվ փաստեր ու վկայություններ, որ նման ծրագրի իրագործման ճանապարհին զանազան խոչընդոտներ ու կամայականություններ է հարուցում Վրաստանը<sup>73</sup>: Պետք էր ներգաղթեցնել ոչ միայն Կովկասում ապաստանած արևմտահայերին, այլև Միջագետքի գաղթականությանը: 1920 թ. ապրիլի 3-ի նիստերից մեկում խորհրդարանը (40 կողմ և 5 ձեռնպահությամբ) ընդունում է որոշում խնամատարության նախարարության անունով բացել 5 մլն ռուբլի վարկ Բակուբոմ (Միջագետք) գտնվող 18 հազար եղեռն վերապրած գաղթականներին և մահմեդականների մոտ գտնվող հայ գերիներին ազատելու համար<sup>74</sup>:

Թեև 1920 թ. մարտ ամսից ն. գ. նախարարությունում հիմնվել էր ներգաղթի հանձնաժողով, որը պետք է կազմակերպեր արևմտահայության ներգաղթը դեպի Երկիր, բայց այդ գործը կապված էր մշտական վտանգների ու մեծ ծախսերի հետ, ուստի և այն շատ դանդաղ էր ընթանում<sup>75</sup>: Նախնական հաշվարկներ էին արված, որ Կովկասից դեպի Երկիր պետք է ներգաղթեցվեին 300 հազար մարդ: Այս ծրագրի իրագործման համար կպահանջվեր 3 մլրդ. ռուբլի:

Կառավարությունն ու խորհրդարանը գտնում էին, որ քանի դեռ արևմտահայերի ներգաղթի համար չեն ստեղծված բավականաչափ քաղաքական և տնտեսական պայմաններ, հնարավոր չէ նրանց ներգաղթեցնան արագացումը: Իսկ մինչ այդ ՀՀ-ում աշխատում էին նրանց կյանքի, աշխատանքի ու կենցաղի համար ապահովել քիչ թե շատ բավարար իրավաբաղաքական և տնտեսական պայմաններ: ՀՀ արևմտահայ գաղթականների համար՝ որպես Միացյալ և Անկախ Հայաստանի քաղաքացիների, բնականաբար, ևս սահմանվեցին ոչ միայն իրավունքներ, այլև պարտականություններ: Օրինակ, արևմտահայ երիտասարդության համար ևս սահմանվեց գորակոչի պարտականություն:

1920 թ. մարտի 1-ի օրենքով՝ արդարադատության նախարարության դիվանին կից ստեղծվեց արևմտահայ իրավագիտական բաժին՝ երեք հոգուց բաղկացած<sup>76</sup>: Այդ մարմինը մասնակցելու էր ՀՀ նոր մշակվող օրենսդրության (օրենսգրքերի) մեջ արևմտահայ հատվածի ընտանեկան, ժառանգական և առհասարակ կյանքի առանձնահատկությունների հաշվառման ու համապատասխան ոգով փոփոխություններ մտցնելու գործին:

Դեպի Երկիր արևմտահայության ներգաղթի խնդրով ջանադրորեն զբաղվում էին Հայաստանի կառավարությունը, Փարիզում գտնվող հայկական պատվիրակությունները: Փարիզի խաղաղության կոնֆերանսի բացումից ի վեր, անցած 14 ամիսների ընթացքում, Հայաստանի կառավարությունը և ՀՀ կառավարական պատվիրակությունը ընդհանուր թվով մինչև 36 դիմում

են արել Դաշնակից տերություններին՝ տաճկահայերի ներգաղթի վերաբերյալ<sup>77</sup>: Տարբեր երկրներում պետական և հասարակական մակարդակներով կազմակերպվում էին բարեգործական հանգանակություններ: ԱՄՆ-ում հանգանակվել էին 20 մլն դոլարի իրեր ու ապրանքներ, որոնք պետք է բաշխվեին Երկիր գնացող ժողովրդին: Իսկ Անգլիայում նվիրատվության ձևով հավաքել էր 40 հազ. ֆունտ ստեռլինգ, որը նույնպես ծախսվելու էր գաղթականների ներգաղթի ժամանակ իրականացվող վերաշինության համար<sup>78</sup>: Պետք է ասել, որ նմանատիպ հանգանակությունների կազմակերպման խնդրում, հատկապես ԱՄՆ-ում կազմակերպչական ու քարոզչական զգալի աշխատանքներ տարան Հ. Քաջագունին, Անդրանիկը, Գ. Փաստրմաճյանը, Ա. Էնֆիաջյանը և ուրիշներ: Միայն Անդրանիկի ղեկավարությամբ կազմակերպված փրկության հանգանակության գումարը կազմեց 532 հազար դոլարից ավելի<sup>79</sup>:

Խորհրդարանն իր վերաբերմունքը ցուցաբերեց Կիլիկիայում սրվող իրադարձություններին: Մարտ 15-ին մի շարք պատգամավորների հարցազնուով քննվեց և գնահատական տրվեց Կիլիկիայում տեղի ունեցող հայկական ջարդերին: Խորհրդարանը եկավ այն ճշմարիտ հետևությանը, որ կիլիկիահայությունը ենթարկվել է սադրանքի, որի մեջ մեղսակցության ամենամեծ բաժինն ունի Ֆրանսիան<sup>80</sup>: «Ժամանակակից պատմության մեջ,- գրում է հնչական պաշտոնաթերթերից մեկը,- գրեթե օրինակի չկա այն եղեռնագործության, որին ընդունակ եղավ հասնելու կապիտալիստ Ֆրանսիան»<sup>81</sup>:

Հիրավի, Ֆրանսիան, որ մինչ այդ ստանձնել էր Կիլիկիայի հովանավորությունը և այդ թվում՝ կիլիկիահայության ինքնավարության պաշտպանությունը, շուտով թուրք-ֆրանսիական համաձայնությամբ իր զինված ուժերը դուրս է բերում Կիլիկիայից և տեղի հարյուր հազարավոր հայությանը թողնում թուրքական բանդաների երախում: Այդ ընթացքում մի շարք քաղաքներում (Հաճն, Մարաշ, Ադանա և այլն) խոշոր ջարդեր եղան, և կենդանի մնացած հայության բեկորները հեռանում են Կիլիկիայից ու հարկադրված արտագաղթում դեպի հարևան արաբական երկրներ՝ Կիպրոս, Եվրոպա, Ամերիկա և այլուր:

1920 թ. կեսերից միջազգային-քաղաքական հարաբերությունները Հայաստանի համար այնպես անհաջող դասավորվեցին, որ ոչ միայն ներգաղթի խնդիրը փակվեց, այլև բուն արևմտահայ նահանգներում ապաստանած գաղթական խմբաքանակները հարկադրված էին մասամբ արտագաղթել իրենց հայրենիքից, մասամբ էլ ծալվելով՝ աստիճանաբար կրոնափոխվել և ուծացվել:

<sup>73</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 79, ք. 4:

<sup>74</sup> Նույն տեղում:

<sup>75</sup> Հ. Ռ. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, գ. 2, Երևան, 1996, էջ 618:

<sup>76</sup> «Հառաջ», 17 մարտի 1920 թ.:

<sup>77</sup> «Երիտասարդ Հայաստան», 22 հոկտեմբերի 1920 թ.:

<sup>73</sup> Նույն տեղում, էջ 259:

<sup>74</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 79, ք. 2-3:

<sup>75</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, ց. 1, գ. 118, ք. 47:

<sup>76</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 82:

#### 4. Բանակի և Արցախի խնդիրները խորհրդարանում

Հայաստանի կառավարությունն ու խորհրդարանն առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում բանակի ամրապնդման հարցերին: Հանրապետության բյուջետային հատկացումների ամենամեծ հոդվածը, անտարա-կույս, ռազմական-պաշտպանական ծախսերն էին: Երբեմն զինվորական նախարարության անունով վարկեր էին բացվում՝ առանց նախահաշիվների: Այսպես, օրինակ, 1919 թ. սեպտեմբերի 6-ի օրենքով, զինվորական նախարարությանը նախահաշիվից դուրս բացվեց 11,7 մլն ռուբլի վարկ՝ ամերիկացիներից գորքի համար կոշիկներ գնելու նպատակով<sup>82</sup>:

Անգլիացիներից 600 ջորի, 150 սայլ և զինվորական հանդերձանք գնելու համար խորհրդարանի 1919 թ. օգոստոսի 30-ի օրենքով՝ գորական նախարարությանը բաց թողնվեց 12 մլն ռուբլի<sup>83</sup>: Փոքր ուշ, բանակի պարենավորման և բանող ուժի կերակրման համար, նախարարությանը հատկացվեց 9.3 մլն ռուբլի<sup>84</sup>: Արդեն 1920 թ. գարնանը բանակի համբարակային կարիքների համար բացվեց 85,4 մլն ռուբլու վարկ<sup>85</sup>: 1920 թ. ապրիլին գորական նախարարության հոդվածով (հաշվեհամարով) բաց թողնվեց 35,6 մլն ռուբլի վարկ<sup>86</sup>: Նույն ամսին նախարարների խորհրդի արտակարգ քաղաքական ծախսերի համար (այսպես է հիմնավորված օրենքում) բացվում է շուրջ 40 մլն ռուբլի վարկ<sup>87</sup>:

Ֆինանսական հատկացումներ էին կատարվում ոչ միայն բանակի կերակրման ու հանդերձավորման, այլև, դրսից կախում չունենալու նպատակով, սեփական ռազմամթերք արտադրելու ուղղությամբ: Այսպես, 1919 թ. սեպտեմբերի 16-ի օրենքով, մարտական գնդակներ պատրաստելու և փամփուշտներ լցնելու արհեստանոց հիմնելու համար, բացվեց 6 մլն ռուբլի վարկ<sup>88</sup>: Իսկ մեկ այլ՝ հոկտեմբերի 3-ի օրենքով, Ալեքսանդրապոլի հրանոթային արհեստանոցների կազմակերպման ու կահավորման համար, կառավարության խնդրանքով խորհրդարանը որոշեց հատկացնել 2, 172 հազ. ռուբլի<sup>89</sup>:

Բանակի գորացմանը ուղղված հատկացումներին բոլոր խմբակցությունները չէ, որ համաձայն էին: Այսպես, Էսեռական խմբակցությունը որպես կանոն ձեռնպահ է մնացել և չի մասնակցել քվեարկություններին<sup>90</sup>: Եթե ասենք հայոց բանակին ռազմական վարկեր տրամադրելու հարցում թուրք խմբակցությունը չէր ներկայանում միստին կամ դեմ էր քվեարկում. դա ինք-

նին հասկանալի է, իսկ ի՞նչ անուն տալ հայ Էսեռների խմբակցության նման վարքագծին:

Դրանի աղետալի տեմպերով արժեզրկման պայմաններում արդեն 1920 թ. երկրորդ կիսամյակում ռազմական նախարարության գլխավոր համբարակային վարչության համար հաստատված նախահաշիվը կազմել էր շուրջ 2,4 մլրդ ռուբլի վարկ<sup>91</sup>:

Հանրապետության զինված ուժերին, խորհրդարանական հատկացումներից զատ, օգնություն էին ցույց տալիս նաև առանձին կուսակցություններ ու անհատ բարերարներ: Կուսակցական խողովակներով կամ անհատական կարգով հանրապետության պաշտպանության նպատակներին ավելի հաճախ օգնություն էին ցուցաբերում Հայ սահմանադիր ռամկավարների արտասահմանյան կազմակերպությունները: Հարկ է նշել, որ ռամկավարների արտասահմանյան կազմակերպությունների և անհատ գործիչների վերաբերմունքը դեպի ՀՀ իշխանությունները եղել է ավելի լոյալ ու բարյացակամ, քան Հայ ժողովրդականների: 1919 թ. փետրվարին Պողոս Նուբար փաշայի կողմից հայկական գորքի կարիքները հոգալու նպատակով, ստացվել էր 502270 ֆրանկ<sup>92</sup>: Միաժամանակ սեփական միջոցներով գնել էր մեկ ինքնաթիռ: 1920 թ. մայիսին Հայաստանի անկախության երկրորդ տարեդարձի առթիվ եզիպտահայ մեծահարուստ Ղարիբ Գառնուկը Հայաստանին էր նվիրել ինքնաթիռ<sup>93</sup>: Չմայած Ս. ռամկավար կուսակցությունը քննադատում էր դաշնակցական կառավարությանը և շատ խնդիրներում համաձայն չէր նրա վարած քաղաքականությանը, սակայն դա ամենևին էլ չէր խանգարում, որ անհրաժեշտության դեպքում օգնելու և աջակցելու հայոց պետականության ամրակայմանը: Պետք է ասել, որ հիմնականում այդպես էին մտածում ու գործում հայ ազգային մյուս կուսակցությունները:

Հայ Ս. ռամկավար կուսակցության Եզիպտոսի շրջանային կենտրոնական խորհուրդը 1920 թ. ամռանը որոշեց 50 մարտական ինքնաթիռ նվիրաբերել Հայաստանին, որոնցից 10-ը պիտի հատկացվեին Կիլիկիայի ինքնապաշտպանությանը, իսկ 40-ը՝ Հայաստանի Հանրապետությանը<sup>94</sup>: Եզիպտահայ ռամկավարները դեռ մեկ տարի առաջ՝ 1919 թ. կեսերին Պ. Նուբար փաշայի անձնական միջնորդությամբ նման հարցով դիմել էին Եզիպտոսի անգլիական զինվորական իշխանության ներկայացուցիչներին՝ իրենց սեփական միջոցներով նման խմբաքանակով ինքնաթիռներ գնելու<sup>95</sup>: Ս. ռամկավար կուսակցության Եզիպտոսի շրջանային մարմինը 1920 թ. ապրիլ-օգոստոս ամիսների ընթացքում, բանակցելով անգլիական զինվորական իշխանությունների հետ և ստանալով անգլիական կառավարության արտոնագիրը,

<sup>82</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 86, ք. 41:

<sup>83</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 86, ք. 41:

<sup>84</sup> Նույն տեղում, ք. 72:

<sup>85</sup> «ՀՀ օրենքների հավաքածու 1920 թ.», էջ 52-53:

<sup>86</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 159:

<sup>87</sup> Նույն տեղում, ք. 160:

<sup>88</sup> Նույն տեղում, ք. 9:

<sup>89</sup> «ՀՀ օրենքների հավաքածու 1919 թ.», էջ 22-23:

<sup>90</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 9 հոկտեմբերի 1919 թ.:

<sup>91</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 58, ք. 68:

<sup>92</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, ց. 1, գ. 14, ք. 31:

<sup>93</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 576, ք. 154:

<sup>94</sup> «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 15 օգոստոսի 1920 թ.:

<sup>95</sup> «Հայաստանի ձայն», 18 սեպտեմբերի 1920 թ.:

գեղջ գներով (մեկ ինքնաթիռը՝ 100 եգիպտական ոսկի) գնում են 20 ինքնաթիռ<sup>96</sup>։ Միաժամանակ ծրագրվում է պատրաստել 50 արհեստավարժ օդաչուներ։ Այս խնդիրն էլ իրենց վրա են վերցնում Ս. ռամկավարների Ամերիկայի և Իզմիրի շրջանակները<sup>97</sup>։ Արդեն 1920 թ. օգոստոսին այդ ինքնաթիռների գնումը ավարտվել էր և մնում էր դրանց փոխադրումը հայրենիք։ Հիշյալ ինքնաթիռները պիտի անվանվեին դրանց գնող-մվիրատուների անուններով, իսկ ամբողջ խմբաբանակը «Հայ ռամկավարների օդային տորմիդ»<sup>98</sup>։ Բայց մինչև Հայ Ս. ռամկավարները այս հայրենամուկ խնդիրներով էին զբաղված, Հայաստանում իրադարձությունները այլ բնույթ ստացան։ Այն բանից հետո, երբ հայ-թուրքական պատերազմից հետո Հայաստանը խորհրդայնացանում է, անգլիական իշխանությունները այլևս թույլ չեն տալիս, որ գնված ինքնաթիռները ուղարկվեն Հայաստան։

\*  
\*  
\*

Մեզանում տարածված է այն տեսակետը, թե ՀՀ բարձրագույն իշխանությունները՝ խորհրդարանը և կառավարությունը, բավարար ուշադրություն ու հետևողականություն չեն ցուցաբերել Արցախի խնդրում, և որ իբր դրա համար էլ նա վերջին հաշիվով հայտնվեց Ադրբեջանի վարչատարածքային սահմաններում։ Սակայն որքան էլ ծանր էր Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը, հանրապետության կառավարությունը անում էր հնարավորին ամեն ինչ տեր ու պաշտպան կանգնելու արցախահայության արդար դատին՝ «Ղարաբաղը համարելով անբաժանելի մասը Միացյալ և Անկախ Հայաստանի հանրապետության»<sup>99</sup>։ Նույն կերպ Արցախին իր համակողմանի աջակցությունն է ցույց տվել Հայաստանի խորհրդարանը։ Նրա նիստերում պարբերաբար քննարկումների նյութ է դարձել Արցախի խնդիրը։ Արցախին օգնելու նպատակով դեռ 1919 թ. կեսերին հիմնվել էր դրամական ֆոնդ՝ 8 մլն ռուբլու չափով։ Այդ գումարից 1.5 մլն-ը հատկացվում է «Ղարաբաղի գործառն» կազմակերպելու համար։ Նորակազմ գործառնար բաղկացած էր մեկ հետևակ գումարտակից, 2 լեռնային հրանոթից և 54 հեծյալ հետախույզներից<sup>100</sup>։ Համանման օգնություն և այլ ծախսեր կազմակերպելու միջոցով շուտով Արցախի կարիքների համար հատկացված 8 մլն ռուբլու ֆոնդը

սպառվում է, և կառավարությունը հարց է բարձրացնում կրկին 8 մլն ռուբլու վարկ բացելու մասին<sup>101</sup>։

Արցախին օգնություն էր ցույց տրվում ոչ միայն պետական-կառավարական մակարդակով, այլ նաև ՀՅԴ կուսակցական խողովակներով։ Այսպես, օրինակ, 1919 թ. ամռանը ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն Ղարաբաղի Ազգային խորհրդին էր տրամադրել (փոխանցել) 1.06 մլն. ռուբլու օժանդակություն<sup>102</sup>։ Այնպես որ՝ Հայաստանի խորհրդարանը, կառավարությունը, ինչպես նաև ՀՅԴ-ն որպես կառավարող կուսակցություն, Արցախյան խնդրի պատիվ դիտողի դերում չեն գտնվել, այլ հնարավոր բոլոր միջոցներով աշխատել են այն միավորված տեսնել ՀՀ կազմում։

Դեռ 1919 թ. վերջերին Դրոն իր գործառնով ուղեվորվել էր Ջանգեզուր։ ՀՀ կառավարությունը Ջանգեզուրի միջոցով օգնում էր Ղարաբաղին թե՛ դրամով և թե՛ դիվանագիտական լծակներով։ ՀՅԴ Բյուրոյի կողմից «Արտակարգ գործերի» ղեկավար նշանակված Արսեն Միքայելյանը կապ էր հաստատել Դրոյի հետ<sup>103</sup>։

Արցախ-Ջանգեզուրում ծավալվող դեպքերի քննությանն էր ամբողջովին նվիրված խորհրդարանի 1920 թ. ապրիլի 3-ի թիվ 78-րդ նիստը։ Նիստում բնորոշակ ու հանգամանալի գեկուցումով հանդես եկավ վարչապետ և արտ. գործ. նախարար Ալ. Խատիսյանը<sup>104</sup>։ Ինչպես հայտնի է, մարտի վերջերին տեղի էր ունեցել Շուշիի և այլ բնակավայրերի հայության կոտորածները։ Վարչապետն իր գեկուցման մեջ բացահայտում է Ադրբեջանի կառավարության նեղ դավերը և հայաջինջ ծրագրերը։ Մարտիվերջյան դեպքերից հետո խորհրդարանի հավանությանը և Հայաստանի կառավարության հանձնարարությանը տարածաշրջանի հայությանը օգնության է հասնում հայկական գործառնար՝ Դրոյի հրամանատարությամբ։ Տեղում հայ ժողովրդի պայքարը ազատության և անկախության համար ղեկավարում էր Ղարաբաղի հայ ազգային խորհուրդը, որն 1918 թ. մայիսից մինչև 1920 թ. մայիսը, իր հրավիրած տասը համագումարներում և դրանից հետո էլ չի ընդունել և չի ճանաչել Ադրբեջանի իշխանությունը<sup>105</sup>։ Համատեղ ջանքերի շնորհիվ Լեռնային Ղարաբաղը գործնականում միացվում է Հայաստանի Հանրապետությանը։

Մեկ ամիս անց՝ ապրիլի վերջերին, Ադրբեջանում և դրա հետ կապված՝ Արցախի ու Ջանգեզուրի հիմնահարցի առընչությամբ ծավալվեցին շատ ավելի մեծ իրադարձություններ։ Այս կապակցությամբ 1920 թ. մայիսի 3-ին հրավիրվեց խորհրդարանի արտահերթ նիստ։ Նիստում լսվեց ու քննարկվեց արտ. գործ. նախարար Հ. Օհանջանյանի հաղորդումը վերջին շաբաթվա ըն-

<sup>96</sup> Մ. Գ. Շիզմենյան, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությանը 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 412։

<sup>97</sup> Նույն տեղում։

<sup>98</sup> «Հայաստանի ծայն», 14 սեպտեմբերի 1920 թ.։

<sup>99</sup> Ինքեն, նշվ. աշխ., հ. Է (7), Լոս Անջելես, 1952, էջ 205։

<sup>100</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, ք. 132։

<sup>101</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, ք. 15։

<sup>102</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 199, ց. 1, գ. 76, ք. 10։

<sup>103</sup> Դրո, Ե., 1991, էջ 271։

<sup>104</sup> Այդ մասին հանգամանալից տես՝ «Առերեսում», 1995, թիվ 14, էջ 4-5։

<sup>105</sup> Л. А. Хуршудян, Истина-единственный критерий исторической науки, Е., 1989, 9-25.

բացքում Անդրկովկասում և հատկապես Ադրբեջանում կատարված քաղաքական դեպքերի մասին, դեպքեր, որոնք ուղղակիորեն առնչվում էին Հայաստանի հետագա ճակատագրին: Այն ժամանակ, երբ ադրբեջանական 10 հազարանոց կանոնավոր և ցույցնալի կամավոր զորքեր ուղարկվել էին Ղարաբաղ, և որոնք զբաղված էին տեղի բնակչության կոտորածով, այդ նույն ժամանակ Ադրբեջանի հյուսիսային սահմանին հայտնված 11-րդ Կարմիր բանակը ապրիլի 28-ին մուտք գործեց Բաքու և Ադրբեջանը խաղաղ ճանապարհով հայտարարվեց խորհրդային: Այս թավշյա հեղաշրջման նպատակն էր Կարմիր բանակի ուժերի միջոցով լուծել մուսավաթականների ծրագիրը՝ գրավել և Ադրբեջանին միացնել հայկական տարածքները (Ղարաբաղը, Ջանգեզուրը, Շարուր-Նախիջևանը), դրանով իսկ «լուծել իրենց ազգային խնդիրները»<sup>106</sup>: Խորհրդային Ռուսաստանն էլ իր հերթին հույսեր էր փայփայում, համաշխարհային հեղափոխության կարգախոսով, ապահովել Հայաստանի վրայով և Ռուսաստանի և «Կարմիր» Ադրբեջանի ցամաքային կապը իրեն «հեղափոխական հայտարարած քեմալական Թուրքիայի հետ՝ Անտանտի դեմ համատեղ պայքարելու և համաշխարհային հեղափոխության կրակը ամբողջ Արևելքի մուսուլմանական երկրները տարածելու համար»: Ի կատարումն այդ ծրագրի՝ Ադրբեջանի խորհրդայնացումից տառացիորեն երկու օր անց՝ ապրիլի 30-ին, ստացվեց Ադրբեջանի խորհրդային հանրապետության արտ. գործ. կոմիսարի պաշտոնակատար Հուսեյնովի վերջնագիրը՝ ուղղված Հայաստանի կառավարությանը: Նրանում ասված էր. «Ադրբեջանի խորհրդային բանվորագյուղացիական կառավարությունը, հանձինս հեղափոխական կոմիտեի, պահանջում է նախ՝ մաքրել ձեր գործերից Ղարաբաղի և Ջանգեզուրի տարածքը, երկրորդ՝ քաշվել դեպի ձեր սահմանները, երրորդ՝ դադարեցնել ազգամիջյան կոտորածը: Հակառակ դեպքում, Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հեղափոխական կոմիտեն իրեն կհամարի պատերազմական դրության մեջ Հայաստանի Հանրապետության հետ: Վերջնագրի պատասխանի համար տրվում է երեք օր ժամանակ»<sup>107</sup>: Վերջնագրում Նախիջևանի անունը չի հիշատակված այն պարզ պատճառաբանությամբ, որ սկսած 1919 թ. կեսերից Նախիջևանը չէր ենթարկվում ՀՀ-ին, ուստի և նրանք Նախիջևանի հարցը գործնականում համարում էին լուծված:

Հաջորդ օրը՝ մայիսի 1-ին, Հուսեյնովի վերջնագրից մի քանի ժամ հետո, ստացվեց նույնաբնույթ մեկ այլ վերջնագիր Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի նախագահ Օրջոնիկիձեի և անդամներ՝ Կիրովի, Մեխանդիձեի և Լևանդովսկու ստորագրությամբ: Ստորև դարձյալ բերում ենք վերջնագրի տեքստն ամբողջությամբ, որպեսզի ընթերցողը համոզվի, թե ինչ ընդհանուր կապ ու մնացորդներ կան այդ երկու վերջնագրերի միջև:

<sup>106</sup> Հ. Ռ. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 400:

<sup>107</sup> «Հայաստանի պառլամենտի 1920 թ. մայիսի 3-ի արտակարգ նիստը», Ե., 1920, էջ 6, ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, g. 1, q. 271, p. 206:

«Հայաստանի և մեր բարեկամ դաշնակից Խորհրդային Ադրբեջանի սահմաններում շարունակվում են պատերազմական գործողությունները Հայաստանի և Ադրբեջանի միջև: Ռուսաստանի բանվորագյուղացիական կառավարությունն իր սրբազան պարտքն է համարում ամբողջ ուժով օգնության հասնել Ադրբեջանի բոլոր աշխատավորների անուղից իրեն դիմող Ադրբեջանի բանվորագյուղացիական կառավարությանը, հաստատելու այնտեղ բանվորագյուղացիական իշխանություն: ՌՍՖՍՀ հանրապետության անունից առաջարկում են Հայաստանի կառավարությանը անմիջապես դադարեցնել պատերազմական ամեն գործողությունները Խորհրդային Ադրբեջանում և դուրս բերել իր զորքերը նրա սահմաններից: Այդ պետք է կատարվի 24 ժամվա ընթացքում այս առաջարկությունն ընդունելուց հետո: Այս առաջարկության չիրականացումը կընդունվի ՌՍՖՍՀ հանրապետության կողմից իբրև պատճառ պատերազմական գործողությունների, իսկ ամբողջ պատասխանատվությունն այս բանում կընկնի Հայաստանի կառավարության վրա»<sup>108</sup>: Ինչպես նկատում ենք, երկու դեպքում էլ ձեռագիրը գրեթե նույնն է: Ի դեպ, նշենք, որ ՀՀ ուղղված այս երկու վերջնագրերի ստույգությամբ այդ օրերին չէին հավատում մայիսյան ապստամբությանը նախապատրաստվող հայ բոլշևիկները և դա համարում էին Դաշնակցության հնարած սադրանք<sup>109</sup>:

Խորհրդարանի արտահերթ նիստում իր հաղորդման ընթացքում նախարար Հ. Օհանջանյանը պատգամավորներին տեղյակ պահեց այդ վերջնագրերի ու այլ փաստաթղթերի մասին: Այնուհետև, արտ. գործ. նախարարը տեղեկացնում է, որ Հայաստանի կառավարությունը, հերքելով վերջնագրերում պարունակված մեղադրանքները, զուսպ և փաստարկված կերպով պատասխանել է դրանց: Մասնավորապես նա իր պատասխանում պարզաբանեց, որ Ադրբեջանի տարածքի վրա հայկական զորքեր չեն եղել ու չկան և որ, ընդհակառակը, «Մուսավաթական կառավարության զորքերն ու կազմակերպած բանդաները մինչև այժմ շարունակում են մնալ Հայկական Ղարաբաղի շրջանում՝ կոտորելով հայ գյուղացիությանը և այրելով Շուշի քաղաքի հայկական մասն ու բազմաթիվ գյուղերը»<sup>110</sup>:

Միաժամանակ հեռագրեր են ուղարկվել Լենինին և Չիչերինին<sup>111</sup>: Հ. Օհանջանյանը առաջարկում էր վերջնագիր ներկայացնող կողմին դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները և սահմանների վերջնական որոշման ու դրացի հանրապետությունների միջև նորմալ հարաբերություններ հաստատելու համար Հայաստանի կառավարության հետ բանակցություններ սկսել<sup>112</sup>: Այլ խօսքով, Հայաստանի կառավարությունը այդ վերջնագրերին

<sup>108</sup> «Հայաստանի պառլամենտի 1920 թ. մայիսի 3-ի արտակարգ նիստը», Ե., 1920, էջ 6-7, «Բանվորի ձայն», 9 մայիսի 1920 թ.:

<sup>109</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, g. 1, q. 138, p. 75:

<sup>110</sup> «Հայաստանի պառլամենտի 1920 թ. մայիսի 3-ի արտակարգ նիստը», Երևան, 1920 թ. էջ 7:

<sup>111</sup> Նույն տեղում:

<sup>112</sup> Նույն տեղում, էջ 9:

պատասխանել է խաղաղասիրական առաջարկություններով՝ բոլոր վիճելի հարցերը լուծել փոխադարձ համաձայնութեամբ:

Օհանջանյանի գեկուցման կապակցությամբ ելույթներ ունեցան ՀՅԴ խմբակցության անդամներ՝ Ս. Թորոսյանը, Սեպուհը, Ա. Շիրինյանը, Գ. Բալայանը, Ա. Հովհաննիսյանը: Պատգամավոր Ս. Թորոսյանը հայտարարեց, որ «Ադրբեջանի կոմունիստ դառնալը» կեղծիք է և նրա վերջնագրին մենք պետք է պատասխանենք Ղարաբաղն ու Ջանգեզուրը Հայաստանին միացնելով<sup>113</sup>: Իսկ Սեպուհին իր ելույթում զարգացնում էր այն միտքը, որ Ադրբեջանը խորհրդային է դարձել այն նպատակով, որ «իր գործերը Հայաստանի վրայով միացնեն Տաճկաստանի «Կարմիր» գործերին»<sup>114</sup>: ՀՅԴ խմբակցության անդամները հավանություն են տալիս կառավարության ձեռնարկած քայլերին ու վարած քաղաքականությանը:

Էսէռական խմբակցության կողմից հանդես եկան պատգամավորներ Լ. Թումանյանը և Ա. Խոնդկարյանը: Թումանյանը, պատասխանելով իր գաղափարաքաղաքական ընդդիմախոսներին, չհամաձայնվեց նրանց արտահայտած այն մտքին, թե Բաքվում կատարվածը կեղծիք է: Նա Բաքվի ապրիլի 28-ի դեպքերը որակեց որպես հեղաշրջում<sup>115</sup>: Այս խմբակցության անդամներ՝ Լ. Թումանյանը, Ա. Խոնդկարյանը, Վ. Մինախոյանը, գոտեպնդվելով Կարմիր բանակի մուտքով և Ադրբեջանի խորհրդայնացմամբ, գտնում էին, որ այժմ հերթը հասել է Հայաստանի «Մուսավաթին»՝ «Դաշնակցությանը», որպեսզի հեռանա ասպարեզից և Հայաստանը խորհրդայնացնա<sup>116</sup>:

Խորհրդարանական քննարկումների արդյունքում ընդունվեց համապատասխան որոշում: Հովակիմ Բուդաղյանը ՀՅԴ խմբակցության կողմից առաջարկեց հետևյալ բանաձևը. «Լսելով արտ. գործ. նախարարին հայտնածը Ադրբեջանի կառավարության վերջնագրի և նախարարի պատասխանի մասին՝ խորհրդարանը հավանություն է տալիս տված պատասխանին և հրահանգում է կառավարությանը ինքնապաշտպանության բոլոր միջոցները ձեռք առնել ապահովելու հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և ազատ հայրենիքի անկախությունը»<sup>117</sup>: Խորհրդարանը 33 ձայնով ընդդեմ 4-ի ընդունեց ՀՅԴ խմբակցության կողմից առաջարկված բանաձևը: Նիստն ավարտվեց գիշերվա ժամը 12-ին: Խ. Ադրբեջանի և Կարմիր բանակի հրամանատարության վերջնագրերին շուտով հաջորդում են գործնական քայլերը: Ղարաբաղ են շարժվում մեծ քանակությամբ ադրբեջանական և ռուսական կարմիր զորքեր<sup>118</sup>: Ադրբեջանի խորհրդայնացումը փաստորեն կանխում է Ղարաբաղը

Հայաստանին միացնելու հետագա գործընթացը: Մայիս ամսին խորհրդայնացնում է Արցախը: Մայիսի վերջերին (26-ին) Դրոն հարկադրված իր գործածակ Արցախից վերադառնում է Ջանգեզուր և ապա հետո՝ Դարալագյազ:

## 5. Արտախորհրդարանական գործունեություն

Պատգամավորների գործունեությունը չի սահմանափակվել միայն խորհրդարանի շրջանակներում: Խորհրդարանի հանձնարարությամբ հանրապետության տարբեր շրջաններ են գործուղվել առանձին պատգամավորական հանձնախմբեր, որոնք տեղերում կատարել են ուսումնասիրություններ ու համապատասխան առաջարկություններ ներկայացրել խորհրդարանին ու կառավարությանը: Նման հանձնաժողովներ են գործել Կարսում, Նոր-Բայազետում, Դիլիջանում, Դարալագյազում, Էջմիածնում, Սուրմալուում և այլն<sup>119</sup>:

Սրանց ուսումնասիրությունների տեսադաշտում էին գտնվում գործի, տեղական իշխանությունների (ինքնավարությունների), միլիցիայի, պարենավորման, հողային, դատական, ֆինանսական, պետ. գույքերի, խնամատարության, կրթության, սոցիալական այլ խնդիրներ: Օրինակ, 1920 թ. հունվար-փետրվարին Կարսում գտնվող խորհրդարանական հանձնախումբը ներկայացրել էր հետևյալ գործնական առաջարկները.

ա) Ջորքի մասին.- բարելավել զինվորների, պահեստայինների ու նրանց ընտանիքների նյութական պայմանները, վերջ տալ դասալրությանը և այլն:

բ) Վարչակարգի ու միլիցիայի վերաբերյալ.- բարձրացնել պաշտոնավորների մասնագիտական մակարդակը, ինչպես նաև պատժել զեղծարարներին:

գ) Ինքնավարությունների մասին.- ստեղծել քաղաքային ինքնավարություններ Կաղզվանում և Սարիղամիշում: Ինքնավարություններին հանձնել քաղաքային միլիցիան, տարրական դպրոցները, հիվանդանոցները և այլն<sup>120</sup>:

Դիլիջան մեկնած խորհրդարանական հանձնաժողովը 1920 թ. հունվարի 25-ին առաջարկություն էր մտցրել զավառի կենտրոնը դարձնել Իջևանը: Ի կատարում այս առաջարկության՝ 1920 թ. մարտի 1-ի թիվ 69 նիստում խորհրդարանը (28 կողմ, 2 դեմ և 1 ձեռնպահ) ընդունում է օրինագիծ Իջևանը զավառային ինքնավարության կենտրոն դարձնելու մասին<sup>121</sup>: Միաժամանակ, հանձնաժողովը հարց է բարձրացնում՝ խստիվ կերպով արգելելու անասունների, փայտի և այլ մթերքների արտահանությունը դեպի Ադրբեջան, ինչպես

<sup>113</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>114</sup> «Հայաստանի պառլամենտի 1920 թ. մայիսի 3-ի արտակարգ նիստը», Ե., 1920, էջ 11:

<sup>115</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>116</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>117</sup> «Հայաստանի պառլամենտի 1920 թ. մայիսի 3-ի արտակարգ նիստը», Երևան, 1920, էջ 19, «Հառաջ», 8 մայիսի 1920 թ., ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, գ. 1, գ. 52, բ. 35:

<sup>118</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 446:

<sup>119</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, գ. 1, գ. 2, բ. 1:

<sup>120</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, գ. 1, գ. 2, բ. 2-3:

<sup>121</sup> Նույն տեղում, գ. 52, բ. 36:

նաև արգելելու աղորթեցանցի անասնապահներին օգտվելու Հայաստանի արտավայրերից, գյուղացիությանն ապահովել սերմացուով և այլն<sup>122</sup>։ Իսկ Նոր Բայազետի գավառ մեկնած խորհրդարանական հանձնաժողովը, տեղում ուսումնասիրելով գործերի վիճակը, հանգում է այն եզրակացության, որ գավառը պետք է բաժանել երկու կամ երեք գավառամասերի և շուտափույթ կարգավորել հողային խնդիրը<sup>123</sup>։

1920 թ. բոլշևիկների մայիսյան ապստամբության շրջանում Դիլիջան գործուղված պատգամավոր Արշակ Հովհաննիսյանի միջնորդությամբ Դիլիջանի զորամասի հրամանատար է նշանակվում տաղանդավոր զորավար Սեպուհը<sup>124</sup>։

Փաստերը ցույց են տալիս, որ խորհրդարանական հանձնախմբերի ներկայացրած առաջարկությունների մի մասին ընթացք է տրվել, իսկ մյուսին՝ ոչ։ Պետք է ասել, որ արտախորհրդարանական հանձնախմբերի ներկայացրած առաջարկություններն ու եզրակացություններն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ավելի հաճախ հաշվի չէին առնվում։ Կարելի է արձանագրել այնպիսի փաստեր, երբ ժամանակին հաշվի չեն առնվել հանձնախմբերի ծգտակար առաջարկություններն ու դիտողությունները, որոնք հետագայում ունեցել են բացասական հետևանքներ։ Բերենք մի օրինակ։ Հայտնի է, որ ռազմավարական նշանակություն ունեցող Կարսի շրջանում ստեղծվել էր անառողջ մթնոլորտ տեղի զինվորական հրամանատարության և քաղաքացիական իշխանությունների միջև։ Չմոռան ամիսներին Կարսում գործած խորհրդարանական հանձնաժողովի ներկայացրած բարեփոխումների մասին առաջարկությունները հավանաբար, ինչպես հարկն է, չէին հաշվի առնվել ու գործադրվել։ Եւ ահա մայիսյան դեպքերի (ապստամբության) շրջանում Կարս գործուղված խորհրդարանական նոր հանձնաժողովը, տեսնելով շրջանի զինվորական հրամանատարներ՝ զորավարներ Հովսեփյանի ու Փիրումյանի և նահանգապետ Ստ. Ղորղանյանի միջև ստեղծված լարված հարաբերությունները, պահանջել էր փոխել եղած կազմը<sup>125</sup>։ Բայց Մայիսյան ապստամբության ճնշումից հետո, ցավոք, Բյուրո-կառավարությունը փոփոխություն չկատարեց տեղի զինվորական ու քաղաքացիական իշխանությունների կազմում, որն էլ անկասկած իր բացասական դերը խաղաց թուրք-հայկական պատերազմի ընթացքում։

<sup>122</sup> Նույն տեղում գ. 2 թթ. 4-5։

<sup>123</sup> Նույն տեղում, գ. 2, թ. 8։

<sup>124</sup> «Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի վերջին օրերը», Երևան, 1993, էջ 23։

<sup>125</sup> ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, Զ. 4047, g. 1, q. 197, թթ. 3-4։

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԱՅԻՍՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

### 1. Մայիսյան ապստամբությունը

Խորհրդարանի և կուսակցությունների գործունեությունը լավ հասկանալու և ճիշտ գնահատելու համար հարկ կա առանձնահատուկ կերպով անդրադառնալ Մայիսյան ապստամբությանը։ Խորհրդահայ պատմագրության մեջ այս հիմնախնդիրը բավականաչափ ուսումնասիրվել է։ Սրա շուրջ լույս են տեսել տասնյակ մենագրություններ, փաստա-հուշագրային ժողովածուներ։ Սակայն հասկանալի պատճառներով այս հիմնահարցը, ինչպես և Հայաստանի խորհրդայնացման ողջ պատմությունը, ներկայացված են միակողմանիորեն։ Ուստի ստորև մենք փորձ ենք արել կրկին անդրադառնալ այս խնդրին և այն լուսաբանել հնարավորինս օբյեկտիվ ու անկողմնակալ։

Կարմիր բանակի մուտքը Անդրկովկաս և Աղրբեջանի խորհրդայնացումը ոգևորություն առաջ բերեց նաև Հայաստանի բոլշևիկների մեջ, որոնք էլ կազմակերպեցին Մայիսյան ապստամբությունը։ Այս ամենը սկսվեց մայիսյան լույսերով ու միտինգներով, որոնք ընթացան պրոբոլշևիկյան կարգախոսներով, «Կեցցե՝ Խորհրդային Հայաստանը», «Բաքուն ընկավ, հերթը Երևանինն է», «Կորչի՝ Դաշնակցությունը», «Կեցցե՝ Կոմունիստական կուսակցությունը» և այլն։

Հարկ է նշել, որ Մայիսի 1-ը՝ որպես աշխատավորների համերաշխության տոն, պաշտոնապես նշվել էր նաև նախորդ տարում։ ՀՅԴ, իրեն համարելով սոցիալիստական կուսակցություն, այն ոչ միայն համարում էր թույլատրելի, այլև իր կառույցներով ինքն էլ էր մասնակցում։ Սակայն այլ ընթացք ու բնույթ ստացավ 1920 թվականի մայիսը։ Պետք է ասել, որ մայիսյան լույսերին ու միտինգներին, որոնք ընթացան Երևանում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, մեծ չափով տոն տվեց Երևանի արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդը ու մասնավորապես նրա նախագահ «ձախ» դաշնակցական Հայկ Ավալյանը<sup>1</sup>։

<sup>1</sup> ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, Զ. 4033, g. 1, q. 441, թթ. 1-2։

խորհրդարանի շենքի առջև կայացած միտինգում բոլշևիկ բանախոսներից ճարտասանեց Ստ. Ալավերդյանը<sup>2</sup>։ Նա կոչ արեց տապալել դաշնակցական կառավարությունը։ Մայիսմեկյան ցույցին հանդես եկան այլ կուսակցությունների ներկայացուցիչներ։ Մայիսի 3-4-ը Երևանում սկսվեցին խուզարկություններն ու ձերբակալությունները<sup>3</sup>։

Հանրապետության քաղաքներից ու բնակավայրերից անհամեմատ հեղափոխականացած էր Ալեքսանդրապոլը։ Այստեղ բոլշևիկների ազդեցությունը համեմատաբար ավելի ուժեղ էր։ Քաղաքում անցկացված մայիսմեկյան տոնի ժամանակ բոլշևիկները՝ Ավիս Նուրիջանյանի ստորագրությամբ, ողջույնի երկու հեռագիր են ուղարկում Ադրբեջանի հեղկոմին<sup>4</sup>։ ՌԿ/ԲԿ Ալեքսանդրապոլի կոմիտեն իր մայիսմեկյան կոչում հավաստիացնում էր Բաքվի դոմերո բախող հաղթական Կարմիր բանակին ու Բաքվի պրոլետարիատին, որ «այսօրվանից մեր կոիվը թուրք բանվորի ու գյուղացու դեմ չէ, այլ դաշնակցական կառավարության»<sup>5</sup>։

Ալեքսանդրապոլն էլ դարձավ ապստամբության կենտրոնը։ Ապստամբության օջախներ դարձան Կարսը, Սարիղամիշը, Դիլիջանը, Իջևանը, Նոր Բայազետը, Բասարզեչարը, Գորիսը։ Զինվորականության մի մասը անցավ բոլշևիկների կողմը։ Ալեքսանդրապոլում «Վարդան Զորավար» գրահագնացքի հրամանատար, կապիտան Ս. Մուսայելյանը չկատարեց վերադասի զինվորական հրամանը։

Ապստամբության նախապատրաստական փուլում Արմենկոմի հանձնարարությամբ լայն լիազորություններով Ալեքսանդրապոլ են գործուղվում նրա երկու ներկայացուցիչներ՝ Դ. Տեր-Սիմոնյանը և պատգամավոր Ա. Մելքոնյանը՝ զինված ապստամբության հարցը տեղում որոշելու համար<sup>6</sup>։ Հաջորդ օրը՝ մայիսի 7-ին, զրահագնացքում կայանում է բոլշևիկյան գաղտնի խորհրդակցություն, որտեղ հավանություն է տրվում ապստամբության կուրսին և ստեղծվում է դեկավար կենտրոն՝ Հայաստանի ռազմաօդային ուժերի կոմիտե (Հեղկոմ)<sup>7</sup>։ Տեղեկություններ կան, որ Ալեքսանդրապոլի խորհրդակցությանը մասնակցել են նաև Էսեռների ներկայացուցիչներ, որոնք, սակայն, ապստամբության համար պահիր հարմար չգտնելով՝ առաջարկել են ձեռնպահ մնալ ելույթից<sup>8</sup>։ Հայաստանի ռազմաօդային ուժերի կոմիտեի մեջ մտան Ս. Մուսայելյանը, Ա. Նուրիջանյանը, Ա. Մելքոնյանը, Ա. Գոգունցը, Ա. Տեր-Սա-

հակյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Լ. Ուլիբեկյանը, Պ. Պետրոսյանը և Գ. Սարգսյանը՝ ընդամենը 9 հոգի<sup>9</sup>։

Հետաքրքրական է, որ Հեղկոմի անդամների թվում էր նաև խորհրդարանի պատգամավոր, Արմենկոմի անդամ Արտաշես Մելքոնյանը, որը մինչ այդ իրեն անկուսակցական էր հայտարարում։ Նա, մինչ մայիսյան դեպքերի սկսվելը, խորհրդարանից արձակուրդ էր վերցրել և այդ ընթացքում, որպես ՌԿ/ԲԿ Արմենկոմի անդամ, եղել էր Բաքվում<sup>10</sup>։

Խորհրդակցությունում որոշվել էր ապստամբությունը սկսել մայիսի 10-ին։ Նախօրյակին՝ մայիսի 9-ին, զրահագնացքում նստած Հեղկոմը վերջնագիր է ուղարկում կայազորի պետին և քաղաքային վարչությանը՝ քաղաքը հանձնելու պահանջով<sup>11</sup>։ Մայիսի 10-ին փաստորեն առանց մի զնդակ արձակելու՝ քաղաքն անձնատուր եղավ։ Ապստամբները Ալեքսանդրապոլը իրենց ձեռքը վերցնելուց երկու օր անց՝ մայիսի 12-ին ՌԿ/ԲԿ տեղի կոմիտեն կոչ հրապարակեց՝ ամբողջ Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու վերաբերյալ։ Անգամ որոշվեց Ալեքսանդրապոլի գրավման օրը՝ մայիսի 10-ը, այսուհետև համարել Հայաստանի խորհրդայնացման պատմահիշարժան օր<sup>12</sup>։

Այդ նույն ժամանակ ՀՅԴ Ալեքսանդրապոլի կոմիտեն մի թուուցիկ տարածեց՝ պահանջելով չձառայել բոլշևիկներին<sup>13</sup>։ Նոր իշխանությունը զրահագնացքից դուրս չէր գալիս և բոլոր կարգադրությունները արվում էին այնտեղից<sup>14</sup>։ Քաղաքային իշխանությունների անգործությունը և պարենամթերքի բացակայությունը իրենց զգացնել տվեցին։ Քաղաքը կանգնեց սովի և անիշխանության առաջ<sup>15</sup>։ Մայիսի 12-ին դաշնակցականների կողմից ծանր վիրավորվեց և զինվորական հիվանդանոցում մահացավ կայազորի պետ գորավար Խաչատրյանը։ Մայիսի 14-ին արևմտահայ աշխարհագորայիններից կազմված Սեպուհի գորախումբը (600-700 հոգի) առանց լուրջ միջադեպի գրավեց քաղաքը և դրանով հնազանդեցվեց ապստամբության գլխավոր օջախը։ Բոլշևիկների խնդրանքով մայիսի 14-ին սպասվում էր 1500 թաթարների ժամանումը Ալեքսանդրապոլ՝ ապստամբներին օգնելու համար։ Սակայն ճանապարհին Ամասիայի թաթարները, իմանալով բոլշևիկների պարտության մասին, ցրվում են։ Ապստամբության ձախողումը Ալեքսանդրապոլում մեծապես կանխորոշեց դրանց անհաջողությունը հանրապետության մյուս քաղաքներում ու բնակավայրերում։

Ապստամբության փորձեր արվեցին Կարսում և Սարիղամիշում։ Ապստամբները Սարիղամիշում կապերի մեջ մտան թուրքերի հետ, որպեսզի վեր-

<sup>2</sup> Ա. Մոսկյան, *հոդվածներ և ճառեր*, Ե., 1961, էջ 80։

<sup>3</sup> ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, Ժ. 4020, ց. 1, գ. 16, քք. 14-15։

<sup>4</sup> «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920-1930» (Հիշողությունների և դոկումենտների ժողովածու), Ե., 1930, էջ 159-161։

<sup>5</sup> «Ռևոլյուցիոն կոչեր և թուուցիկներ 1902-1921», Ե., 1960, էջ 544։

<sup>6</sup> «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում», էջ 151։

<sup>7</sup> Ա. Մելքոնյան, *Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը*, Ե., 1965, էջ 121-122, «Հայաստանի Կոմկուսի պատմության ուղիվածքներ», Ե., 1967, էջ 292-293։

<sup>8</sup> ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 2, գ. 134, ք. 17։

<sup>9</sup> Նույն տեղում, ց. 3, գ. 257, ք. 2։

<sup>10</sup> «Հատաչ», 14 մայիսի 1920 թ.։

<sup>11</sup> ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 2, գ. 134, ք. 17։

<sup>12</sup> ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, Ժ. 4033, ց. 1, գ. 444, ք. 1։

<sup>13</sup> ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 2, գ. 134, ք. 18։

<sup>14</sup> Նույն տեղում։

<sup>15</sup> ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ, Ժ. 4015, ց. 1, գ. 7, ք. 5։

ջիններս իրենց տան հացամթերք՝ երկաթուղային շալկների դիմաց՝ Էրզրում-Ալաշկերտ ուղղությամբ երկաթուղի կառուցելու և Շարուր ու Ջանգեղուր գործ փոխադրելու նպատակով<sup>16</sup>։ Ընդամենը մեկ օր տևեց Կարսի ելույթը (մայիսի 12-ին), որի ղեկավարներից 14 հոգի բեռնատար մեքենայով փորձեցին անցնել Ալեքսանդրապոլ, սակայն ճանապարհին՝ Արգինա գյուղի մոտ (Բաշկադըլար), ընդհարվեցին միլիցիայի հետ։ Ընդհարման հետևանքով ապստամբներից 9-ը սպանվում են, այդ թվում՝ ապստամբության ղեկավար Ղ. Ղուկասյանը, իսկ մնացած 5-ը՝ ձերբակալվում։ Հայտնի է, որ Կարսի ապստամբներին օգնել են մոլոկանները և տեղացի թաթարները։ Համանման վախճան ունեցան ապստամբ մյուս շրջանները։

Պետք է ասել, որ ապստամբությունը ի սկզբանե դատապարտված էր անհաջողության։ Բանն այն է, որ Խորհրդային Ռուսաստանը և անձամբ Վ. Ի. Լենինը այս շրջանում դեռևս չէին ծրագրել Հայաստանի խորհրդայնացումը, ուստի և հրահանգ չկար Ադրբեջանից՝ Բաքվից, Կարմիր բանակին Հայաստանի աշխատավորներին «օգնության» հասնելու մասին։ Իսկ մյուս կողմից էլ բուն Հայաստանում ապստամբությունը լավ չէր նախապատրաստվել տեղի բուլշևիկների կողմից։ «Բոլոր վավերագրերն ու փաստական տվյալները, - խոստովանում է Ա. Կարինյանը, - վճռական կերպով հաստատում են, որ ապստամբությունն իրականում անկազմակերպ հեղափոխական տարերքի բռնկում էր»<sup>17</sup>։

Հարկ է նշել, որ բուլշևիկները, ձեռնարկելով ապստամբություն, փորձ արեցին ոտքի հանել նաև գյուղացիությանը։ Եվ այդ նպատակին հասնելու համար օգտագործում էին արևելահայերի և արևմտահայ գաղթականության մեջ առկա անսրող սառնությունը։ Այսպես, օրինակ, Շիրակի նահանգապետ Կ. Սասունին իր հուշերում վկայում է, որ 1920 թ. մայիսյան ապստամբության օրերին բուլշևիկները «դասակարգային» կռվի պիտակով հրահրում էին տեղացի գյուղացիներին կռվի դուրս գալ արևմտահայ գաղթականության դեմ<sup>18</sup>։ Բանն այն էր, որ բուլշևիկները մեծ հակակրանք էին տածում արևմտահայության նկատմամբ այն պատճառով, որ վերջիններս բոլորովին անհաղորդ էին սոցիալիստական գաղափարներին, ավելի համախոսմբ էին և չէին ենթարկվում նրանց սադրանքներին։ Եվ պատահական չէր, որ մի քանի օր անց հենց արևմտահայ զինյալ աշխարհագրայինները Սեպուհի հրամանատարությամբ դարձան այն միջուկը, որը ճնշեց բուլշևիկների մայիսյան ապստամբությունը։

<sup>16</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, ք. 94։

<sup>17</sup> Ա. Բ. Կարինյան, Դաշնակցությունը և իր զինակիցները, Ե., 1932, էջ 82։

<sup>18</sup> «Հայրենիք», 1925, թիվ 12, էջ 95, Կ. Սասունի, Մայիսյան խռովությունները...» էջ 160։

## 2. Խորհրդարանի միջոցառումները 1920 թ. Մայիսյան իրադարձությունների կապակցությամբ։ Բյուրո-կառավարության ստեղծումը

Բուլշևիկների մայիսյան ելույթների պատճառով Խատիսյանի կաբինետը կանգնեց ճգնաժամի առաջ և երեքաց։ Կառավարությունն սկզբում շփոթության մեջ էր։ Բուլշևիկների ըմբոստությունը հնազանդեցնելու համար անհրաժեշտ համարվեց ստեղծել ուժեղ ձեռք։ Մայիսի 5-ին ցերեկվա ժամը 11.30-ին հրավիրվեց խորհրդարանի արտակարգ (88-րդ) նիստ։ Այն վարում էր նախագահի պաշտոնակատար Ավ. Սահակյանը։ Օրակարգ դրվեց իշխանության կենտրոնացման ու կուսակցականացման հարցը։ Վարչապետը հայտարարություն արեց կառավարության հրաժարականի մասին։ Ընդունվեց Խատիսյանի կաբինետի հրաժարականը։ Տալով վարչապետ Ալ. Խատիսյանի գործունեության գնահատականը՝ ընդհանուր առմամբ այն պետք է բնութագրել որպես դրական ու արդյունավետ։ ՀՀ գոյության ընթացքում, չորս վարչապետների կառավարման ժամանակշրջաններից, համրապետությունը քիչ թե շատ կայուն ու տանելի պայմաններ ունեցավ, թերևս, միայն նրա օրոք։ Ահա թե ինչպես է բնութագրել Ալ. Խատիսյանին արևմտահայ գործիչ Կ. Սասունին, որին կարծում ենք, չի կարելի մեղադրել կողմնակալության մեջ. «Երկու տարվան աշխատանքին ընթացքին Խատիսյան ի հայտ բերավ պետական մարդու մեծ հատկություններ, որոնք ընդհանուր առմամբ օգտակար եղան։ Մեր հասարակական բոլոր խավերում ուշադրությունը կենտրոնացավ այդ մարդուն վրա, որ ուներ աշխատելու անսպառ եռանդ, ճկունություն, քաղաքական անցքերու ըմբռնողականություն և բավական հաջող վարվելակերպ»<sup>19</sup>։

Մինչ խորհրդարանի այդօրվա նիստի հրավիրումը նախորդ օրը՝ մայիսի 4-ին, ՀՀԴ Բյուրոն, ինչպես նաև ՀՅԴ խորհրդարանական խմբակցության ղեկավարները, արդեն ճշտել էին իրենց անելիքը<sup>20</sup>։ Ստեղծված արտակարգ ծանր պայմաններում երկրում պետք էր հաստատել կուսակցական դիկտատուրա։ Այդպես էլ արվեց։

Ինչ վերաբերում է ընդդիմադիր կուսակցությունների վերաբերմունքին նոր կառավարության ձևավորման խնդրում, ապա մեզ հայտնի որոշ տվյալների համաձայն, հայ ժողովրդականները և սոցիալ-դեմոկրատները կողմնակից են եղել կռալիցիոն կառավարության ստեղծմանը, իսկ էսեռները, բուլշևիկներին գրեթե համահունչ, միակ ելքը տեսնում էին Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման մեջ<sup>21</sup>։ Ստեղծված իրադրության մեջ, կար-

<sup>19</sup> Կ. Սասունի, Մայիսյան խռովությունները..., էջ 10-11։

<sup>20</sup> Ալ. Խատիսյանն իր հուշերում հայտնում է, որ կառավարության հրաժարականի հարցը որոշվել էր առանց իր գիտության ու մասնակցության (Տես՝ Ալ. Խատիսյան, նշվ. աշխ., էջ 215-216)։

<sup>21</sup> ՀՀ ԼԵԿՓ ՊԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 134, ք. 15։



ծում ենք, որ Դաշնակցությունը և նրա խմբակցությունը ամենևին էլ չէին մտորում կռաւիգիոն կառավարության մասին, ընդհակառակը, նրա արմատական հոսանքը՝ Ռուսերնի գլխավորությամբ, ձգտում էր էլ ավելի ուժեղացնել կուսակցության մենիշխանությունը:

Չնայած խորհրդարանի ՀՅԴ խմբակցության մի որոշ մասը դիմադրեց, սակայն հաղթանակ տարավ Բյուրոյի անդամ Ռ. Տեր-Մինասյանի տեսակետը՝ կուսակցական-հեղափոխական կառավարություն ստեղծելու վերաբերյալ: Ռուսերը և մյուս բյուրոյականները նման վճռական քայլի դիմեցին՝ հենվելով ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից մեկում արտահայտված այն մտքին, որ «ներկայումս Հայաստանը ապրում է գերազանցորեն հեղափոխական ժամանակաշրջան, և այդ պատճառով կառավարությունը չպետք է կաշկանդվի «օրինական» այն էլ ռուսական օրինագրքերով, առաջադրված ծրագիրը իրագործելու խնդրում, այլ հարկը պահանջած ժամանակ պետք է դիմի բացահայտ հեղափոխական միջոցների»<sup>22</sup>: Եվ կուսակցությունը՝ Բյուրոն, մայիսյան այդ ճգնաժամային շրջանը որակեց որպես հեղափոխական ժամանակաշրջան:

Հիրավի, հանրապետությունում ստեղծված օրհասական կացությունը, Կարմիր բանակի մոտենալը Հայաստանի սահմաններին, բոլշևիկների և մահմեդականների ապստամբական ելույթները, Ադրբեջանի վերջնագիրը, Դրոյի գլխավորած հայկական զորախմբի նահանջը Արցախից ու Ջանգեզուրից և այլն հարկադրեցին խորհրդարանին և նրա ՀՅԴ խմբակցության մեծամասնությանը համաձայնվելու այն բանին, որ ՀՅԴ Բյուրոն իր ամբողջ կազմով անցնի իշխանության գլուխ՝ ստանձնի կառավարությունը:

ՀՅԴ խմբակցության անունից պատգամավոր Լ. Թադևոսյանը վարչապետի թեկնածու է առաջադրում Բյուրոյի անդամ, պատգամավոր Համագասպ Օհանջանյանին: Նրա թեկնածությունը դրվում է քվեարկության և անցնում է (կողմ՝ 32, դեմ՝ 5 և ձեռնպահ՝ 1)<sup>23</sup>: Այդպիսով, Հ. Օհանջանյանը ընտրվում է վարչապետ: Նա շնորհակալություն է հայտնում խորհրդարանին և խնդրում ժամանակ տալ իրեն կազմելու կաբինետը: Նիստը ընդմիջվում է 15 րոպեով: Այն վերսկսվում է ժամը 12:00-ին: Վարչապետ Հ. Օհանջանյանը հայտարարում է նոր կաբինետի կազմը, որի մեջ է ընդգրկվում ՀՅԴ Բյուրոն ամբողջությամբ:

Բյուրո-կառավարության կազմում էին՝ Հ. Օհանջանյան (վարչապետ և արտ. գործ. նախարար), Ռ. Տեր-Մինասյան (ն.գ. և զինվորական), Ա. Գյուլխանդանյան (ֆինանս. և արդարադատ.), Ս. Վրացյան (գյուղատնտ. և աշխատանքի), Ս. Արարատյան (խնամատ. և վերաշինութ.), Ա. Ջամալյան (հաղորդակց.) և Գ. Ղազարյան (հանր. կրթութ. և մշակույթի): Նախարարի օգնականներ նշանակվեցին Ա. Զիլինգարյանը և Ա. Բաբալյանը<sup>24</sup>:

Այնուհետև պատգամավոր Լ. Թադևոսյանը զեկուցեց խորհրդարանին մեկ ամսով արձակուրդ տալու մասին: 27 կողմ, 5 դեմ և 1 ձեռնպահությամբ ընդունվում է համապատասխան օրենք՝ բաղկացած երեք հոդվածից. 1. խորհրդարանի աշխատանքները դադարեցնել մեկ ամսով. 2. դադարի ժամանակ խորհրդարանի բոլոր իրավունքները հանձնել կառավարությանը և 3. հանձնարարել խորհրդարանի նախագահությանը և կառավարությանը արտակարգ կարևորության դեպքում հրավիրել խորհրդարանի նիստ<sup>25</sup>: Դրանից հետո՝ ժամը 12.10 րոպեին, ավարտվում է խորհրդարանի նիստը:

Խորհրդարանի արձակուրդի հայտարարումից հետո ՀՅԴ խմբակցության անդամների մեծամասնությունը արտակարգ լիազորություններով գործուղվեց գավառներ՝ ժողովրդի և զորքի շրջանում բացատրական, կազմակերպական աշխատանք տանելու համար: Այսպես՝ պատգամավոր Ն. Ադրաթյանը գործուղվեց Կարս, Հ. Բուդաղյանը և Գ. Վարշամյանը՝ Ալեքսանդրապոլ, Ս. Վրացյանը՝ Էջմիածին, Ա. Հովհաննիսյանը՝ Դիլիջան, Ա. Արեղյանը՝ Իգդիր, Ա. Ջամալյանը՝ Աշտարակ, Վ. Նավասարդյանը՝ Ղամաղուլ (Արտաշատ) և այլն<sup>26</sup>: Համապատասխան օրենքով բացվեց 3 մլն ռուբլի վարկ՝ գավառներում աշխատող պատգամավորների օրապահիկի ու ճանապարհածախսի համար<sup>27</sup>:

Այդպիսով, հիմնականում մայիսյան իրադրության շարժառիթով դադարեցվեցին խորհրդարանի աշխատանքները և ամբողջ իշխանությունը՝ գործադիր, օրենսդիր ու նույնիսկ դատական կենտրոնացվեց Հ. Օհանջանյանի գլխավորած ՀՅԴ Բյուրո-կառավարության ձեռքում: Որքան էլ այս վճիռը հակառակ էր ՀՅԴ 9-րդ Ընդհ. ժողովի որոշումներին, իշխանության բոլոր լծակների նման կենտրոնացումը և կուսակցականացումը, ինչպես արդեն ասվեց, ուներ իր պատճառաբանությունն ու հիմնավորումը:

Մայիսյան ճգնաժամի օրերին, երբ ՀՀ համար ստեղծվել էր քաղաքական չափազանց ծանր իրավիճակ (ներսից բոլշևիկների ու մահմեդականների իրար զուգորդող ու լրացնող խռովությունները, իսկ դրսից Ադրբեջանի, Կարմիր բանակի և քեմալական թուրքերի հարձակման մահացու վտանգը), դեկավար կուսակցության մեծամասնությունը գտավ, որ խորհրդարանական աշխատանքները պետք է դադարեցվեն և պատգամավորները անմիջապես աշխատանքներ պետք է կատարեն շրջաններում: Այդ իսկ պատճառով էլ խորհրդարանը ուղարկվեց արձակուրդ: Հարկ է նշել, որ խորհրդարանն արձակուրդ ուղարկվելով հանդերձ, նրա նախագահությունը շարունակում էր գործել՝ աջակից լինելով կառավարությանը:

Հանրագումարի բերելով Հայաստանի երկրորդ խորհրդարանի օրենսդրական աշխատանքի արդյունքները՝ հայտնենք, որ 1919 թ. երկրորդ կեսին՝ օգոստոսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը, հրավիրվել է 56 նիստ և այդ ընթաց-

<sup>22</sup> «Զաղվածներ ՀՅԴ 9-րդ ընդհ. ժողովի որոշումներից», Երևան, 1920, էջ 9:

<sup>23</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 52, ք. 57:

<sup>24</sup> Նույն տեղում, գ. 52, ք. 57, գ. 57, ք. 22:

<sup>25</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 52, ք. 57, գ. 58, ք. 18:

<sup>26</sup> «Հատաջ», 15 մայիսի 1920 թ., «Նորք», 1998, թիվ 2, էջ 97:

<sup>27</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 580, ք. 25:

քում հաստատվել են ընդամենը 117 օրենք ու մի քանի որոշում, իսկ սկսած 1920 թ. հունվարի 2-ից մինչև մայիսի 5-ը՝ 32 նիստ և այդ ընթացքում ընդունվել 85 օրենք, երկու տարեշրջանները միասին՝ ավելի քան 200 օրենք<sup>28</sup>:

Բյուրո-կառավարությունը, իր ձեռքում կենտրոնացնելով իշխանության բոլոր լծակները, անմիջապես անցավ վճռական գործողությունների: Նորակազմ կառավարության առաջին քայլը եղավ այն, որ նույն օրը՝ մայիսի 5-ին, որոշում կայացվեց անհապաղ աշխատանքից հեռացնել կապի համակարգում աշխատող բոլշևիկ պաշտոնատար անձանց, ինչպես նաև մեծացնել դաշնակցականների թիվը Բանակում<sup>29</sup>:

Խորհրդարանը արձակուրդ ուղարկելու հաջորդ օրը՝ մայիսի 6-ին, նախարարների խորհուրդը որոշեց. «Բոլշևիկների դեմ ձեռք առնել կտրուկ միջոցներ: Հանձնարարել Ն. Գ. նախարարությանը ձեռքակալելու բոլշևիկներին Հայաստանի ամբողջ տարածքի վրա»<sup>30</sup>: Նույն օրը կառավարությունը ընդունեց ժամանակավոր օրենք «Արտակարգ դատարանի մասին»<sup>31</sup>:

Այս ժամանակավոր օրենքը սահմանում էր.

ա) Հայաստանում հաստատել արտակարգ դատարաններ և հանձնարարել արդարադատության նախարարին 24 ժամվա ընթացքում ներկայացնել օրինագիծ:

բ) Մտցնել մահապատիժ. պետական դավաճանության և չարամիտ սպեկուլյացիայի համար՝ արտակարգ դատարանի միջոցով:

գ) Արտակարգ դատարանի վճիռները հաստատում է զինվորական նախարարը<sup>32</sup>:

Արտակարգ դատարաններ հիմնվեցին՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Նոր Բայազետում, Դիլիջանում<sup>33</sup>: Սրանց հիմնումը, ինչպես արդեն ասվեց, կապված էր մայիսյան ապստամբությանը առաջացած արտակարգ իրավիճակի հետ և նպատակ ուներ հնարավորին չափ արագ ու օպերատիվ կերպով կանխել հնարավոր ամեն մի հակակառավարական ու հակաօրինական գործունեություն:

Մայիսի 8-ին նախարարների խորհուրդը, խորհրդարանի կողմից իրեն տված օրենսդրական լիազորությունների հիման վրա, հրապարակեց մեկ այլ օրենք «Պետական ծառայողների սաբոտաժի և բանվորների գործադուլի արգելման մասին»: Այս կապակցությամբ, անշուշտ, սխալվում է իրավաբան Ռ.

Ավագյանը, երբ սույն օրենքի ընդունումը վերագրում է խորհրդարանին<sup>34</sup>: Ապստամբության դեմն առնելու նպատակով կառավարությունը սահմանեց հետևյալ ծայրահեղ կարգը, որն հակոտնեց էր ընդհարապես աշխատանքային ու բանվորական օրենսդրության ոգուն: Ժամանակավոր այս օրենքը կազմված էր չորս հոդվածից.

1. Պետական հիմնարկությունների ծառայողների սաբոտաժը և բանվորների գործադուլը համարվում են պետական հանցանք, և դրանց հեղինակները պատժվում են իբրև պետական հանցագործներ՝ համաձայն քրեական պատժագրի սահմանած օրենքների:

2. Պետական ծառայողների և բանվորների աշխատանքի ընդունումը և արձակումը մտնում է բացառապես համապատասխան նախարարության իրավասության մեջ:

3. Սույն օրենքը իր ուժը կորցնում է Հայաստանի խորհրդարանի աշխատանքների վերսկսման օրից:

4. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում հրապարակվելու օրից<sup>35</sup>:

Իսկ նախարարների խորհրդի մայիսի 11-ին ընդունած որոշմամբ՝ օրենքը տարածվեց նաև «հասարակական և մասնավոր հիմնարկությունների և ձեռնարկությունների ծառայողների ու բանվորների վրա»<sup>36</sup>:

Մայիսի 9-ին նախարարների խորհուրդը որոշեց. «Չեզոք գոտում նշանակել ոստիկանապետ՝ նախօրոք այդ մասին տեղեկացնելով վրաց կառավարությանը»<sup>37</sup>: Ահա կառավարության միջոցառումների այն ոչ լրիվ ցանկը, որի գործադրմամբ պետք է հնազանդեցվեին բոլշևիկյան ելույթները և երկրում վերականգնվեին կարգը և հանգստությունը:

Անդրադառնալով այդ օրենքների պրակտիկ գործադրմանը՝ պետք է ասել, որ Բյուրո-կառավարությունը հանդես բերեց վճռականություն և ինչ-որ տեղ՝ նաև դաժանություն: Տեղեկացնենք, որ մայիսյան ապստամբության կապակցությամբ Արտակարգ դատարանները մահապատժի վճիռ են կայացրել ինը ակտիվ կազմակերպիչների նկատմամբ: Առանց դատի հաշվեհարդար է կատարվել միայն երկու հոգու՝ ուսուցիչ Հ. Սարուխանյանի և պատգամավոր Ա. Մելքոնյանի հանդեպ<sup>38</sup>: Վերջինս մասին ասենք հետևյալը: ՌԿ/Բ/Կ Հայաստանի կոմիտեի (Արմենկոմի) անդամ, պատգամավոր Ա. Մելքոնյանը ապստամբության ժամանակ գործում էր Ալեքսանդրապոլում և համարվում էր Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ: Բայց երբ նա տեսնում է, որ ելույթը պարտության եզրին է, մայիսի 13-ին բոլշևիկ ղեկավարների մի խմբի հետ, վերցնելով 18 մլն ռուբլի (որից 5 մլն-ը պատկանում էր քաղա-

<sup>28</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 20, քք. 1-22, գ. 52, Ժ. 202, ց. 1, գ. 333, քք. 70-160, «ՀՀ օրենքների հավաքածու 1919 թ.», էջ 1-93 և «ՀՀ օրենքների հավաքածու 1920 թ.», էջ 1-72 (Հաշվումները կատարված են մեր կողմից):

<sup>29</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 2, գ. 125 ա, ք. 1:

<sup>30</sup> Նույն տեղում, ք. 2:

<sup>31</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ. 199, ց. 1, գ. 118, ք. 80, 92, «Հառաջ», 18 մայիսի 1920 թ.:

<sup>32</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ. 199, ց. 1, գ. 118, ք. 80:

<sup>33</sup> Կ. Սասունի, Մայիսյան խռովությունները..., էջ 180:

<sup>34</sup> Ռ. Ավագյան, Հանցավորությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920), Երևան, 1995, էջ 66:

<sup>35</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 202, ց. 1, գ. 333, ք. 128:

<sup>36</sup> Ռ. Ավագյան, նշվ. աշխ., էջ 66:

<sup>37</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 2, գ. 125 ա, ք. 4:

<sup>38</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 581, քք. 72 և 79, Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 185-186:

քային բանկին), փախչում է<sup>39</sup>։ Սակայն ճանապարհին Ա. Մելքոնյանը ձերբակալվում է Սեպուհի զինվորների կողմից և Երևան փոխադրվելիս՝ մայիսի 20-ին փաստորեն առանց դատարանի վճռի զնդակահարվում<sup>40</sup>։ Մեկ այլ փաստաթղթից տեղեկանում ենք, որ նա, փախչելով Ալեքսանդրապոլից, թաքնվել է իր հայրենի Աշտարակի շրջանում, որտեղից բռնվել և ուղարկվել է Էջմիածնի բանտը, այնտեղից էլ Երևան հասցնելու ճանապարհին՝ զնդակահարվել է պահակախմբի կողմից<sup>41</sup>։

Կառավարությունը, մասնավորապես, անձեռնմխելի համարվող պատգամավորի ձերբակալման (և առանց դատարանի վճռի զնդակահարման) քայլը հիմնավորում էր նրանով, որ մայիսի 5-ի օրենքով նա իր վրա էր վերցրել խորհրդարանի բոլոր լիազորությունները։ Այդ հիման վրա էլ կառավարությունը չեղյալ էր համարել պատգամավոր Ա. Մելքոնյանի անձեռնմխելիության իրավունքը ու միջոցներ ձեռք առել նրան ձերբակալելու համար։

Իհարկե, կարելի է վիճարկել նման փաստարկների ու հիմնավորումների շուրջ։ Ինչ էլ որ լինի, իշխանությունների կատարած գործողություններում, անշուշտ, կան հակաիրավական պահեր, մանավանդ որ, անկախ մեղադրյալի հանցավորության վտանգավորության աստիճանից, գործը փակվել (կարճվել) է պատգամավորի սպանությանը՝ առանց դատարանի վճռի։ Բայց պետք է ասել, որ հետագայում բուլշևիկները ևս «պարտքի տակ չմնացին»։ Շատ չանցած՝ 1920 թ. օգոստոսի 2-ին, Ջանգեզուրում («Չեկայի» հրամանով) նրանք ավելի դաժանորեն (անմարդկային խոշտանգումներով) հաշվեհարդար տեսան խորհրդարանի անդամներ՝ Վահան Խորենու և Արշակ Շիրինյանի նկատմամբ<sup>42</sup>։

Արտակարգ դատարանները պահպանվեցին մինչև 1920 թ. նոյեմբերի 27-ը և վերացվեցին Ա. Վրացյանի «ձախ» կռաւիցիոն կառավարության որոշմամբ։ Հարկ է նկատել, որ Արտակարգ դատարանները արտակարգ իրավիճակի թելադրանքով հիմնված մարմիններ էին, որոնք ենթարկվում էին կառավարությանը։ Հասկանալի է, որ դրանք անկախ չէին։ Դա երևում է նրանից, որ մահապատժի վերաբերյալ Արտակարգ դատարանի վճիռները հաստատում էր զինվորական նախարարը<sup>43</sup>։

Մայիսյան ապստամբության պարտությունից հետո Հայաստանի բուլշևիկները անցան խոր ընդհատակ։ Նրանց մի մասը փախավ Խ. Աղրբեջան։ 1920 թ. հունիսին ՌԿ/բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշումով և նույն կուսակցության Կենտկոմի կազմբյուրոյի հաստատումով ստեղծվեց

Հայաստանի Կոմունիստական կուսակցություն՝ մարզային կազմակերպության իրավունքներով<sup>44</sup>։

ՀՀԴ Բյուրոն իշխանությունը ստանձնել էր մեկ ամիս ժամանակով։ Խորհրդարանի արձակուրդի ժամկետը լրանալու օրը՝ 1920 թ. հունիսի 5-ին, գումարվեց խորհրդարանի արտահերթ նիստ<sup>45</sup>։ Վարչապետ Հ. Օհանջանյանը հանգամանորեն զեկուցեց կառավարության նախորդ մեկամսյա գործունեության արդյունքների, ներքին կացության և արտաքին փոխհարաբերությունների մասին։ Վարչապետը մասնավորապես զովեստով խոսեց շրջանները մեկնած պատգամավորների կատարած աշխատանքի մասին։ Նա ասաց, որ մայիսյան խռովության հնազանդեցման գործում «Մենք շատ բանում պարտական ենք խորհրդարանի անդամների եռանդուն գործունեությանը»<sup>46</sup>։

Այնուհետև վարչապետը հայտարարեց, որ կառավարությունը հաստատել է 1.4 մլրդ ռուբլու ելքի վարկ, որը ծածկելու համար որոշված է կնքել 20 մլն դոլարի «Հայաստանի անկախության փոխառություն»<sup>47</sup>։ Հենց այս փոխառության կնքման առաքելությամբ էլ արտասահման գործուղվեց նախկին վարչապետ Ալ. Խատիսյանը։

Վարչապետի ելույթից հետո ամբիոն բարձրացավ պատգամավոր Ն. Աղբալյանը, որն արտասանեց զեղեցիկ և հիմնավորված ճառ։ Նա հայ բուլշևիկներին բնութագրեց որպես «մեր կրծքների վրա սնուցված օձեր»<sup>48</sup>։ Ապա խոսեց պատգամավոր Ա. Մաքսապետյանը, որը պահանջում էր անմիջապես իրագործել պետական հիմնարկությունների հայացումը և ազգայնացումը։ Իսկ ԷսէՄ պատգամավորները, լուռ նստած, լսում էին իրենց հասցեին արված բոլոր մեղադրանքները։

Զնայած մայիսի 5-ի նիստում, վարչապետ ընտրվելու ժամանակ, Հ. Օհանջանյանը խոստացել էր, որ երբ բուլշևիկյան խռովությունը հնազանդեցվի և Հայաստանի վիճակը քիչ թե շատ կայունանա, Բյուրոն կհեռանա կառավարությունից և կրկին կսահմանազատվեն Բյուրոյի և կառավարության իրավասության շրջանակները, բայց այդ բանը տեղի չունեցավ։ Այստեղ Բյուրոկառավարությունը փաստարկեց, որ «դեռ անելիք կա ներքին ճակատի վրա»<sup>49</sup>։ Ներքին ճակատ ասելով՝ կառավարությունը նկատի ուներ մահմեդականների ապստամբական ելույթները Ջանգիբասարում, Կողբում, Շարուրում և այլուր։

Օրակարգը սպառելուց հետո առաջարկվեց երկարաձգել խորհրդարանի արձակուրդը։ Կառավարության անդամներից Ա. Վրացյանը, որը հանդիսանում էր պետական տեսակետի ակտիվ ջատագովներից մեկը, դեմ արտա-

<sup>39</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, ք. 94։

<sup>40</sup> «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում», էջ 154 և 198, «Ժողովուրդ», 18 մայիսի 1920 թ.։

<sup>41</sup> «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ուղյուցիան ...», էջ 322-323։

<sup>42</sup> Գ. Վարդանյան, Լեռնահայաստանի հերոսամարտը, Պոլսերէ, 1923, էջ 49-50։

<sup>43</sup> ՀՀ ՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 133, ք. 73։

<sup>44</sup> «Հայաստանի Կոմկուսի պատմության ուրվագծեր», էջ 298։

<sup>45</sup> ՀՀ ՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, ք. 142։

<sup>46</sup> «Ժողովուրդ», 10 հունիսի 1920 թ.։

<sup>47</sup> ՀՀ ՊԿԱ, ֆ. 199, ց. 1, գ. 176, ք. 3-4, «Մշակ», 8 հունիսի 1920 թ.։

<sup>48</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 396։

<sup>49</sup> «Աղդակ-Շաբաթայակ», 23 սեպտեմբերի 1973 թ. (թիվ 41)։

հայտվեց Բյուրոյի մեկ ամսից ավել իշխանության գլուխ մնալուն ու նույնիսկ հրաժարականի փորձ արեց, բայց վերջը Ռ. Տեր-Մինասյանի և Հ. Օհանջանյանի պնդմամբ ընկրկեց<sup>50</sup>:

Արդյունքում՝ խորհրդարանը կրկին նոր օրենք ընդունեց իր աշխատանքները մինչև օգոստոսի մեկը (շուրջ երկու ամիս) դադարեցնելու մասին<sup>51</sup>: Օրենքով սահմանվեց, որ ա) դադարի միջոցին ընթացիկ օրինագծեր հաստատելու և մերժելու իրավունքը փոխանցվում է կառավարությանը՝ բ) խորհրդարանի նախագահությանը իրավունք է տրվում արտակարգ կարևորության դեպքում և կամ կառավարության ցանկությամբ հրավիրել խորհրդարանի նիստ<sup>52</sup>: Այդ նշանակում է, որ նշված ժամանակամիջոցում կառավարությունը դարձյալ օժտվում է խորհրդարանի օրենսդրական գործառնություններով (իրավասություններով): Գտնում ենք, որ խորհրդարանին պարտադրված այս երկրորդ հարկադիր արձակուրդը արդարացված (տեղին) չէր: Եթե խորհրդարանի առաջին՝ մայիսյան արձակուրդը պատճառաբանվում ու հիմնավորվում էր մայիսյան ապստամբության հետևանքով հանրապետությունում ստեղծված քաղաքական ճգնաժամային վիճակով, պետական կառավարման խիստ կենտրոնացման անհրաժեշտությամբ, ապա հունիսին ընդունված երկամսյա արձակուրդը (երբ ապստամբությունն արդեն ճնշվել էր) խիստ վիճարկելի էր, եթե չասենք սխալ ու նահանջ էր ժողովրդավարական սկզբունքներից: Ավելին, հետագայում՝ օգոստոսի 2-ին, խորհրդարանի փոխնախագահ Ավ. Սահակյանի ստորագրությամբ նոր օրենք է ընդունվում խորհրդարանի աշխատանքները շուրջ երեք ամսով՝ մինչև հոկտեմբերի 31-ը, դադարեցնելու մասին<sup>53</sup>: Եվ ընթացիկ օրինագծերի հաստատման կամ մերժման իրավունքը կրկին փոխանցվում է կառավարությանը: Սա նշանակում է, որ 1920 թ. մայիսի 5-ից մինչև հոկտեմբերի 31-ը (շուրջ 6 ամիս), հարկադիր արձակուրդների պատճառով, խորհրդարան չի հրավիրվել: Իրավ է, որ այդ շուրջ 6 ամիսների ժամանակաշրջանում հաստատվել էր Բյուրո-կառավարության մենիշխանություն, ուր կուսակցությունն ու կառավարությունը նույնանում էին, իսկ խորհրդարանը գտնվում էր արձակված վիճակում: Ուսումնասիրությունը մեզ բերում է այն հետևության, որ Բյուրո-կառավարությունը փաստորեն իրենից ներկայացնում էր երկրի գերագույն իշխանությունը, ուստի և նա պատասխանատու ու հաշվետու չի եղել մեկ այլ մարմնի, այդ թվում նաև անգործության մատնված խորհրդարանի առաջ: Այստեղից էլ՝ հնարավոր սխալներն ու բացթողումները: Ս. Վրացյանը վկայում էր, որ Օհանջանյանի կաբինետը «... ավելի շուտ հեղափոխական կոմիտե էր, քան սովորական կառավարություն»<sup>54</sup>:

<sup>50</sup> Նույն տեղում:

<sup>51</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 58, ք. 21:

<sup>52</sup> Նույն տեղում, գ. 20, ք. 56:

<sup>53</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 58, ք. 52, ֆ. 202, ց. 1, գ. 106, ք. 13:

<sup>54</sup> Ս. Վրացյան, Հուշեր մոտիկ անցյալից («Հայրենիք», 1923, թիվ 1, նոյեմբեր, էջ 63):

Այս առնչությամբ, կարծում ենք, միանգամայն տեղին ու արդարացի էր 1921 թ. ապրիլին ՀՀԴ Բուրքեշի (Բուխարեստի) խորհրդաժողովում Բյուրոյի գործունեությանը տրված այն քննադատական գնահատականը, որ նա «1920 թ. ապրիլից ի վեր կանգնած չի եղել պատմական ծանր վայրկյանի բարձրության վրա», «չի աշխատել ստեղծել կուսակցական ուժեղ կազմակերպություն», այլ «մտած է եղել կառավարության մեջ, լքելով կազմակերպության շարքերը» ու մայիսյան դեպքերի կանխումից անմիջապես հետո «չի հրաժարվել իշխանությունից»<sup>55</sup>: ՀՀԴ Բյուրոյի գործունեությանը գրեթե նույն քաղաքական գնահատականը տվեց նաև 11.1924-1.1925 թթ. Փարիզում գումարված կուսակցության 10-րդ (Ժ) Ընդհանուր ժողովում: Քննելով 9-րդ (Թ) Ընդհանուր ժողովից ի վեր ՀՀԴ Բյուրոյի հնգամյա գործունեությունը՝ որպես թերություն ընդգծվեց, որ ՀՀԴ Բյուրոն «Մայիսյան ապստամբության զսպումից հետո երկարաձգել է իր պետական իշխանության գլուխ մնալը»<sup>56</sup>:

Հարկ է նշել, որ ՀՀԴ Բյուրոն իշխանությունը վարելու հակումներ էր դրսևորել նաև ՀՀ նախընթաց փուլում: Օրինակ, 9-րդ Ընդհ. ժողովում խիստ քննադատության ենթարկվեց ՀՀԴ երկու՝ Արևելյան և Հայաստանի Բյուրոների հնգամյա (1914-1919 թթ.) գործունեությունը: Վերջիններս փոխանակ մշակելու ընդհանուր ուղեգիծ և կոորդինացնելու ու ղեկավարելու կուսակցական կյանքը՝ իրերի բերումով, ավելի հաճախ ստանձնել էին գործադիր պաշտոններ՝ ընդգրկելով Հայ Ազգային բյուրոյում ու Հայոց Ազգային խորհրդում, Անդրկովկասյան կառավարությունում ու Սեյմում<sup>57</sup>:

Արդ, բազում տասնամյակների հեռվից, բացահայտելով ու քննադատելով Բյուրո-կառավարության թույլ տված այս կամ այն վրիպումները, մյուս կողմից պետք է հաշվի առնել, որ նորանկախ պետության կառավարման տակավին բավարար փորձ չունեցող կուսակցությունը հայտնվել էր միջազգային (ռազմա-քաղաքական, դիվանագիտական) հարաբերությունների մի այնպիսի բարդ ժամանակաշրջանում, երբ շատ դժվար էր երկրի ու ժողովրդի ճակատագրին վերաբերող բոլոր հարցերում ճիշտ կողմնորոշվել և անթերի վճիռներ կայացնել:

### 3. Կուսակցությունների վերաբերմունքը մայիսյան ապստամբությանը

Մայիսմեկյան դեպքերի կապակցությամբ կառավարող կուսակցության ՀՀԴ Բյուրոն ի նկատի ունենալով հայրենիքին ու անկախ պետականությանը

<sup>55</sup> Հ. Տասնապետյան, Հ. Յ. Դաշնակցությունը իր կազմությունն մինչև Ժ ընդհ. ժողով (1890-1924), Աթենք, 1988, էջ 159, «Ազգակ-Շարաբորյակ», 30 սեպտեմբերի 1973 թ. (թիվ 42):

<sup>56</sup> Հ. Տասնապետյան, նշվ. աշխ., էջ 173:

<sup>57</sup> «Քաղվածքներ Հ.Յ.Դ. 9-րդ ընդհանուր ժողովի որոշումներից», Ե., 1920, էջ 14-15:

սպառնացող վտանգը, մայիսի 5-ին հրապարակեց ազդ-կոչ, որով հայտա-  
րարվում էր կուսակցության բոլոր ուժերի մոբիլիզացիա: «Այսօրվանից  
սկսած,- ասվում էր կոչում,- յուրաքանչյուր շրջանի բոլոր դաշնակցական ըն-  
կերները պարտավոր են ներկայանալ տեղական մարմին կամ Բյուրոյի լիա-  
զորին և նրանց տրամադրության տակ դնել իրենց բոլոր ուժերը»<sup>58</sup>:

ՀՀԴ Բյուրոյի հրահանգները գործողության մեջ դնելու նպատակով  
Երևանի Կենտրոնական կոմիտեն մշակեց և մայիսի 7-ին հրապարակեց կու-  
սակցության բոլոր մարմիններին ու անդամներին ուղղված շրջաբերական  
հրահանգ: Դրանում ներկայացված էին շուրջ 10 կետերից բաղկացած հանձ-  
նարարություններ, որոնցով պարտադիր կարգով պետք է ղեկավարվեին կու-  
սակցության բոլոր տեղական մարմիններն ու շարքային անդամները: Այս-  
պես, օրինակ, պահանջվում էր կուսակցական կարգապահության խստացում,  
կուսակցական մարտական և զինական ուժերի կազմակերպում, հասարակա-  
կան լայն զանգվածների շրջանում ուժեղ քարոզչություն և այլն<sup>59</sup>: Նույն օրը  
ՀՀԴ Երևանի քաղաքային կոմիտեի նախաձեռնությամբ խորհրդարանի  
դահլիճում քաղաքական մոմենտի մասին զեկուցումով հանդես եկավ Վ. Նա-  
վասարյանը<sup>60</sup>:

Մայիսի 13 և 17-ին ՀՀԴ Բյուրոյի հերթապահ անդամ Ս. Վրացյանի և  
քարտուղար Հ. Տեմճյանի ստորագրությամբ հրապարակվեցին կուսակցու-  
թյան մարմիններին ուղղված նոր շրջաբերական հրահանգներ, որոնցում ավելի  
խստապահանջ ոճով ցույց էին տրվում խռովության առաջ բերած անիշ-  
խանության երևույթները և դրանք հաղթահարելու համար կուսակցական  
մարմինների կոնկրետ անելիքները<sup>61</sup>: Ասվածից դժվար չէ տեսնել, որ ՀՀԴ Բ-  
յուրոն, լինելով հանդերձ երկրի կառավարություն, միաժամանակ շարունա-  
կում էր կատարել կուսակցության բարձրագույն մարմնի իր պարտականու-  
թյունները:

Ալեքսանդրապոլի ելույթը ճնշելուց հետո, Բյուրոյի մայիսի 17-ի շրջա-  
բերականը ավելի շատ ուղղված էր կուսակցության արտասահմանյան մար-  
միններին: Հաշվի առնելով, որ ապստամբության գործին մեծ չափով նպաս-  
տել էր այն հանգամանքը, որ պետական հիմնարկություններում մինչ այդ տե-  
ղեր էին գրադեցրել քաղաքականապես անվստահելի տարրեր, Բյուրոն  
հանձնարարում էր արտասահմանից Հայաստան աշխատելու գործուղել  
սպաներ, երկաթուղու, ռադիո-հեռագրական, ավտո-հավաքակայանի աշխա-  
տողներ, գյուղատնտեսներ, երկրաչափներ, անասնաբույժներ և այլ մասնա-  
զետներ՝ ամենևին էլ պարտադիր չհամարելով, որ նրանք լինեն դաշնակցա-  
կաններ<sup>62</sup>: Բյուրոյի սույն շրջաբերականը ուղղված էր արտասահմանի հայա-

շատ շրջաններին ու մասնավորապես Կ. Պոլսի հայ հատվածին: «Հառաջի»  
հայտնած տվյալներով՝ 1920 թ. սկզբին այնտեղ կար մոտ 250 հազ. հայ, և  
հույս էր հայտնվում, որ Հայկական հարցի բարեհաջող վճռի դեպքում նրանց  
մոտ 1/3-ը անպայման կվերադառնար հայրենիք<sup>63</sup>:

Մայիսյան ապստամբության կապակցությամբ առաջացավ տարան-  
ջատում հայ քաղաքական կուսակցությունների միջև: Հայ էսեռները և Հա-  
յաստանի հնչակյանները ոչ միայն համակրեցին, այլև տեղ-տեղ գործնակա-  
նում պաշտպանեցին ու աջակցեցին ապստամբ բոլշևիկներին:

Հայ էսեռների Կենտկոմը մայիսնեկյան տոնի կապակցությամբ հան-  
դես էր եկել խորհրդամետ և հեղափոխական բովանդակությամբ կոչով<sup>64</sup>: Այս  
կապակցությամբ Ա. Հովհաննիսյանը գրում էր, որ մայիսնեկյան ցույցը շար-  
ժում առաջացրեց անգամ էսեռների կազմակերպության մեջ: Նրանք ձեռն-  
պահ մնալով զինված ապստամբությունից՝ արտահայտվում են Հայաստանի  
խորհրդայնացման օգտին<sup>65</sup>: Այսինքն՝ էսեռները կողմնակից էին Հայաստանի  
«անաբյուր խորհրդայնացմանը»: Այս նպատակին հասնելու ճանապարհին՝  
անգամ Հայաստանի կոմունիստներին առաջարկ էին անում կազմել համա-  
տեղ խառը (կոալիցիոն) կառավարություն<sup>66</sup>:

Ապստամբության ժամանակ շատ տեղերում էսեռները համագործակ-  
ցել են բոլշևիկների հետ<sup>67</sup>: Նրանք հատկապես ակտիվ գործունեություն ծա-  
վալեցին Դիլիջանի գավառում: Դիլիջան գործուղված խորհրդարանի պատ-  
գամավոր Խ. Պապայանը և այնտեղ տեղակայված զորամասի հրամանա-  
տար Սեպուհի համհարզ Մ. Թամրազյանը հուլիսի 6-ին մայրաքաղաք՝  
խորհրդարանին ուղարկած իրենց համատեղ զեկուցագրում տեղի էսեռների  
գործունեության վերաբերյալ հայտնում էին հետևյալը. «Մայիսի 19-22-ի  
դեպքերից առաջ,- կարդում ենք զեկուցագրում,- էսեռները Դիլիջանում, 18 հո-  
գու մասնակցությամբ ունեցել են ժողով, որի ընթացքում քննել են դեպի Հա-  
յաստանի ներկա կառավարությունը և բոլշևիկյան շարժումը իրենց վերաբեր-  
մունքի մասին հարցը: Այդ ժողովում 7-8 հոգի ուժեղ կերպով կողմնակցություն  
են արտահայտել բոլշևիկներին միանալու վերաբերյալ»<sup>68</sup>: Այնուհետև զեկու-  
ցագրի հեղինակները շարունակում են «Մայիսի 19-22-ի Դիլիջանի հայտնի  
դեպքերի քննության ընթացքում պարզվել է, որ շատ տեղերում էսեռները հա-  
մագործակցել են բոլշևիկների հետ: Մասնավորապես Զարխեշում էսեռները  
կոռպորատիվի վարչության կազմով վարել են պրոբոլշևիկյան գործունեու-  
թյուն»<sup>69</sup>: Այս հիման վրա առաջարկ էր մտցվում խորհրդարան՝ տեղի էսեռ դե-

<sup>53</sup> «Հառաջ», 25 հունվարի 1920 թ.:

<sup>54</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց. 1, գ. 41, ք. 1:

<sup>55</sup> Ա. Գ. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Ե.  
1923, էջ 15:

<sup>56</sup> Նույն տեղում:

<sup>57</sup> «Մշակ», 28 նոյեմբերի 1920 թ.:

<sup>58</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 4033, ց. 7, գ. 53, ք. 1:

<sup>59</sup> Նույն տեղում:

<sup>58</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 104, ք. 1:

<sup>59</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 165, ք. 1:

<sup>60</sup> Նույն տեղում, գ. 164, ք. 3:

<sup>61</sup> Նույն տեղում, գ. 167, ք. 1:

<sup>62</sup> Նույն տեղում, գ. 169, ք. 1:

կավարներին վարչական կարգով արտաքսել շրջանից<sup>70</sup>։ Հայ ժողովրդականների պաշտոնաթերթ, «Ժողովուրդը» հայտնում է, որ Դիլիջանում էսէռները զինված աջակցություն են ցույց տվել խռովարարներին<sup>71</sup>։ Բացի այդ, պետք է նշել, որ մայիսյան դեպքերից առաջ և դրա ընթացքում էսէռական մամուլը առատ տեղ էր հատկացնում կոմունիստների գործունեության լուսաբանմանը, նյութեր ու հաղորդագրություններ էին տպագրում բոլշևիկների ձերբակալությունների ու հետապնդումների, նրանց ընդհատակյա կազմակերպությունների գործունեության մասին և այլն։ Այս կապակցությամբ գտնում ենք, որ իրավացի չեն «Հայաստանի Կոմկուսի պատմության ուրվագծերի» հեղինակները, երբ էսէռներին դասում են դաշնակցական կառավարության կողմնակիցների քվում<sup>72</sup>։

Բացի էսէռներից, հայ քաղաքական կուսակցություններից մայիսյան ապստամբությանը համակրել, պաշտպանել ու նույնիսկ աջակցել են հնչակյանները։ Ա. Հովհաննիսյանը տեղեկացնում է, որ մայիսին կայանող ժամանակ Հնչակյան կուսակցության խմբակը լքեց սեփական դրոշը և միացավ կոմունիստներին<sup>73</sup>։ Ս. Դ. Հնչակյան կուսակցության պատմագիր Ա. Կիստուրի հավաստում է, որ ապստամբության ժամանակ հնչակյանները մասնակցել են ոչ միայն խմբակով, այլ զանգվածորեն, մասնավորապես նրա էրևանի մասնաճյուղը<sup>74</sup>։ Իսկ հնչակյանների թիֆլիսյան կենտրոնը որոշում է կայացնում տապալել դաշնակների կառավարությունը և հաստատել խորհրդային կարգեր<sup>75</sup>։

Հայ քաղաքական կուսակցությունների մնացյալ մասը՝ Հայ ժողովրդականները, Հայ ռամկավարները, Հայաստանի սոց.-դեմոկրատները (նախկին «սպեցիֆիկները»), հայ մենշևիկները, ինչպես նաև անկուսակցական հասարակական խմբեր պաշտպանեցին կառավարությանը։

Այսպես, դեռ ապստամբությունը չէր սկսել՝ մայիսին կայանող ցույցերից անմիջապես հետո՝ մայիսի 3-ին, հրավիրվեց Հայ ռամկավար կուսակցության Հայաստանի գործադիր մարմնի արտակարգ խորհրդակցական ժողով։ Նրանում ընդունվեց հետևյալ բանաձևը. «Վստահություն հայտնել և աջակցել Հայկական Հանրապետության կառավարությանը ցորչափ նա կանգնած է հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և Միացյալ Հայաստանի անխակությունը պաշտպանելու տեսակետի վրա»<sup>76</sup>։

Մայիսի 5-ին գումարվեց կառավարությանը աջակից քաղաքական ուժերի՝ Հայ ժողովրդական, Հայ ռամկավար, Հայաստանի սոց.-դեմ. կուսակ-

ցությունների, ինչպես նաև անկուսակցականների ներկայացուցիչների խորհրդակցական ժողով։ Այնտեղ քննության առնելով արտաքին ու ներքին ազդակների թելադրանքով Հայաստանում առաջացած քաղաքական ճգնաժամի հանգամանքները՝ ժողովը միաձայն որոշում կայացրեց. «Կանգնել պետական ինքնապաշտպանության և Միացյալ Հայաստանի անկախության տեսակետի վրա»<sup>77</sup>։ Միաժամանակ, խորհրդակցությունը անհրաժեշտ համարեց ծանոթանալ կառավարության տրամադրությանը և վերաբերմունքին։ Հաջորդ օրը՝ մայիսի 6-ին, հատուկ պատվիրակության միջոցով նորակազմ Բյուրո-կառավարությանը իրազեկ պահվեց խորհրդաժողովի արդյունքների մասին։

Անշուշտ, սխալ կլինի կարծել, թե վերոհիշյալ կուսակցությունները ցանկանում էին պաշտպանել դաշնակցական կառավարությանը, բնավ՝ ոչ։ Ինչպես արդեն գիտենք, այս կուսակցությունները ևս ոչ պակաս ընդդիմադիր էին ՀՀ Դաշնակցությանը և նրա կառավարությանը։ Ավելին՝ սրանք էլ ժամանակ առ ժամանակ հարմար առիթը բաց չէին թողնում փորձելու տապալել դաշնակցական իշխանությունը։

Ստեղծված պայմաններում դաշնակցական կառավարությանն ու իշխանություններին պաշտպանելու անվան տակ նրանք հասկանում էին Հայաստանի անկախության և Միացյալ Հայաստանի գաղափարի պաշտպանությունը։

Մայիսի 13-ին խորհրդարանի նախագահության նախաձեռնությամբ, վարչապետ Հ. Օհանջանյանի կաբինետում, տեղի ունեցավ խորհրդակցություն՝ ՀԺԿ, Հայ ռամկավարների, ՀՍԴԲԿ ներկայացուցիչների և անկուսակցականների մասնակցությամբ։ Ներկա էին Ա. Խատիսյանը, խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, ՀԺԿ-ից՝ Գր. Տեր-Խաչատրյանը, Հ. Հովհաննիսյանը, Ս. Հարությունյանը, ռամկավարներից՝ Ա. Դարբինյանը, սոց.-դեմոկրատներից՝ Բ. Իշխանյանը, Դ. Անանունը, անկուսակցականներից Մ. Աբելյանը, Գր. Չալխուշյանը և այլք։ Նրանք միակամ պատրաստակամություն հայտնեցին աջակցել կառավարությանը՝ Միացյալ Հայաստանի անկախությունը պաշտպանելու գործում<sup>78</sup>։

Վերոհիշյալ քաղաքական ուժերից ՀԺԿ ցույց է տվել նաև գործնական օգնություն<sup>79</sup>։ Պետք է ասել, որ հիշյալ կուսակցությունների բարոյական և գործնական աջակցությունը զգալի դեր խաղաց ապստամբության արագ ու ոչ ցավազին հնազանդեցման գործում։

\*\*\*

1920 թ. մայիսյան ապստամբության հնազանդեցումից հետո՝ մայիսի 28-ին, պաշտոնապես նշվեց անկախության երկրորդ տարեդարձը։ Այդ օրը Աստաֆյան (Աբովյան) փողոցի վրա կառուցված խորհրդարանի նոր շենքում

<sup>70</sup> Նույն տեղում, ք. 2։

<sup>71</sup> «Ժողովուրդ», 12 հունիսի 1920 թ.։

<sup>72</sup> «Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 292։

<sup>73</sup> Ա. Գ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 15։

<sup>74</sup> Ա. Կիստուր, Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության (1887-1962), Կ. Ա. Բեյրութ, 1962, էջ 488։

<sup>75</sup> Ա. Կիստուր, նշվ. աշխ., էջ 486։

<sup>76</sup> «Հայաստանի ծայն», 16 մայիսի 1920 թ.։

<sup>77</sup> Նույն տեղում, 15 մայիսի 1920 թ.։

<sup>78</sup> «Ժողովուրդ», 16 մայիսի 1920 թ.։

<sup>79</sup> «Ժողովուրդ», 11-12 հունիսի 1920 թ., «Մշակ», 4 հունիսի 1920 թ.։

կայացավ հանդիսավոր նիստը<sup>80</sup>։ Անկախության տոնին չմասնակցեցին էսեռները, որոնք բացակայում էին մահ հանդիսավոր նիստից։ Այն բացեց խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը։ Ելույթներ ունեցան վարչապետ Հ. Օ. հանջանյանը։ ՀՅԴ անունից հանդես եկավ պատգամավոր Վ. Նավասարդյանը։ ՀԺԿ Հայաստանի կազմակերպության կողմից անկախության տարեդարձը շնորհավորեց Ս. Հարությունյանը։ Նա հայտնեց, որ իր կուսակցությունը բոլոր ուժերը տրամադրել է կառավարությանը և այդպես կվարվի մահ հետագայում, եթե Հայաստանին վտանգ սպառնա։ ՀԺԿ Վրաստանի ԿԿ-ի կողմից անկախությունը ողջունեց Լեոն (Առաքել Բաբախանյան)։ Տարեդարձի առթիվ հայ ժողովրդին ուղղված առանձին կոչ հրապարակեց ՀԺԿ Հայաստանի ԿԿ-ը։ Այդ կոչում բարձր գնահատական էր տրվում 1918 թ. մայիսի 28-ի իրադարձությանը։ Հատկանշական է, որ այս կոչում ժողովրդականները հատուկ ընդգծում էին իրենց արևմտյան քաղաքական կողմնորոշումը, «Մեզ համար արևմուտքից է ծագում ազատության արշալույսը», - ընդգծվում էր կոչում<sup>81</sup>։

Հարկ է նշել, որ չնայած հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում ժողովրդական կուսակցության կրած անհաջողությանը, այդուհանդերձ, հավատարիմ մնալով հայ ազգային իդեալներին՝ մա շարունակում էր սատար լինել հայոց անկախ պետականությանը և Միացյալ Հայաստանի կայացմանը։ Համազգային տոնի առթիվ Հայաստանի կառավարությանը և խորհրդարանին ջերմագին շնորհավորեցին ՀԺԿ ԿԿ-ը, ՀԺԿ Հայաստանի ԿԿ-ը, ՀԺԿ Երևանի ուսանողական և աշակերտական խմբակցությունները, «Ժողովուրդ» թերթի խմբագրությունը<sup>82</sup>։

Հայ ռամկավար կուսակցության Հայաստանի խորհրդի անունից ողջույնի խոսք ասաց Արտակ Դարբինյանը, իսկ ՀՍԴԲԿ («սպեցիֆիկներին») կողմից՝ Երվանդ Պալյանը։ Ս. Դ. Հնչակյան կուսակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից անկախությունը շնորհավորեց բժ. Բենյամին Աղոյանը<sup>83</sup>։ Այդ նշանավոր տոնի առթիվ ՀՍԴԲԿ Երևանի կոմիտեն տպագրեց Հայաստանի քաղաքացիներին ուղղված կոչ, որում զգուշացվում էր, որ «զխավորը ազատություն ձեռք բերելը չէ, այլ ձեռք բերած ազատությունը՝ պահպանելը»<sup>84</sup>։

Հանրապետության երկրորդ տարեդարձը խանդավառությամբ դիմավորեց ժողովուրդը։ Այն նշվեց տոհմացքներով, հավաքներով, երգ-երաժշտությամբ ու հրավառությամբ։

Մայիսյան դեպքերը լուրջ դաս հանդիսացան հայ ազգային քաղաքական կուսակցությունների համար, որոնք անկախության տարեդարձի օրերին

հաւատատակամոթյուն արտահայտեցին պաշպանել հայրենիքն ու նրա անկախությունը դրսի ու ներսի ոտնձգություններից։ Այս խնդրում ՀՅԴ-ի հետ համերաշխ էին ժողովրդականները, ռամկավարները, գաղութահայ հնչակյանները, «սպեցիֆիկները»։

ՀՀ երկրորդ տարեդարձը հանդիսավարությամբ նշվեց մահ գաղթախարհում՝ կուսակցությունների և ժողովրդի կողմից<sup>85</sup>։ Մասնավորապես այն համերաշխորեն տոնեցին ամերիկահայ չորս կուսակցությունները՝ ՀՅԴ, Վերակազմյալ Հնչակյան, Ս. Դ. Հնչակյան և Ս. Ռամկավար<sup>86</sup>։

Հայոց անկախ պետականության պաշտպանության գործում ընդդիմադիր կուսակցություններից առանձնապես մարտականորեն էին տրամադրված Հայ ժողովրդականները, որոնք մեկ անգամ ևս ընդգծում էին իրենց ազգային բովանդակությունը։ Բուլշևիկների մայիսյան ապստամբությունից դասեր առած՝ նրանք «աջից» քննադատում էին Հայաստանի կառավարությանը՝ հակապետական ու հակաանկախական կուսակցությունների ու հոսանքների հանդեպ նախկինում ցուցաբերած չափից ավելի լոյալության ու հանդուրժողականության համար։ «Երբեք և ոչ մի կուլտուրական երկրում,- գրում էր «Ժողովուրդը» իր առաջնորդողներից մեկում,- չի թուլատրվում գործունեությունը այնպիսի քաղաքական կամ այլ կազմակերպությունների, որոնք չեն ճանաչում այդ երկրի անկախությունը և պայքարում են նրա դեմ»<sup>87</sup>։ «Ժողովուրդը» անգամ հարց էր բարձրացնում փակել մահ ռուսական ազգային խորհուրդները, որոնք օգնել ու օժանդակել էին բուլշևիկ խռովարարներին։

«Զախ» կուսակցությունները, մնալով հակաանկախական դիրքերում, ոչ մի կերպ չարձագանքեցին մայիսի 28-ի նշանավոր տարելիցին։ Ավելին՝ նորաստեղծ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ավելի մեծ վճռականությամբ սկսեց բանվորներին ու գյուղացիներին պայքարի կոչել՝ դաշնակցական կառավարությունը տապալելու և խորհրդային իշխանություն հաստատելու համար։ «Մենք դիմում ենք Հայաստանի բանվորա-գյուղացիական զանգվածներին,- կարդում ենք ՀԿԿ Կենտկոմի հետմայիսյան կոչերից մեկում,- նրա հեղափոխական կորովին ու դասակարգային գիտակցությանը՝ կազմակերպվելու Կոմկոմի դրոշի շուրջը, հավաքելու ցրված հեղափոխական ուժերը, որպեսզի ձեռք ձեռքի տված Խ. Ռուսաստանի պրոլետարիատի հետ միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական դաշնակցական հատվածի լուծը, նորից բարձրացնենք Կոմունիզմի Դրոշակը Հայաստանում»<sup>88</sup>։

<sup>80</sup> «Հառաջ», 2 հունիսի 1920 թ.։

<sup>81</sup> «Մշակ», 4 հունիսի 1920 թ.։

<sup>82</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 71, ք. 78-79, 86, 105-106։

<sup>83</sup> «Հառաջ», 3 հունիսի 1920 թ.։

<sup>84</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 70, ք. 1։

<sup>85</sup> «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 2 հունիսի 1920 թ.։

<sup>86</sup> Մ. Գ. Ճիզմենյան, նշվ. աշխ., էջ 426։

<sup>87</sup> «Ժողովուրդ», 18 մայիսի 1920 թ.։

<sup>88</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 4033, ց. 1, գ. 440, ք. 8, «Կարմիր աստղ», 1920, թիվ 19։

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԳ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԴՐԱՆԸ ՀՀ ՎԵՐՋԻՆ ՓՈԽԼՈՒՄ

### 1. Խորհրդա-թուրքական համագործակցությունը

Հայ քաղաքական կուսակցությունների գործունեությունն ու քաղաքական դիրքորոշումները լավ ըմբռնելու և ճիշտ գնահատելու համար հարկ կա հատուկ անդրադառնալ թուրք-բուլղարական մերձեցման ու գործակցության խնդրին, որը տասնամյակներ շարունակ ժխտվել կամ առնվազն կասկածի տակ է առնվել խորհրդահայ պատմագրության մեջ:

Ինչպես հայտնի է, դեռ 1919 թ. վերջերից քաղաքացիական կռիվներում օրավուր զորացող բուլղարների հաջողությունները գոտեպնդեցին ու ոգևորեցին նաև թուրք-ազգայնականներին (քեմալականներին), որոնք և շտապեցին դրանք օգտագործել իրենց նպատակների համար՝ ուժեղացնելով պանթուրքիզմը և պանիսլամիզմը: Մի գաղտնի վավերագրից տեղեկանում ենք, որ դեռ 1919 թ. դեկտեմբերին Հայաստանի ռազմական (զորական) նախարարության հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Մուրադյանը ահազանգում ու զգուշացնում էր հանրապետության ղեկավարությանը, որ բուլղար-թուրքական «**համալրեղ գործողությունների ծրագիրը**» մեծ վտանգ է ներկայացնում Հայաստանի համար<sup>1</sup>:

Այս փաստի կապակցությամբ Ռուբեն Տեր-Մինասյանը իր հուշերում նշում էր, որ 1919 թ. վերջերից «հաստատ լուրեր սկսեցին պտտվել, թե կայացել է բուլղար-թուրքական համագործակցություն»<sup>2</sup>: Ավելի վաղ՝ 1918-1919 թթ., խորհրդային պետության՝ ղեկավարները կապերի մեջ են եղել երիտթուրք պարագլուխների հետ<sup>3</sup>: Հատկանշական է, որ Մոսկվային սիրաշահում էին թե՛ իթթիհատականները և թե՛ քեմալականները, որոնք իրենց հետապնդած հակահայկական, շովինիստական նպատակներով էապես չէին տարբերվում իրարից:

<sup>1</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, ք. 85-86:

<sup>2</sup> Ռուբեն, նշվ. աշխ., հ. Է, էջ 321:

<sup>3</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, ք. 28, ֆ. 201, ց. 1, գ. 43, ք. 68:

Իր հերթին, Խորհրդային Ռուսաստանը, Անդրկովկասը խորհրդայնացնելուց զատ, հեռագնա նպատակներ էր հետապնդում կոմունիստական շոշափուկների տարածել ամբողջ իսլամական երկրների վրա՝ մինչև Հնդկաստան, եմեն ու Մարոկկո, մուսուլմանությանը սրբազան պատերազմի հանել ընդդեմ Անտանտի, մասնավորապես՝ Անգլիայի: Ի դեպ, Անտանտի երկրների թվին էր դասվում նաև Հայաստանը: Ակնհայտ փաստեր կան այն մասին, որ 1919 թ. բուլղարի Կառլ Ռադեկը, Բեռլինում բանակցելով երիտթուրք պարագլուխներ Թալեթի, Էնվերի և մյուսների հետ, դրել էր խորհրդա-թուրքական համագործակցության հիմքը<sup>4</sup>: Այնուհետև Էնվեր փաշան օդանավով ժամանել է Մոսկվա և իր ու Մուստաֆա Քեմալի անունից բանակցել Վ. Ի. Լենինի հետ: 1919 թ. հունիսին Մոսկվայում կայացել է խորհրդաժողով՝ բուլղարների և մուսուլմանական ժողովուրդների տարբեր քաղաքական կազմակերպությունների միջև<sup>5</sup>: Սեպտեմբերին Սվազում գումարված քեմալականների կոնգրեսին ներկա են եղել Խ. Ռուսաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները: Այնտեղ որոշվել է համատեղ գործողություններ սկսել Հայաստանի դեմ: 1919 թ. աշնանը Թուրքիայի Սամսուն քաղաքում կնքվել էր խորհրդա-թուրքական բարեկամական դաշնագիր<sup>6</sup>, որն ուղղված էր նաև խորհուրդների արևելյան քաղաքականության խոչընդոտ ՀՀ դեմ:

ՀՀ հեռագրական գործակալության 1919 թ. հունիսի 21-ի թիվ 99 հաղորդագրության մեջ կարդում ենք. «Երիտասարդ թուրքերը համաձայնության են եկել մեծամասնականների հետ՝ նրանցից ստանալով դրամական և զինական աջակցություն՝ նախկին Տաճկաստանում շարժումներ առաջ բերելու և իբր թե խորհրդային իշխանություն հիմնելու համար<sup>7</sup>:

ՀՀ ռազմական նախարարության գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Մուրադյանը մի գաղտնի ամփոփագրում հայտնում էր. «Ստացված լուրերի համաձայն՝ թուրքերի և բուլղարների միջև կայացել է նոր համաձայնություն, որի համաձայն մինչև Արփաչայը (Ախուրյան գետը - Ա. Հ.) տրվում թուրքերին<sup>8</sup>, իսկ վերջիններս դրա դիմաց պարտավորվում են Ադրբեջանի հետ միասին ուժեր հատկացնել՝ կամավորների (Դե-

<sup>4</sup> Ի. Իրազեկ, Մոսկի անցյալից, Պեյրուք, 1956, էջ 57, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 548, ք. 28, գ. 427, մաս 2, ք. 249:

<sup>5</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, ք. 169:

<sup>6</sup> Ի. Իրազեկ, նշվ. աշխ., էջ 62, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, ք. 169:

<sup>7</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 43, ք. 68:

<sup>8</sup> Այս առնչությամբ կեղծ ու անիմո պետք է համարել խորհրդային պատմագրության մեջ տարածված և մինչև օրս էլ չարչրվող «եթե»-ների ու ենթադրությունների հիման վրա կառուցված այն վարկածը, որ իբր, եթե 1920 թ. գարնանը (մայիսյան ապստամբության ժամանակ) դաշնակները իշխանությունը կամավոր հանձնեին բուլղարներին, ապա Հայաստանը տարածքային մեծ կորուստներ չէր ունենա, առնվազն Կարսը, Այդահանը և Սուրմալուն կարող էին փրվել: Իսկ ինչ վերաբերում է Հիչերլինի առանձին հայանմանը ախտարարություններին, ապա դրանք պարզապես պետք է որակել որպես դիվանագիտական քարոզչություն:



նիկին - Ա. Հ.) դեմ կռվելու համար: Բոլշևիկները զենք են մատակարարում ինչպես Թուրքիային, այնպես էլ Ադրբեջանին<sup>9</sup>: Որ 1919 թ. աշնանից ՌԿ/Բ/Կ սկսել էր մեծ ուշադրություն դարձնել մահմեդական Արևելքի վրա, այնտեղ համաշխարհային հեղափոխության «հրդեհը» տարածելու համար, երևում է հետևյալ վավերագրից: 1919 թ. կեսերին, երբ վրաց մենշևիկյան կառավարությունը, վճռական հարձակման անցնելով բոլշևիկների դեմ, սկսեց նրանց զանգվածային ձերբակալություններն ու արտաքսումները, Թիֆլիսում ձերբակալված բոլշևիկների մոտ հայտնաբերված փաստաթղթերից պարզվել էր հետևյալը.

1) Վերջին մի քանի ամսում Հայաստան ուղարկված փողի քանակը կազմել է մի քանի միլիոն ռուբլի<sup>10</sup>: 2) Մոսկվայից ուղարկված մի փաստաթղթում, որի տակ կային ժողկոմխորհի քարտուղար Ստասովայի ստորագրությունը և ՌԿ/Բ/Կ ԿԿ-ի կնիքը, կարդում ենք հետևյալը. «Հարգելի ընկերներ, ստացանք Ձեր գրությունը: Սրա հետ ուղարկվում է Ձեզ դրամ և տպագրված նյութեր: ԿԿ-ի վերջին նիստում որոշվեց հատուկ ուշադրություն դարձնել մահմեդական Արևելքի վրա: Այնտեղի երկրները այնպիսի դրություն մեջ են գտնվում, որ դրանց համար Եվրոպական իմպերիալիզմի դեմ մղվելիք կռիվը կյանքի և մահվան հարց է: Ուստի՝ դրանց մեջ շարժում առաջացնելն ու դրանք օգտագործելը ճիշտ է: Այդ նպատակով հատուկ անձեր ենք ուղարկում Ձեր տրամադրության տակ գտնվելու համար: Որոշեցինք Բաքվի «Հումներ» կուսակցության կոմիտեն համարել մեր ներկայացուցիչը: ...Ադրբեջանը պետք է հայտարարվի խորհուրդների տեղական հանրապետություն: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի Հայաստանի վրա, որի միացումով կհետաճա գծի ուղղելը դեպի Թուրքիա: Դաժան կռիվ պետք է մղել դաշնակցականների դեմ...»<sup>11</sup>:

Տեղեկացնենք, որ դեռ 1920 թ. հունվարից ՀՅԴ Բյուրոն արդեն տեղյակ էր բոլշևիկ-քեմալականների գործակցությանը: Այս կապակցությամբ Ա. Ջամալյանը, Ռ. Տեր-Մինասյանը և Ս. Վրացյանը տեսակցել էին ՌԿ/Բ/Կ Կովկասյան բյուրոյի քարտուղար Հ. Նազարեթյանի հետ և հանգել այն համոզման, որ հանուն համաշխարհային հեղափոխության և թուրք-բոլշևիկյան գործակցության շահերին Հայաստանը և նրա անկախությունը կարող է զոհաբերվել<sup>12</sup>: Այդ նույն ժամանակներում ՀՅԴ Բյուրոն խորհրդա-քեմալական համագործակցության մասին տեղեկություն էր ստացել նաև Կ. Պոլսից<sup>13</sup>: Ս. Վրացյանը հայտնում էր, որ Մոսկվայում քաղաքական մթնոլորտը հայանպաստ չէր: Թուրք-ադրբեջանական պրոպագանդան ստեղծել էր հակահայ-

կական հասարակական կարծիք<sup>14</sup>: ՀՅԴ Բյուրոն 1920 թ. մարտյան իր շրջաբերականներից մեկում փաստում էր, որ «այլևս ամեն կասկածից դուրս է թուրքերի և բոլշևիկների միջև կնքված զինակցությունը»<sup>15</sup>:

Խորհրդա-թուրքական մերձեցումը և համագործակցության փաստը հաստատում են այլ կուսակցություններ: Այսպես՝ Դաշնակցությանը և Հայաստանի կառավարությանը առնվազն ոչ համակիր էսեռների կուսակցության պաշտոնաթերթը 1919 նոյեմբերյան իր համարներից մեկում տպագրել է հետևյալ տեղեկությունը. «Կոստանդնուպոլսից հաղորդում են, որ Սիրիայից Մուստաֆա Քեմալը հեռագրով դիմել է Լենինին և առաջարկել դաշն կապել թուրք ազգայնականների և խորհրդային կառավարության մեջ»<sup>16</sup>:

1920 թ. ամռանը, երբ արդեն ակնհայտ իրողություն էր խորհրդա-թուրքական գործակցությունը, ՀՍԴԲԿ («սպեցիֆիկների») ԿԿ-ի հուլիսին հատուկ կոչ է հղում աշխարհի բոլոր սոցիալիստական կուսակցություններին, Սոցիալիստական ինտերնացիոնալի Բյուրոյին՝ Խ. Ռուսաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի գործակցության հետևանքով Հայաստանի անկախ պետականությանը սպառնացող մահացու վտանգի մասին: «Խորհրդային Ռուսաստանը, - ասված է կոչում, - դաշնակցած Ադրբեջանի թաթարների և թուրքական Անատոլիայում գործող ազգայնականների կամ Մուստաֆա Քեմալ փաշայի հետ, բոլոր կողմերից շրջապատել են Հայաստանը թշնամական ուժերով և սպառնում են ոչնչացնել հայ ժողովրդի այնքան թանկ գնով ձեռք բերված ազատությունը և անկախությունը: Խորհրդային կառավարությունը սպառնում է իր համար ճանապարհ հարթել դեպի Արևելք՝ հայ դեմոկրատիայի դիակների վրայով»<sup>17</sup>: Այս փաստաթղթի կարևորությունը մեծանում է նրանով, որ թուրք-բոլշևիկյան գործարքի փաստը ժխտող կամ առնվազն կասկածի տակ առնող հեղինակները հայտարարում էին, թե իբր դա եղել է ընդամենը ՀՅԴ կուսակցության և Հայաստանի դաշնակցական կառավարության մտացածին հնարքը՝ իր տխրահռչակ տիրապետությունը երկարացնելու համար: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, թուրք-բոլշևիկյան համագործակցության մասին փաստում է ՀՅԴ-ին և Հայաստանի կառավարությանը ամենին էլ ոչ համակիր ՀՍԴԲԿ կուսակցությունը: Վերոգրյալը մեկ ավելորդ անգամ հաստատելու համար ավելացնենք, որ խորհրդա-թուրքական համագործակցության մասին են վկայում այլ ընդդիմադիր կուսակցություններ և այդ թվում՝ նաև Ս. Դ. հնչակյանները<sup>18</sup>:

1919 թ. վերջերին և 1920 թ. սկզբներին, երբ արդեն որոշակի հավաստի տեղեկատվական աղբյուրներից հայտնի դարձավ խորհրդային իշխանության և քեմալականների միջև մերձեցման փաստը, ՌԿ/Բ/Կ Հայաստանի կու-

<sup>9</sup> ՀՀ ՊԿ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, ք. 18:

<sup>10</sup> ՀՀ ՀԶԿ ՊԿ Ա, ֆ. 1022, ց. 4, գ. 288, ք. 1:

<sup>11</sup> ՀՀ ՀԶԿ ՊԿ Ա, ֆ. 1022, ց. 4, գ. 288, ք. 2, «Աշխատավոր», 1919, թիվ 262, էջ 4:

<sup>12</sup> Հ. Տասնապետյան, նշվ. աշխ., էջ 151:

<sup>13</sup> «Ազդակ-Շաբաթոյակ», 1973, թիվ 40, էջ 629:

<sup>14</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 454:

<sup>15</sup> ՀՀ ՀԶԿ ՊԿ Ա, ֆ. 4047, ց. 1, գ. 159, ք. 1:

<sup>16</sup> «Սոցիալիստ հեղափոխական», 23 նոյեմբերի 1919 թ.:

<sup>17</sup> ՀՀ ՀԶԿ ՊԿ Ա, ֆ. 1022, ց. 7, գ. 73, ք. 1:

<sup>18</sup> «Երիտասարդ Հայաստան», 22 հոկտեմբերի 1920 թ.:

միտեն (Արմենկոմը), կասկածի տակ առնելով այդ լուրը, այն համարեց «Դաշնակցության զգվելի սաղրանք»<sup>19</sup>։ Արմենկոմի անդամ Ստ. Ալավերդյանը թուրք-բոլշևիկյան մերձեցումը համարում էր «դաշնակցականների հնարած կեղծիք»<sup>20</sup>։ Մեկ այլ բոլշևիկ, հեղկոմի անդամ Ա. Տեր-Սահակյանը դա համարում էր դաշնակների տարածած պրոպոկանդա<sup>21</sup>։ Բայց ինչպես ցույց տվեցին հետագա պատմաքաղաքական դեպքերն ու իրադարձությունները, թուրք-բոլշևիկյան համագործակցության վերաբերյալ լուրերը ամփոփում էին, ինչպես որ պնդում էր ՌԿԿ/Կ Հայաստանի կոմիտեն և բոլշևիկ մյուս երևելի ներկայացուցիչները։ Այդ գործակցության իրողությունը արդեն հաստատվել է բազմաթիվ հիմնավոր փաստերով, այդ թվում նաև մեր կողմից հրապարակված խնդրին առնչվող փաստաթղթերի ժողովածուով<sup>22</sup>։

Եթե 1920 թ. առաջին կեսին հայ բոլշևիկները չէին ընդունում և աշխատում էին հերքել այն փաստը, որ բոլշևիկները զինակցել ու դաշնակցել է թուրքաթարական պանիսլամիզմի հետ Արևելքում միասնաբար գործելու համար, ապա 1920 թ. երկրորդ կեսից արդեն նրանք ոչ միայն չէին հերքում կամ ուրանում այդ փաստը, այլև հրճվում և Բաքվի «Կոմունիստի» միջոցով օրնիքում քարոզչություն էին անում ու ուժեր կազմակերպում Հայաստանի դեմ և «ջերմ փափագ հայտնում Հայաստանի վրայով ճանապարհի հարթել դեպի Անատոլիա և կամուրջ ձգել Ադրբեջանի և Տաճկաստանի միջև»<sup>23</sup>։ Իսկ Ադրբեջանի և Թուրքիայի միջև կապի գլխավոր խոչընդոտը համարվում էր Հայաստանը։ Դեռ 1919 թ. նոյեմբերին Բաքվում մշակվել էր այն պլանը, որով թուրքական զորքը պիտի անցներ Հայաստանի վրայով՝ Դենիկիների կամավորական բանակի թիկունքին հարվածելու համար։

Խորհրդային կառավարությունը՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, առաջինը ճանաչեց 1920 թ. ապրիլի վերջերին Անգորայում բացված Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (խորհրդարանի) կառավարությունը՝ Մ. Քեմալի գլխավորությամբ<sup>24</sup>։ Մոսկվայի և Անգորայի միջև տեղի ունեցան ողջույնի և դիվանագիտական ուղերձների փոխանակություններ։ 1920 թ. ապրիլի 26-ին Վ. Ի. Լենինին հղած նամակում Մ. Քեմալը խնդրում էր երկու կառավարությունների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատել և Թուրքիային օգնել նյութապես և ռազմամթերքով։ Այնուհետև Մ. Քեմալի նամակում ասվում էր, որ Թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում **պատերազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դեմ** և պարտավորվում է **սպիայել Ադրբեջանի Հանրապետությանը մպնելու խորհրդային պե-**

**տության շրջանակի մեջ»**<sup>25</sup>։ Հայտնի է, որ 1920 թ. գարնանը քեմալականները արդեն նախապատրաստվում էին հարձակվել Հայաստանի վրա, որը, սակայն, հետաձգվեց Ռուսաստանի արտ. գործ. նախարար Գ. Չիչերինի միջնորդությունից հետո<sup>26</sup>։ Իսկ ինչ վերաբերում է Մ. Քեմալի կողմից Ադրբեջանի խորհրդայնացման առաջարկությանը, ապա այն ընդունվեց մեծ գոհունակությամբ և չանցած երկու օր՝ առանց որևէ կրակոցի ու զոհի Ադրբեջանը խորհրդայնացվեց։

Նոր փոփոխված քաղաքական իրադրության պայմաններում Մոսկվա մեկնեց Լ. Շանթի գլխավորած ՀՀ պատվիրակությունը՝ Խ. Ռուսաստանի հետ քաղաքական հարաբերությունները կարգավորելու ու բարեկամության դաշնագիր կնքելու համար։ Հայաստանի իշխանությունները հույս էին տածում, թե Խ. Ռուսաստանը կճանաչի Հայաստանի անկախությունը։ 1920թ. գարնանից Ռուսաստանը, սկսելով հարաբերությունները Հայաստանի հետ՝ փորձում էր հանդես գալ միջնորդի դերում Հայաստանի և Թուրքիայի միջև։

Հայաստանի կողմից նման քայլը միայն կառավարության նախաձեռնությունը չէր, այլ հասարակայնության և օրվա հասունացած ներքին պահանջ։ 1920 թ. գարնանը հայ հասարակական-քաղաքական գրեթե բոլոր ուժերը, անկախ Խ. Ռուսաստանի հասարակական-քաղաքական վարչակարգի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, մեծ շահագրգռություն հանդես բերեցին, քաղաքացիական պատերազմում հաղթանակով դուրս եկած խորհրդային կառավարության հետ շուտափույթ բարեկամական կապեր հաստատելու ուղղությամբ։ Այս կապակցությամբ բերենք մի փաստաթուղթ։ Հայաստանի հինգ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների՝ 1920 թ. ապրիլի 5-ի Ալեքսանդրապոլի խորհրդակցությունը դիմել է Հայաստանի խորհրդարանին ու կառավարությանը՝ հետևյալ խնդրանքով. «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Խորհրդային Ռուսաստանը երկամյա քաղաքացիական պատերազմից հետո վերջնականապես հաղթեց ներքին հակահեղափոխությանը և այժմ կանգնած է Անդրկովկասի սահմանին, այդպիսի իրադարձությունը ուժեղ ազդեցություն է թողնում հանրապետության ներքին կյանքի վրա։ Հայ աշխատավորությունը չի կարող անտարբեր մնալ ու պետք է հաշվի նստի դեպի հարավ արշավող հյուսիսի դեմոկրատիայի մեծ ուժի հետ։ Քաղաքական կուսակցությունները, հենվելով հասարակական և քաղաքական կազմակերպությունների լայն աջակցության վրա, պետք է անհապաղ բարեկամական բանակցությունների մեջ մտնի խորհրդային կառավարության հետ՝ պայմա-

<sup>19</sup> ՀՀ ԼԵՎԺ ՊԿՊԱ, ֆ. 4033, ց. 1, գ. 440, ք. 4:  
<sup>20</sup> Նույն տեղում, ֆ. 4020, ց. 1, գ. 16, ք. 12:

<sup>21</sup> «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում», էջ 31  
<sup>22</sup> «Հայրություն», 1-10 հուլիսի 1993 թ. (թիվ 9):

<sup>23</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 138, ք. 75:  
<sup>24</sup> Հ. Գանգրունի, նշվ. աշխ., էջ 141:

<sup>25</sup> Մ. Վ. Արզումանյան, Արիավիրից վերածնունդ, Ե. 1973, էջ 299, Ե. Ղ. Սարգսյան, Դավադիր գործարք, Ե., 1995, էջ 138-139:

<sup>26</sup> «Документы внешней политики СССР», т. 2, с. 725 /приложения/, Է. Ա. Չոխրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Ե., 1979, էջ 40-41, Կ. Խ. Սարգսյան, Պատմություն և իրականություն, Ե., 1991, էջ 55, Ե. Ղ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 138-140:

նով, որ ապահովվի թե՛ Ռուսահայաստանի և թե՛ Թուրքահայաստանի քաղաքական և տնտեսական գոյությունը»<sup>27</sup>։ Սույն փաստաթղթի տակ ստորագրել էին ՀՍԴԲԿ («սպեցիֆիկների»), էսեռների, ՀՅ Դաշնակցության, Հայ ռամկավարների և Հայ ժողովրդական կուսակցությունների Ալեքսանդրապոլի կազմակերպությունները։ Ինքնին հասկանալի է, որ կառավարությունը չէր կարող անտես անել ընդհանուր մտայնություն դարձած հասարակական կարծիքի այդ պահանջը։

Պետք է ասել, որ մյուս կողմից հայ-ռուսական բանակցություններին բացասաբար վերաբերվեցին համաձայնության (Անտանտի) երկրներն ու առաջին հերթին Անգլիան։ Այդ օրերին անգլիական թերթերը հայտնում էին, որ իբր «Հայաստանը լքում է Դաշնակիցներին»<sup>28</sup>։

Հայ-ռուսական հարաբերությունների խնդրում գտնում ենք, որ անկախ այն բանից, թե Հայաստանը ուներ Արևմտյան կողմնորոշում թե ոչ, ճիշտ էր վարվում, երբ, բանակցելով Խ. Ռուսաստանի հետ, ջանում էր մորմալ, բարիդրացիական հարաբերություններ հաստատել վերջինիս հետ։ Մենք այն կարծիքին չենք, թե Հայաստանի կառավարությունը մինչ այդ որևէ ձգտում ու ցանկություն չի ունեցել բարեկամական հարաբերություններ հաստատել մահ Խորհրդային Ռուսաստանի հետ։ ՀՀ երևելի գործիչներից Ռուբենը խոստովանում է, որ մեր հարաբերությունները դեմիկինյան Ռուսաստանի հետ ավելի սերտ էին այն հիմնական պատճառով, որ աշխարհագրական առումով վերջինս Հայաստանին ավելի մոտ էր, քան Խ. Ռուսաստանը<sup>29</sup>։ Մյուս կողմից՝ Հայաստանը անհաղորդ ու թշնամի էր Թուրքիայի հանդեպ։ Այդ թշնամությունը նա կարող էր հակակշռել Ռուսաստանի հետ բարեկամությամբ։ Բացի այդ՝ Հայաստանը մշտապես գտնում էր Ռուսաստանի տնտեսական ու ռազմական օգնության կարիքը։ Սակայն արտաքին քաղաքական այս մտահայեցողությունների կողքին մենք հակված չենք անտեսել կամ թերազնահատել այն պարագան, որ, այնուամենայնիվ, մինչև 1920 թ. կեսերը Հայաստանի քաղաքական ղեկավարության կողմնորոշումը հիմնականում դեպի Արևմուտքն էր, դեպի սպասելիքաշատ ու խոստումնառատ Սան-Ռեմոն ու Սևրը։

Այս իմաստով կարծում ենք այնքան էլ անկեղծ չէ Ռուբենը, երբ գրում է, թե «Հայաստանի քաղաքական գլխատր ուղղությունը 1919 թ. ձգտումն էր դեպի Ռուսաստանը»<sup>30</sup>։ Հայաստանի քաղաքական շրջաններում միանգամից բեկում դեպի Ռուսաստան չէր կարող լինել այն պարզ պատճառով, որովհետև Հայաստանի հետախուզությանը ուղղակի և անուղղակի աղբյուրներից արդեն հայտնի էր դարձել խորհրդա-թուրքական մերձեցման փաստը, որը ինքնին զգուշության և անվստահության մտավախություն էր առաջ բերում։

<sup>27</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 576, ք. 246, «Բանվորի ձայն», Թիֆլիս, 25 ապրիլի 1920 թ.։

<sup>28</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 576, ք. 167։

<sup>29</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 256։

<sup>30</sup> Ռուբեն, նշվ. աշխ., էջ 255։

Խորհրդա-թուրքական մերձեցման իրողության պայմաններում Հայաստանի իշխանությունների վերաբերմունքը բոլշևիկների հանդեպ չէր կարող բարյացական լինել։ «Այն օրից, - հայտարարել է Ա. Ջամալյանը խորհրդարանի թիվ 67 նիստում, - երբ փաստ եղավ բոլշևիկների և միլիցիների (թուրք ազգայնականների-Ա. Հ.) դաշինքը այդ չալմայավոր սոցիալիստների հետ, այդ օրվանից ահա փոխվել է մեր վերաբերմունքը դեպի բոլշևիկները»<sup>31</sup>։

Խոսելով հայ-ռուսական հարաբերությունների մասին՝ պետք է գատորոշել այն հանգամանքը, որ մինչև 1920 թ. սկզբները Հայաստանի իշխանությունների վերաբերմունքը դեպի Խ. Ռուսաստանը եղել է բարյացական, համեմայն դեպս ոչ թշնամական։ 1919 թ. աշնանը Երևանում գումարված ՀՅԴ 9-րդ ընդհ. ժողովում հայ-ռուսական հարաբերությունների խնդրում ընդունված որոշումներում շեշտվում էր, որ պահպանվելու էին բարյացական, բարեկամական հարաբերությունները ռուս ժողովրդի ու Ռուսաստանի քաղաքական վերածնության հանդեպ<sup>32</sup>։ Պետք է նկատել, որ ՀՅԴ-ն որպես կառավարող կուսակցություն, Խորհրդային Ռուսաստանին դիմակայել է գերազանցապես գաղափարական հարցերում, իսկ Ռուսաստանի և ռուս ժողովրդի նկատմամբ նա ընդհանրապես ոչ մի թշնամանք չի դրսևորել։ ՀՅԴ-ն Հայաստանի կառավարությունը եղել են հակաբոլշևիկ, հակախորհրդային, բայց ոչ երբեք հակառուս։ Ավելին՝ շատ խնդիրներում նրանք չափից ավելի ռուսասեր էին, որի համար էլ Արևմուտքի դաշնակից տերությունները ու հատկապես Անգլիան այդ իմաստով Հայաստանին ու հայերին հաճախ չէին վստահում։ Այստեղից հետևում է, որ հայ-ռուսական բազմաշերտ հարաբերությունների կնճիռը բացահայտելիս՝ չի կարելի բոլշևիզմը մոյսացնել Ռուսաստանի և ռուս ժողովրդի հետ։

Հայ-ռուսական հարաբերությունների և Հայաստանի քաղաքական կողմնորոշման խնդիրը քննելիս՝ անհրաժեշտ է ցուցաբերել կոնկրետ պատմական մոտեցում։ Պետք է հաշվի առնել, որ քաղաքացիական պատերազմի շրջանում Ռուսաստանում կային մի շարք իշխանություններ՝ բոլշևիկյան, դեմիկինյան, կոլչակյան, վրանգելյան և այլն։ Համեմայն դեպս՝ մինչև 1920 թ. սկզբները պարզ չէր, թե դրանցից որ մեկը կհաղթանակի վերջնականորեն։ Եղածները Հայաստանը սերտ կապեր ուներ աշխարհագրորեն իրեն ավելի մոտ Դեմիկինյան կառավարության հետ։ Հայաստանը Խ. Ռուսաստանի հետ բարեկամական կապեր հաստատելու հնարավորություն չուներ, քանզի մինչև 1920 թ. սկզբները առնված էր ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի կրակե օղակի մեջ։ Ասենք, եթե Հայաստանը այդ ժամանակ խորհրդային ընդգծված կողմնորոշում ցուցաբերեր, տնտեսական և քաղաքական ինչ-որ շահ կորզելու նպատակով, միևնույն է, դրանից ոչ մի օգուտ չէր կարող ստանալ, որովհետև Խ. Ռուսաստանը ինքը կարիք ուներ օգնության ու ներքին հանգստության։ Բայց, երբ 1920 թ. սկզբներից քաղաքացիական պատե-

<sup>31</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 198, ց. 1, գ. 78, ք. 1։

<sup>32</sup> «Բաղվածներ Հ.Յ.Դ. 9-րդ ընդհանուր ժողովի որոշումներից», Ե., 1920 թ. էջ 6։

րազմում հաղթանակով դուրս եկող Խ. Ռուսաստանի հետ իրական կապեր ու հարաբերություններ հաստատելու հնարավորություններ ու նախադրյալներ ստեղծվեցին, այժմ էլ, համաշխարհային հեղափոխության կոմինտերնյան հեռագրա-գաղափարներով տարված, նա մերժեցավ քեմալականներին: Այս առնչությամբ անհիմն ու մտացածին պետք է համարել խորհրդահայ պատմագրության մեջ դեգերող այն դատողությունը, թե իբր դաշնակցական կառավարության անհաշտ, թշնամական, հակառուսական վերաբերմունքի պատճառով Խ. Ռուսաստանը երես դարձրեց Հայկական հարցի հայանպաստ լուծումից:

Ինչևէ, քաղաքական այսպիսի իրադրության պայմաններում 1920 թ. մայիսի սկզբին Շանթի գլխավորած ՀՀ պաշտոնական պատվիրակությունը մեկնեց Հյուսիսային Կովկաս, իսկ նույն ամսվա վերջին հասավ Մոսկվա: Սկզբում հաջող սկսված բանակցությունները հետագայում գործնական ոչ մի դրական արդյունք չտվեցին: Բանն այն է, որ 1920 թ. մայիսին Անգղոբայից Բաքվի վրայով դեպի Մոսկվա գործուղվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատվիրակությունը՝ արտ. գործ. նախարար Բեքիր Սամի բեյի և ժող. տնտեսության նախարար Յուսուֆ Քեմալ բեյի գլխավորությամբ: Թուրքիայի դիվանագիտական առաքելությունը նապատակ ուներ Խորհրդային Ռուսաստանի հետ պայմանագիր կնքելու և օգնություն ստանալու դրամով և ռազմասարքով: Հուլիս-օգոստոս ամիսներին տեղի ունեցած բանակցությունների արդյունքով՝ Թուրքիան ստացավ և՛ դրամ՝ ոսկու ձևով, և՛ ռազմական օգնություն՝ զենքով ու ռազմամթերքով: Բացի այդ, 1920 թ. օգոստոսի 24-ին կողմերի միջև կայացվեց բարեկամության նախնական պայմանագիր, որով Խ. Ռուսաստանը ճանաչում էր թուրքական Ազգային ուխտով գծված սահմանները: Միաժամանակ, կողմերը պարտավորվում էին չճանաչել Սևրի պայմանագիրը և պետք է համատեղ հակազդեին դրան, որը «ուժով պարտադրվել էր Թուրքիային»<sup>33</sup>:

Այս համայնապատկերի վրա, հայ-ռուսական բանակցությունները դրական արդյունք չէին կարող տալ, քանզի խորհրդային կառավարությունը Հայաստան կամ Թուրքիա ընտրության հարցում «հեղափոխական Թուրքիան» գերադասեց «միջազգային իմպերիալիզմի գործակալ Հայաստանից»: Հայ-ռուսական բանակցությունների անհաջողության գործում որոշ դեր խաղացին նաև մայիսյան ապստամբությունում պարտություն կրած հայ կոմունիստները, որոնք ամեն ջանք թափեցին, նույնիսկ պատվիրակություն ուղարկեցին Մոսկվա՝ խորհրդային կառավարության մոտ, որպեսզի Խ. Ռուսաստանի և Հայաստանի միջև համաձայնություն չկնքվի<sup>34</sup>:

Հուլիսի 1-ին Լ. Շանթը Մոսկվայից հեռագրում էր. «Առաջին տեսակցությունից պարզվեց, որ միակ դժվարությունը Ադրբեջանի սահմանն է, որով-

հետև Բաքվից Ադրբեջանի վարիչները և հայ բոլշևիկները ամեն կերպ աշխատում են խանգարել պայմանագրի կնքումը»<sup>35</sup>: «Ադրբեջանի կոմունիստներին,- գրում է Ս. Վրացյանը,- Բաքվում գտնվող հայ կոմունիստների (Միկոյան, Ավիս, Մռավյան և ուրիշներ) աջակցությամբ, հաջողվեց ազդել Մոսկվայի վրա, որ դաշնագրի ստորագրությունը Հայաստանի հետ չկայանա»<sup>36</sup>: Դաշնակցություն կուսակցությանը ընդդիմադիր ՀԺԿ պաշտոնաթերթ «Ժողովուրդ» Լ. Շանթի խաղաղարար առաքելության անհաջողության համար մեղադրում էր ռուսական կողմին<sup>37</sup>: Եվ այս ֆոնի վրա միանգամայն անհիմն են Շանթի պատվիրակության հասցեին արված մեղադրանքները՝ անգիջողականության, ձգձգման, կառուցողական մոտեցում չորսնորելու, բանակցությունները վիժեցնելու հարցում<sup>38</sup>: Հայ-ռուսական բանակցությունները, Մոսկվայում մտնելով փակուղի, ընդհատվեցին՝ Երևանում շարունակելու նպատակով: Մյուս կողմից՝ Արևմուտքում գտնվող ՀՀ մյուս պատվիրակությունը ձգտում էր Արևմտյան տերությունների օգնությամբ լուծել իր ազգային-տարածքային հիմնախնդիրները, որի իրական հնարավորությունը գնալով օրավոր պակասում էր: Արդեն 1920 թ. կեսերից Հայկական հարցի լուծման հավանականությունը Արևմուտքի կողմից գնալով պակասում էր այն պատճառով, որ տարածաշրջանում հայտնվել էին երկու հզոր ռեալ ուժեր՝ Խ. Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, որոնց քաղաքական շահերը այդ ժամանակ համընկնում էին, իսկ թույլ ու անօգնական Հայաստանը հայտնվել էր դրանց արանքում:

Արդեն 1920 թ. ամռանը, Արցախը խորհրդայնացնելուց և Կարմիր բանակի՝ Չանգեզուր ու Նախիջևան մուտք գործելուց հետո, անմիջական ցամաքային կապ հաստատվեց Ադրբեջանի, ասել է թե՛ Ռուսաստանի և Թուրքիայի միջև: «Հայրենիք» թերթը տեղեկացնում է, որ 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական ժամանակավոր անփրավահավասար համաձայնագրի ստորագրումից հետո «ավելի քան յոթ հազար բոլշևիկյան զինվորներ Դարաբաղ-Չանգեզուր-Նախիջևան գծով անցել են Թուրքիա և Պայագիտի մեջ միացել են Քյազիմ Գարապեթիի զորքերի հետ»<sup>39</sup>: Այս կապակցությամբ թուրքական 15-րդ բանակի հրամանատար Քյազիմ Գարաբեթիը օգոստոսի 16-ի պաշտոնական մի ամփոփագրում հայտնում էր. «11-րդ մուսուլմանական (բոլշևիկյան) բանակը (նկատի ունի 11-րդ Կարմիր բանակը- Ա. Հ.), անցնելով կովկասյան մեր սահմանը, եկավ մեզ օգնության: Մեր դաշնակիցները՝ բոլշևիկները, մշտապես մեզ մատակարարում են զենք և զինամթերք: Մենք կարող ենք վստահ լինել, որ մեզ համար դժվար օրերը արդեն մնացել են հետևում»<sup>40</sup>:

<sup>35</sup> «Ժողովուրդ», 13 հուլիսի 1920 թ.:

<sup>36</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 456:

<sup>37</sup> «Ժողովուրդ», 13 հոկտեմբերի 1920 թ.:

<sup>38</sup> Ա. Երզնկյան, Աշխատավորության դատարանին, Թիֆլիս, 1927, էջ 5-8, Մ. Վ. Արզումանյան, Արհավիրքից վերածմունք, Ե. 1973, էջ 316-317, Ա. Եսփոմյան, ճշվ. աշխ., էջ 75 և այլն:

<sup>39</sup> «Հայրենիք», Բոստոն, 25 օգոստոսի 1920 թ.:

<sup>40</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 427, մաս 2, ք. 351:

<sup>33</sup> Գ. Լազյան, Հայաստան և Հայ Դատը, Ե. 1991, էջ 254-256, Գ. Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923 թթ.), Ե., 1999, էջ 267:

<sup>34</sup> «Ժողովուրդ», 7 հուլիսի 1920 թ.:

Աղրբեջանի խորհրդայնացումից հետո Կարմիր բանակի և «Կարմիր» դարձած մուսավաթական ուժեր են կենտրոնացնում Հայաստանի սահմանների ուղղությամբ: 1920 թ. հունիսին գեմ. մայոր Քիշմիշեր Աղստաֆայից գաղտնի տեղեկացնում էր, որ Հայաստանի սահմաններին կուտակվում են խորհրդային զորքեր<sup>41</sup>: Այդ նույն բանը հաստատում էր վրացական գլխավոր շտաբը՝ հայտնելով, որ «խորհրդային զորքեր են կենտրոնացնում Աղստաֆայում՝ Ղազախի վրա հարձակվելու նպատակով<sup>42</sup>: Միաժամանակ, հայտնվում էր, որ «Բուլնիկների կողմից քարոզչության համար Հայաստան է ուղարկվել 32 մլն նիկոլանյան ռուբլի»<sup>43</sup>:

Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունից 1920 թ. հուլիսի 19-ի թիվ 325/с հաղորդագրությամբ Հայաստանի զորքերի հրամանատարության հետախուզական բաժանմունքի պետին հայտնվում էր, որ «գաղտնի հետախուզական ճանապարհով հայտնի է դարձել, որ հուլիս ամսվա կեսերին Կարմիր աղրբեջանցիների և ռուսների զգալի ուժեր Եփլախ կայարանից տեղափոխվել են Արցախի խճուղին»<sup>44</sup>: Միաժամանակ, վրացական զինվորական շտաբի տեղեկությունների համաձայն՝ Կարմիր զորքերը 4000 սվին, երեք զրահագնացքի ուղեկցությամբ, կենտրոնացնում են Թոռու գյուղի շրջանում՝ Հայաստանի վրա հարձակվելու նպատակով<sup>45</sup>: Դիլիջանից հայկական ջոկատների հրամանատար Սեպուհի բանակի հրամանատար գեմ. Սիլիկյանին հեռագրում էր, որ հուլիսին 22-ին թաթարները հարձակվել են Քյուլալի գյուղի բարձունքների վրա, սակայն մեր զորամասերից հակահարված ստանալով՝ հետ են շարժվել<sup>46</sup>:

Հուլիսի վերջին Հայաստանի զորքերի հրամանատարության շտաբի հետախուզական բաժանմունքի պետին ուղղված մեկ այլ գաղտնի ամփոփագրից իմանում ենք, որ Ղազախում են գտնվում հեղափոխական շտաբի անդամներ՝ Ավիս Նուրիջանյանը, Աղասի Վարդանյանը և ուրիշներ, և որ Ղազախի, Աղստաֆայի և Բաքվի միջև տեղաշարժեր են անում երեք զրահապատ գնացքներ և որ Ջանգեզուրի ուղղությամբ ուղարկվել է խորհրդային 28-րդ հետևակային դիվիզիան<sup>47</sup>:

Հայաստանի հեռագրական գործակալությունը Վրաստանի նույնատիպ գործակալությանը իրազեկում էր, որ բռնվել է բուլնիկյան մի գաղտնի գրություն: Այդ գրությունից պարզվում է, որ Աղրբեջանի բուլնիկները 300 մլն ռուբլի են խոստացել կաշառքի և ազիտացիայի համար, որպեսզի հայկական

տարածքները միացվեն Աղրբեջանին: Փաստաթղթում միաժամանակ ասվում էր, որ պետք է շտապել, որովհետև Անգլիան քնած չէ<sup>48</sup>:

1920 թ. մայիսյան ապստամբության պարտությունից հետո հայ բուլնիկների մի զգալի մասը, անցնելով ռուսական և թուրք-աղրբեջանական զինյալ ուժերի շարքերը, մարտնչում էին Արցախը և Ջանգեզուրը հայկական զինյալ ուժերից մաքրելու և «Կարմիր» Ռուսաստանը ու Աղրբեջանը Հայաստանի վրայով «Կարմիր» Թուրքիայի հետ կամրջելու համար:

Աղրբեջանի «Կարմրացումից» հետո և Ռուսաստանը, Հայաստանի վրայով իր դաշնակից Թուրքիայի հետ միանալուց բացի, որոշակի նկրտումներ ունեցնում էր Իրանի հանդեպ<sup>49</sup>: Կարմիր զորքերը մտել էին Իրան: Ռեշտում հիմնվել էր այսպես կոչված հեղափոխական կառավարություն Քուչուկ-Խանի գլխավորությամբ, որը պիտի շարժվեր դեպի Թեհրան: Իսկ բուլնիկ Բ. Մդիվանին նշանակվել էր ՌԽՖՍՀ-ի ներկայացուցիչը Քուչուկ-Խանի մոտ: 1920 թ. ամռանը իրադրությունը Իրանում այնքան էր բարդացել, որ այն քննության առնվեց Ազգերի լիգայում:

Արխիվային վավերագրերը վկայում են, որ և Ռուսաստանը Բաքու-Նախիջևան և Տուրապետ-Տրապիզոն, Նովոռոսիյսկ-Տրապիզոն, Օդեսա-Սամսոն և այլ ցամաքային ու ծովային գծերով Թուրքիային էր մատակարարում զենք, ռազմամթերք, դրամ, ցույց տալիս զինվորական խորհրդատվական և դիվանագիտական աջակցություն: Մասնավորապես դա երևում է Հայաստանի ռազմական նախարարության շտաբի հետախուզական բաժանմունքի գաղտնի ամփոփագրերից, արտ. գործ. նախարար Հ. Օհանջանյանի բողոք-նոտաներից և այլն<sup>50</sup>: Այսպես՝ հայկական բանակի հրամանատարության շտաբի հետախուզական բաժնի 1920 թ. ապրիլի 23-ի թիվ 15 գաղտնի ամփոփագրից իմանում են, որ հավանաբար Օդեսայից երկկայմ առագաստանավերով Սամսոն է բերվել մեծ քանակությամբ զենք և զինամթերք, որոնք փոխադրվել են Սվազ ու Մալաթիա<sup>51</sup>: Ոչ լրիվ տվյալներով 1920 թ. ամռանը քեմալականները օգնության կարգով և Ռուսաստանից ստացան 6000 հրացան, ավելի քան 5 մլն փամփուշտ, 17600 արկ, իսկ սեպտեմբերի 200,6 կգ ծուլածո ոսկի<sup>52</sup>: 1920 թ. հոկտեմբերի սկզբին Թուրքիան ՌԽՖՍՀ-ից ստացել էր 16 վազոն հրացան ու փամփուշտ, որը շոգեմակույկներով Տուրապետից տեղափոխվել էր Տրապիզոն ու բաժանվել հայկական ռազմաճակատ մեկնող չեքներին<sup>53</sup>: Այդ օգնությունը ավելի մեծ չափեր ընդունեց 1921-1922 թվականներին: Միակողմանի չլինելու համար նշենք, որ

<sup>41</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 184, ք. 73:

<sup>42</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, ք. 232:

<sup>43</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 184, ք. 76:

<sup>44</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, ք. 210:

<sup>45</sup> Նույն տեղում:

<sup>46</sup> Նույն տեղում, ք. 211:

<sup>47</sup> Նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 184, ք. 89:

<sup>48</sup> «Հայաստանի ծայն», 7 հոկտեմբերի 1920 թ.:

<sup>49</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, ք. 194:

<sup>50</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, ք. 176, գ. 486, ք. 18, գ. 581, ք. 333, գ. 607, ք. 112 և այլն:

<sup>51</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, ք. 176:

<sup>52</sup> Է. Ա. Չոհրաբյան, նշվ. աշխ., էջ 79:

<sup>53</sup> Ս. Վրացյան, Խորհրդայիններ, Պոսթրոն, 1924, էջ 86, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, ք. 333, գ. 602, ք. 31:

քեմալականներին օգնում էին ոչ միայն Խ. Ռուսաստանը, այլև՝ Ֆրանսիան և Իտալիան: 1920 թ. աշնանը իտալական և ֆրանսիական նավերը գնդ ու զինամթերք էին հասցնում թուրքական ազգայնական բանակին<sup>54</sup>: Քեմալականները, ստանալով համակողմանի օգնություն, հարվածի թիրախ դարձրին «իմպերիալիզմի գործակալ ու համաշխարհային հեղափոխության խոչընդոտ» Հայաստանը: Եվ այս տեսակետից պետք է մերժել տասնամյակներ շարունակ խորհրդային ու խորհրդահայ պատմագրության մեջ տեղ գտած այն կեղծ թեզը, թե քեմալական շարժումն ուներ հակաիմպերիալիստական, ազգային-ազատագրական բնույթ:

Քեմալական շարժման ինչ ազատագրական բնույթի մասին կարող է խոսք լինել, երբ այդ շարժման 1919 թ. էրզրումի և Սվազի համաժողովներում, ինչպես նաև 1920 թ. հունվարի 28-ին ընդունված «Ազգային ուխտ» ծրագրային փաստաթղթում նպատակ էր դրվում կրկին խեղդել Թուրքիայի ճնշված ժողովուրդների՝ հայերի, հույների, քրդերի, ասորիների և այլոց ազատագրական ձգտումները և դարձյալ զանգվածային կոտորածներ կազմակերպելու միջոցով, վերանվաճել ու ստրկացնել նրանց: Ընդամենի միլիակազմները՝ քեմալականները, ուխտել էին Արևմտյան Հայաստանից ոչ մի թիզ հող չզիջել հայերին, իսկ եթե հնարավոր լիներ՝ նաև զավթել Արևելահայաստանն ու բնաջնջել հայությանը: Նրանք այդ բանը (հայերի ու հույների նկատմամբ) մասնակիորեն ապացուցեցին գործով՝ 1920-1922 թթ. ընթացքում: Հարկ է հստակ ըմբռնել պատմական փորձով բազմիցս հաստատված այն ճշմարտությունը, որ **Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ դրսևորած քաղաքականության խնդրում ոչ մի էական փոփոխություն չի եղել սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի, երիտթուրքերի և քեմալականների միջև**: Պարզապես նրանք շարունակել և լրացրել են հայակործան քաղաքական կուրսը: Ճիշտ է նկատել պատմաբան Ջ. Կիրակոսյանը՝ գրելով. «Ազգային հարցում ազգայնականները (քեմալականները-Ա. Հ.) երիտթուրքերի ուղղակի ժառանգորդներն էին»<sup>55</sup>: Չարգացնելով պատմաբանի միտքը, ավելացնենք, որ մյուս հարցերում նույնպես քեմալականները, ըստ էության, շարունակել են իրենց նախորդների՝ երիտթուրքերի և Աբդուլ Համիդ 2-րդի քաղաքական կուրսը: Որ քեմալականները ոչնչով չէին տարբերվում իրենց նախորդներից, երևաց քիչ անց՝ 1920 թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ իրենց «կարմիր ու հեղափոխական» հորջորջած թուրք ասկյարները, գրավելով արևելահայ տարածքները, երիտթուրքերից ոչ պակաս հմտությամբ ամենուրեք սփռեցին մահ ու ավեր: Այդ կարճատև պատերազմի ժամանակ նրանք հասցրել էին կոտորել, ոչ լրիվ տվյալներով, 198 հազար մարդ<sup>56</sup>:

Նույն կերպ տարբերություն չպետք է տեսնել նաև Անգորայի քեմալական իշխանության և Կ. Պոլսի սուլթանական կառավարության միջև: Հավաստի տվյալներ կան (թուրք իսկ գործիչների վկայությամբ) այն մասին, որ քեմալական ազգայնական շարժումը Անատոլիայում առաջ է բերվել սուլթանական կառավարության հրահանգով՝ հայերին որևէ տարածքային զիջում թույլ չտալու նպատակով<sup>57</sup>: Մեկ այլ աղբյուրից հայտնվում է, որ զենեռալ Մ. Քեմալը, 1919 թ. կեսերին, Կ. Պոլսում նստած սուլթանի խորհրդով ու թելադրանքով է սկսել թուրք ազգայնականների շարժումը Անատոլիայում. «Խալիֆին Անտանտի երկրների գերությունից ազատելու և թուրք ազգն ու պետությունը վերահաս վտանգից՝ անդամահատությունից փրկելու»<sup>58</sup>:

Այսպիսով, թուրքական այս բոլոր տիպի հոսանքների ու կառավարությունների համար ընդհանրական ու հոգեհարազատ է եղել համենայն դեպս մեկ բան՝ հակահայկական ուղղվածությունը և պանթուրքիզմը:

Ռուլենիկ-քեմալական գործակցության ուժեղացման տեսակետից մեծ դեր խաղաց 3-րդ Կոմիսներնի կազմակերպած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը Բաքվում (1-8 սեպտեմբերի 1920 թ.): Տարված լինելով համաշխարհային հեղափոխության հովերով՝ կոմունիստների առաջնորդներ՝ Վ. Լենինը, Լ. Տրոցկին, Գ. Ջինովկը և մյուսները մեծ հույսեր էին կապում Արևելքի ժողովուրդներին համաշխարհային սին հեղափոխության մեջ ներքաշելու հետ: Նրանք հատկապես մեծ դեր ու նշանակություն էին տալիս քեմալական Թուրքիային: Եվ պատահական չէին նստած Հայոց Մեծ եղեռնի մի քանի կազմակերպիչները, այդ թվում՝ հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշան:

Թուրքիան իրեն հայտարարել էր իմպերիալիզմի դեմ պայքարող ուժ և փաստորեն դարձել Խ. Ռուսաստանի «բնական» դաշնակիցը: Ահա թե խորհրդա-թուրքական գործակցության գաղափարը ինչպես է ձևակերպել Թուրքիայի արտ. գործ. նախարար Ահմեդ Մուխթարը Գ. Չիչերինին հղած գրություններից մեկում. «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը իրեն համարում է խորհրդային Ռուսաստանի բնական դաշնակիցը այն չափով, որ չափով նրանք միասին պայքարում են ընդհանուր թշնամու՝ Արևմուտքի իմպերիալիստների դեմ»<sup>59</sup>: Խորհրդային կառավարությունը Հայաստան-Թուրքիա ընտրության հարցում «հեղափոխական Թուրքիային» զերադասեց «միջազգային իմպերիալիզմի գործակալ Հայաստանից»: Բաքվի համագումարում քննվեց պատերազմի հարցը «համաշխարհային հեղափոխության խոչընդոտ դաշնակցական» Հայաստանի դեմ և ազդարարվեց «կառնալույս» թուրքական հարձակման համար: Արդեն սեպտեմբերի 17-ին նույն Բաքվում կազմվեց Հայաստանի վրա հարձակման ու խորհրդայնացման

<sup>54</sup> Ջ. Ս. Կիրակոսյան, *Երիտթուրքերը պատմության դատարանի առջև*, հ. 2, Ե., 1983, էջ 281:

<sup>55</sup> Ջ. Ս. Կիրակոսյան, *նշվ. աշխ.*, էջ 250:

<sup>56</sup> Советская историческая энциклопедия, т. 1, М., 1961, с. 753.

<sup>57</sup> Մեվլան զադե Ռիֆաթ, *Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իբրիհատի հայտնիք ծրագրերը*, Պեյրուք, 1968, էջ 240:

<sup>58</sup> «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 26 մայիսի 1920 թ.:

<sup>59</sup> ՀՀ ԶԿԳ ՊԿԱ. Ժ. 1022, g. 4, 72, p. 24:

ծրագիրը, որում հիմնական դերը խաղալու էր Թուրքիան<sup>60</sup>։ Այլ խոսքով, խնդիր դրվեց Հայաստանի խոհրդայնացումը կատարել թուրքական մահաբեր ներխուժման սպառնալիքի միջոցով։ Ժամանակաշրջանի վավերագրերը աներկբա հավաստում են, որ «թուրքական ավանտյուրան կատարվել է բոլշևիկների գիտությամբ և աջակցությամբ»<sup>61</sup>։ Իր հերթին Թուրքիան պատրաստ էր գնքի ուժով վերացնել «հայկական սեպը»։ Այնպես որ Հայաստանի կառավարության և նրա բանակի ուժերից վեր էր դիմակայել թուրք-բոլշևիկյան գործակցության հետևանքով հյուսիսից և հարավից ահագնացող մահացու հարձակման վտանգը, որն էլ ի վերջո կործանարար եղավ Հայաստանի Հանրապետության համար։ Ահա թե ինչու հայ քաղաքական գրեթե բոլոր կուսակցությունները (քաղաքական բոլշևիկների) դատապարտեցին խորհրդաթուրքական հայադավ գործակցությունը։

Տալով խորհրդա-թուրքական համագործակցության բնութագիրը՝ միամտություն է կարծել, թե քեմալականները Ռուսաստանի անկեղծ բարեկամներն էին։ Այդ բարեկամությունը ժամանակավոր էր, կեղծ էր ու չինձու, որը ասպարեզ էր նետվել որոշակի քաղաքական-դիվանագիտական հաշիվներով, որից էլ մեծապես տուժեց հայ ժողովուրդը։

## 2. Կուսակցությունները թուրք-հայկական պատերազմի շրջանում

1920 թ. օգոստոս-սեպտեմբերին անխուսափելի դարձավ թուրք-հայկական զինաբախումը՝ պատերազմը։ Ինչպես արդեն ասվեց, քեմալականները Հայաստանի դեմ պատերազմ սկսեցին՝ ստանալով Խ. Ռուսաստանի համաձայնությունը։ Վերջինս նպատակ էր դրել թուրքական սպառնալիքով ընկճել Հայաստանի դիմադրական ոգին և հեշտությամբ խորհրդայնացնել այն։ Տեսակետ կա, որ եթե բոլշևիկները չուզեին, Քեմալը չէր հարձակվի Հայաստանի վրա<sup>62</sup>։

Ականավոր պատմաբան ու ռամկավար գործիչ Լեոյի խմբագրած «Մշակ» թերթում քարգմանաբար արտատպվել է արտասահմանցի մի թղթակցի նամակը Անկարայից՝ «Ինչպես քեմալիստները վճռեցին հարձակվել Հայաստանի վրա» վերտառությամբ։ Այս վերնագրով նյութը առաջին անգամ տպագրվել էր 1920 թ. հոկտեմբերի 19-ին Ստամբուլում լույս տեսնող ֆրանսերեն «Journal d'Orient» թերթում։ Դրանում մասնավորապես հայտնվում էր, որ սեպտեմբերի սկզբներին 3-րդ Կոմիտեների նախաձեռնությամբ Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների համագումարի 1891 պատգա-

մավորների թվում, (ի դեպ, 110-ը հայեր էին)<sup>63</sup>, բացի երիտթուրք շատ պարագլուխներից, գտնվել էր նաև ոմն գեներալ Ռեմզին։ Սրան հանձնարարված է եղել՝ Բաքվում հող նախապատրաստել Հայաստանի վրա Թուրքիայի հարձակման համար։ Այնուհետև տեղեկացվում է, որ անհրաժեշտ պատրաստութուններից հետո Անկարան Բաքվից ստացել է հետևյալ լակոնիկ հեռագիրը՝ «Ճանապարհը ազատ է»<sup>64</sup>։ Կրկին հիշեցնում ենք, որ օտար աղբյուրից թերված այս քաղվածքը արտատպել է Դաշնակցությանը և ՀՀ կառավարությանը խիստ ընդդիմադիր «Մշակը»։ Այնպես որ՝ խոսք չի կարող լինել արձանագրված փաստի կողմնակալ ու մտացածին լինելու մասին։ Բերենք մեկ ուրիշ փաստ. «Կարմիրները արևելքեն,- գրում էր Զ. Կարաբեքիրյան իր հուշերում,- մենք ալ արևմուտքեն, բոլորս միասին դեպի Հայաստան արշավելով, մինչև Կարսի դռները պիտի երթայինք»<sup>65</sup>։ Վերոգրյալ փաստերը համոզում են, որ Խ. Ռուսաստանը համաձայն է եղել թուրքական հարձակմանը։

Հար ու մման ճանապարհով Հայաստանը հայտնվեց համաշխարհային հեղափոխության Արևելյան խաչմերուկում։ Ամենևին էլ պատահական չպետք է համարել Վ. Ի. Լենինի՝ 1920 թ. վերջերին Հայեղկոմի անդամներ Ա. Մոսվյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին հայտնած այն միտքը, որ «Ձեր դժվարությունն այն է, որ համաշխարհային հեղափոխության ֆրոնտներից մեկը անցնում է Հայաստանի վրայով»<sup>66</sup>։ Այն, ինչ տասնամյակներ շարունակ փորձել են ժխտել ու չտեսնելու տալ խորհրդահայ պատմաբանները, դրան իր ժամանակին այդպես պարզ ու աներկիմաստ պատասխանել է համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ Վ. Ի. Լենինը։

1920 թ. սեպտեմբերի 23-ին (այլ տվյալներով՝ 28-ին), առանց պատերազմ հայտարարելու, թուրքական բանակը դիմեց հարձակման<sup>67</sup>։ Պատերազմը սկսվելու կապակցությամբ ՀՅԴ Բյուրոն, որը նույն ինքը Հայաստանի կառավարությունն էր, սեպտեմբերի 28-ին հրապարակեց կոչ՝ ուղղված Հայաստանի քաղաքացիներին։ Կոչի գլխավոր կարգախոսն էր. «Ամեն ինչ ֆրոնտի համար։ Ամեն ճիգ հաղթելու համար»<sup>68</sup>։ Հաջորդ օրը ՀՅԴ Բյուրոն հայտարարեց կուսակցության շարքերի մոբիլիզացիա. «Ամեն ընկեր պարտական է իրեն դնել կուսակցության տրամադրության տակ և անմիջապես կատարել իրեն տրված հրահանգը»<sup>69</sup>։ Նույն օրը Բյուրոն կուսակցության մարմիններին և անդամներին իջեցրեց յոթ կետից բաղկացած պահանջների կատարման հրահանգ. այն է՝ համախմբել կուսակցության ողջ ուժերը և դնել

<sup>63</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ. Ժ. 1022, ց. 2, գ. 147, ք. 2:

<sup>64</sup> «Մշակ», 5 նոյեմբերի 1920 թ.:

<sup>65</sup> «Չարքունք», 6 օգոստոսի 1966 թ., «Զ. Կարաբեքիրյանի հուշերը»:

<sup>66</sup> Ա. Մոսվյան, Հողվածներ և ճառեր, Երևան, 1961, էջ 222:

<sup>67</sup> Պատերազմը սկսվելու ստույգ օրը ճշտել ու հիմնավորել է պրոֆ. Էդ. Չոհրաբյանը. /տես՝ «Երեկոյան Երևան», 23 հոկտեմբերի 1990 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 165-166:

<sup>68</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ. 4047, ց. 1, գ. 180, ք. 1:

<sup>69</sup> Նույն տեղում, ք. 2:

<sup>60</sup> «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000, էջ 281-286:

<sup>61</sup> ՀՀ ՊԿԱ, Ժ. 200, ց. 2, գ. 107, ք. 9:

<sup>62</sup> Ս. Բարսեղյան, Ինչպես կը գրեն մեր նորագույն պատմությունը, Պ. Այրես, 1948, էջ 52:



նրա պատասխանատու մարմինների տրամադրության տակ, մտնել բանակի շարքերը, կազմակերպել բիկունքի պաշտպանությունը, տանել բացատրական աշխատանք և այլն<sup>70</sup>։

Սկսված պատերազմը մի նոր, լրացուցիչ արդարացնող փաստարկ էր խորհրդարանի արձակուրդը շարունակելու համար։ Իհարկե, խորհրդարանի նախագահությունը կամ կառավարությունը լիազորություն ունեին, արտակարգ հանգամանքների դեպքում, հրավիրել արտահերթ նիստ։ Եվ այս պատերազմը իրոք որ համարվում էր արտակարգ կարևորության հանգամանք։ Սակայն հաշվի առնելով, որ պատերազմը հայտարարել էր հակառակորդը, իսկ Հայաստանը ինքնըստինքյան պաշտպանվող կողմն էր, ուստի նպատակահարմար չգտնվեց հրավիրել խորհրդարանի արտահերթ նիստ։ Ավելի կարևոր համարվեց պատգամավորներին, շատ նախարարների հետ միասին, գործուղել ճակատամերձ շրջանները, ինքնապաշտպանության թեժ կետեր՝ զինված ուժերը կազմակերպելու, ժողովրդին համախմբելու, նրա տրամադրությունը բարձրացնելու, ռազմական ու նյութատեխնիկական միջոցների հայթայթման, փոխադրման ու մատակարարման գործը ղեկավարելու<sup>71</sup>։

Հոկտեմբերի 30-ին Ալեքսանդրապոլ մեկնեցին պատգամավորներ՝ Հ. Բաջազունին, Լ. Շանթը, Ս. Տիգրանյանը, Հ. Բուդաղյանը, Վ. Նավասարդյանը, Ա. Հովհաննիսյանը Հ. Տեր-Հակոբյանը և ուրիշներ<sup>72</sup>։ Մեծ լիազորություններով Կարս էին մեկնել նախարարներ՝ Ս. Վրացյանը և Ա. Բաբայանը, Ալեքսանդրապոլ՝ Ա. Ջամալյանը և Գ. Ղազարյանը, Սուրմալու՝ Ս. Արարատյանը, Իջևան՝ Ա. Գյուլխանդանյանը, Նոր Բայազետ՝ Ս. Մելիք-Յուլյանը, Աշտարակ՝ Հ. Տերտերյանը և ուրիշներ<sup>73</sup>։ Ուշագրավ է, որ ռազմաճակատ մեկնելու պատրաստակամություն հայտնեց Ամերիկայից նոր վերադարձած նախկին վարչապետ Հ. Բաջազունին, որի երկու որդիները՝ Աշոտը և Արամը, տարբեր ժամանակներում (1918 թ.՝ Ղարաբեյիսայում և 1920 թ.՝ Ջանգիբասարում) արդեն զոհվել էին համուն հայրենիքի։ Նա հասավ ռազմաճակատի առաջին գիծ և ցանկություն հայտնեց կռվել որպես կամավոր զինվոր։ Սակայն հրամանատարությունը այնտեղից նրան հետ ուղարկեց<sup>74</sup>։

Պատերազմի սկսվելուն պես՝ հայ հասարակական-քաղաքական բոլոր ուժերը (բացառությամբ բոլշևիկների) մեկ մարդու պես հանդես եկան կոչելով՝ հայրենիքը, պետականությունն ու անկախությունը պաշտպանելու, անարգ թշնամուն հակահարված տալու և երկիրն ազատագրելու վճռականությամբ։ Բոլոր կուսակցությունները համախմբվեցին կառավարության շուրջը։ Հոկտեմբերի 1-ին Ն. Գ. նախարար Ս. Արարատյանի մոտ հրավիրվեց խորհր-

դակցություն, որին մասնակցում էին հանրապետությունում արտոնված կուսակցությունների ղեկավարներ, ինչպես նաև լրատվական միջոցների ներկայացուցիչներ։ Խորհրդակցության մասնակիցները միական պատրաստակամություն հայտնեցին վտանգի պահին սատար կանգնել հայրենիքին ու կառավարությանը<sup>75</sup>։ Այդ նպատակով էլ ստեղծվեց Միջկուսակցական խորհուրդ, որի նախագահ ընտրվեց պատգամավոր Արամ Սաֆրաստյանը։ Հոկտեմբերի 5-ին Ն. Գ. նախարարի մոտ տեղի ունեցավ կուսակցությունների և մամուլի ներկայացուցիչների նոր խորհրդակցություն։ Գալառներում նույնպես ստեղծվեցին միջկուսակցական տեղական խորհուրդներ՝ գավառային մասնաճյուղեր։ Միջկուսակցական խորհրդում ընդգրկվել էին՝ ՀՅԴ, ՀԺԿ, Հայ ռամկավար, ՀՍԴԲԿ, Ս. Դ. Հնչակյան և Սոցիալիստ-հեղափոխականների (Էսեռների) կուսակցությունները։ Խորհրդի ակտիվ անդամներից էին՝ Հ. Տեր-Հակոբյանը (ՀՅԴ), Կ. Գյուլմազարյանը (ՀԺԿ), Լազոն (Ս. Դ. հնչակ), բժիշկ Գ. Տեր-Հակոբյանը (Գրո) (Էսեռ) և ուրիշներ<sup>76</sup>։

Միջկուսակցական խորհրդի և նրա մասնաճյուղերի առջև դրված էին հետևյալ խնդիրները՝ քարոզչական և այլ միջոցներով բարձրացնել ժողովրդի բարոյական ոգին, քաջալերել կամավորական շարժումը, օգնություն ցույց տալ ռազմաճակատին ու բանակին, օժանդակել կառավարությանը և այլն<sup>77</sup>։ Խորհրդի նախաձեռնությամբ պարբերաբար գումարվում էին ժողովներ, միտինգներ, հանրահավաքներ, կայացվում բանաձևեր, պայքարի կոչում ժողովրդին։

Որ անարգ թշնամու դեմ պայքարի խնդրում հայ քաղաքական բոլոր կուսակցությունները միական էին, երևում է հոկտեմբերի 4-ին վեց կուսակցությունների ստորագրությամբ հայ ժողովրդին ուղղված հետևյալ կոչից. «Արտաքին թշնամին թող իմանա հայ ժողովուրդ, որ անկախության և հայրենիքի պաշտպանության խնդրում տարաձայնություն չկա հայ քաղաքական կուսակցությունների միջև։ Մենք՝ հայ քաղաքական մտքի տարբեր հոսանքներս, այսօր վստահությամբ ենք վերաբերվում մեր կառավարության այն բոլոր ջանքերին, որոնք նպատակ ունեն հաղթել ու դուրս հանել թշնամուն մեր սահմաններից»<sup>78</sup>։

Պատերազմի շրջանում գործուն քարոզչություն էին տանում «Հառաջ», «Ժողովուրդ», «Հայաստանի ծայն», «Բանվորի ծայն» և այլ կուսակցական թերթեր։ Կուսակցական թերթերի ամենօրյա մեծագիր կարգախոսն էր «**Հայրենիքը վրանգի մեջ է**»։ Թերթերի համարներում տպագրվում էին պաշտոնական հաղորդագրություններ, իրենց կուսակցական կենտրոնական մար-

<sup>70</sup> Նույն տեղում, ք. 3։

<sup>71</sup> «Դրոշակ», 1930, թիվ 10, էջ 238։

<sup>72</sup> ԳԱԹ, Հ. Բաջազունու ֆոնդ., գ. 150, ք. 1, գ. 164, ք. 2, 3. Իրազեկ, Մոսկվա անցյալից, Պետրոս, 1956, էջ 71-72։

<sup>73</sup> Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 477 «Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի վերջին օրերը, Երևան, 1993, էջ 36։

<sup>74</sup> Հ. Տեր-Հակոբյան, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 76։

<sup>75</sup> Հ. Տեր-Հակոբյան, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 53։

<sup>76</sup> «Ժողովուրդ», 10 հոկտեմբերի 1920 թ.։

<sup>77</sup> Հ. Տեր-Հակոբյան, նշվ. աշխ., էջ 62։

<sup>78</sup> «Դիքերում», 17 հոկտեմբերի 1920 թ. «Հայաստանի ծայն», 8 հոկտեմբերի 1920 թ., ՀՀ ԼԶԿՓ ՊԿԱ, Ժ. 4047, ց. 1, գ. 180, ք. 1։



մինների առանձին կոչերը՝ ուղղված հայ ժողովրդին՝ գորակցելու համար բանակին ու կառավարությանը անարգ բշտանում հակահարված տալու գործում:

Գրեթե բոլոր քաղ. կուսակցությունները հանդես եկան հայրենիքի պաշտպանության հայրենասիրական կոչերով: Հոկտեմբերի 2-ին կոչով հանդես եկավ ՀԺԿ Հայաստանի ԿԿ-ը, որում մասնավորապես ընդգծվում էր. «Ամեն ինչ պետք է զոհաբերել հանուն հաղթանակի, հանուն մեր ժողովրդի փրկության և Միացյալ ու Անկախ Հայաստանի»<sup>79</sup>:

Նույն օրը՝ հոկտեմբերի 2-ին, հրապարակված էսէռների կուսակցության Հայաստանի կոմիտեի կոչի գլխավոր իմաստն այն էր, որ չնայած Հայաստանի կառավարության հետ նախկինում ունեցած տարածայնություններին, այժմ երբ վտանգը սպառնում է հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը, «մենք պետք է մոռանանք ամեն ինչ, պետք է բովանդագուրկ դարձնենք մեր միտքն ու հոգին և նվիրվենք միայն և միայն մի գործի՝ ճակատի պաշտպանությանը»<sup>80</sup>: «Հայ ժողովուրդն այժմ, - գրում էր մեկ այլ ընդդիմադիր կուսակցության՝ հայ մենշևիկների պաշտոնաթերթն այդ օրերին, - միաբան կերպով պիտի լարե իր բոլոր ուժերը և պաշտպանե իր անկախությունը և ազատությունը»<sup>81</sup>: Առանձին կոչով հանդես եկավ ՀՍԴԲԿ ԿԿ-ը՝ ուղղված հայ ժողովրդին: Նրանում պատրաստակամություն էր արտահայտվում աջակցել կառավարությանը, ըստ կարելիության օգնել ռազմաճակատում մարտնչող մեր զորամասերին և արժանի հակահարված տալ անարգ ոսոխին»<sup>82</sup>:

Ս. Դ. Հնչակյան կուսակցության Վրաստանի կենտրոնական (շրջանային) մասնաճյուղի վարչությունը, իր գումարած հոկտեմբերի 17-ի և 20-ի նիստերում լսելով Հայաստանին սպառնացող վտանգի մասին, որոշեց՝ «Կոչ անելով հորդորել Վրաստանի Ս. Դ. Հնչակյան մարմիններին և բովանդակ Հայաստանի ղեմկրատիային՝ ռազմաճակատ խոյացնել բոլոր ռազմունակ ընկերներին»<sup>83</sup>:

Հոկտեմբերի 26-ի երեկոյան խորհրդարանի դահլիճում Միջկուսակցական խորհրդի նախաձեռնությամբ տեղի ունեցավ միտինգ: Այդ նիստ-միտինգում կառավարության ներկայացուցիչ Ն. Գ. նախարարի օգնական Վ. Զրմոյանի՝ ռազմաճակատում տիրող կացության մասին զեկուցումից հետո հանդես եկան քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները՝ ՀԺԿ անունից Կ. Գյուլնազարյանը, ՀՍԴԲԿ («սպեցիֆիկներին») կողմից՝ Բ. Իշխանյանը, ինչպես նաև սոցիալիստ-հեղափոխականների, Ս. Դ. Հնչակյան և Հայ ռամկավարների ներկայացուցիչները: Միտինգում միաձայն ընդունվեց բանաձև՝ ամեն գնով գորավիզ լինել ռազմաճակատում մարտնչող մեր զորամա-

սերին»<sup>84</sup>: Երկու օր անց՝ հոկտեմբերի 28-ին, երբ անմիջական սպառնալիք է առաջացել Կարսի և ապա Ալեքսանդրապոլի գրավման համար, հայ քաղաքական կուսակցությունների Միջկուսակցական խորհուրդը համատեղ նոր կոչ հրապարակեց, որով հայտարարում էր «ընդհանուր գորահավաք՝ զենք կրելու ընդունակ բոլոր քաղաքացիներին»<sup>85</sup>: Նյութական և բարոյաքաղաքական աջակցություն էին ստացվում նաև դրսաշխարհի հայ հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողմից:

Կ. Պոլսում «Վերջին լուր» և «Ճակատամարտ» թերթերի նախաձեռնությամբ հավաքվեց 20 հազ. ոսկի: Հանգանակություններ էին կատարվում Բուլղարիայի, Ռումինիայի, Եգիպտոսի, Իգմիրի, Ամերիկայի և մյուս հայկական գաղթօջախներում: Գաղթաշխարհից գալիս էին նաև մեծ թվով կամավորներ»<sup>86</sup>: Բայց այս ամենը, ցավոք, չփրկեց Հայաստանը վերահաս աղետից:

Այսպիսով, պատերազմի շրջանում կուսակցությունների, Միջկուսակցական խորհրդի և այլ հասարակական կազմակերպությունների գործունեությունից պարզ է դառնում, որ բացի բոլշևիկներից, հայ հասարակական-քաղաքական մյուս բոլոր ուժերը միակամ են եղել հայրենիքի անկախության ու անվտանգության պաշտպանության խնդրում:

\*\*\*

Այժմ էլ մի քանի խոսք բոլշևիկների բռնած դիրքի ու ցուցաբերած քաղաքականության մասին՝ թուրք-հայկական պատերազմի ժամանակ:

Պետք է ասել, որ Հայաստանի կոմունիստները ոչ միայն չէին աջակցում Հայաստանի կառավարությանը, այլև առանձին դեպքերում իրենց քայքայիչ ու վնասակար գործողություններով փաստորեն նպաստում էին թուրքերի հաղթանակին, Հայաստանի պարտությանը և նրա շուտափույթ խորհրդայնացմանը:

1920 թ. հունիսին նոր ձևավորված Հայաստանի Կոմունիստական կուսակցության ղեկավար մարմինը՝ Արտասահմանյան Բյուրոն, իսկ ապա ԿԿ-ը գտնվում էին Հայաստանի սահմաններից դուրս՝ հիմնականում Բաքվում, և այստեղից էլ ղեկավար ցուցումներ էին տալիս ընդհատակում գործող կուսակցական կազմակերպություններին ու անհատ կոմունիստներին:

Թուրք-հայկական պատերազմը դեռ չէր սկսել: 1920 թ. սեպտեմբերի 20-ին, ՀԿԿ ԿԿ-ը Բաքվից «հույժ գաղտնի» մի հրահանգ է իջեցնում (թիվ 218) կուսակցության բոլոր կազմակերպություններին, թիկունքի և ռազմական գոտիների բոլշևիկներին. «Ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի, հիմնական խնդիր դարձնելով՝

1. Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի:

<sup>79</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ֆ. 4043, ց. 7, գ. 20, ք. 1, Հ. Տեր-Հակոբյան, նշվ. աշխ., էջ 55:  
<sup>80</sup> ՀՀ նույն տեղում, գ. 56, ք. 1, Հ. Տեր-Հակոբյան, նշվ. աշխ., էջ 56:

<sup>81</sup> «Բանվորի ձայն», 10 հոկտեմբերի 1920 թ.:  
<sup>82</sup> «Հառաջ», 3 հոկտեմբերի 1920 թ.:

<sup>83</sup> «Մշակ», 29 հոկտեմբերի 1920 թ.:

<sup>84</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 198, ց. 1, գ. 74, ք. 1-3, նաև «Հառաջ», 28 հոկտեմբերի 1920:

<sup>85</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ֆ. 4045, ց. 1, գ. 241, ք. 2:

<sup>86</sup> Հ. Տեր-Հակոբյան, նշվ. աշխ., էջ 71-76:

2. Քննարկական թուրքիան խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային-ազատագրության համար՝ ընդդեմ իմպերիալիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի)։

3. Հանրապետական Հայաստանի հաղթանակը թուրքիայի նկատմամբ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգվի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա նաև Արևելքի խորհրդայնացումը։

4. Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը։ Այս նպատակի համար պետք է՝

1. Կազմալուծել հայկական կոմկոլ բանակը բոլոր միջոցներով, այն է՝

ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել գորահավարին,

բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որ նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը՝ վերադառնան թիկունք,

գ) չենթարկվել սպաների հրահանգներին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց։

2. Այս ամենի հետ ամենաեականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասկյարը հեղափոխական ասկյար է...»<sup>87</sup>։ Այս փաստաթղթի տակ նշված են ՀԿԿ ԿԿ-ի անդամներ՝ Ս. Կասյանի, Ա. Մռավյանի, Ա. Նուրիջանյանի, Շ. Ամիրխանյանի, Ի. Դովլաթյանի, Ա. Հովհաննիսյանի անունները, ինչպես նաև վերջում ծանոթագրություն այն մասին, որ «գրությունը կարդալ սահմանափակ ժողովներում և կարդալուց հետո անմիջապես այրել»<sup>88</sup>։

Ահա սա ծրագրային այն ուղեցույցն էր, որով պետք է առաջնորդվեին Հայաստանի բոլշևիկները արդեն անխուսափելի համարվող թուրք-հայկական պատերազմի ժամանակ։ Հրահանգի բովանդակությանը ծանոթանալիս՝ գալիս են այն հետևության, որ Հայաստանի Կոմկոլսի ղեկավարությունը հավանաբար Մոսկվայի ու Բաքվի ղեկավարների ցանկությամբ ու ցուցումով գրավել էր բացահայտ հակապետական ու պարտավորական դիրքորոշում՝ համուն քննարկական թուրքերի հաղթանակի և Հայաստանի խորհրդայնացման։ Այստեղ հետաքրքրական է նաև այն, որ արդեն սեպտեմբերի 20-ին Հայկոմկոլսի ղեկավարությունը գիտեր թուրքերի հարձակման մասին։

Հիշյալ փաստաթուղթը իր բովանդակությամբ այնքան արատավոր էր ու հակազգային, որ ԽՍՀՄ պատմության հարցերի որոշ մասնագետ հետազոտողներ կասկածանք են հայտնել դրա վավերականության մասին, որ դա կեղծ փաստաթուղթ է՝ կազմված հավանաբար դաշնակցականների կողմից՝

հայ բոլշևիկներին վարկաբեկելու համար<sup>89</sup>։ Նման առարկության համար հիմնական կռվան է բերվում այն բյուր փաստարկը, որ իբր սեպտեմբերի 20-ին ընդունված այդ «հրահանգը», չէր կարող Հայկոմկոլսի Կենտկոմինը լինել, որովհետև ՀԿԿ ԿԿ-ը իբրև հաստատվել ու սկսել է գործել հոկտեմբերի 1-ից, իսկ մինչ այդ բոլոր հրահանգները տվել է ՀԿԿ Արտասահմանյան բյուրոն<sup>90</sup>։

Վերոհիշյալ առարկության հիմնագուրկ լինելը ցույց տալու համար դիմենք փաստերի։ 1920 թ. օգոստոսի վերջերին՝ 29-ից ոչ ուշ՝ Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի նախօրյակին, Գ. Ջիմովևի, Կ. Ռադեկի, Բ. Կուրի, Ս. Կիրովի և մյուսների մասնակցությամբ Բաքվում գումարված ՌԿ/բ/Կ Կավբյուրոյի նիստում որպես օրակարգային առաջին հարց լսվել ու հաստատվել են Հայաստանի Կոմկոլսի ԿԿ-ի և Արտասահմանյան բյուրոյի կազմերը։ ՀԿԿ ԿԿ-ի անդամներ են հաստատվել Դովլաթովը, Ավիսը, Կոստանյանը, Տեր-Գաբրիելյանը, Աղասին։ ԿԿ-ի վեցերորդ անդամը լինելու էր Հայաստանում աշխատող ընկերներից մեկը։ Իսկ անդամության թեկնածուներ՝ Ամիրխանովը և Շահգեղյանը։ Կավբյուրոյի այդ նույն նիստում Արտասահմանյան բյուրոյի անդամներ են հաստատվել Դովլաթովը, Ավիսը և Կոստանյանը<sup>91</sup>։ Սույն փաստաթուղթը հավաստում է, որ օգոստոս ամսի վերջերից հաստատվել, ուստի և հավասարապես գործել են թե՛ Հայկոմկոլսի Կենտկոմը և թե՛ Արտասահմանյան բյուրոն։ Ի դեպ, վերոհիշյալ փաստաթուղթը ձեռագիր բնօրինակ է և չի կարող որևէ կասկածի տեղիք տալ։

Որ առնվազն 1920թ. օգոստոսի վերջից գործել է Հայկոմկոլսի կենտկոմ, վկայում է կոմունիստ Ա. Մռավյանը։ Նա իր կենսագրականում նշում է, որ մինչև 1920թ. օգոստոսի վերջը աշխատել է Թիֆլիսում որպես Հայաստանի ԿԿ-ի քարտուղար, իսկ ամսի վերջին ինքը արքայազնի է մեքելիկյան կառավարության կողմից<sup>92</sup>։ Բացի այդ, «Հայաստանի կոմկոլսի պատմության ուրվագծերում» նշված է, որ 1920թ. սեպտեմբերի 10-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն հաստատեց ՀԿ/բ/Կ Կենտկոմի կազմը, որի մեջ մտան Ի. Դովլաթյանը, Ա. Նուրիջանյանը, Հ.Կոստանյանը, Ա.Խանջյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, թեկնածուներ հաստատվեցին Շ.Ամիրխանյանը և Վ.Շահգեղյանը<sup>93</sup>։ Ինչ վերաբերում է «հակառակների 1-ի» ամսաթվին, ապա այդ օրը ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոն հաստատել է արդեն սեպտեմբերի 10-ին Կովկասյան բյուրոյի կողմից հաստատված ՀԿ(բ)Կ Կենտկոմի կազմը<sup>94</sup>։

<sup>89</sup> Голос Армении, 9 февраля 1991г.

<sup>90</sup> Նույն տեղում։

<sup>91</sup> ԱԼԻ ՊԿԱ, Ժ. 64, ց. 1, գ., 1, ք. 14, «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 2000 էջ 261։

<sup>92</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ք. 4010, ց.1,գ.19,ք.11։

<sup>93</sup> «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Ե., 1967, էջ 299։

<sup>94</sup> Նույն տեղում։

<sup>87</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 3, գ. 275, ք. 1։

<sup>88</sup> Նույն տեղում։

Դիմենք մեկ այլ աղբյուրի՝ ՀԿԿ ԿԿ-ի այն ժամանակ անդամության քեկնածու Շավարշ Ամիրխանյանի հուշերին: Նա ևս հաստատում է, որ 1920 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Բաքվում (Ադրբեջանում) գործել են և՛ Հայաստանի Կոմկուսի ԿԿ՝ ընդլայնված կազմով, և՛ Արտասահմանյան բյուրո՝ ավելի նեղ կազմով: Շ. Ամիրխանյանը պատմում է, որ 1920 թ. օգոստոսին ՌԿԲ/Կ ԿԿ-ր հաստատեց Հայկոմկուսի ԿԿ-ի կազմը (Ի. Դովլաթյան, Ավիս, Ա. Կոստանյան, Ս. Տեր-Գաբրիելյան, Ա. Խանջյան և քեկնածուներ՝ Շ. Ամիրխանյան, Վ. Շահգեղյան): Այնուհետև ասվում է, որ ԿԿ-ի անդամների մի մասը (Դովլաթյան, Ավիս, Կոստանյան) կազմեցին ԿԿ-ի Արտասահմանյան բյուրո՝ Հայաստանում ամենօրյա ընդհատակյա աշխատանքներ տանելու և վերականգնելու ու հիմնելու նոր ընդհատակյա կազմակերպություններ: Ըստ Շ. Ամիրխանյանի հուշերի՝ դարձյալ օգոստոս ամսից գլուխահեռաբար գործել են և՛ ԿԿ, և՛ Արտ. բյուրո<sup>95</sup>: Այնպես որ՝ սեպտեմբերի 20-ի գաղտնի հրահանգի հեղինակ-հասցեատերը եղել է հենց ինքը՝ Հայկոմկուսի Կենտկոմը: Եվ վերջին հաշվով, իր կանոնադրության համաձայն, Կոմունիստական կուսակցության միայն ԿԿ-ը կարող էր ունենալ բյուրո, արտասահմանյան բյուրո կամ քաղբյուրո: Ինչ վերաբերում է այն պարագային, որ օգոստոսի վերջերին հաստատված Հայկոմկուսի ԿԿ-ի անդամների ցանկը նույնությամբ չի համընկնում սեպտեմբերի 20-ի գաղտնի հրահանգում նշված ԿԿ-ի անդամների կազմին, ապա հարկ է հիշեցնել, որ բոլշևիկյան կուսակցության համար ընդունված կարգ էր կոպտացիայի միջոցով ԿԿ-ի կազմի հաճախակի փոփոխությունները:

Այս ամենից զատ՝ հետազայում ևս ընթերցողը կծանոթանա համանման բովանդակությամբ բազում այլ վավերագրերի, որոնք ավելորդ անգամ կհամոզեն, որ «սեպտեմբերի 20-ի» գաղտնի հրահանգը հայ բոլշևիկների ձեռքի գործն է:

1920 թ. հայկական բանակում բոլշևիկների քայքայիչ գործունեության մասին վկայում են հենց իրենք՝ բանակում ծառայած բոլշևիկ զինվորները իրենց հուշերում: Այսպես, օրինակ, հայկական բանակի զինվոր, բոլշևիկ Հայկ Մխիթարյանը պատմում է. «Մենք (բոլշևիկներ-Ա.Հ.) զինվորների մեջ տանում էինք բացատրական-քաղաքական աշխատանքներ: Մենք հատկապես զինվորներին բացատրում էինք, որ թուրք աշխատավորներն էլ մեզ նման աշխատավորներ են և դաշնակցականները ցանկանում են ոչնչացնել այդ աշխատավորներին, մերկացնում էինք դաշնակցականների դեմքը»<sup>96</sup>:

1920 թ. հոկտեմբերի 30-ին, առանց լուրջ մարտի, ընկավ Կարս քաղաքամրոցը, ուր և սրի քաշվեցին մոտ 6000 հայ և գերի ընկան մոտ 3000 զինվոր: Շուտով հանձնվեց նաև Ալեքսանդրապոլը: Թուրքական մահաբեր արշավանքի տագնապալի օրերին կոմունիստները պացիֆիստական, պարտովոյա-

կան բովանդակության բուռնիկներ էին տարածում զինվորների և խուճապահար ժողովրդի մեջ. «Չկրակեն, հայ աշխատավոր զինվոր, եղբայրական թուրք բանակի վրա, նա քեզ բերում է ոչ թե ստրկություն, այլ ազատություն. նա գալիս է օգնելու քեզ քո սրբազան պայքարի մեջ»<sup>97</sup>:

Հայտնի են սաբոտաժի շատ դեպքեր, մատնություններ, զնաքցների խորտակում և այլ փաստեր: Առանձին գործասեր գրեթե առանց զնդակ իսկ արձակելու, չենթարկվելով հրամանատարներին, դասալքում էին: Դեպքերին ականատես ու մասնակից Ն. Օդաբաշյանը գրում էր. «Չարմանալի բան. կարծես թե թուրքերը մեր մեջ լրտեսներ ունեին և մեր գորքերի բոլոր շարժումները գիտեին. միշտ աշխատում էին մեր թույլ կողմից օգտվել»<sup>98</sup>: Նոյեմբերի 5-ին, Ալեքսանդրապոլի շտաբից գորավար Մ. Սիլիկյանը բանակի հրամանատարությանը և կառավարությանը հայտնում էր, որ ռազմաճակատում գործասեր ինքնագլուխ լրում են ճակատը և չեն կատարում իրենց պետերի հրամանները<sup>99</sup>: Հատկապես Կարսի անկումից հետո զանգվածային բնույթ կրեց ռազմաճակատի կազմալուծումը, որը շուտով վերածվեց ընդհանուր խուճապի:

Հայաստանի կոմունիստական կազմակերպություններից հատկապես ծայրահեղական դիրք էր գրավել ռազմաճակատամերձ Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կոմիտեն: Այն բանից հետո, երբ նոյեմբերի 7-ին թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, տեղում իշխանությունը գործնականում անցավ մենշևիկ-էսենների խմբակցության ձեռքը: Քաղաքային ինքնավարությունը գլխավորում էր Անկախ սոցիալիստների (մենշևիկների) ղեկավար Լևոն Սարգսյանը<sup>100</sup>: Թուրքական օկուպացիայի շրջանում քաղաքում և շրջակայքում մեծ չափով ակտիվացան բոլշևիկները, որոնք փորձեցին կապեր հաստատել թուրքերի հետ: Նոյեմբերի 13-ին ՌԿԲ/Կ Ալեքսանդրապոլի կոմիտեի նախաձեռնությամբ քաղաքում անցկացվեց բազմամարդ միտինգ, որին մասնակցել են նաև թուրքական կոմկուսի ներկայացուցիչներ<sup>101</sup>: Միտինգում ընդունվեց բանաձև, որը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Ալեքսանդրապոլի պրոլետարիատը և չքավոր գյուղացիությունը, ազատագրվելով հայկական դարավոր լծից, հղում է իր եղբայրական սրտագին ողջույնը թուրքական Կոմունիստական կուսակցությանը՝ Թուրքիայի ճնշված մասսաների միակ պաշտպանին: Հայաստանի հարստահարված և բազմատանջ զանգվածները վստահ են, որ միայն Հայաստանի և Թուրքիայի, երկու հարևան ժողովուրդների պրոլետարիատի միավորումը և ձեռք ձեռքի տված համատեղ աշխատանքը կերաշխավորի մեծ հաղթանակի լիակատար հաջողությունը և ընչաքող համաշխարհային իմպերիալիզմի տապալումը:

<sup>95</sup> Մ. Մ. Амирханян, Из истории борьбы за советскую власть в Армении, Ереван, 1967, с. 41:

<sup>96</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 403, ց. 1, գ. 20, ք. 1 (ընդգծումը մերն է):

<sup>97</sup> Լ. Նավասարդյան, Հ.Յ. Դաշնակցության անելիքը, Գահիրե, 1924, էջ 224:

<sup>98</sup> «Հայրենիք», Պոսթրն, 1943, քիվ 4, էջ 67:

<sup>99</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, ք. 88:

<sup>100</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 189, ք. 3-4:

<sup>101</sup> Նույն տեղում, ք. 4:

Կեցցե՝ Թուրքիայի Կոմկուսը, կեցցե՝ Արևելքի Կարմիր հեղափոխական բանակը, կեցցե՝ կոմունիզմը, կեցցե՝ Խորհրդային Հայաստանը»<sup>102</sup>։  
 13 նոյեմբերի 1920 թ. Միտինգի նախագահ՝  
 Բ. Ալեք-պոլ Ար. Տեր-Մարտիրոսյան  
 քարտուղար՝ Մկ. Խաչիյան։

Այնուհետև այդ նույն միտինգում ընդունվել է նաև կոչ՝ ուղղված հայ զինվորներին, գյուղացիներին և գաղթականներին։ «Մենք կոչ ենք անում ձեզ, - ասված է այնտեղ, - չհավատալ դաշնակներին, բանգի գալիս են ոչ թե կողոպտիչներ, այլ հայ գյուղացիների, զինվորների ու բանվորների ընկերները։ Նրանք (թուրքերը-Ա.Հ.) գալիս են ոչ թե մորթելու ձեզ, այլ ազատելու դաշնակ թալանիչների ձեռքից»<sup>103</sup>։ Հաջորդ օրը՝ նոյեմբերի 14-ին, Ռ.Կ/Բ/Կ Ալեք-պոլի կազմակերպությունը, կոմիտեի անդամներ՝ Ներսիկի, Արծվիկի և Նուշիկի ստորագրությամբ երապարակեց նույնաբնույթ մեկ այլ կոչ, որում դարձնալ կարող ենք. «Մենք (հայ բոլշևիկներս-Ա.Հ.) լիակատար լեզու ենք գտել մեր դաշնակից հեղափոխական թուրքական բանակի հետ և մեր գործողությունները համաձայնեցված են»<sup>104</sup>։ Այստեղից ինքնին պարզ է դառնում, թե նման քարոզչության, ժողովրդի ու բանակի այդպիսի քաղաքական ու բարոյապետական մթնոլորտի պայմաններում, որքան ցածր պետք է լիներ նրանց դիմադրական, ինքնապաշտպանական ոգին։

Այս ամենով հանդերձ, մենք ամենևին էլ այն կարծիքին չենք, թե Հայաստանի պարտության գլխավոր պատճառը բոլշևիկների քայքայիչ ու կազմալուծիչ գործունեությունն էր։ Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտության պատճառները շատ են<sup>105</sup>, որոնց ամբողջական քննությունը մեր խնդրից դուրս է։

### 3. Խորհրդարանը և կուսակցությունները ՀՀ անկման փուլում

Տևական ու պերմանենտ արձակուրդներից հետո, 1920 թ. նոյեմբերի 1-ից խորհրդարանը վերսկսեց իր աշխատանքները՝ հրավիրելով արտահերթ նիստ։ Պատմաքաղաքական առումով սա ՀՀ այն ժամանակաշրջանն էր, երբ հոկտեմբերի 30-ին ընկել էր Կարսը և Հայաստանն արդեն կանգնած էր պարտության եզրին։ Հանրապետությունը, հայտնվելով «ռուսական մուրճի և թուր-

<sup>102</sup> Նույն տեղում, ք. 1։

<sup>103</sup> Նույն տեղում, ք. 2։

<sup>104</sup> Նույն տեղում ք. 3։

<sup>105</sup> Ա. Հակոբյան, 1920թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը, Ե., 2004։

քական սալի միջև» ապրում էր ռազմաքաղաքական խոր ճգնաժամ և նրա գոյությանը մնում էին հաշված օրեր, ավելի ստույգ՝ ընդամենը մեկ ամիս։ Իսկ մինչ այդ, ինչպես արդեն ասվեց, թուրք-հայկական պատերազմում բավարար զինված ու լավ հանդերձավորված հայոց բանակը տարբեր պատճառներով անպատրաստ գտնվեց դիմակայել ու հակահարված տալ նենգ ոստիկին։

Նոյեմբերի 1-ի երեկոյան ժամը 8-ին բացվեց խորհրդարանի նիստը։ Օրակարգի կենտրոնական հարցը վերաբերում էր Հայաստանի ներկա դրությանը։ Զեկուցեց վարչապետ Հ. Օհանջանյանը։ Ելույթներ ունեցան պատգամավորներ՝ Ս. Թորոսյանը, Ա. Խոնդկարյանը, Հ. Տերտերյանը, Ա. Խատիսյանը։ Չայների մեծամասնությամբ ընդունվեց ՀՀԳԻ խմբակցության բանաձևը, որով հավանություն էր տրվում կառավարության ձեռնարկած ինքնապաշտպանական միջոցներին<sup>106</sup>։

Երեք օր անց՝ նոյեմբերի 4-ին, գումարվեց խորհրդարանի երկրորդ նիստը, որին ներկա էին 35 պատգամավոր և կառավարության գրեթե ամբողջ կազմը։ Այս նիստում լսվեցին երկու հարց։ Նախ՝ առաջին հարցով փոխվեց խորհրդարանի նախագահության կազմը։ Գաղտնի քվեարկությամբ՝ 34 կողմով խորհրդարանի նախագահ ընտրվեց արտասահմանյան երկարատև գործուղումից նոր վերադարձած Հ. Քաջազնունին, իսկ փոխնախագահներ՝ Ս. Տիգրանյանը և Լ. Շանթը<sup>107</sup>։

Այնուհետև երկրորդ հարցով որոշվեց կրկին դադարեցնել խորհրդարանի աշխատանքները՝ պատճառաբանելով, որ երկրի դրությունը արտակարգ է, ուստի անհրաժեշտ համարվեց, որ պատգամավորները գործեն ժողովրդի մեջ, իսկ կառավարությունն էլ, յուրացնելով խորհրդարանի իրավունքները, այս ծանր ժամանակներում գործի ավելի ազատ ու անկաշկանդ։ Սույն հարցի մասին պատգամավոր Գ. Քալաշյանի ներկայացրած օրինագծի դեմ առարկեցին միայն էսեռներ՝ Ա. Խոնդկարյանը և Վ. Մինախոյանը։ Որոշվեց խորհրդարանի աշխատանքները դադարեցնել մինչև ս. թ. դեկտեմբերի 1-ը<sup>108</sup>։ Նիստը փակվեց և խորհրդարանն արդեն հինգերորդ անգամ ուղարկվեց արձակուրդ։ Այս առնչությամբ, կարծում ենք, տեղին էր «Հայաստանի ձայնի» հանդիմանությունը, երբ նա գրում էր իր խմբագրականում։ «Մեզ կը թվի, որ պառլամենտի հասկացողությունը, եթե չասենք ամբողջությամբ, գեթ բավական մեծ չափով կորսնցուցեր է յուր արժեքը ժողովրդի մոտ, այնքան երկար ժամանակով շարունակվող արձակուրդի շնորհիվ»<sup>109</sup>։

Հայկական գործի մահանջի և ազգաբնակչության խուճապի պայմաններում թշնամին մոտենում էր Ալեքսանդրապոլին։ Նոյեմբերի 7-ին քաղաքը անձնատուր եղավ։ Թուրքական զորքերի հրամանատար Ք. Կարաբեքիր փաշայի առաջարկությամբ կողմերի միջև կայացվեց զինադադար՝ հետևյալ

<sup>106</sup> «Ժողովուրդը», 3 նոյեմբերի 1920 թ.։

<sup>107</sup> «Հառաջ», 6 նոյեմբերի 1920 թ.։

<sup>108</sup> «Ժողովուրդ», 7 նոյեմբերի 1920 թ.։

<sup>109</sup> «Հայաստանի ձայն», 6 նոյեմբերի 1920 թ.։

պայմաններով. հայկական գործը պետք է հետ քաշվեր Ախուրյան գետից 15 կմ դեպի արևելք, Ալեքսանդրապոլի կայարանը և բերդը դրվելու էին բուրքերի տրամադրության տակ և այլն: Այս պայմաններն իսկույն կատարվեցին և ակնկալվում էր քիչ քե շատ տանելի (պատվավոր) հաշտություն կնքելու հնարավորություն: Սակայն մեկ օր անց՝ նոյեմբերի 8-ին, Անկարայի կառավարությունը, չբավարարվելով Բ. Կարաբեքիրի ներկայացրած պայմաններով, պահանջեց նոր, ավելի մեծ զիջումներ, որով ՀՀ տարածքի կեսից ավելին անցնում էր բուրքերին: Բացի այդ, Հայաստանը պետք է բուրքերին հանձներ մեծ խմբաքանակներով գներ, զինամթերք, փոխադրամիջոց (2000 հրացան, 60 զնդացիր, 12 թնդանոթ, 4000 արկղ հրացանի փամփուշտ, 6000 թնդանոթի ռումբ, 4000 ջորի, 2 շոգեմեքենա, 50 վագոն և այլն)<sup>110</sup>: Սա նշանակում էր ոչ միայն տարածքային նոր կորուստ, այլև, ըստ էության, Հայաստանի զինաթափում ու կապիտուլյացիա: Բացի այդ, չէր բացառվում, որ քեմալականները, ստանալով Հայաստանի հանձնաժողովը, կարող էին այն կրկին օգտագործել հայության դեմ՝ նրան իսպառ բնաջնջելու նպատակով: Հասկանալի է, որ մնան մտավախության պայմաններում Հայաստանի կառավարությունը մերժեց այդ պայմանները, որից հետո՝ նոյեմբերի 10-ից, կրկին վերսկսվեցին ռազմական գործողությունները:

Այս իրավիճակում էր, որ նոյեմբերի 11-ին, խորհրդարանի նախագահության նախաձեռնությամբ, գումարվեց արտահերթ նիստ: Նիստում լսվեց ու քննարկվեց կառավարության զեկուցումը նախորդ մեկ շաբաթվա ընթացքում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձությունների մասին: Զեկուցողը՝ վարչապետ Հ. Օհանջանյանը, ասաց, որ ռազմական գործողությունների անհաջողության հետևանքով կառավարությունը հարկադրված զինադադար սկսեց բուրքական հրամանատարության հետ: Միաժամանակ, վարչապետը հիմնավորեց, քե ինչու է կառավարությունը մերժել երկրորդ զինադադարի պահանջները:

Հ. Օհանջանյանի զեկուցումից հետո ելույթներ ունեցան ՀՅԴ խմբակցության անդամներ՝ Ա. Խատիսյանը, Հ. Տերտերյանը, Հ. Սարգսյանը, որոնք կոչ արեցին կռվել մինչև հաղթական ավարտը: Իսկ Էսե՛ Ա. Խոնդկարյանը առաջարկեց կազմել նոր համաժողովրդական կառավարություն, որը կվայելի հասարակական-քաղաքական բոլոր հոսանքների վստահությունը<sup>111</sup>: Նիստի վերջում ՀՅԴ խմբակցության ներկայացմամբ ընդունվեց մի բանաձև, որով վստահություն էր հայտնվում կառավարության վարած քաղաքականությանը:

Թուրքերը, վերսկսելով հարձակումը, մի քանի օրում գրավեցին նոր բնակավայրեր ու տարածքներ ու սկսեցին խորանալ երկրի ներքը: Հայաստանը կանգնեց լիակատար կործանման եզրին, ուստի և կայացվեց հարկադիր զինադադար: Նոյեմբերի 18-ին Հայաստանի և Թուրքիայի միջև կրկին կնքվեց զինադադար, որով ռազմական գործողությունները դադարեցվեցին:

<sup>110</sup> «Ժողովուրդ», 10 նոյեմբերի 1920 թ., 3. Իրազեկ, նշվ. աշխ. էջ 78:  
<sup>111</sup> «Ժողովուրդ», 16 նոյեմբերի 1920 թ.:

Իսկ նոյեմբերի 24-ի երեկոյան Ալեքսանդրապոլում պիտի սկսվեին հաշտության բանակցությունները<sup>112</sup>:

Թուրքիայի հետ զինադադար կնքելով՝ Հայաստանի կառավարությունը չէր կարող հաշտության բանակցություն չվարել: Հայկական կողմը հույս ուներ, քե Թուրքիան Հայաստանին տարածքային որոշ զիջումներ կանի և կկարողանա կնքել քիչ քե շատ պատվավոր հաշտության պայմանագիր: Այդ նկատառումով Բ. Լեգրանի հետ տարվող բանակցությունները ձգձգվում էին: Հայաստանի կառավարության քաղաքական դիրքորոշման վրա, ինչ խոսք, որոշ ազդեցություն էր գործում նաև Անգլիայի ներկայացուցիչ Ստոքսը: Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ընթացող հայ-ռուսական բանակցությունների վրա, անշուշտ, վերջինս բացասական դեր խաղաց: Անգլիայի ու Ամտանտի քաղաքական շահերի տեսակետից ավելի ցանկալի կլիներ, որ Հայաստանը համաձայնության գար ու պայմանագիր կնքեր քեմալական Թուրքիայի, քան Խ. Ռուսաստանի հետ:

Հայ քաղաքական շրջաններն ու ժողովուրդը, տեսնելով, որ չեն կարողանում պատշաճ դիմադրություն ցույց տալ, իրենց փրկության վերջին հույսը դրել էին Խ. Ռուսաստանի վրա, չնայած արդեն շատերին էր հայտնի ռուս-թուրքական գործակցության փաստը:

1920 թ. աշնան ճակատագրական փուլում ժողովուրդը կանգնած էր երկրորդ մեծամասնության ամերկյա պատրաստ էր ընդունել Ռուսաստանի տիրապետությունը: Ստեղծված պայմաններում քաղաքական կուսակցություններն ու ժողովուրդը պատրաստ էին հրաժարվել այնքան թանկ գնով ձեռք բերած անկախությունից: «Հայ ժողովրդի գլխին կանգնած ֆիզիկական բնաջնջման վտանգն այնքան ահեղ էր, որ» գրում էր Կ. Սասունի, «որ Հայաստանի անկախության խնդիրը այդ ժամանակ ստացել էր երկրորդական նշանակություն»<sup>113</sup>:

Կուսակցությունների, ժողովրդի ու բանակի մեջ գնալով ավելի ու ավելի միանշանակ ու գերիշխող էր դառնում ռուսական քաղաքական արևելումը (կողմնորոշումը): Ստեղծված աղետալի իրավիճակի թելադրանքով՝ գնալով հայ քաղաքական շրջանակներում մինչև այդ տիրապետող արևմտյան (անգլիական) արևելումը ավելի ու ավելի իր տեղը զիջում էր ռուսականին (Խ. Ռուսաստանին): Պատերազմի հետևանքով որքան անհուսալի էր դառնում Հայաստանի վիճակը, այնքան ավելի էր ժողովուրդը հակվում և իր փրկության միակ խարիսխը դարձնում Ռուսաստանը: Այս գործում գործի, ժողովրդի մեջ մեծ աշխատանք էին տանում բուլշևիկները:

Ստեղծված իրադրության մեջ որոշ կուսակցություններ էլ արդեն մտորում էին գոյություն ունեցող վարչակարգի տապալման ու Հայաստանի խորհրդայնացման մասին: Բացի բուլշևիկներից՝ մնան առաքելությամբ հան-

<sup>112</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 199, ց. 1, գ. 247, ք. 1:

<sup>113</sup> «Հայրենիք», 1925, թիվ 12, էջ 88:

դես եկավ նաև Ս.Դ.Հնչակ կուսակցության Կովկասյան հատվածը: Սրանք, կանխագգալով ՀՀ վախճանը, նոյեմբերի 11-ին իրենց խորհրդատուական ընդունեցին բանաձև՝ «Հայաստանում գոյություն ունեցող վարչակարգի և նրա ղեկավարների տապալման և գյուղացու-բանվորական-խորհրդային իշխանության հաստատման մասին»<sup>114</sup>:

Այդ ժամանակ հայ քաղաքական շրջանակներում տիրապետող մտայնությունն այն էր, որ պետք է հրաժարական տա արդեն հեղինակագրված Բյուրո-կառավարությունը և նրա փոխարեն կազմվի մի այնպիսի նոր կառավարություն, որը լինի «ծախ» և խաղաղասեր: Կարսի և Ալեքսանդրապոլի անկումը արդեն կանխորոշել էին Բյուրո-կառավարության բախտը: Ըստ Ս. Վրացյանի ամտիպ հուշերի՝ ստեղծված քաղաքական խոր ճգնաժամի պայմաններում Հ. Օհանջանյանը և Ռ. Տեր-Մինասյանը այժմ արդեն շտապում էին օր առաջ հեռանալ կառավարությունից<sup>115</sup>:

Կառավարության հրաժարականի կապակցությամբ նույն ինքը ՀՅԲ Բյուրոն ընդունեց առանձին որոշում, որում ասվում էր. «Հաշվի ունենալով միջազգային քաղաքականության մեջ առաջացած մի շարք կարևոր երևույթները, ուժերի և շահերի նոր դասավորությունը, ՀՅԲ Բյուրոն անհրաժեշտ նկատեց դուրս գալ կառավարությունից, որպեսզի նոր կառավարությունը, նոր հոգեբանական պայմաններով, սկսի հաշտության բանակցությունները՝ վերջ դնի պատերազմին»<sup>116</sup>:

Անտարակույս, դատապարտելի են այդ օրերին (նոյեմբերի 20-ին և 23-ին) ՀՅԲ կենտրոնական օրգան «Հառաջի» տպագրած առաջնորդող հոդվածաշարերը, որոնցում քաղաքական-դիվանագիտական նկատառումներով զարգացվում էր հայ ժողովրդի համար անհարազատ մի հայեցակետ (զաղափար), թե հայ ժողովուրդը պետք է ունենա թուրքական օրինատացիա: Եվ սա ասում էր մի կուսակցություն, որը 30 տարի շարունակ մարդկային, նյութական ու հոգևոր հսկայական կորուստներ տալով՝ պայքարել է այդ օրինատացիայի օրեկտի՝ Թուրքիայի դեմ: Մեր կարծիքով, թուրքական կողմնորոշումը ընտրելու մասին հայտարարությունը օրհասական պահի թելադրանքով դիվանագիտական մաներ էր՝ պատերազմում հաղթած Թուրքիայի համակրանքը ինչ-որ կերպ շահելու ակնկալիքով: Կարծում ենք, իրավացի չեն այն հեղինակները, ովքեր հիմք համարելով «Հառաջի» հոդվածները և նպատակ ունենալով վարկաբեկել ՀՅԲ-ին, պնդում են, թե Դաշնակցություն կուսակցությունը ունեցել է թուրքական կողմնորոշում:

1920 թ. նոյեմբերի 18-ին հայտարարված հայ-թուրքական տասնօրյա զինադադարի շրջանում՝ նոյեմբերի 23-ին՝ երեկոյան ժամը 8-ին (նախագահությամբ Հ. Քաջազունու) գումարվեց խորհրդարանի արտահերթ նիստը: Խորհրդարանի խոսնակ Հ. Քաջազունին կարդաց կառավարությունից

ստացված հրաժարականի մասին գրությունը: Այնուհետև կաբինետի հրաժարականի շարժառիթների մասին բացատրություններ տվեց Հ. Օհանջանյանը: Ելույթներ ունեցան պատգամավորներ՝ Ս. Թորոսյանը (ՀՅԲ) և Ա. Խոնդկարյանը (ԷսէՌ): Խորհրդարանի երկու կուսակցական խմբակցությունները ընդունեցին կառավարության հրաժարականը (43 կողմ և 1 ձեռնպահ)<sup>117</sup>: Մինչև նիստի հրավիրումը ՀՅԲ խմբակցությունում նախապատրաստվել էր հարցը: ՀՅԲ Բյուրոյի գիտությամբ վարչապետության թեկնածու էր առաջադրվել պատգամավոր Սիմոն Վրացյանը<sup>118</sup>: Խորհրդարանը նրան էլ հանձնարարեց կազմել նոր կառավարություն<sup>119</sup>:

Ակնկալվում էր, որ նոր կառավարությունը պետք է ընդհանուր լեզու գտներ բոլշևիկների և հաշտություն կնքեր թուրքերի հետ: Նոր վարչապետը հույս էր տաժում, թե Հայաստանի ընկերվարական, ռուսամետ կառավարություն կազմելով՝ Խ. Ռուսաստանը հաշվի կնստի Հայաստանի անկախության հետ, կպաշտպանի Հայաստանի մինչև 1914 թ. սահմանները: Բայց այդ հույսերը չարդարացան:

Հարկ է նշել, որ կառավարության ճգնաժամի շրջանում թուրքական կողմը ևս ցանկանում էր, որ Հայաստանում կազմվելիք նոր կառավարությունը լինի ոչ դաշնակցական: Թե՛ ռուսական և թե՛ թուրքական կողմերին ձեռնառու էին Հայաստանի իշխանության ղեկին տեսնել իրենց կամակատար մի մարմին: Բայց այդ ժամանակ էլ Հայաստանում քաղաքական ուժերի հարաբերակցությունն այնպիսին էր, որ հնարավոր չէր նոր կառավարություն կազմել առանց Դաշնակցության մասնակցության:

Նոյեմբերի 24-ի երեկոյան կայացավ խորհրդարանի նախորդ օրվա արտահերթ նիստի շարունակությունը: Ս. Վրացյանը ներկայացրեց նոր կաբինետի կազմը: ԷսէՌները համաձայնություն տվեցին և մտան Վրացյանի «ծախ» կռաւիցիոն կառավարության մեջ, իսկ ՀՍԴԲԿ («սպեցիֆիկ») գործիչներ Դ. Անանունը և Բ. Իշխանության հրաժարվեցին մտնել նոր կաբինետ<sup>120</sup>: Խորհրդարանի նիստում լսվեց և 30 կողմ, երկու ձեռնպահությամբ հավանություն տրվեց վարչապետի հայտագրին (ղեկավարացիային)<sup>121</sup>: Արտաքին քաղաքականության խնդրում այնտեղ ընդգծվում էր այն միտքը, որ «Մեր գործունեության նշանաբանն է լինելու՝ անկեղծ հաշտություն Տաճկաստանի հետ և

<sup>117</sup> «Հառաջ», 25 նոյեմբերի 1920 թ.:

<sup>118</sup> Ս. Վրացյանը իր հուշերում պատմում է, որ սկզբում հանձնարարվեց Հ. Քաջազունուն կազմել նոր կառավարություն: Վերջինս փորձեց կազմել բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներից բաղկացած ազգային միասնության կառավարություն, որին, սակայն, հրաժարվեցին մասնակցել ընդդիմադիր կուսակցությունները՝ ՀԺԿ, ՀՍԴԲԿ, ԷսէՌ և այլն: Այդ իսկ պատճառով Քաջազունին հրաժարվեց և իր կողմից վարչապետության թեկնածու առաջարկեց գյուղատնտեսության նախարար Ս. Վրացյանին (Տես՝ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 488):

<sup>119</sup> ՀՀ ՊԿՊ, Ժ. 198, ց. 1, գ. 75, թ. 3, «Ժողովուրդ», 25 նոյեմբերի 1920 թ.:

<sup>120</sup> Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 491:

<sup>121</sup> «Ժողովուրդ», 26 նոյեմբերի 1920 թ., «Հայրենիք», 1923, թիվ 1 (նոյեմբեր), էջ 65:

<sup>114</sup> ՀՀ ԼԶԿՓ ՊԿՍ, Ժ. 4045, ց. 1, գ. 244, թ. 1:

<sup>115</sup> «Ազդակ շաբաթօրյակ», 23 սեպտեմբերի 1973 թ. (թիվ 41):

<sup>116</sup> «Հառաջ», 30 նոյեմբերի 1920 թ.:

համերաշխություն ու խաղաղ համակեցություն բոլոր հարևան ժողովուրդների հետ»<sup>122</sup>:

Ս. Վրացյանի խառը սոցիալիստական որակվող կաբինետի մեջ մտան Դ. Կանայան (գինվորական նախ.), Հ. Տերտերյան (ֆինանսների), Հ. Տեր-Հակոբյան (խնամատարության)<sup>123</sup>, Ա. Հովհաննիսյան (գյուղատնտեսության), Ա. Խոնդկարյան (արդարադատության), Վ. Մինախորյան (կրթության և արվեստի), Վ. Բաբայան (աշխատանքի) և Վ. Քրմոյան (ն. գ. նախ. պաշտոնակատար): Այս խաղաղասեր ու ռուսասեր խառն կառավարությունը, որտեղ մեղմ դաշնակցականներից գատ մտան երկու էսէռ (պատգամավորներ Ա. Խոնդկարյանը և Վ. Մինախորյանը), պետք է վարեր խաղաղասիրական գիծ՝ լեզու գտնելու ու հաշտվելու ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ռուսաստանի հետ<sup>124</sup>:

Հավելենք, որ Սոցիալիստ-հեղափոխական կուսակցության Անդրկովկասյան շրջանային կոմիտեն նոյեմբերի 29-ի նիստում քննելով Վրացյանի կաբինետում սոց.-հեղ. կուսակցության երկու ներկայացուցիչների մտնելու մասին հարցը՝ հավանություն չի տվել էսէռների Հայաստանի կազմակերպության այդ քայլին: Դա պատճառաբանվել էր նրանով, որ նորակազմ կաբինետում ընդգրկված են այնպիսի անձինք, որոնք «ունեն ագրեսիվ ձգտումներ, խաղաղասեր չեն հարևանների հետ և որ ամբողջությամբ վերցված նոր կառավարությունը չի կարող համարվել աշխատավորական»<sup>125</sup>:

ՀՀ համար ճգնաժամային այս փուլում հայ քաղաքական կուսակցությունների ներքին կյանքը ևս խռովախույզ էր ու անկայուն: Այս շրջանում մեծ չափով ակտիվացան ձախակողմյան քաղաքական ուժերը: Խորհրդարանական և արտախորհրդարանական ձախ ուժերը՝ ձգտում հանդես բերեցին բոլշևիկների հետ սերտ կապեր հաստատել: Հ. Քաջագունին հայտնում էր, որ էսէռները անձնական կապեր ունեն հայ բոլշևիկների հետ<sup>126</sup>: Վիճակն այնքան բարդ էր ու ճգնաժամային, որ պառակտում առաջացավ ՀՀ Դաշնակցության շարքերում: Արխիվային մի վավերագրից տեղեկանում ենք, որ նոյեմբերի կեսին Ստալինը Բաքու եղած ժամանակ խորհուրդ է տվել Բ. Մոխրվանուն պառակտել Դաշնակցության շարքերը և նրա ձախ թևը իրենց կողմը գրավել<sup>127</sup>: Նոր փոփոխված իրադրության մեջ նոյեմբերի կեսերից ՀՀԴ ներսում առաջացավ մի 30 հոգուց բաղկացած այսպես կոչված «Հայաստանի ինտերնացիոնալ ձախ դաշնակցականների» խումբը: Խմբի ղեկավարներ դար-

ձան Հայկ Ավալյանը, Արտաշես Վանցյանը, Արշակ Գրիգորյանը և ուրիշներ<sup>128</sup>:

Այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտությունն ու կապիտուլյացիան արդեն օրերի հարց է, «Ձախ դաշնակցականները»՝ Հայկ Ավալյանի գլխավորությամբ, սերտ կապեր հաստատեցին՝ քարոզչական մեծ շքախմբով հոկտեմբերի 11-ին հատուկ գնացքով Երևան ժամանած Ռ.Ֆեևիչի ղեկավարած հետապնդողներից Բորիս Լեգրանի հետ: Այդ օրերին Բ. Լեգրանը Երևանից Գ. Չիչերինին գրում էր, որ Հայաստանի ռազմաքաղաքական խոր ճգնաժամը առաջ է բերել պառակտում Դաշնակցության շարքերում<sup>129</sup>: «Ձախ դաշնակցականները», Հայաստանի իշխանություններից գաղտնի, բանակցություններ սկսեցին Բ. Լեգրանի հետ՝ Հայաստանը դեպի Ռուսաստան կողմնորոշելու, դաշնակցական կառավարությունը տապալելու և Հայաստանը օր առաջ խորհրդայնացնելու նպատակով: Պետք է ասել, որ «Ձախ դաշնակցականները» համակիրներ ունեին և՛ խորհրդարանում, և՛ ժողովրդի մեջ<sup>130</sup>: Այսպես՝ «Ձախ դաշնակցականների» խմբին էին միացել խորհրդարանի ՀՀԴ խմբակցության որոշ անդամներ՝ Ավետիս Օհանջանյանը, Ռուբեն Քաջբերունին և ուրիշներ<sup>131</sup>: Սրանք հիմնեցին իրենց խորհուրդը և մի քանի անգամ հանդես եկան ժողովրդին ուղղված կոչերով, որոնցում հորդորում էին ժողովրդին կապերը խզել «Աջ դաշնակցականներից», նրանց կառավարությունից և ամբողջովին փարվել հեղափոխական բանվոր-գյուղացիական Ռուսաստանին, կողմնորոշվել դեպի միջազգային սոցիալիզմն ու համաշխարհային հեղափոխությունը: Հայաստանի ինտերնացիոնալ «Ձախ դաշնակցականների» առաջադրած կարգախոսները, ըստ էության, ոչնչով չէին տարբերվում կոմունիստականներից<sup>132</sup>:

Բ. Լեգրանը, բանակցելով Ավալյանի և Վանցյանի հետ, ջանում էր ներսից պայթեցնել ՀՀԴ-ն և խաղաղ ճանապարհով խորհրդայնացնել երկիրը: Եվ պետք է ասել, որ նա փայլուն կատարեց իր առջև դրված դիվանագիտական առաքելությունը: Չխորանալով քաղաքական-դիվանագիտական մանրամասների մեջ՝ ասենք, որ նոյեմբերի 30-ին Բ. Լեգրանը Ս. Վրացյանին ներկայացրեց վերջնագիր՝ Հայաստանի խորհրդայնացման մասին: Նույն օ-

<sup>122</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 2, ք. 431:

<sup>123</sup> Նոյեմբերի 30-ից նրան փոխարինեց Ռուբեն Յուզբաշյանը (Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 58, ք. 201)

<sup>124</sup> «Հայրենիք», 1925, թիվ 12, էջ 89:

<sup>125</sup> «Մշակ», 3 դեկտեմբերի 1920 թ.:

<sup>126</sup> Հ. Քաջագունի, Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Պուրբեշ, 1923, էջ 52:

<sup>127</sup> ՀՀ ԶԶԿՊ ՊԿԱ, Միկրոժապավենների հավաքածու, թիվ 2, գ. 5, ք. 1:

<sup>128</sup> Չիչերենը, որ ՀՀԴ Գերագույն դատական ատյանի 1920թ. հունիսի 12-ի որոշմամբ Հ. Ավալյանը փտարված էր կուսակցության շարքերից, որը վերջնականորեն պետք է հաստատվեր սեպտեմբերին գումարվելիք կուսակցության առաջիկա 10-րդ Ընդհ. ժողովում: Սակայն քանի որ ռազմաքաղաքական հանգամանքների պատճառով այն չէր գումարվել, նրա հեռացման հարցը մնացել էր առկախ), (տես՝ «Դրոշակ» 1930, թիվ 10, էջ 240):

<sup>129</sup> Գ. А. Галоян, Рабочее движение и национальный вопрос, Ер., 1969, с. 370-371.

<sup>130</sup> «Հայրենիք», 1925, թիվ 12, էջ 88:

<sup>131</sup> «Ազդակ շաբաթօրյակ», 23 սեպտեմբերի 1973 թ. (թիվ 41):

<sup>132</sup> ՀՀ ԶԶԿՊ ՊԿԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 185, ք. 1-2:



որը երեկոյան Հայաստանի կառավարութեանը վերջնագիր տվեց նաև Թուրքիան:

Մինչ Հայաստանում կատարվում էին օրհասական այդ իրադարձությունները, դեռևս նոյեմբերի 4-ին «կարմիր» Բաքվում, Ի. Ստալինի գլխավորությամբ, վճռվում էր Հայաստանի ճակատագիրը<sup>133</sup>: Նոյեմբերի 4-ին ՌԿ/ԲԿ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի քաղաքական միացյալ նիստում, որին մասնակցում էին նաև ՀԿԿ Կենտկոմի անդամները, «քննության է առնվում Հայաստանում տիրող դրությունը»<sup>134</sup>: Քննելով Հայաստանում ստեղծված կացությունը՝ որոշվում է խորհրդայնացնել Հայաստանը<sup>135</sup>: Խորհրդային կառավարությունը, խնդիր դնելով խորհրդայնացնել Հայաստանը և ապա նաև Վրաստանը, այնուամենայնիվ, առաջնային նշանակություն էր տալիս Ադրբեջանի անվտանգության ապահովմանը: 1920 թ. նոյեմբերի 27-ին ՌԿ/ԲԿ Կենտկոմի Քաղբյուրոն, Ի. Ստալինի տված գեկույցման հիման վրա, որոշում է. «Գլխավոր խնդիրը համարել Ադրբեջանի պաշտպանությունը... որա համար արագացնել 7 դիվիզիաների փոխադրումը Ադրբեջան»<sup>136</sup>: Այս ամենը նշանակում էր, որ Հայաստանը կանգնած էր խորհրդայնացման անխուսափելի փաստի առաջ:

ՀՀ մայրամուտին խորհրդարանի և կառավարող կուսակցության առջև ծառացած էր երկու շատ կարևոր խնդիր. 1. Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի ստորագրումը և 2. իշխանության հանձնումը բոլշևիկներին ու Հայաստանի խորհրդայնացումը: Առաջին խնդրի իրականացումը լիազորվեց Ալ. Խատիսյանի գլխավորած Հայաստանի պատվիրակությանը, որը նոյեմբերի 24-ին Ալեքսանդրապոլում սկսեց բանակցությունները թուրքական զորքերի հրամանատար Զ. Կարաբեքիրի հետ:

ՀՀ հետագա ճակատագրի հարցը վերջնականորեն վճռելու համար նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը տեղի ունեցավ խորհրդակցություն՝ ՀՅԴ Բյուրոյի, ՀՅԴ Հայաստանի ԿԿ-ի, խորհրդարանի ՀՅԴ խմբակցության, կառավարության անդամների և մի քանի ճանաչված գործիչների մասնակցությամբ<sup>137</sup>: Խորհրդակցությունում պետք է Բ. Լեգրանի ներկայացրած վերջնագրին պատասխան տրվեր: Կառավարության և Դրոյի գեկույցումներից պարզ դարձան, որ դրությունը անհույս է: Դրոն հայտարարեց, որ ինքը գործչունի բոլշևիկների դեմ կռվելու համար, այսինքն՝ հայ զինվորը չի կրակի ուսաբոլշևիկների վրա: Խորհրդակցության առջև դրված էր մի հարց. ինչպե՞ս -

դուրս գալ ստեղծված ծանր կացությունից<sup>138</sup>: Վրացյանի, Դրոյի և Քաջագնունու ելույթներից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն: Խոսում են շատերը: Բանախոսների մեծամասնությունը հանգում է այն հետևության, որ առանց դիմադրության պետք է ընդունել բոլշևիկների մուտքը Հայաստան և իշխանությունը հանձնելով նրանց՝ երկիրը խորհրդայնացնել: Նիստի մասնակիցների փոքրամասնությունը միայն գտնում էր, որ պետք է դիմադրել<sup>139</sup>: Ականատես հուշագիրները պատմում են, որ փոքրամասնության ակտիվիստներից էր գյուղնախարար Արշակ Հովհաննիսյանը: Նա առաջարկում էր հայտարարել նոր զորահավաք, ձերբակալել Լեգրանին և դիմադրել բոլշևիկներին<sup>140</sup>: Հայաստանի խորհրդայնացման Լեգրանի առաջադրած պահանջին դեմ են արտահայտվել նաև Հ. Օհանջանյանը, Ս. Արարատյանը, Ա. Չիլինգարյանը, Վ. Նավասարդյանը և այլք, որոնք առաջարկում էին զենքի դիմել<sup>141</sup>:

Նույն օրը՝ նոյեմբերի 30-ի երեկոյան, խորհրդակցության ժամանակ, Ալեքսանդրապոլից հեռագիր ստացվեց, որ Թուրքիան, հանձին Զ. Կարաբեքիրի, վերջնագիր էր տվել Հայաստանի պատվիրակությանը՝ 48 ժամվա ընթացքում հաշտության պայմանները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ<sup>142</sup>: Պետք է ասել, որ թուրքական վերջնագիրը մեծապես կանխորոշեց ու հստակեցրեց խորհրդակցության մասնակիցների դիրքորոշումը՝ Հայաստանի խորհրդայնացման մասին Լեգրանի վերջնագիրը ընդունելու օգտին:

ՀՅԴ Բյուրոն նույնպես հանգեց նույն եզրակացության՝ կայացնելով հետևյալ որոշումը. «Հարկադրված երկու հակառակորդ կողմերի ճնշումից՝ Բյուրոն հեռանում է Հայաստանից, թողնելով իր ներկայացուցիչը, և հրահանգում է ընկերներին իրենց տեղական պայմանների համաձայն գործել և զաղտնի պահել կուսակցության գոյությունը, իսկ ընկերներին չի արգելվում մտնել նոր իշխանության մեջ և աշխատել երկրի տնտեսական ու կուլտուրական զարգացման համար»<sup>143</sup>: ՀՅԴ, նրա խորհրդարանական խմբակցությունը, կառավարությունը, առանց կռվի ու դիմադրության, զնացին նման խոշոր գոհողության՝ հանուն հայ ժողովրդի ֆիզիկական գոյության փրկության:

Հանձնարարվեց Դրոյին և Հ. Տերտերյանին, որոնք արդեն կապի մեջ էին Բ. Լեգրանի հետ, տեղի տալու բոլշևիկներին և ընդունելու խորհրդայնացման վերջնագրի պայմանները: Նրանք լիազորվեցին Լեգրանի հետ համաձայնագիր ստորագրել և իշխանությունը հանձնել Հայեղկոմին: 1920 թ. դեկտեմբերի 1-ին ժամը 2-ին վարչապետ Ս. Վրացյանը հայտնում է Ալեքսանդրապոլում գտնվող ՀՀ պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանին, որ

<sup>133</sup> Ավելի վաղ՝ 1920 թ. հոկտեմբերի 14-ին ՌԿ/ԲԿ Կենտկոմի Քաղբյուրոն, Վ. Ի. Լենինի մասնակցությամբ, որոշում էր ընդունել Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու մասին (Տես՝ Գ. Ա. Գալստ, նշվ. աշխ., էջ 366):

<sup>134</sup> Խ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ., գիրք 2-րդ, Ե., 1975, էջ 523:

<sup>135</sup> Գ. Բ. Ղարիբջանյան, նշվ. աշխ., էջ 424-425:

<sup>136</sup> ՀՀ ԶԶԿԳ ՊԿԱ, Ժ. 4050, ց. 1, գ. 6, ք. 1:

<sup>137</sup> Ս. Վրացյան, Հուշեր մոտիկ անցեալից («Հայրենիք», 1923, թիվ 1 (նոյեմբեր), էջ 70, Հ. Տերտերյան, Շանթի պատվիրակության գործունեությունը («Հայրենիք», 1954, թիվ 5, էջ 10-11):

<sup>138</sup> «Դրոշակ», 1930, թիվ 10, էջ 240:

<sup>139</sup> «Դրոշակ», 1930, թիվ 10, էջ 241:

<sup>140</sup> «Հայրենիք», 1952, թիվ 7, էջ 7:

<sup>141</sup> «Հայրենիք», 1923, թիվ 1 (նոյեմբեր), էջ 70:

<sup>142</sup> Նույն տեղում:

<sup>143</sup> «Հայրենիք», 1925, թիվ 12, էջ 92:



Բյուրոն, խմբակցությունը և կառավարությունը որոշել են ընդունել կարմիրների առաջարկը Հայաստանի խորհրդայնացման մասին, պայմանով, որ ճանաչվի Հայաստանի անկախությունը և թույլ չտրվեն քաղաքացիական կռիվներ<sup>144</sup>:

Միաժամանակ, քննության առնելով Թուրքիայի հետ պատերազմի և խաղաղության հարցը, ցուցում էր տրվել Ալ. Խատիսյանին՝ ընդունել թուրքերի ներկայացրած պայմանները և ստորագրել հաշտության պայմանագիրը<sup>145</sup>:

Դեկտեմբերի 1-ի երեկոյան խորհրդարանի շենքում մոմերի լույսի տակ տեղի ունեցավ ՀՀԴ խորհրդարանական խմբակցության վերջին նիստը: Նիստին մասնակցում էին նաև ՀՀԴ Բյուրոյի և կառավարության ներկայացուցիչներ: «Չափազանց ծանր էր և ճնշող ժողովի պատկերը, - հիշում էր նիստին մասնակից Հ. Տեր-Հակոբյանը (Իրազեկը), - մեր բախտից՝ այդ երեկո էլեկտաբականություն էլ չէր գործում, և նստել էինք մոմերի աղոտ լույսի տակ»<sup>146</sup>: Սա ՀՀԴ խորհրդարանական խմբակցության վերջին պատմական նիստն էր: Այն դռնբաց էր: Իրազեկը վկայում է, որ նիստին ներկա էին բազմաթիվ կողմնակի անձինք, գուցե և մեծամասնականներ<sup>147</sup>: Թեև ՀՀԴ Բյուրոն և կառավարությունն արդեն վճռել էին իրենց անելիքը, բայց և այնպես՝ որոշվեց խնդիրը վերջին անգամ քննարկել ՀՀԴ խորհրդարանական խմբակցության համատեղ նիստում՝ դրանով իսկ ընդգծելով օրենսդիր մարմնի նշանակությունը: Իրավական առումով, անշուշտ, ավելի ճիշտ կլիներ, եթե նման կարևորության խնդիրը քննվեր ոչ թե խմբակցության, այլ խորհրդարանի նիստում՝ այնտեղ հրավիրելով նաև էսեռ մի քանի պատգամավորների, մանավանդ որ այս կուսակցությունը ՀՀԴ հետ կազմել էր խառը կառավարություն:

Ս. Վրացյանը վկայում է, որ այստեղ դարձյալ կրկնվեց նախորդ օրվա վիճաբանությունը<sup>148</sup>: Պատգամավոր Ս. Թորոսյանն իր հետագա հուշերից մեկում հայտնում է, որ այդ նիստում երկար ճառով հանդես եկավ խորհրդարանի նախագահ Հ. Քաջազունին: Նա ևս հանգում է այն եզրակացության, որ Հայաստանին մնում է մի ելք՝ ընդունել Լեզրանի վերջնագիրը և խաղաղ կերպով կատարել իշխանության փոխանցում: Քաջազունին էլ Վրացյանի նման հավատացած էր, որ «հայ բուլշևիկները, հենված ռուսական ուժի վրա, պիտի վարեն փաստորեն ազգային քաղաքականություն»<sup>149</sup>: Բայց, ցավոք, այդպես չեղավ: Թեև այստեղ էլ մի քանիսը կոչ արեցին դիմադրել բուլշևիկներին, սակայն քվեարկության արդյունքով խմբակցության ձայների ճնշող մեծամասնությամբ՝ 21 կողմ, 7 դեմ (որոշ տվյալներով՝ 4 դեմ)<sup>150</sup> և 2 ձեռնպահ

դարձյալ որոշվում է առանց դիմադրության, խաղաղ ճանապարհով իշխանությունը հանձնել բուլշևիկներին և երկիրը խորհրդայնացնել<sup>151</sup>: Հիրավի, քաղաքական տվյալ կացության մեջ սա միակ հնարավոր ելքն էր: Ստեղծված իրավիճակից հայ ժողովուրդն իր մեծամասնությամբ ընկալեց ու լուռ համաձայնությամբ, առանց որևէ կրակոցի, ընդունեց ռուս-բուլշևիկներին: Ժողովրդի ֆիզիկական գոյությունը փրկելու միակ ելքը բուլշևիկներին անձնատուր լինելն էր և երկրի իշխանությունը կամովին նրանց հանձնելը: Հայության համակրանքը ռուս բուլշևիկների կողմն էր: «Հայության մեծ մասը, - գրում է Ս. Վրացյանը, - աչքերը հառած էր դեպի հյուսիս՝ փրկությունը Ռուսաստանից էր սպասում»<sup>152</sup>: Այդ գիտակցությունը հավատացած էր, որ «Մեծ Ռուսաստանը փորձով: Ավելին՝ հայ ժողովուրդը հավատացած էր, որ «Մեծ Ռուսաստանը կըշի տաճիկներին մեր երկրից, կվերականգնի առնվազն 1914 թ. սահմանները և տաճիկական յաթաղանը կհեռանա հայ ժողովրդի գլխից»<sup>153</sup>:

ՀՀԴ ներսում ևս կար մի այնպիսի մտայնության հոսանք, որի ներկայացուցիչները ներքուստ չէին համակրում բուլշևիկներին, բայց և առանձնապես մեծ հակակրանք էլ չէին տաժում նրանց հանդեպ: Դա միգուցե գալիս էր նրանից, որ այդ երկու կուսակցություններն էլ անունով համարվում էին սոցիալիստական, հեղափոխական և բացի այդ՝ ՀՀԴ շատ անդամներ ունեին ընդգծված ռուսամետ քաղաքական դիրքորոշում:

Պետք էր հասկանալ հայության հոգեկան վիճակը: Եթե հայ ժողովրդի մի զգալի մասը ըմբռնեց ու ընդունեց բուլշևիզմը՝ առանց ծանոթ լինելու նրա բուն էությանը, ապա լոկ այն բանի համար, որ այն ծագել էր Ռուսաստանում և Հայաստան էր մուտք գործում հյուսիսից: Այդ ժամանակներում արևելահայությունն իր մեծամասնությամբ ունենալով ռուսական կողմնորոշում՝ ռուս-բուլշևիկ անունը լսելով՝ հասկանում էր ընդամենը Ռուսաստան և ռուս ժողովուրդ: Դրա համար էլ 1920 թ. բուլշևիզմի թափանցումը Հայաստան ժողովրդի կողմից գործնականում դիմադրության չհանդիպեց: Այս անգամ էլ (ինչպես 1918 թ. մայիսին) ստեղծվեց մի այնպիսի կացություն, երբ այլընտրանք չկար: Այժմ արդեն միակ ելքն այն էր, որ հարկավոր էր փաստորեն հրաժարվել անկախությունից և ընդունել խորհրդային կարգեր:

Հայաստանի խաղաղ խորհրդայնացման գործում հարկ է առանձնապես հատուկ ընդգծել Դ. Կանայանի խաղացած դերը: Ժողովրդի ու հատկապես զինվորների վրա շատ մեծ էր բանակի հրամանատար Դրոյի ազդեցությունը: Նա գտնում էր, որ իրենց փրկությունը միայն Ռուսաստանի մեջ է, և որ հայկական զորքը չի կռվի ռուսների դեմ: Միաժամանակ, Դրոն հավատացած էր,

<sup>144</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 529, ք. 156:

<sup>145</sup> Է. Ա. Զոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և..., էջ 156 և 160:

<sup>146</sup> «Դրոշակ», 1930, թիվ 10, էջ 240:

<sup>147</sup> Զ. Իրազեկ, Մոսկի անցյալից, Պեյրուք, 1956, էջ 87:

<sup>148</sup> «Հայրենիք», 1923, թիվ 1 (մոյեմբեր), էջ 72:

<sup>149</sup> Ս. Թորոսյան, Հանդիպումներ Քաջազունու հետ, («Հայրենիք», 1952, թիվ 7, էջ 7):

<sup>150</sup> «Հայրենիք», 1925, թիվ 12, էջ 92:

<sup>151</sup> Մատենաշար «Արարատի» (հավելվածներ), Բեյրութ, 1957, էջ 83, «Դրոշակ», 1930, թիվ 10, էջ 240-241, «Հայրենիք», 1923, թիվ 1 (մոյեմբեր), էջ 72, «Ասպարեզ», 28/29 մայիսի 1922 թ.:

<sup>152</sup> Ս. Վրացյան, Նշվ. աշխ., Բեյրութ, 1958, էջ 490:

<sup>153</sup> «Դրոշակ», 1930, թիվ 10, էջ 239:

որ ինքը, ռուսական գործերի գլուխ անցած, թուրքերին պիտի քշի մինչև 1914 թ. սահմանը<sup>154</sup>։

1920 թ. դեկտեմբերի 2-ին, հինգշաբթի օրը, ժամը 12-ին մոտ ստորագրվեց Երևանի համաձայնագիրը, որի հիման վրա բովանդակ իշխանությունը հանձնվում էր Հայկեղկոմին։ Այս ակտի ստորագրումով իրավապես իրենց ուժը կորցնում էին ՀՀ ինչպես բարձրագույն գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, այնպես էլ բարձրագույն օրենսդիր մարմինը՝ **Հայաստանի խորհրդարանը**։ Այլ խոսքով՝ ՀՀ դադարում էր գոյություն ունենալուց։ Բովանդակ իշխանությունը ժամանակավորապես, մինչև Հայկեղկոմի մայրաքաղաք հասնելը, անցնելու էր գինավորական հրամանատարության ձեռքը, որի գլուխ կանգնելու էր Դրոն։

Ըստ Երևանի համաձայնագրի՝ Հայաստանը հռչակվում էր իբրև անկախ խորհրդային հանրապետություն։ Ռուսաստանը պարտավորվում էր պաշտպանել Հայաստանի սահմանները, այդ թվում նաև Նախիչևանը և Ջանգեզուրը։ Նոր իշխանությունը՝ Հեղկոմը, կազմված էր լինելու 5 կոմունիստներից (Ս. Կասյան, Ա. Մոսվյան, Ս. Տեր-Գաբրիելյան, Ա. Բեկզադյան և Ա. Նուրիջանյան) և 2 «ձախ» դաշնակցականներից՝ Դրո և Հ. Տերտերյան և այլն<sup>155</sup>։ Առաջ գնալով՝ ասենք, որ այս համաձայնագրով խոստացված պայմաններից և ոչ մեկը չկատարվեց։ Կատարվեց միայն այն, որ Հայաստանը խորհրդայնացվեց։

Իշխանության փոխանցումը կատարվեց խաղաղ ճանապարհով, որտեղ «ձախ դաշնակցական» Դրոն հանդիսացավ կապող օղակ հին և նոր իշխանությունների միջև։ Նույն օրը՝ դեկտեմբերի 2-ի կեսերին, Ս. Վրացյանը իշխանությունը հանձնելով Դրոյին՝ ժամը 17.50 թույլեին հեռագրում է Թիֆլիս՝ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական լիազոր ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին հետևյալ բովանդակությամբ «Հաշվի առնելով երկրում ստեղծված իրավիճակը՝ կառավարությունը որոշեց հրաժարվել իշխանությունից և քաղաքացիական ու ռազմական իշխանությունը հանձնել հրամանատար Դրոյին»<sup>156</sup>։

Այսպիսով, իշխանության հանձնումը կատարվել է խաղաղ և կամավոր, քաղաքական երկու կողմերի միջև կայացրած համաձայնության հիման վրա։ Ուստի՝ խոսք չէր կարող լինել դիմադրության և անհիմաստ արյուն թափելու մասին։

Այդ նույն օրը, դեկտեմբերի 2-ին, գիշերը ստորագրվեց Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը։ Դեպքերի և իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը, արխիվային վավերագրերը, ականատես մասնակիցների հուշերը հավաստում են, որ Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրի ստորագրման վերջնական հրահանգը փաստորեն տվել է

Դրոն (համեմայնդեպս չի արգելել, որ այն ստորագրվի), որը, ինչպես տեսանք, նույն օրը՝ դեկտեմբերի 2-ին, կեսօրվա ժամերին կնքված Երևանի համաձայնագրով ժամանակավորապես, մինչև Հայկեղկոմի ժամանումը Երևան, որպես դիկտատոր իր վրա էր վերցրել գերագույն իշխանությունը, իսկ Վրացյանի կառավարությունը, մինչև Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը կստորագրվեր, արդեն հրաժարական էր տվել<sup>157</sup>։ Ըստ վարչապետ Ս. Վրացյանի հուշերի՝ Թուրքիայի հետ Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրի ստորագրման լիազորությունը Ա. Խատիսյանին էր տրվել դեկտեմբերի 1-ին, իսկ պայմանագրի ստորագրման նախօրյակին նախկին կառավարությանը ժամանակավորապես փոխարինած Դրոն և Սիլիմը տեղյակ են եղել, որ պայմանագիր պիտի ստորագրվի և չեն արգելել այն<sup>158</sup>։ Պետք է ասել, որ Ալեքսանդրապոլի կողոպտիչ հաշտության պայմանագիրը ստորագրող Ալ. Խատիսյանին լիազորություն տվող կառավարությունը մինչև այդ արդեն հրաժարական էր տվել և երկրորդ, ինչպես նշված էր պայմանագրում, այն իրաժարական էր տվել և երկրորդ, ինչպես նշված էր պայմանագրում, այն իրավական ուժ էր ստանում մեկ ամսվա ընթացքում խորհրդարանում վավերացնելուց հետո, իսկ ինչպես արդեն տեսանք, Հայաստանի խորհրդայնացումով՝ խորհրդարան նույնպես այլևս չկար։ Կնշանակի՝ այդ պայմանագիրը մեռելած խորհրդարան նույնպես այլևս չկար։ Ստորագրման պահից իսկ որևէ իրավական ուժ չուներ։ Ի դեպ, Ալեքսանդրապոլի պայմանագիրը չի վավերացրել նաև Թուրքիան։

Պատմաբանները վիճաբանում են այն հարցի շուրջ, թե Խատիսյանը պետք է ստորագրե՞ր պայմանագիրը, թե՞ ստորագրման հարցը պետք է բողոնել բոլշևիկներին<sup>159</sup>, գտնում ենք, որ պայմանագրի ստորագրումը բոլշևիկներին թողնելով, նրա բովանդակությունը էապես չէր փոխվի, քանզի խորհրդաբուրքական նախնական համաձայնությամբ արդեն գծված էր հայ-թուրքական սահմանը, իսկ դա այն էր, որ Զ. Կարաբեքիրը թելադրել էր Ա. Խատիսյանին Ալեքսանդրապոլում։ Ամենայն հավանականությամբ այդ էր պատճառը, որ խորհրդային կողմից Բ. Լեգրանը, Դրոն կամ որևէ մեկ ուրիշը արգելք չհարուցեցին, որ պայմանագիրը ստորագրվի։ Ալեքսանդրապոլի խայտառակությունը թույլատրվեց հավանաբար նաև նրա համար, որ խորհրդային կառավարությունը անգամ վերջին պահին ամբողջ պատասխանատվությունը, տարածքային կորուստները գցի կործանվող իշխանության վրա և դրանով էլ ավելի վարկաբեկի ժողովրդի աչքում։ Որ խորհրդային կողմը Հայաստանի օգտին տարածքային փոփոխություն չէր մտցնի, նա դա ապացուցեց մի քանի ամիս անց՝ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և ապա հոկտեմբերի 13-ի Կարսի ամիս անց՝ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և ապա հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով։ Ի դեպ, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի Հայաստանին վերաբերող մասերը Ալեքսանդրապոլի պայմանագրից էապես չէին տարբերվում։ Իսկ ինչ վերաբերում է այն փաստարկին, թե Ալեքսանդրապոլի պայ-

<sup>154</sup> «Դրոշակ», 1930, թիվ 10, էջ 239։

<sup>155</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 200, ց. 1, գ. 560, ք. 476։

<sup>156</sup> Նույն տեղում։

<sup>157</sup> «Հայրենիք», 1925, թիվ 12, էջ 91։

<sup>158</sup> Ս. Վրացյան, *Նշվ. աշխ.*, էջ 506։

<sup>159</sup> Է. Ա. Ջոհրաբյան, *Նշվ. աշխ.*, էջ 151։

մանագիրը պատճառ դարձավ, որ հնարավոր չեղավ Մոսկվայում արդյունքի հասնել, ընդամենը մտամարզանք է և նույնպես քննադատության չի դիմանում: Ինչպես կարող էր հրաժարական տված և իշխանությունից արդեն հեռացած կառավարության ներկայացուցչի ուժի սպառնալիքի գործադրմամբ ստորագրած և ոչնչով չվավերացված, ուստի և իրավական ուժ չունեցող պայմանագիրը դառնալ պատճառ ու խանգարիչ հանգամանք իրավագործ կողմերի միջև նոր, օրինական պայմանագիր կնքելու համար: Տակավին Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունների ժամանակ էր ռուս-թուրքական կողմերի միջև սկզբունքային տեսակետ ձևավորվել այն մասին, որ երկու պետությունների միջև վերականգնվելու էր 1877 թ. պետական սահմանը, այսինքն՝ Կարսի մարզը վերադարձվելու էր Թուրքիային: Իսկ այն բանից հետո, երբ քննադական Թուրքիան կեղծավորաբար իրեն «կոմունիստական ու հեղափոխական» էր հայտարարել, այժմ առավել ևս հնարավոր էր ավելի մեծ տարածքներ կորզել: Պատահական չպետք է համարել Ալեքսանդրապոլի բանակցությունների ժամանակ Զ. Կարաբեքիրի կողմից Ալ. Խատիսյանին մատուցած այն անակնկալը, որ «մենք նախապես համաձայնած ենք Մովսիսյանի հետ՝ ստանալու Կարսի նահանգը, ավելին մեզ չեն տար»<sup>160</sup>: Քաղաքական հոգևարքում գտնվող կառավարության ներկայացուցիչը իր վրա վերցրեց պատասխանատվությունը ու ստորագրեց այդ պայմանագիրը միմյայն այն մտահոգությամբ, որ հակառակ դեպքում Հայաստանը կարող էր մնալ առանց հայերի: Իսկ այդ ժամանակ, իրոք, գոյություն ուներ այդպիսի վտանգ:

Այս ամենից հետո մնում էր Հայաստանի հեղկոմի և Կարմիր բանակի մուտքը Հայաստան: Դիլիջանում գտնվող Սեպուհի գլխավորած ուժերը մտադիր չէին դիմադրել Կարմիրների:

Զինվորական նախարար Դրոն դիմադրությունը ավելորդ համարելով՝ համապատասխան հրահանգ էր տվել Սեպուհին: Վերջինս էլ թողնելով ռազմաճակատը՝ Ապարան-Լոռիով անցավ Վրաստան<sup>161</sup>: Իսկ մինչ այդ՝ նոյեմբերի վերջերին, Բաքվից ժամանած հայ բոլշևիկների մի խումբ (Հայհեղկոմը)՝ Սարգիս Կասյանի գլխավորությամբ, և շուրջ 50 կարմիր բանակայինների ուղեկցությամբ, խախտելով օգոստոսի 10-ի հայ-ռուսական ժամանակավոր համաձայնագիրը, նոյեմբերի 29-ին Ղազախով մուտք է գործում Իջևան և հայտարարություն անում Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ<sup>162</sup>: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 30-ին, նրանք մուտք են գործում Դիլիջան և հեռագրով կոմունիստական ողջույն հղում համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ Վ. Ի. Լենինին: Դեկտեմբերի 4-ին Դիլիջան-Սևան-Ախտա խճուղով Երևան հասան կարմիր բանակային զինյալ ուժերը, իսկ դեկտեմբերի 6-ին՝ նաև Հայաստանի Հեղկոմը:

Անհետաքրքրական չէ նաև իմանալ, որ Հայաստանի խորհրդայնացումը առաջինը ողջունեցին, նոյեմբերի 30-ին Ադրբեջանի հեղկոմ Ն. Նարիմանովը, իսկ դեկտեմբերի 1-ին՝ Բաքվի խորհուրդը: Հանրահայտ է նաև, որ վերջինիս հանդիսավոր նիստում ընդունվել էր կեղծ հռչակագիր՝ Ջանգեզուրը, Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը Հայաստանի սոցիալիստական հանրապետության անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ<sup>163</sup>:

Դեկտեմբերի 2-ին պատասխան հեռագրով Հայաստանի խորհրդայնացումը շնորհավորեց Վ. Ի. Լենինը<sup>164</sup>, իսկ դեկտեմբերի 4-ին՝ Ի. Վ. Ստալինը՝ «Պրավդայում» տպագրված իր հայտնի հոդվածով: Շուտով Հայաստանի խորհրդայնացումը ողջունեց նաև Թուրքիան: 1920 թ. դեկտեմբերի 19-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության արտ. գործ. կոմիսար Ահմեդ Մուխթարից և Արևելյան ռազմաճակատի հրամանատար Զյաֆիմ Կարաբեքիրից Հայաստանի արտ. գործ. նախարար Ալ. Բեկզադյանը ստացավ հետևյալ հայտագիրը. «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը մեծ ուրախությամբ դիմավորեց Հայաստանում դաշնակների իշխանության անկումը և նրանց փոխարեն կոմունիստների գործի գլուխ անցնելը, որոնք կոչված են ստանձնելու Ռուսաստանի և Թուրքիայի ժողովուրդների մեջ անկեղծ կապ մը հաստատելու պարտականությունը»<sup>165</sup>:

Ահա այսպես Հայաստանի խորհրդարանական-ռամկավարական Հանրապետությանը փոխարինելու եկավ **Խորհրդային Հայաստանը**: Այդուհանդերձ, Հայաստանի Հանրապետության իրավահաջորդ Խորհրդային Հայաստանը, իր թերություններով ու բացերով հանդերձ, դարձավ հետագա հայ պետականության միակ կրողը, համայն հայության հայրենիքը, նրա ֆիզիկական, հոգևոր ու մշակութային վերընձյուղման միակ հուսալի երաշխավորը:

<sup>160</sup> «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 24 փետրվարի 1921 թ.  
<sup>161</sup> «Հայրենիք», 1925, թիվ 12, էջ 92:

<sup>162</sup> ՀՀ ՊԿ ՊԼ, Ֆ 200, ց. 1, գ. 529, թթ. 145-147:

<sup>163</sup> ՀՀ ՀԶԿ ՊԿ ՊԼ, Ֆ. 1022, ց. 4, գ. 69, թ. 8, գ. 72, թ. 2:

<sup>164</sup> Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 42, էջ 65:

<sup>165</sup> ՀՀ ՀԶԿ ՊԿ ՊԼ, Ֆ. 1022, ց. 3, գ. 288, թթ. 1-3:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՃԱՐՈՒՄԸ

### 1. ՀՅ Դաշնակցություն

Եվ վերջապես մեր առջև ծառացած վերջին հարցը. ի՞նչ ճակատագրի արժանացան հայ քաղաքական կուսակցությունները Հայաստանի խորհրդայնացումից հետո:

Ինչպես հայտնի է, 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի 5-րդ կետով խորհրդային կողմը պարտավորվում էր, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո ՀՅԴ-ն մյուս ընդդիմադիր կուսակցությունների անդամները չպետք է ենթարկվեն հալածանքների՝ իրենց կուսակցական պատկանելության համար<sup>1</sup>: Սակայն հայտնի է, որ խորհրդային-կոմունիստական քաղաքական համակարգը չի ընդունում այլ կուսակցությունների անհրաժեշտությունը, ուստի և չի համոզուժում դրանց գոյությունը: Նա առաջնորդվում է «ով մեզ հետ չէ, մեր դեմ է» կարգախոսով: Այդ իսկ պատճառով էլ խորհրդային իշխանության հաստատումից հետո սկսվեց այլախոհ կուսակցությունների հալածումը, հետապնդումը և ըստ էության արտամղումը Հայաստանից: Այլ խոսքով՝ սկսվեց հայ քաղաքական բոլոր կուսակցությունների՝ ազգային և ոչ ազգային (անշուշտ, բացի կոմունիստականի) վախճանը՝ ոմանց արագ, մյուսներինը՝ համեմատաբար դանդաղ: Իրազեկենք, որ այդ նույն բանը ավելի մեծ մասշտաբներով կատարվում էր ևս. Ռուսաստանում: Հայաստանի կոմկուսը օրինակ էր վերցնում ու պարզապես առաջնորդվում էր ՌԿԲ/Կ ԿԿ-ի դեկավար ցուցումներով:

Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո վերաբերմունքը հայ քաղաքական կուսակցությունների հանդեպ կտրուկ փոխվեց: Նման պայմաններում ոչ պրոլետարական որակվող բոլոր կուսակցությունները անցան ընդհատակ: Փակվեցին նրանց պարբերականները: Ինքնին հասկանալի

<sup>1</sup> Գ. Լազյան, Հայաստան և Հայ Դատը, Ե., 1991, էջ 264, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 502:

է, որ Հայաստանի իրականության պայմաններում առաջին ու գլխավոր հարվածը պետք է ուղղվեր ՀՅԴ-ի դեմ: Բուլշևիկները, Հայաստան մտնելով, անմիջապես հայտարարեցին, թե աջ և «ձախ» Դաշնակցություն իրենք չեն ճանաչում և որ իրենք ճանաչում են մի Դաշնակցություն, որ «բշմամի է իրենց և որի դեմ պիտի պայքարեն իրենք»<sup>2</sup>: Դրանից հետո «ձախ ինտերնացիոնալիստ դաշնակցականների» խմբի անդամներից ոմանք (Ա. Վանցյան, Հ. Ավալյան, Ա. Գրիգորյան և այլք) աճապարեցին մտնել Կոմունիստական կուսակցության շարքերը, իսկ մյուսները նորից վերադարձան Դաշնակցություն, մանավանդ որ նրանցից շատերին բուլշևիկները մերժել էին իրենց շարքերն ընդունել<sup>3</sup>:

1921 թ. հունվարի վերջերին Հայկոմկուսի ԿԿ-ի պլենումը որոշում է ձեռքակալել և մեկուսացնել ՀՅԴ բոլոր կոմիտեների ղեկավարներին և նախկին կառավարության անդամներին: Նպատակալաց պայքար էր մղվում Դաշնակցություն կուսակցության լիակատար վերացման համար: Այս պայքարը մեծ չափով հրահանգվում ու հրահրվում էր դրսից՝ Բաքվից, Մոսկվայից և Անգորայից: Այսպես, օրինակ, հիմք ընդունելով 1921 թ. հունվարի վերջին ՌԿԲ/Կ Կենտկոմի կոլկասյան բյուրոյի կայացրած որոշումը, կոմբյուրոյի անդամներ Գ. Օրջոնիկիձեն և Մ. Օրախելաշվիլին Բաքվից հեռագրով հրահանգում էին Հայկեդկոմի նախագահ Ս. Կասյանին. «Գտնում ենք, որ քաղաքական իրադրությունը հրամայաբար պահանջում է անողոր պայքար մղել Դաշնակցություն կուսակցության լիակատար վերացման համար»<sup>4</sup>:

1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրից հետո ՀՅԴ գերագույն գործադիր մարմինը՝ Բյուրոն, դադարեցրեց իր գործունեությունը Հայաստանի սահմաններում: Սակայն Դաշնակցության առանձին կազմակերպություններ և կուսակցական այլ կառույցներ, անցնելով ընդհատակ, շարունակեցին իրենց գործունեությունը: Դեկտեմբերի կեսերից գործում էր ՀՅԴ - Հայաստանի գաղտնի կոմիտեն, որի լիազորն էր Ս. Վրացյանը: Թուրքական օկուպացիայի պայմաններում գործում էր Շիրակի Կենտրոնական կոմիտեն: Գաղտնի կազմակերպություններ ու խմբեր կային Նոր Բայազետի և Լոռու գավառներում, Ապարանի, Ախտալի, Բաշգյառնիի, Կրբուլաղի, Ջառի, Եղվարդի, Շաղկաձորի և այլ շրջաններում<sup>5</sup>:

Բուլշևիկյան Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) կողմից ձեռքակալվեցին ու բանտարկվեցին ՀՅԴ նախկին ղեկավար շատ գործիչներ՝ Հ. Օհանջանյանը, Հ. Քաջագունին, Ավ. Սահակյանը, Ա. Դարբինյանը, Վ. Նավասարդյանը, Հ. Տեր-Դավթյանը, Լ. Շանթը, Ն. Աղբալյանը, Մ. Մուսինյանը, Հա-

<sup>2</sup> «Դրոշակ», 1930, թիվ 10, էջ 240:

<sup>3</sup> «Դրոշակ», 1930, թիվ 10, էջ 240, «Վերջին լուր», Կ. Պոլիս, 1 ապրիլի 1921:

<sup>4</sup> ՀՅԴ և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ. պրոֆ. Վ. Ղազախեյյան), Ե., 1999, էջ 17:

<sup>5</sup> Հայաստանում Սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922 թթ.), Ե., 1987, էջ 196-197, Արշ. Մ. Հակոբյան, Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Ե., 1948, էջ 56-57:

մագաստը և շատ ուրիշներ: Միայն Երևանում ձերբակալվեցին 200-ից ավելի դաշնակցականներ<sup>6</sup>: 1921 թ. հունվարին թուրքերի պահանջով Հայաստանից հեռացվեց կարմիր բանակի հրամանատար Դրոն, իսկ շուրջ 1500-հոգիանոց նախկին սպայակազմը (անբարեխոյսի, դաշնակցականի պիտակով) մույն-պես արտաքսվեց:

Հայաստանի խորհրդայնացումից ու հատկապես 1921 թ. փետրվարյան ապստամբությունից հետո ՀՅԴ-ն ժողովրդի աչքում վարկաբեկելու նպատակով նրա դեմ հրապարակային դատ կազմակերպվեց: Դատավարությունը տեղի ունեցավ 1921 թ. դեկտեմբերի սկզբներին (2-ից - 13-ը) Երևանի «Բանվորական ակումբում»՝ Դ. Տեր-Սիմոնյանի նախագահությամբ: Մեղադրյալի աթոռին, հանձին Հ. Յաղուբյանի, նստած էր Դաշնակցություն կուսակցությունը:

Կեղծելով պատմությունը և խեղաթյուրելով իրականությունը՝ ցարական սատրապների նման Հայաստանի բռնակալները ևս դատական գործ սարքեցին ՀՅԴ դեմ՝ տալով մի իսկական թամաշա-ներկայացում: Դատարանի նախագահ Դ. Տեր-Սիմոնյանը ՀՅԴ դեմ ներկայացրեց 15 կետից բաղկացած մեղադրական և վճռվեց նրան դատապարտել մահվան աշխնք՝ լիկվիդացնել (վերացնել)<sup>7</sup>: Ի թիվս այլ, հիմնականում անհիմն, մեղադրանքների՝ ՀՅԴ մեղադրվեց ցարական կառավարության գործակալ լինելու մեջ: Հիրավի, ավելի անհեթեթ մեղադրանք դժվար է պատկերացնել: Այնինչ, իրականում, սկսած Հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին օրենքի ընդունումից ի վեր ՀՅԴ-ն ինքնակալության դեմ ամենից ավելի անհաշտ ու հետևողական պայքարող ազդեցիկ քաղաքական ուժերից էր, գուցեև բոլշևիկներից ավելի ազդեցիկ ու առարկալիսկան:

ՀՅԴ ազատամարտիկները, բացի սուլթանական բռնավարչակարգից, մարտնչում էին նաև ցարական ինքնակալության դեմ, ռուս-թուրքական սահմաններին և այլուր գոհվում տասնյակներով ու հարյուրներով: Իսկ 1905-1907 թթ. համառուսաստանյան առաջին հեղափոխության պարտությունից հետո ցարական իշխանությունները նշանառության տակ էին վերցրել ՀՅԴ՝ նպատակ դնելով վերջնականապես լիկվիդացիայի (կազմացրման) ենթարկել նրան: Հենց նման համձնարարականներ ստանալով էր, որ աշխատում էր ՀՅԴ գործի պատասխանատու քննիչ Ն. Լժինը: Պատմությանը որքան անգիտակ պետք է լինել չըմբռնելու, չհասկանալու այն փաստը, որ այդ նույն ցարական կառավարությունը 1908-1912 թթ. ընթացքում, բուլշևիկներից շատ ավելի շուտ և բուլշևիկների նման, կեղծ մեղադրանքներով 40 հազար էջանոց դատական գործ կազմեց և մի քանի ամիս շարունակ՝ 1912 թ. հունվարի 17-ից մինչև մարտի 22-ը, Պետերբուրգում դատավարություն անցկացրեց, որը պատմության մեջ հայտնի է որպես «ՀՀ Դաշնակցության գործ» անունով: Հիրավի, այս դատը դասվում է Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական

<sup>6</sup> ၁၁ ဇူလိုင် ၁၉၄၅, ဒီ. ၁၁၄, ဂ. ၂, ခ. ၇၉, ပ. ၁:

<sup>7</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ժ. 4047, ց. 1, գ. 199, *pp.* 1-31:

մեծ իատերի թվին<sup>7</sup>: Չորս տարում 2000-ից ավելի տարբեր զբաղմունքի ու խավի (գրականագետ, ուսուցիչ, առևտրական, հոգևորական, երկրագործ, արհեստավոր, բանվոր և այլն) մարդ բանտարկվեց<sup>8</sup>:

Արդ, ցարիզմի նման Դաշնակցությանը դատում էր նաև Հայկոմկուսը։ Համանման եղանակով, ՀՅ Դաշնակցության դեմ մեկ տասնյակից ավելի մեղադրանքներ ներկայացնելով, դատարանի նախագահը առաջարկում էր պատժի առավելագույն աստիճանը՝ մահապատիժ. այն է՝ «Դաշնակցությունը իբրև կուսակցություն Հայաստանի արևի տակ տեղ չունի և մահվան պիտի դատապարտվի»<sup>10</sup>։ Նշենք նաև, որ հրապարակային դատավճիռը ներկայացնելու ժամանակ դատարանի անդամ, հասարակական մեղադրող ու դատապաշտպան ընդհանուր թվով մեկ տասնյակից ավելի պաշտոնական անձանցից միակ մարդը, որ, գիտականորեն ապացուցելով ու իրավաբանորեն հիմնավորելով, դեմ է արտահայտվել դատարանի վճռին, դա դատապաշտպանի պարտավորություն ստանձնած, հետագա մեծանուն պատմաբան և կուսակցական-պետական գործիչ Աշոտ Հովհաննիսյանն էր։ Ի պատիվ իրեն՝ տեղեկացնենք, որ նա այդ դատավարությունը որակել է որպես «թյուրիմացություն», ավելացնելով՝ «Դաշնակցության գործունեությունը այսօր հայոց պատմության սեփականությունն է, և այդ գործունեությունը պետք է ենթակա լինի մի ուրիշ դատի, ավելի ակեղ, քան ներկա դատը, դա պատմության դատն է»<sup>11</sup>։

ՀՅԴ դեմ հրապարակային դատ կազմակերպելուց հետո մախապատ-  
րաստվեց նրա դարձյալ հրապարակային լուծարման գործը: Այդ գործի մա-  
խապատրաստումը և անցկացումը հանձնարարվել էր երիտասարդ կոմու-  
նիստ, գրող Ա. Բակունցին, մախկին «ձախ դաշնակցական» Հ. Ավալյանին և  
ուրիշների<sup>12</sup>: Ստեղծվեց Դաշնակցության լուծարման բյուրո (մախ՝ Ա. Բա-  
կունց), որի վրա դրվեց Հայաստանի մախկին դաշնակցականների համագու-  
մարի մախապատրաստման ու հրավիրման գործը, և այդ ընթացքում էլ պետք  
է ընդունվեր Դաշնակցության լուծարման ակտը:

Համագումարը գումարվեց 1923 թ. նոյեմբերի 20-24-ին: Այն արտահայտում էր Հայաստանի 4000-ից ավելի շարքային դաշնակցականների կամքը: ՀՅԴ լուծարման համագումարի նիստերը նախագահում էր Ալսեկ Բակունցը: Համաժողովի շատ մասնակիցների կեղծ և անկեղծ ելույթներից ու բանավեճերից հետո համագումարը վճիռ կայացրեց՝ լուծարման ենթարկել Հայաստանի Դաշնակցական կազմակերպությունները<sup>13</sup>: Նախատեսվում էր այս համագումարից հետո հրավիրել նաև Դաշնակցության լուծարման համակուլկասյան համագումար: Բոլշևիկները ձգտում էին նման համագումարի հասնել

<sup>8</sup> ՀՀ ՀԶԿՓ ՊԿԱ, Ֆ. 4047, ց. 2, գ. 10, ք. 1:

<sup>9</sup> Նույն տեղում, ք. 3:

<sup>10</sup> Նույն տեղում, գ. 1, գ. 199, բ. 10:

<sup>11</sup> ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ. Ֆ. 4047, գ. 1, գ. 199, pp. 30-31:

<sup>12</sup> ՆՈՒՆ տեղում, գ. 213, բբ. 1, 4:

<sup>13</sup> ՆՈՒՅՆ տեղում, գ. 222, թ. 1:

նաև արտասահմանում, սակայն դա չհաջողվեց: Ինչպես արդեն ասվեց, հիշյալ համագումարի կապակցությամբ, Խ. Հայաստանի տարածքում խաբվելով, ինքնաբացահայտվել և ցուցակագրվել էին ավելի քան 4000 դաշնակցական: Հասկանալի է, հենց այս ցուցակների հիման վրա հետագայում բռնաճնշումների ենթարկվեցին գրեթե բոլոր նախկին դաշնակցականները<sup>14</sup>:

1924 թ. փետրվարի սկզբին՝ 1-3-ը, նույն ձևով կազմակերպվեց նաև Հայաստանի երիտասարդ դաշնակցականների (Դաշերիտմիության) ինքնալուծարման համահայաստանյան համագումարը<sup>15</sup>: Այս ամենից բավարարում ու հանգստություն չգտնելով, երկու տարի անց, Հայկոմկուսը ՀՅԴ դեմ կազմակերպեց ևս մեկ այլ հրապարակային դատավարություն: Այդ դատավարությունը անցկացվեց 1926 թ. հոկտեմբերին՝ ՀՍԽՀ Գերագույն դատարանի դատական կոլեգիայի նիստում: Դրա առիթը ոճն Մ. Խուշոյանի ահաբեկչական սպանությունն էր:

ՀՅԴ պաշտոնական լուծարումից հետո էլ խորհրդային իշխանության անվտանգության ու հետախուզական մարմինները գտան, որ 1923 թ. Հայաստանում հիմնվել է «խորհրդողներից դուրս օպոզիցիա»՝ ՀՅԴ գաղտնի Կենտրոնական կոմիտե՝ խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար<sup>16</sup>: Խորհրդային քարոզչությունը լուրեր էր տարածում, թե դաշնակցական-կուլակային, հակահեղափոխական-քնամական ուժերը բանդիտական ելույթներ են կազմակերպում, վնասարարություններ անում խորհրդային կարգերը տապալելու նպատակով: Եվ ահա նման դասակարգային, քաղաքական պայքարի օրինակի թվին դասվեց 1925 թ. հուլիսի 26-ին Թալիսի շրջանի Ն. Աղջաղալա (այժմ Ն. Բազմաբերդ) գյուղի գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանի սպանությունը նախկին մի դաշնակցականի կողմից: Այդ ակտը վերագրվեց ՀՅԴ կուսակցությանը, որպես նրա ձեռքի գործ և հրապարակային դատավճռով Դաշնակցությունը որակվեց որպես տեռորիստական կուսակցություն: Ակներև է, որ իր ժամանակին անուն համաձայն հրապարակային այդ հերթական ներկայացման նպատակն էր ժողովրդի աչքում մեկ անգամ ևս վարկաբեկել այդ կուսակցությանը:

ՀՅԴ լուծարումից և Հայաստանից վտարումից հետո նրա կառույցները շարունակեցին գործել արտասահմանում՝ Սփյուռքում: Որպես իր գոյության հիմնական ձև՝ Դաշնակցությունը դարձյալ շարունակեց հետամուտ լինել Հայ Դատին՝ դրա տակ տեսնելով Թուրքահայաստանի և Ռուսահայաստանի միավորումը մեկ անկախ պետական մարմնի մեջ<sup>17</sup>: Եվ հետագա 70 տարիներին այս կուսակցության պայքարի կարգախոսն է եղել «Միացյալ և Անկախ Հայաստանը»: Միաժամանակ ՀՅԴ է եղել Հայոց ցեղասպանության միջազ-

գային ճանաչման համար պայքարող ամենագորեղ և հետևողական ուժը: Հայ Դատից ու պահանջատիրությունից հետո ՀՅԴ առջև կանգնած երկրորդ ռազմավարական խնդիրը համարվում էր հայապահպանությունը, թե՛ Հայաստանում և թե՛ ի սփյուռս աշխարհի՝ պայքար ազգային ծուլման և ուժացման ամեն մի վտանգի դեմ: Այս երկու կարևորագույն գերխնդիրներից հետո միայն ՀՅԴ երրորդում է ընկերվարության (սոցիալիզմի) գաղափարը:

Խորհրդային ժամանակաշրջանում թեև ՀՅԴ ֆիզիկապես հեռացված էր իշխանությունից ու վտարված հայրենիքից, սակայն նա հոգեպես շարունակում էր մնալ հայ ժողովրդի ամենաազդեցիկ քաղաքական ուժը: Զնայած խորհրդային ժամանակաշրջանում նա խոշոր հարվածներ ստացավ դրսից ու ներսից, աջից ու ձախից, բայց, իր հիմքում ամբարած ունենալով ազգային վեհ գաղափարներ ու նվիրական ձգտումներ, պահպանեց իր կենսունակությունը: Դաշնակցությունը մինչև վերջ մնաց ընդդիմադիր բուլեհիկյան ամբողջատիրությանը և նրա մեթոդներին:

Արդեն մեր ժամանակներում՝ կոմունիստական ամբողջատիրության փլուզման, Արցախյան շարժման և Հայաստանի անկախացման ժամանակաշրջանում ՀՅԴ կրկին բացահայտեց իր գոյությունը Հայաստանում և ամենայն պատասխանատվությամբ ու նվիրումով ներգրավվեց ժողովրդին հուզող համազգային-քաղաքական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման դժվարին գործում:

## 2. Էսեներ

Հայաստանի խորհրդայնացումից հետո Ռուսաստանի սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության Հայաստանի կազմակերպությունը իր «կաշին» փրկելու և բուլեհիկյան կուսակցության ողորմածությանը արժանանալու համար՝ գաղափարապես ու կազմակերպչորեն «վերակառուցվեց»: Կազմակերպության շարքերում տեղի ունեցան խմորումներ ու ներքին պայքար, որն իր վախճանական հանգրվանին հասավ 1921 թ. փետրվարին՝ Հայաստանում հակախորհրդային ապստամբության փուլում: Փետրվարի 18-ի ապստամբության հաղթանակից հետո Հայաստանի էսեռական կազմակերպությունը պառակտվեց երկու մասի: Սրանց աջ թևը ապստամբության ժամանակ համագործակցեց ՀՅԴ և ապստամբ ժողովրդի հետ և նրա ներկայացուցիչներից երկուսը (Վ. Մինախորյանը և Ա. Խոնդկարյանը) նույնիսկ մտան Ս. Վրացյանի գլխավորած կառավարության՝ «Հայրենիքի փրկության կոմիտեի» մեջ: Էսեռների մյուս՝ փոքրաթիվ մասը՝ «ձախերը» (Լ. Թումանյան, Տ. Մուշեղյան, Գ. Զուբարյան, Ռ. Ենգիբարյան), իրենց կապերը խզելով կուսակցության պաշտոնական կենտրոնի հետ և հենց «Հայրենիքի փրկության կոմիտեի» հաղթանակի օրերին հիմք դրեցին հեղափոխական, սոցիալիստական մի նոր՝ «Հայաստանի սոցիալիստ-հեղափոխական ինտերնացիոնա-

<sup>14</sup> «Հայոց պատմություն» (պրոֆ. Վ. Բ. Բարխուդարյանի խմբ.), Ե., 1994, էջ 308:

<sup>15</sup> ՀՀ ԼԶԿՓ ՊԿԱ, Ֆ. 4047, ց. 1, գ. 229, քք. 1-76:

<sup>16</sup> «Դաշնակցության տեռորիստական գործը» (նյութեր Մ. Խուշոյանի տեռորիստական սպանության դատավարությունից), Ե., 1927, էջ 336-340:

<sup>17</sup> «Դրոշակ», Ժնև, 1925, թիվ 1 (հուլիս), էջ 1-4:

լիստների կուսակցությանը»<sup>18</sup>։ Վերջիններս լիովին կանգնեցին խորհրդային Հայաստանի պաշտպանության դիրքերում։

1921 թ. ապրիլի սկզբներին՝ Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո, Դաշնակցությանը համագործակցած ակտիվիստ էսեռները, մյուս այլախոհների հետ միասին, հեռացան արտասահման, իսկ շարքայիններից շատերը մնացին տեղում՝ պարտավորվելով օրինապահ դիրք գրավել խորհրդային կարգերի նկատմամբ։

Վտարանդիի հայ էսեռները, ինչպես նաև սոցյալ-դեմոկրատները, զգալի չափով մերժեցան Դաշնակցությանը։ Եվ պատահական չէ, որ 1920-ական թվականներից Դաշնակցության մամուլում («Հայրենիք», «Վեմ» և այլն) մենք հաճախ տեսնում ենք նրանց առանձին գործիչների աշխատությունների և հուշերի տպագրությունը։

Ինչ վերաբերում է Սոցիալիստ-հեղափոխական ինտերնացիոնալիստների կուսակցությանը, ապա պետք է ասել, որ սրանք աշխատեցին ամեն կերպ սիրաշահել Կոմունիստական կուսակցությանը և խորհրդային իշխանությանը՝ հուսալով պահպանել իրենց կազմակերպության ինքնուրույն գոյությունը։

1921 թ. ապրիլի 29-ին Հայաստանի սոցիալիստ-հեղափոխական ինտերնացիոնալիստների կուսակցության ժամանակավոր Կենտրոնական կոմիտեն հրապարակեց հռչակագիր իր քաղաքական դավանանքի, դիրքորոշման, նպատակի ու ձգտումների մասին<sup>19</sup>։ Նրանք իրենց լիակատար համերաշխությունն էին արտահայտում «Մեծ հոկտեմբերի» և «3-րդ կոմիտեների» գաղափարներին։ Հայաստանի ձախ ինտերնացիոնալիստ էսեռները վերահարմարվելով, որդեգրեցին բուլշևիկյան և կիսաբուլշևիկյան մարտավարություն և կարգախոսներ։ Օրինակ, 1921 թ. մայիսին կայանում տոնակատարության կապակցությամբ նրանք հանդես եկան հետևյալ լոզունգներով. «Կեցցե՝ 3-րդ ինտերնացիոնալը», «Կեցցե՝ խորհրդային Ռուսաստանը», «Կեցցե՝ միջազգային սոցիալիստական հեղափոխությունը», «Կեցցե՝ խորհրդային սոցիալիստական հանրապետությունների եղբայրական դաշինքը» և այլն<sup>20</sup>։ Հայաստանի էսեռ ինտերնացիոնալիստները ևս ողջունում էին բուրժուազիայի տիրապետության տապալումը և բանվորագյուղացիական դիկտատուրայի հաստատումը։

Սակայն մյուս կուսակցությունների պես Հայ էսեռ ինտերնացիոնալիստների կուսակցությունը ևս ենթարկվեց լուծարման, քանզի, սոցիալիզմի հիմքերի կառուցմանը զուգընթաց, պետք է վերացվեին բոլոր այլախոհ համարվող կուսակցությունները՝ ապահովելու համար Կոմունիստական կուսակցության անբաժան մենիշխանությունը։

1922 թ. Մոսկվայում անցկացվեց հրապարակային դատավարություն Համառուսական էսեռական կուսակցության Կենտկոմի և մյուս ղեկավար 34 անդամների նկատմամբ<sup>21</sup>։ Մենք տվյալներ չունենք համաձայն դատավարության մասին Հայաստանում։ 1923 մարտին համառուսաստանյան մասշտաբով լուծարքի ենթարկվեց էսեռների կուսակցությունը<sup>22</sup>։ Էսեռ ինտերնացիոնալիստների կուսակցության լուծարումից հետո, նրա անդամներից շատերը անհատական կարգով մտան Կոմունիստական կուսակցության շարքերը։ Սակայն դա չազատեց նրանց հետագա բռնադատություններից։ 1930-ական թվականներին, այլ կուսակցությունների նման, մախկին էսեռները ևս որակվեցին այլախոհ ու քննաձևական տարր, և նրանցից շատերը բանտարկվեցին ու տանջամահ եղան խորհրդային գուլագներում ու սիբիրյան աքսորավայրերում։

### 3. ՄԴ Հնչակ

Հայ քաղաքական կուսակցություններից Մ Դ Հնչակյանները նույնպես մեծ բավականությամբ ընդունեցին խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում։ Ա. Կիտուրը վկայում է, որ խորհրդայնացման փուլում հնչակյանները ոչ թե դեպքերի պատիվ դիտողի դերում էին, այլ իրենց ուժերի ներածին չափ նպաստում էին խորհրդային կարգերի հաստատմանը<sup>23</sup>։

Հետաքրքրական է այն փաստը, որ Հայաստանի խորհրդայնացումից մի քանի օր անց՝ դեկտեմբերի 9-ին, Հայիեղկոմը հարցապնդման ձևով դիմել էր Հնչակյան կուսակցության Երևանի մասնաճյուղին (հատվածին), պարզելու համար, թե ինչպիսին է նրանց վերաբերմունքը խորհրդային իշխանության նկատմամբ։ Եվ ահա երկու օր անց՝ դեկտեմբերի 11-ին Հնչակյանների Երևանի մասնաճյուղի վարչությունը՝ նախագահ Գեդունու ստորագրությամբ, տալով առաջադրված հարցերի պատասխանները, լիովին հավանություն է տվել և՛ Հայաստանի խորհրդայնացմանը, և՛ ցանկություն է հայտնել, որ Հայաստանում էլ հաստատվի պրոլետարիատի դիկտատուրա Ռուսաստանի օրինակով, ինչպես նաև, որ Խ. Ռուսաստանի աջակցությամբ ամբողջ Կովկասը խորհրդայնացվի<sup>24</sup>։ Այդ փաստաթղթում մասնավորապես կուզենայինք ընդգծել հետևյալը. «Մեր կուսակցությունը ջերմազին ողջունում է կատարված հեղաշրջումը և ստեղծված խորհրդային իշխանությունը Հայաստանում»<sup>25</sup>։ Հնչակի կարգախոսն է դառնում «Պրոլետարներ, բոլոր երկրների, միացե՛ք»։

<sup>21</sup> С. Г. Меликян, Борьба большевистских организаций закавказья..., Е., 1983, с. 5 /автореферат/.

<sup>22</sup> Մ. Հ. Մելիքյան, Սոցիալիստ-հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի իսթաշատ քաղաքներում 1900-1920 թթ., Ե., 1997, էջ 128 և 131։

<sup>23</sup> Ա. Կիտուր, նշվ. աշխ., էջ 493։

<sup>24</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, Ժ. 4045, ց. 1, գ. 245, քք. 1-2։

<sup>25</sup> Նույն տեղում, ք. 1։

<sup>18</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, Ժ. 4033, ց. 7, գ. 59, ք. 4, «Կոմունիստ», Երևան, 16 ապրիլ 1921 թ.։

<sup>19</sup> ՀՀ ՀԶԿԳ ՊԿԱ, Ժ. 4033, ց. 7, գ. 59, քք. 1-4։

<sup>20</sup> ՀՀ ՊԿԱ, Ժ. 404, ց. 1, գ. 41, ք. 1։

Հայաստանի խորհրդայնացումից հետո Հնչակյան կուսակցությունը անվերապահորեն կանգնեց խորհրդային-համայնավարական կարգերի պաշտպանության դիրքերում: «Մարքսիստ Ս. Դ. Հնչակյան կուսակցություն,- կարդում ենք հնչակյան մամուլում,- խորհրդային Հայաստանի վարչակազմը կրնկատե իր կուսակցության հետապնդած վարչակազմը, սկսյալ այն պատմական օրեն, երբ Հայաստանի մեջ հաստատվեցավ խորհրդային դրությունը»<sup>26</sup>: Ա. Կիտուրի վկայությամբ՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո շատ հնչակյաններ կարծեցին, որ կուսակցության մոտակա և հեռավոր նպատակները արդեն իրականացված են, ուստի և այլևս կարիք չկա Ս Դ. Հնչակյան կուսակցության: Դրա հետևանքով էլ շատ տեղերում սկսվեցին, առանց այն էլ քույլ, այս կուսակցության կազմալուծումը և քայքայումը<sup>27</sup>:

Հայաստանի խորհրդայնացումից հետո նոր փոփոխված քաղաքական իրադրության պայմաններում անհրաժեշտություն զգացվեց հրավիրել կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողով (համագումար)՝ վերանայելու համար կուսակցության ծրագիրն և տակտիկական մի շարք դրույթներ ու մոտեցումներ: Այդ նպատակով Ս. Դ. Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունը 1921 թ. հունվարի 10-ին Թիֆլիսում հրապարակեց մի շրջաբերական հայտարարություն՝ կուսակցության հերթական ընդհ. պատգամավորական ժողով հրավիրելու մասին<sup>28</sup>:

Նախատեսվում էր այն հրավիրել 1921 թ. հունիսի 15-ին<sup>29</sup>, Երևանում, եթե անակնկալ հանգամանքների պատճառով հնարավոր չլինի, ապա այն պիտի գումարվեր Սոֆիայում: Շրջաբերականում ներկայացված էր նաև հնարավոր օրակարգը՝ բաղկացած հինգ խումբ հարցերից՝ ա) գեկուցումներ և հաշվետվություններ, բ) վերաբերմունքը դեպի Խ. Հայաստանը, գ) 3-րդ ինտերնացիոնալին միանալու հարցը, դ) ծրագրային և տակտիկական հարցեր և ե) ընտրություններ<sup>30</sup>: Սակայն արտասահմանի հնչակյան մասնաճյուղերը չարձագանքեցին կուսակցության կենտրոնական վարչության շրջաբերականին և պատգամավորական ժողովը չկայացավ: Հարկ է նշել, որ հնչակյանների արտասահմանյան կազմակերպությունները, համեմատած Անդրկովկասի ու Ռուսաստանի կազմակերպությունների հետ, խորհրդային իշխանության նկատմամբ վերաբերմունքի և Կոմունիստական կուսակցության մեջ ծուլվելու խնդիրներում եղել են ավելի գուսպ, զգուշավոր ու վերապահ:

Այս և այլ հանգամանքների պատճառով հնչակյանների համագումարը չկայացավ: Աստիճանական խորթացում և սահմանազատում տեղի ունեցավ արտասահմանի և խորհրդային երկրի հնչակյանների միջև: Հնչակյանների

Թիֆլիսում նստած կենտրոնական վարչության կապերը աստիճանաբար կտրվում են արտասահմանյան մասնաճյուղերի հետ: Խորհրդային հատվածի հնչակյանները թե՛ իրենց քյուր համոզմունքով և թե՛ արտաքին ու ներքին հարկադրանքով քիչ-քիչ գնացին դեպի ինքնալուծարման և Կոմունիստական կուսակցության մեջ ծուլվելուն:

1923 թ. փետրվարի 5-ին Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունը դիմեց Կոմիտեների 4-րդ կոնգրեսին՝ խնդրելով ընդունվել նրա շարքերը «իբրև կոմունիստական աշխարհայացք և հիմնական դավանանք ունեցող կազմակերպություն»<sup>31</sup>: Ընդ որում՝ կենտրոնական վարչությունը հայտարարություն էր արել, որ ընդունում է Կոմիտեների հավատո հանգանակը հանդիսացող 21 հայտնի սկզբունքները և հրաժարվում է «նացիոնալիզմի ճղճիմ հաշիվներից»<sup>32</sup>:

Այդ նպատակով Մոսկվա է գործուղվում կուսակցության կենտրոնական վարչության ատենապետ Երկաթը: Սակայն Մոսկվայում հնչակյաններին հասկացնում են, որ իրենք պետք է լուծարվեն որպես ինքնուրույն կուսակցություն, անհատապես մտնեն Կոմունիստական կուսակցության շարքերը և այդ ճանապարհով, ինքնըստինքյան, կանդամագրվեն Կոմիտեներին:

Այլ ելք չունենալով, կենտրոնական վարչությունը շրջաբերականով դիմեց թե՛ կովկասյան և թե՛ արտասահմանյան մասնաճյուղերին, որպեսզի շտապ կերպով հայտնեն իրենց դիրքորոշումները Կոմունիստական կուսակցության մեջ ծուլվելու խնդրում<sup>33</sup>: Կովկասյան մասնաճյուղերը հավանություն են տալիս և համապատասխան վճիռներ են կայացնում՝ լուծարելու իրենց կազմակերպությունները և անհատապես մտնելու ՌԿ(բ)Կ շարքերը<sup>34</sup>:

Իսկ հնչակյանների արտասահմանյան մասնաճյուղերը հիմնականում ձեռնպահ են մնացել այդ հարցում: Ասում ենք հիմնականում, որովհետև մի փաստաթղթում հայտնվում է, որ «Եգիպտոսի, Պարսկաստանի և մասամբ Ամերիկայի մասնաճյուղերը պաշտոնապես հավանություն են տվել կենտրոնական վարչության բռնած դիրքին»<sup>35</sup>:

1924 թ. հունիսի 2-ի կենտրոնական վարչության կովկասյան մասնաճյուղերին ուղղված շրջաբերականից հետո սկսվեց հնչակյան կազմակերպությունների ինքնալուծարման և ծուլման գործընթացը: Հնչակ կուսակցության Երևանի մասնաճյուղի վարչության նախագահ Ս. Բաբադյանը 1924 թ. նոյեմբերի 13-ին Հայաստանի Կոմկուսի կենտկոմին է հղում մասնաճյուղի ընդհանուր ժողովի ընդունած հռչակագիրը և կից գրությունը՝ Կոմկուսին ծուլվելու

<sup>31</sup> Նույն տեղում, գ. 275 թ. 1:

<sup>32</sup> Նույն տեղում, թր. 3-4:

<sup>33</sup> ՀՀ ԼԶԿԳ ՊԿԱ, Ժ. 4045, գ. 1, գ. 284, թ. 1:

<sup>34</sup> Բայց Կովկասում եղել են առանձին հնչակյան գործիչներ, որոնք դեմ են եղել կազմակերպությունների լուծարմանը: Այդպիսիներից էին Տիգրան Ղազանջյանը և Տիգրան Ռսկանյանը, որոնք էլ կենտրոնական վարչության որոշմամբ վտարվում են կուսակցությունից (Տես՝ ՀՀ ԼԶԿԳ ՊԿԱ, Ժ. 4045, գ. 1, գ. 284, թր. 1-2):

<sup>35</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> «Երիտասարդ Հայաստան», 2 նոյեմբերի 1945 թ.:

<sup>27</sup> Ա. Կիտուր, նշվ. աշխ., էջ 500:

<sup>28</sup> ՀՀ ԼԶԿԳ ՊԿԱ, Ժ. 4045, գ. 1, գ. 248, թ. 1:

<sup>29</sup> Հունիսի 15-ը Հնչակյանների համար նվիրական օր է, քանզի այդ օրն են տեղի ունեցել 20 հնչակյանների կախաղանները:

<sup>30</sup> ՀՀ ԼԶԿԳ ՊԿԱ, Ժ. 4045, գ. 1, գ. 248, թ. 1:





ընդհանուրիս հայրենիքի պաշտպանության և բարգավաճման գործում<sup>46</sup>։ Սակայն նման հավաստիացումներն ու խոստումները ամենևին էլ չփրկեցին ՀՍԴԲԿ-ին՝ ոչ մի բանի առջև կանգ չառնող բոլշևիկների հաշվեհարդարից։ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով Հայկեղևի իշխանության գլուխ անցնելուց մի քանի օր անց նորահիմն ՉԵԿԱ-ի կողմից սկսվեցին ձերբակալությունները։ «Սպեցիֆիկները» ևս, հայ քաղաքական մյուս կուսակցությունների նման, արժանացան նույնաբանությամբ խուզարկությունների, ձերբակալությունների, հետապնդումների ու հալածանքների։ Ձերբակալվածների թվում էր նաև ՀՍԴԲԿ ղեկավար գործիչ, բոլշևիկների անհաշտ հակառակորդ Բախչի Իշխանյանը<sup>47</sup>։ Նա ձերբակալվեց Հայաստանի խորհրդայնացման առաջին օրը՝ դեկտեմբերի 2-ին։ Իր վկայությամբ՝ բանտարկության հրամանը տրվել էր հայտնի բոլշևիկ, պետական գործիչ ու ականավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի թելադրանքով<sup>48</sup>։ Վերջինս այդ ժամանակ զբաղեցնում էր Բ. Լեգրանի դիվանագիտական միսիայի տեղեկատու բաժնի վարիչի պաշտոնը։ Բ. Իշխանյանը երկու ամիս հայտնվեց խորհրդային բանտում, որի մասին թողել է սահմնկեցուցիչ դեպքերով հարուստ հիշողություններ<sup>49</sup>։

Բանտում եղած ժամանակ Բ. Իշխանյանը գաղտնի մամակներով խնդրում էր իր կուսակից ընկերներին՝ Դ. Անանունին, Գ. Պիճիկյանին, Տ. Տրդատյանին իրեն բանտից ազատել<sup>50</sup>։ Մյուս կողմից նա դիմում էր Հայաստանում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցչությանը իրեն թույլ տալ աշխատել Խ. Հայաստանում իր մասնագիտությամբ՝ տնտեսավիճակագրական ուսումնասիրությունների գործով։

1920 թ. դեկտեմբերի 4-ին թվագրված Բ. Իշխանյանի դիմում խնդրանքում կարդում ենք. «Եվ երբ ես այժմ տեսնում եմ, որ իրերի անողոր ղասավորությամբ հայ դժբախտ ժողովրդի վերջին բեկորների փրկությունը պայմանավորված է նրա երկրի սովետական վարչաձևով և հատկապես, ուժեղ Սովետական Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքով, ապա ես ոչ միայն ոչինչ չունեմ և չեմ ունենա իրերի նոր դասավորության դեմ, այլև պատրաստ եմ բոլոր ուժերը ի սպաս դնել՝ Սովետական Հայաստանում և անդուլ խանդով գործելու սիրաձև մասնագիտական աշխատանքների սահմաններում»<sup>51</sup>։ Բ. Իշխանյանը բանտից ազատվեց միայն 1921 թ. փետրվարյան հայտնի իրադարձությունների շնորհիվ։

Բայց որպես ձախակողմյան տիպի կուսակցություն՝ ՀՍԴԲԿ անդամների մի զգալի մասը, շատերի նման, անցնում է Բոլշևիկյան կուսակցության

<sup>46</sup> ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, Ժ. 1022, ց. 7, գ. 75, թ. 1։

<sup>47</sup> Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 511։

<sup>48</sup> Բ. Իշխանյան, Երկու ամիս բոլշևիկյան բանտում, Գահիրե, 1924, էջ 9, 24։

<sup>49</sup> Բ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 147-172։

<sup>50</sup> Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի բանգարան (ԳԱԹ), Դ. Անանունի ֆոնդ, Գ. 50, թ. 15։

<sup>51</sup> ԳԱԹ, Դ. Անանունի ֆոնդ, Գ. 50, թ. 10։

շարքերը<sup>52</sup>, իսկ ոմանք էլ ծաղկում են։ Հայաստանի խորհրդայնացումից հետո նախկին «սպեցիֆիկ» գործիչներից մեծարվեց միայն (բայց ոչ տեսական) հայտնի տեսաբան Ալ. Ռուբենին։ Անգամ Երևանում դրվեց նրա արձանը<sup>53</sup>։ 1912 թվականից Ալ. Ռուբենին հարել էր բոլշևիկներին, իսկ 1920 թ. մարտի 23-ին գոհվել թուրք-մուսավաթականների կազմակերպած Շուշիի հայտնի ջարդերի ժամանակ<sup>54</sup>։ Իրազեկենք, որ ստույգ չեն պատմաբան Հ. Վարդանյանի հայտնած տեղեկություններն այն մասին, թե Ռուբենին Բաքվում է գոհվել<sup>55</sup>։

Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության և նախկին «սպեցիֆիկների» միջև հաշտեցում չէր կարող լինել։ Այդ պայքարը սաստկացավ երկրում սոցիալիզմի կառուցմանը զուգընթաց և իր բարձրակետին հասավ 1930-ական թվականների կեսերին։ Փաստենք, որ Ս. Կասյանի, Ա. Մոսվյանի և մյուսների հակասպեցիֆիկյան աշխատությունները գաղափարաբարբառական զգալի հող նախապատրաստեցին նախկին «սպեցիֆիկների» բռնադատության ու հաշվեհարդարի համար։

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացումից հետո մյուս քաղաքական կուսակցությունների պես ՀՍԴԲԿ նույնպես ենթարկվեց լուծարման ու բռնադատությունների։

## 5. Ռամկավար Ազատական կուսակցության (ՌԱԿ) հիմնումը

Նույնատիպ ճակատագրի արժանացան Անդրկովկասի ու Ռուսաստանի հայ ազատական կուսակցությունները՝ Հայ ժողովրդականները և Հայ սահմանադրական ռամկավարները։ Հայաստանի խորհրդայնացումից հետո նրանց ղեկավարների հիմնական մասը անցավ արտասահման<sup>56</sup>։ Սակայն արտասահմանում նրանց հետագա կազմակերպական գործունեությունը այլ ընթացք ստացավ։ 1921 թ. հոկտեմբերին Կոստանդնուպոլսում սրանք միավորվեցին Սփյուռքի գաղութահայ ազատական կուսակցությունների ու միությունների հետ և հիմնեցին մեկ միասնական՝ **Ռամկավար Ազատական կուսակցությունը (ՌԱԿ)**<sup>57</sup>։

<sup>52</sup> ՀՀ ՀԲԿՓ ՊԿԱ, Ժ. 1, ց. 1, գ. 39, թ. 4։

<sup>53</sup> Ս. Կասյան, Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928, էջ 44-45, 109։

<sup>54</sup> Ա. Գ. Հովհաննիսյան, Երկու բնութագիր (Ստ. Շահումյան և Ալ. Ռուբենի) Ե., 1927, էջ 25, «Հայաստանի կոոպերացիա», 31 հուլիսի 1920, (թիվ 14), էջ 570։

<sup>55</sup> Հ. Գ. Վարդանյան, Հայ բուրժուա-ազգայնական կուսակցությունների դիրքավորումը ռուսական առաջին հեղափոխության տարիներին (1905-1907 թթ.), Ե., 1975, էջ 137։

<sup>56</sup> Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր, Ե., 1987 թ., էջ 191-192։

<sup>57</sup> Ա. Յափուճյան, Համառոտ պատմություն Ռամկավար ազատական կուսակցության կազմության, Գահիրե, 1977, էջ 3։

Հարկ է նշել, որ այդ միավորումը միանգամայն անհրաժեշտ ու օրինա-  
չափ երևույթ էր, որի նախաբայերն սկսվել էին դեռևս 1919-1920 թվականնե-  
րին: Դեռ 1919 թ. ամռանը Փարիզում Արշակ Չոպանյանի նախաձեռնու-  
թյամբ հիմնվել էր 50 հոգուց (անդամներից) բաղկացած կազմակերպություն՝  
«Հայ Ազատական միություն»: Միության հիմնադիրներից էին նաև Բ. Արքին-  
յանը, Տիրան Ալեքսանյանը, Վահան Թեքեյանը, Էդգար Շահինը և ուրիշներ:  
Փարիզում սկսեց լույս տեսնել Ազատական միության պաշտոնաթերթ «Հա-  
յաստանը»:

Հայ ազատական միության ստեղծման կապակցությամբ Երևանից Ա.  
Դարբինյանը նամակով շնորհավորեց Ա. Չոպանյանին. «Նախ կը շնորհավո-  
րինք Ձեր նախաձեռնությունը, - հայտնում էր ռամկավար գործիչ Ա. Դարբին-  
յանը 1919 թ. հոկտեմբերի 29-ի թվակիր նամակում, - «Ազատական միու-  
թյուն» ստեղծելու ազգային մեծ ձեռնարկին մեջ: Հավատացած ենք, որ հիմ-  
նադիրները մոտիկ ապագային իրենց հույսերը արդարացած պիտի տեսնին,  
երբ միևնույն սկզբունքներու շուրջ կազմված ապադասակարգային և ազա-  
տական հայ կուսակցությունները, հոսանքները և մինչև այժմ կուսակցու-  
թյուններն դուրս մնացած ազգային բանիմաց տարրերը միանան միևնույն դրո-  
շակի տակ, որուն այնքան կարոտ է մեր նահատակված ազգը այսքան տա-  
ռապանքներն հետո»<sup>58</sup>:

Հայ ազատական միությունը իր մասնաճյուղերը հիմնեց Եվեյցարիա-  
յում, Բելգիայում, Մանչեստրում, Լոնդոնում և այլուր: Այս միությունը փաս-  
տորեն դարձավ առաջին քայլը ապագա ՌԱԿ-ի ստեղծման ճանապարհին:  
Ազատական միությունը նպատակ էր դրել «նպաստել հայկական համախոհ  
տարրերի միացմանը» և ստեղծել մի նոր մեծ ազգային կուսակցություն<sup>59</sup>:

Հայոց անկախ պետականության վերահաստատման պայմաններում  
անհրաժեշտ համարվեց, որ Վերակազմյալ հնչակյան, (որը ստացել էր «Ազա-  
տական» անունը)<sup>60</sup>, Սահմանադիր ռամկավար և Հայ ժողովրդական կուսակ-  
ցությունները կազմակերպական առումով միավորվեն մեկ միաձույլ առաջա-  
դիմական, ազգասիրական, ապադասակարգային կուսակցության մեջ:

Հարկ է նշել, որ այս ուղղության կուսակցությունների և հոսանքների  
միավորման գործը հետաձգվեց, քանի որ նրանք սպասում էին Հայկական  
հարցի մոտալուտ լուծմանը, որի արդյունքում էլ Միացյալ և Անկախ Հայաս-  
տանում պիտի տեղի ունենար միավորումը: Ռամկավար և ազատական կու-  
սակցությունների միավորման խնդիրը կապվում էր Միացյալ և Անկախ Հա-  
յաստանի հետ այն հիմնավորմամբ, որ Հայկական հարցի լուծմամբ թուրքա-  
հայ ժողովրդի հետ ռամկավար-ազատական կուսակցությունն էլ Երկիր  
կմտներ և իր ոտքի տակ հող կունենար: Բայց քանի որ դեպքերն ու իրադար-  
ձություններն այլ ընթացք ստացան, այդ իսկ պատճառով որոշվեց միացումը

իրականացնել՝ այլևս չսպասելով Հայկական հարցի լուծմանը, մանավանդ որ  
այդ ուղղությամբ այլևս որևէ գործնական հույս չէր մնացել:

Կազմվեց մի գործադիր մարմին, որը բանակցությունների մեջ պետք է  
մտներ մի կողմից ՀԺԿ, իսկ մյուս կողմից գաղութահայության շրջանում գոր-  
ծող Ս. ռամկավար և Վերակազմյալ Հնչակյան (Ազատական) կուսակցու-  
թյունների հետ՝ դրանք ձուլելու մի կուսակցության մեջ: Նորահիմն կուսակցու-  
թյան ծրագրային հիմնադրույթները պիտի լինեին ա) Միացյալ և Անկախ Հա-  
յաստան, բ) Ռամկավարական խորհրդարանական կառավարություն, գ) հա-  
յերենը պետական պաշտոնական լեզու, դ) խղճի ու դավանանքի կատարյալ  
ազատություն և օրենքի առաջ Հայաստանի բոլոր քաղաքացիների հավասա-  
րություն, ե) անվճար և նախնական պարտադիր կրթություն: Նորաստեղծ կու-  
սակցության կենտրոնատեղին պիտի լինեին Հայաստանի մայրաքաղաքը<sup>61</sup>:  
Ավելացնենք, որ հայ ռամկավարների արտասահմանյան կազմակերպու-  
թյունների ու անհատ գործիչների վերաբերմունքը դեպի ՀՀ կառավարությունը  
եղել է ավելի լույս ու բարյացակամ, քան Ժողովրդական կուսակցության և  
կառավարության հարաբերությունները: Օրինակ, «Ազատական միության»  
ղեկավար Ա. Չոպանյանը Փարիզից անձամբ շնորհավորել է վարչապետ և  
արտ. գործ. նախարար Հ. Օհանջանյանին՝ Սևրի Միացյալ և Անկախ Հայաս-  
տան նվիրագործող դաշնագրի ստորագրման կապակցությամբ: Իր հերթին,  
պատասխան նամակով, վարչապետը Երևանից շնորհակալություն է հայտ-  
նել մեծանուն քաղաքական, գրական ու մշակութային գործիչին<sup>62</sup>:

1919-1921 թթ. ընթացքում «Ազատական միությունը» և անձամբ Ա. Չո-  
պանյանը նախապատրաստական-կազմակերպական աշխատանքներ էին  
տանում հայ ռամկավար-ազատական (լիբերալ) տիպի կուսակցությունները,  
հոսանքները և կազմակերպությունները մեկ միացյալ կուսակցության մեջ  
ձուլելու ուղղությամբ: Միքայել Պապաճանյանը և Արտաշես Էնֆիաճյանը  
ՀԺԿ անունից բանակցում էին միացման շուրջը<sup>63</sup>: Միաժամանակ, Անդրկով-  
կասում բանակցություններ էին ընթանում Հայ ռամկավար և Հայ ժողովրդա-  
կան կուսակցության միջև՝ մեկ կուսակցությունների մեջ ձուլվելու նպատա-  
կով: Դրա համար նախատեսված էր 1920 թ. հունիսի վերջերին Երևանում  
հրավիրել Հայ ռամկավար կուսակցության համագումար<sup>64</sup>:

Ռամկավար (ժողովրդական) և ազատական բոլոր տիպի կուսակցու-  
թյունների ու հոսանքների միավորման համար սկզբում ծրագրված էր միավո-  
րիչ հիմնադիր համագումար հրավիրել 1920 թ. փետրվարի 15-ին Փարիզում:  
Դրան մասնակցելու համար հրավերներ էին ստացել՝ Հայ ժող. կուսակցու-  
թյունը<sup>65</sup>, Հայ ռամկավար կուսակցության Կիլիկիայի շրջանային վարչությու-

<sup>58</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 282, ց. 1, գ. 1, ք. 1:

<sup>59</sup> «Աշխատավոր», Թիֆլիս, 8 հոկտեմբերի 1919 թ.:

<sup>60</sup> Ա. Յափուճյան, նշվ. աշխ., էջ 47:

<sup>61</sup> «Ժողովուրդ», 31 օգոստոսի 1919 թ.:

<sup>62</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 282, ց. 1, գ. 14, ք. 1:

<sup>63</sup> «Ժողովուրդ», 31 օգոստոսի 1919:

<sup>64</sup> «Աշակ», 4 հունիսի 1920 թ.:

<sup>65</sup> ՀՀ ՊԿՊԱ, Ժ. 282, ց. 1, գ. 13, ք. 4:



Ամփոփենք. պատմաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների երկաթյա սրամաքանությամբ Հայաստանը կանգնեց անկախության փաստի առաջ: Շուրջ 600-ամյա ընդմիջումից հետո հայ ժողովուրդը ձեռք բերեց իր ազգային անկախ պետականությունը, որի համար նա պարտական էր առաջին հերթին իր հերոսական ոգորումներին: Յուրաքանչյուր ժողովրդի, ազգի զարգացման ու բարգավաճման ամենամեծ գրավականը, հիրավի, անկախության մեջ է: «Անկախության ուղիով ու անկախության միջոցով է, որ պիտի ընթանա հայ ժողովրդի հետագա ազատագրական պայքարը»<sup>1</sup>:

Հայաստանի առաջին հանրապետության պետաիրավական կառույցի անբաժան մասն է կազմել խորհրդարանը, որը ձևավորելիս՝ հաշվի էր առնվել պառլամենտարիզմի համաշխարհային փորձը: Այդ նույն ժամանակ արդեն քաղաքական պայքարի բավականին դաժան դպրոց էին անցել քաղաքական կուսակցությունները, որոնք իրենց գործունեությամբ պետք է միս ու արյուն դառնային հայ իրականության մեջ առաջին անգամ ձևավորված խորհրդարանի համար:

Հայաստանի անդրանիկ խորհրդարանը ՀՀ ծնունդն էր, նրա հոգեհարազատ զավակն ու անբաժան ուղեկիցը: Հանրապետության գոյության 2,5 տարվա ընթացքում կազմվել են երկու գումարման խորհրդարան՝ առաջինը, որպես Հայոց Ազգային խորհրդի անմիջական իրավահաջորդ, գործել է 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919 թ. հունիսի 5-ը, բազմակուսակցական հիմքի վրա, առանց ընտրությունների, իսկ երկրորդը՝ 1919 թ. օգոստոսի 1-ից մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը, ընտրությունների միջոցով: Այդ նույն ընթացքում կազմվել են չորս կառավարություն (կաբինետ):

Հայաստանի երկու գումարման խորհրդարանն իր գործունեության ընթացքում ընդունել է 300-ից ավելի օրենքներ, որոնց մի զգալի մասը, սակայն, եղել են ընդամենը որոշումներ և կառավարչական հրահանգներ:

Քաղաքական և պետական կառուցվածքի տեսակետից՝ հանրապետության խորհրդարանն ու կառավարությունը նպատակ էին դրել Հայաստանը դարձնել Արևմուտքի տիպի խորհրդարանական, դեմոկրատական (ռամկավար) հանրապետություն, որի սահմանադրությունը և այլ հիմնական օրենքները պետք է մշակվեին և ընդունվեին ապագա իրավիրվելիք Սահմանադիր ժողովում՝ Հայկական հարցի վերջնական լուծումից, այսինքն՝ Անկախ, Ազատ և Միացյալ Հայաստանի ստեղծումից հետո: Սակայն պատմաքաղաքական դեպքերն այնպես զարգացան, որ ՀՀ կարճատև կյանքն ընթացավ առանց սահմանադրության: Հանրապետությունը չունեցավ նաև իր նախագահը (պրեզիդենտը), որ նույնպես ծրագրված էր:

Ընդհանուր առմամբ, ՀՀ համար բնորոշ էր կառավարման հանրապետական ձևը՝ խորհրդարանի գերակայությամբ: Պետության գլխավոր իշխանության մարմինը հանդիսանում էր խորհրդարանը: Պետության գլխավոր իրավասությունները՝ օրենսդիր, մասամբ նաև գործադիր պատկանում էին խորհրդարանին: Գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ձևավորվում ու հաստատվում էր խորհրդարանի կողմից: Հանրապետության նախագահի պաշտոնի բացակայության պայմաններում վարչապետը հաշվետու էր միայն խորհրդարանի առջև:

ՀՀ առաջին փուլում բավականին մեծ են եղել Հայաստանի խորհրդի (խորհրդարանի) իրավասության շրջանակները, որն օրենսդրականից գալիս, երբեմն իրացնում էր նաև գործադիր իշխանության ֆունկցիաներ: Այսպես՝ Հայաստանի խորհրդի ընդունած օրենքների մի մասը ոչ այնքան օրենքներ էին որպես այդպիսին, որքան պարզապես որոշումներ, վարչական կարգադրություններ ու հրահանգներ: Այսինքն՝ ստացվել է այնպես, որ խորհրդարանը, փոխանակ զբաղվելու իր օրինաստեղծ աշխատանքով, շրջանցելով իր իրավասությունները, իր վրա է վերցրել գործադիր մարմնի՝ կառավարության ֆունկցիաներ:

Սակայն ժամանակի ընթացքում, դեպքերի ու հանգամանքների բերումով, սահմանադրության բացակայության, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրավասությունների շրջանակների ու գործունեության ու լորտների ոչ հստակ սահմանազատվածության (տարանջատվածության) և սուբյեկտիվ այլ պատճառներով, բարձրագույն գործադիր իշխանությունը՝ կառավարությունը իր հերթին, գերազանցելով իր իրավասության սահմանները, ժամանակ առ ժամանակ (սովորելով ու մի տեսակ անտեսելով խորհրդարանի գոյությունը), խորհրդարանն ուղարկելով արձակուրդ՝ ստանձնել է նաև օրենսդրական ֆունկցիաներ, զբաղվել՝ օրինաստեղծ գործունեությամբ: Կնշանակի՝ հստակորեն սահմանազատված չեն եղել օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների իրավասության շրջանակները: Այդ իսկ պատճառով էլ խորհրդարանն ու կառավարությունը հաճախ գիտակցաբար կամ անգիտակցաբար միախառնվելով՝ կրկնօրինակել են իրար:

Անշուշտ, նման աշխատանքը անհարիր էր իրավական, ժողովրդավարական պետական համակարգին: Ուսումնասիրության արդյունքներով հեշտ է նկատել այն միտումը, որ գնալով նսեմացվել է խորհրդարանի դերն ու նշանակությունը, և դա զգալի չափով պայմանավորված էր նրանում ընդդիմության թուլությամբ: Եթե Հայաստանի առաջին ոչ ընտրովի խորհրդարանը՝ Հայաստանի խորհուրդը, իր խաղացած իրավաքաղաքական դերով ու նշանակությամբ համեմատում ենք երկրորդ ընտրովի խորհրդարանի հետ, ապա տեսնում ենք, որ առաջինը մի շարք պարամետրերով, օրինակ, իրավասության շրջանակներով, ընդդիմության ուժեղությամբ և այլն գերազանցում էր երկրորդին, սակայն վերջինս էլ իր աշխատանքի արդյունավետությամբ ու խորհրդարանին բնորոշ արհեստավարությամբ էր գերազանցում առաջինին: Եթե Հ. Քաջագունու վարչապետության շրջանում պետական իշխանության

<sup>1</sup> Վ. Նավասարդյան, Դաշնակցության անելիքը, Գահիրե, 1924, էջ 278:



խանութան համար: Այս միտումը համեմատաբար ուժեղ է դրսևորվել ՀՀ առաջին փուլում՝ մինչև 1919 թ. կեսերը:

Ընդհանուր առմամբ ՀՀ-ում գործող ընդդիմադիր կուսակցությունները ՀՅԴ-ի դեմ մղվող պայքարում իրար չներդաշնակեցին: Քաղաքական ընդդիմության «աջ» և «ձախ» խմբակցությունների (թևերի) միջև գոյություն ունեին այնպիսի սուր հակասություններ (քաղաքական, գաղափարական, սոցիալ-տնտեսական և այլն), որ նրանք չկարողացան միասնական ճակատ կազմել հանրապետությունը կառավարող հիմնական քաղաքական ուժի՝ ՀՅԴ-ի դեմ մղվող պայքարում: Ավելին՝ իրար հետ չկարողացան համաձայնության գալ ոչ միայն «աջ» ու «ձախ» խմբակցությունները, այլև հենց «ձախերն» իրար հետ:

ՀՅԴ-ից հետո՝ ՀՀ-ում գործող երկրորդ ազդեցիկ քաղաքական ուժը ՀԺԿ էր: Սակայն լավ սկսած, նույնիսկ միառժամանակ ՀՅԴ-ի հետ խառը կառավարություն կազմած ժողովրդականները մի շարք պատճառներով անհաջողության մատնվեցին: ՀԺԿ լինելով ազգային, ամենից առաջ անհաջողության մատնվեց ոչ այնքան Հայաստանում սոցիալական թույլ հենարան ունենալու, որքան հանրապետությունում ոչ ճիշտ գործելակերպ վարելու հետևանքով: Ընդհանուր առմամբ, այս կուսակցությունը, չնայած իր ընդդիմությանը, միշտ էլ մնաց ազատականության, օրինականության, չափավորության և պատասխանատվության շրջանակներում: Իսկ առանձին պահերի էլ ուղղակի համագործակցեց կառավարության հետ՝ լինելով կամ նրա կազմում, կամ էլ՝ նրա կողքին:

Անդրադառնալով հայ քաղաքական կուսակցությունների արտաքին քաղաքական գործունեության և մասնավորապես Հայկական հարցում նրանց ցուցաբերած դիրքորոշումներին՝ ուսումնասիրության արդյունքներով հանգել ենք հետևյալ եզրահանգման: Հայկական հարցի բարեհաջող լուծմանը հետամուտ են եղել, ավել կամ պակաս չափով, հայ ազգային տիպի բոլոր կուսակցությունները՝ սկսած Դաշնակցությունից վերջացրած Վերակազմյալ հնչակյաններով: Թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս նրանք շատ ճգնեցին, տարածքային հավակնոտ պահանջներ ներկայացրին, բայց, ի վերջո, հարցը ունեցավ ոչ հայանպաստ ավարտ: Հայ ազգային կուսակցությունների ամենամեծ սխալն այն էր, որ առանց բացառության գրեթե բոլորը, մի քիչ ավել կամ պակաս չափով, Հայկական հարցի լուծման իրենց պահանջներում իրատես չգտնվեցին: Նրանց ձգտում-ցանկություններն ու դրան հասնելու հնարավորություններն իրար չէին համապատասխանում: Դրա համար էլ երիցս անգամ հույսը կապեցին դրսի, օտար ուժերի օգնության հետ և արդյունքում հիասթափվելով, հերթական անգամ խաբվեցին՝ կրելով մարդկային ու տարածքային հսկայական կորուստներ: ՀՀ գոյության գրեթե ամբողջ ժամանակաշրջանում հիմնական կառավարող՝ ՀՅԴ կուսակցությունը կողմնորոշված էր դեպի Արևմուտք: Չնայած մեծ կողմնորոշման համար կային գորավոր պատճառներ և գայթակղիչ սպասելիքներ, սակայն ի վերջո այդ քա-

ղաքականությունը օբյեկտիվ պատճառներով իրեն չարդարացրեց: Արդյունքում՝ Հայաստան աշխարհի պարփակվեց ընդամենը 30 հազ. քառ. կմ մեջ:

Ինչ վերաբերում է հայ քաղաքական կուսակցությունների մյուս խմբին՝ ոչ ազգային կուսակցությունների նույն խնդրին ցուցաբերած վերաբերմունքին, ապա պետք է ասել, որ սրանց (սկսած Էսեռներից և վերջացրած բոլշևիկներով) այնքան էլ չէր մտահոգում Արևմտահայոց խնդիրը: Այս կուսակցություններն ավելի շատ մտահոգ էին դասակարգային պայքարի և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման հարցերով: Ոչ ազգային, «ձախակողմյան» կուսակցությունները Հայկական հարցի լուծումը վերջին հաշվով կապեցին Հայաստանի խորհրդայնացման ու հայ ժողովրդի սոցիալական ազատագրության խնդրի լուծման հետ:

Հանրապետությունում ազատորեն գործել են առկա բոլոր կուսակցությունները, այդ թվում բոլշևիկները: Համեմայն դեպք, մինչև 1920 թ. գարունը Հայաստանում առկա ազգաբնակչության ու հասարակական-քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների համար հիմնականում ապա-հովվել են ժողովրդավարական ազատություններ՝ մտածողության, խոսքի, հոգիվել են ժողովրդավարական գործադուլների, ռամկավար աշխատանքային մամուլի, ժողովների, ցույցերի, գործադուլների, ռամկավար աշխատանքային օրենսդրություն և այլն: Անգամ չի եղել մշակված օրենք այս կամ այն կուսակցության գործունեությունը սահմանափակելու կամ դադարեցնելու վերաբերյալ: Խորհրդարանի պատմության օրինակով կարելի է հանգել այն հետևության, որ ՀՀ-ում գործող բոլոր կուսակցությունների համար հիմնականում ապահովված են եղել քաղաքական ազատություններ:

Չնայած այն ժամանակվա ծանր ու արտասովոր պայմաններին՝ Հայաստանի խորհրդարանը, ինչպես հարկն է, չկարողացավ իրեն լիովին դրսևորել: Նա իր կարճատև և այն էլ ընդհատումներով գործունեության ընթացքում չհասցրեց մշակել ու ընդունել սեփական (ազգային) պետաիրավական ամբողջական ու կայուն օրենսդրություն: ՀՀ շարունակում էր հիմնականում աբսոլյուտական ու կայուն օրենսդրություն: Դաշնակցությունից և Ժամանակավոր կառավարության, ընդհանրվել ցարական Ռուսաստանի ու Ժամանակավոր կառավարության, Անդրկովկասի կոմիսարիատի ու Սեյմի ընդունած օրենքներով, որոնք ակնհայտ է, որ այնքան էլ չէին պատշաճում հայոց ազգային պետականությանը, ու երկատված հայ իրականությանը: Ընդսմին այդ օրենքները երկար ժամանակ մայրենի լեզվով (հայերեն) բարգմանված էլ չէին և միայն սկսած 1920թ. նակ մայրենի լեզվով (հայերեն) բարգմանված էլ չէին և միայն սկսած 1920թ. կեսերից՝ Արտաշես Չիլինգարյանի (Ռուբեն Դարբինյանի) արդարադատության մախարարի պաշտոնակատարության ժամանակ, զգալի աշխատանք կատարվեց օրենքները և դատաստանական աշխատանքը հայացնելու ուղղությամբ:

Սեփական, ազգային առանձնահատկություններին բնորոշ ու հոգեհարազատ օրենքներ շատ քիչ ընդունվեցին ու գործադրվեցին, որոնք էլ բացասաբար անդրադարձան հանրապետության իրավական հիմքերի ամրապնդմանը: Այն ժամանակ հանգամանքները, իրադրությունը, դեպքերի գլխավորությունը արագությամբ զարգացումը հնարավորություն չտվեցին ձևավորել ու ամբողջացնել ժողովրդավարական հասարակարգին բնորոշ օրենքներ:



Անշուշտ, արհեստավարժ չէր Հայաստանի խորհրդարանը: Խորհրդա-  
րանի արհեստավարժության մակարդակը չափվում է նրա հանձնաժողովնե-  
րի աշխատանքով ու մշակած, ընդունած աշխատող օրենքներով: Թեև Հա-  
յաստանի երկու խորհրդարաններն էլ ունեին լիակազմ ու բազմակուսակցա-  
կան մեկ տասնյակից ավելի հանձնաժողովներ, սակայն, որպես կանոն,  
դրանք չէին կատարում իրենց առջև ծառացող գլխավոր աշխատանքը՝ ՀՀ -  
պայմաններին ու հայ ժողովրդի ազգային դիմագծին ու առանձնահատկու-  
թյուններին համապատասխան օրենքների մշակումը և ընդունումը: Հայաստա-  
նի խորհրդարանի և նրա հանձնաժողովների գործունեության թույլ կողմերից  
մեկն այն էր, որ ընդունված օրենքների ճնշող մեծամասնությունը (որոշ  
տվյալներով՝ մինչև 90 տոկոսը) եղել են կառավարության ներկայացրած օրի-  
նագծեր<sup>1</sup>: Էլ հաշվի չենք առնում այն հանգամանքը, որ առանձին ամիսների  
(երբ խորհրդարանն ուղարկվում էր հարկադիր արձակուրդ) կառավարու-  
թյունն իր ստորաբաժանումներում մշակում և ինքն էլ ընդունում էր օրենքները:  
Կնշանակի խորհրդարանական հանձնաժողովները իրենց կոչման բարձրու-  
յան վրա չէին, նրանք չէին կատարում իրենց գլխավոր գործը՝ օրենքների նա-  
խագծերի կազմումը, այլ ընդամենը նախնական քննության էին ենթարկում  
կառավարության ներկայացրած օրինագծերը և որոշ խմբագրական փոփո-  
խություններից հետո ներկայացնում խորհրդարանի քննությանն ու հաս-  
տատմանը:

ՀՀ, անշուշտ, պակասում էին շատ օրենքներ, դրսևորվում էին անիշխանական երևույթներ՝ պաճա-թալաճա, շահատակություններ, «մաուզերիզմ» և ալյաճ: Պետական մարմինների աշխատանքի անհատակության, անօրինությունների, զեղծարարությունների, անիշխանության գլխավոր պատճառներից մեկը օրենքի ու օրենսդրության պակասն էր կաճաճ էլ՝ եղաճների անկատարությունը: Իր հերթին, հանրապետության արտաքին ու ներքին անկալյուն պալմանները, Հայկական հարցի շարունակ ձգձգումը մի տեսակ անորոշության մեջ էին պահում ժողովրդին ու կառավարությանը և դրանով իսկ քաղաքական հող ստեղծում հանրապետության ներքին անկալունության, անիշխանական երևույթների դրսևորման համար:

Բայց իրավացի չենք լինի, եթե ամեն ինչի համար մերկապարանոց ձևով քննադատենք միայն իշխանություններին և հիմնական կառավարող կուսակցությանը: ՀՅ Դաշնակցությունը գործելու մեծ եռանդ էր ցույց տալիս: Բացթողումների համար մեղքի իրենց մասնաբաժինը ունեին նաև ժողովուրդը, լայն հասարակաշերտերը, ընդդիմադիր կուսակցությունները: Ժողովրդին ևս մեղքի բաժին վերագրելով՝ մենք առաջնորդվել ենք հեգելյան հայտնի այն կանխադրույթով, որ ամեն ժողովուրդ արժանի է իր կառավարությանը: Բանն այն է, որ հանրապետությունում օրենքների պակասի հետ մեկտեղ, պակասում էր նաև հարգանքը եղածների հանդեպ: Հարգանքը պետությանը նկատմամբ առանձնապես մեծ չէր: Հաճախ գյուղացիությունը չէր

ուգում հարկ ու տուրք մուծել և զինվոր տալ պետությանը: Ոմանց մեջ արմատացել էր այն մտայնությունը, որ եթե պետությունը հայկական է, ուրեմն՝ այլևս հարկեր, տուրքեր և այլ պարտավորություններ չպիտի ունենան նրա հանդեպ: «Նրանք գարձանքով և գայրացած կհարցնեին. ինչպե՞ս թե, այժմ երկիրը մերն է, դարձյա՞նք, նորե՞ն պիտի տանք զինվորներ և տուրքեր»:՝ Սա ինքնին վկայում է ժողովրդի քաղաքական և իրավական ցածր կուլտուրայի մասին: Այն ժամանակվա հայ ժողովրդի մեծամասնության մեջ տակավին չէր ձևավորվել հայրենիքի, անկախ պետականության պաշտպանության և ամրապնդման համընդհանուր միասնական ըմբռնում: Սա, անշուշտ, կարելի է դասել ՀՀ անկման սոցիալ-հոգեբանական գործոնների թվին:

Մյուս կողմից՝ պետք էր հասկանալ եղեռն տեսած ու պատերազմի ահապոր գրկանքներ կրած ժողովրդի մեծամասնության հոգեկան խախտված վիճակը և սոցիալական ահապոր պայմանները: Ուստի՝ շատ դժվար էր կարգ ու կանոն, օրինապահություն պահանջել հարազատներ կորցրած, իր ճակատագրից դժգոհ, գազազած, քաղցած, ցնցոտիավոր մարդկանցից, որոնք երբեմն «նախընտրում էին սովի փոխարեն գնդակով մեռնել»<sup>2</sup>:

Նյութական, տնտեսական դժվարությունները, հարյուրհազարավոր գաղթականների անորոշ տեղաշարժերը, օրենքների ու օրինապահության պակասը մի կողմից, օրինազանց տարրերի ու օրենքներ չհարգող առանձին սպառազեն անկանոն ուժերի (խմբերի) անիշխանական գործողությունները մյուս կողմից, դրան գումարած հանրապետության տարածքում առկա ավելի քան կեսմիլիոնանոց բուրբ-թաթարական տարրերի՝ դրսից (Թուրքիայի և Ադրբեջանի կողմից) հրահրվող շարունակական խլրտումներն ու ապստամբական ելույթները, բուլձինկների հակապետական քարոզչությունը հասա-րակական-քաղաքական անկայունության հող էին ստեղծում և դրանով իսկ զգալի չափով թուլացնում հանրապետության պետական կառույցի հիմքերը, երկրի տնտեսական ու մշակութային վերաշինության գործընթացները:

ՀՀ պետական կառույցի, իրավաքաղաքական և այլ բնույթի թերութ-  
յունների ու բացթողումների համար ի վերջո պետք է լինեն ներողամիտ նաև  
այն իմաստով, որ մեր ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ էր հայ  
քաղաքական կուսակցությունը դարձել կառավարող: Բնականաբար պակա-  
սում էին փորձը, ձեռնահաս ուժերը, կառավարելու այնքան բարդ արվեստը,  
ուստի և անխուսափելի էին սխալներն ու բացթողումները:

Ակներև է, որ ժողովրդավարական ավանդույթների, պետական մտա-  
ծողության ու իրավաքաղաքական կուլտուրայի պակաս կար ինչպես ան-  
բողջ հասարակության մեջ, այնպես էլ բնականաբար իշխանությունների  
շրջանում: Ինքնին հասկանալի է, որ անցյալից ծանր ժառանգություն ստա-  
ցած հայ ժողովուրդը, միանգամից անկախություն ձեռք բերելով, չէր կարող

<sup>1</sup> Գ. Չալիխուշյան, Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923, էջ 15:

<sup>2</sup> Թուրքեն, նշվ. աշխ., էջ 302:





## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԳԻ (ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ) ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ	
1. Պատմական ակնարկ.....	21
2. Արևելահայերի համագումարը.....	26
3. Հայոց Ազգային խորհրդի հիմնումը և գործունեությունը.....	32
4. Անդրամիկ կառավարության և խորհրդարանի ձևավորումը.....	45
5. Հայաստանի խորհրդի առաջին քայլերը.....	51

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԸ

1. Խորհրդարանական կուսակցությունները և նրանց խմբակցությունները...60	
ա) «Աջակողմյան».....	63
բ) «Կենտրոն».....	65
գ) «Ձախակողմյան».....	69
2. Արտախորհրդարանական կուսակցությունները.....	82
3. Կառավարության առաջին ճգնաժամը.....	90
4. Հայկական հարցը և արտաքին քաղաքականության խնդիրները.....	100

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ՕՐԵՆՍԴԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Օրինաստեղծ աշխատանքը.....	113
2. Խորհրդարանի ֆինանսավարկային գործունեությունը.....	130
3. Հողային խնդիրը.....	135
4. Գաղթականության հարցերը խորհրդարանում.....	145
5. Խորհրդարանը՝ և կուսակցությունները բնակչության սոցիալական պաշտպանվածության մասին.....	150
6. Բանակի և պաշտպանության հարցերը խորհրդարանում և կուսակցությունները.....	154
7. Խորհրդարանի ճգնաժամը և արձակումը.....	155

## ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ. ԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Խորհրդարանի ընտրությունները և կուսակցությունները.....	174
2. Խորհրդարանի բացումը և հանձնաժողովները.....	191
3. Ընդլիմությունը երկրորդ խորհրդարանում և նրանից դուրս.....	198
4. ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը.....	214
5. Խորհրդարանը և կառավարությունը.....	234
6. Կուսակցություն-խմբակցություն-կառավարություն հարաբերությունները.....	241

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ. ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1. Օրենսդրական աշխատանքը: Սոցիալ-տնտեսական և կրթամշակութային խնդիրներ.....	249
2. Ֆինանսավարկային հարցերը խորհրդարանում.....	259
3. Ներգաղթի խնդիրը խորհրդարանում.....	262
4. Բանակի և Արցախի խնդիրները խորհրդարանում.....	266
5. Արտախորհրդարանական գործունեություն.....	273

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԸ ՄԱՅԻՍՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Մայիսյան ապստամբությունը.....	275
2. Խորհրդարանի միջոցառումները 1920 թ. Մայիսյան ապստամբության կապակցությամբ: Բյուրո-կառավարության ստեղծումը.....	279
3. Կուսակցությունների վերաբերմունքը Մայիսյան ապստամբությանը.....	287

## ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԸ ՀՀ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼՈՒՄ

1. Խորհրդա-բուրժական համագործակցությունը.....	294
2. Կուսակցությունները բուրժ-հայկական պատերազմի շրջանում.....	308
3. Խորհրդարանը և կուսակցությունները ՀՀ անկման փուլում.....	318

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՇԱՐՈՒՄԸ

1. ՀՅ Դաշնակցություն.....	334
2. Սոցիալիստ հեղափոխականներ (Էսեռներ).....	339
3. Սոց.-Դեմ. Հնչակ.....	341
4. ՀՄԴԿ («Սպեցիֆիկներ»).....	345
5. Ռամկավար Ազատական կուսակցության (ՌԱԿ) հիմնումը.....	347
ՎԵՐՋԱԲԱՆ.....	352

**ԱՐԱՐԱՏ ՄԽԻԹԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՎ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
(1918-1920 թթ.)**

**АРАРАТ МХИТАРОВИЧ АКОПЯН**

**ПАРЛАМЕНТ АРМЕНИИ И  
ПОЛИТИЧЕСКИЕ  
ПАРТИИ (1918-1920 ГГ.)**

**Տպաքանակը՝ 1000:**

---

**Տպագրված է «ԳԱՄՊՐԻՆՏ» տպագրատանը**